ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2016

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ISSN 1829-4324

Երաշխավորված է հրատարակության
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,	
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր	**Յուրի Միքայելի Սուվարյան**
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր	**Ռոբերտ Ներսեսի Սարինյան**
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր	**Աշոտ Հակոբի Բայադյան**
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ	**Գայանե Էրնիկի Հարությունյան**
տնտեսագիտության թեկնածու	**Ալվարդ Թևոսի Ջատիկյան**
տնտեսագիտության թեկնածու	**Քրիստինե Յուրիի Բաղդասարյան**
տնտեսագիտության թեկնածու	**Հայկ Աշոտի Մարկոսյան**
տնտեսագիտության թեկնածու	**Արմինե Գրիգորիի Զախարյան**

Ժողովածուի պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտական հոդվածների ժողովածու - 2016) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016 - 472 էջ:

Ժողովածուում ընդգրկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում անցկացված «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով հանրապետական գիտաժողովի մասնակիցների գիտական հոդվածները:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ
0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15
Հեռ. (+3741) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Հեռ. (+3741) 58-18-23
E-mail: hovakimyan@sci.am

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2016

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2016

Ереван

Национальная академия наук Республики Армения Издательство " Гитутюн"

2016

ISSN 1829-4324
Рекомендовано к изданию решением
ученого совета Института экономики
им. М. Котаняна НАН РА

Редакционный совет:

академик НАН РА
доктор экономических наук, профессор **Суварян Юрий Михайлович**
доктор экономических наук, профессор **Саринян Роберт Нерсесович**
доктор экономических наук, профессор **Баядян Ашот Акопович**
кандидат экономических наук, доцент **Арутюнян Гаяне Эрниковна**
кандидат экономических наук **Затикян Алвард Тевосовна**
кандидат экономических наук **Багдасарян Кристине Юрьевна**
кандидат экономических наук **Маркосян Айк Ашотович**
кандидат экономических наук **Захарян Армине Григорьевна**

Ответственный редактор сборника
член-корреспондент НАН РА,
доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения. Сборник научных статей -2016/Институт экономики им.М.Котаняна НАН РА. Отв.редактор В. Л. Арутюнян. Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2016, - 472 с.

В сборник включены научные статьи участников республиканской научной конференции, проведенной в Институте экономики им. Котаняна НАН РА, на тему «Современные проблемы социально-экономического развития в Республике Армения».

Национальная академия наук Республики Армения Институт экономики имени М. Х. Котаняна

Республика Армения
0015, Ереван, ул. Григора Лусаворича 15
Тел. (+3741) 58-19-71,
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

Национальная академия наук Республики Армения Издательство “Гитутюн”

Республика Армения
0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24
Тел. (+3741) 58-18-23,
E-mail: hovakimyan@sci.am

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2016

Yerevan

"Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia

2016

ISSN 1829-4324
Approved for publishing by the decree of the
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of the Republic of Armenia

Editorial Board:

Yuri Mikael Suvaryan	*Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Sciences (Economics), Professor*
Robert Nerses Sarinyan	*Doctor of Sciences (Economics), Professor*
Ashot Hakob Bayadyan	*Doctor of Sciences (Economics), Professor*
Gayane Ernik Harutyunyan	*Ph.D. in Economics, Associate Professor*
Alvard Tevos Zatikyan	*Candidate of Sciences (Economics)*
Kristine Yuri baghdasaryan	*Ph.D. in Economics*
Hayk Ashot Markosyan	*Ph.D. in Economics*
Armine Grigori Zakharyan	*Ph.D. in Economics*

Responsible Editor:
VLADIMIR HARUTYUNYAN, Doctor of Sciences (Economics), Professor
Correspondent Member of the National Academy of Sciences
Republic of Armenia

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2016/ M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia; Responsible Editor: Vladimir L. Harutyunyan, Yerevan, "Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2016, - 472 p.

The Volume is the Proceedings Scientific Articles of the Republican Conference "Contemporary Socioeconomic Development Issues in the Republic of Armenia" held at the M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia.

M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia

15 Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
Tel. (+3741) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

"Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia

24 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Tel. (+3741) 58-18-23
E-mail: hovakimyan@sci.am

© M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վ. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 10-ամյա (2006-2016թթ.) գիտական հետագիծը 17

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ա. Հ. ԱՅԱՆՅԱՆ Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ փոփոխուն ծախսերի վերլուծությունը 21

Ն. Հ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ Ֆինանսական ռիսկերի կառավարման բազելյան սկզբունքների կիրառման հիմնախնդիրները 28

Կ. Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. Գ. ՁԱՐԳԱՐՅԱՆ ՀՀ բյուջետային հատկացումների կառուցվածքային փոփոխությունները և դրանց առաջնահերթ ուղղությունների ընտրությունը 33

Ս. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼՂՀ արժեթղթերի շուկայի գործունեության խթանման գործոնների վերլուծությունը 39

Դ. Ժ. ԱՐԱԲՅԱՆ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության նպատակների և ռազմավարության հարցերի շուրջ 45

Վ. Բ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Գ. Է. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՀ պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը SVAR մեթոդաբանությամբ 53

Վ. Բ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, Տ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հարկային հարաբերությունների համակարգը և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում 59

Ա. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ներդրումների տնտեսական բովանդակությունը և բնութագրիչները 68

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ Տվյալների ուսումնասիրության ընթացքում կողմնակալության դրսևորման ազդեցությունը փոխադարձ ֆոնդերի գործունեության վրա 74

Ա. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ Կենսաթոշակային ապահովումը ժամանակակից տնտեսական հարաբերությունների համակարգում 81

Ա. Գ. ԴՐԱՄԲՅԱՆ ՀՀ արտահանման վրա ազդող հարկային արտոնությունների հարցի շուրջ 87

Ա. Ե. ՁԱՔԱՐՅԱՆ, Կ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՀ արդյունաբերական կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրները 93

Ն. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՀ հարկային օրենսգրքի անհրաժեշտությունն ու խնդիրները հարկային բարեփոխումների համատեքստում 99

Ն. Մ. ԿԵՍՈՅԱՆ ՀՀ տնտեսական աճի առաձգականությունն ըստ զբաղվածության տեղաշարժերի 104

Լ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ ՀՀ բնակչության եկամուտների բաշխումը կարգավորող գործիքակազմը 109

Ե. Ռ. ՀԱՅՐԻՅԱՆ Արտարժութային ինտերվենցիաների դերը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում 118

Ա. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող վարկային ներդրումների փոխկապվածությունների վերլուծությունն ըստ օգտագործման պատկանելիության 124

Վ. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Դ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները և վճարային հաշվեկշռի պետական կարգավորման բարելավման հեռանկարները 131

Դ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ընթացիկ հաշվի պետական կարգավորման հիմնախնդիրները 138

Տ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հարկային համակարգը որպես ձեռնարկատիրական գործունեությունը խթանող գործոն 143

Հ. Ս. ՄԽԻԹԱՐՅԱՆ Ներդրումային ռիսկերի դասակարգման հիմնական մոտեցումները 148

Ս. Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Հայաստանի Հանրապետության ներդրումային ներուժի ավելացման հնարավորությունները 153

Լ. Գ. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի զարգացման միտումների ուսումնասիրությունը ՀՀ-ում 1995-2015թթ. 159

Կ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունները և հիմնախնդիրները 164

Կ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ Հարկաբյուջետային քաղաքականության դերը և առանձնահատկությունները՝ ֆինանսատնտեսական ճգնաժամերի հաղթահարման համատեքստում 171

Ա. Ա. ՍԵՐՈԲՅԱՆ Հարկային և ֆինանսական հաշվառումների մեկ միասնական համակարգի ստեղծման հարցի շուրջ 176

Տ. Վ. ՎԵՐԴՅԱՆ Լիզինգը որպես ներդրումների տեսակ և դրա օգտագործման անհրաժեշտությունը ԼՂՀ-ում 182

Մ. Գ. ՓՈՓԻԿՅԱՆ Արտադրանքի պահանջարկի անորոշության և կրկնակի զեղչերի պայմաններում առաջարկի ծավալների տնտեսամաթեմատիկական գնահատումը 187

Ն. Գ. ՔԱՐԴՈՒՄՅԱՆ Գործարարությամբ զբաղվելը և հարկման արդյունավետությունը հարկային բեռի համատեքստում 193

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Վ. Ա. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Հետխորհրդային պետություններում գիտելիքահենք տնտեսության զարգացման համեմատական վերլուծություն. Հայաստան, Վրաստան, Բելառուս, Էստոնիա 199

Լ. Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վարկավորման առանձնահատկություններն ու խնդիրները 207

Շ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ Մերչանդայզինգի ներդրման հիմնախնդիրները ՀՀ առևտրային կազմակերպություններում 212

Ա. Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության տարածքային միավորների շրջանացումը ըստ գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը խոչընդոտող հիմնախնդիրների 216

Ա. Հ. ԲԱՅԱԴՅԱՆ, Ա. Ա. ԲԱՅԱԴՅԱՆ ՀՀ-ում ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի ժամանակագրական փոփոխություններն ու կարգավորման ուղիները 221

Ա. Հ. ԲԱՅԱԴՅԱՆ, Շ. Մ. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՀՀ ագրովերամշակող արդյունաբերության մթերքների արտադրության բարելավումը որպես դրանց արտահանման ծավալների ավելացման կարևորագույն նախապայման 228

Հ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ա. Վ. ՄՈՒՍԱԵԼՅԱՆ ՀՀ տեխնածին հանքավայրերի կադաստրավորման ընդհանուր հարցերը 234

Ա. Ա. ԹԱՎԱԴՅԱՆ ՀՀ տնտեսության արտաքին ու ներքին մարտահրավերները և դրանց հաղթահարման ուղիները 239

Ք. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ Ծախսերի և ինքնարժեքի ձևավորման առանձնահատկությունները գինեգործության ոլորտում 244

Բ. Կ. ԿԵՈՎՏԵՐԵԼՅԱՆ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնախնդիրները 250

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀՀ տնտեսական ներուժի իրացման հնարավորությունները ԵԱՏՄ շրջանակներում. խոչընդոտներ և հեռանկարներ 254

Հ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրները ՀՀ Լոռու մարզում 260

Լ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ագրովերամշակող արդյունաբերության պարենամթերքների արտադրության և իրացման բարելավման ուղիները ՀՀ-ում 265

Մ. Ա. ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ ՏՏ ոլորտի զարգացման հեռանկարները ինտեգրացիայի շրջանակներում 271

Ռ. Յ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ ԼՂՀ տնտեսության զարգացման արդի մարտահրավերները 275

Մ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Պետական աջակցության անհրաժեշտությունը գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործում 280

Հ. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ Հոլանդական հիվանդությունը որպես Հայաստանում 2009թ. ֆինանսա-տնտեսական ճգնաժամի խորը ազդեցության հիմնական պատճառ..... 285

Հ. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ, Ա. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ Հայաստանի և Իրանի տնտեսությունների համեմատական վերլուծությունը 290

Ս. Հ. ՄԿՐՏՉՅԱՆ, Մ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Ագրովերամշակող արդյունաբերությունը որպես գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժ 296

Ս. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչը 302

Տ. Վ. ՇԱՀԻՆՅԱՆ Գործարարությամբ զբաղվելու պայմանները ԵԱՏՄ երկրներում 307

Լ. Գ. ՊՈՂՈՍՅԱՆ Գյուղատնտեսության ֆինանսավորման առանձնահատկությունները և կարգավորման ուղիները ՀՀ-ում 311

Ա. Ս. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, Լ. Վ. ՊՈՂՈՍՅԱՆ Ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման փոխազդեցությունները ՀՀ առևտրային բանկերում 317

Լ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ Հայ-իրանական փոխադարձ ներդրումային համագործակցության հիմքերը 326

Ռ. Ա. ՎԵՐԴՅԱՆ Տնտեսության գործարքային ծախսերի գնահատման առանձնահատկությունները 332

Ա. Ս. ՔԵՐՈԲՅԱՆ ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությունը և զարգացման հեռանկարները «Արևելյան գործընկերության» շրջանակներում 339

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Է. Ա. ԲԱԲԱՅԱՆ Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրները 347

Է. Ա. ԲԱԲԱՅԱՆ Միգրացիոն գործընթացների տարատեսակների և առանձնահատկությունների մասին 352

Ա. Գ. ԶԱԽԱՐՅԱՆ Ազգաբնակչության միգրացիայի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 358

Ա. Գ. ԶԱԽԱՐՅԱՆ Միգրացիոն գործընթացների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման վրա 365

Ա. Թ. ԶԱՏԻԿՅԱՆ Միգրացիոն հոսքերի հիմնախնդիրները ՀՀ-ում 373

Ա. Թ. ԶԱՏԻԿՅԱՆ Աշխատանքային միգրացիան և դրա դերը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման գործում 380

Ի. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ի. Ա. ՏԱՐԱՆՅԱՆ Աշխատանքային միգրացիայի և ներդրումների միջև փոխկապակցվածության հիմնախնդիրները ՀՀ-ում 387

Շ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ ՀՀ միգրացիոն գործընթացների ազդեցությունը դրամական փոխանցումների վրա 394

Շ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ Միգրացիոն շարժումը և դրա մեղմացման ուղիները ՀՀ-ում 401

Ռ. Ա. ՔԱՄԱԼՅԱՆ Միգրացիոն գործընթացների վերլուծությունը Ռամսեի տնտեսական աճի մոդելի միջոցով (ՀՀ օրինակով) 406

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լ. Ս. ԱԶԱՏՅԱՆ, Ռ. Ս. ԱԼՈՅԱՆ Գիտատեխնիկական տեղեկատվության իրականացման դերը արտադրության կայունացման ու զարգացման գործում 415

Ք. Յ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ե. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ Ստվերային տնտեսության տեսական հարցերի շուրջ..... 420

Ք. Յ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ստվերային տնտեսության գնահատման մեթոդները և դրանց տեղայնացման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում 425

Բ. Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Անձնակազմի կառավարման կատարելագործումը և աշխատանքի վարձատրությունը..... 432

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ինտեգրացիա. աշխարհաքաղաքական տեսանկյուն 438

Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տնտեսական ճգնաժամեր. տեսությունների պատմական ակնարկ 443

Հ. Մ. ՊԱՊՈՅԱՆ, Ա. Ս. ԲԵԿՉՅԱՆ Ստվերային տնտեսության ծավալների հաշվարկման հիմնահարցեր 447

Ռ. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ, Ի. Կ. ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ Մատթեոս Մամուրյանի «Տնտեսագիտական ուղղությունը»..... 454

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ..... 460

СОДЕРЖАНИЕ

В. Л. АРУТЮНЯН Вектор развития научных исследований института экономики им. М. Котаняна НАН РА за 10-летний период (2006-2016 гг.) 17

МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

А.О. АЯНЯН Анализ переменных затрат в себестоимости продукции современных тепличных хозяйств 21

Н.А. АНДРЕАСЯН Проблемы реализации базельских принципов управления финансовыми рисками 28

К.О. АВЕТИСЯН, А.Г. ЗАРГАРЯН Структурные изменения бюджетных ассигнований и выбор их приоритетных направлений в РА 33

С.А. АВЕТИСЯН Анализ факторов стимулирования деятельности рынка ценных бумаг НКР 39

Д.Ж. АРАБЯН К вопросу о целях и стратегии денежно-кредитной политики ЦБ РА 45

В.Б. БОСТАНДЖЯН, Г.Э. МИНАСЯН Оценка взаимосвязи государственных расходов и экономического роста в РА методом SVAR 53

В.Б. БОСТАНДЖЯН, Т.Л. АРУТЮНЯН Система налоговых отношений и пути повышения эффективности налоговой политики в Республике Армения 59

А.С. ГРИГОРЯН Экономическое содержание и характеристика инвестиций 68

Г.А. ГРИГОРЯН Воздействие проявления субъективизма в процессе датамайнинга на деятельность паевых инвестиционных фондов 74

А.А. ДАНИЕЛЯН Пенсионное обеспечение в системе современных экономических отношений 81

А.Г. ДРАМБЯН К вопросу о влиянии налоговых льгот на экспорт РА 87

А.Е. ЗАКАРЯН, К.О. АРАКЕЛЯН Проблемы равновесия структуры промышленной системы и национального рынка РА 93

Н.К. ХАЧАТРЯН Необходимость единого налогового кодекса и проблемы в контексте налоговых реформ 99

Н.М. КЕСОЯН Эластичность темпов экономического роста РА по сдвигам в занятости 104

Л.Г. АКОПЯН Регулирующий инструментарий распределения доходов населения Республики Армении 109

Е.Р. АЙРИЯН Роль валютных интервенций в реализации денежно-кредитной политики 118

А.В. АРУТЮНЯН Корреляционный анализ осуществляемых коммерческими банками РА кредитных инвестиций по источникам использования 124

В.Л. АРУТЮНЯН, Д.В. АРУТЮНЯН Приоритеты экономической политики и перспективы совершенствования государственного регулирования платежного баланса 131

Д.В. АРУТЮНЯН Проблемы государственного регулирования текущего счета 138

Т.В. АРУТЮНЯН Налоговая система в качестве стимулирующего фактора предпринимательской деятельности 143

А.С. МХИТАРЯН Основные подходы к классификации инвестиционых рисков 148

С.А. ПЕТРОСЯН Возможности роста инвестиционного потенциала Республики Армения 153

Л.Г. ПОГОСЯН Исследование тенденций развития валютного курса AMD/USD в РА за период 1995-2015 гг. 159

К.С. САРГСЯН Особенности фискальной политики РА и ее проблемы 164

К.С. САРГСЯН Роль и особенности налогово-бюджетной политики в контексте преодоления финансово-экономических кризисов 171

А.А. СЕРОБЯН К вопросу о создании единой системы налогового и финансового учета 176

Т.В. ВЕРДЯН Лизинг как форма инвестиций и необходимость его использования в НКР 182

М.Г. ПОТИКЯН Экономико-математическая модель оценки объмов предложения в условиях неопределенности спроса на продукцию и двойной ценовой скидки 187

Н.Г. КАРДУМЯН Ведение бизнеса и эффективность налогообложения в контексте налогового бремени 193

ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

А.В. АМИРХАНЯН Сравнительный анализ развития наукоемкой экономики в постсоветских странах: Армении, Грузии, Беларуси, Эстонии 199

Л.М. АРАКЕЛЯН Особенности и проблемы кредитования в сельском хозяйстве 207

Ш.С. АСАТРЯН Проблемы внедрения мерчендайзинга в коммерческих организациях РА 212

А.А. БАГДАСАРЯН Регионирование территориальных единиц Республики Армения в соответствии с проблемами, препятствующими эффективному использованию сельскохозяйственных земельных ресурсов 216

А.А. БАЯДЯН, А.А. БАЯДЯН Динамические ряды ввп и товарооборота и пути их регулирования в РА 221

А.А. БАЯДЯН, Ш.М. КОСТАНЯН Улучшение производства продукции агроперерабатывающей промышленности РА как важнейшая предпосылка увеличения объемов их экспорта 228

Г.Г. ГЕВОРКЯН, А.В. МУСАЕЛЯН Общие вопросы кадастрирования техногенных месторождений 234

А.А. ТАВАДЯН Внешние и внутренние вызовы экономики Армении и пути их преодоления 239

К.Г. ХАЧАТРЯН Особенности формирования затрат и себестоимости в сфере виноделия 244

Б.К. КЕОВТЕРЕЛЯН Проблемы оценки воздействия на окружающую среду 250

Г.Э. АРУТЮНЯН Возможности реализации экономического потенциала РА в ЕАЭС: препятствия и перспективы 254

А.А. АРУТЮНЯН Проблемы обеспечения экологической безопасности в Лорийской области РА ... 260

Л.М. ОГАНИСЯН Пути улучшения производства и реализации продовольствия агроперерабатывающей промышленности РА 265

М.А. ГУБАСАРЯН Перспективы развития ИТ- сектора в рамках интеграции 271

Р.Я. МАНГАСАРЯН Современные вызовы развития экономики НКР 275

М.Г. МАНУЧАРЯН Необходимость государственной поддержки в осуществлении сельскохозяйственного страхования 280

А.А. МАРКОСЯН «Голландская болезнь» как основная причина углубления финансово-экономического кризиса 2009 г. в Армении 285

А.А. МАРКОСЯН, А.Г. МИНАСЯН Сравнительный анализ экономики Армении и Ирана 290

С.А. МКРТЧЯН, М.Г. МАНУЧАРЯН Агроперерабатывающая промышленность как движущая сила развития сельского хозяйства 296

С.А. МКРТЧЯН Экологическая составляющая устойчивого развития горно-металлургической промышленности РА 302

Т.В. ШАГИНЯН Условия ведения бизнеса в странах ЕАЭС 307

Л.Г. ПОГОСЯН Особенности финансирования сельского хозяйства и пути регулирования в РА.. 311

А.С. САРИБЕКЯН, Л.В. ПОГОСЯН Взаимосвязь между стратегическим управлением и управлением проектами в коммерческих банках РА 317

Л.Н. САРГСЯН Основы армяно-иранского взаимного инвестиционного сотрудничества 326

Р.А. ВЕРДЯН Особенности оценки трансакционных издержек экономики 332

А.С. КЕРОБЯН Торгово-экономическое сотрудничество РА-ЕС и перспективы развития в рамках восточного партнерства..... 339

РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Э.А. БАБАЯН Проблемы совершенствования миграционной политики РА..... 347

Э.А. БАБАЯН О разновидностях и особенностях миграционных процессов 352

А.Г. ЗАХАРЯН Проблемы миграции населения в Республике Армения 358

А.Г. ЗАХАРЯН Влияние миграционных процессов на развитие экономики Республики Армения 365

А.Т. ЗАТИКЯН Проблемы миграционных процессов в РА..... 373

А.Т. ЗАТИКЯН Трудовая миграция и ее роль в социально – экономическом развитии РА..... 380

И.Г. АКОПЯН, И.А. ТАРАНЯН Проблемы взаимосвязи трудовой миграции с инвестициями в Армении..... 387

Ш.П. ПОГОСЯН Влияние миграционных процессов на денежные переводы в РА 394

Ш.П. ПОГОСЯН Миграционное движение и пути его смягчения в РА..... 401

Р.А. КАМАЛЯН Анализ миграционных процессов посредством модели экономического роста Рамсея (на примере РА) 406

ИСТОРИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

Л.С. АЗАТЯН, Р.С. АЛОЯН Роль реализации научно-технической информации в стабилизаци и развитии производства 415

К.Ю. БАГДАСАРЯН, Е.А. АКОПЯН О теоретических вопросах теневой экономики..... 420

К.Ю. БАГДАСАРЯН Методы оценки теневой экономики и подходы к их адаптации к армянским реалиям..... 425

Б.В. ГАБРИЕЛЯН Совершенствование управления персоналом и оплата труда..... 432

Г.Э. АРУТЮНЯН Интеграция: геополитический аспект 438

Л.К. АРУТЮНЯН Экономические кризисы: исторический очерк теорий..... 443

Г.М. ПАПОЯН, А.С. БЕКЧЯН Проблемы измерения объемов теневой экономики..... 447

Р.Н. САРИНЯН, И.К. НУРИДЖАНЯН «Направление экономической науки» Маттеоса Мамуряна 454

НАШИ АВТОРЫ 460

CONTENTS

V.L. HARUTYUNYAN A Decade-Long (2006-2016) Scientific Outline of M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of Armenia 17

MACROECONOMIC ISSUES AND FINANCES

A.H. AYANYAN Analysis of Variable Costs in the Per Unit Cost Structure of Modern Commercial Greenhouses 21

N.H. ANDRESAYAN Issues on Applying Basel Principles of Managing Financial Risks 28

K.H. AVETISYAN, A.G. ZARGARYAN The Structural Changes of Budget Allocations of the Republic of Armenia and the Choice of Their Priorities 33

S.A. AVETISYAN Analysis of Factors Contributing to the Stock Market Development in the NKR 39

D.ZH. ARABYAN On Issues of Objectives and Strategy of the Monetary Policy 45

V.B. BOSTANJYAN, G.E. MINASYAN Estimation of Interplay of Government Expenditure with the Economic Growth in the Republic of Armenia by a SVAR Technique 53

V.B. BOSTANJYAN, T.V. HARUTYUNYAN The System of Tax Relations and Approaches to Increasing the Effectiveness of the Tax Policy in the Republic of Armenia 59

A.S. GRIGORYAN The Economic Meaning and Characteristics of Investment 68

G.H. GRIGORYAN The Effects of Data-Snooping Bias on Mutual Fund Performance 74

A.H. DANIELYAN Pension Provision in the System of Contemporary Economic Relations 81

A.G. DRAMBYAN On Tax Incentives Affecting the Exports of the Republic of Armenia 87

A.Y. ZAKARYAN, K.H. ARAKELYAN Issues on the Industrial Structural System to Meet the Needs of the Domestic Market in the Republic of Armenia 93

N.K. KHACHATRYAN The Necessity and Issues of the New Unified Tax Code in the Context of Tax Reforms 99

N.M. KESOYAN GDP Elasticity with Respect to Employment in Various Industries of the Republic of Armenia 104

L.G. HAKOBYAN The Toolkit to Regulate the Distribution of Income of the Population in the Republic of Armenia 109

Y.R. HAYRIYAN The Role of Foreign Exchange Interventions in Carrying out Monetary Policy 118

A.V. HARUTYUNYAN Correlation Analysis of Investment Loans Provided by the Armenian Commercial Banks by Purpose of Use 124

V.L. HARUTYUNYAN, D.V. HARUTYUNYAN Economic Policy Priorities and the Prospects of Improving the State Regulation of the Balance of Payments 131

D.V. HARUTYUNYAN Issues of Current Account State Regulation 138

T.V. HARUTYUNYAN The Tax System as a Factor Promoting Entrepreneurial Activity 143

H.S. MKHITARYAN Main Approaches to Classifying Investment Risks 148

S.H. PETROSYAN Possibilities to Increase the Investment Potential of the Republic of Armenia 153

L.G. POGHOSYAN The Study of Trends on Armenian Dram to US Dollar Exchange Rate from 1995 to 2015 159

K.S. SARGSYAN Characteristics of the Fiscal Policy in the Republic of Armenia and Current Issues 164

K.S. SARGSYAN The Role and Characteristics of Fiscal Policy in the Context of Fighting Financial and Economic Crises 171

A.A. SEROBYAN On the Issue of Building a Single System of Tax and Financial Accounting 176

T.V. VERDYAN Equipment Leasing as a Form of Investments and its Need in the NKR..... 182

M.G. POTIKYAN Economic-Mathematical Estimation of Supply Under Uncertainty of Demand for Goods and a Double Price Discount..... 187

N.G. QARDUMYAN Doing Business and Taxation Effectiveness in the Context of Tax Burden 193

ISSUES ON THE REAL SECTOR OF THE ECONOMY

V.A. AMIRKHANYAN Comparative Analysis of the Development of Knowledge-Based Economies in the Post-Soviet Countries: Armenia, Georgia, Belarus and Estonia 199

L.M. ARAKELYAN The Peculiarities and Problems of Lending in the Agriculture in the Republic of Armenia..... 207

SH.S. ASATRYAN The Ways of Implementation of Merchandising in the Commercial Organizations of the Republic of Armenia 212

A.H. BAGHDASARYAN Regionalization of Territorial Units of the Republic of Armenia in accordance with the Problems Impeding the Efficient use of Agricultural Land Resources 216

A.H. BAYADYAN
A.A. BAYADYAN The Changes And Of The Turnover And The GDP in a Time-Span and the Ways of thereof Regulation in the Republic of Armenia 221

A.H. BAYADYAN
SH.M. KOSTANYAN Increase of the Quality of Food Items Produced by Food-Processing Industry as the Most Crucial Precondition for Increasing their Exports..... 228

H.G. GEVORGYAN
A.V. MUSAYELYAN On General Issues of Inventorying the Technogen Mine Sites in the Republic of Armenia..... 234

A.A. TAVADYAN External and Internal Challenges of Armenia's Economy and Ways to Overcome Them..... 239

K.H. KHACHATRYAN The Peculiarities of Prime Costs and Expenses in the Winemaking 244

B.K. KEOVTERELYAN Environmental Impact Assessment Issues 250

G.E. HARUTYUNYAN The Realization of the Economic Potential of the Republic of Armenia in the EAEU Framework: Obstacles and Prospects 254

H.H. HARUTYUNYAN Issues on Ensuring Environmental Safety in Lori Marz of the Republic of Armenia 260

L.M. HOVHANNISYAN Approaches to Improving the Production, Distribution and Sales in the Agri-Processing Sector of the Republic of Armenia 265

M.A. GHUBASARYAN IT Sector Development Prospects within the Integration Framework..... 271

R.Y. MANGASARYAN Current Challenges for Development of the NKR Economy 275

M.G. MANUCHARYAN The Need for the State Support in the Implementation of Agricultural Insurance 280

H.A. MAKROSYAN The Dutch Disease as the Main Cause-Root of Serious Negative Impact of the Financial and Economic Crisis in Armenia in 2009..... 285

H.A. MAKROSYAN
A.G. MINASYAN The Comparative Analysis of Economies of Armenia and Iran..... 290

S.H. MKRTCHYAN
M.G. MANUCHARYAN Agri-Processing Industry as a Driving Force for the Agricultural Development 296

S.A. MKRTCHYAN The Environment Component of Sustainable Development of the Mining Industry in the Republic of Armenia..... 302

T.V. SHAHINYAN The Terms and Conditions for Doing Business in the EAEU Member States..... 307

L.G. POGHOSYAN Peculiarities of Agriculture Funding and Regulation Methods in the Republic of Armenia..... 311

A.S. SARIBEKYAN, L.V. POGHOSYAN Interrelationship Between Strategic Management and Project Management in Commercial Banks of the Republic of Armenia 317

L.N. SARGSYAN The Foundation for Mutual Armenian-Iranian Investment Cooperation 326

R.A. VERDYAN Peculiarities of the Cost Assessment of the Economic Transactions 332

A.S. KEROBYAN Armenia-EU Trade and Economic Cooperation and Development Prospects within the Framework of Eastern Partnership 339

ISSUES ON DEVELOPING SERVICES SECTOR AND SOCIO-DEMOGRAPHIC STANCE

E.A. BABAYAN Issues on Improving the Migration Policy of the Republic of Armenia 347

E.A. BABAYAN On the Types and Characteristics of Migration Processes 352

A.G. ZAKHARYAN Population Migration Issues in the Republic of Armenia 358

A.G. ZAKHARYAN The Impact of Migration Processes on the Development of Economy of the Republic of Armenia 365

A.T. ZATIKYAN Issues on Migration Processes in the Republic of Armenia 373

A.T. ZATIKYAN Labor Migration and its Role In Socio-Economic Development of the Republic of Armenia 380

I.G. HAKOBYAN, I.A. TARANYAN Issues on Labor Migration Investment Linkages in the Republic of Armenia 387

SH.P. POGHOSYAN The Impact of Migration Processes in the Republic of Armenia on Remittances 394

SH.P. POGHOSYAN Migration Movement and Approaches to Mitigate it in the Republic of Armenia 401

R.A. KAMALYAN Analysis of Migration Processes Based on the Ramsey Economic Growth Model (on the Example of the Republic of Armenia) 406

ECONOMIC RESEARCH AND THE HISTORY OF THE ECONOMIC THOUGHT

L.S. AZATYAN, R.S. ALOYAN The Role of Scientific and Technical Information in Stabilizing and Developing the Production 415

K.Y.BAGHDASARYAN, Y.A. HAKOBYAN On Theoretical Issues of the Shadow Economy 420

K.Y.BAGHDASARYAN Methods to Measure the Size of the Shadow Economy and Approaches to Adopting Them in the Republic of Armenia 425

B.V. GABRIELYAN Improvement of Human Resource Management Practices and Labor Remuneration 432

G.E. HARUTYUNYAN Integration: Geopolitical Aspect 438

L.K. HARUTYUNYAN Economic Crises: Historical Outline of Theories 443

H.M. PAPOYAN, A.S. BEKCHYAN Issues on Measuring the Size of the Shadow Economy 447

R.N. SARINYAN, I.K. NURIJANYAN "The Economic Direction" of Mattheos Mamurian 454

OUR AUTHORS 460

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 10-ԱՄՅԱ (2006-2016ԹԹ.) ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

Հարկ է նշել, որ 2006թ.-ից ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի[1] տարեգրության մեջ սկսվեց մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարության որոշմամբ տնտեսագիտական ուղղվածություն ունեցող առանձին ոլորտներին համահունչ (ՀՀ ֆինանսների, էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն) երեք գիտահետազոտական ինստիտուտները՝ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպվեցին և միացվեցին ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը և որի արդյունքում ձևավորվեց վերոնշյալ անվանմամբ ինստիտուտը, իսկ որպես տնօրեն ընտրվեց Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանը՝ սկիզբ դնելով միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի կազմավորման գործընթացին, ինչպես նաև նորացված գիտական խորհրդի, գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ու գիտական նոր ուղղությունների ձևավորմանը: Այնուհետև ինստիտուտի հետագա 10-ամյա գործունեությունը բնորոշվեց որոշակի առանձնահատկություններով, որոնցից արժանահիշատակ են հետևյալները.

- հետազոտվող գիտական թեմաներին տրվում է առավել շատ գործնական ուղղվածություն, որոնց եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվում են ՀՀ կառավարությանը՝ վերջինիս կողմից մշակվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու ու ներառելու ակնկալիքով,
- հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովների անցկացումը,
- ինստիտուտի գիտական ներուժի երիտասարդացումը,
- հրատարակչական գործի նորովի կազմակերպումը:

Վերոնշյալներին համահունչ, այսօր մակրոտնտեսական հիմնախնդիրների, տնտեսության իրական, ֆինանսական ու ծառայությունների ոլորտի զարգացման, սոցիալական և ժողովրդագրական, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության գիտական ուղղությունները և դրանց արդյունքները հանրապետության տնտեսագետ մտավորականության համար դարձել են ինստիտուտի կողմից հրապարակվող ժողովածուում որպես հրատարակության հանդես:

Ֆինանսական հիմնախնդիրներն իրենց վերլուծական խորացումներն են ստացել գրքերի ձևով հրապարակված հետևյալ հետազոտություններում՝

1. Հարությունյան Վ., Ազիզյան Ա., Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները (2008թ.):
2. Հարությունյան Վ., Թամազյան Ա., Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները (2008թ.):
3. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Դ.Վ., Հարությունյան Տ.Վ., Հարկեր և հարկագանձում (2010թ.):

[1] Ինստիտուտը ստեղծվել է դեռևս 1955-ին, երբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում գործող տնտեսագիտական սեկտորը վերակազմավորվում է տնտեսագիտության ինստիտուտի (տնօրեն՝ Ա.Մարուխյան)՝ սկզբնավորելով ինստիտուտի տարեգրությունը, իսկ 1999թ. վերջինս անվանակոչվում է Մ.Քոթանյանի անվամբ, ով մինչ այդ եղել էր ինստիտուտի տնօրենը: Նշենք, որ մինչ ակադեմիկոս Մ.Քոթանյանը, ինստիտուտի տնօրեն, սկսած 1960թ.-ից եղել է ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, իսկ Մ.Քոթանյանից հետո ինստիտուտի տնօրեն է աշխատել (սկսած 1999-ից) ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը:

4. Հարությունյան Տ.Վ., Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում (2014թ.):
5. Կիրակոսյան Գ., Հարությունյան Տ., Հարկային բեռի արդարացի բաշխման և վարչարարության բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում (2014թ.):
6. Բայադյան Ա., Մարկոսյան Հ., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում (2015թ.):

Ինստիտուտի հետազոտությունների մի բաժինն էլ վերաբերում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խնդիրներին, որոնց մասնավորապես վերաբերում են հետևյալ աշխատությունները.

1. Հարությունյան Վ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր (2009թ.):
2. Հարությունյան Վ., Խաչատրյան Վ., Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում (2010թ.):
3. Հարությունյան Դ.Վ., Բադալյան Ա.Գ., Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները (2014):

Տնտեսության իրական հատվածի ուսումնասիրություններն ընդգրկում են ՀՀ գյուղատնտեսական արտադրությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, արտաքին տնտեսական կապեր, որոնց վերաբերյալ հրատարակվել են հետևյալ հետազոտությունները.

1. Թորոսյան Թ., Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը (2010թ.):
2. Ավագյան Հ., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում (2011թ.):
3. Ղազարյան Ս., Ղազարյան Է., Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում (2012թ.):
4. Թորոսյան Թ., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում (2012թ.):
5. Բայադյան Ա., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները (2013թ.):
6. Ավագյան Հ., ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը (2013թ.):
7. Ջատիկյան Ա., Դանիելյան Ա., ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում (2014թ.):
8. Ավագյան Հ., ՀՀ հանքավայրերում առկա պիրիտ հանքանյութի և դրա հարակից բաղադրիչների փոշիացումը կանխելու ուղիներն ու հեռանկարները (2014թ.):
9. Բայադյան Ա., Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում (2016թ.):

Հետազոտություններ են կատարվել մարդկային կապիտալի, մարդկային հասարակության էության բնութագրման ու ձևավորման, գիտության դերի վերաբերյալ (Բ.Եղիազարյան):

Որպես զարգացման և տնտեսական աճի վերաբերյալ նոր համակարգի մշակման անդրադարձ պիտի դիտել «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» հեղինակային կոլեկտիվի (հեղ. Յու.Սուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան, 2011թ.) և «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը» (2013թ., հեղ. Յու.Սուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան), Յու.Սուվարյանի «Տնտեսագիտություն, գիտություն, կրթություն» (2014թ.) ուսումնասիրությունները: Կառավարչական մտքի պատմության հարցերն են դիտարկվում Յու.Սուվարյանի և Վ.Միրզոյանի «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» (2013թ.) մենագրության մեջ:

1990-ական թվականներին ինստիտուտում դադարել էր գործել տնտեսական պատմության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինը, որը վերաբացվեց միացյալ ինստիտուտի

ժամանակ և սկզբնավորեց այդ ուղղությամբ նոր հետազոտությունների իրականացումը, որոնց արդյունքում հրատարակվեցին

1. Սարինյան Ռ., Ալեքսեյ Ջիվելեգովի տնտեսագիտությունը (2008թ.),
2. Սարինյան Ռ., Աղայան Մ., Նշանավոր տնտեսագետների տողանը, հետքեյնսյան շրջան (2009),
3. Հարությունյան Վ., Սարինյան Ռ., Աղայան Մ., Հայ տնտեսագետներ (2010թ.),
4. Հարությունյան Վ., Սարինյան Ռ., Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան (2012թ.),
5. Սարինյան Ռ., Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, երկու գրքով (2014թ.):

Ինստիտուտը լույս է ընծայել Աշոտ Բայադյանի «Տնտեսագիտական բառարանը» (2014), որն օգտակար ուղեցույց է ոչ միայն ուսանողների ու ասպիրանտների, այլև գիտաշխատողների, գործարար աշխարհի մարդկանց ու դասախոսների համար:

Ամփոփելով միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական հետազոտությունների համառոտ արդյունքները, կարող ենք փաստել այն, որ ինստիտուտի կողմից, ընդհանուր առմամբ, հրատարակվել է.

Գիտական հոդվածների 16 ժողովածու,

88 գիրք,

1294 հոդված (այդ թվում 82 միջազգային):

Սույն հոդվածը, ըստ էության ուրվագծում է անցած տասը տարիների ինստիտուտի հրապարակումներն ըստ հետազոտական ուղղությունների: Դրանց տեսական և կիրառական հարցերի առաջադրվող լուծումներն առավել հանգամանալից քննության են ենթարկվել Վ.Հարությունյանի և Ռ.Սարինյանի հրապարակած «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016թթ.» մենագրության մեջ (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016):

ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 10-ԱՄՅԱ (2006-2016ԹԹ.) ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Համառոտագիր

Հոդվածում համառոտակի ներկայացված է ինստիտուտի 10-ամյա (2006-2016թթ.) գիտական հետագիծը, որում մասնավորապես ներկայացված են ինստիտուտի 10-ամյա գիտական գործունեության առանձնահատկությունները, ինստիտուտի գիտական ուղղությունները և ըստ գիտական ուղղությունների հրապարակված գիտական հետազոտությունները՝ գրքերի և մենագրությունների ձևով, իսկ վերջում համառոտ ձևով ամփոփված են միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական հետազոտությունները, որոնցում առանձնացված են հրատարակված գրքերը, գիտական հոդվածների ժողովածուները և գիտական հոդվածները (այդ թվում արտասահմանյան):

Բանալի բառեր. *միացյալ ինստիտուտ, գիտական հետագիծ, գիտական ուղղություն, գիտական հոդված, հոդվածների ժողովածու:*

ВЕКТОР РАЗВИТИЯ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ ИНСТИТУТА ЭКОНОМИКИ ИМ. М. КОТАНЯНА НАН РА ЗА 10-ЛЕТНИЙ ПЕРИОД (2006-2016 ГГ.)

ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., профессор*
директор Института экономики им. М.Котаняна НАН РА, член-корр. НАН РА

Аннотация

В статье представлен обзор вектора развития научных исследований института за 10-летний период (2006-2016 гг.). В частности, представлены особенности 10-летней научной деятельности института, научные направления института и опубликованные по научным направлениям научные исследования в форме книг и монографий. В статье в краткой форме обобщены также результаты научных исследований объединенного института за последние 10 лет, среди которых выделены опубликованные книги, сборники статей и научные статьи, в том числе, опубликованные в зарубежных изданиях.

Ключевые слова: *объединенный институт, научный вектор, научное направление, научная статья, сборник статей.*

A DECADE-LONG (2006-2016) SCIENTIFIC OUTLINE OF M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia
Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article, in short, provides a decade-long (2006-2016) scientific outline of the Institute: characteristics of a decade-long scientific activity of the Institute, research directions of the Institute and publications produced as a research outcome of each research direction: books and collections of articles, in particular, and at the end, various research studies of a decade-long history of the united institute are shortly summarized, by highlighting the books, collections of articles, and scientific articles published (including those articles published in various overseas journals as well).

Keywords: *United institute, scientific outline, research direction, scientific article, collection of articles.*

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՅԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կազմակերպությունների ֆինանսները խոշոր հաշվով կարելի է դիտարկել որպես վերջիններիս արտադրական, աշխատանքային և մնացած բոլոր ֆոնդերի պլանավորման և կառավարման մեկ ամբողջություն[1]: Ցանկացած արտադրական և առևտրային գործունեություն ընդունված է սկսել գործարար ծրագրի կազմմամբ: Գործարար ծրագրերը հարկավոր են ինչպես ներդրողներին՝ հասկանալու համար նոր ստեղծվող կամ արդեն գործող ձեռնարկության ներկա և սպասվող ֆինանսական վիճակը, այնպես էլ այն ֆինանսական կառույցներին, որոնցից գործարարը ցանկանում է ներգրավել փոխառու միջոցներ[2]: Ավանդաբար գործարար ծրագրերին կարելի է վերագրել երեք հիմնական հատկանիշներ[3].

- կազմակերպության գործընթացների և գործառույթների հերթականության պլանավորում,
- կազմակերպության՝ նախապես պլանավորված գործընթացների և գործառույթների նկատմամբ վերահսկողության իրականացում,
- իրացման գործընթացի կազմակերպման օժանդակություն:

Ինչպես բոլոր կազմակերպություններում, այնպես էլ ջերմոցային տնտեսություններում գործարար ծրագրերի կազմումը և հետևողական մոնիթորինգային աշխատանքները կարևոր նշանակություն ունեն: Հայաստանյան արդյունաբերական ջերմոցային տնտեսությունների համար հատկապես գործարար ծրագրի կազմումը իրենից բավականին մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ տեղական կազմակերպությունները հիմնականում անհրաժեշտ դրամական միջոցները ներգրավում են ֆինանսական կառույցներից, ուստի անհրաժեշտություն է առաջանում մանրամասն վերլուծության ենթարկել ներդրումային, արտադրական և այնուհետ իրացման գործընթացները:

Մենք Հայաստանի ագրարային-արդյունաբերական ոլորտում առաջատար կազմակերպություն հանդիսացող[4] «Հայկական բերքի առաջմղման կենտրոն» ՓԲԸ աշխատանքային խմբով վերլուծության ենք ենթարկել արդյունաբերական ջերմոցային տնտեսություններին վերաբերող մի շարք գործարար ծրագրեր (այդ թվում ՀՀ-ում գործնականապես ներդրված և արդեն իսկ գործող ծրագրեր), դիտարկել ենք ժամանակակից տեխնոլոգիաներով աշխատող ջերմոցային տնտեսությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ ներառվող հիմնական ծախսային հոդվածները: Վերլուծության ժամանակ կատարել ենք ջերմոցային տնտեսությունների որոշակի տարանջատում ըստ իրենց արտադրական տարածքների, որպեսզի մասշտաբային ազդեցությունները առավել ակնհայտ երևան: Այդ նպատակով որպես հետազոտության առարկա վերցրել ենք 10,560 ք/մ, 40,550 ք/մ և 100,000 ք/մ աճեցվող տարածքով ժամանակակից ջերմատնային տնտեսությունների գործարար ծրագրերը:

Վերլուծության ենթարկելով վերոնշյալ գործարար ծրագրերը՝ հասկանալի դարձավ, որ արտադրական ջերմատնային տնտեսություններում ծախսերը իրենց բնույթով հիմնականում լինում են փոփոխուն և հաստատուն: Ջերմոցային տնտեսություններում փոփոխուն համարվում

[1] C. Paramasivan, T. Subramanian, Financial management, 264 page, 9page.
[2] Баринов В. А., Бизнес Планирование, М. 2003, 272с., стр. 5.
[3] S. Lawrence, F. Moyes, Writing a successful business plan, University of Colorado at Boulder, 2004, 34 page, page 2.
[4] ՀՀ Կառավարության որոշում N 1516-Ա, 27.10.2011թ.:

են այն ծախսերը, որոնք անմիջապես կապված են մշակաբույսերի աճեցման հետ և ուղղակիորեն վերագրելի են վերջիններիս ինքնարժեքին[1]: Հաստատուն ծախսերը ջերմատներում այն ծախսերն են, որոնք կատարվում են անկախ այն հանգամանքից, թե արտադրական գործընթաց առկա է ջերմատանը, թե ոչ[2]:

Փոփոխուն ծախսերը իրենց մեջ ներառում են ծախսերի հետևյալ հիմնական հոդվածները.

- արտադրական աշխատակազմի աշխատավարձ,
- պարարտանյութերի գծով ծախս,
- ջեռուցման գծով ծախս,
- էլեկտրաէներգիայի գծով ծախս,
- ջրի գծով ծախս
- բույսերի պաշտպանության միջոցների գծով ծախս

Առավել մանրամասն ներկայացնենք վերոնշյալ ծախսային հոդվածները.

Արտադրական անձնակազմի աշխատավարձ

10,560 ք/մ աճեցվող տարածք ունեցող ժամանակակից ջերմատնային տնտեսություններում 1 ք/մ արտադրական տարածքի տարեկան միջին բերքատվությունը հավասար է մոտավորապես 36,3 կգ/քմ: Տարեկան 383,328 կգ բանջարեղեն արտադրելու համար անհրաժեշտ են 15 բուսաբույծ-բանվորներ՝ միջինը 200,000 դրամ ամսական աշխատավարձով, որոնք զբաղվում են բերքի մշակման, անհրաժեշտ որակի և քանակի բերքի ստացման աշխատանքներով:

40,550 ք/մ աճեցվող տարածքով ժամանակակից ջերմատնային տնտեսության 1 ք/մ-ի տարեկան միջին արտադրողականությունը կազմում է 55 կգ: Տարեկան մոտավորապես 2,230,250 կգ բանջարեղենային բերքի արտադրության համար անհրաժեշտ է 75 բուսաբույծ-բանվոր՝ միջինը 200,000 դրամ ամսական աշխատավարձով:

100,000 ք/մ աճեցվող տարածքով ժամանակակից ջերմատնային տնտեսության 1 ք/մ-ի տարեկան միջին արտադրողականությունը կազմում է 51 կգ: Տարեկան մոտավորապես 5,100,000 կգ բանջարեղենային բերքի արտադրության համար անհրաժեշտ է 150 բուսաբույծ-բանվորներ, 10 բանվոր, ինչպես նաև 2 վարորդներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների արտադրական անձնակազմի գծով ծախսերը

Արտադրական անձնակազմի հաստիքների անվանումները	Ջերմատների արտադրական տարածքների մակերեսները, ք/մ								
	10,560			40,550			100,000		
	Աշխատողների քանակ	Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ, ներառյալ հարկերը	Տարեկան աշխ. ֆոնդ	Աշխատողների քանակ	Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ, ներառյալ հարկերը	Տարեկան աշխ. ֆոնդ	Աշխատողների քանակ	Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ, ներառյալ հարկերը	Տարեկան աշխ. ֆոնդ
Բուսաբույծ-բանվորներ	15	200,000	36,000,000	75	200,000	180,000,000	150	200,000	360,000,000
Բանվորներ	-		-	-		-	10	180,000	21,600,000
Վարորդներ	-		-	-		-	2	200,000	4,800,000
Ընդամենը	**15**	**200,000**	**36,000,000**	**75**	**200,000**	**180,000,000**	**162**	**198,765**	**386,400,000**

[1] http://www.agmrc.org/media/cms/p2257_47C17DE16225E.pdf, 06.02.2016

[2] J. A. Biernbaum, Greenhouse crop production: counting costs and making cents, 1998, 12 pages, page 1.

Եթե նայենք արտադրական ծախսերի աճի դինամիկային ջերմատան ընդհանուր մակերեսի ավելացման և ընդամենը բերքատվության ավելացման բովանդակության մեջ, ապա կտեսնենք, որ ջերմատան մակերեսի 3.84 անգամ ավելացման պարագայում (10,560 ք/մ-ից 40,550 ք/մ) ընդհանուր արտադրական ծախսերը ավելանում են 5 անգամ (36 մլն-ից 180 մլն), իսկ ջերմատան մակերեսի 2.47 անգամ (40,550 ք/մ-ից 100,000 ք/մ) ավելացման դեպքում նույն ցուցանիշը հավասար է 2.15 (180 մլն-ից 386.4 մլն):

Պարարտանյութերի գծով ծախս

Գոյություն ունեն մշակաբույսերին տրվող պարարտանյութերի քանակի հաշվարկման երկու հիմնական եղանակներ. առաջին տարբերակում հաշվարկում են հողում առկա սննդատարրերի փաստացի քանակության և մշակաբույսին անհրաժեշտ սննդարար տարրերի ընդունված օպտիմալ քանակության տարբերությունը, երկրորդ տարբերակում հաշվարկվում է նախատեսված բերքի համար պահանջվող սննդատարրերի քանակությունը՝ հաշվի առնելով բույսի՝ տրված և հողում փաստացի առկա պարարտանյութերի անհրաժեշտ քանակությունները[1]:

Փորձը ցույց է տալիս, որ արտադրական ջերմոցային տնտեսություններում 1 ք/մ արտադրական տարածքի համար պարարտանյութերի միջին տարեկան ծախսը կազմում է մոտավորապես 1500-1600 դրամ: Պարարտանյութերի գծով ծախսերը հաշվարկելու պարագայում կարելի է ընդգծել որակյալ պարարտանյութերի կիրառման արդյունավետության փաստը, քանի որ վերջինս էական ազդեցություն է ունենում վերջնական արտադրանքի ինչպես որակական, այնպես էլ քանակական հատկանիշների վրա: Ոռոգման համակարգում սուբստրատների կիրառման պարագայում ջրաթափանցելիությունը բարձր է, օրվա ընթացքում մի քանի անգամ կատարվում են ջրումներ, և առաջանում է դրենաժացված ջրերի մեծ քանակ: Ուստի, ջերմատան ծավալներից և բավարար ներդրումային կապիտալի առկայությունից ելնելով նպատակահարմար է ներդնել դրենաժացված ջրերի հեռացման համակարգ: Դրենաժացված ջրերում պարունակվում են մեծ քանակությամբ պարարտանյութեր, հետևաբար ցանկալի է ունենալ նաև դրենաժացված ջրերի ռեցերկուլյացիոն (կրկնակի օգտագործման) համակարգ: Վերջինս հնարավորություն կտա դրենաժային ջրերը ֆիլտրել և կրկնակի օգտագործել՝ այսպիսով մոտավորապես 20%-ով կրճատելով պարարտանյութերի ծախսը: Առանց տվյալ համակարգի խորհուրդ չի տրվում դրենաժային ջրերը օգտագործել, քանի որ վերջիններիս մեջ խախտված է լինում պարարտանյութերի օպտիմալ համամասնությունը: Ռեցերկուլյացիոն համակարգերի շուկայական գները տատանվում են 130,000-170,000 եվրոյի սահմաններում:

Ջեռուցման գծով ծախս

Ջերմատան ջեռուցումը մշակաբույսերի աճի և զարգացման կարևոր նախապայմաններից է: Դեռևս նախագծման փուլում հաշվի առնելով տարածաշրջանի կլիմայական պայմանները, մշակաբույսերի կազմը և դրանց համար անհրաժեշտ ջերմային ռեժիմները և ջերմատան չափերը՝ որոշվում է տվյալ տարածաշրջանում ջերմատան ջեռուցման տնտեսապես նպատակահարմար և արդյունավետ տարբերակը[2]: Հայաստանյան արդյունաբերական ջերմոցային տնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ այստեղ տնտեսապես առավել նպատակահարմար է ջեռուցման գազային կաթսայի[3] օգնությամբ ջրի տաքացման և այդ ջերմությունը ջեռուցման ցանցով ջերմատան օդին փոխանցելու մեթոդը[4]: Հայաստանյան կլիմայի համար առավել նպատակահարմար է ջերմատունը ծածկել պոլիէթիլենային երկշերտ թաղանթով: Այս պարագայում համապատասխան օդամղիչի միջոցով ջերմատան ներքին օդը կարող է մղվել ծածկի երկու շերտերի միջև:

[1] «Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ, Ջերմոցային տնտեսություններ, կառուցման, շահագործման և մշակության հիմունքներ, Երևան, 2015, 125 էջ, էջ 58:

[2] Երեք Ար ստրատեգիա ՍՊԸ, ՀՀ-ում առկա ջերմոցային տնտեսությունների մասին հաշվետվություն, Երևան, 2012, էջ 126, 194 էջ:

[3] Տնտեսապես առավել ձեռնտու է ժամանակակից կաթսայի տեղադրումը, որի ՕԳԳ հավասար է 98-99%:

[4] Ջեռուցման կաթսայի օգնությամբ ջրի տաքացման մեթոդը նպատակահարմար է օգտագործել մեծ ջերմատներում, որտեղ մոնտաժվող ջեռուցման խողովակաշարը ապահովում է ամբողջ տարածքի հավասարաչափ ջեռուցում:

Այսպիսով ջերմատան ներքին տաք օդը անմիջապես չի շփվի արտաքին սառը օդի հետ, և տեղի կունենա ջեռուցման ծախսերի 20-30%-ով տնտեսում:

1 ք/մ-ի համար հայաստանյան արդյունաբերական ջերմոցային տնտեսությունները միջինում տարեկան ծախսում են 40-45 խ/մ բնական գազ, ընդ որում այս մեծության մոտավորապես 70%-ը բաժին է ընկնում նոյեմբեր-մարտ ամիսներին, 30%-ը՝ ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Հայաստանում արդյունաբերական ջերմոցային տնտեսությունները ամսական կտրվածքով հիմնականում սպառում են 10 հազ խ/մ և ավելի բնական գազ, ուստի մեկ խ/մ-ի համար սակագինը կազմում է 111.9477 դրամ (առանց ԱԱՀ)[1]:

Էլեկտրաէներգիայի գծով ծախս

Ջերմատան էլեկտրաֆիկացումը նախատեսված է լուսավորության, ջեռուցման, օդափոխության, ոռոգման և այլ համակարգերի աշխատանքները ապահովելու համար: Գրագետ էլեկտրաֆիկացումը հատկապես կարևոր է այն ջերմատներում, որտեղ իրականացվում է մշակաբույսերի ձմեռային մշակություն, ուստի արհեստական ձևով օրվա տևողությունը երկարացնելու և մշակաբույսերի աճը կարգավորելու համար տեղադրվում են լրացուցիչ լուսավորության սարքավորումներ: Լրացուցիչ լուսավորությունը հարկավոր է նաև այն ջերմատներին, որտեղ աճեցվում են սածիլներ, քանի որ վերջինս նպաստում է դրանց արագ աճին: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ջերմատների լրացուցիչ լուսավորության համար առավել արդյունավետ է հատուկ էներգաէֆեկտով (խնայող) լյումինիսցենտային (ESL/ЭСЛ) և նատրիումային (ДНаТ) լամպերը, որոնք հնարավորություն են տալիս կրճատել շահագործման և էլեկտրաէներգիայի ընթացիկ ծախսերը[2]:

Էլեկտրաէներգիայի ծախսը շատ հարաբերական է արտադրական ջերմատներում՝ կախված մշակաբույսերի տեսակների ընտրությունից: Ուստի մենք մեր հաշվարկների մեջ ենթադրել ենք, որ 1 ք/մ-ի համար տարեկան կտրվածքով ծախսվում է 15 կՎ հոսանք, ընդ որում բոլոր սարքավորումները աշխատում են օրական 24 ժամ՝ օրվա բոլոր ժամերին միևնույն հզորությամբ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրական էներգիայի սակագնային պլանով արտադրական ջերմատները 1 կՎտ/Ժամ էլեկտրական էներգիան սպառում են ցերեկային ժամերին 33.15 դրամով (առանց ԱԱՀ), իսկ գիշերային ժամերին՝ 29.81 դրամով (առանց ԱԱՀ)[3]:

Հաշվի առնելով Հայաստանի բնակլիմայական արդյունավետ պայմանները, արհեստական լուսավորության համար էլեկտրաէներգիայի ծախսը այստեղ բավականին կրճատվում է: Էլեկտրական էներգիայի ծախսերի կրճատման տարբերակներից է համարվում կոգեներացիոն համակարգի ներդրումը արտադրական ջերմատներում: Վերջինս հնարավորություն է տալիս ջեռուցման համար անհրաժեշտ էներգիայի ստացման հետ մեկտեղ ստանալ նաև ջերմատան էլեկտրաֆիկացման համար անհրաժեշտ էլեկտրական էներգիա:

Ջրի գծով ծախս

Ջերմատան կարևոր կառուցվածքներից է ոռոգման համակարգը: Կախված ջերմատանը մշակվելիք մշակաբույսերի տեսակներից՝ արտադրական ջերմատներում կիրառվում են ոռոգման հետևյալ համակարգերը[4].

1. մակերեսային,
2. կաթիլային (այդ թվում՝ հիդրոպոնիկ),
3. անձրևային (այդ թվում՝ ցողարկման, մառախուղագոյացման):

---

[1] http://www.psrc.am/am/sectors/gas/tariffs

[2] «Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ, Ջերմոցային տնտեսություններ, կառուցման, շահագործման և մշակության հիմունքներ, Երևան, 2015, 125 էջ, էջ 33:

[3] http://www.psrc.am/am/sectors/electric/tariffs

[4] http://agroitalservice.ru/zakrytyj-grunt/irrigatsiya/, 06.02.2016

Տնտեսապես առավել նպատակահարմար է ջերմատներում կիրառել վերը նշված ոռոգման համակարգերից որևէ մեկը, այլ ոչ թե կոմբինացված համակարգեր, քանի որ վերջինիս դեպքում ոռոգման համակարգի արժեքը բարձր է լինում:

Ոռոգման համակարգում բարձր արդյունավետություն է ապահովում կաթիլային համակարգի կիրառումը: Եթե մշակությունը իրականացվում է սուբստրատային մեթոդով, կաթիլային համակարգը կրում է հիդրոպոնիկ ոռոգման նշանակություն, քանի որ բոլոր սննդարար նյութերը տրվում են ոռոգման համակարգով՝ ջրի միջոցով:

Վերջինս ունի մի շարք առավելություններ[1].

1. սննդարար նյութերը տրվում են անմիջապես բույսի արմատային համակարգին,
2. բույսի ստորին հատվածը և տերևները մնում են չոր, բարձր տոկոսայնությամբ պարարտանյութերի կիրառման դեպքում չեն լինում այրվածքներ,
3. ստեղծվում է բարենպաստ միկրոկլիմա՝ առանց օդի խոնավության կտրուկ ավելացման: Հնարավոր է դառնում բույսերի աճման և զարգացման յուրաքանչյուր փուլին համապատասխան տալ պարարտանյութերի և ջրի համապատասխան քանակություն,
4. պարարտանյութերն օգտագործվում են արդյունավետ և նպատակային:

1 ք/մ-ի համար հայաստանյան արդյունաբերական ջերմոցային տնտեսությունները միջինում ծախսում են 5,6 խ/մ բնական ջուր: Արտադրական ջերմոցային տնտեսությունների ջրի ծախսը համաձայն հաստատված սակագնի միջինում կազմում է 9,17 դրամ/խմ (առանց ԱԱՀ)[2]: Վերը նշված ռեցերկուլյացիոն համակարգի կիրառման դեպքում տնտեսվում է նաև ջրի գծով ծախսը մոտավորապես 30%-ով, քանի որ դրենաժային ջրերը կուտակվում և մասնակցում են նաև հաջորդ ջրապտույտին:

Բույսերի պաշտպանության միջոցների գծով ծախս

Այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկը բնակչությանն էկոլոգիապես մաքուր բանջարեղենով ապահովելն է, ինչը հնարավոր է միայն էկոլոգիապես մաքուր, քիմիական տարրեր չպարունակող բույսերի պաշտպանության միջոցների կիրառման պարագայում: Այս պարագայում հնարավորություն է տրվում նաև ապահովելու իրացման բավարար ծավալներ, հանդես գալ շուկայում բարձր որակի արտադրանքով և ապահովել իրացումից հասույթի ցանկալի մակարդակ: Այսօր զարգացած արդյունաբերական ջերմոցային տնտեսությունները կիրառում են բույսերի պաշտպանության մեխանիկական, քիմիական և կենսաբանական միջոցներ: Փորձը ցույց է տալիս, որ բույսերի պաշտպանության քիմիական միջոցների կիրառումը տնտեսապես արդյունավետ չէ, քանի որ վիրուսները ավելի արագ են ադապտացվում մշակաբույսերին, պաշտպանության միջոցների արդյունավետությունը որոշակի ժամանակ անց կորչում է, ինչպես նաև տարվա կտրվածքով ավելի շատ դրամական միջոցների ներդրումներ է պահանջում:

Վերլուծական աշխատանքները ցույց են տվել, որ թե՛ տնտեսապես, և թե՛ էկոլոգիապես նպատակահարմար է կիրառել բույսերի պաշտպանության ինտեգրացված եղանակներ (IPM: integrated pest management): Վերջինս ենթադրում է բույսերի պաշտպանության բիոլոգիական, քիմիական և մեխանիկական միջոցների համադրում[3]: Այս եղանակի կիրառման դեպքում, համաձայն փորձի, 1 ք/մ-ի համար հայաստանյան արդյունաբերական ջերմոցային տնտեսությունները միջինում ծախսում են 540 դրամ (առանց ԱԱՀ):

Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների ինքնարժեքի տարրը կազմող հիմնական ծախսային հոդվածների ցուցանիշները 1 ք/մ-հաշվով ներկայացված է աղյուսակի տեսքով (աղյուսակ 2):

---

[1] «Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ, Ջերմոցային տնտեսություններ, կառուցման, շահագործման և մշակության հիմունքներ, Երևան, 2015, 125 էջ, էջ 74:

[2] http://www.psrc.am/am/sectors/water/tariffs

[3] http://www.biocontrol.narod.ru/integra.htm, 06.02.2016

Աղյուսակ 2

Ժամանակակից ջերմոցային տնտեսությունների արտադրանքի ինքնարժեքի մեջ փոփոխուն ծախսումների կազմը

Ծախսային հոդվածի անվանումը	Ջերմատների արտադրական տարածքների մակերեսները, ք/մ					
	10560		40550		100000	
	Ընդամենը տարեկան ծախսեր, դրամ	Տարեկան ծախսեր, դրամ/ ք.մ	Ընդամենը տարեկան ծախսեր, դրամ	Տարեկան ծախսեր, դրամ/ ք.մ	Ընդամենը տարեկան ծախսեր, դրամ	Տարեկան ծախսեր, դրամ/ ք.մ
Արտադրական անձնակազմի աշխատավարձ	36,000,000	3,409	180,000,000	4,439	386,400,000	3,864
Պարարտանյութերի գծով ծախս	16,368,000	1,550	62,852,500	1,550	155,000,000	1,550
Ջեռուցման գծով ծախս	47,286,708	4,478	181,579,169	4,478	447,790,800	4,478
Էլեկտրաէներգիայի գծով ծախս	5,068,800	480	19,464,000	480	48,000,000	480
Ջրի գծով ծախս	542,277	51	2,082,324	51	5,135,200	51
Բույսերի պաշտպանության միջոցների գծով ծախս	5,702,400	540	21,897,000	540	54,000,000	540
Ընդամենը	**110,968,186**		**467,874,993**		**1,096,326,000**	

Հայաստանյան ջերմոցային տնտեսությունների համար կենսական նշանակություն ունի գործարար ծրագրերի կազմումը նախքան գործունեության սկիզբը, ծախսերի և, հատկապես փոփոխուն ծախսերի, նկատմամբ վերահսկողական միջոցառումների իրականացումը, որպեսզի վերջիններս կարողանան միջազգային շուկայում հանդես գալ որպես բավարար շահութաբերության մակարդակ ունեցող տնտեսություններ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՅԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածում առաջին հերթին ներկայացրել ենք այսօրվա շուկայական հարաբերությունների պայմաններում հայաստանյան ջերմատնային տնտեսություններում գործարար ծրագրերի կազմման անհրաժեշտությունը և կարևորությունը:

Այնուհետ մեր կողմից արված հետազոտական աշխատանքների արդյունքներով կատարել ենք ժամանակակից ջերմատնային տնտեսությունների արտադրանքների ինքնարժեքների մեջ հիմնական փոփոխուն ծախսումների վերլուծություն: Դիտարկել ենք փոփոխուն ծախսումների դինամիկաների փոփոխությունները 10560, 40550 և 100000 ք/մ արտադրական տարածքներով ջերմատների համար:

Հոդվածում ցանկացած փոփոխուն ծախսի տեսակ վերլուծելիս անդրադարձել ենք վերջինիս տնտեսման հնարավոր եղանակներին, ինչպես նաև դրանց ազդեցությանը կազմակերպության ֆինանսական կայունության և գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդրի շրջանակներում:

Բանալի բառեր. *գյուղատնտեսություն, ջերմոցային տնտեսություն, ջերմատուն, ջերմոց, գործարար ծրագիր, ինքնարժեք, փոփոխուն ծախսում, վերլուծություն:*

АНАЛИЗ ПЕРЕМЕННЫХ ЗАТРАТ В СЕБЕСТОИМОСТИ ПРОДУКЦИИ СОВРЕМЕННЫХ ТЕПЛИЧНЫХ ХОЗЯЙСТВ

АРТАК ОГАНЕСОВИЧ АЯНЯН
аспирант Институт экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье рассматривается необходимость и важность составления бизнес-планов тепличных хозяйств в условиях современных рыночных отношений.

По результатам исследовательской работы автором проводится анализ основных переменных затрат в себестоимости продукции современных тепличных хозяйств. Рассматривается изменение динамики переменных затрат тепличных хозяйств с производственными площадями 10560, 40550 и 100000 кв/м. В статье при анализе любого вида переменных затрат принимаются во внимание возможные способы экономии последних, а также их влияние на финансовую стабильность и повышение эффективности деятельности в рамках проблемы.

Ключевые слова: *сельское хозяйство, тепличное хозяйство, теплица, парник, бизнес-план, себестоимость, переменные затраты, анализ.*

ANALYSIS OF VARIABLE COSTS IN THE PER UNIT COST STRUCTURE OF MODERN COMMERCIAL GREENHOUSES

ARTAK HOVHANNES AYANYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article first justifies the need and importance for designing business plans by Armenian commercial greenhouses at the current stage of development of the market economy. Then, based on the research results, the author analyzes the main variable costs in per unit cost structure of modern commercial greenhouses. The author provides the dynamics of variable costs when the area of a commercial greenhouse is 10,560, 40,550 and 100,000 square meters. While analyzing each type of variable costs, the article provides possible methods of reducing the discussed costs and their impact on financial stability of companies within the context of increasing the effectiveness of performance.

Keywords: *Agriculture, commercial greenhouse, greenhouse, business plan, per unit cost, variable cost, analysis.*

ՆԱՐԵԿ ՀԱԿՈԲԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԶԵԼՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանկային համակարգի գործունեությունը առանձնանում է նորմատիվային կարգավորման ընդգրկուն դաշտով, որում հաշվի են առնվում նաև ֆինանսական ռիսկերը: Ներկայումս հրատապ է դառնում առևտրային բանկերում ռիսկային ազդակների իրատեսական գնահատումը, ինչպես կառավարման մարտավարական, այնպես էլ ռազմավարական համակարգում, ռիսկերի կառավարման վարչարարության խստացումը: Առաջնային է համարվում ֆինանսական ռիսկերի կառավարումը ոչ միայն միկրո, այլև մակրոտնտեսական հարթությունում՝ վերլուծելով տնտեսական աճի միտումները և հակացիկլային բացասական ազդեցությունները բանկային գործունեության վրա: Կարևորվում է նաև բանկային գործունեության ռիսկերի կանխարգելման շահադրդիչ միջավայրի ձևավորումը, որը վարչակազմի շրջանում մոտիվացիոն լծակներ է ձևավորում հնարավորինս արդյունավետ դարձնելու ռիսկ մենեջմենթը և նպաստում ֆինանսական ռիսկերի կառավարման ներբանկային մասնագիտացված անկախ կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Բանկային գործունեության ֆինանսական ռիսկերի գծով թվարկած հիմնախնդիրների լուծումները որոշակիորեն իրենց արտացոլումն են գտել բանկային վերահսկողության Բազելյան փաստաթղթերում, որոնք տասնամյակների միջով մշակման մի շարք փուլեր են անցնել և ներկայումս իրենց կիրառումն են գտել ֆինանսական ռիսկերի գծով որոշումների կայացման համակարգում: Դեռևս անցյալ դարաշրջանի սկզբին, երբ բանկային կապիտալի տեղաշարժերի ակտիվություն նկատվեց տարբեր երկրների միջև, հարց դրվեց որոշակիորեն կարգավորելու ֆինանսական ռիսկերի վերահսկողության գործընթացը, որը մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը ընթանում էր ոչ պաշտոնական ձևաչափով՝ աշխատաժողովների, գիտաժողովների և կլոր սեղանների կազմակերպման շրջանակում: Ի վերջո, այդ գործընթացը իր պաշտոնական ձևաչափը ստացավ անցյալ դարի 30-ական թվականներին, երբ Լոնդոնում գործող Միջազգային հաշվարկների բանկը (BIS) սկսեց աշխատանքներ տանել բանկային վերահսկողության համընդհանուր չափանիշների մշակման ուղղությամբ, որոնց արդյունքները մինչ այժմ էլ ընկած են Բազելյան կոմիտեի գործունեության հիմքում[1]:

Ռիսկերի վերահսկողության միջազգային գործընթացը առավել ակտիվացավ 1974 թ. գերմանական Herstatt խոշորագույն բանկի սնանկացումից հետո, որի պատճառը ռիսկերի կառավարման գծով մի շարք երկրների ֆինանսական կազմակերպությունների ոչ համաձայնեցված գործունեությունն էր: Դրան անմիջապես հետևեց Բազելյան վերահսկիչ կոմիտեի ստեղծման անհրաժեշտությունը, որի նպատակը հետագայում առևտրային խոշորագույն բանկերի կոորդինացված գործողությունների շնորհիվ նման իրավիճակի կրկնության կանխումն էր: Արդյունքում, 1988 թվականին ընդունվեց բանկային համակարգի վերահսկիչ կարգավորման փաստաթղթային փաթեթը, որը ստացավ «Բազել-1» անվանումը և աստիճանաբար իր կիրառումը գտավ շուրջ 130 երկրներում:

Առաջնահերթություն համարվեց սահմանել կապիտալի համարժեքության նորմատիվ՝ հիմք ընդունելով ռիսկով կշռված բանկային ակտիվները, որը մինչ այժմ էլ կիրառվում է առևտրային բանկերում: Սնանկացման իրավիճակներից և ֆինանսական դժվարություններից խուսափելու համար բանկերը պարտավորվեցին ձևավորել բավարար սեփական կապիտալ, որի կազմում ռիսկով կշռված ակտիվները առնվազն պետք է կազմեին 8%: Ի լրացումն այդ գործընթացի, 1996 թվականին Բազելյան կոմիտեն շուկայական ռիսկերի կանխարգելման նորմատիվային ցուցա-

[1] Ճուղուրյան Ա., Փահլևանյան Ս., Ֆինանսական վերահսկողության հիմունքներ, «Էդիթ Պրինտ», 2014, Էջ 77:

նիշների կիրառման նոր համակարգ առաջադրեց՝ կառուցված երեք հենասյուների սկզբունքով, և դրանով իսկ, փաստաթղթային այդ փաթեթը ստացավ «Բազել-2» անվանումը:

Առաջին հենասյունը ապահովում էր նվազագույն կապիտալը՝ հիմնված գործառնական և վարկային ռիսկերի վրա և իր մեծությամբ մնում էր անփոփոխ՝ 8%-ի նվազագույն սահմանում: Սակայն, այս անգամ արդեն լրացուցիչ դրվում էր կապիտալի որակական պահանջ՝ «առաջին մակարդակի կապիտալի» ապահովության նվազագույնը 4% պահանջով: Երկրորդ սյունը ապահովեց բանկային ռիսկերի վերահսկողության նոր էլեմենտներ, որոնք ուղղված էին կապիտալի համարժեքության ներկազմակերպչական գնահատման համակարգերի (ICAAP) կիրառմանը: Երրորդ հենասյունը առնչվում էր շուկայական ռիսկերի կառավարմանը և այդ ուղղությամբ կարգապահական միջոցառումների բարելավմանը, ուղղված հրապարակվող հաշվապահական հաշվառման հաշվետվություններով բանկային գործունեության արդյունքների տեղեկատվության թափանցիկ ներկայացմանը, ինչպես նաև՝ ֆինանսական ռիսկերի գծով կառավարչական որոշումների կայացման ներբանկային համակարգի կայացմանը:

Սակայն, համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամը եկավ ապացուցելու, որ «Բազել-2»-ով սահմանված բանկային գործունեության վերահսկողական նորմատիվային դաշտը անկատար էր ֆինանսական մի շարք ռիսկերի կառավարման գործում, և այդ իսկ պատճառով, 2010-2011 թթ. մշակվեց «Բազել-3» փաթեթը: Մասնավորապես, բանկային գործունեության ոլորտում մինչ այդ հաշվի չէին առնվել պրոցիկլային և համակարգային ռիսկերի գնահատումները, որոնք էլ ֆինանսատնտեսական ճգնաժամի հիմնական պատճառներն հանդիսացան: Ճգնաժամը ցույց տվեց, որ գործնականում կառավարման դաշտից դուրս էին մնացել «վարակիչ ռիսկերը», որոնք հետագայում վերանվանվեցին համակարգային ռիսկեր: Այս դեպքում, բանկային ոլորտում ձևավորվող գործարարության ոչ բարենպաստ գործընթացները ձևավորում էին ֆինանսական ռիսկեր, որոնք արագորեն տարածվում էին տնտեսության իրական ոլորտի վրա, ընդգրկելով բազմաբնույթ ճյուղեր, տարածաշրջաններ և անգամ երկրներ, և դրանով իսկ անհնար դարձնելով վերահսկողության ինտեգրացիոն գործընթացը և առաջացնելով համաշխարհային բնույթ կրող ֆինանսական ճգնաժամ:

Դրա վառ ապացույցը հանդիսացավ ԱՄՆ-ի հիպոթեկային շուկայում ծագած ճգնաժամը, երբ վարկավորման ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման հետևանքով ձևավորվեցին բանկային գործունեության համակարգային ռիսկեր և «վարակի ուժով» շղթայաբար տարածվեցին արևմտյան ֆինանսական շուկաներում, որոնք փոխինտեգրացված գործունեություն էին ծավալում: Ձևավորված իրավիճակում հարց դրվեց նոր պահանջներ ներկայացնել ռիսկերի վերահսկողական համակարգին: Մասնավորապես. «Բազել-3» փաստաթղթային փաթեթով առաջարկվեց.

1. կիրառել «առաջին մակարդակի բազային կապիտալ» ցուցանիշը, որով վերանայվեց բանկային կապիտալի որակական կազմին առաջադրվող պահանջները,
2. խստացնել վարկերի, ածանցյալ գործիքների, ՌԵՊՈ գործարքների գծով ռիսկային վնասները՝ բանկային կապիտալով փոխհատուցելու պահանջները,
3. սահմանել լուծարելիության նվազագույն մակարդակներ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով,
4. բանկերում ձևավորել բուֆերային կապիտալ, որը կհամալրի ճգնաժամային իրավիճակներում կապիտալի ռեզերվային պաշարները[1]:

Ընդ որում, համաձայն «Բազել -3» փաստաթղթային փաթեթի, առաջին մակարդակի բազային կապիտալը առաջնահերթորեն օգտագործվելու է նվազագույն պահանջների բավարարմանը՝ 6% առաջին մակարդակի և 8% ընդհանուր կապիտալի օգտագործմամբ և, միայն դրանից հետո, մնացորդային մասը կուղղորդվի բուֆերային կապիտալ: Այսպես, եթե 8% կարգավորող կապիտալ ունեցող բանկը ապահովելով առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի կամ երկրորդ մակարդակի կապիտալի բոլոր նվազագույն պահանջները, միաժամանակ արձանագրի կապիտալի

[1] Basel Commity on Banking Supervision, Report to G20 Leaders on Basel III implementation, June 2012, //www.bis.org/publ/bcbs.220.pdf

փոխհատուցման բուֆերային 0% մակարդակ, ապա պարտադրված կլինի 100%-ով սահմանափակելու շահույթի վերաբաշխումը (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Բանկային շահույթի բաշխման սահմանափակումները՝ բուֆերային կապիտալի ձևավորման նորմատիվները չապահովելիս[1]

Բուֆերային կապիտալի չափը , %	Շահույթի բաշխման սահմանափակումները %
< 0,625	100
0,625-1,25	80
1.25-1.875	60
1,875-2,5	40
> 2,5	0

Ֆինանսական ռիսկերի ձևավորումը կարող է կրել համակարգային բնույթ, պայմանավորված ոչ միայն բանկային համակարգերի սերտ ինտեգրմամբ և ֆինանսական լարվածության շղթայաբար տարածմամբ, այլև երկրում ձևավորված մակրոտնտեսական հավասարակշռության խախտմամբ: Մասնավորապես, համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամի տարիներին նկատվեց տեղաբաշխվող վարկային ռեսուրսների թանկացում և վարկավորման կրճատում, պայմանավորված պրոցիկլայնության հետ: Նախաճգնաժամային տարիներին, երբ համաշխարհային տնտեսությունը վերելք էր ապրում, բանկերը վարկային էքսպանսիա իրականացրին և վարկավորման բումի ժամանակ չձևավորվեցին համապատասխան ռեզերվներ՝ դրանով իսկ թուլացնելով բանկային կապիտալի պաշտպանվածության աստիճանը: Դրան հետևեց այն իրավիճակը, երբ տարբեր երկրների խոշորագույն բանկերը տնտեսության անկման շրջանում ցուցաբերեցին ռեսուրսների տեղաբաշխման գործառույթների պասիվություն, անգամ ձեռնարկելով վարկերի տեղաբաշխման գործարքների չափի և քանակի կտրուկ նվազեցումներ, որն էլ իր հերթին խորացրեց տնտեսության հետագա անկումը, իրավիճակը ընդհուպ հասցնելով ֆինանսական ցնցումների: Այսպես, արժույթի միջազգային հիմնադրամի հաշվարկներով, միայն բանկային կապիտալի համարժեքության մեկ տոկոսով նվազեցումը պատճառ հանդիսացավ ՀՆԱ-ի 1.4%-ի կրճատման, որին ճգնաժամի տարիներին հաջորդեց տնտեսական համակարգի զարգացմանը նպաստող անբավարար վարկային ռեսուրսների տոկոսադրույքների բարձրացումը[2]:

Այսպիսով, համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը բացահայտեց ֆինանսական միջնորդների գործունեության վերահսկողության լուրջ թերացումներ, որոնք առաջացնում են բանկային լուրջ ռիսկեր: Հիմնականում պարզ դարձավ, որ «Բազել-2»-ով միջազգային կարգավորիչ չափորոշիչները և բանկային գործունեության վերահսկողության միջազգային հայեցակարգը ի զորու չէին կառավարելու ֆինանսական ռիսկերը, որոնք ձևավորվում էին վարկավորման բումի ժամանակ: Այդ ժամանակահատվածում գործող ֆինանսական կարգավորիչները ի զորու չեղան արդյունավետ վերահսկելու, այսպես կոչված, ոչ թափանցիկ ֆինանսական ակտիվների օգտագործումը և բանկային կապիտալի որակական կազմի ձևավորումը, որի արդյունքում ձևավորվեցին բանկային ոլորտի ֆինանսական կայունության վատթարացման, համակարգային և լոկալացված ռիսկեր:

Ելնելով վերոնշյալ հանգամանքից, «Բազել-3»-ով ներկայումս առաջարկվում է տնտեսական համակարգային վնասների և պրոցիկլայնության բացասական հետևանքների փոխհատուցման համար ստեղծել պահպանողական բուֆեր, իսկ ավելցուկային վարկավորման կանխարգելման նկատառումներով՝ հակացիկլային բուֆեր: Նշված բուֆերների մեծությունը հաշվարկվում է ֆիքսված գործակիցներով՝ հիմնվելով ռիսկով կշռված համախառն ակտիվների վրա (տե՛ս աղյուսակ 2):

[1] Юденков Ю.Н., “Финансовый менеджмент”, // Внутренный контроль в кредитной организации, #4, 2011, стр. 24-27.

[2] Tamim Bayuomi, Ola Melander // Credit Matters: Empirical evidence on U.S. Macro-Financial Linkages. IMF working paper, July 2008, page 27.

Աղյուսակ 2

Կապիտալի համարժեքության պահանջները լրացուցիչ բուֆերներ ձևավորելիս[1]

	Առաջին մակարդակի հիմնական կապիտալ	Առաջին մակարդակի հիմնական և լրացուցիչ կապիտալ	Ընդամենը կապիտալ
Նվազագույն պահանջներ	4,5%	6%	8%
Կոնսերվացիոն բուֆեր	2,5%		
Նվազագույն պահանջներ՝ հաշվի առած կոնսերվացիոն բուֆերը	6%	8,5%	10,5%
Հակացիկլային բուֆեր	0-ից մինչև 2.5%		

Այսպիսով, բուֆերային կապիտալը նախատեսված է ֆինանսական լարվածության պարագայում բանկի վնասների փոխհատուցման համար: Այն բացառապես պետք է ընդգրկվի բազային կապիտալի կազմում: Եթե բանկերը չձևավորեն բուֆերային կապիտալ, ապա կունենան շահաբաժինների և բոնուսների վճարման սահմանափակումներ: Հետևաբար, բուֆերային կապիտալի կիրառումը նախատեսում է բանկերի կապիտալի ավելացում բարենպաստ գործարարության ժամանակահատվածում, որը հետագայում կօգտագործվի աննկանխատեսելի վնասների փոխհատուցման նպատակով: Նման մոտեցումը կնվազեցնի ճգնաժամի պարբերաշրջանային էֆեկտը:

Աղյուսակ 3

Բազել 3-ի կարգավորիչների կիրառման ժամանակացույցը[2]

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Առաջին մակարդակի բազային կապիտալ / RWA, %		3.5	4.0	4.5	4.5	4.5	4.5	4.5
Առաջին մակարդակի կապիտալ / RWA, %	4.0	4.5	5.5	6.0	6.0	6.0	6.0	6.0
Սեփական կապիտալ / RWA, %	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0	8.0
Կոնսերվացիոն կապիտալ / RWA, %			0.5	0.61	0.625	1.25	1.875	2.5
Հակացիկլային կապիտալ / RWA, %					0-ից մինչև 2.5%			
Ֆինանսական լծակ	դիտարկում	Թեսթավորում՝ 3% մակարդակով			Ճշգրտում	Ճշգրտված տվյալներ		
Կարճաժամկետ լուծարելիության նորմատիվ	Մշտադիտարկում			≥100%	≥100%	≥100%	≥100%	≥100%
Զուտ կայուն ֆինանսավորման ցուցանիշ	Մշտադիտարկում						>100%	>100%

Ընդհանրացնելով, պետք է ընդգծել, որ հակացիկլային բուֆերը փաստորեն ընդգրկված է առաջին մակարդակի բազային կապիտալում և կարգավորում է բանկի շահույթի բաշխման գործընթացը, իսկ այդ կապիտալի ձևավորման մեխանիզմի ներդրման ժամանակացույցը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետճգնաժամային ժամանակահատվածում բանկային գործունեության տնտեսական նորմատիվների համակարգում աստիճանաբար սկսեցին ներդրվել շահադրդման նորմերը, որոնք թիրախավորված են բանկային շահույթի բաշխման համամասնությունների, շահաբաժինների հայտարարագրման, պարգևատրումների չափերի ձևավորմանը: Նման գործընթացը միտված է նրան, որ բանկային մենեջմենթը խթանվում է ֆինանսական ռիսկերը սահմանափակող և կանխարգելիչ նորմատիվային պահանջները արդյունավետ իրացնելիս[3]:

---

[1] Basel Committee on Banking Supervision. Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking system. - Bank for International Settlements, December 2010 (rev. June 2011). - Mode of Access: http://www.bis.org/publ/bcbs189.pdf. - Date of access: 20.07.2011.

[2] Basel III New Capital and Liquidity Standards – FAQs, http://www.Moodysanalytics.com/Basel-III.

[3] Дубков С. В., Кузнецова Ю. А., Дадалко В. А. Методические основы управления операционным риском коммерческого банка // Банковский вестни, .Минск, 2011. – № 34, стр. 54-55.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԶԵԼՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԱՐԵԿ ՀԱԿՈԲԻ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Բանկային ռիսկերի կառավարումը Բազելյան սկզբունքների ներքո ներկայումս պահանջում է արդյունավետ կառավարչական որոշումների կայացում մի շարք ուղղություններով: Նախ և առաջ, հետևելով կապիտալի որակական կազմի և համարժեքության Բազելյան նոր սկզբունքները, ՀՀ առևտրային բանկերում պետք է իրականացվեն այնպիսի կառավարչական որոշումներ, որոնք վարկային ռեսուրսների տեղաբաշխման ակտիվացման ժամանակաշրջանում կսահմանափակեն բանկային շահույթի հետագա բաշխումը, նպատակ ունենալով տնտեսված հավելավճարները, անձնակազմին պարգևատրումները և բաժնետերերին շահաբաժինները ուղղորդելու պրոցիկլային ֆինանսական ռիսկերի վնասների փոխհատուցման պահուստների ձևավորմանը: Բացի այդ, տնտեսական աճի կարգավորման մակրոհաշվեկշռատության սկզբունքներից ելնելով, անհրաժեշտ է կայացնել վարկային ռեսուրսների տեղաբաշխման կտրուկ անկումը կանխարգելող կառավարչական որոշումներ՝ սահմանելով վարկային տոկոսադրույքների ճկուն համակարգ: Եվ, վերջապես, կարևորվում է նաև ֆինանսական ռիսկերի գծով կառավարչական որոշումներից բխող փաստացի արդյունքների մոնիթորինգն ու արդյունավետության գնահատումը, որը պետք է հիմք հանդիսանա ռիսկ մենեջմենթի օղակներում աշխատողներին շահադրդման մեխանիզմների կիրառման համար:

Բանալի բառեր. *պրոցիկլայնություն, ֆինանսատնտեսական նորմատիվներ, համակարգային ռիսկեր, բուֆերային կապիտալ, իրացվելիություն, առևտրային բանկ:*

ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ БАЗЕЛЬСКИХ ПРИНЦИПОВ УПРАВЛЕНИЯ ФИНАНСОВЫМИ РИСКАМИ

НАРЕК АКОПОВИЧ АНДРЕАСЯН
аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Управление банковскими рисками в соответствии с Базельскими принципами в настоящее время требует принятия управленческих решений по ряду направлений. Прежде всего, следуя новым Базельским принципам качества состава и адекватности капитала, в коммерческих банках должны реализоваться такие управленческие решения, которые в период активизации размещения кредитных ресурсов ограничат дальнейшее распределение банковской прибыли с целью направления сэкономленных надбавок, бонусов персонала и дивидендов акционеров на формирование резервов компенсации убытков проциклических финансовых рисков. Кроме того, исходя из макроэкономических принципов регулирования экономического роста необходимо принять управленческие решения, сдерживающие резкий спад размещения кредитных ресурсов путем установления гибкой системы процентных ставок за кредиты. И, наконец, важное значение имеют также вытекающие из управленческих решений, связанных с финансовыми рисками, мониторинг и оценка эффективности конечных результатов, что должно стать основой применения механизмов мотивации сотрудников в звеньях риск-менеджмента.

Ключевые слова: *проциклический, финансово-экономические нормативы, системные риски, буферный капитал, ликвидность, коммерческий.*

ISSUES ON APPLYING BASEL PRINCIPLES OF MANAGING FINANCIAL RISKS

NAREK HAKOB ANDRESAYAN
Ph.D.Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Currently, management of bank risks within the framework of Basel principles requires effective managerial decision making on various directions. First of all, in order to meet bank capital requirement norm and ensure the qualitative composition of capital in compliance with Basel new principles, the commercial banks of Armenia need to make such managerial decisions that would limit the further distribution of bank profits in the period of intensive allocation of loan resources in order to channel employee bonuses, and profits to shareholders and dividends notdistributed or paid to ensure reserves to compensate losses associated with the pro-cyclical financial risks. Moreover, based on the macro-prudential principles of regulating the economic growth it is required to make such managerial decisions that would prevent the tremendous decline in allocation of loan resources by defining a flexible system of bank loan interest rates. And finally, the role of monitoring of financial risks associated with the actual managerial decisions and assessment of the effectiveness of the decisions made is stressed that needs to serve as a guideline in applying various motivation tools with respect to employees engaged in risk management processes.

Keywords: *Pro-cyclical, financial and economic norms, systemic risks, buffer capital, liquidity, commercial bank.*

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի դոցենտ
ԱԻԴԱ ԳԵՎՈՐԳԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասիստենտ

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում բյուջետային քաղաքականությունը որպես տնտեսության վրա նպատակաուղղված ազդեցության միջոցի, առայժմ պասիվ վիճակում է: Կատարելով իր հիմնական գործառույթը՝ պետական եկամուտների և ծախսերի ապահովումը, այն ինքնաբերաբար, իր եկամտային և ծախսային մի շարք հոդվածների շնորհիվ, էապես ազդում է սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Բյուջետային համակարգը, որի միջոցով է հիմնականում իրականացվում ազգային արդյունքի զգալի մասի բաշխումն ու օգտագործումը, նրբորեն է արձագանքում տարբեր պատճառներով տնտեսական կյանքում ի հայտ եկող բացասական երևույթներին, այդ թվում՝ ֆինանսական կարգապահության անկմանը, ներդրումային ակտիվության նվազմանը, արտաքին տնտեսական գործառնությունների բարդացմանը, ինֆլյացիային և այլն:

Բյուջետային համակարգը, ինչպես հայտնի է, տնտեսության պետական կարգավորում իրականացնելու համար կարևորագույն միջոց է հանդիսանում: Այս առումով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել տնտեսության պետական կարգավորման նպատակով բյուջետային համակարգի ակտիվ օգտագործման հնարավորություններին: Պետությունը կոչված է ապահովելու շուկայական տնտեսության արդյունավետ գործունեությանը նպաստող իրավական բազան և հասարակական մթնոլորտը, պաշտպանելու մրցակցությունը, կայունացնելու տնտեսությունը, հսկելու զբաղվածության և արժեզրկման մակարդակը, խթանելու տնտեսական աճը և այլն: Ուստի, ժամանակի պահանջն է պետական հսկողության ուժեղացումը տնտեսական գործընթացների վրա:

ՀՀ 2014-2016թթ. պետական բյուջեների ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրվող փաստաթղթում ընդհանուր գծերով ներկայացվում են նշված ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ ոլորտների քաղաքականության գերակայությունները: ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեին համահունչ հետևյալ հիմնական ծախսային գերակայությունները.

- սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառում վերադաս մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովումը,
- հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովումը,
- տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման ու զարգացման ծրագրերի իրականացումը[1]:

[1] ՀՀ կառավարության 2014-2016թթ. պետական ծախսերի ծրագիր:

Աղյուսակ 1

Ընդամենը պետական բյուջեի ծախսային մասը՝ ըստ 2010-2016թթ. [1]

մլն.դրամ

Հ/հ	Ծախսեր	2010 Փաստ.	2011 Փաստ.	2012 Փաստ.	2013 Փաստ.	2014 Փաստ.	2015* Պլան.	2016* Պլան.
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	143280.5	154107.9	160488.8	188135.7	217276.1	238073.1	216857.9
2	Պաշտպանություն	147555.9	145491.0	152766.8	182019.0	190440.9	199033.4	208014.9
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	67443.1	72517.1	76668.6	91399.6	104793.0	100943.6	100303.6
4	Տնտեսական հարաբերություններ	112451.7	83955.7	71086.7	128316.1	83253.8	85206.0	114442.6
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	4926.1	6630.4	7032.2	4601.1	4672.7	4529.7	4612.3
6	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություն	42817.9	43848.5	14303.5	21727.7	31296.2	28371.2	26892.1
7	Առողջապահություն	56130.8	63312.4	64498.9	64355.3	76645.4	83377.4	86034.7
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	16102	17581.4	22821.8	18644.3	21395.7	25955.9	26079.9
9	Կրթություն	97790.1	106085.0	102783.5	103094.7	115806.0	127638.3	132113.0
10	Սոցիալական պաշտպանություն	244168.5	256176.3	291731.6	297379.6	342469.5	385475.8	405395.9
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	21649.4	36803.5	41919.8	43217.3	47004.1	20000.0	8000.0
	Ընդամենը	954316.5	986509.2	1006102.2	1142890.4	1235053.4	1298604.4	1373746.9

Աղյուսակ 2

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ 2010-2016թթ.[2]

Հ/հ	Ծախսեր	2010թ.		2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.		2015թ.		2016թ.	
		Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում	Տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, %	Տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	15.0	27.6	15.6	26.1	16.0	23.6	16.5	25.1	17.6	25.5	18.3	5.3	16.3	4.7
2	Պաշտպանություն	15.5	4.1	14.8	4.1	15.2	3.8	15.9	4.1	15.4	4.5	15.3	4.4	15.1	4.5
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	7.1	4.3	7.4	3.9	7.6	3.6	8.0	4.0	8.5	3.9	7.8	2.2	7.3	2.2
4	Տնտեսական հարաբերություններ	11.8	1.9	8.5	1.9	7.1	1.8	11.2	2.0	6.7	2.2	6.6	1.9	8.6	2.5
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.5	3.2	0.7	2.2	0.7	1.7	0.4	2.8	0.4	1.7	0.3	0.1	0.7	0.1
6	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություն	4.5	0.1	4.4	0.2	1.4	0.2	1.9	0.1	2.5	0.1	2.2	0.6	2.4	0.6
7	Առողջապահություն	5.9	1.2	6.4	1.2	6.4	0.3	5.6	0.5	6.2	0.6	6.4	1.8	6.7	1.9

[1] ՀՀ վիճակագրական տարեգիրք, 2014, 2015թթ. :

Աղյուսակ 2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	1.7	1.6	1.8	1.7	2.3	1.5	1.6	1.4	1.7	1.6	2.0	0.6	2.3	0.6
9	Կրթություն	10.3	0.5	10.8	0.5	10.2	0.5	9.0	0.4	9.4	0.4	9.8	2.8	9.7	2.9
10	Սոցիալական պաշտպանություն	25.6	2.8	26.0	2.8	29.0	2.4	26.0	2.3	27.7	2.4	29.6	8.5	29.4	8.8
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	2.3	7.1	3.7	6.8	4.2	6.8	3.8	6.5	3.8	7.1	1.5	0.4	1.3	0.2
	Ընդամենը	100	0.6	100	1.0	100	1.0	100	0.9	100	1.0	100	28.7	100	28.8

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, պետական բյուջեի ծախսերը 2010-2016թթ.-ին ունեցել են աճման միտում՝ 954316.5 մլն. դրամից հասնելով 1373746.9 մլն. դրամի: Բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում սոցիալական պաշտպանության գծով ծախսերը բոլոր տարիներին ունեցել են գերակշիռ դիրք: Դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում նշված տարիներին 25.6%-ից հասել է 29.4%-ի, իսկ ՀՆԱ-ի[1] նկատմամբ համապատասխանաբար 2.8-8.8%-ի: Երկրորդ տեղում են ընդհանուր բնույթի հանրային ծառայությանը վերաբերող ծախսերը, որոնք 2010-2014թթ. աճել են, իսկ վերջին երկու տարիներին նվազել՝ հասնելով 16.3%-ի: Հաջորդը պաշտպանության համակարգի հատկացումների հետ կապված ծախսերն են, որոնց կազմում ուսումնասիրվող տարիներին առանձնապես փոփոխության դինամիկա չի նկատվում: Այս ոլորտին 2016թ. բյուջեից հատկացվել է 15.1% կամ կանխատեսվող ՀՆԱ-ի 4.5%-ը: Պետական բյուջեի ծախսային մյուս հոդվածներում առանձնապես մեծ փոփոխություններ չեն նկատվում (գծապատկեր 1, 2):

Գծապատկեր 1

Պետական բյուջեի ծախսային հոդվածների տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում՝ ըստ 2010-2016թթ.



[1] ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի 2016թ. ծրագրով 2016թ.-ին կանխատեսվել է ՀՆԱ-ի 2.2% աճ նախորդ տարվա համեմատ:

Պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության փոփոխության դինամիկան 2010-2016թթ.



Պետական բյուջեն հանդես է գալիս որպես պետության ֆինանսավարկային համակարգի հիմնական ու առաջատար օղակ և ծառայում է որպես ֆինանսական կառավարման գործառնական լծակ ու կարևոր դեր է խաղում տնտեսությունը վերակառուցելու և այլ կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովման գործում:

Պետական բյուջեի անհրաժեշտությունը պայմանավորված է պետության հիմնական գործառույթների կատարման խուսափելիությամբ, ոչ արտադրական ոլորտի գործունեության ծավալման և վերարտադրության ապահովման կարևորությամբ[1]:

Ակնհայտ է, որ այսօր և առաջիկա տարիներին բյուջետային սահմանափակ ռեսուրսների միջոցով հնարավոր չէ ապահովել հանրապետության բոլոր պահանջմունքները: Ուստի կարևորագույն խնդիր է սոցիալ-տնտեսական զարգացման այն առաջնահերթ ուղղությունների ճիշտ ընտրությունը, որոնք կորոշեն բյուջետային հատկացումների հիմնական նպատակաուղղվածությունն առաջիկա տարիներին:

Բյուջետային հատկացումներն ըստ նշանակության կարելի է բաժանել 3 խոշոր խմբերի՝

1. պաշտպանական, պետական ապարատի պահպանման և այլն,
2. սոցիալական նշանակության հատկացումներ,
3. ներդրումներ:

Առաջին խմբի հատկացումները՝ հատկապես պաշտպանական նշանակության, շատ կարևոր են զինված ուժերի առջև դրված խնդիրները լուծելու համար: Դրանք են սպառազինության ու ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների բարելավումը, կապիտալ ծախսերի ավելացումը, ինչպես նաև միջազգային և ազգային երաշխիքների ուղղությամբ համապատասխան հատկացումները: Այդ խնդիրների լուծումը կնպաստի երկրի անվտանգության ապահովմանն ու տնտեսական զարգացմանը: Այս իմաստով խնդիրը հանգում է նրան, որ պետք է որոշել, թե մյուս երկու խմբերից որին պետք է տալ առաջնահերթությունը: Բնականաբար ներկա պայմաններում սոցիալական բնույթի հատկացումները շատ կարևոր են և չեն կարող որոշվել մնացորդային եղանակով: Ուրախալի է, որ վերջին տարիներին ՀՀ պետական բյուջեն ունի սոցիալական ուղղ-

[1] Ա.Հ. Բայադյան, Հ.Ա. Մարկոսյան, Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2015, էջ 171:

վածություն, սակայն մյուս կողմից էլ պետք է նշել, որ ներդրումներն անհրաժեշտ պայման են հանդիսանում տնտեսական ճգնաժամի հաղթահարման համար:

Պետության դերը զգալիորեն աճում է հատկապես տնտեսական գործընթացների անկման և ճգնաժամային իրավիճակներում: Ընդ որում, պետության դերի մեծացման մասին են վկայում ոչ միայն նախատեսվող ծախսերի մեծացումը, այլ նաև ՀՀ կառավարության կողմից կարգավորվող միջոցառումների աճող նշանակությունը: Միաժամանակ պետք է նշել այն իրողությունը, որ բյուջեի կողմից ֆինանսավորվող ուղղակի կապիտալ ներդրումները համախառն կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում զարգացած արդյունաբերական երկրներում տատանվում է 15-25%-ի սահմաններում: Պետական կապիտալ ներդրումների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանք ուղղված են արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծմանը: Ընդհանրապես ենթակառուցվածքների թերզարգացումը էական ազդեցություն է ունենում տնտեսության վրա: ՀՀ-ում այսօրվա դրությամբ մեծ կարևորություն ունի պետական միջոցների հաշվին արտադրական ենթակառուցվածքների զարգացումը: Դա վերաբերում է էներգետիկային, տրանսպորտային կոմունիկացիաներին, գյուղատնտեսական ենթակառուցվածքներին, այդ թվում՝ ջրամբարներ, ջրանցքներ, հողապաշտպան աշխատանքներ և այլն: Քանի որ բյուջետային ռեսուրսները խիստ սահմանափակ են, պետք է դիմել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների: Դրանք կարող են լինել վարկային ռեսուրսները, բարեգործական հիմնադրամները, ինչու չէ նաև օտարերկրյա վարկերը: Նպատակահարմար կլինի որոշել տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղությունները ճյուղային կտրվածքով և դրանց տալ պետական օժանդակություն: Այսինքն, պետությունը պետք է նպաստավոր միջավայր ապահովի ներքին ֆինանսական աղբյուրներն օգտագործելու համար՝ կապիտալի արտահոսքը դարձնելով անհրապույր: Այս երևույթը աճման միտում ունի և նախանշաններն անհանգստացնող են: Կապիտալի արտահոսքը խոչընդոտում է բարեփոխումներին զարգացող երկրներում, բարեփոխումներ, որոնք պետք է հաղթահարեն ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, խթանեն ձեռնարկատիրական գործունեությունը և մրցունակությունը: Մի շարք երկրներ այդ երևույթի դեմ պայքարել են բարձրացնելով տոկոսադրույքները:

ՀՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոն
ԱԻԴԱ ԳԵՎՈՐԳԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասիստենտ

Համառոտագիր

Տնտեսության պետական կարգավորում իրականացնելու համար բյուջետային համակարգը կարևորագույն միջոց է հանդիսանում: Այս առումով, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել Հայաստանում տնտեսության կարգավորման նպատակով բյուջետային համակարգի ակտիվ օգտագործման հնարավորություններին: Ուստի և կարևորագույն խնդիր է սոցիալ-տնտեսական զարգացման այն առաջնահերթ ուղղությունների ճիշտ ընտրությունը, որոնք կորոշեն բյուջետային հատկացումների հիմնական նպատակաուղղվածությունն առաջիկա տարիներին: Պետության դերը զգալիորեն աճում է հատկապես տնտեսական գործընթացների անկման և ճգնաժամային իրավիճակներում: Ելնելով վերլուծության արդյունքներից հոդվածում ներկայացվում է բյուջետային հատկացումների առաջնահերթ ուղղությունների ընտրությունը:

Բանալի բառեր. *պետական բյուջե, բյուջետային ծախսեր, ՀՆԱ, կապիտալ ներդրումներ, ճգնաժամ, սոցիալական հատկացումներ, ենթակառուցվածքներ:*

СТРУКТУРНЫЕ ИЗМЕНЕНИЯ БЮДЖЕТНЫХ АССИГНОВАНИЙ И ВЫБОР ИХ ПРИОРИТЕТНЫХ НАПРАВЛЕНИЙ В РА

КАРИНЕ ОГАНЕСОВНА АВЕТИСЯН, *к.э.н, доцент*
Кафедра финансов и кредита Национального аграрного университета Армении
АИДА ГЕВОРКОВНА ЗАРГАРЯН
ассистент кафедры финансов и кредита Национального аграрного университета Армении

Аннотация

Бюджетная система является важнейшим средством государственного регулирования экономики. В этой связи в целях регулирования экономики необходимо больше внимания уделить в Армении возможностям активного использования бюджетной системы. Поэтому основной задачей является правильный выбор приоритетных направлений социально-экономического развития, определяющих целенаправленность бюджетных ассигнований в ближайшие годы. Роль государства значительно возрастает особенно во время экономического спада и в кризисных ситуациях. Исходя из результатов анализа, в статье рассматривается вопрос выбора приоритетных направлений бюджетных ассигновнаий.

Ключевые слова: *государственный бюджет, бюджетные расходы, ВВП, капитальные вложения, кризис, социальные отчисления, инфраструктура.*

THE STRUCTURAL CHANGES OF BUDGET ALLOCATIONS OF THE RA AND THE CHOICE OF THEIR PRIORITIES

KARINE HOVHANNES AVETISYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University
AIDA GEVORG ZARGARYAN
Assistant, Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University

Abstract

The budget system is the most important mean to carry out the state regulation of the economy. Therefore, it is required to pay more attention to the opportunities for active use of the budget system for regulating the economy. Thus, the key to socio-economic development is the right choice of priorities that would define the main goal-oriented budget spending allocations in the coming years. The role of the government specifically increases substantially in times of a crisis and economic downturn. Based on the results of the analysis, the article presents the selection of the priority directions of budget spending allocations.

Keywords: *State budget, budget expenditure, GDP, capital investments, crisis, social contributions, infrastructure.*

ՍՈՒՍԱՆ ԱԲԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀրՊՀ-ի տնտեսաճարտարագիտական ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

ԼՂՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Շուկայական տնտեսության պայմաններում հատկապես կարևորվում է արդյունավետ գործող արժեթղթերի շուկայի առկայությունը, քանի որ վերջինս հանդիսանում է տնտեսության զարգացման արդյունավետ միջոց: Միջազգային պրակտիկայում, ինչպես նաև Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում նույնպես ընդունված է արժեթղթերի շուկայի միջոցով կապիտալի ներգրավման գործընթացը: Սակայն, ԼՂՀ-ում այդ գործընթացի իրականացմանը խոչընդոտում են որոշակի գործոններ, ինչն էլ սահմանափակում է ԼՂՀ-ի կապիտալի շուկայի զարգացումը: Չեն կայացել ինչպես ներդրումների խթանման, այնպես էլ ներդրումային ռեսուրսների շուկայական ձևավորման ու վերաբաշխման համակարգերը: Արդյունքում տեղի ունեցավ ֆինանսական ռեսուրսների անցանկալի տեղաշարժ արտադրության ոլորտից առևտրի ոլորտ, իսկ դրանց զգալի մասը ուղղակի արտահոսել է ԼՂՀ-ից դուրս:

Զարգացած արժեթղթերի շուկա ունենալու համար կարևորագույն խնդիրներից է ներդրումների խթանումը, իսկ զարգացող երկրների համար ներդրումների ներգրավման հիմնական գրավականը պետության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացումն է:

Ներդրումային ակտիվության բացակայությունը պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- երկրում բացակայում է համապատասխան ներդրումային միջավայրը, մասնավորապես, առկա է քաղաքական որոշակի անկայունություն,
- պետության կողմից վարվող բյուջետային և դրամավարկային խիստ քաղաքականությունը վատթարացնում է բնակչության և տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական վիճակը՝ դրանով իսկ սահմանափակելով ներդրումային հնարավորությունները,
- երկրում արժեթղթերի շուկան և շուկայի ենթակառուցվածքը դեռևս ամբողջական ձևավորված չէ:

Ինչպես գիտենք, արժեթղթերի շուկայի առանցքային խնդիրը ներդրումների ներգրավումն է, որը ստեղծում է տնտեսության երկարաժամկետ զարգացման հնարավորություն: Այդ խնդրի հետ մեկտեղ, արժեթղթերի շուկան պետական բյուջետային քաղաքականության գլխավոր գործիքներից մեկն է և, միաժամանակ, այդ շուկան մշտապես զարգացման փուլում է և ամուր կապերով կապված է ֆինանսատնտեսական գործունեության տարբեր ոլորտների հետ:

ԼՂՀ-ում տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է տնտեսության կառուցվածքային վերափոխումների իրականացում, ինչը նշանակում է նորագույն տեխնոլոգիաների ներդրում, ընկերությունների տեխնիկական վերազինում ու կատարելագործում, որը պահանջում է որոշակի ներդրումներ:

ԼՂՀ-ում զարգացած տնտեսություն ունենալու համար որպես ներդրումների ֆինանսավորման աղբյուր, բացի բանկային վարկերից և փոխառություններից, պետք է օգտագործել նաև արժեթղթերի թողարկման ճանապարհով ֆինանսական ռեսուրսների հավաքագրումը: Այսպիսով՝ ԼՂՀ-ում առաջնային հիմնախնդիր է դառնում ֆինանսավորման աղբյուրների «դիվերսիֆիկացիան», այսինքն՝ դրա առավել ճկուն շուկայական մեխանիզմի ձևավորումը, որը կնպաստի ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման արդյունավետության բարձրացմանն ու տնտեսության իրական հատված ուղղվող միջոցների ավելացմանը: Այդ առումով առանձնակի հրատապություն է ձեռք բերում արժեթղթերի շուկայի՝ որպես ներդրումային ռեսուրսների ձևավորման և տնտեսության ճյուղերի ու ոլորտների միջև դրանց օպտիմալ վերաբաշխման գործառույթն իրականացնող մեխանիզմի զարգացումը:

Արժեթղթերի շուկան տնտեսության մեջ իրականացնում է ներդրումների կարգավորիչի դեր, արժեթղթերի միջոցով հավաքագրվում են լրացուցիչ ֆինանսական միջոցները և տեղաբաշխվում տնտեսության համար կարևորագույն ճյուղերի ու ոլորտների միջև:

Այսպիսով՝ արժեթղթերի շուկան մի կողմից արտահայտում է տնտեսության վիճակը, մյուս կողմից՝ գործարար ակտիվության դինամիկան:

Ցանկացած երկրի ներդրումային իրավիճակը պայմանավորող հիմնական գործոնների շարքում (տնտեսական զարգացման մակարդակ, բնակչության լայն շրջանակների մոտ խնայողությունների առկայություն և այլն) անգնահատելի դեր ունի երկրի ֆինանսական շուկայում գործող ինստիտուտների կայացվածության աստիճանը: Նոր զարգացող երկրներում տնտեսական հաջող բարեփոխումներն առավելապես կախված են նրանից, թե տվյալ երկրի ֆինանսական շուկան ինչքանով է ունակ նպաստելու խնայողություններ-ներդրումներ-տնտեսական աճ-խնայողությունների փոխակերպումների փակ շրջապտույտի իրագործմանը: Այդ տեսակետից, տնտեսապես զարգացած երկրներում կարևորագույն դեր ունեն ինստիտուցիոնալ ներդրողները, հանձինս բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային և կենսաթոշակային հիմնադրամների, որոնց գործունեությունն, ըստ էության, հանգում է բազմաթիվ մանր ներդրողների խնայողությունների ներգրավմանը և կուտակված միջոցների հետագա ներդրմանը: Հանդիսանալով յուրատեսակ միջանկյալ օղակ արժեթղթերի շուկայի և տնտեսական համակարգի մնացած մասնակիցների միջև, այդ ինստիտուտները կառավարում են մեծածավալ ակտիվներ: Շատ դեպքերում հենց նրանք են որոշում արժեթղթերի շուկայի հետագա զարգացման դինամիկան:

ԼՂՀ-ում արժեթղթերի շուկա ձևավորելու և կայունություն ապահովելու համար կարևոր գործոններից են համարվում երկրի ներսում գտնվող դրամական ռեսուրսների ծավալները: Առաջին հերթին, բնակչության (տնային տնտեսությունների) կուտակումները, դրանց այն մասը, որոնք կարող են ուղղվել արժեթղթերում ներդրումներ կատարելուն: Հենց բնակչության, մանր ներդրողների միջոցներն իրենց մասսայականության շնորհիվ կարող են ստեղծել «երկար փողեր»՝ տնտեսական աճի ֆինանսավորման համար:

Ինչպես հայտնի է, ֆոնդային շուկայում բնակչության ներգրավվածությունը պայմանավորված է նրանց խնայողությունների մակարդակով[1]: ԼՂՀ-ում բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձը 2015թ. կազմել է 151.1 հազ. դրամ: Խնայողությունների հիմնական մասը գտնվում է բանկերում:

Բանկերում ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների մնացորդը 2015թ. հունվարի մեկի դրությամբ կազմեց 36191.9 մլն. դրամ, և 2015թ. հունվարի 1-ի նկատմամբ աճեց 5551.5 մլն. դրամով կամ 18.1%-ով: Իսկ Հայաստանի Հանրապետության բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը 2015թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմեց 1005959 մլն. դրամ, և 2014թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան աճեց 111807 մլն. դրամով կամ 12.5%-ով:

Գծապատկեր 1

ԼՂՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 2006-2015 թթ.[2]



[1] Российский фондовый рынок и создание международного финансового центра. Идеальная модель фондового рынка России на долгосрочную перспективу (до 2020 года), при участии Центр развития фондового рынка, ErnstandYoung, ThomasMurray, Москва 2008., ст. 149.

[2] Գծապատկերը կազմված է ԼՂՀ ԱԿԾ պաշտոնական կայքում(http://stat-nkr.am/)առկա տվյալների հիման վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հինգ տարի և ավելի ժամկետով խնայողությունները շատ քիչ են: Մինչև 1 տարի ժամկետայնությամբ ավանդները մեծամասնություն են կազմում (ընդհանուրի մոտ 66%-ը)[1]: Այլ գործիքներ չկան: Նկատի ունենք, որ կապիտալի շուկայի կամ արժեթղթերում երկարաժամկետ խնայողությունների գործիքները թերզարգացած են: Սա նշանակում է, որ տնտեսության մեջ «երկար փողեր» չկան:

Աղյուսակ 1

ԼՂՀ առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների(2014-2015թթ.) [2]

Անվանումը	01.01.2016	01.01.2016	Շեղումը (+,-)	
			բացարձակ	հարաբերական(%)
Ցպահանջ (ներառյալ հաշիվները)	8542.6	9205.0	662.4	7.8
Կազմակերպություններին	3745.3	3704.8	-40.5	-1.1
Մասնավոր	2274.8	2323.6	48.8	2.1
Պետական	1470.5	1381.2	-89.3	-6.1
Տնայինտն տեսություններին	4368.5	4821.8	453.3	10.4

ԼՂՀ-ում արժեթղթերի շուկայի միջոցով տնտեսության արդիականացման ֆինանսավորման հնարավորությունները գնահատելու համար չափազանց կարևոր է այն հարցը, թե ֆինանսական ռեսուրսների ո՞ր մասը կարող է օգտագործվել որպես ներդրումային ռեսուրս, ո՞ր մասը պետք է ձևավորվի արժեթղթերի վաճառքի միջոցով:

ԼՂՀ-ում զարգացած արժեթղթերի շուկա ստեղծելու համար հաջորդ կարևորագույն գործոններից է հանդիսանում ազգաբնակչության վստահությունն իր կողմից իրականացված ներդրումների հուսալիության կապակցությամբ:

Այսօր ԼՂՀ-ում բնակչության գերակշռող մասն իր միջոցների ներդրման առաջնահերթությունը տալիս է բանկային ավանդներին և ոչ թե որևէ կազմակերպության բաժնետոմսերի ձեռքբերմանը: Այն պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումն երաշխավորելու մասին» օրենքի ընդունումը հիմքեր ստեղծեց ավանդներն ավելի երաշխավորված դարձնելու համար,
- բնակչության տեղեկացվածության ցածր մակարդակը,
- մարդկանց ոչ պատշաճ կենսամակարդակը,
- բնակչության ֆինանսական գրագիտության ցածր մակարդակը և այլն:

ԼՂՀ-ում շուկայական տնտեսության ձևավորման առաջնահերթ խնդիրներից է ֆինանսական շուկայի ինստիտուցիոնալ կառույցների ձևավորումը, որն արժեթղթերի շուկայի կայացման կարևոր գործոններից է: Այդ կառույցների համար, ամենից առաջ, անհրաժեշտ է ապահովել կատարյալ օրենսդրական դաշտ:

Զարգացած պետություններում արժեթղթերի շուկայում հիմնական ներդրողները համարվում են ինստիտուցիոնալ կառույցները (ապահովագրական ընկերությունները, ոչ պետական կենսաթոշակային ու ներդրումային հիմնադրամները և այլն): Ինստիտուցիոնալ ներդրումային համակարգը զարգացման ընթացքում կրել է կառուցվածքային փոփոխություններ: Դեռևս 40 տարի առաջ ինստիտուցիոնալ ներդրողներ են համարվել բանկերը և ապահովագրական ընկերությունները: Ներդրումային կենսաթոշակային հիմնադրամների դերը ֆինանսական շուկաներում գրեթե բացակայում էր: Անցյալ դարի 60-70-ական թվականներից ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների ակտիվ զարգացում սկսվեց, որն առավել ցայտուն արտահայտվեց ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում: Ֆոնդային շուկայի վերելքը, բուռն թափ ստացած արժեթղթավորման գործընթացները, ինովացիաների ալիքը, ֆինանսական շուկաների միջոցով ավելի ու ավելի մեծ չափերի ռեսուրսների տեղաբաշխման, կուտակային կենսաթոշակային համակարգի

[1] Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը 2013-2014թթ. «Աճի հրամայականը և խոչընդոտները»,Ի-Վի Քոնսալթինգ, «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, 2014,էջ 61:

[2] ԼՂՀ ԱՎԾ պաշտոնական կայք http://stat-nkr.am/:

անցման գործընթացները բերեցին ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների, մասնավորապես, ակտիվների կառավարման գործառույթներ իրականացնող ներդրումային կենսաթոշակային հիմնադրամների արագ և որակական առաջխաղացմանը[1]:

Արդի պայմաններում գրեթե բոլոր երկրներում բանկերը համարվում են բնակչության ազատ միջոցների ներգրավման կարևորագույն ինստիտուտը: Այն պայմանավորված է նրանով, որ շատ երկրներում բանկային ոլորտը գտնվում է կոշտ կարգավորման և վերահսկման ներքո:

ԼՂՀ ֆինանսական շուկայում ներկա դրությամբ ամենաակտիվ գործող ինստիտուտները առևտրային բանկերն են: Հետևաբար՝ շատ կարևոր է, որպեսզի բանկերը ֆինանսական և հատկապես արժեթղթերի շուկայից ավելի շատ դրամական միջոցներ ներգրավեն, օգտագործեն իրենց լրիվ ներուժը, իրականացնեն մուրհակով գործառնություններ, հասարակության մեջ ստեղծեն վստահության լիարժեք մթնոլորտ, բնակչությանը ներգրավեն արժեթղթերի շուկա և այլն:

Տարբեր երկրների արժեթղթերի շուկայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրում այդ շուկայի կառուցվածքի և զարգացման հեռանկարների խնդիրները ներառում են նաև տվյալ երկրի առանձնահատկություններին առնչվող հիմնահարցերը:

Անցումային տնտեսություն ունեցող երկրների ներդրումների կարևորագույն աղբյուրներից է համարվում արժեթղթերի շուկայի ինստիտուցիոնալ մասնակիցների գործունեությունը: Վերջին տարիներին ԼՂՀ-ում հաստատված մակրոտնտեսական կայունությունը, ՀՆԱ-ի աճի դրական փոփոխությունները, ինֆլյացիայի չափավոր մակարդակը, բնականոն գործող բանկային համակարգը, բարեփոխումների հետևողական գործընթացը և սեփականաշնորհման գործընթացի ընդլայնումը հիմք հանդիսացան ֆինանսական ինստիտուտների ստեղծման համար:

Ինչպես նշվել է, զարգացած արժեթղթերի շուկա ստեղծելու համար կարևորագույն խնդիրներից է ներդրումների խթանումն, իսկ զարգացող երկրների համար ներդրումների ներգրավման կարևոր նախապայմանը պետության նկատմամբ վստահությունն է[2]: ԼՂՀ-ում ներդրումային ակտիվի բացակայությունը կապված է որոշակի պատճառների հետ՝

- երկրի անբարենպաստ աշխարհագրական դիրքը,
- տարածաշրջանային ռազմաքաղաքական անկայունությունը,
- ներքին շուկայի փոքր ծավալները,
- գրավիչ ներդրումային միջավայրի բացակայությունը,
- արժեթղթերի շուկայի և շուկայական ենթակառուցվածքի թերզարգացվածությունը:

Ինչպես հայտնի է, ներդրումները տնտեսության համեմատ պետք է աճեն ավելի արագ: Որպեսզի տնտեսությունը տարեկան աճի 7-10%-ով, անհրաժեշտ է, որ հիմնական կապիտալում ներդրումները տարեկան աճեն առնվազն 12-15%-ով[3]:

ԼՂՀ տնտեսության մեջ իրական ակտիվներում ներդրումների ծավալը վերջին տարիներին դրսևորել է աճի կայուն միտում: Ըստ հավաքագրված վիճակագրական տվյալների՝ 2008թ. իրական ակտիվներում իրականացված ներդրումների ծավալը 2007թ. համեմատությամբ աճել է 78.6 տոկոսով, իսկ 2003թ.՝ 2.1 անգամ: 2011-2012թթ. անցկացված հետազոտությունների արդյունքներով ևս իրական ակտիվներում իրականացված ներդրումները տարեցտարի աճման միտում են դրսևորել, մասնավորապես, 2011թ. ոչ ֆինանսական ակտիվներում իրականացված ներդրումների ծավալը կազմել է 50213.9 մլն. դրամ՝ 2010թ. ցուցանիշը գերազանցելով 8.2, և 2009թ. ցուցանիշը՝ 26.9 տոկոսով: Միայն 2013թ. ընթացքում իրականացված ներդրումների ծավալը նվազել է 2012թ. համանման ցուցանիշի նկատմամբ 13.8 տոկոսով:

Պետք է նշել, որ օտարերկրացիները ոգևորված չեն ներդրումներ կատարել ԼՂՀ արժեթղթերի շուկայում, որտեղ ցածր են թափանցիկությունը և իրացվելիությունը: Նշենք նաև այն իրողու-

---

[1] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները գիտական հոդվածների ժողովածու-4», «Դանամա», Երևան, 2005, էջ 157:

[2] Նիկողոսյան Կ., Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի ներդրումային հիմնախնդիրները և դրանց լուծման հեռանկարները, «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 1 - 2 հունվար – փետրվար, 2010, էջ 90:

[3] Потемкин А. Роль банковской системы и фондового рынка в финансировании реального сектора // Рынок ценных бумаг. – 2005. - № 14 (293).-С.16-20.

թյունը, որ թողարկողների փոքր քանակի պատճառով այսօր ներդրումային հնարավորություն-ները սահմանափակ են (գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Իրական ակտիվներում իրականացված ներդրումները ԼՂՀ-ում 2008-2014թթ[1]

Ինչպես մի շարք երկրների, այնպես էլ ԼՂՀ-ի համար օտարերկրյա ներդրումների խթանումը դարձել է տնտեսական քաղաքականության առանձին ուղղություն: Օտարերկրյա ներդրումների խթանումը՝ որպես տնտեսական աճի ապահովման գլխավոր լծակ, վերջին երկու տասնամյակ-ներում դարձել է համատարած երևույթ գրեթե բոլոր երկրներում, հետևաբար, ԼՂՀ-ում այն նույնպես անհրաժեշտ է կիրառել:

Այսպիսով՝ ներդրումային գործունեության ակտիվացումը՝ ԼՂՀ տնտեսության ներդրու-մային ռիսկի նվազմանը զուգընթաց, հնարավորություն կընձեռի ապահովել երկրի հետագա տնտեսական աճը և խթանել շուկայական ենթակառույցների զարգացումը:

[1] ԼՂՀ ԱՎԾ պաշտոնական կայք՝ stat-nkr.am:

ԼՂՀ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՍԱՆ ԱԲԿԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱրՊՀ-ի տնտեսաճարտարագիտական ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս

Համառոտագիր

Միջազգային պրակտիկայում, ինչպես նաև Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում նույնպես ընդունված է արժեթղթերի շուկայի միջոցով կապիտալի ներգրավման գործընթացը: Սակայն, ԼՂՀ-ում այդ գործընթացի իրականացմանը խոչընդոտում են որոշակի գործոններ, ինչն էլ սահմանափակում է ԼՂՀ-ի կապիտալի շուկայի զարգացումը: Չեն կայացել ինչպես ներդրումների խթանման, այնպես էլ ներդրումային ռեսուրսների շուկայական ձևավորման ու վերաբաշխման համակարգերը: Այդ պայմաններում իրականացվեց ֆինանսական ռեսուրսների անցանկալի տեղաշարժ արտադրության ոլորտից առևտրի ոլորտ, իսկ դրանց զգալի մասը ուղղակի արտահոսել է ԼՂՀ -ից դուրս:

Բանալի բառեր. *ֆինանսական շուկա, արժեթղթերի շուկա, ֆինանսական ինստիտուտներ, ներդրումներ, օտարերկրյա ներդրումներ, տնտեսություն, զարգացում, արդյունավետություն:*

АНАЛИЗ ФАКТОРОВ СТИМУЛИРОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ РЫНКА ЦЕННЫХ БУМАГ НКР

СУСАННА АБГАРОВНА АВЕТИСЯН
преподаватель финансово-учетной кафедры экономико-инженерного факультета
Арцахского государственного университета

Аннотация

В мировой практике (так же как в Армении и Нагорном Карабахе) привлечение капитала осуществляется в основном через рынок ценных бумаг. Однако, в НКР существуют определенные факторы, препятствующие реализации этого процесса, что ограничивает развитие рынка капитала НКР. Не состоялись системы как стимулирования инвестиций, так и рыночного формирования и перераспределения инвестиционных ресурсов. В этих условиях произошел нежелательный отток финансовых ресурсов из производственной сферы в торговлю, а их значительная часть просто ушла за пределы НКР.

Ключевые слова: *финансовый рынок, рынок ценных бумаг, финансовые институты, инвестиции, иностранные инвестиции, экономика, развитие, эффективность.*

ANALYSIS OF FACTORS CONTRIBUTING TO THE STOCK MARKET DEVELOPMENT IN THE NKR

SUSAN ABKAR AVETISYAN
Lecturer, Chair of Finances and Accounting
Economic-Engineering Department, Artsakh State University

Abstract

In the international practice and in Armenia and the Nagorno-Karabakh Republic the process of attracting capital via the stock market is practiced. However, several factors could impede that process, thus constraining the stock market development in the NKR. The Republic lacks the systems of investment promotion; market mechanisms to generate, channel and re-allocate investment resources. Under these circumstances, financial resources have been channeled from the manufacturing sector into the trade sector of the economy, and the substantial share of the resources has reported direct outflow from the NKR.

Keywords: *Financial market, stock market, financial institutions, investments, foreign investments, economy, development, effectiveness.*

ԴԱՎԻԹ ԺԻՐԱՅՐԻ ԱՐԱԲՅԱՆ
ՀԱՄՀ Ֆինանսներ և վարկ ամբիոնի հայցորդ

ՀՀ ԿԲ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը երկարաժամկետ գործողության մեթոդ է, որի հիման վրա ընդունվում են որոշումներ այն գործիքների վերաբերյալ, որոնք պետք է օգտագործվեն դրամավարկային քաղաքականության նպատակներին հասնելու համար[1]:

Իրենց հիմնական խնդիրն իրագործելու նպատակով կենտրոնական բանկերը կարող են ընտրել դրամավարկային քաղաքականության իրականացման տարբեր ռազմավարություններ: Ներկայումս առավել լայն կիրառում ունեցող ռազմավարություններն են՝ փողի ագրեգատների նպատակադրումը, փոխարժեքի նպատակադրումը և գնաճի նպատակադրումը[2]:

Բոլոր այս ռազմավարությունների վերլուծության և համեմատության առանցքում անվանական խարսխի նպատակադրման խնդիրն է, ուստի, նախ և առաջ ավելորդ չի լինի դիտարկել դրամավարկային քաղաքականության նպատակների և թիրախների հիերարխիան: Վերջինիս առաջնային և կարևորագույն օղակը դրամավարկային քաղաքականության հիմնական (վերջնական, գլխավոր, առաջնային) նպատակն է, որը, որպես կանոն, սահմանվում է ինքնուրույն, համապատասխան օրենսդրական ակտով՝ ելնելով տվյալ երկրի տնտեսության առանձնահատկություններից: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ի դեպքում դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը սահմանվել է 2 օրենսդրական ակտով՝ «Զբաղվածության մասին» 1946թ., ինչպես նաև «Լրիվ զբաղվածության և հավասարակշռված աճի մասին» 1978թ. օրենքներով: Համաձայն այս օրենքների՝ ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի դրամավարկային քաղաքականության գլխավոր նպատակներն են բնակչության լրիվ զբաղվածությունը և գների կայունությունը: Հատկապես վերջինս հանդիսանում է նաև ՀՀ ԿԲ հիմնական նպատակը՝ համաձայն «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և ՀՀ Սահմանադրության 83.3 հոդվածի:

Իր հիմնական նպատակին հասնելու համար կենտրոնական բանկը սահմանում է միջանկյալ նպատակ (intermediate targets)[3] կամ անվանական խարիսխ (nominal anchor): Միջանկյալ նպատակը տնտեսական փոփոխական է, որը կենտրոնական բանկը կարող է կարգավորել խելամիտ ժամկետներում և համեմատաբար բարձր ճշգրտությամբ, և որն ունի հարաբերականորեն կայուն կամ առնվազն կանխատեսելի կապ դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակի հետ[4]: Միջանկյալ նպատակների կարևորագույն առանձնահատկություններից են այն, որ դրանք անմիջականորեն չեն սահմանվում ԿԲ կողմից, սակայն արձագանքում է դրամավարկային քաղաքականության գործիքներին և բավականաչափ խիստ կապ ունեն դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակի հետ: Միջանկյալ նպատակների շարքին են դասվում ազգային արժույթի փոխարժեքը, փողի ագրեգատները, շուկայական տոկոսադրույքները և այլն[5]:

Դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հիմնական նպատակներին կարճաժամկետ հատվածում հասնելն

---

[1] Косова Т.Д., Папаика А.А., Арбузов С.Г., Деева Н.Е. Центральный банк и денежно – кредитная политика К.: Центр учебной литературы, 2011. – 328с.

[2] ՀՀ ԿԲ պաշտոնական կայք // www.cba.am

[3] Сулинов А.В. Стратегии монетарной политики с эксплицитным номинальным якорем и определение текушего режима таргетирования Банка России М.: Вестник РГТУ, 2007г., 250 стр.

[4] Bindseil, Ulrich The operational target of monetary policy and the rise and fall of reserve position doctrine. European central bank workin paper series NO. 372 / JUNE 2004

[5] Сулинов А.В. Стратегии монетарной политики с эксплицитным номинальным якорем и определение текушего режима таргетирования Банка России М.: Вестник РГТУ, 2007г., 250 стр.

անհնար է: Այսինքն՝ իշխանություններին անհրաժեշտ են ավելի արագ ազդանշաններ, որոնք թույլ կտան պատկերացում կազմել դրամավարկային ոլորտում ընթացող գործընթացների բնույթի վերաբերյալ և ժամանակին կիրառել համապատասխան միջոցներ: Սակայն, նույնիսկ միջանկյալ նպատակները չեն կրում ԿԲ անմիջական ազդեցությունը: Ուստի կենտրոնական բանկերը կիրառում են դրամավարկային քաղաքականության նպատակների երրորդ մակարդակը՝ այսպես կոչված, գործառնական կամ գործիքային նպատակները (operating/instrument targets): Սրանց շարքին են պատկանում պահուստային ագրեգատները (պարտադիր պահուստներ, փողի բազա) և տոկոսադրույքները: Արժութային փոխարժեքները ևս կարող են կիրառվել որպես գործառնական նպատակ՝ բայց միայն փոխարժեքի նպատակադրման ռազմավարության դեպքում:

Դրամավարկային քաղաքականության հիմնական, միջանկյալ և գործառնական նպատակների ընտրությունը հանդիսանում է յուրաքանչյուր կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից մեկը, և եթե այդ քաղաքականության հիմնական նպատակը, որպես կանոն, թելադրվում է տվյալ երկրի օրենսդրությամբ, ապա միջանկյալ և գործառնական նպատակների ընտրությունը պայմանավորվում է դրամավարկային քաղաքականության ընտրված ռազմավարությամբ:

Ինչպես նշվեց, ներկայումս աշխարհում առավել լայն տարածում ունեցող ռազմավարություններն են փողի ագրեգատների նպատակադրումը, փոխարժեքի նպատակադրումը և գնաճի նպատակադրումը:

Փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը համեմատաբար երիտասարդ ռազմավարություն է, որը մեծ տարածում գտավ հատկապես անցած դարի 70-80–ական թվականներին: Այս ռազմավարության գաղափարները հենվում են գնաճի և տնտեսական աճի կառավարման մոնետարիստական գաղափարների վրա: Փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը հենվում է փողի զանգվածի աճի կանոնի վրա, որն առաջարկվել է հայտնի տնտեսագետ Միլթոն Ֆրիդմանի կողմից իր «Կապիտալիզմ և ազատություն» աշխատության մեջ: Ֆրիդմանի տեսության համաձայն տնտեսության պետական կառավարման գլխավոր օղակը պետք է լինի փողի առաջարկը այլ ոչ թե պահանջարկը, քանի որ վերջինս ունի չափազանց անկանխատեսելի և փոփոխական բնույթ: Ըստ Ֆրիդմանի, կենտրոնական բանկերը պետք է կանոնավոր ձևով և հաստատուն չափով ավելացնեն փողի առաջարկը՝ հաշվի առնելով ՀՆԱ աճի ու գնաճի ցուցանիշները: Ընդ որում՝ կարևոր չէ այնքան փողի առաջարկի աճի չափը, որքան դրա հաստատունությունը, մասնավորապես ԱՄՆ-ի դեպքում Ֆրիդմանի կարծիքով փողի զանգվածի տարեկան աճը պետք է կազմեր 4-5% (ելնելով հասարակական արդյունքի աճի՝ 3% և գնաճի՝ 1-2% միջին տարեկան ցուցանիշներից)[1]: Սակայն մաքուր տեսքով Ֆրիդմանի կանոնը գործնականում երբևէ չի կիրառվել: Սովորաբար փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը որդեգրած կենտրոնական բանկերը սահմանում են փողի զանգվածի տարեկան աճի միջակայք այլ ոչ թե կոնկրետ ցուցանիշ:

Փողի ագրեգատների նպատակադրումը ենթադրում է դրանց գծով քանակական սահմանափակումներ, վերջնական նպատակին՝ գների կայունությանը հասնելու համար: Այն բավականին արդյունավետ ռազմավարություն է անցումային շրջանում գտնվող տնտեսությունների համար, որտեղ անխուսափելի են առաջարկի և պահանջարկի շոկերը, հնարավոր չէ գնահատել տնտեսական աճի համար անհրաժեշտ գնաճի բեկումնային մակարդակը (որից բարձրի դեպքում գնաճն արդեն նվազեցնում է տնտեսական աճի տեմպերը): Փողի ագրեգատների մակարդակի կառավարման միջոցով հնարավոր է ճկուն արձագանքել տնտեսությունում փոխարժեքի և տնտեսական աճի կարճաժամկետ տատանումներին, քանի որ գների կայունությունը ձևավորվում է արդեն մակրոտնտեսական որոշակի հաշվեկշռվածության ձեռքբերումից հետո[2]:

[1] Бартенев С.А. Экономические теории и школы (история и современность): Курс лекций. - М.: БЕК, 1996. - Гл. 10

[2] ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում, էջ 2:

Փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության առավելությունները վերլուծվել են Ֆ. Միշկինի կողմից, ըստ որի՝ փողի ագրեգատների նպատակադրման հիմնական առավելություններն են՝

1. այն հնարավորություն է տալիս կենտրոնական բանկին օգտագործելու դրամավարկային քաղաքականությունը ներքին խնդիրների հաղթահարման համար,
2. կենտրոնական բանկը կարող է կողմնորոշվել դեպի այլ երկրների նպատակներից տարբեր գնաճային նպատակներ՝ այսպիսով ադեկվատորեն արձագանքելով երկրում արտադրության ծավալների տատանումներին:

Սակայն փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարության արդյունավետ իրականացումը ենթադրում է որոշակի պայմանների ապահովում, առանց որոնց այս ռազմավարությունն ուղղակի չի գործում:

Նախ, փողի ագրեգատների նպատակադրման բոլոր վերը նշված առավելությունները ենթադրում են, որ գոյություն ունի ուժեղ կապ ռազմավարական նպատակային փոփոխականի և ընտրված փողի ագրեգատի միջև, իսկ եթե այս կապը թույլ է, ապա փողի ագրեգատների նպատակադրումը չի աշխատի[1]:

Փողի ագրեգատների ռազմավարության հաջող իրականացման հաջորդ նախապայմանը կենտրոնական բանկի կողմից փողի ագրեգատների լիարժեք կառավարման հնարավորությունն է:

Գնաճի նպատակադրման ռազմավարությունը կարելի է բնորոշել որպես ֆորմալ պահանջ հասարակության կողմից կենտրոնական բանկին՝ պահպանելու գնաճը որոշակի մակարդակի վրա[2] կամ էլ որպես դրամավարկային քաղաքականության ռեժիմ, որի իրականացումը ենթադրում է 5 հիմնական տարրեր.

- գների կայունությունն ընդունվում է որպես դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակ,
- գնաճի նպատակային ցուցանիշը հրապարակվում է բացահայտ կերպով,
- դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառումը հիմնվում է տեղեկատվական հոսքերի, այդ թվում՝ գնաճի կանխատեսումների վրա,
- ապահովվում է դրամավարկային քաղաքականության բարձր թափանցիկություն,
- գործում է հաշվետվական հստակ համակարգ[3]:

Գնաճի նպատակադրման ռազմավարությունն առաջինը ներդրվել է Նոր Զելանդիայում 1990թ., երբ սպառողական գների աճի ցածր տեմպը հայտարարվեց որպես պահուստային բանկի առաջնահերթ խնդիր: Ավելի ուշ նույն օրինակին դիմեցին Չիլիի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինները: 1990-ականներին և 2000-ականներին գնաճի նպատակադրումն սկսեց ակտիվորեն կիրառվել զարգացող երկրներում, մասնավորապես՝ Հարավային Կորեայում, Բրազիլիայում, Կոլումբիայում, Թայլանդում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի երկրներում՝ Չեխիայում և Լեհաստանում:

Գնաճի նպատակադրման ռազմավարության հիմնական առավելություններն են.

- գների կայունության ապահովումը,
- ԿԲ հաշվետվողականության աճը,
- ԿԲ անկախության պայմանը,
- թափանցիկությունը,
- տարաբնույթ մակրոտնտեսական փոփոխականների վերլուծության հնարավորությունը[4]:

Գնաճի նպատակադրման ռազմավարության թերություններն են.

- գնաճի նպատակադրումը չափազանց խիստ է,

---

[1] Мишкин, Фредерик С. Экономическая теория денег, банковского дела и финансовых рынков, 7-е издание. Часть 2: Пер. с англ.,2006, էջ 597:

[2] Золотарева, О.А. Инфляционное таргетирование: от дискреции к правилу / О.А. Золотарева // Вестник енинградского государственного университета имени А.С. Пушкина. – 2012. – №1– том 6. Экономика. – С. 126–134

[3] INFLATION TARGETING by Frederic S. Mishkin Graduate School of Business, Columbia University and National Bureau of Economic Research, July 2001

[4] PROS AND CONS OF INFLATION TARGETING STRATEGY Mihaela SUDACEVSCHI Lex et Scientia , 2011.

- թույլ է տալիս ԿԲ չափից ավելի մեծ հայեցողականություն,
- գնաճի նպատակադրումը կարող է առաջացնել տնտեսական անկայունություն,
- կարող է դանդաղել տնտեսական աճը,
- չի ընդունում ֆիսկալ գերակայությունը,
- փոխարժեքի ճկունությունը (գնաճի նպատակադրման անհրաժեշտ պայմաններից մեկը) կարող է հանգեցնել ֆինանսական անկայունության,
- գնաճը դրամավարկային իշխանությունների կողմից դժվար է կառավարվում[1]:

Դրամավարկային քաղաքականության ռազմավարության երեք հիմնական տեսակներից է փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունը:

Փոխարժեքի նպատակադրման ռազմավարության տարատեսակներից մեկը հեռավոր անցյալում ենթադրում էր ազգային արժույթի արժեքի կցում որոշակի բարձր իրացվելի ապրանքի (սովորաբար՝ ոսկուն): Փոխարժեքի նպատակադրման ռազմավարության ժամանակակից ընկալումը ենթադրում է ազգային արժույթի փոխարժեքի կապակցումը այլ երկրի (ավելի կայուն տնտեսությամբ երկրի) արժույթի փոխարժեքին: Երկիրը, որի արժույթի փոխարժեքին կցվում է ազգային արժույթի փոխարժեքը, անվանում են խարսխման երկիր (anchor country), իսկ դրա արժույթը՝ խարսխման արժույթ (anchor currency)[2]:

Փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունն ունի մի քանի առավելություններ.

- Խիստ (կոշտ) կապակցման դեպքում ապահովվում է խարսխման երկրից ներկրվող ապրանքների գների կայունությունը և դրանց միջոցով նաև գների կայունությունն ընդհանրապես ներքին շուկայում,
- Եթե փոխարժեքի թիրախը հուսալի է, ապա դա կապակցում է գնաճային սպասումները խարսխման երկրի գնաճի մակարդակին,
- Կայուն փոխանցումային մեխանիզմի հետ միասին, փոխարժեքի թիրախը տալիս է դրամավարկային քաղաքականության վարման ավտոմատ կանոն, ինչը թույլ է տալիս մեղմացնել ժամանակային անհամապատասխանության խնդիրը:
- Փոխարժեքի նպատակադրումը դրամավարկային քաղաքականությունը դարձնում է պարզ ու հասկանալի լայն հասարակության համար[3]:

Վերոնշյալ առավելությունների հետ միասին փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունը ունի որոշ թերություններ.

- Բաց կապիտալի շուկայի պայմաններում պետությունը կորցնում է իր անկախությունը դրամավարկային քաղաքականության վարման մեջ ընդհուպ մինչև այն իրավիճակը, երբ դրամավարկային քաղաքականության գործիքները չեն կարողանում էական ազդեցություն ունենալ ներքին շուկայի տարբեր գործոնների վրա,
- Փոխարժեքի նպատակադրումը կարող է չեզոքացնել այն ազդակը, որ արտաքին ֆինանսական շուկաները տալիս են դրամավարկային քաղաքականության վիճակի մասին,
- Փոխարժեքի նպատակադրման ռազմավարությունը երկիրը դարձնում է բաց արտաքին սպեկուլյատիվ հարձակումների համար,
- Փոխարժեքի նպատակադրման ռազմավարության մյուս պոտենցիալ վտանգն այն է, որ առաջարկելով ավելի կայուն փոխարժեք՝ դրամավարկային իշխանությունները կարող են խթանել կապիտալի մեծ ներհոսք երկիր՝ այդպիսով անկայունացնելով ներքին շուկան[4]:

Բացի վերոնշյալ ռազմավարություններից կենտրոնական բանկերը կարող են որդեգրել նաև «առանց անվանական խարսխի» կամ «թաքնված անվանական խարսխով» դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, որը վերջին տարիներին հաջողությամբ կիրառվել է մի

[1] Mishkin, Frederic; Posen, Adam – "Inflation Targeting: Lessons from Four Countries", Federal Reserve Bank of New York, FRBNY Economic Policy Review, august 1997.

[2] Сулинов А.В. Стратегии монетарной политики с эксплицитным номинальным якорем и определение текушего режима таргетирования Банка России М.:Вестник РГТУ, 2007г. , 250 стр.

[3] Frederic S. Mishkin, International experiences with different monetary policy regimes, Journal of Moneatry Economics 43, Elsevier, 1999, էջ 581.

[4] Obstfeld, M., Rogoff, R., The mirage of fixed exchange rates, Journal of Economic Perspectives 9, 1995, էջ 73-96:

շարք երկրների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի դրամավարկային իշխանությունների կողմից: Առանց բացահայտ անվանական խարսխի ռազմավարության էությունը կայանում է նրանում, որ Կենտրոնական բանկը (կամ ԿԲ պարտականությունները կատարող այլ մարմինները) դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակներ («անվանական խարիսխ») չի սահմանում, այլ ուղղակի սահմանում է դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը կամ նպատակները, իսկ դրամավարկային քաղաքականության գործիքները կիրառվում են՝ ելնելով ընթացիկ տնտեսական իրադրությունից և դրա ակնկալվող փոփոխություններից (կամ դրանց վերաբերյալ կանխատեսումներից):

Այս ռազմավարության հիմնական առավելություններն են.

- հնարավորություն է տալիս կենտրոնական բանկին՝ օգտագործելու դրամավարկային քաղաքականությունը ներտնտեսական խնդիրների լուծման նպատակով,
- չի ենթադրում կայուն կապի առկայություն գնաճի և փողի զանգվածի միջև,

Եվ, չնայած վերոնշյալ առավելություններին՝ այս ռազմավարությունը կիրառելու օգտին խոսող հիմնական փաստարկը դրա երկարամյա հաջող կիրառման փաստն է (մասնավորապես՝ ԱՄՆ-ում):

Այս ռազմավարության հիմնական թերություններն են.

- թափանցիկության բացակայությունը,
- խիստ կախվածությունը առանձին անձանց համոզմունքներից և նախասիրություններից,
- հաշվետվողականության ցածր մակարդակը[1]:

Իր գոյության սկզբնական շրջանում ՀՀ կենտրոնական բանկը կիրառել է փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը: Դրա շնորհիվ շատ կարճ ժամանակի ընթացքում կենտրոնական բանկը կարողացել է հաղթահարել հիպերինֆլյացիայի խնդիրները, ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն և հսկողության տակ պահել արտարժույթի փոխարժեքը: Սակայն հետագայում՝ հաշվի առնելով տնտեսության պահանջները, որոշում է կայացվել անցնելու գնաճի լիարժեք նպատակադրման ռազմավարությանը: Այսպիսով՝ ՀՀ կենտրոնական բանկը 2006թ. հունվարի 1-ից անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարությանը: Գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցնելու դրդապատճառները և հիմքերը ներկայացված են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում» փաստաթղթում: Փաստաթղթում հանգամանալից կերպով ներկայացված են դրամավարկային քաղաքականության տարբեր ռազմավարությունների առավելությունները և թերությունները, ինչպես նաև գնաճի նպատակադրմանն անցնելու պատճառները և պայմանները ՀՀ Կենտրոնական բանկի դեպքում: Փաստաթղթում, ի թիվս այլ հարցերի, քննարկված են գնաճի նպատակադրման արդյունավետ իրականացման պայմանները, որոնք բաժանված են երեք խմբի՝ ինստիտուցիոնալ, գործառնական և մակրոտնտեսական: Ինստիտուցիոնալ պայմաններից փաստաթղթում նշվում են.

- գների կայունությունը որպես ԿԲ գլխավոր նպատակի սահմանում,
- գնաճի ցուցանիշի, միջակայքի և նպատակային հորիզոնի[2] ընտրություն,
- քաղաքականության իրականացման հայեցողականություն,
- թափանցիկություն և հաշվետվելիություն,
- գործառնական անկախություն:

Գործառնական պայմանների շարքին դասվում են.

- գնաճի կանխատեսումը,
- փոխանցման մեխանիզմի մասին հստակ պատկերացում:

Վերջապես, մակրոտնտեսական պայմանների մեջ մտնում են.

- զարգացած ֆինանսական շուկա,
- ֆիսկալ դոմինանտության բացակայություն,

---

[1] International Experiences with Different Monetary Policy Regimes. Frederic S.Mishkin. NBER Working Paper No. 6965. Issued in February 1999, էջ 26-29.

[2] Նպատակային հորիզոնի տակ ընդունված է հասկանալ այն ժամանակահատվածը, որի ընթացքում ԿԲ-ը պարտավորվում է հասնել գնաճի նպատակադրված մակարդակին, կամ որի ընթացքում գնաճը գտնվելու է սահմանված միջակայքում: (Տես՝ Կրիվոռուչկո Ս.Վ., Սվիրինա Ե.Մ., 2015թ.):

- ներքին և արտաքին կայունություն:

Եթե ինստիտուցիոնալ և գործառնական պայմաններ ՀՀ կենտրոնական բանկի դեպքում, ըստ էության, ապահովվում են, ապա նույնը մակրոտնտեսական պայմանների համար պնդել չենք կարող:

ՀՀ ֆինանսական շուկայի զարգացման մակարդակի մասին որոշակիորեն հիմնավոր եզրակացություն կազմելու համար դիտարկենք դրա կառուցվածքը:

Ըստ դրամական հոսքերի շարժման կազմակերպման ձևի ֆինանսական շուկան բաժանում են վարկային շուկայի, արժեթղթերի շուկայի, լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների շուկայի, արժութային և ապահովագրական շուկաների[1]:

Ֆինանսական շուկայի վերոնշյալ հատվածներից ՀՀ ֆինանսական շուկան հիմնականում ընդգրկում է վարկային և արժութային շուկաները, որոնք նույնպես բավականաչափ զարգացած համարել չի կարելի: Մասնավորապես վարկային շուկան աչքի է ընկնում չափազանց բարձր տոկոսադրույքներով և վարկավորման փոքր ծավալներով: Բացի այդ վարկավորման ընդհանուր ծավալում բավականին մեծ բաժին են կազմում սպառողական և հիփոթեքային վարկերը[2]:

Արժութային շուկան աչքի է ընկնում փոխարժեքների բարձր տատանողականությամբ և արտաքին գործոնների նկատմամբ բարձր զգայունությամբ: Չնայած դրան, վարկային և արժութային շուկաներն ընդհանուր առմամբ կատարում են տնտեսության ֆինանսական սպասարկման գործառույթները, մինչդեռ նույնը չի կարելի ասել ֆինանսական շուկայի այլ հատվածների մասին:

Մասնավորապես արժեթղթերի շուկան հիմնականում ներառում է պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի առուվաճառքի հետ կապված հարաբերությունները, իսկ ապահովագրական շուկան՝ պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ):

Լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների շուկա՝ որպես այդպիսին, ՀՀ-ում առայժմ գոյություն չունի:

Այսպիսով, զարգացած ֆինանսական շուկա ունենալու պայմանը բավարարված համարել չի կարելի:

Գնաճի նպատակադրման ռազմավարության արդյունավետ իրականացման մյուս նախապայմանը ֆիսկալ դոմինանտության բացակայությունն է: Վերջինս ենթադրում է կենտրոնական բանկի կողմից կառավարության վարկավորման բացակայություն, որն ըստ էության ՀՀ դեպքում ապահովվում է:

Այլ է իրավիճակը ներքին և արտաքին տնտեսական կայունության առումով: Հայաստանի Հանրապետությունն, ընդհանուր առմամբ, կարելի է բնորոշել որպես փոքր բաց տնտեսությամբ երկիր, որի դեպքում արտաքին գործոնների զգալի ազդեցությունը տնտեսության կայունության վրա ուղղակի անհնար է վերացնել: Սա նաև ակնհայտորեն երևացել է վերջին տարիներին, երբ արտաքին տարբեր գործընթացները (2008թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամ, 2010-ականների ֆինանսական ճգնաժամ Եվրոպայում, ՌԴ նկատմամբ տնտեսական պատժամիջոցների սահմանում 2014թ.) զգալիորեն փոխել են ՀՀ տնտեսության վիճակը:

Ներքին գործոններից (ըստ ՀՀ ԿԲ գնաճի հաշվետվությունների) ՀՀ տնտեսության վրա զգալի ազդեցություն են թողնում գյուղատնտեսական շոկերը, էներգետիկ ռեսուրսների ներքին գները և այլն:

Այլ կերպ ասած, ներքին և արտաքին նույնիսկ հարաբերական տնտեսական կայունության մասին խոսելն անգամ ավելորդ է:

Փաստաթղթի հեղինակները «չեն մոռացել» նշել նաև գնաճի նպատակադրման ռազմավարության արդյունավետ իրականացման կարևորագույն պայմաններից մեկի՝ կենտրոնական բանկի նկատմամբ բնակչության վստահության բարձր մակարդակի անհրաժեշտության մասին: Սակայն այս պայմանի ապահովումը ՀՀ-ում նույնպես կասկած է հարուցում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ տարբեր գործոններով պայմանավորված՝ ՀՀ բնակչությունը ուղղակի չի կարող ունենալ բարձր վստահություն ՀՀ ԿԲ նկատմամբ: Սակայն հիմնավոր գնահատական տալն այս հարցի

---

[1] Финансы: учебник для студентов вузов, обучающихся по Ф59 экономическим специальностям, специальности «Финансы и кредит» (080105) / Пол ред. Г.Б. Поляка. – 3-е изд., перераб. и доп. – М.: ЮНИТИ-ДАНА, 2008.– 703 с. – (Серия «Золотой фонд российских учебников»). І. Поляк, Георгий Борисович, ред.

[2] Հայաստանի բանկային համակարգը. Հայաստանի բանկերի միության պաշտոնական կայք, Եր.: 2010թ. // www.uba.am

գծով դժվար է, քանի որ կոնկրետ ԿԲ նկատմամբ ՀՀ բնակչության վստահության վերաբերյալ հարցումներ ՀՀ-ում չեն իրականացվել: Փոխարենը ամեն եռամսյակ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվում է սպառողական վստահության ցուցանիշը:

Սպառողների վստահության ցուցանիշն իրենից ներկայացնում է դիֆուզիոն ինդեքս, որը հաշվարկվում է որպես սպառողներին տրված վեց հարցերի պատասխանների հիման վրա հաշվարկված դիֆուզիոն ինդեքսների միջին թվաբանական մեծություն: Այդ դիֆուզիոն ինդեքսներն են ընթացիկ պայմանների և ապագա սպասումների ցուցանիշները:

Ընթացիկ պայմանների ցուցանիշն իրենից ներկայացնում է դիֆուզիոն ինդեքս, որը հաշվարկվում է որպես ընթացիկ պայմաններին վերաբերող հարցերի արժեքների միջին թվաբանական մեծություն, իսկ ապագա սպասումների ցուցանիշն իրենից ներկայացնում է դիֆուզիոն ինդեքս՝ հաշվարկված որպես ապագային վերաբերող հարցերի արժեքների միջին թվաբանական մեծություն: Չնայած սպառողների վստահության ցուցանիշը չի արտահայտում անմիջապես Կենտրոնական բանկի նկատմամբ բնակչության վստահությունը, սակայն այն հանդիսանում է առաջանցիկ ցուցանիշ և, ընդհանուր առմամբ, բնորոշում է տնտեսության զարգացման միտումները և հատկապես՝ սպասումները: Այս առումով ավելորդ չի լինի դիտարկել վերջին 10 տարիներին սպառողների վստահության ցուցանիշի դինամիկան ՀՀ-ում (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Սպառողների վստահության ցուցանիշը ՀՀ-ում 2006-2016թթ.

Դիագրամից ակնհայտորեն երևում է, որ ՀՀ-ում սպառողների վստահության ցուցանիշն ի սկզբանե (գնաճի նպատակադրման ռազմավարությանն անցնելու պահին, 2006թ. հունվարի 1) բարձր չի եղել, իսկ վերջին 10 տարիներին ՀՀ-ում զգալիորեն նվազել է՝ դրսևորելով նվազման հստակ միտում:

Ամփոփելով վերոնշյալը կարող ենք նշել, որ հաշվի առնելով դրամավարկային քաղաքականության տարբեր ռազմավարությունների առավելությունները և թերությունները ՀՀ կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության որդեգրումը կարելի է համարել առավել նպատակահարմար և հիմնավոր: Սակայն այս ռազմավարության արդյունավետ իրականացմանը ՀՀ–ում խանգարում են մի շարք խնդիրներ՝ ֆինանսական շուկայի զարգացածման անբավարար մակարդակ, ներքին և արտաքին անկայունություն, ԿԲ նկատմամբ բնակչության վստահության անբավարար մակարդակ:

ՀՀ ԿԲ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ԴԱՎԻԹ ԺԻՐԱՅՐԻ ԱՐԱԲՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

Տարբեր պետությունների օրենսդրություններով դրամավարկային քաղաքականության համար սահմանվում են տարբեր նպատակներ, որոնց հասնելու համար կենտրոնական բանկերը մշակում են դրամավարկային քաղաքականության իրենց յուրահատուկ ռազմավարությունները: Այնուամենայնիվ, դրանք կարելի է բաժանել երեք հիմնական տեսակի՝ գնաճի նպատակադրում, փոխարժեքի նպատակադրում և փողի ագրեգատների նպատակադրում:

Հոդվածում դիտարկվել են դրամավարկային քաղաքականության տարբեր ռազմավարությունների առավելությունները և թերությունները, գնահատվել է ՀՀ ԿԲ կողմից գնաճի նպատակադրմանն անցնելու որոշման հիմնավորվածությունը:

Բանալի բառեր. *դրամավարկային քաղաքականություն, նպատակ, ռազմավարություն, գնաճի նպատակադրում, փոխարժեքի նպատակադրում, փողի ագրեգատների նպատակադրում:*

К ВОПРОСУ О ЦЕЛЯХ И СТРАТЕГИИ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ ЦБ РА

ДАВИТ ЖИРАЙРОВИЧ АРАБЯН
соискатель кафедры финансов и кредита Национального аграрного университета Армении

Аннотация

Законодательствами различных государств в сфере денежно-кредитной политики устанавливаются различные цели, для достижения которых центральные банки вырабатывают свои специфические стратегии денежно-кредитной политики. Тем не менее, денежно-кредитные стратегии можно разделить на три основных вида: инфляционное таргетирование, таргетирование валютного курса и таргетирование денежных агрегатов.

В статье рассмотрены преимущества и недостатки различных стратегий денежно-кредитной политики, дана оценка обоснованности принятого решения ЦБ РА о переходе к стратегии инфляционного таргетирования.

Ключевые слова: *денежно-кредитная политика, цель, стратегия, инфляционное таргетирование, таргетирование валютного курса, таргетирование денежных агрегатов.*

ON ISSUES OF OBJECTIVES AND STRATEGY OF THE MONETARY POLICY

DAVIT ZHIRAYR ARABYAN
Ph.D. Student, Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University

Abstract

The legislation of different nations defines various objectives of the monetary policy and to meet theseobjectives the central banks design respective monetary policies and the strategy unique to that policy. However, the strategies could be divided into three main types: inflation targeting, foreign exchange rate targeting, and money aggregates targeting. The article discusses the advantages and shortcomings of various strategies of monetary policy, and argues how justified was the adoption of inflation targeting by the Central Bank of the Republic of Armenia.

Keywords: *Monetary policy, objective, strategy, inflation targeting,foreign exchange rate targeting, and money aggregates targeting.*

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, *տ.գ.դ, պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

ԳԵՎՈՐԳ ԷԴԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ SVAR ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության հարցը մշտապես եղել և այսօր էլ շարունակում է մնալ տնտեսագիտական շրջանակներում առավել հաճախ քննարկվող և վիճելի հարցերից մեկը: Տնտեսագիտական մտքի զարգացմանը զուգահեռ նշված հարցի վերաբերյալ ձևավորվել են բազմաթիվ տեսություններ՝ հաճախ իրարամերժ, իսկ երբեմն էլ իրար լրացնող, որոնցից յուրաքանչյուրն այս կամ այն ձևով է փորձում ներկայացնել տնտեսության կարգավորման գործում պետության ներգործության բնույթն ու սահմանները և, ըստ այդմ, տնտեսության պետական հատվածի օպտիմալ չափն ու դրա կապը տնտեսական զարգացման հետ: Մասնավորապես, տնտեսագիտության քեյնսյան դպրոցի հետևորդների համոզմամբ տնտեսության ճգնաժամային երևույթների հիմքում ընկած է ոչ բավարար ամբողջական պահանջարկը, ուստի տնտեսության պետական միջամտության բոլոր լծակները, այդ թվում և պետական ծախսերը պետք է ուղղված լինեն դրա խթանմանը՝ այդ կերպ նպաստելով զբաղվածության և արտադրության ծավալների ընդլայնմանը: Տնտեսագետների մյուս մասի համոզմամբ, սակայն, ամբողջական պահանջարկը խթանելուն ուղղված պետական ծախսերի ընդլայնումն անարդյունավետ քաղաքականություն է, քանի որ այդ ծախսերի աճը պետք է ֆինանսավորվի կամ հարկերի բարձրացման կամ պարտքի ներգրավման հաշվին, սակայն երկու դեպքում էլ սպառողները, գիտակցելով մոտ ապագայում լրացուցիչ ֆինանսական պարտավորությունների առաջացման հնարավորությունը, ավելացնում են իրենց խնայողությունները և կրճատում ներկա սպառման ծավալները, ինչի արդյունքում ամբողջական պահանջարկը մնում է անփոփոխ[1]:

Այս համատեքստում սույն աշխատանքի հիմնական նպատակն է՝ բացահայտել ՀՀ-ում պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության բնույթը, ինչպես նաև ստանալ պետական ծախսերի բազմարկչի գնահատականը, որը կարող է հիմք հանդիսանալ արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության մշակման և իրականացման համար:

Էկոնոմետրիկ տեսանկյունից այդ փոխազդեցության գնահատումը բավական բարդ խնդիր է, քանի որ մի կողմից «Վագների օրենքի» համաձայն ազգային եկամտի աճն է հանգեցնում պետական ծախսերի ավելացմանը, մյուս կողմից քեյնսյան մոտեցմամբ պետական ծախսերը ինքնին հանդես են գալիս որպես ամբողջական պահանջարկի խթանման և տնտեսական աճի կարևորագույն գործոն: Այդ իսկ պատճառով վերջին երկու տասնամյակների ընթացքում հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճի պատճառահետևանքային կապերի գնահատման համար միջազգային պրակտիկայում լայն կիրառություն են ստացել կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն (SVAR) մոդելները, որոնք ոչ միայն թույլ են տալիս խուսափելու վերոնշյալ էնդոգենության խնդրից, այլև հաշվի առնելու հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները քանակական վերլուծությունների ժամանակ: Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար դիտարկենք հետևյալ SVAR մոդելը, որը հիմնված է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսորներ Օլիվեր Բլանչարդի և Ռոբերտ Պերոտտիի 1999թ. աշխատության վրա[2], սակայն թույլ է տալիս հաշվի առնել ՀՀ

[1] Նման մոտեցումը մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես «ռիկարդյան համարժեքություն»: Տե՛ս Б.И.Алехин, Государсвенный долг, М., 2007, էջ 44:

[2] O. Blanchard, R. Perotti, An empirical characterization of the dynamic effects of changes in government spending and taxes on output, NBER Working Paper No. 7269, July 1999.

հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական միջավայրի հիմնական առանձնահատկություններն ու դրանց բնորոշ գծերը.

$$AX_t = B_0 + \sum_{i=1}^{p} B_i X_{t-i} + \sum_{j=0}^{s} C_j Y_{t-j} + GD_t + Bu_t, \quad (1)$$

որտեղ՝

$X_{t-i} = [\exp_{t-i}, inc_{t-i}, gdp_{t-i}]'$-ը՝ i=0,1,2,…,p, մոդելի էնդոգեն փոփոխականների վեկտորն է՝ կազմված բյուջետային ծախսերի (exp), հարկային եկամուտների (inc) և ՀՆԱ-ի (gdp) համապատասխան լագային արտահայտություններից,

$Y_{t-j} = [m_{t-j}, trade_{t-j}]'$-ը՝ j=0,1,2,…,s, մոդելի էկզոգեն փոփոխականների վեկտորն է, որը ներառում է դրամական զանգվածի (m) և ապրանքաշրջանառության (trade) ցուցանիշները՝ կառավարելու ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության և արտաքին տնտեսական գործոնների հնարավոր ազդեցությունը հարկաբյուջետային ցուցանիշների և ՀՆԱ-ի վրա,

D_t-ը կեղծ փոփոխական է, որը ներմուծվել է հաշվի առնելու 2008թ. ՀՀ-ում բյուջետային դասակարգչի փոփոխության հնարավոր ազդեցությունը մոդելի գնահատման արդյունքների վրա [1],

$u_t = [u_t^{\exp}, u_t^{inc}, u_t^{gdp}]'$-ը կառուցվածքային մնացորդների վեկտորն է, որտեղ յուրաքանչյուր փոփոխականի սեփական ստոխաստիկ ցնցումը կորելացված չէ մյուս փոփոխականների ստոխաստիկ ցնցումների հետ և ենթարկվում է «սպիտակ աղմուկ» գործընթացի:

Վերոնշյալ հավասարումների համակարգի կառուցվածքային բնույթը խոսում է այն մասին, որ էնդոգեն փոփոխականներից յուրաքանչյուրը կորելացված է մյուսների մնացորդների հետ, ինչը նշանակում է, որ մոդելի պարամետրերի գնահատումը սովորական փոքրագույն քառակուսիների մեթոդով (ՓՔՄ) կտա շեղված արդյունքներ և կհանգեցնի սխալ եզրահանգումների: Նշված խնդրի լուծման նպատակով մասնագիտական գրականության մեջ ընդունված է (1) համակարգի երկու կողմերը բազմապատկել A^{-1}-ով և մոդելը բերել, այսպես կոչված, կրճատված վեկտոր ավտոռեգրեսիվ տեսքի (reduced form VAR).

$$X_t = \Phi_0 + \sum_{i=1}^{p} \Phi_i X_{t-i} + \sum_{j=0}^{s} \Pi_j Y_{t-j} + \Delta D_t + e_t, \quad (2)$$

որտեղ՝

$\Phi_0 = A^{-1}B_0$, $\Delta = A^{-1}G$, $e_t = A^{-1}Bu_t$,

$\Phi_i = A^{-1}B_i$, $i = 1,2,..., p$,

$\Pi_i = A^{-1}C_j$, $j = 0,1,..., s$:

(2) հավասարումների համակարգի պարամետրերի գնահատումը սովորական ՓՔՄ-ով այլևս էնդոգենության խնդիր չի առաջացնում, քանի որ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող փոփոխականներն այժմ կախված են միայն իրենց լագային արժեքներից, որոնք կորելացված չեն e_t մնացորդների հետ: Մյուս կողմից, սակայն, պետք է նկատել, որ (2) համակարգի գնահատման արդյունքում ստացվելիք գործակիցները բավարար չեն կառուցվածքային մոդելի A և B մատրիցների տարրերը միարժեքորեն վերականգնելու համար, քանի որ մեր ունեցած հավասարումների թիվը $n(n+1)/2$ է, իսկ A և B մատրիցների տարրերի ընդհանուր թիվը՝ $2n^2$: Սա առաջ է բերում մոդելի իդենտիֆիկացիայի խնդիր՝ պահանջելով կիրառել լրացուցիչ սահմանափակումներ $e_t = A^{-1}Bu_t$ հավասարումների համակարգի գործակիցների նկատմամբ

[1] Մինչև 2008թ. ՀՀ-ում բյուջետային դասակարգումն իրականացվում էր ԱՄՀ-ի “GFS-2001” ուղեցույցի դրույթներին համապատասխան, սակայն 2008թ.-ից վերջինը փոխարինվեց “GFS-2008” ձեռնարկով:

այնպես, որ կրճատված VAR մոդելի մնացորդների վարիացոնին-կովարիացոն մատրիցը՝ $\Omega_e = A^{-1}BB^T(A^{-1})^T$-ը, ունենա անկյունագծային տեսք [1]:

Հետևելով Բլանչարդի և Պերոտտի կողմից առաջ քաշված մեթոդաբանությանը՝ մենք կենթադրենք, որ կառուցվածքային մնացորդների և կրճատված տեսքով ներկայացված VAR մոդելի մնացորդների միջև առկա է հետևյալ տիպի ֆունկցիոնալ կախվածություն.

$$\begin{bmatrix} 1 & -a_{12} & -a_{13} \\ -a_{21} & 1 & -a_{23} \\ -a_{31} & -a_{32} & 1 \end{bmatrix} \begin{bmatrix} e_t^{\exp} \\ e_t^{inc} \\ e_t^{gdp} \end{bmatrix} = \begin{bmatrix} b_{11} & 0 & 0 \\ b_{12} & b_{22} & 0 \\ b_{31} & b_{32} & b_{33} \end{bmatrix} \begin{bmatrix} u_t^{\exp} \\ u_t^{inc} \\ u_t^{gdp} \end{bmatrix} \quad (3)$$

Վերոնշյալ համակարգի առաջին երկու հավասարումները ցույց են տալիս, որ t-րդ եռամսյակում բյուջետային ծախսերի և հարկային եկամուտների անսպասելի փոփոխությունները կարող են պայմանավորված լինել կամ ա) հայեցողական հարկաբյուջետային քաղաքականության փոփոխությամբ, կամ բ) ավտոմատ կայունարարների գործունեությամբ, կամ գ) այլ գործոններով: Նույն տրամաբանությամբ երրորդ հավասարման տնտեսագիտական մեկնաբանությունը կայանում է նրանում, որ t-րդ եռամսյակում ՀՆԱ-ի անսպասելի փոփոխությունը կարող է լինել բյուջետային ծախսերի, հարկային եկամուտների կամ էլ այլ գործոնների փոփոխության հետևանք:

Քանի որ վերլուծության համար կիրառվում են եռամսյակային կտրվածքով տվյալներ, իսկ ՀՆԱ-ի հնարավոր ցնցումների դեպքում պահանջվում է առնվազն մեկ եռամսյակ հարկաբյուջետային քաղաքականության մեջ համապատասխան փոփոխություններ մտցնելու համար, կարող ենք ենթադրել, որ a_{12} և a_{21} գործակիցները հավասար են զրոյի: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ավտոմատ կայունարարների՝ ծախսերի մասով գործելու հիմնական լծակը գործազրկության նպաստներն են, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014թ. հունվարի մեկից ՀՀ-ում գործազրկության համար տրամադրվող նպաստների համակարգն այլևս չի գործում, իսկ մինչ այդ էլ դրանց տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ եղել է աննշան, կենթադրենք, որ a_{13} գործակիցը նույնպես հավասար է զրոյի:

a_{31} և a_{32} գործակիցների գնահատականները ստանալու համար անհրաժեշտ է գնահատել (3) համակարգի երրորդ հավասարումը, սակայն ՓՔՄ-ը դարձյալ կիրառելի չէ, քանի որ որպես բացատրող փոփոխականներ հանդես եկող կրճատված VAR մոդելի $e_t^{\exp}$ և e_t^{inc} մնացորդները կորելացված են կառուցվածքային մնացորդների հետ: Այս խնդրի լուծման նպատակով Պերոտտիի և Բլանչարդի կողմից առաջարկվել է նախորդ քայլում ստացված a_{13} և a_{23} գործակիցների հիման վրա հաշվարկել բյուջետային ծախսերի և հարկային եկամուտների ցիկլից ճշգրտված մնացորդները ($E_t^{\exp} = e_t^{\exp} - a_{13}e_t^{gdp}$ և $E_t^{inc} = e_t^{inc} - a_{23}e_t^{gdp}$) և օգտագործել դրանք որպես գործիքային փոփոխականներ նշված գործակիցների անշեղ գնահատականները:

Համապատասխան սահմանափակումների կիրառումը թույլ է տալիս լուծելու մոդելի իդենտիֆիկացիայի խնդիրն ու ստանալու A մատրիցի բոլոր տարրերը: Ինչ վերաբերում է B մատրիցի տարրերին, ապա դրանց գնահատումն իրականացվում է առավելագույն ճշմարտանմանության եղանակով: Այդպիսով, ունենանով A և B մատրիցների գործակիցները և ներկայացնելով կառուցվածքային մոդելը սահող միջինների միջոցով՝ կարող ենք հաշվարկել բյուջետային ծախսերի և ՀՆԱ-ի իմպուլսային արձագանքի ֆունկցիաները և բացահայտել նշված ցուցանիշների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերը:

Մոդելի գնահատումն իրականացվել է բյուջետային ծախսերի, հարկային եկամուտների, ՀՆԱ-ի, դրամական զանգվածի և ապրանքաշրջանառության ցուցանիշների 2000-2015թթ. եռամսյակային տվյալների հիման վրա, որոնք արտահայտվել են 2005թ. միջին տարեկան գներով

[1] H. Lutkepohl, New Introduction to Multiple Time Series Analysis, Springer, 2005, էջ 130-132

(բացառությամբ դրամական զանգվածի) և սեզոնայնորեն ճշգրտվել [1]: Բյուջետային ծախսերի, հարկային եկամուտների և ՀՆԱ-ի իրական մեծությունները հաշվարկվել են ՀՆԱ-ի դեֆլյատորի եռամսյակային ցուցանիշների հիման վրա, իսկ ապրանքաշրջանառության իրական ծավալների ստացման համար հիմք են հանդիսացել ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման դեֆլյատորների եռամսյակային ցուցանիշները: Տվյալների սեզոնային ճշգրտումն իրականացվել է EViews_8 վիճակագրական փաթեթի Census X-12 ծրագրով՝ սեզոնային բաղադրիչն ընդունելով բազմապատկային: Ժամանակային շարքերի ստացիոնարությունը ստուգվել է Դիքի-Ֆուլերի ընդլայնված թեստի միջոցով, իսկ ՀՆԱ-ի համար կիրառվել է նաև Պերոնի թեստը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՆԱ-ի ժամանակային շարքը 2008թ. երրորդ եռամսյակի ընթացքում ցուցաբերում է թրենդի և հաստատունի փոփոխություն, իսկ Դիկի-Ֆուլերի թեստի կիրառումը նման պարագայում հաճախ տալիս է հակասական արդյունքներ: Բոլոր թեստերի արդյունքները վկայում են այն մասին, որ սկզբնական ժամանակային շարքերը ոչ ստացիոնար են: Այնուամենայնիվ, ինչպես ընդունված է SVAR մոդելների գնահատման միջազգային պրակտիկայում, մոդելը գնահատվել է մակարդակային ցուցանիշների (լոգարիթմական արտահայտությամբ) հիման վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պարագայում առավել հետաքրքրական են համապատասխան ցուցանիշների իմպուլսային արձագանքի ֆունկցիաները և ոչ թե ռեգրեսիաների գործակիցները: Ինչ վերաբերում է ավտոռեգրեսիայի կարգին, այն ընտրվել է չորս, ինչի մասին վկայում են և՛ Ակաիկեի, և՛ Շվարցի ինֆորմացիոն չափանիշները:

Կառուցվածքային մոդելի համար գնահատված իմպուլսային արձագանքի ֆունկցիաները ներկայացված են գծապատկեր 1-ում: Անհրաժեշտ է նկատել, որ բյուջետային ծախսերի 1 տոկոս շոկը դրականորեն է ազդում ՀՆԱ-ի վրա և տվյալ եռամսյակի ընթացքում նպաստում է վերջինի ավելացմանը մոտ կես տոկոսով (գծապատկեր 1ա): Բյուջետային ծախսերի շոկի ազդեցությունն իր առավելագույն արժեքին է հասնում առաջին տարվա վերջին՝ հանգեցնելով ՀՆԱ-ի 3.7 տոկոսով աճին, սակայն հինգերորդ եռամսյակից սկսած՝ այդ ազդեցությունն աստիճանաբար մարում է և արդեն տասներորդ եռամսյակում դառնում վիճակագրորեն ոչ նշանակալի:

Հարկ է նշել, որ ըստ Վագների, ՀՆԱ-ի 1 տոկոս շոկը առաջին տարվա ընթացքում բյուջետային ծախսերի որևէ փոփոխություն չի առաջացնում, սակայն հինգերորդ եռամսյակի ընթացքում այն հանգեցնում է պետական բյուջեի ծախսային մասի 1.9 տոկոսով ավելացմանը (գծապատկեր 1բ): Սա կարելի է բացատրել նրանով, որ բյուջետային որոշումները, որպես կանոն, ընդունվում են տարեկան կտրվածքով, իսկ ՀՆԱ-ի աճը բյուջետային ծախսերի ընդլայնման տեսքով դրսևորվում է միայն հաջորդ տարվա սկզբին, քանի որ այն համընկնում է նոր բյուջետային տարվա հետ:

Գծապատկեր 1

ա) ՀՆԱ-ի իմպուլս արձագանքը բյուջետային ծախսերի 1% շոկին
բ) բյուջետային ծախսերի իմպուլս արձագանքը ՀՆԱ-ի 1% շոկին



[1] Տվյալների աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տարեգրքեր և ՀՀ ԿԲ-ի տվյալների բանկ:

Իմպուլսային արձագանքի ֆունկցիաների հիման հաշվարկված բյուջետային ծախսերի բազմարկչի մեծությունները ներկայացված են աղյուսակ 1-ում, ըստ որի բյուջետային ծախսերի գումարային բազմարկիչն առաջին տարվա համար կազմում է 0.35, երկրորդ տարվա համար՝ 0.47, իսկ երրորդ տարվա համար՝ 0.45, ինչը, ըստ էության, վիճակագրորեն նշանակալի չէ: Տարբեր երկրների համար կատարված նման վերլուծությունների հետ համեմատությունը (աղյուսակ 1) ցույց է տալիս, որ Հայաստանում ծախսային բազմարկչի մեծությունը բավական ետ է մնում այլ երկրների համանուն ցուցանիշից, ինչը նշանակում է, որ կառավարության կողմից իրականացվող ծախսային քաղաքականությունը դեռևս լիովին չի կատարում տնտեսության պետական կարգավորման և տնտեսական աճի խթանման իր գործառույթները:

Աղյուսակ 1

Բյուջետային ծախսերի բազմարկչի մեծությունները ՀՀ-ում և այլ երկրներում

Երկիր (հետազոտություն)	1 տարի	2 տարի	3 տարի
Հայաստան (հեղինակի հաշվարկներ)	0.35*	0.47*	0.45
Գերմանիա (Heppke-Falk et al. (2006))	0.62*	1.27*	-
Ռումինիա (A. Stoian, 2012)	0.66*	0.69*	0.38*
Իտալիա (Giordano et al. (2007))	1.20*	1.70*	-
Իսպանիա (de Castro and Hernàndez de Cos (2008))	0.94*	0.55*	-
Սլովենիա (N. Jemec et al., 2011)	0.66*	0.48*	-
Ալբանիա (A. Mançellari, 2011)	0.42*	0.71*	0.71*
Ուկրաինա (P. Mitra and T. Poghosyan)	0.43*	1.36*	-
Պորտուգալիա (M. Pereira)	0.8*	0.7*	0.6*
ԵՄ (Burriel et al. (2010))	0.87*	0.85*	-

*-ը համապատասխանում է 5% նշանակալիության մակարդակին:

Ներկայացված համամասնությունը, թերևս, մի կողմից կարելի է բացատրել ՀՆԱ-ի մեջ բյուջետային ծախսերի փոքր մասնաբաժնով, մյուս կողմից նրանով, որ բյուջետային ծախսերի ներկայիս կառուցվածքն ավելի շատ ուղղված է ընթացիկ սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը, քան տնտեսական զարգացման ծրագրերի իրագործմանը:

Այսպիսով, ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում բյուջետային ծախսերը նախ և առաջ ծառայում են որպես պետական գործառույթների ֆինանսավորման և տարաբնույթ սոցիալական խնդիրների լուծման միջոց, ինչն էլ պայմանավորում է ծախսային բազմարկչի նման մեծությունը: Այս առումով, ՀՀ տնտեսական կյանքի պետական կարգավորման գործընթացում ծախսային քաղաքականության և ընդհանրապես հարկաբյուջետային քաղաքականության դերակատարության բարձրացման տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն ունի նոր համալիր միջոցառումների իրականացումը՝ մի կողմից ուղղված բյուջետային եկամուտների և, ըստ այդմ, բյուջետային ծախսերի ավելացմանը, մյուս կողմից՝ բյուջետային ծախսերի կառուցվածքի օպտիմալացմանը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ SVAR ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն
ԳԵՎՈՐԳ ԷԴԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության բացահայտմանը և բյուջետային ծախսերի բազմարկչի գնահատմանը: Վերլուծությունը կատարվել է SVAR մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս իրականացնել քանակական վերլուծություններ և գնահատումներ հարկաբյուջետային քաղաքականությանն առնչվող հարաբերությունների վերաբերյալ: Դրանց արդյունքները կարող են օգտագործվել կառավարության կողմից ծախսային քաղաքականության գնահատման և պետական գործառույթների ֆինանսավորման արդյունավետության բարձրացման համար:

Բանալի բառեր. *բյուջետային ծախսեր, տնտեսական աճ, ծախսային քաղաքականություն, ծախսային բազմարկիչ, SVAR մեթոդաբանություն:*

ОЦЕНКА ВЗАИМОСВЯЗИ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ И ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РА МЕТОДОМ SVAR

ВАРДАН БАБКЕНОВИЧ БОСТАНДЖЯН, *д.э.н., профессор*
Финансово-учетная кафедра Ереванского государственного университета
ГЕВОРК ЭДИКОВИЧ МИНАСЯН
аспирант факультета экономики и управления Ереванского государственного университета

Аннотация

Статья посвящена выявлению взаимосвязи государственных расходов и экономического роста в РА и оценке мультипликатора бюджетных расходов. Анализ выполнен с помошью SVAR методики, позволяющей провести количественные анализы и оценку отношений, связанных с налогово-бюджетной политикой. Эти полученные результаты могут быть использованы правительством для оценки политики государственных расходов и повышения эффективности финансирования государственных функций.

Ключевые слова*: бюджетные расходы, экономический рост, расходная политика, мультипликатор расходов, методология SVAR.*

ESTIMATION OF INTERPLAY OF GOVERNMENT EXPENDITURE WITH THE ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA BY A SVAR TECHNIQUE

VARDAN BABKEN BOSTANJYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chair of Finances and Accounting, Yerevan State University
GEVORG EDIK MINASYAN
Ph.D. Student, Faculty of Economics and Management,Yerevan State University

Abstract

This article attempts to identify the relationship between public expenditure and economic growth in the Republic of Armenia and estimate budget expenditure multiplier. The analysis is conducted using a SVAR technique, which allows the authors to make a quantitative analysis and estimate the relationships with regard to fiscal policy. These results might be helpful for the Government to evaluate spending policies and to increase the productivity of financing government functions.

Keywords: *Budget expenditure, economic growth, expenditure policy, expenditure multiplier, SVAR technique.*

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 15T-5B103 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 15T-5B103

This work was supported by the RA MES State Committee of Science, in the frames of the research project № 15T-5B103

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, *տ.գ.դ, պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ*
«Ջեներալ Ստանդարդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի աուդիտի ավագ մենեջեր

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հարկային հարաբերությունների ամբողջությունն իր տնտեսական բովանդակությամբ բարդ համակարգ է, որի, ինչպես և ցանկացած համակարգի, ուսումնասիրության ժամանակ այն պետք է բաժանել փոխկապակցված և փոխպայմանավորված լիակատար մասերի (ենթահամակարգերի), քանի որ դրանց միաժամանակյա ու ամբողջական հետազոտությունն, առավել ևս դիտարկվող համակարգի վերաբերյալ գնահատականների և օրինաչափությունների ձևավորումը, որպես կանոն, դառնում է գրեթե անհնար: Բնականաբար, ցանկացած երկիր և նրա տնտեսության առանձին ոլորտներ ու հարաբերություններ օժտված են բարդ համակարգերին բնորոշ բոլոր առանձնահատկություններով, իրենց մեջ համախմբելով ներքին և արտաքին կապերով բազմաթիվ տարրեր:

Հարկ է նշել, որ բարդ համակարգերի ուսումնասիրության, դրանց զարգացման օրինաչափությունների բացահայտման և գործունեության կառավարման ժամանակ լայնորեն կիրառվում են քանակական վերլուծության և մաթեմատիկական մոդելավորման մեթոդները: Տնտեսական հարաբերությունների համակարգում դրանց օգտագործումը պետք է սկսվի ուսումնասիրության ենթակա խնդրի պարամետրերի հստակ որոշմամբ, դրանով ենթադրվող կապերի մոդելավորմամբ, կառուցված մոդելի վերլուծությամբ, սկզբնական տեղեկատվության նախապատրաստմամբ, հաշվարկների կատարմամբ, ինչպես նաև ստացված արդյունքների կիրառմամբ (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Տնտեսաչափական մոդելի կառուցման հաջորդականությունը[1]



[1] Советов Б.Я., Яковлев С.А. Моделирование систем М.: Высшаяшкола, 2001 г., стр. 38

Տնտեսական ազատական հարաբերությունների ձևավորման անցած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տնտեսվարողների մոտ հիմնականում գրանցվեց ակտիվների դանդաղ, սակայն կայուն աճ: Դա գլխավորապես պայմանավորված էր իրականացված հարկային քաղաքականությամբ, որը միաժամանակ կարող է հանդիսանալ տնտեսական կայուն աճի կարևոր գրավական: Այդ իսկ պատճառով, հարկային քաղաքականության հիմնական գործոնների ուսումնասիրությունը քանակական վերլուծության մեթոդներով կարող է դառնալ տնտեսական զարգացման տարբեր սցենարների մշակման և վերլուծության կարևորագույն գործիք[1]:

Հարկ է նշել, որ տնտեսական աճի հիմնական գործոնները ձևավորվում են տնտեսության առանձին ոլորտների և կազմակերպությունների գործունեության ընթացքում, որոնց հիման վրա ներքին և արտաքին ազդակներով պայմանավորված կարող է ապահովվել տնտեսական զարգացում կամ հետընթաց: Այդ գործում առանձնահատուկ է հարկային քաղաքականության և հարկային հարաբերությունների կարգավորման դերը: Հետևաբար, նշված գործոնների բնույթը և կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա դրանց ազդեցության չափերի և ուղղությունների ուսումնասիրությունն ունի սկզբունքային նշանակություն և, անկասկած, պետք է ներառվի տնտեսական զարգացման նպատակով մշակվող ցանկացած տնտեսաչափական մոդելի մեջ:

Տնտեսական աճի վրա արտադրական գործոնների ազդեցության ուսումնասիրությունը և դրանց ընդգրկումը մոդելում բխում է նաև ընկերության գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից: Այս պնդումը հիմնավորելու նպատակով Հայաստանի 30 խոշոր հարկատուների կողմից 2000-2015 թվականների ընթացքում վճարված հարկերի և այդ ձեռնարկությունների եկամտաբերության ցուցանիշների հիման վրա մշակվել է համապատասխան տնտեսաչափական մոդել: Վերջինիս փորձնական գնահատումների համար կիրառվել է պանելային վերլուծության մեթոդը, որը լայնորեն կիրառվում է խաչաձև սպեկտորալ վերլուծությունների իրականացման ժամանակ: Պանելային տվյալների կիրառության առավելությունը տարածքային ընտրանքների և ժամանակային շարքերի համեմատությամբ կայանում է նրանում, որ պանելային վերլուծությունը թույլ է տալիս ապահովել մոդելում ներառված գործակիցների գնահատման բարձր արդյունավետություն, ինչպես նաև բացահայտել և թեստավորել ուսումնասիրվող օբյեկտների անհամասեռությունը և նույնականացնել տարածքային ընտրանքներում և ժամանակային շարքերում հայտնաբերված էֆեկտները:

Պանելային տվյալների ռեգրեսիոն վերլուծության ժամանակ որպես կախյալ փոփոխական է ընդունվել կազմակերպության զուտ շահույթը հարկումից հետո, իսկ որպես անկախ՝ ակտիվների և կապիտալի շահութաբերության գործակիցները: Հաշվարկների համար հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակված ցուցանիշները: Արդյունավետության սկզբունքի ապահովման համար կիրառվել են տարբեր մոտեցումներ, կախված կազմակերպության բաժնետերերի կողմից ներկայացված պայմաններից: Այդպիսի մոտեցմամբ ձևակերպված խնդիրները թույլ են տալիս կազմակերպության գործունեության շահութաբերությունն ուսումնասիրել տարբեր ուղղություններով: Տվյալ դեպքում, կազմակերպության շահութաբերության մակարդակի գնահատման համար օգտագործվել են արդյունավետության գնահատման ինդիկատորները, որոնք բնութագրում են կազմակերպության շահույթ ստանալու կարողությունը: Վերջինս կարևոր է այնքանով, որ այդ դեպքում կազմակերպությունն ունենում է ավելի լայն հնարավորություններ պաշտպանվելու անսպասելի ֆինանսական կորուստներից, ընդլայնելու ֆինանսական բազան, ամրապնդելու գործարար կապերը և այլն: Ակնհայտ է, որ շահույթ ստանալու կարողությունն ունի նաև հոգեբանական նշանակություն, քանի որ այն կարող է դառնալ ազդեցիկ գործոն շուկա մուտք գործելու և դրանում կայուն տեղ գրավելու համար:

[1] Հարկային քաղաքականություն, տե՛ս «Հարկերի մասին» օրենք:

Կազմակերպության շահույթ ստանալու կարողությունը կախված է ներքին և արտաքին մի շարք գործոններից, որոնցից առավել կարևորներն են ընկերության չափերը, բաժնետերերի կազմը, բիզնեսի ծավալը, աշխատանքի արտադրողականությունը, շուկայի կարգավորվածությունը, մակրոտնտեսական ցուցանիշները, մրցակցության վիճակը և այլն: Կազմակերպության կողմից շահույթ ստանալու կարողության վերլուծության համար անհրաժեշտ է, առաջին հերթին, ուշադրությունը կենտրոնացնել ներքին գործոնների վրա, որոնց կառավարման առումով կազմակերպություններն, անշուշտ, ունեն ավելի լայն հնարավորություններ:

Տնտեսաչափական մոդելի կազմման և խոշոր հարկատուների շրջանում ընթացող գործընթացների մոդելավորման համար ուսումնասիրվել են հանրապետության 30 առաջին խոշոր հարկատուների շահույթը (PROF), ակտիվների (ROA) և կապիտալի (ROE) շահութաբերության ցուցանիշները, որոնք ներկայացվել են հետևյալ կախվածությունների միջոցով.

$$\text{Ln PROF}_t = a_0 + a_1 \text{ LN ROA}_t + a_2 \text{ LN ROE}_t + \varepsilon_t \quad (1)$$

$$\text{Ln ROA}_t = b_0 + b_1 \text{ LN ROA}_{t-1} + b_2 \text{ LN ROE}_{t-2} + \eta_t \quad (2)$$

$$\text{Ln ROE}_t = c_0 + c_1 \text{ LN ROA}_{t-1} + c_2 \text{ LN ROE}_{t-2} + \beta_t \quad (3)$$

որտեղ՝

a0, a1, a2, b0, b1, b2, c0, c1, c2՝ տնտեսաչափական մոդելի ռեգրեսիայի գործակիցներն են, որոնք ցույց են տալիս անկախ փոփոխականների 1 տոկոսային կետի փոփոխության ազդեցությունը կախյալ փոփոխականների (Ln PROFt , Ln ROAt և Ln ROEt) վրա:

Ընտրված կախվածությունների առանձնահատկությունները կայանում են նրանում, որ ուսումնասիրվող օբյեկտների քանակի սահմանափակությունը և դրանց ոչ պատահական ընտրությամբ պայմանավորված պայմանական էֆեկտները նկարագրող մոդելը կարող են չդիտարկվել, իսկ փոփոխականների լոգարիթմական արժեքներով ներկայացումը հանդիսանում է պանելային վերլուծության մեթոդաբանության պահանջ:

Ամփոփելով, պետք է նշել, որ վերջին տարիների ընթացքում կազմակերպությունների գործունեության արդյունավետության վերաբերյալ վերլուծություններն իրականացվել են տվյալների պարփակման մոդելների (DEA մոդելներ) միջոցով, որոնք հիմնված են միկրոտնտեսական գործոնների վրա, իսկ ներկայացված մոտեցմամբ հնարավոր է դառնում գնահատել ակտիվների և կապիտալի շահութաբերությունն, ինչպես նաև դրանց ազդեցությունները բաժնետերերի շահաբաժինների և կազմակերպությունների շահույթի մեծության վրա: Հարկային հարաբերությունների կարգավորման ընթացքում վերլուծության ժամանակակից մեթոդների օգտագործմամբ հանդերձ հարկային վարչարարությունը կարող է լիարժեք բովանդակություն ստանալ միայն այն դեպքում, երբ մշակվում և իրագործվում է արդյունավետ հարկային քաղաքականություն: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է մշակել և ընդունել միասնական հարկային օրենսգիրք, որը թույլ կտա ապահովել հարկային քաղաքականության կարևորագույն սկզբունքների պահպանումը և հարկատուների կողմից իրենց պարտավորությունների կատարման բարձր մակարդակ:

Հարկային հարաբերությունների համակարգի արդյունավետությունը պահանջում է, որ հարկային օրենսգրքում լուծված լինեն հարկային բեռի արդարացի բաշխման խնդիրները: Ներկայումս ուղղակի և անուղղակի հարկերի առումով հանրապետությունում առկա է դրանց հարաբերակցության ոչ ցանկալի մակարդակ (տե՛ս գծապատկեր 2-ը և 3-ը):

Գծապատկեր 2

Ուղղակի և անուղղակի հարկերի դինամիկան 2001-2014թթ. (ընթացիկ գներով մլն դրամ)[1]



Գծապատկեր 3

Ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ում և հարկային եկամուտներում 2001-2014թթ. (ընթացիկ գներով, մլն դրամ)[2]



Հարկային օրենսգրքի կարևոր խնդիրներից մեկը պետք է լինի այն, որ ԵԱՏՄ անդամ երկրներում ՀՀ հարկային օրենսգրքի դրույթները մեկնաբանվեն այնպես, ինչպես ՀՀ հարկային մարմինների և հարկատուների կողմից: Հարկային օրենսգրքի կարևոր սկզբունքներից մեկը պետք է լինի ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ու ներդրումների աճին նպաստող մոտեցումների ամրագրումը: Հարկային օրենսգրքում պետք է միավորվեն Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր հարկատեսակների մասին օրենքների դրույթները: Այն պետք է լինի պարզ շարադրված և բացառի տարընթերցումներն ու կամայականությունները, ինչպես նաև լինի համահունչ ՀՀ օրենսդրության հետ: Հարկային օրենսգրքով պետք է կրճատել հարկային արտոնություններն ու առավել հասցեական սուբսիդավորում իրականացնել պետբյուջեից:

[1] Այս գծապատկերը կազմվել է ըստ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տվյալների՝ http://www.armstat.am

[2] Կազմվել է ըստ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տվյալների՝ http://www.armstat.am

Ամփոփելով, հարկ է նշել, որ հետազոտությունում մշակված մոտեցումներն ու առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը և հարկային վարչարարության կատարելագործմանն ուղղված մշակումների և վերլուծությունների համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ հարկաբյուջետային հարաբերությունների կարգավորմանը և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված մշակումներում: Մասնավորապես.

1. Տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հարկային քաղաքականության և հարկային համակարգի արդյունավետության բարձրացումը պահանջում է հարկային բարեփոխումների այնպիսի ռազմավարության մշակում և իրականացում, որը հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկություններն, ուղղված կլինի պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հավաքագրման և տնտեսվարող սուբյեկտների գործունեության խթանման գործընթացների միջև հավասարակշռության ապահովմանը: ՀՀ-ում ներկայումս իրականացվող հարկային բարեփոխումները կրում են իրավիճակային բնույթ և հիմնականում հետապնդում են բյուջետային մուտքերի ապահովման նպատակ: Այդպիսի մոտեցման պայմաններում փոքրանում է հարկային համակարգի դերը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում, ընդլայնվում են ստվերային շրջանառության ծավալները, նվազում է տնտեսական ակտիվությունը և գործունեություն իրականացնելու ցանկությունը, և առաջանում են բացասական այլ երևույթներ:

2. Կենտրոնացված կառավարման մոդելից շուկայական հարաբերություններին անցման փուլում պետական կառավարման համակարգի արդյունավետությունն ունի էական կախվածություն հարկային հարաբերությունների կարգավորման մեխանիզմից, հատկապես, դրա գործադրման համար ձևավորվող հարկային համակարգի գործունեության ինստիտուցիոնալ և իրավական ապահովվածությունից: Ինչպես այդպիսի մեխանիզմի ստեղծումն, այնպես էլ դրա կիրառման իրավական հիմքերի ձևավորումը բարդ գործընթացներ են, որոնք երկրի տնտեսության առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրությունից բացի, ենթադրում են նաև տվյալ ասպարեզում առկա միջազգային փորձի խորը վերլուծություն և այդ երկրում վերջինիս տեղայնացման մեթոդների ու մոտեցումների մշակում և կիրառում, սակայն, ելնելով պետական գործառույթների իրականացման համար բյուջետային մուտքերի ավելացման անհրաժեշտությունից և պետության ֆիսկալ գործառույթի իրականացման հրամայականից, ՀՀ-ում հաճախ հաշվի չեն առնվում հանրապետությանը բնորոշ մի շարք առանձնահատկություններ, և չի կիրառվում հարկային հարաբերությունների կարգավորման միջազգային առաջավոր փորձը:

3. Անցումային փուլում գտնվող երկրներում իրականացված բարեփոխումների արդյունքները ցույց են տալիս, որ շուկայական հարաբերությունների պայմաններում հարկային քաղաքականության արդյունավետությունը հատկապես կախված է տնտեսության զարգացման և կարգավորման հարկային լծակների ձևավորման ու գործադրման մոտեցումներից, որոնց հիմնավորվածության և համակարգվածության դեպքում միայն կարելի է հասնել կայուն տնտեսական աճի և մակրոտնտեսական հավասարակշռության: Այլ խոսքով, հարկային լծակները, մասնակցելով տնտեսական հարաբերությունների կարգավորման գործընթացին և հանդիսանալով պետական կառավարման արդյունավետ գործիք, կարող են դառնալ տնտեսական աճի, մակրոտնտեսական հավասարակշռության, կայունության և առաջընթացի ապահովման կարևորագույն երաշխիք: Հարկային լծակների ընտրությամբ է կարգավորվում նաև հարկային բեռի ծանրությունը, որի բարձր մակարդակը, որպես կանոն, հանգեցնում է համախառն պահանջարկի և ներդրումների ծավալների կրճատման, իսկ ցածրը՝ տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների եկամուտների ու դրամական ազատ միջոցների ավելացման: Դրանք, իրենց հերթին, հանգեցնելով համախառն պահանջարկի և կապիտալ ներդրումների ծավալի մեծացման, միաժամանակ, ստեղծում են օբյեկտիվ նախադրյալներ տնտեսական աճի տեմպերի դանդաղեցման և ստվերային տնտեսության շրջանակի ընդլայնման համար: Նման դեպքերում հարկային բեռի թեթևացումը կարող է տեղի ունենալ հիմնականում պետական ծախսերի կրճատման

ճանապարհով: Միևնույն ժամանակ, այդ ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու, ինչպես նաև հարկային հարաբերությունների կարգավորման հիմնավորված մոտեցումներ կիրառելու համար անհրաժեշտ է արդյունավետ հարկային համակարգի առկայություն:

4. Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև անցումային փուլում գտնվող ցանկացած տնտեսության հարկային համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումների ռազմավարական խնդիրը պետք է դառնա.

- ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների մակարդակի բարձրացումը,
- ընդհանուր հարկային եկամուտներում ուղղակի հարկերի տեսակարար կշռի մեծացումը,
- կապիտալ գործառնություններից գոյացող եկամուտների հարկումը,
- հարկային եկամուտների օպտիմալ կառուցվածքի ձևավորումը,
- ներմուծման և արտահանման մաքսատուրքերի արդյունավետ մակարդակի սահմանումը:

5. Հարկային համակարգն, ընդհանուր առմամբ, համարվում է արդյունավետ, երբ ապահովվում է հարկերի լրիվ հավաքագրելիություն, համակարգը նպաստում է ներդրումային գործունեության ակտիվացմանը, զբաղվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև թողարկվող ապրանքների և մատուցվող ծառայությունների ծավալի մեծացմանը և որակի բարելավմանը: Տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հավասարակշռված և միասնական հարկային քաղաքականության իրականացումը ենթադրում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, տնտեսության պետական կարգավորման արդյունավետության բարձրացում և բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորում, սակայն, Հայաստանում իրականացված հարկային բարեփոխումներով և դրանց արդյունքում ձևավորված հարկային համակարգով հանդերձ, հանրապետությունում դեռևս շարունակվում են կիրառվել այնպիսի հարկային լծակներ, որոնք ոչ միայն չեն նպաստում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանն, այլև չեն ստեղծում նախադրյալներ և անհրաժեշտ պայմաններ ստվերային գործունեության շրջանակների սահմանափակման համար: Դրանով պայմանավորված բացասական երևույթները ստեղծում են բազմաթիվ խնդիրներ, որոնք չեն նպաստում հարկատուի և պետության միջև թափանցիկ ու կանոնակարգված փոխհարաբերությունների ձևավորմանը և հանգեցնում են կոռուպցիոն ռիսկերի մեծացման: Նշված բացասական երևույթները բացառելու նպատակով, առաջին հերթին, պետք է բացահայտել հարկային հարաբերությունների կարգավորման և հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները, գնահատելով ստվերային տնտեսության ծավալներն, ինչպես նաև ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության նախընտրելի մակարդակի հասցման հնարավորությունները:

6. Հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման կարևորագույն չափանիշներից մեկը հարկերի հավաքագրելիությունն է, որի մակարդակի վրա ուղղակի և անուղղակի ազդեցություն կարող են ունենալ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: ՀՀ-ում վարվող հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում ուղղված լինելով պետության ֆիսկալ նպատակների իրագործմանը, դրամավարկային քաղաքականության հետ, մեր կարծիքով, չունի կոորդինացվածության անհրաժեշտ մակարդակ, ինչի հետևանքով շրջանառության մեջ գտնվող կանխիկ փողի չհիմնավորված ծավալը կարող է դառնալ տնտեսական գործընթացների ֆինանսական վերահսկողության արդյունավետության անկման, կոռուպցիոն ռիսկերի մեծացման, ինչպես նաև ստվերային գործունեության ընդլայնման պատճառ: Այս ուղղությամբ հավասարակշռված և կայուն վիճակի հասնելու համար անհրաժեշտ է հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացվածության բարձր մակարդակի ապահովում, որի դեպքում միայն հնարավոր կլինի արդյունավետ հարկային քաղաքականության իրականացումը:

7. ՀՀ-ում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղղություններից մեկը, մեր կարծիքով, պետք է դառնա ուղղակի հարկատեսակների դերի մեծացումը: Ընդ որում, դրան կարելի է հասնել հիմնականում ուղղակի հարկատեսակներով ենթադրվող հարաբերությունները կարգավորող օրենսդրության, մասնավորապես, «Շահութահարկի մասին» և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքներով ամրագրված դրույթների փոփոխությամբ: Դրա անհարժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ձեռնարկա-

տիրական գործունեության խթանման նպատակով հանրապետությունում սահմանված շահութահարկի ցածր միասնական դրույքաչափը մինչ օրս չի հանգեցրել գործարար ակտիվության և ներդրումների ծավալների աճի: Ավելին, այս մոտեցումն ունեցավ խիստ բացասական ազդեցություն փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության վրա, քանի որ դրանց համար շահութահարկի բեռի բարձրացումը դարձավ առանց այն էլ սուղ ներդրումային հնարավորությունների սահմանափակման պատճառ: ՓՄՁ-ները, լինելով ավելի զգայուն տնտեսական փոփոխությունների նկատմամբ, հետճգնաժամային պայմաններում նման հարկային քաղաքականությամբ բախվեցին բազմաթիվ դժվարությունների և, նույնիսկ. հայտնվեցին սնանկացման եզրին: Այդ իսկ պատճառով, ՀՀ-ում գործարար ակտիվության մեծացման և, հատկապես, փոքր ու միջին ձեռնարկատիրության խթանման, ինչպես նաև հանրապետությունում միջին խավի ձևավորման համար անհրաժեշտ է եկամուտների հիմնավորված բաշխում և ուղղակի հարկերի դերի բարձրացում:

8. Հարկային բարեփոխումների փորձը ցույց է տալիս, որ հարկերի հավաքագրման ցածր մակարդակը, որպես կանոն, պայմանավորված է լինում հարկային մուտքերի ոչ օպտիմալ կառուցվածքով: Ընդ որում, ընդհանուր հարկային մուտքերում ՓՄՁ-ները, սովորաբար, ունենում են մեծ տեսակարար կշիռ, ինչը նշանակում է, որ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում դրանց դերը համարվում է կարևոր և սկզբունքային: Բնականաբար, հարկային մուտքերի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը հիմնականում կարող է պայմանավորված լինել փոքր և միջին ձեռնարկությունների հարկման համակարգով: Այդ առումով, ՀՀ-ում պետք է համակողմանիորեն խթանել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, նպաստելով հանրապետությունում հարկային մուտքերի ավելացմանը և միջին խավի ձևավորմանը:

9. Հարկային քաղաքականության արդյունավետության տեսանկյունից սկզբունքային է հարկային բեռի արդարացի բաշխումը: ՀՀ-ում դրա համեմատաբար ցածր մակարդակը դեռևս չի նշանակում, որ հանրապետությունում ձևավորված է արդյունավետ հարկային համակարգ: Մի շարք երկրներում հարկային բեռը, լինելով բավական բարձր, միևնույն ժամանակ, չի դառնում դժգոհությունների պատճառ, քանի որ այն հավասարաչափ է բաշխված և չի ընկնում խոցելի խմբերի վրա: Ավելին, պետության միջոցով լուծվում են բազմաթիվ սոցիալական խնդիրներ, ինչն էականորեն թեթևացնում է հարկատուների սոցիալական նպատակների իրագործմանն ուղղվող ծախսային ծանրաբեռնվածությունը: Հայաստանում հարկային բեռի արդարացի բաշխման նպատակով անհրաժեշտ է, առաջին հերթին, ուժեղացնել պայքարը ստվերային շրջանառության դեմ, տեղափոխելով հարկային բեռի հիմնական ծանրությունն ավելի մեծ հնարավորություններ ունեցող հարկատուների վրա: Ընդ որում, հարկային վարչարարության ռազմավարությունը պետք է ուղղվի հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատավորմանը, հարկային մարմնի նկատմամբ հարկ վճարողների վստահության բարձրացմանը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը: Արդյունքում, էականորեն կմեծանա բյուջեների հարկային մուտքերի ծավալը, և կկրճատվեն ստվերային տնտեսության չափերը, որոնք հանրապետության տնտեսության համար դեռևս մնում են չլուծված խնդիրներ:

10. Հարկային հարաբերությունների կարգավորման կարևորագույն լծակներից են հարկային արտոնությունները, որոնք հանդիսանում են ինչպես տնտեսության, այնպես էլ առանձին սուբյեկտների գործունեության խթանման արդյունավետ միջոց, սակայն, սուբյեկտիվ գործոնները բացառելու նպատակով անհրաժեշտ է դրանց տրամադրման համակողմանի հիմնավորում: Մասնավորապես, հարկային արտոնությունների տրամադրման դեպքում պետք է նախապես համոզվել բյուջետային ուղղակի ծախսային ծրագրերով կամ տնտեսության պետական կարգավորման միջոցառումներով իրականացման ենթակա նախագծերի նկատմամբ դրանց ավելի արդյունավետ լինելու հանգամանքի մեջ: Միևնույն ժամանակ, նշված մոտեցումը զարգացած երկրներում չունի լայն տարածում և կարող է կիրառվել միայն հատուկ դեպքերում: Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում հարկային արտոնություններ կարելի է տրամադրել միայն այն պետական ներդրումային ծրագրերին, որոնք կրում են անհետաձգելի բնույթ և բավարարում են որոշակի պահանջների:

11. Հարկային քաղաքականության և հարկային համակարգի արդյունավետության բարձրացման համար չափազանց կարևոր է ՀՀ հարկային ներուժի ճիշտ գնահատումը: Լինելով բա-

վականին բարդ գործընթաց, միևնույն ժամանակ, դրա իրականացումը թույլ կտա կենսագործել հարկային հարաբերությունների կարգավորման այնպիսի ռազմավարություն, որի արդյունքում ոչ միայն կարելի է հետևողականորեն բարձրացնել հարկային քաղաքականության և հարկային վարչարարության արդյունավետությունն, այլև պետական գործառույթների իրականացման համար ապահովել հարկային մուտքերի առավելագույն ծավալ: Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման մյուս կարևոր խնդիրը՝ «գործարար միջավայր – պետություն – հարկային մարմին» կապերի արդյունավետ մեխանիզմի ձևավորումն է: Այդ առումով, առաջին հերթին, պետք է բացառել պարբերական ու լայնածավալ ստուգումների անցկացումը, հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում: Ակնհայտ է, որ անհարկի ստուգումները տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծում են լրացուցիչ անհարմարություններ և կտրուկ նվազեցնում դրանց արդյունավետությունը: Այդ առումով, կրճատելով ստուգումների պարբերականությունը, պարզապես, պետք է հիմնավորել դրանց կարևորությունը և օգտակարությունը, միաժամանակ, բարձրացնելով դրանց որակը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է կիրառել ստուգումների իրականացման այնպիսի մոտեցում, որը հիմնված կլինի ռիսկի բարձր մակարդակ ունեցող հարկ վճարողների ընտրության վրա:

12. Հարկային հարաբերությունների համակարգի արդյունավետությանն ուղղված բարեփոխումների կարևորագույն ուղղություններից մեկը պետք է դառնա ԱԱՀ-ի մասին իրավական ակտերում փոփոխությունների կատարումը: Ընդ որում, դրանք պետք է կայանան ոչ թե ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման, այլ դրա 10-30 տոկոսի սահմաններում դիֆերենցման մեջ: Նման մոտեցումը թույլ կտա հնարավորինս ընդլայնել ԱԱՀ-ի հարկման բազան և էականորեն ավելացնել պետական բյուջեի հարկային մուտքերը: Մասնավորապես, բնակչության համար առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսության գերակա ուղղությունների զարգացման ծրագրերի իրագործման նկատմամբ պետք է կիրառել ԱԱՀ-ի ցածր՝ 10-20 տոկոս, իսկ շքեղության, ոչ առաջին անհրաժեշտության առարկաների և ծառայությունների համար բարձր՝ 30 տոկոս դրույքաչափ, ինչը կնպաստի նաև հարկային բեռի՝ ի օգուտ ցածր եկամուտ ստացողների բաշխմանը:

13. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա ազդող գործոնների պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության նպատակով աշխատանքում մշակված տնտեսաչափական մոդելի գործարկմամբ ստացված արդյունքների, ինչպես նաև հարկային պարտավորությունների կատարման վիճակի գնահատման համար իրականացված ստուգումների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ուղղություններով բացասական երևույթների առաջացման հիմնական պատճառներից մեկը հանրապետությունում կորպորատիվ կառավարման մշակույթի բացակայությունն է, որի ձևավորման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, կապիտալի շուկայի զարգացումը, բաժնետերերի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի ներդրումը, տնտեսական գործունեության թափանցիկության ապահովումը, ինչպես նաև հասարակության առջև սոցիալական պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

14. Հարկային համակարգի արդյունավետությունը պահանջում է, նախ և առաջ, հարկային բեռի արդարացի բաշխում: Ներկայումս հանրապետությունում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը չունի բավարար տնտեսագիտական հիմնավորվածություն: Հետևաբար, հարկային բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկն առաջիկա տարիներին պետք է դառնա դրանց օպտիմալ հարաբերակցության սահմանումը: Ընդ որում, երկրի հարկային համակարգը պետք է ուղղված լինի ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանն ու ներդրումների աճի խթանմանը: Այս խնդիրների լուծմանը պետք է նպաստի հարկային օրենսգրքի մշակումը, որը կսահմանի համապատասխան կառուցակարգեր հարկային հարաբերությունների արդյունավետ կարգավորման համար:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԿԵՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ, *տ.գ.դ, պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ*
«Ջեներալ Ստանդարդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի աուդիտի ավագ մենեջեր

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է հարկային հարաբերությունների համակարգի ձևավորման, դրա ուսումնասիրության և այդ հարաբերությունների միջև քանակական կախվածության գնահատման հիմնախնդիրներին: Վերջիններիս ուսումնասիրությունը իրականացվել է քանակական վերլուծության ժամանակակից մեթոդների և տնտեսաչափական մոդելների միջոցով, ինչը թույլ է տալիս ապահովել հարկաբյուջետային հարաբերությունների կարգավորման, հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման և հարկային վարչարարության կատարելագործման մեխանիզմների մշակման բարձր մակարդակ:

Բանալի բառեր. *հարկային հարաբերությունների համակարգ, հարկային քաղաքականություն, հարկային վարչարարություն, հարկային բեռ, տնտեսաչափական մոդելներ:*

СИСТЕМА НАЛОГОВЫХ ОТНОШЕНИЙ И ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ВАРДАН БАБКЕНОВИЧ БОСТАНДЖЯН, *д.э.н., профессор*
Финансово-учетная кафедра Ереванского государственного университета
ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., доцент*
старший менеджер по аудиту компании ООО «Дженерал Стандарт Консалтинг»

Аннотация

Статья посвящена проблемам формирования системы налоговых отношений, ее исследованию и оценке количественной зависимости между этими отношениями. Исследование последней проведено с помощью современных методов количественного анализа и эконометрических моделей, позволяющих обеспечить высокий уровень регулирования налогово-бюджетных отношений, повышения эффективности налоговой политики и разработки механизмов совершенствования налогового администрирования.

Ключевые слова: *система налоговых отношений, налоговая политика, налоговое администрирование, налоговая нагрузка, эконометрическая модель.*

THE SYSTEM OF TAX RELATIONS AND APPROACHES TO INCREASING THE EFFECTIVENESS OF THE TAX POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA

VARDAN BABKEN BOSTANJYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Chair of Finances and Accounting, Yerevan State University

TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), AssociateProfessor*
Audit Senior Manager, "General Standard Consulting" LLC

Abstract

The article discusses the issues of developing the system of tax relations, their study, and quantitative estimation of dependencies among these relations. The study of the latter ones has been carried out by applying the contemporary techniques of quantitative analysis and running regression equations that allows ensuring a higher level of accuracy while designing respective mechanisms to regulate fiscal relations, ensure higher effectiveness of the tax policy, and better tax administration processes.

Keywords*: System of tax relations, tax policy, tax administration, tax burden, econometric model.*

ԱՂԱՏ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ հայցորդ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճի նյութական հիմքը կապիտալ ներդրումները կամ ինվեստիցիաներն են: Ներդրումային գործընթացների հետազոտումը թույլ է տալիս բացահայտել ոչ միայն լրացուցիչ կապիտալային ռեսուրսների ներգրավման աղբյուրներն ու հնարավորությունները, այլև դրանց առավել արդյունավետ օգտագործման եղանակները:

Ներդրումների և դրանց խթանման հիմնախնդիրները տարբեր մեկնություններ է ստացել տնտեսագիտության մտքի ուղղություններում:

Դեռևս 17-18-րդ դարերում գոյություն ունեին որոշակի մոտեցումներ «կապիտալի կուտակում», «ներդրում» հասկացությունների վերաբերյալ:

Հայտնի մերկանտիլիստ Թ. Մենը «Անգլիայի հարստությունը արտաքին առևտրի մեջ է» աշխատությունում այն միտքն է հայտնում, որ ազգի հարստությունը կարելի է մեծացնել երկիր մուտք գործող ոսկին հասարակական արտադրության մեջ օգտագործելով[1]:

Դասական տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթը հասարակական հարստությունը մեծացնող ներդրումները, անհատ մարդկանց հարստության մեծացման երևույթները, դիտում էր որպես հարստության վերաբաշխում, որն ի վերջո նպաստում է հասարակական հարստության մեծացմանը: Քեյնսից առաջ նա է ընդգծել այն միտքը, թե խնայողություններ և ներդրումներ կատարող սուբյեկտները տարբեր են, հետևաբար՝ ունեն տարբեր շահեր, և տարվա ընթացքում կատարված խնայողությունները օգտագործվում են նույն տարում նույնպիսի կանոնավորությամբ՝ այլ սուբյեկտների կողմից որպես ներդրումներ[2]:

Ներդրումների հարցը քննության առարկա է դարձել նաև Կ. Մարքսի «Կապիտալ»-ում: Նրա կարծիքով ներդրումների միակ աղբյուրը հավելյալ արժեքը կամ շահույթն է: Ձեռնարկատերը, ելնելով շահույթը մեծացնելու շարժառիթից, իր եկամուտի՝ շահույթի մի մասն օգտագործում է հաստատուն և փոփոխուն կապիտալի որոշակի քանակական համամասնությամբ լրացուցիչ տարրեր գնելու և արտադրության մեջ ներդնելու նպատակով: Սա կուտակում կամ ներդրում է միկրոմակարդակով: Ներդրումային գործընթացի մակրոտնտեսական հարցերը Մարքսը քննարկում է կապված հասարակական արդյունքի պարզ և ընդլայնված վերարտադրության հետ՝ վերլուծելով հասարակության մասշտաբով եկամուտների, սպառման, խնայողությունների և ներդրումների հավասարակշռության ապահովման հարցերը:

Ներդրման և դրա հետ կապված գործընթացների էության հետազոտման ասպարեզում ծանրակշիռ ավանդ ունեն նոր դասականները և հատկապես Ա. Մարշալը: Նա ներդրում է համարում ապագայում շահույթ խոստացող և կապիտալի մեծացման ուղղությամբ կատարվող բոլոր ծախսերը: Քննարկելով կապիտալի շուկայում պահանջարկի և առաջարկի փոխհարաբերությունները, նա գտնում է, որ դրանց միջև հավասարակշռություն հաստատվում է ներդրված կապիտալի դիմաց ստացվող շահույթի նորմայով, որը սուբյեկտիվ բնույթ ունի և կախված է ձեռներեցի հաշվարկներից[3]: Ներդրումների հիմնախնդիրը հետազոտելու գործում նշանակալից է անգլիացի տնտեսագետ Ջ. Քեյնսի դերը: Ի տարբերություն դասական տնտեսագիտության,

[1] Меркантелизм п/р И.С. Плотникова, М., 1995, стр. 35.
[2] А. Смит Исследование о природе и причинах богатства народов. кн. 1, М., 1935, стр 285.
[3] Маршал. А. Принципы экономической науки, т. 2, М., 1993, стр. 35-38.

ըստ որի խնայողությունները և ներդրումները ֆունկցիոնալ, քանակական կախվածության մեջ են գտնվում տոկոսի նորմայից կամ տոկոսադրույքից, Քեյնսը հիմնավորեց, որ ներդրումները ֆունկցիոնալ կախվածություն ունեն տոկոսադրույքից, մինչդեռ խնայողությունները՝ տնօրինվող եկամտից:

Համաձայն դասական տնտեսագիտության խնայողության և ներդրումների միջև հավասարակշռությունը (I = S) ձևավորվում է տոկոսադրույքի միջոցով, սակայն ըստ Քեյնսի այս հավասարակշռությանն ինքնաբերաբար ձևավորվելու հավանականությունն այնքան էլ մեծ չէ, քանի որ խնայողությունների և ներդրումների բնույթն ու շարժառիթները տարբեր են: Խնայողությունների և ներդրումների անհամապատասխանության քեյնսյան հիմնավորումը հիմնվում է հետևյալ հանգամանքների վրա[1].

- Խնայողությունների և ներդրումների որոշումներն ընդունվում են հասարակության տարբեր խմբերի կողմից: Եթե խնայում են հասարակության բոլոր անդամները, ապա ներդրումներն իրականացնում են գործարանները: Խնայող և ներդրող սուբյեկտներն իրենց ծրագրերը մշակում ու կանխատեսումներ են անում միմյանցից անկախ ու անտեղյակ:
- Եթե դասական տնտեսագիտությունը ներդրումների միակ աղբյուրը համարում է ընթացիկ խնայողությունները, ապա ըստ Քեյնսի ներդրումների աղբյուր են ոչ միայն ընթացիկ խնայողությունները, այլև նախկինում կուտակված եկամուտները, վարկային փոխատվությունները և այլն: Այստեղից հետևում է, որ ներդրումները կարող են գերազանցել խնայողություններին: Մյուս կողմից էլ, ոչ բոլոր խնայողություններն է, որ ներդրումների են վերածվում: Մասնավորապես, դրանց մի մասը կարող է օգտագործվել պարտքերի մարման նպատակով: Այլ կերպ ասած, ոչ միայն ներդրումները կարող են գերազանցել խնայողությանը, այլև խնայողությունը կարող է գերազանցել ներդրումներին:
- Խնայողությունների և ներդրումների շարժառիթները տարբեր են, իսկ դրանց վրա ազդող գործոնները՝ բազմազան ու բազմաբնույթ: Ներդրումների վրա ազդող հիմնական գործոններ են տոկոսադրույքը և սպասվելիք շահույթը կամ ըստ Քեյնսի բնորոշման, կապիտալի սահմանային արտադրողականությունը կամ եկամտաբերությունը, որոնք, ըստ էության, ներդրումների խթանման հիմքն են հանդիսանում: Խնայողությունների վրա ազդող կարևոր գործոններից է Քեյնսի բացահայտած հասարակության հիմնական հոգեբանական օրենքը, որը դրսևորվում է սպառման և խնայողության սահմանային հակումների փոխհարաբերությամբ:
- Խնայողությունների և ներդրումների միջև գոյություն ունի ժամանակային տարանջատվածություն կամ լագ, որովհետև այսօրվա խնայողությունները իրական ներդրումների են վերածվում ապագայում, ուստի այդ ժամանակահատվածում տնտեսական իրավիճակների փոփոխությունը որոշակիորեն կազդի դրանց հարաբերակցության վրա:

Վերը բերված փաստարկները հիմք են տալիս եզրակացնել, ինչպես նկատում է Հ, Աղաջանյանը, որ խնայողությունների ու ներդրումների միջև I=S հավասարակշռության ձևավորված գործնական հնարավորությունը բավականին վիճարկելի հարց է[2]:

Տնտեսագիտության ժամանակակից տեսություններում առանձին հեղինակներ «կուտակում», «կապիտալ ներդրում», «ներդրում» հասկացություններն ավելի շատ նույնացնում են, քան թե փորձում դրանց միջև գտնել էական տարբերություններ: Մակմիլլանի ժամանակակից տնտեսագիտական բառարանում տրվում է հետևյալ մեկնությունը. «Ներդրում» (կապիտալ ներդրում) տերմինը սովորաբար օգտագործվում է կամ որպես հիմնական կապիտալի մեծացման, դրա պահպանման ուղղությամբ կատարվող ծախսերի հոսքի, կամ էլ ոչ թե անմիջական սպառման,

[1] Кейнс Дж. Общая теория занятости, процента и денег, М., 2002. С. 8.

[2] Հ. Աղաջանյան, Տնտեսագիտության տեսություն, Մաս II, Երևան, 2015 , էջ 85:

այլ բարիքների արտադրության համար նախատեսվող ծախսերի հոսքի իմաստով»[1]: Ներդրումը, որպես կանոն, իրենից ներկայացնում է հիմնական կապիտալի վերարտադրության նպատակով կատարվող ծախսեր[2]: Ըստ Ռ. Բարդի, «կապիտալ ներդրում» հասկացությունը՝ իր իմաստային բովանդակությամբ հավասարազոր է «ներդրում» հասկացությանը, եթե դրանք դիտարկում ենք որպես գործընթացներ և դրանց միջև տարբերությունը փնտրում լեզվագիտական տեսանկյունից:

Կա նաև այլ տեսակետ, որ այդ երկու հասկացությունների իմաստները կարելի է տարանջատել՝ ելնելով տնտեսությունը միկրո և մակրո մակարդակների բաժանման հանգամանքից: Տնտեսական համակարգերի արդյունավետ զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակ «կապիտալ ներդրումներ» հասկացությունը ուղղակի վերագրվում է միկրոմակարդակին, այսինքն՝ ձեռնարկությունների էկոնոմիկային, իսկ «ներդրում» հասկացությունը՝ մակրոմակարդակին, այսինքն՝ ներդրումը ավելի ընդգրկուն հասկացություն է, քան կապիտալ ներդրումները[3]:

Ինչ վերաբերում է «կուտակում» հասկացությանը, ապա սովորաբար դրա տնտեսագիտական բովանդակությունը հանգում է ազգային եկամտի, ստացված նյութական արդյունքների որոշակի բաժնի օգտագործմանը՝ արտադրության ընդլայնման ու կատարելագործման նպատակով, ինչը ֆիզիկական իմաստով նշանակում է հիմնական կապիտալի և շրջանառու միջոցների ծավալների աճ: Նման մեկնաբանությունն ամբողջությամբ բխում է Մարքսի կողմից կապիտալի կուտակման պրոցեսի բնութագրումից[4]:

Ներդրումը որպես տնտեսական հասկացություն արտահայտում է լայն և համակարգված տնտեսական հարաբերությունների որոշակի համակարգ, ունի դրան համապատասխան բովանդակություն և ներառում է ապագայում եկամուտ ստանալու նպատակով միջոցների այլընտրանքային օգտագործման հնարավոր բոլոր ձևերի ամբողջությունը՝ այդ միջոցները ընթացիկ սպառման վրա ծախսելուց հրաժարվելու պարագայում: Ներդրումային որոշումների շարժառիթների բարդությունը նկատի ունենալով տնտեսության համար կարևոր նշանակություն ունի որոշումների իրացման միկրո և մակրո տնտեսական հայեցակետերը:

Մասնավոր ներդրումներ կատարելու որոշումների իրացման միկրոտնտեսական հայեցակետը հանգում է, նախ՝ այլընտրանքային լայն հնարավորության դաշտում ինվեստավորման օբյեկտ ընտրելուն, և հետո՝ ռիսկի, ենթադրվող օգուտի և դրա ստացման ժամանակի գործոնի համաչափմանը: Մասնավոր ներդրումների մակրոտնտեսական խնդիրն է որոշել ներդրումները հասարակական արտադրության մեջ օգտագործելու ուղղությունները՝ վերջին հաշվով հնարավոր մակարդակով տնտեսական աճ ապահովելու համար: Մասնավոր ներդրումների միկրո և մակրո մակարդակներով իրացման հայեցակետերի փոխազդեցության և փոխլրացման բարդ գործընթացի ուսումնասիրությունը առաջնահերթ խնդիր է անցումային երկրներում՝ տնտեսական աճի հնարավոր գործոնների հավաքագրման ու ակտիվացման համար:

Ներդրումների հիմնախնդրի հետ կապված անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ «կապիտալ» հասկացության ժամանակակից մեկնաբանումներին և ներդրումների կամ ինվեստիցիաների հետ առնչությանը:

«Կապիտալ» հասկացությունն իր բնորոշումներում բավականին փոխակերպումների է ենթարկվել և որոշակիորեն տարբերվում է իր դասական սահմանումներից: Ժամանակակից տնտեսագիտության մեջ կապիտալը մեկնաբանվում է առավել լայն իմաստով, քանի որ դրա տակ նկատի է առնվում ոչ թե պարզապես ֆիզիկական կապիտալը կամ կապիտալային բարիք-

---

[1] Словарь современной экономической теории Макмиллана, п/р Д. У. Пирса, М., 1997, стр. 258.

[2] Куренков Ю. В. Два типа воспроизводства основного капитала /Материальное накопление в условиях рыночной экономики/ , Нучное издание, М., 1991, стр. 6.

[3] Хонко Я., Планирование и контроль капитальных вложений./пер/ с англ./, М., 1980, стр. 19.

[4] Մարքս Կ., Կապիտալ, Առաջին հատոր, գլ. 22, Եր., 1954:

ները (արտադրական և ոչ արտադրական շինություններն ու կառույցները, մեքենա-սարքավորումները, արտադրական ենթակառուցվածքները, ապրանքանյութական պաշարները), այլ այն բոլոր արժողություններն ու ակտիվները, որոնք եկամտային հոսք են ապահովում[1]: Այսպիսի բնորոշումը ավելի ընդգրկուն է և ներառում է ոչ միայն ֆիզիկական կապիտալը, այլև ֆինանսական և մարդկային կապիտալները, որոնց մեջ ներդրումները նույնպես եկամտային հոսք են ապահովում:

Կապիտալի և ներդրումների փոխկապվածության հարցի հետ կապված անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև «կապիտալի պաշար» և «կապիտալային հոսք» հասկացություններին: Կապիտալը որպես պաշար իրենից ներկայացնում է կուտակված արտադրական նշանակության բարիքները, իսկ ինվեստիցիաներն այն ներդրումային հոսքերն են, որոնց շնորհիվ տեղի է ունենում գոյություն ունեցող կապիտալային բարիքների պաշարի ավելացում: Այլ կերպ ասած, ինվեստիցիաներն այն կապիտալ ներդրումներն են, որոնք նպաստում են կապիտալային պաշարի ավելացմանը ու եկամտային հոսքերի մեծացմանը[2]: Այստեղից կարող ենք եզրահանգել, որ ներդրումներն ավելի լայն իմաստ ունեցող հասկացություն է, քան ինվեստիցիաները, չնայած հայերենում այս երկու հասկացությունները նույնացվում են: Ըստ էության, ինվեստիցիաներին կարելի է վերագրել այն ներդրումները, որոնք եկամտային հոսքեր են ապահովում[3]:

Ինվեստիցիաները համարվում են ներդրումներ ինչպես դրամական, այնպես էլ իրական կապիտալի մեջ: Դրանք իրականացվում են դրամական միջոցների, վարկերի, արժեթղթերի, ինչպես նաև շարժական և անշարժ գույքի, ինտելեկտուալ սեփականության և այլ արժողությունների մեջ ներդրումների տեսքով: Այսպիսի բնութագրումը կարելի է անվանել հաշվապահական, քանի որ այն ընդգրկում է բոլոր ակտիվներում, այսինքն՝ ներդրումները դրամական և իրական կապիտալներում: Իրական կապիտալում ներդրումները, որոնք կոչվում են կապիտալագոյացնող ներդրումներ կամ ներդրումներ ոչ ֆինանսական ակտիվներում, հանգեցնում են հիմնական կապիտալի վերարտադրությանն ու նորացմանը: Ներդրումների այսպիսի բնորոշումն արտահայտում է ներդրումների բովանդակությունը տնտեսական իմաստով:

Այսպիսով, ներդրումների էությունը մեկնաբանվում է հաշվապահական և տնտեսական բովանդակության տեսանկյուններով[4]: Հաշվապահական բնորոշման համաձայն ինվեստիցիաներ են համարվում ներդրումները բոլոր ակտիվներում: Տնտեսական բնորոշման համաձայն ինվեստիցիաներ են համարվում այն ներդրումները, որոնք ուղղվում են հիմնական կապիտալի վերարտադրությանը, ստեղծմանը և նորացմանը: Ընդ որում, դրամական կապիտալում կամ ֆինանսական ակտիվներում ներդրումների մի մասը (վարկեր, արժեթղթեր) իրական կապիտալում ոչ ֆինանսական ակտիվներում ապագա ներդրումների աղբյուր են հանդիսանում: Հետևապես անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրամական կապիտալում ինվեստիցիաները (ֆինանսական ակտիվներում ներդրումները) իրական կապիտալում (ոչ ֆինանսական ակտիվներում) ներդրումներին միավորելու, գումարելու դեպքում մի կողմից կրկնահաշվարկ է ստացվում, և մյուս կողմից՝ ոչ բոլոր ֆինանսական ներդրումներն են իրական կապիտալում փոխակերպվում ներդրումների:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներում կամ դրամական ու իրական կապիտալներում ներդրումների միջև հարաբերակցությունը կախված է փոխատվական տոկոսի մեծությունից և տնտեսական աճի կանխատեսվող հեռանկարներից ու սպասվելիք շահույթի նորմայից: Սովորաբար բարձր տոկոսադրույքի պայմաններում աճում են ֆինանսական ներդրումները,

[1] Курс Экономической теории. Под. Ред. М. Н. Чепурина, Киров, 2010, с. 282.
[2] Курс Экономической теории. Под. Ред. М. Н. Чепурина, Киров, 2010, с. 292-293.
[3] Большая Экономическая Энциклопедия. М. 2007, с. 243.
[4] Экономика, Под ред. А. С. Булатова, М., 2001, стр. 348.

իսկ ցածր տոկոսադրույքի պայմաններում՝ ոչ ֆինանսական ակտիվներում կամ իրական կապիտալում ներդրումները: Եթե ենթադրվող շահույթի նորման բարձր է փոխատվական տոկոսից, ապա իրական կապիտալում ներդրումներն աճում են, իսկ դրամական կապիտալում՝ պակասում: Այսպես, եթե իրական կապիտալից ստացվելիք շահույթի նորման բարձր լինի գործող տոկոսի նորմայից, ապա տնային տնտեսությունները (խնայողությունների սեփականատերերը) ձգտելով մաքսիմալացնել իրենց եկամուտը, շահագրգռված կլինեն խնայողություններն առավելապես ներդնել իրական կապիտալի մեջ: Նույն կերպ էլ, ֆիրմաները, սպասվելիք բարձր շահութաբերության ակնկալիքով շահագրգռված են վարկեր վերցնել և դրանք ուղղել ներդրումների մեջ: Տնտեսագիտության մեջ խնայողությունները դիտում են որպես «ներդրումների» հիմք: Ներդնել լայն առումով նշանակում է «այսօր բաժանվել փողից՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու համար»:

Ներդրումների սուբյեկտներ են իրավաբանական և ֆիզիկական անձինք, այդ թվում օտարերկրյա, ինչպես նաև պետությունը և միջազգային կազմակերպությունները: Ներդրումների օբյեկտներ են նոր գործարկվող, վերազինվող, վերակառուցվող և ընդլայնվող հիմնական միջոցները, արժեթղթերը, սեփականության այլ օբյեկտներ, գիտատեխնիկական արդյունքները, ինտելեկտուալ սեփականության իրավունքները:

Ներդրումների գործընթացի հիմնական առանձնահատկությունները, որոնք էական են դրա կառավարման համար, երկուսն են՝ ժամանակը և ռիսկը: Առաջինը ներդրումների և դրանց հատուցման միջև ընկած ժամանակամիջոցն է, իսկ երկրորդը՝ սպասելիք եկամուտների հոսքի կորստի վտանգի հավանականությունը, որի մեծությունը պայմանավորում է ռիսկայնության աստիճանը: Այլ կերպ ասած, ներդրումային ռիսկը տնտեսական ռիսկի կարևոր բաղադրիչ է և էապես ազդում է հասարակության գործարար ակտիվության վրա:

Ներդրումներն, ըստ էության, ավանսավորվող ծախսեր են, որոնք կարճատև ժամանակահատվածում հանգեցնում են ներդրումային ապրանքների և ծառայությունների պահանջարկի ավելացմանը: Նշենք, որ ներդրումները հակադիր են խնայողություններին այն առումով, որ դրանք, փաստորեն կրճատում են ընթացիկ սպառողական պահանջարկը: Այդ իսկ պատճառով, կարճաժամկետ հեռանկարում ներդրումային քաղաքականությունը կոչված է փոխհատուցելու ոչ բավարար սպառողական պահանջարկը ներդրումային պահանջարկի ավելացման ճանապարհով: Ներդրողները տնտեսական գործունեությունն սկսելուց առաջ, որպես կանոն, հաշվարկում են դրա սահմանային արդյունավետությունը, այսինքն՝ առկա կապիտալի ավելացմանն ուղղվող ծախսերի և ակնկալվող արդյունքի հարաբերությունը՝ հաշվի առնելով ներդրումային ռիսկը: Ներդրողին, առաջին հերթին, հետաքրքրում է ներդրումների ետգնման ժամկետը, սպասվող դրամական հոսքերը, ռիսկերի նվազեցման հնարավորությունները և դրանց ապահովագրման գինը: Ներդրումների ծավալի ավելացումը հանգեցնում է դրանց սահմանային արդյունավետության նվազեցմանը: Սակայն, եթե այդ արդյունավետությունը մոտենում է փոխատվական տոկոսադրույքի նորմային, ապա արտարժույթի և արժեթղթերի մեջ ներդրումները դառնում են ավելի շահավետ և քիչ ռիսկային, քան ներդրումները տնտեսության իրական հատվածի ճյուղերում:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

ԱԶԱՏ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ հայցորդ

Համառոտագիր

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճի նյութական հիմքը ներդրումները կամ ինվեստիցիաներն են: Ներդրումային գործընթացների հետազոտումը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն լրացուցիչ կապիտալային ռեսուրսների ներգրավման աղբյուրներն ու հնարավորությունները, այլև դրանց առավել արդյունավետ օգտագործման եղանակները:

Ներդրումների հիմնախնդրին անդրադարձել են տնտեսագիտության շատ ուղղությունների ներկայացուցիչներ, այդուհանդերձ այն չի կարելի լուծված համարել: Ներդրումների բովանդակության ճշգրտումները կարևորություն են ներկայացնում հանրապետության արդի տնտեսական փոխակերպությունների բնութագրությունների տեսակից:

Բանալի բառեր. *ներդրում, իրական կապիտալ, ֆինանսական ներդրումներ, ոչ ֆինանսական ներդրումներ, տոկոսադրույք, շահույթի նորմա, խնայողություններ:*

ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ И ХАРАКТЕРИСТИКА ИНВЕСТИЦИЙ

АЗАТ САМВЕЛОВИЧ ГРИГОРЯН
младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА
соискатель Армянского государственного экономического университета

Аннотация

Материальную основу развития любой экономической системы составляют вложения или инвестиции. Исследование процессов вложений дает возможность выявить не только источники и возможности привлечения дополнительных ресурсов вложений, но и обосновать методы их наиболее эффективного использования.

Хотя к проблемам инвестиций обращались представители многих направлений экономической науки, тем не менее, их нельзя считать решенными. Уточнения содержания инвестиций представляются весьма актуальными с точки зрения характеристики нынешних экономических преобразований в республике.

Ключевые слова: *инвестиции,реальный капитал, финансовые инвестиции, нефинансовые инвестиции, процентная ставка, норма прибыли, сбережения.*

THE ECONOMIC MEANING AND CHARACTERISTICS OF INVESTMENT

AZAT SAMVEL GRIGORYAN
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract

In any economic system, investments are the real foundation for ensuring an economic growth. The research of investment processes enables to identify not the sources and opportunities for attracting additional capital resources, but also the methods of their best use. The issue of investments has been studied by many representatives of various economic schools; however this topic still requiresaddressing. The importance of clarifying the meaning of investments is associated with the type of characteristics of contemporary economic transformations.

Keywords: *Investment, real capital, financial investment, non-financial investment, interest rate, profit rate, savings.*

GEVORG HAYK GRIGORYAN
Ph.D. Student, Shanghai University of Finance and Economics

THE EFFECTS OF DATA-SNOOPING BIAS ON MUTUAL FUND PERFORMANCE

Introduction

The performance of mutual funds has been one of the main issues in the financial academia and in the financial industry. The investment decisions are often made by comparing the main fund performance evaluation measures such as raw returns, Sharpe ratios or the intercepts, obtained from factors models, to the benchmark performance measures. The crucial question is whether statistical inferences made from large-scale number of methods are correct. Often, due to the limitations in the financial data sets, in fact there are only few available financial data sets, researchers are facing different obstacles when conducting empirical analysis. Lo and MacKinlay (1990) and Brock, Lakonishok, and LeBaron (1992) were one of the first to document the data-snooping bias in financial studies[1,2]. Lo and MacKinlay write: "The reliance of economic science upon non-experimental inference is, at once, one of the most challenging and most nettlesome aspects of the discipline"[3]. The constant reuse of the same financial data by the researchers leads to the data-snooping or data mining[4]. As same data set is tested for different models and assets, individual statistics generated from the same data set are related to each other, yielding misleading inferences.

In the context of evaluating mutual fund performance, the re-examination of different models and different performance measures using the same data set, might end up with some funds showing superior managerial abilities, yet such superior performance may simply be an outcome of luck.

This paper quantifies possible data-snooping biases for the actively managed equity mutual funds and tests whether the performance of these funds is truly superior relative to given benchmarks, such as S&P 500. For this purpose, we use powerful testing methods, specifically, White's (2000)'s "Reality Check" and its stepwise extension by Romano and Wolf (2005) the "Step-RC"[5,6].

The results of our tests suggest that, when data snooping-bias is not considered, the performance of mutual funds under given performance criterion might be highly statistically significant relative to their benchmarks. However, once we control for the effects of data-snooping, the number of outperforming mutual funds decreases dramatically. The results are robust relative to all included benchmarks. The inference made from the results is that the performance of most of the funds is simply due to luck and only few funds possess real superior ability to outperform the market indices.

Data

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը՝ հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու արտոնությունների կիրառությունը նշանակում է, որ՝ այդ համայնքների վարչական սահմաններում գտնվող առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով բնակչությանը մանրածախ վաճառքի (առք ու վաճառքի) իրականացման գործունեությունից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, իսկ այդ գործունեությունն իրականացնող և շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից, ինչպես նաև տնտեսական գործունեության շրջանակներում արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի՝ իրացումից եկամուտներն ազատվում են շրջանառության հարկից, օտարման գործարքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն, իրացումից ստացման ենթակա եկամուտներն ազատվում են շահութահարկից կամ եկամտային հարկից:

Մեկ այլ հարկային արտոնություն կիրառվում է ՓՄՁ-ների ոլորտում: Այսպես, ՓՄՁ-ներին խրախուսելու նպատակով հանրապետությունում կիրառվում են բազմաթիվ գործիքներ, այդ թվում՝ հարկային արտոնություններ: Դրանց նպատակը գործարար միջավայրի բարելավումն է՝ հատկապես ՓՄՁ-ների համար: Պետք է հաշվի առնել, որ գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում հարկային եկամուտներն ապահովում են պետական բյուջե հիմնականում ՓՄՁ-ները: Հարկային բեռի թեթևացումն, ինչ խոսք գործարարության զարգացման երաշխիքներից է, ինչը կարող է նպաստել բիզնեսի կայացմանն, այդ թվում նաև՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը[2]:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործունեությունը, բացառությամբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության, ազատվում է արտոնագրային վճարից, իսկ այդ գործունեությունն իրականացնող անհատ ձեռնարկատերերն ազատվում են ձեռնարկատիրական գործունեության համար օրենքով նախատեսված եկամտային հարկից. կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ազատվում են ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության մասով Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, որպես հարկային գործակալ, հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից, բացառությամբ հարկային գործակալի կողմից վճարվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող եկամտային հարկի և սոցիալական վճարի[3]:

ՓՄՁ-ների հարկային դաշտում հարկային բարեփոխումներ են տեղի ունեցել ընտանեկան բիզնես ունեցող ձեռնարկատիրություններում: Արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ զբաղվող ՓՄՁ-ների և ընտանեկան ձեռներեցների համար գործում են հարկման առավել բարենպաստ պայմաններ:

---

[1] «Սահմանամերձ համայքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, հոդված 3: Կ-665-15.11.2014-SS-010/0

[2] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6673&Reading=0#

[3] «Սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք: ՀՀՊՏ 2014.12.17/69(1082)

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ են կատարվել, որոնք վերաբերում են ընտանեկան ձեռնարկատիրության հարկմանը[1]: Համաձայն վերջինիս, ընտանեկան ձեռներեցները ազատվում են գրեթե բոլոր պետական հարկերից: Նույն օրենքի հոդված 13-ի 10-րդ կետի համաձայն ընտանեկան ձեռնարկատիրությունը շահույթ ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող գործունեությունն է, որի սուբյեկտներ կարող են համարվել, ինչպես անհատ ձեռնարկատերերը, այնպես էլ՝ առևտրային կազմակերպությունները: Սակայն երկուսի դեպքում էլ գործունեությունը պետք է իրականացվի բացառապես ընտանիքի անդամների անմիջական մասնակցությամբ: Իսկ առևտրային կազմակերպության դեպքում կանոնադրական կապիտալը ամբողջությամբ պետք է պատկանի ընտանիքի մեկ կամ մի քանի անդամների, եթե կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է բացառապես կազմակերպության բաժնետերերի ընտանիքի անդամների միջոցով:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներն այն անձինք են, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի չի գերազանցի 18.0 մլն դրամը: Այսինքն՝ Հայաստանում ներդրվում է «ընտանեկան բիզնես կարգավիճակը», և տարեկան մինչև 18 մլն դրամ շրջանառություն ունեցողները ազատվելու են հարկերից:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ չեն դիտարկվի ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրող և ներմուծող ձեռնարկատիրությունները, առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, եթե առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը պատկանում է այլ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի բաժնեմասը:

Քանի որ շրջանառության հարկատեսակի դեպքում շրջանառության հարկ վճարողների կողմից կատարվող ձեռքբերումները չփաստաթղթավորելու գործընթացը նպաստում է ստվերային շրջանառությունների ավելացմանը, ուստի հարկային ոլորտը կարգավորող մարմինների տեսակետից, դա էլ սահմանափակում է շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարող խոշոր տնտեսվարող սուբյեկտների լիարժեք հարկման հնարավորությունները: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է խստացնել փաստաթղթերով հիմնավորելու պարտադիր պահանջը խախտելու դեպքերում կիրառվող պատասխանատվության միջոցները՝ նպաստելով ՀՀ տնտեսությունում կատարվող գործարքների փաստաթղթավորմանը ու տնտեսվարող սուբյեկտների լիարժեք հարկմանը:

2015թ.-ից հարկային արտոնություններ են սահմանվել նաև ՀՀ արտահանող գործարարների համար, մասնավորապես, հաշվի առնելով ԵԱՏՄ երկրների հետ անդամակցության խնդիրը: Այսպես, ՀՀ արտահանողներին հնարավորություններ են տրվում ստանալ մեծ եկամտաբերություն ապրանքների արտահանման դեպքում դեպի ԵԱՏՄ երկրներ՝ վճարելով ավելի քիչ շահութահարկ: Քանի որ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու նախագծին[2], վերջինիս ընդունման դեպքում հարկային լրացուցիչ խթաններ կտրամադրվեն ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագրով ՀՀ տարածքից արտահանում իրականացնող ռեզիդենտ հարկ վճարողներին՝

- Հարկ վճարողների խմբում չկան մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) վերամշակման, թանկարժեք քարերի մշակման և (կամ) իրացման, ոսկերչական իրերի արտադրության և (կամ) իրացման, թանկարժեք մետաղների արտադրության և (կամ) իրացման, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության և (կամ) իրացման ոլորտներից որևէ մեկում գործունեություն իրականացնող հարկ վճարողներ:
- Հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտա-

[1] «Հարկերի մասին» ՀՀ օրենում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին: Գլուխ 2: ՀՀՊՏ 2014.07.30/41(1054) Հոդ. 660: ՀՕ-134-Ն

[2] «Շահութահարկի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու նախագիծ: http://www.mineconomy.am/uploades/glxavor_1_Razmavarutyun_ardyunaberutyun.pdf և http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6428&Reading=0

հանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ. դրամ: Ընդ որում՝ արտահանման ծրագրի իրականացման տվյալ հաշվետու տարվա ընթացքում հարկ վճարողների խումբն ապահովում է ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանվող նվազագույն մեծությունը:

- Հաշվետու տարվա ընթացքում հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողների՝ ՀՀ ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշիվներին արտահանման ծրագրին վերաբերող գործունեությունից հանրագումարային հաշվարկով մուտքագրվել է առնվազն 40 մլրդ դրամին համարժեք արտարժույթ:
- Հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողները հաշվետու տարվա ընթացքում չունեն ՀՀ տարածքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից ստացման ենթակա եկամուտներ:
- Նշված բոլոր պայմանները միաժամանակ բավարարող հարկ վճարողների խմբի մեջ մտնող հարկ վճարողի շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է.
- **5% դրույքաչափով,** եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ դրամ,
- **2% դրույքաչափով,** եթե հարկ վճարողների խմբի կողմից հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված և (կամ) ԵԱՏՄ անդամ պետություններ տեղափոխված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների մաքսային արժեքի, ոչ ռեզիդենտ կազմակերպություններին ՀՀ տարածքից դուրս մատուցված ծառայությունների և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար ՀՀ տարածքից դուրս կատարված աշխատանքների արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 50 մլրդ դրամ:

Նախատեսված՝ արտահանման ծրագրերի հավանության արժանացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Այսինքն՝ այս նախաձեռնության արդյունքում շահութահարկի 20 տոկոս դրույքաչափը նվազեցվում է 10 անգամ, որի նպատակը տնտեսական աճի տեմպերի ավելացումն ու ներդրումների աճն է, ինչպես նաև ներդրումների աճը, նոր աշխատատեղերի ստեղծումն ու պետբյուջե լրացուցիչ եկամուտների ապահովումը:

Ապրանք արտահանող տնտեսվարողների շահութահարկը առաջարկվում է նվազեցնել 10 անգամ՝ ներկայիս 20 տոկոսի փոխարեն՝ սահմանելով 2 տոկոս: Այս արտոնությունից, սակայն կարող են օգտվել միայն արտահանմամբ զբաղվող և տարեկան 40 մլրդ. դրամի արտահանում ունեցող տնտեսվարողներն ու արտահանող ընկերությունները:

Ստացվում է, որ ՀՀ-ում տարեկան 40 մլրդ դրամի արտահանում ունեցող տնտեսվարողները վճարում են շահութահարկի 2 տոկոս դրույքաչափ, իսկ մնացածը հարկվում են սովորական ռեժիմով: Հարց է առաջանում, թե ՀՀ տնտեսության որ ոլորտները կարող են ապահովել գերշահույթներ:

Կարծես, խնդիրը հանգուցալուծվում է հանքարդյունաբերության ոլորտով: Սակայն սույն օրենքի նախագծում նշվում է, որ հարկային աննախադեպ արտոնությունից չեն կարողանա օգտվել հանքարդյունաբերության և լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները: Պետք է նշել, որ 40-50 մլրդ դրամի արտահանում ունեցող տնտեսվարողներ ներկայումս գոյություն չունեն, իսկ նման ծավալի միակ արտահանողը պղնձամոլիբդենային ոլորտի ընկերու-

թյուններն են, որոնք արտահանում են պղնձի խտանյութ: Սակայն տեսականորեն հետագայում և նաև գործնականում մի քանի ընկերությունների միավորման արդյունքում արտոնյալ հարկով հարկվող արտահանողներ կառաջանան, իսկ դա նշանակում է, որ օրենքում նույնպես սահմանվել են սահմանափակումներ՝ կանխելու համար նման չարաշահումները: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է նաև բարեփոխումներ իրականացնել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի այն հոդվածներում[1], որոնք վերաբերում են հարկային մարմնի կողմից անուղղակի եղանակով հարկերի հաշվարկման հիմքերին և մեթոդներին, հարկվող օբյեկտների գնահատման և հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմներին:

Օրինակ, գծապատկեր 1-ի տվյալներից կարելի է եզրակացնել, որ 2000-2014թթ. ՀՀ արտահանման ծավալների միջին աճը կազմել է 859.02 մլն ԱՄՆ դոլար, իսկ հավելաճի տեմպը՝ 115.6%: Եվ, եթե միայն դիտարկենք 2014թ. արտահանումը, որը կազմել է 1547.3 մլն ԱՄՆ դոլար, ապա գիտական ապստրակցիայի մեթոդով կարելի է ասել, որ 1000 խոշոր արտահանողների համար վերջինս կազմել է 1.55 մլն ԱՄՆ դոլար, որը չի բավարարում շահութահարկի արտոնությունից օգտվելու պահանջը:

Գծապատկեր 1

ՀՀ արտահանման դինամիկան 2000-2014թթ.[2]



Գործարար միջավայրի գործոնային վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հիմնավորել արտահանման ապրանքային բևեռացման մակարդակի ազդեցությունը և դրա հետ կապված գործոնների ազդեցությունը գործարար ակտիվության բարձրացման, տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման համար: Քանի որ արտահանման ապրանքային բևեռացման մակարդակը հանդիսանում է նաև կարևոր մակրոտնտեսական գործոն, պետք է նշել, որ այն բավականին բարձր է մնացած հետխորհրդային երկրների համեմատ, բացառությամբ Ադրբեջանի, Ռուսաստանի Դաշնության (արտահանման կառուցվածքում հիմնականում գերակշռում է վառելիքի արտահանումը) և որոշ չափով Ուկրաինայի (գերակշռում է քարածուխը և երկաթը):

[1] «Հարկերի մասին» ՀՀ օրենք գլուխներ 3-4: ՀՀՊՏ 1997.05.20/11: ՀՕ-107:

[2] http://armstat.am/am/?nid=126&id=10003

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՆԱՀԻՏ ԳԱԳԻԿԻ ԴՐԱՄԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Հարկային բարեփոխումների հաջողության համար անհրաժեշտ է մշակել հարկային գործիքների և հարկային լծակների օպտիմալ հարաբերակցություն, որոնք կապահովեն հարկային եկամուտների հավաքագրություն ու գործարար միջավայրի զարգացումը: Առաջին հայացքից, այդ խնդիրը լուծվում է հարկային չեզոքության և հարկերի հավաքագրման դիվերսիֆիկացաման տեսանկյունից,, իսկ այդ գործում ակտիվ դերակատարում են ունենում հարկային արտոնությունները: Հետևաբար՝ անհրաժեշտ է հիմնավորել հարկային արտոնությունների դերն ու նշանակությունը, իսկ դրանց վերանայման հրատապությունը կարող է բերել հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանը և տնտեսության զարգացմանը:

Բանալի բառեր. *հարկային օրենսդրություն, հարկ վճարողներ, հարկային արտոնություններ, հարկվող օբյեկտ, հարկի դրույքաչափ, արտարժույթ, շահութահարկ:*

К ВОПРОСУ О ВЛИЯНИИ НАЛОГОВЫХ ЛЬГОТ НА ЭКСПОРТ РА

АНАИТ ГАГИКОВНА ДРАМБЯН
соискатель Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Для успешного проведения налоговых реформ необходимо разработать оптимальное соотношение налоговых инструментов и налоговых рычагов, обеспечивающих сбор налоговых доходов и развитие бизнес-среды. В частности, эта проблема решается с точки зрения достижения налоговой нейтральности и диверсификации сбора налогов, а в этом деле активная роль принадлежит налоговым льготам. Поэтому необходимо обосновать роль и значение налоговых льгот, а своевременность их пересмотра может привести к повышению эффективности налоговой системы и развитию экономики.

Ключевые слова: *налоговое законодательство, налогоплательщик, налоговые льготы, объекты налогообложения, налоговая ставка, иностранная валюта, налог на прибыль.*

ON TAX INCENTIVES AFFECTING THE EXPORTS OF THE REPUBLIC OF ARMENIA

ANAHIT GAGIK DRAMBYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

To ensure the success of tax reforms, it is required to design the optimal structure of tax and fiscal tools and instruments that will result in the collection of taxes and promote the development business climate. From a separate point of view, this issue is addressed with regard to tax neutrality and diversification of tax collection, and for this purpose tax incentives play a crucial role. Therefore, it is required to justify the role of tax incentives and meaning, and the urgent need for revising them could increase the effectiveness of the tax system and ensure the development of the economy.

Keywords: *Tax legislation, taxpayers, tax incentives, object of taxation, tax rate, foreign exchange, corporate tax.*

ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ՉԱՔԱՐՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչ

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ցանկացած երկիր ժամանակ առ ժամանակ պարտավոր է վերանայել իր տնտեսական քաղաքականությունը, ոչ միայն ֆինանսատնտեսական ճգնաժամերի և տնտեսական համակարգի փոփոխման պայմանների թելադրանքով կամ, նույնիսկ պարտադրանքով, այլ նաև պայմանավորված նման ֆորսմաժորային իրավիճակների բացակայությամբ: Քննարկվող հիմնախնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ ցանկացած երկրի կողմից իրականացվող արտադրական գործընթացներն ու ծառայությունները պետք է նպատակաուղղված լինեն առաջին հերթին սեփական երկրի, այն է՝ ազգային շուկայի կարիքների առավելագույն բավարարմանը: Վերջինս կարող է ապահովվել արդյունաբերության կառուցվածքային համակարգի (ԱԿՀ) և ազգային շուկայի (ԱՇ) պահանջմունքների ու պահանջարկի հավասարակշռման միջոցով: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նաև ընդգծել, որ հավասարակշռումը մենք չենք բացարձակացնում կամ գերագնահատում, քանի որ այն իդեալական հավասարակշռված կարող է լինել միայն ու միայն տեսականորեն, իսկ գործնականում այդ հավասարակշռությունը կարող է մոտենալ հնարավորինս տեսականին: Այստեղ կարևոր է այն, որ հավասարակշռումը բացում է նաև սկզբունքորեն նոր հնարավորություններ բոլոր տեսակի ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և արդյունաբերական արտադրանքի նկատմամբ ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար, իսկ լայն իմաստով սա ենթադրում է առաջատար տեխնիկայի, նոր տեխնոլոգիաների ու նյութերի և արտադրության կազմակերպման նոր ձևերի, գիտատեխնիկական առաջընթացի էական արագացում, ինչպես նաև բնական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործում: Նշված հավասարակշռումը կարող է և պետք է ընդգրկի նաև հիմնարար ու կիրառական գիտական մշակումները, պատենտները, լիցենզիաները, նորամուծությունները, ազգային մշակութային և հոգևոր ժառանգությունը, ինչպես նաև դրանց հետ առնչվող ամբողջական տեղեկատվությունը: Սակայն ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ինչպես Խորհրդային Միության փլուզման առաջին տարիներին, այնպես էլ այժմ շուկայական տնտեսության պայմաններում դեռևս ՀՀ արդյունաբերության կառուցվածքային վերափոխումները տեղի են ունենում տարերայնորեն, որոնք և հիրատապ են դարձնում տնտեսության զարգացման այնպիսի կարգավորիչ մեխանիզմների ստեղծելը, որոնք թույլ կտան կանխել գոյություն ունեցող անհամաչափությունների ու անհամամասնությունների խորացումը: Հետևաբար, հարկ է ընդգծել, որ դա հնարավոր է միայն ակտիվ արդյունաբերական քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռումը էապես կարող է նպաստել տնտեսության զարգացման համալիր ծրագրավորմանը և կառավարման գործընթացում դառնալ տնտեսության դիվերսիֆիկացված ու հեռանկարային զարգացման կանխատեսումների հիմնական միջոցը: Ելնելով այս հիմնադրույթից անհրաժեշտ ենք համարում նշել, որ երկրի տնտեսական աճի ապահովման համար կարևորագույն նախադրյալ ու խթանիչ գործոն է հանդիսանում արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի սիստեմատիկ հավասարակշռվածությունը, որը պահանջում է մի կողմից՝ հավասարակշռման գնահատում տնտեսու-

թյան բոլոր մակարդակներով, մյուս կողմից՝ դրա ներդրման սկզբունքների և մոտեցումների մշակում: Տեղին է նշել, որ հավասարակշռումը ոչ միայն ապահովում է առաջարկի և պահանջարկի տնտեսական փոխհարաբերությունները, այլև բնութագրվում է որպես այդ հարաբերությունների, ինչպես նաև արտադրական ներուժի ու ռեսուրսների օգտագործման շուկայական կառուցվածքի և մրցակցության կարգավորման մեխանիզմ: Վերջինս առաջին հերթին արտահայտում է տնտեսական գործընթացների արժեքային և բնաիրային զարգացման փոփոխության կողմերը, ինչպես նաև տեխնիկական ու տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշների մակարդակը, որն էապես կարող է նպաստել դրանց նպատակաուղղված և համաձայնեցված բարձրացմանը, բացահայտել տնտեսական ու շուկայական ցուցանիշների փոփոխության ազդեցությունը հասարակական ամբողջական արդյունքի աճի և նրա կառուցվածքի վրա: Որպես մակրոտնտեսական հարաբերությունների արտահայտման կատեգորիա, հավասարակշռումը միաժամանակ թույլ է տալիս բացահայտել այն էական անհամամասնությունները, որոնք առաջանում են տնտեսական ճգնաժամի պայմաններում, ինչպես նաև ազգային ամբողջական արդյունքի ծավալի, կառուցվածքի և դրա շուկայական պահանջարկի միջև:

Հավասարակշռման այդ երկու բաղադրիչների միջև գոյություն ունի հակադարձ ֆունկցիոնալ կախվածություն, ընդ որում արտադրանքի շուկայական պահանջմունքները որպես կանոն պայմանավորում են արդյունաբերության և ներմուծվող արտադրանքի ծավալն ու դրանց հետագա աճի տեմպերը: Սակայն դա չի նշանակում, որ հավասարակշռման համակարգում առաջնայնությունը բոլոր դեպքերում պետք է տալ արտադրանքի շուկայական պահանջմունքների խնդիրների լուծմանը: Ճիշտ է, արտադրության աճը և կառուցվածքը հիմնականում պայմանավորվում են շուկայական պահանջմունքներով, սակայն արդյունաբերության գիտատեխնիկական նվաճումների արդյունքները ևս հանդիսանում են շուկայական նոր պահանջմունքների առաջացման հիմքը:

Հետևաբար, հաշվեկշռումը տնտեսության զարգացման և շուկայական պահանջմունքների համապատասխանեցման մի մակարդակից մյուսին անցման տնտեսական գործընթաց է, որի հիմնական նախադրյալն ու նախապայմանը ոչ միայն արտադրանքի ծավալն է, այլև գիտատեխնիկական արտադրանքի յուրացումն ու թողարկումը: Այս դեպքում հավասարակշռման մակարդակի գնահատման չափանիշն արտադրանքի շուկայական պահանջարկի բավարարման աստիճանն է, որը կախված է հավասարակշռման համակարգի կազմավորման և մասնավոր բնութագրիչների ֆունկցիոնալ ու համալիր գործունեության առանձնահատկություններից:

Այդ նպատակով մեր կողմից հավասարակշռման բնութագրիչները բաժանվել են երկու խմբի, ըստ շուկայական և արտադրական հատկանիշների:

1. Հավասարակշռման շուկայական բաղադրիչներին վերաբերում են արտադրանքի.
- որակը և տեխնիկական մակարդակը,
- օգտակարությունը (նաև սահմանային) և փոխադարձ փոխարինման հնարավորությունները,
- հիմնական տեխնիկական պարամետրերի համապատասխանությունը միջազգային լավագույն նմուշների մակարդակին,
- կյանքի ցիկլի (կենսացիկլի) տևողությունը՝ ըստ շահագործման ծախսերի, գնի և ստացված արդյունքի համեմատության գնահատման,
- արդիականացման սահմանային ծախսերն ու եկամուտները,
- շահագործման ռեսուրսատարության առավելագույն և նվազագույն ծախսերի չափը,
- մրցունակության դիմակայման գլխավոր տնտեսական պարամետրերի պահպանման հնարավորությունները:

2. Հավասարակշռման արտադրական բնութագրիչներին վերաբերում են.

- արտադրության տեխնիկատեխնոլոգիական առաջադիմության և շահագործման տեխնիկական ճշգրտության աստիճանը,
- նյութական ռեսուրսների և ներդրումների ապահովման կայունությունը,
- արտադրության կազմակերպման նոր և ժամանակակից ձևերի, կոոպերացիաների առանձնահատկությունն ու համատեղ արտադրությունները,
- արտադրության տեխնիկական վերակառուցումն ու վերազինման սահմանային ծախսերը և եկամուտները:

Նշված երկու խումբ բաղադրիչների փոխհամաձայնեցված կառավարման միջոցով կարող ենք միմյանց հետ չափակցել հավասարակշռման անհրաժեշտ համամասնությունները, մշակել դրա մի մակարդակից մյուսին անցնելու նորմերը, որոնք անհրաժեշտ են նաև նախատեսված համամասնությունների հիմնավորման և տնտեսական հետևանքների կայունացման համար:

Այդ նորմերը պետք է լինեն ըստ արդյունաբերական ներուժի հնարավոր կառուցվածքի օգտագործման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, աշխատողների որակավորման բարձրացման և մասնագիտական կառուցվածքի կատարելագործման: Դրա համար անհրաժեշտ են նաև տվյալ հավասարակշռման ռեսուրսապահովման գիտականորեն հիմնավորված նորմատիվներ, որոնք թույլ կտան տնտեսական շրջապտույտից ազատել ավելորդ արտադրառեսուրսները:

Այդպիսի նորմերի հաստատումը վերաբերում է արտադրության և աշխատանքի տեխնիկական հագեցվածության, սարքավորումների ու արտադրանքի տեխնիկական մակարդակի, սարքավորումների տարբեր միավորների և հոսքային գծերի արտադրողականության ու արտադրության տեխնոլոգիական վերափոխումների գնահատմանը: Հավասարակշռման նորմատիվային բազայի ստեղծման ժամանակ պետք է նկատի ունենալ բացահայտ փոխկապակցությունը՝ սարքավորումների, տեխնիկական մակարդակի և արտադրանքի միջև: Արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի բաղադրամասերի մակարդակը համալիր և նորմավորված փոփոխելու դեպքում էապես բարձրանում է ներուժի օգտագործման արդյունավետությունը, արտադրության մրցունակությունը, զգալիորեն կրճատվում է արտադրամիջոցների պահանջարկը՝ արտադրանքի ծավալի պահանջվող աճին հասնելու համար: Մինչդեռ, առանձին բաղադրամասերի աճը ոչ միշտ և ոչ բոլոր պայմաններում կարող է բերել արտադրանքի թողարկման աճի տեմպերի արագացմանը:

Այդ կապակցությամբ հավասարակշռման որոշ մեթոդներ պետք է կառուցվեն այնպես, որպեսզի հաշվի առնվի.

- արտադրության կոնկրետ պայմաններում նրա մակարդակի ձևավորման և պլանավորման առանձնահատկությունները,
- հավասարակշռման ազդեցությունն արտադրանքի աճի բարձրացման վրա՝ նկատի ունենալով ապրանքի տեխնիկատնտեսական պարամետրերը և սպառողական հատկությունները,
- տեխնիկայի վերարտադրության հնարավորությունը, որը հանդիսանում է նոր արտադրանքի ստեղծման հիմնական նախադրյալը
- նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, արտադրական միջոցների նոր կառուցվածքի ստեղծումը և դրանց տեխնիկատնտեսական բնութագրերի բարելավումը:

Որպես հիմնական տնտեսական գործընթացների համալիր հասկացություն ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշիռն արտահայտում է ոլորտի կազմակերպատնտեսական և շուկայական զարգացման տարբեր միտումները: Որքանով որ այդ հայեցակարգերը դրսևորվում են տարբեր տեխնիկատնտեսական և շուկայական ցուցանիշներով, որոնք օգտագործվում են ԱԿՀ-ի և ԱՇ-ի հավասարակշռման ու գնահատման համակարգի մեջ, այնքանով էլ նման հավասարակշիռը

որպես համալիր տնտեսական կատեգորիա ենթադրում է հետևյալ գործընթացները՝ բազմաճյուղային արտադրության գործունեության գնահատման, հումքի և նյութերի մշակման ցիկլերի տևողության որոշման, արտադրական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման, արտադրության վերամասնագիտացման, արտադրության տեխնիկատնտեսական ցուցանիշների գնահատման, անհրաժեշտ արտադրական ռեսուրսների ծավալի որոշման, արտադրանքի իրացման և մրցունակության գնահատման: Սա նշանակում է, որ ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռումը կարելի է դիտարկել որպես այդ գործընթացների ընդհանրացում: Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշալները, հարկ ենք համարում նշել, որ ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռման գնահատման մեթոդական ու մեթոդոլոգիական սկզբունքները հանդիսանում են երկու ելակետային՝ «տեխնիկատնտեսական մակարդակ և արտադրական ապարատի կառուցվածք» և «արտադրության մրցունակություն» հասկացությունների բնորոշման հիմքերը: Առաջին հասկացությունը վերաբերում է ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռման ավելի լայն իմաստին և տարածվում է արտադրության տեխնիկայի ու տեխնոլոգիայի վրա, իսկ երկրորդն իրենից՝ ներկայացնում է ընդհանրացված հասկացություն և տարածվում է արտադրության կառուցվածքի ու արտադրվող արտադրանքի շուկայական իրացման վրա:

ԱԿՀ-ի և ԱԾ-ի մակարդակի որոշման ժամանակ պետք է ելնել նաև արտադրության կոնկրետ պայմաններից, շուկայի կազմակերպման միջոցներից և տնտեսական ներուժի մրցակցության հնարավորությունից:

Հավասարակշռման գնահատման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև ելակետային տեղեկատվության տվյալները՝ ոլորտի արտադրական ծրագիրը, հիմնական արտադրատեսակների թողարկման ծավալը, արտադրական ցիկլի տևողությունը և արտադրական հզորությունների օգտագործման աստիճանը, ինչպես նաև արտադրանքի ռեսուրսատարությունը: Ընդ որում, ծավալային ցուցանիշները պետք է որոշվեն ըստ արտադրության կոնկրետ պայմանների և արտադրանքի իրացման ուղղության: Այստեղից պետք է ենթադրել, որ ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռման բաղադրիչների ու նրանց ներքին կապերի ուսումնասիրման անհրաժեշտություն է առաջանում ըստ որի հնարավորություն է ընձեռվում՝ պարզաբանելու և ճանաչելու այն տեխնիկատնտեսական ու շուկայական հարաբերությունները, որոնք կարևոր են նրանց ձևավորման և հավասարակշռման ժամանակ:

Դրա հետ կապված, բնականաբար, առաջանում են նաև տեսական և գործնական բնույթի հիմնախնդիրներ, որոնք ամբողջությամբ վերաբերում են ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռման քանակական ու որակական բնութագրերին, դրա առանձին բաղադրիչների միջև փոխադարձ կապերի բնույթի պարզաբանմանը, որը պետք է դիտարկել որպես այդ կատեգորիայի հետազոտման հիմնական խնդիրներից մեկը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ԱԿՀ-ի և ԱԾ-ի միջև հավասարակշռման ձևավորման ճշգրտումը առավելապես անհրաժեշտ է դառնում մրցակցության բարձր մակարդակի պայմաններում և արդյունաբերության կառավարման համալիր մոտեցումների գնահատման դեպքում: ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռման համակարգում նշված հասկացությունների օգտագործումը հանդիսանում է հավասարակշռման տեսական և գործնական կարևորագույն հիմնախնդիրը: Դա ենթադրում է ոչ թե արդյունաբերության արտադրանքի ծավալի և դրա շուկայական պահանջարկի բացարձակ հավասարեցում, այլ հանրապետության պահանջմունքների, ներմուծման և արտահանման ապահովում[1]: Միաժամանակ վերջնական արդյունքում, հիմնախնդիրների համալիր և ծրագրային լուծումը կնպաստի ինչպես արդյունաբերության կառուցվածքային քաղաքականության իրականացմանը,

[1] Ա.Ե. Զաքարյան, ՀՀ արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի հավասարակշռման հիմնախնդիրները, Երևան, 1996, էջ 23:

այնպես էլ նրա շուկայական տնտեսության փոխադարձ կապի կայունացմանը, դրանց միջև առաջացած էական անհամամասնությունների վերացմանը: Վերջինս ենթադրում է հավասարակշռման մի մակարդակից մյուսին անցնելու նյութական նախադրյալների ստեղծումը, որը կապված է՝ արդյունաբերության ոլորտային կառուցվածքային փոփոխությունների, նոր ինֆրակառուցվածքի, արտադրանքի անվանացանկի ընտրության, արտադրանքի տեխնիկական մակարդակի և մրցունակության բարձրացման հետ: Այս համատեքստում ազգային շուկայի ձևավորման համար շատ կարևոր է տնտեսական բազմակողմ կապերի ստեղծումը, որը կարող է կրել ռեսուրսային կամ էլ վերջնական օգտագործման արտադրանքի արտահանման և ներմուծման բնույթ: Հետևաբար, կարող ենք ընդգծել, որ ցանկացած երկրի համար ներմուծումն ու արտահանումը, որպես հավասարակշռման պարամետրեր կարող են ազգային շուկայի ձևավորման անհրաժեշտություն առաջացնել:

Տնտեսական կապերի միջոցով շուկայի ձևավորումն ունի որոշակի քանակական և որակական բնութագրիչներ, որոնք միաժամանակ հիմք են հանդիսանում նշված հավասարակշռման նոր մակարդակի ստեղծման համար: Ի դեպ, արտահանման և ներմուծման ծավալների ու կառուցվածքի փոփոխության միջոցով հավասարակշռումը ձևավորվում է ոչ թե որպես անփոփոխ մեծություն, այլ հարաբերական մակարդակ:

Այսպիսի պայմաններում, եթե հավասարակշռման վրա արտահանման ազդեցությունը արտահայտվում է արտադրանքի մրցունակության միջոցով, ապա ներմուծման ազդեցությունը տեղի է ունենում երկու ձևով՝ մի դեպքում ներմուծվում են սպառման առարկաներ, որոնք համալրում են պահանջարկը և ապահովում հավասարակշռման որոշակի մակարդակ, իսկ մյուս դեպքում կարող են ներմուծվել ինվեստիցիաներ, որոնք նպաստում են արդյունաբերության զարգացմանն ու տնտեսական աճին, դրանով իսկ ապահովելով հավասարակշռման բարձր մակարդակ: Ինչպես տեսնում ենք, հավասարակշռման հիմնախնդրի գնահատման ժամանակ միահյուսվում են բազմաթիվ գործընթացներ, որոնք դուրս գալով այս կամ այն ոլորտի շրջանակներից տարածվում են ամբողջ տնտեսության զարգացման վրա: Քննարկված հավասարակշռության ճշգրտությունը պետք է որոշել ելնելով արտադրական հզորությունների օգտագործման աստիճանից, ինչպես նաև ոլորտի միասնական կառուցվածքային և շուկայական քաղաքականության առանձնահատկություններից: Այս մոտեցումների էության զուգակցումը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Գործնական, որին հնարավոր է ԱԿՀ-ն և ԱԾ-ն հաշվեկշռել, հաշվի առնելով տվյալ արտադրանքի արտադրության, շուկաներում իրացման հնարավորությունները, արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները, նոր սարքավորումների և ավտոմատացված հավաքագծերի ներդրման հնարավորությունները:
2. Ոլորտի տեխնիկական անհրաժեշտ մակարդակի մրցակցության ապահովման տնտեսական հնարավորությունները:

Այսպիսով, ընդհանրական առումով նշենք, որ որպես հավասարակշռման չափանիշ նպատակահարմար է ընդունել արտադրանքի արտադրության ծավալը և դրա լրիվ իրացումը: Բացի այդ, կապված ոլորտի արտադրանքի պահանջմունքից և նյութական ռեսուրսների սահմանափակման չափերից, որպես կարևոր չափանիշ կարելի է ընդունել նաև նյութերի ու ապրանքների ներմուծումը: Հետևաբար, ԱԿՀ-ի և ԱԾ-ի հավասարակշռումը հիմնականում կապված է արտադրանքի իրացման ապահովման հետ, իսկ դրա համար անհրաժեշտ է կատարել նաև հավասարակշռման օբյեկտների ընտրություն, կառավարման մեթոդների մշակում և դրանց մակրոմակարդակով կիրառում:

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏ ԵՂԻՇԵԻ ԶԱՔԱՐՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի վարիչ
ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի ասիստենտ

Համառոտագիր

Ֆինանսատնտեսական ճգնաժամերի ու տնտեսական համակարգերի փոփոխությունների ընթացքում շատ հաճախ է խոսվում տնտեսական քաղաքականությունների վերանայման մասին, և դա շատ բնական է: Սակայն ցանկացած երկիր պարտավոր է վերանայել իր տնտեսական քաղաքականությունը նաև նման իրավիճակների բացակայության պայմաններում, որպեսզի կարողանա իր արտադրությամբ ու ծառայություններով առավելագույնս բավարարել ազգային շուկայի կարիքները: Դա հնարավոր է միայն արդյունաբերության կառուցվածքային համակարգի և ազգային շուկայի պահանջմունքների հավասարակշռման միջոցով: Ներկայացված հոդվածում այս խնդիրները քննարկվել են ռեսուրսների ռացիոնալ օգտագործման տեսանկյունից և ներկայացվել են դրան ուղղված միջոցառումները:

Բանալի բառեր. *արդյունաբերության կառուցվածքային համակարգ, ազգային շուկա, շուկայի հավասարակշռություն, ռեսուրսների օգտագործում, մրցունակություն, մրցակցություն, համալիր կառավարում:*

ПРОБЛЕМЫ РАВНОВЕСИЯ СТРУКТУРЫ ПРОМЫШЛЕННОЙ СИСТЕМЫ И НАЦИОНАЛЬНОГО РЫНКА РА

АРАРАТ ЕГИШЕВИЧ ЗАКАРЯН, *д.э.н., профессор*
заведующий кафедрой маркетинга Армянского государственного экономического университета
КАРАПЕТ ОГАНЕСОВИЧ АРАКЕЛЯН, *к.э.н.,*
ассистент кафедры маркетинга Армянского государственного экономического университета

Аннотация

Во время экономических кризисов и изменений экономических систем часто упоминается о пересмотре экономической политики, что естественно. Но каждая страна обязана пересматривать свою экономическую политику и в отсутствии таких ситуаций, чтобы быть в состоянии максимально удовлетворить нужды национального рынка в процессе собственного производства и оказания услуг. Это возможно только с помощью установления равновесия между структурой промышленной системы и потребностями национального рынка. В представленной статье данные проблемы обсуждаются с точки зрения рационального использования ресурсов и представлены мероприятия в этом направлении.

Ключевые слова: *структура промышленной системы, национальный рынок, равновесие рынка, использование ресурсов, конкурентоспособность, конкуренция, комплексное управление.*

ISSUES ON THE INDUSTRIAL STRUCTURAL SYSTEM TO MEET THE NEEDS OF THE DOMESTIC MARKET IN THE REPUBLIC OF ARMENIA

ARARAT YEGHISHE ZAKARYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Head of Chair of Marketing, Armenian State University of Economics
KARAPET HOVHANNES ARAKELYAN, *Candidate of Sciences (Economics)*
Assistant Professor, Chair of Marketing, Armenian State University of Economics

Abstract

During financial and economic crises and shifts in economic systems, the need for revising the economic policy is often spoken about, and it is quite natural. However, any nation has to revise its economic policy, even when the economy is not reporting such developments in order to meet the needs of the domestic market the most, by providing domestically produced goods and rendering services. It could be possible only when theindustrial structural system meets the needs of the domestic market. The article discusses the stated issues from the aspect of rational utilization of resources and proposes measures to address these issues.

Keywords: *Industrial structural system, domestic market, market equilibrium, use of resources, competitiveness, competition, complex management.*

ՆՎԱՐԴ ԿԱՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Վերջին տարիներին շատ է խոսվում միասնական հարկային օրենսգրքի ընդունման անհրաժեշտության մասին, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով ու խնդիրներով: Նախ, հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսդրության գերակշիռ մասը կազմող հիմնական օրենքներն ընդունվել են շուրջ 18 տարիների ընթացքում: Հարկային օրենսդրությունը մշտապես ենթարկվել է փոփոխությունների, որոնց միջոցով փորձ է արվել լուծել հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման և պետական բյուջեի հարկային եկամուտների ապահովման խնդիրները:

Հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները հանգեցրել են հիմնական հարկատեսակների մասին գործող օրենքների ուռճացման, բարդացման, երկիմաստությունների ու տարընթերցումների առաջացման: Դրա մասին է վկայում ՀՀ հարկային մարմինների կողմից հրապարակված բավականին մեծ թվով պաշտոնական մեկնաբանությունների առկայությունը, որոնք, որպես այդպիսին, հստակ օրենսդրության պարագայում պետք է բացառվեին: Բացի այդ, էապես դժվարացել է հարկային օրենսդրությունից օգտվելը, քանի որ ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ նույն հասկացությունները տարբեր իրավական ակտերում կիրառվում են տարբեր եզրույթներով:

Հարկ է արձանագրել, որ անգամ նշված փոփոխությունների արդյունքում լիովին հնարավոր չի եղել լուծել համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումներով ու մարտահրավերներով պայմանավորված խնդիրները: Հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունների պատճառով հնարավոր չի եղել ձևավորել միասնականության սկզբունքի վրա հիմնված հարկային քաղաքականություն: Արդյունքում էապես տուժել է ներդրումային և գործարար միջավայրը: Այս ամենը հանգեցրել է նրան, որ էապես տուժել է երկրի ներքին ռեսուրսների համախմբման միջոցով պետական բյուջեի լրացուցիչ հարկային եկամուտների ապահովման հնարավորությունը, ինչը պետք է իրականացվեր երկարաժամկետ զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ճանապարհով:

Հետևաբար, վերոհիշյալ խնդիրների լուծման առումով վստահորեն կարելի է պնդել, որ հասունացել է մեկ միասնական հարկային օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը, որը հնարավորություն պետք է ընձեռի կենտրոնանալ երկարաժամկետ հեռանկարի վրա և խուսափել օրենսդրական հաճախակի փոփոխություններից: Հարկային նոր օրենսգիրքը պետք է լինի առավել համակարգված ու հստակեցված, հնարավորություն տա խուսափել հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության տարընթերցումներից ու երկիմաստ մեկնաբանություններից: Դրանում պետք է կանոնակարգվեն և կարգավորվեն բոլոր հարկատեսակների գծով հարկ վճարողների հարկային հաշվառման, հարկերի հաշվարկման ու վճարման, հարկ վճարողների սպասարկման ու նրանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացման, հարկային պարտավորությունների ու գերավճարների հաշվառման, ինչպես նաև հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառության, բոլոր հարկատեսակների վերաբերյալ հարցերով վարչական վարույթի իրականացման, հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների կիրառության ու հարկային ծառայողների գործողությունների և անգործության բողոքարկման հետ կապված հարաբերությունները:

2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ Կառավարությունը հավանության արժանացրեց հարկային օրենսգրքի քննարկումների համար նախատեսված տարբերակը: Ըստ նախագծի հեղինակների՝ հարկային օրենսգրքի մշակման հիմքում դրվել են միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև գնահատվել են առաջարկվող փոփոխությունների ազդեցությունը գործարար միջավայրի, մրցակցային միջավայրի գնաճային հնարավոր ճնշումների, պետական բյուջեի հարկային եկամուտների մեծության, ինչպես նաև հարկային վարչարարության վրա:

Հարկային օրենսգիրքը կազմված է 4 բաղկացուցիչ բաժիններից՝

- ընդհանուր, որտեղ ներկայացվում են ընդհանուր նշանակության հարկային հարաբերությունների կարգավորման հիմնահարցերը,
- հատուկ, որի շրջանակներում կարգավորվում են առանձին հարկատեսակներին վերաբերող հարաբերությունները,
- հարկային վարչարարության բաժին, որի շրջանակներում կարգավորվում են հարկային վարչարարության մեջ ընդգրկված բոլոր հարաբերությունները,
- եզրափակիչ և անցումային մաս, որի շրջանակներում կարգավորվում են օրենսգիրքն ուժի մեջ մտցնելու հետ կապված անցումային հարկային հարաբերությունները:

Հարկային օրենսգրքով պետք է վերանայվեն ու փոփոխությունների ենթարկվեն հարկային քաղաքականության հիմնարար ու սկզբունքային տարրերը՝ հարկման դրույքաչափերը, հարկային արտոնությունները, հարկի հաշվարկման ու վճարման կարգին վերաբերող մի շարք մոտեցումներ, ինչի արդյունքում հնարավոր կլինի հարկման տարբեր համակարգերում գործող տնտեսվարող սուբյեկտների համար սահմանել հավասարակշռված ու առավել արդարացի հարկային բեռ: Բացի այդ, ենթադրվում է, որ աստիճանաբար հնարավոր կլինի մշակել Եվրասիական Տնտեսական Միությունում գործող հարկային քաղաքականության հետ ներդաշնակ հարկային համակարգ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ հարկային օրենսդրությունում առկա հիմնախնդիրների, հաշվապահական հաշվառման վարման և բիզնեսի կազմակերպման տեսանկյունից կարևոր ենք համարում հարկային օրենսգրքում լուծում տալ այնպիսի հարցադրումների, ինչպիսիք են.

- հարկային արտոնությունների կարգավորման և հստակեցման հարցեր,
- հարկերի հաշվարկման ու վճարման կարգի բարեփոխումներ,
- առանձին հարկատեսակների դրույքաչափերի հստակեցում և նվազեցում և այլն:

Հարկային օրենսգրքի առանցքային հարցերից մեկը հարկային արտոնությունների շրջանակի վերանայումն է, այսինքն, կկրճատվեն այն արտոնությունները, որոնց կիրառությունը չի հիմնավորվում ծախսեր-օգուտներ վերլուծության արդյունքներով: Ենթադրվում է, որ տրամադրվող արտոնությունները կկրեն ավելի շատ նպատակային ուղղվածություն և կունենան հստակ ժամկետային սահմանափակումներ: Հատկանշական է նաև հարկային արտոնություններից օգտվելու կամավորության սկզբունքի կիրառումը, քանի որ շատ անգամ նմանատիպ արտոնություններից օգտվողների համար այն հակառակ ազդեցություն է ունենում:

Հարկերի հաշվարկման ու վճարման կարգի բարեփոխումները հիմնականում պայմանավորված են լինելու դրանց պարզեցմամբ ու ազատականացմամբ, ինչը հիմնականում կկիրառվի ԱԱՀ–ի և ակցիզային հարկի գծով հաշվանցումների կատարման ու դեբետային մնացորդների օգտագործման ազատ իրավունքի տրամադրմամբ: Հիմնական փոփոխություններից է նաև շահութահարկի գծով կանխավճարների հաշվարկման համակարգի ազատականացումը, ինչպես նաև շահութահարկով հարկվող բազայի որոշման նպատակով մի շարք նորմավորվող ծախսերի համար նախատեսված նորմաների վերացումը: Կկրճատվեն հարկերի հաշվարկման ու վճարման, հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը: Այս ամենի արդյունքում հաշվապահական հաշվառումը կհամապատասխանեցվի հարկային հաշվառմանը:

Նոր հարկային օրենսգրքով առանձին հարկատեսակների գծով նախատեսվող բարեփոխումներն ավելի շատ միտված կլինեն դեպի երկարաժամկետ հեռանկար: Օրինակ, ոչ ռեզիդենտներ կազմակերպությունների ստացած շահաբաժինները շահութահարկով հարկումից ազատումը թեև կարճաժամկետում կհանգեցնի պետական բյուջեի հարկային եկամուտների որոշակի կորստի, սակայն երկարաժամկետ հեռանկարում կապահովի տնտեսության ակտիվացում, ինչն էլ կհանգեցնի երկարաժամկետ ներդրումների ներգրավման հնարավորությունների ընդլայնման: Ուշագրավ է նաև եկամտային հարկում առաջարկվող փոփոխությունը, որը հատկապես վերաբերում է եկամտային հարկի միասնական 20 % դրույքաչափի կիրառմանը: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ զարգացող երկրների համեմատությամբ Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձից հաշվարկվող հարկային բեռը համեմատաբար բարձր է:

Անձնական եկամտի հարկման դրույքաչափերը տարբեր երկրներում, 2015թ. դրությամբ[1]

	Երկրներ	Եկամտային հարկի դրույքաչափ (ներառյալ սոցիալական վճարները)
1	Հայաստան	36
2	Ավստրիա	50
3	Բելառուս	13
4	Բելգիա	50
5	Բուլղարիա	10
6	Էստոնիա	20
7	Ֆրանսիա	45
8	Վրաստան	20
9	Գերմանիա	45
10	ՄիացյալՆահանգներ	39.6
11	ՄիացյալԹագավորություն	45
12	Ղազախստան	10
13	Լատվիա	23
14	Լիտվա	15
15	Մոլդովա	18
16	Հոլանդիա	52
17	Ռումինիա	16
18	Ռուսաստան	13
19	Իսպանիա	47
20	Թուրքիա	35
21	Ուկրաինա	20
22	Միացյալ Թագավորություն	45

Եկատմային հարկի դրույքաչափի իջեցումը հատկապես կարևոր է սպառման ընդլայնման, աղքատության մակարդակի կրճատման ու աշխատավարձերի իրական մեծությունների հայտարարագրման տեսանկյունից: Սակայն, առաջարկվող միասնական դրույքաչափի կիրառումը հնարավոր կլինի ապահովել միայն նոր հարկային օրենսգրքով առաջարկվող անուղղակի հարկերի գծով առաջարկվող փոփոխությունների հետ զուգընթաց (օր՝ ԱԱՀ–ից ազատման արտոնությունների շրջանակի նեղացում, ԱԱՀ դրույքաչափի անփոփոխություն): Ընդհանրապես, նոր հարկային օրենսգրքով նախատեսվում է բոլոր հարկատեսակների գծով արտոնություններն առավել հասցեական դարձնել և դրանք հիմնականում կիրառել սոցիալապես անապահով խմբերի համար: Այսինքն, հարկային արտոնություններն առաջարկվում է փոխարինել կարիքավոր խմբերին սուբսիդիաների տրամադրմամբ: Մասնավորապես, առողջապահական ծառայություններն ԱԱՀ-ով հարկելու պարագայում կարող է ընդլայնվել պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնություն ստացող անձանց շրջանակը, պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական ծառայությունների շրջանակը: Կրթական ծառայություններն ԱԱՀ-ով հարկելու դեպքում հնարավոր կլինի ընդլայնել պետական պատվերի շրջանակներում սովորող ուսանողներին տրամադրվող տեղերի քանակը:

Ի հակադրություն եկամտային հարկի դրույքաչափի նվազման նախատեսվում է բարձրացնել ակցիզային հարկի դրույքաչափերը և ընդլայնել ակցիզով հարկման ենթակա ապրանքների շրջանակը (օր՝ սուրճը, օծանելիքը, սեղմված բնական գազը): Վերոհիշյալ հանգամանքը հիմնավորվում է այն փաստով, որ մեր երկրում կիրառվող ակցիզային հարկի դրույքաչափերը մի քանի անգամ ցածր են ինչպես եվրոպական երկրներում, այնպես էլ Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրներում կիրառվող համապատասխան դրույքաչափերի համեմատությամբ: Բացի այդ, այս կերպ հնարավորություն կընձեռվի լրացնել եկամտային հարկի դրույքաչափի նվազմամբ պայմանավորված պետական բյուջե հավաքագրվող հարկային եկամուտների պակասը:

Նոր հարկային օրենսգրքով նախատեսվում է նաև բարձրացնել բնապահպանական ու ճանապարհային վճարների դրույքաչափերը, նեղացնել հարկման այլընտրանքային համակարգերի

[1] https://home.kpmg.com/xx/en/home/services/tax/tax-tools-and-resources/tax-rates-online/individual-income-tax-rates-table.html

կիրառության շրջանակը (օր՝ վերացնել հաստատագրված վճարների համակարգը կամ էլ սահմանափակել շրջանառության հարկի կիրառության շրջանակը): Այստեղ հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ շրջանառության հարկի շեմը, որը նոր հարկային օրենսգրքով սահմանվում է 40 մլն դրամի չափով, պետք է կիրառվի բացառապես առևտրային կազմակերպությունների համար:

Հարկային օրենսգրքի ընդունման թերևս ամենակարևոր առավելություններից կարելի է համարել այն փաստը, որ փորձ է արվելու հնարավորինս բացառել հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները, ինչը հիմնականում խոչընդոտում է կայուն և կանխատեսելի ներդրումային ու գործարար միջավայրի ապահովմանը: Թերևս հենց օտարերկրյա ներդրողների մոտ կմեծանա ներդրումային ու հարկային միջավայրի նկատմամբ վստահությունը, քանի որ նրանք ստիպված չեն անընդհատ հարմարվելու նոր փոփոխություններին:

Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի շատ կարևոր հանգամանքի, այն է, որ հարկային օրենսգրքով նախատեսված մի շարք փոփոխություններ կարող են հակառակ ազդեցություն ունենալ, քանի դեռ չեն ապահովվել դրանց իրագործման անհրաժեշտ բոլոր պայմանները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ԱԱՀ-ի շեմի 115,0 մլն-ից 40,0 մլն նվազեցումը: Սա թերևս օրենսգրքի առանցքային կետերից մեկն է, որը կարող է դժգոհությունների առարկա հանդիսանալ հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների շրջանակում: Խնդիրն իրենից այնքան էլ մեծ վտանգ չի ներկայացնի, եթե երկրի տնտեսությունում ապրանքների ու ծառայությունների փաստաթղթավորման հետ խնդիրներ չլինեն: Այս պարագայում տնտեսվարողը գնորդ-մատակարար շղթայում չի կորցնում իրեն հասանելիք ԱԱՀ-ի հաշվանցման իրավունքը, եթե այդ շղթայում բոլորը գնում կամ մատակարարում են փաստաթղթավորված ապրանքներ: Գործընթացի մյուս խնդրահարույց կետերից է նաև նախագծով նախատեսված այն դրույթը, որով ԱԱՀ-ի հաշվանցման կամ պակասեցման համար միայն հիմք է հանդիսանում հարկային հաշիվը կամ մաքսային բեռնագիրը, այսինքն ՀԴՄ կտրոնով առանձնացված ԱԱՀ-ն այլևս հիմք չի ընդունվելու: Հարկ է նշել, որ շահութահարկի համար ծախս համարվող փաստաթղթերի ցանկից ՀԴՄ կտրոնը ևս հանվել է: Այսինքն հարկային օրենսգրքով սահմանվել են հաշվարկային փաստաթղթի նոր մոտեցումներ, որոնք ծախսի և եկամտի համար տարբեր են:

Մյուս խնդիրներից է նաև այն, որ օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո գրեթե բոլոր ապրանքները կդրոշմապիտակավորվեն:Այս կերպ տնտեսվարողի վրա դրվում են մի շարք լրացուցիչ գործառույթներ, այն է՝ դրոշմապիտակների ձեռքբերումը, դրանք փակցնումը, դրոշմապիտակների համար վճարված գումարների հաշվանցումն այլ հարկային պարտավորությունների հաշվին, ինչը շատ անգամ բավականին երկար ժամանակ է տևում: Ստացվում է, որ մաքսային մարմինները չեն կարողանում արդյունավետորեն վերահսկել ներմուծված ապրանքների փաստացի քանակությունը, և պարտադրված մտցվում է դրոշմապիտակավորման պահանջը: Այլ բան է, եթե դրոշմապիտակավորվեին երկրի ներսում արտադրված ապրանքները, ինչի ծավալների ու քանակի նկատմամբ վերահսկողությունն ավելի բարդ է:

Օրենսգրքի մեկ այլ կետով նախատեսված է դրույթ, որով ՀՀ-ում որոշակի ապրանքների նկատմամբ կիրառվող ակցիզների դրույքաչափերը պետք է համապատասխանեն ԵՏՄ-ի հետ դրույքաչափերին: Այստեղ թերևս ամենաանընդունելի կետերից է գազի ու դիզելային վառելիքի հարկման դրույքաչափերին վերաբերող փոփոխությունները և վերջիններիս բարձրացումը, քանի որ ԵՏՄ տարածքում չկա մեկ այլ երկիր, որտեղ տրանսպորտային միջոցների զգալի մասը գազ է օգտագործում: Օրենսգրքի այս կետն ուժի մեջ մտնելուց հետո հնարավոր չի լինի խուսափել տրանսպորտային ուղևորափոխադրումների սակագների բարձրացումից: Այն իր ազդեցությունը կթողնի նաև մատակարարվող ապրանքների ու ծառայությունների գների վրա: Վերոհիշյալ խնդրի հետևանքների մեղմացման համար կարելի է դիտարկել պետության կողմից գազի ծավալների սպառման որոշակի սահմանաչափի համար տրամադրվող սուբսիդավորման հարցը:

Ինչևիցե, հարկային օրենսգրքով սահմանված բարեփոխումները նախատեսվում է իրականացնել 3-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ հասարակության տարբեր խմբերը հնարավորություն կունենան աստիճանաբար ընտելանալ այդ փոփոխություններին, յուրացնել դրանք, ինչն էլ էական ցնցումներ չի առաջացնի ազգային տնտեսությունում: Վերջին հաշվով, վերոհիշյալ բարեփոխումներն ուղղված են երկարաժամկետ կայունության ապահովմանը, օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմանը, գործարար միջավայրի բարելավմանը և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆՎԱՐԴ ԿԱՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

ՀՀ-ում շրջանառության մեջ է դրվել հարկային միասնական օրենսգրքի նախագիծ, որը նպատակ ունի պարզեցնել հարկային օրենսդրության համակարգը, նվազեցնել դրա մաս կազմող իրավական ակտերի թիվը և ապահովել նպատակային հարկային քաղաքականություն: Հետագա լրացումներից և փոփոխություններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են եկամտային հարկի դրույքաչափի և ԱԱՀ շեմի նվազեցումը, ներմուծվող ապրանքների պարտադիր դրոշմապիտակավորումը, ծախս հիմնավորող փաստաթղթերին ներկայացվող պահանջների փոփոխությունը, ԵՏՄ օրենսդրությանը համապատասխանությունը և այլն:

Բանալի բառեր. *հարկային օրենսգիրք, վարչարարություն, բարեփոխումներ, դրույքաչափ, ԵՏՄ, գործարար միջավայր, ԱԱՀ շեմ, ապրանքների դրոշմապիտակավորում, հարկման ռեժիմ:*

НЕОБХОДИМОСТЬ ЕДИНОГО НАЛОГОВОГО КОДЕКСА И ПРОБЛЕМЫ В КОНТЕКСТЕ НАЛОГОВЫХ РЕФОРМ

НВАРД КАРЕНОВНА ХАЧАТРЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В Армении в обращение введен проект единого налогового кодекса, направленный на упрощение системы налогового законодательства, уменьшение числа составляющих ее правовых актов и обеспечение целевой налоговой политики. Во избежание дальнейших дополнений и изменений необходимо обратить особое внимание на такие вопросы, как снижение ставки подоходного налога и порога НДС, обязательная маркировка ввозимых товаров, изменение предъявляемых требований к документам, обосновывающим расходы, соблюдение законодательства ЕАЭС и так далее.

Ключевые слова: *налоговый кодекс, администрирование, реформы, ставка, ЕЭС, бизнес-среда, порог НДС, маркировка товаров, режим налогообложения.*

THE NECESSITY AND ISSUES OF THE NEW UNIFIED TAX CODE IN THE CONTEXT OF TAX REFORMS

NVARD KAREN KHACHATRYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M.Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences Republic of Armenia

Abstract

The new draft unified tax code has been introduced in the Republic of Armenia, which is aimed at simplifying the system of tax legislation, reducing the quantity of its legislative acts, and to ensuring a targeted tax policy. In order to avoid further changes and additions it is required to pay a special attention to the issues such as reduction of the rate of the income tax and VAT threshold, compulsory stamping of imported goods, changes in requirements with respect to expenditure documents, compliance to the EAEU legislation, and etc.

Keywords: *Tax code, administration, reforms, rate, Eurasian Economic Union, business environment, VAT threshold, product stamping, tax regime.*

ՆԱՐԵԿ ՄԻՅԱՍՆԻԿԻ ԿԵՍՈՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՌԱՋԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ

Տնտեսական աճի կարևորագույն բաղադրիչներից, անշուշտ, տնտեսության իրական հատվածի կառուցվածքն է: Հատկապես այժմյան պայմաններում իր ուրույն տեղն ունի Հայաստանի տնտեսական աճի ապահովման գործընթացում գյուղատնտեսության ոլորտը, որտեղ աշխատունակ բնակչության զբաղվածության մեծ տեսակարար կշիռը, արդյո՞ք վկայությունը չէ 21-րդ դարին համահունչ տնտեսության իրական հատվածի բավարար չափով կառուցվածք ունենալու մասին: Իր պարզ բնույթով գյուղատնտեսությունն, անկասկած, ինքնաբավ ապրելու անհրաժեշտ միջոց է, սակայն հարցն այստեղ կայանում է նրանում, թե արդյոք մարդիկ զբաղվում են գյուղատնտեսությամբ այն պատճառով, որ այն ավելի արդյունավետ և եկամտաբեր է այլ ճյուղերի համեմատությամբ, թե, պարզապես, այլ ոլորտներում աշխատելու ներուժն է բացակայում:

Հարկ է նշել, որ Հայաստանի տնտեսությունը բազմապիսի վերափոխումների է ենթարկվել ՀՆԱ-ի ձևավորմամբ, վերջին 20 տարիների (1994-2014թթ.) ընթացքում՝ կապված արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների մատուցման ոլորտների հետ (տե՛ս գծապատկեր 1-ը):

Գծապատկեր 1

Տնտեսության առանձին հատվածների տեսակարար կշիռները ՀՆԱ-ում ըստ տարիների (ըստ ավելացված արժեքի), 1994-2014թթ., %



Աղբյուրը՝ *Համաշխարհային բանկի տվյալներ 2014 http://databank.worldbank.org /data/reports.aspx?source=world-development-indicators*

Ինչպես նկատելի է գծապատկեր 1-ից տնտեսության առանձին հատվածների զարգացման հետագծերը համահունչ են առաջավոր երկրների տնտեսությունների զարգացման էվոլյուցիային. այն է, տնտեսության առաջնային հատվածը՝ գյուղատնտեսությունը, որի մեջ ներառված է ինչպես բուն գյուղատնտեսությունը, մասնավորապես՝ անասնաբուծությունը, այնպես էլ ան-

տառային տնտեսությունը, ձկնորսությունը[1], որոնք անցումային ողջ ժամանակահատվածում դրսևորել են նվազման միտում: 1994-ին գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 44.8 տոկոս, իսկ արդեն 2014-ին 20.8%, նվազելով շուրջ 53%-ով: Երկրորդային հատվածի՝ արդյունաբերության, որտեղ ներառված են հանքահումքային արդյունաբերությունը, արտադրությունն ու վերամշակումը, ջրամատակարարումը, գազի մատակարարումը և այլն, ինչպես նաև շինարարությունը, զարգացման հետագիծն ունի յուրահատուկ տատանողական տեսք: Այստեղ ունենք հետևյալ պատկերը. 2005թ. արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում հասնում է ողջ հետագծի երկայնքով իր առավելագույնին՝ կազմելով 45.3%, որը շուրջ 23%-ով բարձր 1994թ. ցուցանիշից՝ 37%, սակայն 2014թ.-ին ունենք արդեն 28.6% մասնաբաժին, այսինքն՝ առկա է շուրջ 23%-ով անկում: Եվ, վերջապես, երրորդային հատվածը, կամ այլ կերպ, ծառայությունների մատուցման ոլորտը, որն իր մեջ ներառում է ինչպես շուկայական կողմնորոշում ունեցող ծառայության տեսակները՝ առևտուր, տրանսպորտ և այլն, այնպես էլ ոչ-շուկայական կողմնորոշում ունեցող ծառայությունների տեսակները, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը, պետական հատվածը, ունեն մոնոտոն աճի դինամիկա: Այստեղ 20 տարվա կտրվածքով աճը կազմել է շուրջ 183 %:

Կառուցվածքային վերափոխումների այս ուղին ժամանակին անցել են նաև զարգացած երկրները, սակայն, մեզ նրանցից բաժանող ժամանակային լագը կազմում է 50-70 տարի: Այսպես՝ օրինակ, եթե ԱՄՆ-ում գյուղատնտեսության և ծառայությունների մատուցման ոլորտների միջև ճեղքվածքը սկսվում է 1930-ական թվականներից կամ հետպատերազմյան Գերմանիայում 1960-ականներից, ապա Հայաստանում այն սկսվում է 1996 թվից:

Կառուցվածքային փոփոխությունները բնութագրող մեկ այլ մոտեցում է հանդիսանում տնտեսության հիմնական հատվածներում զբաղվածության տվյալների համեմատական տեղաշարժերը, և այս տեսանկյունից Հայաստանում պատկերը հետևյալն է:

Գծապատկեր 2

Տնտեսության տարբեր հատվածներում զբաղվածների տեսակարար կշիռների դինամիկան՝ ըստ 2001-2014թթ.



Աղբյուրը՝ *ԱՎԾ կայք, armstat.am տարբեր տարեթվերի հրապարակումներ*

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը 2001թ.-ից նվազել է՝ 44.3%-ից հասնելով 2014թ. 36.2%-ի և ունեցել է նվազման միտում: Իսկ ծառայությունների ոլորտում գրանցվել է զբաղվածների թվի աճ, այսպես 2001

[1] Հարկ ենք համարում նշել, որ որոշ հեղինակներ տնտեսության առաջնային հատվածի մեջ են ընդգրկում նաև հանքահումքային արդյունաբերությունը: Տե՛ս “Numerical Explorations of the Ngai-Pissarides Model of Growth and Structural Change” Andreas Dietrich and Jens J. Kruger October 13, 2010/ էջ 15:

թվականին սպասարկման ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը կազմել է 38%, իսկ 2014թ.-ին այն հասել է 47%-ի, այս դեպքում տեղի է ունեցել աճման միտում: Արդյունաբերության ոլորտում էական փոփոխություններ չեն արձանագրվել 2014թ.-ին 2001թ.-ի համեմատությամբ փոփոխությունը կազմել է 1%:

Զբաղվածության ոլորտում ևս փոփոխությունները ներդաշնակ են համաշխարհային միտումներին, ավելին՝ նման տնտեսական կառուցվածքը բնորոշ է նաև նոր զարգացող արևելյան եվրոպական, հարավարևելյան ասիական երկրներին[1]: Այստեղ, արձանագրենք, որ, ի տարբերություն վերջիններիս, մեր տնտեսությունը կառուցվածքային վերափոխումների այս փուլն անցել է առավել սեղմ ժամանակահատվածում: Այդուհանդերձ, մտահոգիչ է այն հանգամանքը, որ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռը մնում է բարձր՝ զարգացած երկրների համեմատությամբ, իսկ թողարկումը՝ ցածր, վկայելով ոչ բավարար չափով զարգացման մակարդակի և անարդյունավետ գյուղատնտեսության մասին: Պատճառներն այստեղ բազմապիսի են, սկսած տնտեսական ոչ արդյունավետ կառավարման խնդիրներից, պայմանավորված քաղաքական և աշխարհագրական հանգամանքներով ու տեխնիկական զինվածությունով:

Բազմաթիվ հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ սպասարկման ոլորտը, տնտեսական զարգացման առումով, ունի առանցքային դերակատարում, սակայն պետք է հիշել, որ արդյունաբերությունը դա ազգային բարեկեցության հիմքն է, այն առավել նկատելի է հատկապես եվրոպական երկրներում և այս իմաստով էլ մեզ մոտ լուրջ արդյունաբերական քաղաքականության իրականացման անհրաժեշտություն կա:

Սույն աշխատանքում նպատակ ենք ունեցել գնահատել մակրոտնտեսական առանցքային (արդյունքային) ցուցանիշի՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և դրա վրա գյուղատնտեսության, արդյունաբերության և ծառայությունների մատուցման ազդեցությունները:

Հետազոտության համար հիմնվել ենք ռեգրեսիայի գծային լոգարիթմական հավասարման վրա[2], որը կառուցվում է մուլտիպլիկատիվ ոչ գծային ֆունկցիաները համապատասխան տեսքի բերելու միջոցով.

$$y = \alpha x^{\alpha} \varepsilon \rightarrow \ln y = \ln a + \alpha \ln x + \ln \varepsilon \qquad (1)$$

որտեղ՝ y-ը կախյալ փոփոխականն է, x-ը անկախ փոփոխականը, ε-ը պատահական շեղումը կամ սխալը: Այստեղ ռեգրեսիայի գործակիցը՝ α-ն, հանդիսանում է որպես առաձգականության գործակից: Այսինքն, այն ցույց է տալիս, թե քանի տոկոսով կփոփոխվի կախյալ փոփոխականի արժեքը, եթե անկախ փոփոխականի արժեքը փոխվի 1 տոկոսով:

Մինչ ռեգրեսիոն վերլուծության իրականացումը կատարվել է գյուղատնտեսության, արդյունաբերության և սպասարկման ոլորտում զբաղվածների թվաքանակների ժամանակային շարքերի ստացիոնարության թեստ 1994-2014-ն ընկած ժամանակահատվածում: Նշենք, որ ստացիոնարության ստուգումը իրականացվել է միավոր արմատ թեստի օգնությամբ Դիկի-Ֆուլերի եղանակով (Unit root test-Augmented Dickey-Fuller): Արդյունքում ժխտվել է ստացիոնարության վարկածը, սակայն ստացիոնար են ստացվել լոգարիթմված արժեքների առաջին կարգի տարբերությունները: Այս փաստը մեզ հիմք է տվել ստուգել, արդյոք կոինտեգրված են դինամիկ շարքերը, թե՝ ոչ: Կոինտեգրացիայի փաստը ստուգվել է երեք առանձին ռեգրեսիաների համապատասխան փոփոխականների զույգերի համար երկու եղանակով: Առաջին դեպքում իրականացվել է կատարված ռեգրեսիայի մնացորդների ստացիոնարության թեստ. այն ևս ստուգվել է Դիկի-Ֆուլերի մեթոդաբանությամբ, սակայն այս դեպքում վիճակագրական հավաստիությունը ստուգվել է Մաքկինոնի աղյուսակի օգնությամբ՝ (MacKinnon 1993): Երկրորդ դեպքում կատարվել է առանձին ռեգրեսիաների փոփոխականների զույգ առ զույգ կոինտեգրացիայի Յոհանսենի թեստ (Johansen cointegration test): Երկրորդ թեստը ևս վկայում է իրականացվող ռեգրեսիայի

[1] Economic Growth Elasticity of Structural Changes: Case of Thailand wannaphong durongkaveroj Chiang Mai University 16. February 2014
Online at http://mpra.ub.uni-muenchen.de/53826/ MPRA Paper No. 53826, posted 21. February 2014 14:55 UTC/ էջ 3:

[2] Кремер Н.Ш., Путко Б.А., Эконометрика: Учебник для вузов-М.: ЮНИТИ-ДАНА, 2003.-301 стр. ISBN 5-238-00333-1, էջ 126-127.

փոփոխականների կոինտեգրացիայի մասին և որին համահունչ հաջորդ փուլում իրականացվել է պարամետրերի գնահատումը փոքրագույն քառակուսիների եղանակով: Գնահատվող ռեգրեսիաների հավասարումները հետևյալ երեքն են՝

- lngdppp=a+αlnempagr,
- lngdppp=b+βlnempind,
- lngdppp=c+γlnempserv,

որտեղ, lngdppp-ն ըստ գնողունակության համարժեքության համաթվի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի բնական հիմքով լոգարիթմն է, lnempagr, lnempind, lnempserv-ը, համապատասխանաբար, գյուղատնտեսության արդյունաբերության և ծառայությունների մատուցման ոլորտում զբաղվածների թվաքանակների բնական հիմքով լոգարիթմները, α, β, γ-ն ՀՆԱ-ի աճի համապատասխան առաձգականության գործակիցներն են երեք ոլորտներում ըստ զբաղվածների թվի: Կատարված ռեգրեսիաների արդյունքները ամփոփ տեսքով ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Կատարված ռեգրեսիայի արդյունքները

անկախ փոփոխական	**կախյալ փոփոխական՝ *ըստ ԳՀՀ-ի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի բնական հիմքով լոգարիթմ-*** $lngdppp$		
$lnempagr$	**-2.5** **(-2.5)***		
$lnempind$		**0.4** **(2.1)**	
$lnempserv$			**1.1** **(2.9)**
հաստատուն	**23** **(6.3)**	**5.7** **(3.7)**	**1.7** **(2.8)**
R^2_{adj}	**0.51**	**0.3**	**0.27**

** փակագծերում նշված են t վիճակագրության արժեքները:*

Ըստ աղյուսակի տվյալների, իրականացված ռեգրեսիաների արդյունքները վիճակագրորեն նշանակալի են ստացվել: Այստեղ նշենք նաև, որ առաջին և երկրորդ ռեգրեսիաների ժամանակ մնացորդներում նկատվել է ավտոկորելյացիայի երևույթ, որը կարգավորվել է Կոհրեյն-Օրկատի իտերացիաների շնորհիվ: Ռեգրեսիոն վերլուծությունը կատարվել է EViews 7 ծրագրային փաթեթի օգնությամբ:

Ինչպես երևում է ռեգրեսիայի արդյունքներից, գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության աճը հանգեցնում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի նվազմանը, այսինքն՝ 1 տոկոսով զբաղվածության տեսակարար կշռի ավելացումը բերում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 2.5 տոկոսային կետով նվազմանը: Ծառայությունների մատուցման ոլորտում ունենք հակառակ պատկերը. այստեղ 1 տոկոսով զբաղվածության տեսակարար կշռի ավելացումը բերում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի 1.1 տոկոսային կետով ավելացմանը:

Ելնելով վերոնշյալներից հանգել ենք այն հետևության, որ պետական տնտեսական քաղաքականության էությունը կայանում է նրանում, որ կապված աշխարհաքաղաքական դիրքից, տրանսպորտային հանգույցների և ենթակառուցվածքների թերզարգացվածությունից պետք է բացառել ցանկացած միջոցառում, որը կխրախուսի գյուղատնտեսության ոլորտի էքստենսիվ ընդլայնմանը: Ինչը չի կարելի ասել ծառայությունների մատուցման ոլորտի մասին, որտեղ ցանկացած խրախուսում կարող է հանգեցնել բնակչության բարեկեցության աճին: Մասնավորապես նոր գիտատար ծառայությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտների խթանումը, որը թեպետ հեշտ չէ, սակայն այլընտրանք չունի:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՌԱՁԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ

ՆԱՐԵԿ ՄԻՅԱՍՆԻԿԻ ԿԵՍՈՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն

Համառոտագիր

Հայաստանի տնտեսությունն անցնում է իր ուրույն վերափոխման ուղին: Այն արտահայտվում է տնտեսության տարբեր հատվածներում զբաղվածության փոփոխությամբ: Սույն հետազոտության մեջ էկոնոմետրիկ մոդելների օգնությամբ գնահատվել է տնտեսության առանձին հատվածներում զբաղվածության փոփոխության ազդեցությունը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի վրա: Արդյունքում ստացվել է, որ գյուղատնտեսության մեջ զբաղվածության աճը հագեցնում է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի նվազմանը, իսկ սպասարկման ոլորտում՝ աճին: Հետևաբար, տնտեսական քաղաքականությունը պետք է միտված լինի նոր գիտելիքահենք արտադրության և ծառայությունների ոլորտի խթանմանը:

Բանալի բառեր. *տնտեսության կառուցվածքային տեղաշարժ, զբաղվածություն, ՀՆԱ-ի աճ, մեկ շնչին ընկնող ՀՆԱ, արտադրականություն:*

ЭЛАСТИЧНОСТЬ ТЕМПОВ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РА ПО СДВИГАМ В ЗАНЯТОСТИ

НАРЕК МЯСНИКОВИЧ КЕСОЯН, *к.э.н, доцент*
Кафедра экономико-математических методов Армянского государственного экономического университета

Аннотация

Экономика Армении проходит свой уникальный путь трансформации. Это выражается в изменении занятости в различных секторах экономики. В настоящем исследовании с помощью эконометрических моделей дана оценка влияния изменения занятости в разных секторах экономики на ВВП в расчете на душу населения. В результате исследования оказалось, что рост занятости в сельском хозяйстве приводит к снижению ВВП на душу населения, а в сфере обслуживания – к увеличению. Следовательно, экономическая политика должна быть ориентирована на стимулирование новых наукоеемких сфер производства и услуг.

Ключевые слова: *структурные сдвиги экономики, занятость, рост ВВП, ВВП на душу населения, эластичность.*

GDP ELASTICITY WITH RESPECT TO EMPLOYMENT IN VARIOUS INDUSTRIES OF THE REPUBLIC OF ARMENIA

NAREK MIYASNIK KESOYAN, *Candidate of Sciences (Economics)*

Associate Professor, Chair of Mathematical Methods in Economics
Armenian State University of Economics

Abstract

The Armenian economy is being uniquely transformed. This reflects the shifts in employment in various industries of economy. In the article the author estimates the impact of changes in employment in various industries of the economy on GDP per capita, by constructing various econometric models. The estimation results show that increase of employment in the agriculture could cause decrease in GDP per capita, while theincrease in employment in the services industry positively affects the growth of GDP per capita. Hence, the economic policy needs to promote new knowledge-based production (goods) and services industry.

Keywords: *Structural change in economy, employment, GDP growth, GDP per capita, elasticity.*

ԼԻԼԻԹ ԳԱՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

Պետության՝ տնտեսության վրա ազդելու էական լծակներից մեկի՝ հարկաբյուջետային քաղաքականության[1] նպատակներից է եկամուտների բաշխման այնպիսի մոդելի ձեռքբերումը, որը միաժամանակ ընդունելի կլինի հասարակության համար և ցանկալի՝ քաղաքական գործիչների տեսանկյունից[2]: Հատկապես զարգացող երկրների համար մեծ նշանակություն ունի, թե կառավարությունը եկամուտների բաշխման վրա ազդելու ինչպիսի հարկաբյուջետային քաղաքականություն է կիրառում: Քանզի եկամուտների բաշխման ճիշտ մոդելի ընտրությունը նախապայման է հանդիսանում կայուն տնտեսական աճի և զբաղվածության բարձր մակարդակի ապահովման համար: Իսկ վերջիններս, իրենց հերթին, երկրի տնտեսության զարգացման հիմնասյուներ են:

Աղքատության կրճատումը և եկամուտների բաշխման անհավասարության մեղմումը հանդիսանում է ՀՀ կառավարության որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականութան կարևորագույն ուղղություններից[3]: Ընդ որում, վերջինիս նպատակային լինելը մատնանշվում է և՛ կարճաժամկետ, և՛ միջնաժամկետ, և՛ երկարաժամկետ քաղաքականության փաստաթղթերում, որոնցում անհավասարության կրճատումը դիտվում է որպես մարդկային կապիտալի զարգացման գրավական. նպատակադրվում է վերացնել աղքատություն և անհավասարություն ծնող պատճառները՝ սոցիալապես խոցելի աշխատունակ խավերի համար կրթության և աշխատանքի հասանելիության ապահովման միջոցով[4]: Իսկ որպես անհավասարության մեղմմանը միտված սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային մեխանիզմներ են դիտարկվում ստորև նշված հիմնական գործիքների կոմբինացիան.

- Սոցիալական տրանսֆերտները, որոնք որպես եկամտի ու գոյատևման աղբյուր, հատկապես կարևոր են աղքատ բնակչության համար: Պետական քաղաքականությունը ուղղորդված է լինելու առանձին թիրախային խմբերի (երեխաների, կենսաթոշակառուների և զբաղվածների) աղքատության մակարդակի կրճատմանը[5]:
- Սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջետային ծախսերը: Պլանավորվում է, սոցիալական ծախսերի շարունակական աճ ապահովելով, հասնել մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:
- Հարկային բարեփոխումները: Հասարակության տարբեր սոցիալական խմբերի եկամուտների արդարացի վերաբաշխման տեսանկյունից, հատկապես կարելի է առանձնացնել հարկային քաղաքականության իրագործման հետևյալ ուղղությունները՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների շրջանակի ընդլայնումը և տեսանելի հարստության առավել մեծ չափերով հարկումը:
- Նվազագույն աշխատավարձը, որի մեծությունը՝ շարունակական աճի պայմաններում, հետզհետե պետք է համաձայնեցվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հետ: Վերջինիս հիմնական նպատակներից է լինելու զբաղված և միևնույն ժամանակ աղքատության գծից ներքև գտնվող քաղաքացիների առկայության բացառումը:

Հարկային համակարգը, հանդիսանալով պետության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության հիմքը, կարող է ուղղված լինել տարբեր նպատակների իրագործ-

[1] Հարկաբյուջետային քաղաքականությունը պետական բյուջեի ծախսային և/կամ եկամտային մասերի փոփոխություններին ուղղված միջոցառումների մի ամբողջություն է, որոնց իրականացմամբ պետությունը/կառավարությունը նպատակ ունի ապահովել տնտեսության կայունություն և/կամ որոշակի սոցիալ-տնտեսական նպատակների իրագործում:

[2] Trade And Development Report 2012, United Nations, New York and Geneva, 2012, page 113.

[3] ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 109:

[4] ՀՀ կառավարության 2012-2017 թվականների ծրագիր, ՀՀ կառավարության N 730-Ա որոշում, 2012թ. հունիսի 18, էջ 6:

[5] ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 106-115 էջեր:

մանը՝ եկամուտների վերաբաշխման գործընթացում ևս ունենալով էական դերակատարում: Հարկային համակարգի միջոցով մի կողմից հավաքագրվում են բնակչության եկամուտները, իսկ մյուս կողմից պետական տրանսֆերտների տեսքով և սոցիալական ծրագրերի միջոցով ուղղվում են ավելի խոցելի խմբերի եկամուտների ավելացմանը: Հետևաբար, եկամուտների վերաբաշխման գործընթացը ձևավորվում է՝ հիմքում ունենալով միաժամանակ և՛ հարկային համակարգը, և՛ սոցիալական ուղղվածություն ունեցող պետական բյուջետային ծրագրերի համակարգը:

Տնտեսական ճգնաժամի ընթացքում Հայաստանում իրականացված ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը, որը եկամուտների կրճատման պայմաններում միտված էր պետական բյուջեի ծախսային ուղղությունների ֆինանսավորման կտրուկ նվազման կանխմանը, նախապայման է հանդիսացել պետական պարտքի ավելացմանը: 2015 թվականին պետական համախառն պարտքը կազմել է 2.5 տրիլիոն դրամ, որը գերազանցում է նախաճգնաժամային՝ 2008 թվականի մակարդակը 4.2 անգամ կամ 1.9 տրիլիոն դրամով: Նկատենք, որ թեև հետճգնաժամային տարում պետական բյուջեի եկամուտները կրճատվել են 12.1 տոկոսով, այնուամենայնիվ, հետագա տարիներին գրանցված ծախսերի նկատմամբ առաջանցիկ աճի միտումը թույլ է տվել աստիճանաբար կրճատել 2009-ին ձևավորված 239.1 մլրդ դրամ պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակը: Սակայն, արդեն 2015 թվականին ձևավորված բյուջեի դեֆիցիտը գերազանցում է նույնիսկ 2009 թվականի մակարդակը: Որպես հետևանք այս զարգացումներին՝ միջնաժամկետում հարկային քաղաքականությունը, նախ և առաջ միտված է լինելու պետական պարտքի կայունության ապահովմանը[1]:

Գծապատկեր 1

ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների և պետական պարտքի դինամիկան, 2008-2015 թվականներին, մլրդ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, ՀՀ 2008-2015թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ

ՀՀ պետական բյուջեի եկամուտների գերազանց մեծամասնությունը ձևավորվում է հարկերից և տուրքերից, 2015 թվականին մոտ 93 տոկոսը: Իրենց հերթին հարկերի և տուրքերի կառուցվածքում էական դերակատարում ունեն ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ) և եկամտային հարկը՝ 2015 թվականին համապատասխանաբար կազմելով 39.7 և 29.2 տոկոս: Այսպիսով, պետական եկամուտների մոտ 73 տոկոսը ձևավորվում է 3 հարկատեսակների շնորհիվ՝ ԱԱՀ-ի (37.0 տոկոս), եկամտային հարկի (27.2 տոկոս) և շահութահարկի (9.0 տոկոս): Ըստ այդմ, պլանավորվում է հարկային եկամուտներն ավելացնել լրացուցիչ (դեռևս չօգտագործվող) հարկատեսակների ընտրությամբ, ինչպես նաև գործող որոշ հարկատեսակների ընդլայնմամբ՝ հատկապես ակցիզային հարկի: Նշենք, որ ներկայումս ակցիզային հարկից ստացված եկամուտները կազմում են պետական եկամուտների 4.3 տոկոսը: Հարկային եկամուտների ավելացման սկզբունքներից է լինելու նաև շքեղության ավելի մեծ չափերով հարկումը:

[1] ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 31:

Գծապատկեր 2

ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2015 թվականին, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ:

Այսպիսով, եթե միջնաժամկետում ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու արտաքին պարտքի կրճատմանը, ապա երկարաժամկետում նախատեսվում է ավելացնել հարկային եկամուտների մակարդակը՝ տարեկան 0.3-0.4 տոկոսային կետով: Որի արդյունքում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2025 թվականին պլանավորվում է հասցնել 27.4 տոկոսի, այն պարագայում, երբ 2015 թվականին այս ցուցանիշը կազմում է 21.2 տոկոս:

Աղյուսակ 1

Պետական եկամուտների նպատակային ցուցանիշները, տոկոս

	2015	2017	2021	2025
Պետական եկամուտներ/ՀՆԱ	23.2	25.0	26.5	27.9
Հարկային եկամուտներ/ՀՆԱ	21.2	24.3	25.9	27.4
Դրամաշնորհներ/ՀՆԱ	0.6	0.3	0.2	0.1

Աղբյուր՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ ԱՎԾ,ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր և հեղինակի հաշվարկներ:

Այժմ անդրադառնանք եկամուտների վերաբաշխման գործընթացի մյուս կողմին՝ սոցիալական ուղղվածություն ունեցող պետական ծախսերին: Վերջիններս 2015 թվականին կազմել են պետական բյուջեի ծախսերի 42.0 տոկոսը, ընդ որում, գերակշիռ մասը կազմում են սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 27.2 տոկոս, իսկ առողջապահության և կրթության ոլորտի ծախսերը կազմում են համապատասխանաբար 6.1 և 8.7 տոկոս:

Գծապատկեր 3

Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը 2008-2015 թվականներին, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ 2008-2015թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ և հեղինակի հաշվարկներ:

Միայն սոցիալական տրանսֆերտների ֆինանսավորմանն ուղղվում է ընդամենը պետական բյուջեի ծախսերի 18.5 տոկոսը: Նշենք, որ որպես սոցիալական տրանսֆերտներ դիտարկվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող թոշակները և նպաստները: Կենսաթոշակների մեջ ներառված են բոլոր տեսակի պետական թոշակները.

- աշխատանքային,
- ծերության,
- հաշմանդամության,
- կերակրողին կորցնելու,
- սպայական անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների,
- շարքային զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների,
- ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակները:

Իսկ նպաստների տեսքով պետական աջակցությունից դիտարկվել են.

- ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները,
- մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստը,
- հղիության և ծննդաբերության նպաստը,
- երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- թաղման նպաստը:

Սոցիալական տրանսֆերտների և եկամուտների բաշխման անհավասարության միջև առկա կապը խիստ բացասական է: Այլ խոսքերով, այն երկրները, որոնց պետական բյուջեից սոցիալական տրանսֆերտներին ուղղվող հատկացումներն ավելի մեծ են, հակված են ունենալ անհավասարության ավելի ցածր մակարդակ: Բացառություն չէ նաև Հայաստանը: Ինչպես երևում է բերված գծապատկեր 4-ից՝ Հայաստանում սոցիալական տրանսֆերտների և Ջինի գործակցի միջև կապը բացասական է, թեև ավելի թույլ է, քան դեցիլային գործակցի և սոցիալական տրանսֆերտների միջև առկա կապն է:

Գծապատկեր 4

Սոցիալական տրանսֆերտների և Ջինի գործակցի միջև առկա կապը



Աղյուսակ 2

Սոցիալական տրանսֆերտների և անհավասարության ցուցանիշների միջև առկա կորելացիոն կապերը

	Ջինի գործակից	Դեցիլային գործակից
Սոցիալական տրանսֆերտներ	-0.34	-0.43
Նպաստներ	-0.15	-0.35
Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ	-0.27	-0.20
Կենսաթոշակներ	-0.35	-0.43

Աղբյուր՝ ՀՀ 2004-2014 թվականների պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական նպաստներից անմիջապես աղքատության, հետևաբար, նաև անհավասարության մակարդակի կրճատմանն ուղղված են ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները, ինչպես նաև վերջիններիս պետական ֆինանսավորումն անհամեմատ բարձր է մյուս նպաստներին հատկացվող ֆինանսավորումից՝ առանձին դիտարկվել է այս նպաստների և եկամուտների բաշխումը բնութագրող ցուցանիշների միջև առկա կապը:

Գծապատկեր 5

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և Ջինի գործակցի միջև առկա կապը



Գծապատկեր 6

Կենսաթոշակների և Ջինի գործակցի միջև առկա կապը



Աղբյուր՝ ՀՀ 2004-2014 թվականների պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՎԾ, հեղինակի հաշվարկներ:

ՀՀ-ում անհավասարության մեղմման տեսանկյունից կենսաթոշակների դերը շատ ավելի մեծ է, քան ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներինը: Եթե վերջինիս և Ջինի գործակցի միջև կորելացիայի գործակիցը -0.27 է, ապա կենսաթոշակների պարագայում՝ -0.35 է: Անհրաժեշտ է նկատել, որ սոցիալական տրանսֆերտների և, մասնավորապես, կենսաթոշակների դերը հատկապես մեծ է ամենաաղքատ և ամենահարուստ խմբերի եկամուտների մակարդակների միջև առկա ճեղքի մեղմման գործում:

Սոցիալական տրանսֆերտների, որպես եկամուտների անհավասարաչափ բաշխման մեղմման գործիքի, արդյունավետության մասին է վկայում վերջիններիս էական դերը աղքատության մակարդակի կրճատման գործում: Այս պարագայում ևս հատկապես էական դերակատարում ունեն կենսաթոշակները: 2008-2014 թվականների ընթացքում պետական տրանսֆերտները հնարավորություն են տվել կրճատել աղքատության մակարդակը տարեկան միջինը 15.6 տոկոսային կետով, ընդ որում, միայն կենսաթոշակների ազդեցությունը 13.7 տոկոսային կետ է եղել:

Գծապատկեր 7

Կենսաթոշակների և սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը աղքատության մակարդակի վրա



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը:

Սոցիալական տրանսֆերտների կարևորության մասին է վկայում նաև բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտներում պետական աջակցության բավականին մեծ կշիռը. 2014-ին այն կազմել է 15.8 տոկոս: Պետական աջակցության դերը հատկապես ակնառու է ամենաաղքատ դեցիլային խմբերում. 2014-ին առաջին դեցիլային խմբի մեկ շնչի հաշվով եկամտի գրեթե կեսը՝ 49.2 տոկոսը, կազմել են սոցիալական տրանսֆերտները, 2-րդ դեցիլային խմբում այն կազմել է 37.7 տոկոս: Այսպիսով, սոցիալական տրանսֆերտները, կազմելով աղքատ դեցիլային խմբերի եկամտի նշանակալի մասը, հնարավորություն են տալիս ազդել բնակչության եկամուտների վերաբաշխման վրա՝ մեղմելով եկամտային խմբերի միջև առկա անհավասարությունը:

Գծապատկեր 8

Սոցիալական տրանսֆերտների կշիռը բնակչության մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտներում, 2004-2014 թվականներ, տոկոս



Գծապատկեր 9

Սոցիալական տրանսֆերտների կշիռը դրամական եկամուտներում ըստ դեցիլային խմբերի, բնակչության մեկ շնչի հաշվով, 2014 թվական, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը:

Չնայած բյուջետային ծախսերից, բնակչության եկամուտների բաշխվածության վրա ունեցած ուղղակի ազդեցությամբ, առանձնանում են սոցիալական տրանսֆերտները, այնուհանդերձ, մեծ է նաև սոցիալական ուղղվածություն ունեցող այլ ոլորտային ծախսերի անուղղակի ազդեցությունը: Նշված ծախսային ուղղություններից կարելի է առանձնացնել կրթական և առողջապահական ծախսերը: Ընդ որում, եթե սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը կարճաժամկետ բնույթ ունի, ապա սոցիալական ուղղվածություն ունեցող ոլորտների ծախսերը ավելի երկարաժամկետ են: Այսինքն, այս ոլորտներում ներդրումն իր ազդեցությունն է ունենում եկամուտների բաշխման վրա ոչ թե անմիջապես, այլ որոշակի ժամանակահատված անց, սակայն, կրելով տևական բնույթ:

Հայաստանում և՛ կրթական, և՛ առողջապահական ոլորտների պետական ֆինանսավորման և եկամուտների անհավասարաչափ բաշխվածության միջև առկա կապը բացասական է: Ընդ որում, կրթական ծախսերի և Ջինի գործակցի միջև կապն ավելի ուժեղ է, քան առողջապահական ծախսերի դեպքում է: Միևնույն ժամանակ, բավականին ուժեղ է առողջապահական ծախսերի և դեցիլային գործակցի միջև փոխկապվածությունը:

Գծապատկեր 10

Առողջապահության և կրթության ոլորտների պետական ֆինանսավորման և անհավասարության ցուցանիշների փոխկապվածությունը



	Ջինի գործակից	Դեցիլային գործակից
Առողջապահության ոլորտի ծախսեր	-0.27	-0.61
Կրթության ոլորտի ծախսեր	-0.55	-0.46

Աղբյուր՝ ՀՀ 2004-2014 թվականների պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՎԾ և հեղինակի հաշվարկներ:

ՀՀ կառավարության ծրագրերում նախատեսվում է ավելացնել սոցիալական ուղղվածություն ունեցող ոլորտների պետական ֆինանսավորումը, հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալական աջակցության՝ աշխատանքային կենսաթոշակների և ընտանեկան կենսամակարդակի բարձրացման ուղղված նպաստների, ֆինանսավորման ավելացմանը: Միևնույն ժամանակ, մարդկային կապիտալի զարգացման համատեքստում նպատակադրվում է շարունակաբար ապահովել առողջապահական և կրթական ոլորտներն ուղղվող բյուջետային ֆինանսավորման ծավալների ավելացումը՝ զուգորդելով այն նշված ոլորտներում մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ:

Աղյուսակ 3

Սոցիալական ոլորտների ֆինանսավորման նպատակադրումները

	2015	2017	2021	2025
	փաստացի	պլանային		
Սոցիալական ոլորտներ/ՀՆԱ, տոկոս	11.7	12.6	13.8	15.1
Սոցիալական պաշտպանություն/ՀՆԱ, տոկոս	7.6	8.0	8.3	8.7
Առողջապահություն/ՀՆԱ, տոկոս	1.7	1.8	2.2	2.7
Կրթություն/ՀՆԱ, տոկոս	2.4	2.8	3.3	3.7
Աշխատանքային կենսաթոշակներ, մլրդ դրամ	222	296	464	767
Ընտանեկան կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ, մլրդ դրամ	36.6	37.1	56.1	84.3

Աղբյուր՝ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություն, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր և հեղինակի հաշվարկներ:

Եկամուտների բաշխման անհավասարության մեղմմանն ուղղված քաղաքականության մաս է կազմում նաև նվազագույն աշխատավարձը: Թեև վերջինս, նախ և առաջ, աշխատանքի շուկայի

կարգավորման գործիք է հանդիսանում, այնուամենայնիվ, այն իր ազդեցությունն է ունենում նաև աղքատության մակարդակի և եկամուտների բաշխման վրա:

Որպես եկամուտների անհավասարաչափ բաշխմանն ուղղված քաղաքականության մաս, նվազագույն աշխատավարձի հիմնական նպատակն է բարձրացնել աղքատ կամ ցածր եկամուտ ունեցող բնակչության եկամուտների մակարդակը: Քանզի ենթադրվում է, որ նվազագույն աշխատավարձով աշխատողները մեծամասնություն են կազմում հատկապես ցածր եկամուտ ունեցող խմբերում:

ՀՀ կառավարությունն ուղղորդվում է նվազագույն աշխատավարձի տարեցտարի բարձրացման քաղաքականությամբ՝ նպատակ ունենալով բացառել աղքատ բնակչության շարքերում զբաղվածների առկայությունը: Մյուս կողմից, նվազագույն աշխատավարձի մակարդակի բարձրացումը թույլ է տալիս այն համադրելի դարձնել աղքատության մակարդակի հաշվարկման հիմքում ընկած նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հետ՝ նվազագույն աշխատավարձ ստացող բնակչության համար հնարավորություն ստեղծելով նվազագույնս ապահովել իրենց կենսականորեն անհրաժեշտ պայմանները: Ինչպես երևում է գծապատկեր 11-ից, 2015 թվականի վերջի դրությամբ նվազագույն աշխատավարձն արդեն իսկ հավասարվել է նվազագույն սպառողական զամբյուղի[1] արժեքին:

Գծապատկեր 11

Նվազագույն աշխատավարձը և 1 շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղը ՀՀ-ում, 2004-2014 թվականներին (եռամսյակային տվյալներ), դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՀՀ օրենքը նվազագույն աշխատավարձի մասին և հեղինակի հաշվարկներ:

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը, համակարգելով եկամուտների վերաբաշխման գործընթացը, նպատակաուղղված է նաև եկամուտների անհավասարաչափ բաշխման մեղմմանը և աղքատության կրճատմանը: Ընդ որում, այս նպատակի իրագործման համար կիրառվող հիմնական գործիքներից ուղղակի, սակայն, կարճաժամկետ ազդեցությամբ էական դերակատարում ունեն պետական տրանսֆերտները, մասնավորապես, կենսաթոշակները և ընտանեկան կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստները: Իսկ անուղղակի, սակայն երկարաժամկետ ազդեցությամբ առանձնանում են կրթական և առողջապահական ոլորտին ուղղվող պետական ծախսերը: Հարկ է նշել, որ այս տնտեսական ցուցանիշների նպատակային մակարդակների ձեռքբերումն երկարաժամկետում իր ազդեցությունը կարող է ունենալ եկամուտների անհավասարաչափ բաշխման մեղմման գործում՝ ելնելով Հայաստանում եկամուտների բաշխման ցուցանիշների և վերջիններիս միջև առկա փոխազդեցության մակարդակից:

[1] Սպառողական զամբյուղի արժեքը բերված է ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի:

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԼԻԼԻԹ ԳԱՐԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Բնակչության եկամուտների բաշխման գործընթացի կարգավորումը երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է: Ըստ այդմ, ուսումնասիրվել և հոդվածում ներկայացվել են ՀՀ բնակչության եկամուտների բաշխման գործընթացի կարգավորման համար կիրառվող հիմնական գործիքները, վերջիններիս միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակադրումները: Առանձին վերլուծվել են յուրաքանչյուր գործիքի ազդեցության բնույթը, եկամուտների բաշխման գործընթացում ունեցած դերակատարությունը, ինչպես նաև՝ այդ գործոնների և եկամուտների բաշխման անհավասարությունը բնութագրող ցուցանիշների միջև առկա կորելացիոն կապերը:

Բանալի բառեր. *եկամուտների բաշխում, սոցիալական տրանսֆերտներ, հարկային համակարգ, պետական բյուջե, սոցիալական ծախսեր, նվազագույն աշխատավարձ, Ջինի գործակից, դեցիլային գործակից, կենսաթոշակներ, նպաստներ:*

РЕГУЛИРУЮЩИЙ ИНСТРУМЕНТАРИЙ РАСПРЕДЕЛЕНИЯ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

ЛИЛИТ ГАРИКОВНА АКОПЯН
аспирант Армянского государственного экономического университета

Аннотация

Регулирование распределения доходов населения является важнейшей составляющей социально-экономической политики страны. В соответствии с этим в статье были изучены и представлены основные инструменты, применяемые для регулирования распределения доходов населения Республики Армения, их среднесрочные и долгосрочные цели. Отдельно проанализированы характер влияния каждого из инструментов и их роль в процессе распределения доходов, а также существующие корреляционныес связи между показателями, характеризующими эти факторы и неравенство в распределении доходов.

Ключевые слова: *распределение доходов, социальные трансферты, налоговая система, государственный бюджет, социальные затраты, минимальная заработная плата, коэффициент Джини, децильный коэффициент, пенсии, пособия.*

THE TOOLKIT TO REGULATE THE DISTRIBUTION OF INCOME OF THE POPULATION IN THE REPUBLIC OF ARMENIA BOTTOM OF FORM

LILIT GARIK HAKOBYAN
Ph.D. Student, Armenian State University of Economics

Abstract

The regulation of the distribution of income of the population is one of the most important components of the socioeconomic policy of the nation. Therefore, the article studies and presents the main policy toolkit utilized in regulating the distribution of income of the population in the Republic of Armenia and medium-term and long-run targets with respect to the tools and mechanisms. The impact of each of tools and mechanisms and their role in the process of income distribution is analysed separately, and the correlation coefficients among these factors and indicators of the income inequality have been calculated as well.

Keywords: *Income distribution, social transfers, tax system, state budget, social expenditures, minimum wage, Gini coefficient, decile coefficient, pensions, benefits.*

ԵՎԳԵՆՅԱ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՅՐԻՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Արցախի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դրամավարկային քաղաքականության գործիքակազմում կարևոր դեր ունեն արտարժութային ինտերվենցիաները: Արտարժութային ինտերվենցիաները ազգային արժույթի փոխարժեքի կուրսի կայունության ապահովման նպատակով կենտրոնական բանկերի կողմից արժութային շուկայում միջամտությունն է՝ արտարժույթի և այլ թանկարժեք մետաղների առք ու վաճառքի միջոցով: Համաձայն Միջազգային արժութային հիմնադրամի տրված սահմանման՝ արտարժութային ինտերվենցիաները կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերի հետ արտարժույթի առք ու վաճառքի հետ կապված գործարքներն են[1]: Արտարժութային ինտերվենցիաների իրականացման նպատակների դասակարգումը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Արտարժութային ինտերվենցիաների իրականացման նպատակները

Ինտերվենցիաների նպատակ	Դրամավարկային քաղաքականության նպատակներ		
	Ներքին կայունության ապահովում	Արտաքին կայունության ապահովում	Ֆինանսական կայունության ապահովում
Փոխարժեքի կուրսի կառավարում(ֆիքսված փոխարժեքի դեպքում)	Այո	Այո	Այո
Փոխարժեքի կուրսի տատանումների կառավարում(լողացող փոխարժեքի դեպքում)	Այո	Այո	Այո
Սիմետրիկ փոփոխականության պահպանում	___	___	Այո
Կուրսի «թռիչքի» կանխարգելում	Այո	Այո	Այո
Կուրսի արագ փոփոխությանը խոչընդոտում	Այո	Այո	Այո
Արժութային շուկայում իրացվելիության մակարդակի պահպանում	___	___	Այո
Միջազգային պահուստների պահպանում	___	___	Այո

Աղբյուր՝ Moreno R. Motivies for intervation/Foreign exchange market intervation in emerging markets: motives tschniques and implications//BIS.2005. Papers N24. P.5.

Սկզբունքորեն առանձնացնում են ինտերվենցիաների նկատմամբ երկու մոտեցում՝ փոխարժեքի կարգավորում և նրա փոփոխականության կառավարում: Ինտերվենցիաների նպատակները կարող են լինել արժութային փոխարժեքի տատանումների կարգավորումը, տնտեսական աճի խթանումը և այլն: Դրամային իշխանությունները միշտ հետևում են անվանական փոխարժեքի կուրսի տատանումներին: Ինչպես նշել է Շվեդիայի Ռիկսբանկի կառավարիչ Ուրբան Բեքստրոմը, ինտերվենցիաները գնաճի կարգավորման համար կարող են հանդես գալ արդյունավետ միջոց. «Արտարժութային ինտերվենցիաները իրենցից ներկայացնում են կենտրոնական բանկի տրամադրության տակ գտնվող գործիքներից մեկը: Այն կենտրոնական բանկերի համար, որոնք գնաճի նպատակադրման ռազմավարություն են կիրառում, առաջնային գործիք է հանդիսանում տոկոսադրույքը: Միևնույն ժամանակ, եթե փոխարժեքի կուրսի տատանումները անցնում են թույլատրելի սահմանը, ինտերվենցիաները համարվում են գների կայունության

[1] Ishil Sh. Kriljenko S., Ivan J., Guimaraes R., Cem K Official Forein Exchange Intervention// IMF. 2006. Occasional paper N249.

ապահովման համար արդյունավետ միջոց»[1]: Եթե կենտրոնական բանկերը իրենց տրամադրության տակ ունենում են բավարար միջազգային պահուստներ, ապա կարելի է համարել, որ նրանք լրիվությամբ կարգավորում են փոխարժեքը: Այն պարագայում, երբ միջազգային պահուստներն անբավարար են կամ երբ անցում է կատարվել լողացող փոխարժեքին, փոխարժեքի կուրսի տատանումները կրում են մոնետար բնույթ: Այս դեպքում փոխարժեքի կարգավորումը սահմանափակվում է միայն կենտրոնական բանկի կողմից իրականացվող ինտերվենցիաներով: Օրինակ՝ «Ճապոնիայի բանկի արժութային գործառնությունների ընդհանուր սկզբունքները» պաշտոնական փաստաթղթում նշվում է, որ կենտրոնական բանկը կրճատում է արժութային փոխարժեքի տատանումների ամպլիտուդը երկարաժամկետ հատվածում: 1973թ. լողացող փոխարժեքի քաղաքականության ներդրումից սկսած ճապոնական տնտեսությունը արժութային փոխարժեքի էական տատանումների է հանդիպել: Տատանումների բացասական հետևանքները չեզոքացնելու նպատակով կենտրոնական բանկը ժամանակ առ ժամանակ արժութային շուկայում ինտերվենցիաներ էր իրականացնում[2]:

1977թ. Միջազգային արժութային հիմնադրամի կողմից հաստատված կանոնադրութան համաձայն Արժութային միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) պատասխանատվություն է կրում միջազգային արժութային համակարգի և իր կազմում գտնվող պետությունների կողմից իրականացվող արժութային քաղաքականության նկատմամբ վերահսկողության իրականացման համար: Վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով 2007 թվականին Միջազգային արժութային հիմնադրամի գործադիր խորհուրդը հաստատեց նոր նորմ. «Վերահսկողության իրականացում երկկողմանի հիմքի վրա»: Վերահսկողության քաղաքականության փոփոխության պատճառը հիմնադրամի գործունեության անբավարար զնարահատականն էր, որը տրվել է հիմնադրամի անկախ վարչության կողմից[3]: Այս որոշման արդյունքում անդամ երկրներին տրվում էին ավելի կոնկրետ խորհուրդներ՝ արժութային քաղաքականության իրականացման հարցում: Արժութային միջազգային հիմնադրամը պահանջեց անդամ երկրներից, որպեսզի վերջիններս արժութային քաղաքականության իրականացման ընթացքում հետևեն հետևյալ սկզբունքներին[4]:

1. Պետությունը չպետք է արժութային փոխարժեքը օգտագործի մյուս պետությունների նկատմամբ բարենպաստ մրցակցային դաշտում հայտնվելու համար:
2. Անհրաժեշտության դեպքում պետությունը պետք է իրականացնի ինտերվենցիաներ՝ ազգային արժույթի փոխարժեքի կարճաժամկետ տատանումներից խուսափելու համար:
3. Ինտերվենցիաներ իրականացնելիս անդամ երկրները պետք է հաշվի առնեն մյուս անդամ երկրների շահերը, ինչպես նաև՝ այն երկրի շահերը, որի արժույթը օգտագործում են ինտերվենցիաների ժամանակ:
4. Պետությունը պետք է խուսափի այնպիսի արժութային քաղաքականությունից, որը կհանգեցնի արտաքին անկայունությանը:

Եթե կենտրոնական բանկը կանոնավոր կերպով դիմում է արտարժութային ինտերվենցիաների, ապա անհրաժեշտ է մշակել արտարժութային ինտերվենցիաների իրականացման քաղաքականություն, որը կսահմանի դրանց նպատակը, ժամկետները, ծավալները և այլն: Ֆիքսված փոխարժեքի կուրսի քաղաքականության դեպքում կենտրոնական բանկն ի վիճակի չի արժութային շուկայում տեղի ունեցող գործարքների ծավալի նկատմամբ վերահսկողություն իրակա-

[1] Backstrom U. Currency interventions cannot be ruled out// Inter-Alpha's Treering Committee speech.2001. June 14.
[2] Outline of the Bank of Japan's Foreign Exchange Intervention Operations//Bank of Japan.2000. July.
[3] An IEO Evaluation of IMF Exchange Tare Policy Advice,2007, p12.
[4] Надзор. Осуществляемый МВФ. Решение 2007 года о надзоре на двухсторонней основе: МВФ, 2007, p6.

նացնել, քանի որ նա պետք է իսկույն արձագանքի արտասահմանյան արժույթի պահանջարկի փոփոխությանը: Լողացող փոխարժեքի պայմաններում ինտերվենցիաները իրականացվում են կենտրոնական բանկի հայեցողությամբ՝ արժութային փոխարժեքի փոփոխելիության ցածր մակարդակ ապահովելու համար: Մեքսիկայի, Չիլիի և Թուրքիայի փորձերը վկայում են, որ ինտերվենցիաները ոչ միշտ են համարվում արդյունավետ գործիք փոխարժեքի տատանումները վերացնելու համար: Հետազոտողների որոշ մասը գտնում են, որ պրակտիկայում ինտերվենցիաները հանգեցնում են փոխարժեքի տատանումների փոփոխականության ավելացմանը[1]: Չնայած դրան կենտրոնական բանկերը չեն համաձայնվում այս կարծիքի հետ, բացի այդ ԱՀՄ-ը պնդում է, որ ինտերվենցիաները պետք է չեզոքացնեն, այլ ոչ թե բարձրացնեն փոխարժեքի տատանումների թույլատրելի մակարդակից շեղման աստիճանը: Կենտրոնական բանկերի կողմից ներկայացված հաշվետվությունները վկայում են, որ ինտերվենցիաների արդյունավետության վրա ազդող կարևոր գործոններն են հանդիսանում[2].

1. Այլ կենտրոնական բանկերի հետ համակարգված ինտերվենցիաների իրականացումը:
2. Ինտերվենցիաների ծավալների համադրումը արժութային շուկայի հետ:
3. Ինտերվենցիաների համադրումը ընթացիկ շուկայական միտումների հետ:
4. Ինտերվենցիաների իրականացման հերթականությունն ըստ կարևորության:

Սենտ Լուիսի ֆեդերալ պահուստային բանկին կենտրոնական բանկերի կողմից տրված հաշվետվություններից կարելի է տալ արտարժութային ինտերվենցիաներին բնորոշ գծեր[3]. ինտերվենցիաների իրականացման նպատակով կենտրոնական բանկերը շուկայում գործառնություններ են իրականացնում տարվա աշխատանքային օրերի մոտ 0,5-40%-ը, ինտերվենցիաների իրականացման համար կենտրոնական բանկերը գործարքները կնքում են խոշոր առևտրային բանկերի հետ, գործառնությունների մեծ մասը իրականացվում է աշխատանքային օրվա ընթացքում, կենտրոնական բանկերը բավականին արագ են արձագանքում արժութային շուկայում տեղի ունեցող ոչ ցանկալի իրավիճակներին և այլն: Ինտերվենցիաների իրականացման աղյունավետության տեսակետից կարելի է առանձանացնել որոշ թերություններ.

- Իշխանությունների միջամտությունը արժութային շուկային առաջացնում է տարակարծություններ դրամավարկային և այլ տնտեսական քաղաքականության նպատակների տեսանկյունից:
- Շատ դեպքերում ինտերվենցիաներն աննշան ազդեցություն են ունենում արժութային շուկայի վրա՝ հատկապես երկարաժամկետ հատվածում:
- Իշխանությունների միջամտությունը խոչընդոտում է արժութային փոխարժեքի ձևավորման շուկայական մեխանիզմին:
- Ինտերվենցիաները կարող են փոխարինել պետության կողմից իրականացվելիք ավելի կարևոր միջոցառումներին:

Կենտրոնական բանկերի ներկայացուցիչները չեն համաձայնվում վերը նշվածի հետ: Նրանք մասնավորապես համաձայնվում են այն մտքի հետ, որ ինտերվենցիաները չափազանց հեշտ ու պարզ տարբերակ են մակրոտնտեսական բարդ խնդիրներին լուծում տալու համար:

---

[1] Fratzscher M. On the long-term effectiveness of exchange rate communication and interventions//Journal of International Money and Finance.2006. N25, P146-167: Edision H., Cashin P., Liang H. Foreign exchange intervention and the Australian dollar// Internatioanl Journal of Finance and Economics. 2006. N 11.P.155-171.

[2] Neely C. Central Bank Authorities Beliefs about Foreigh ExchangeIntervention// Federal reserve Bank of St. Lous.2007. working Paper N45.

[3] Foreign exchange market intervention in emerging markets:motives, techniques and implications//BIS papers.2005. N24. P. 5: Neely C. Central Bank Authorities Beliefs about Foreigh ExchangeIntervention// Federal reserve Bank of St. Lous.2007. working Paper N45: Neely C., The practiceof Central Bank Unternemtion. 2000.N2. P. 24-37.

Տնտեսագետները տարակարծիք են նաև ինտերվենցիաների վերաբերյալ տեղեկատվության թափանցելիության հարցի շուրջ: Տնտեսագետների մի խումբ կարծում է, որ տեղեկատվության գաղտնիությունը ավելի է բարձրացնում ինտերվենցիաների արդյունավետությունը, մինչդեռ մյուս խումբը արտահայտում է հակառակ կարծիքը: Ընդհանուր առմամբ, իրականացվելիք ինտերվենցիաների վերաբերյալ տեղեկատվության թափանցելիությունը պետք է բացառվի այն պատճառով, որ վերջիններս հիմնականում իրականացվում են տնտեսությունում ստեղծված անցանկալի երևույթները կանխելու նպատակով և այն դեպքում, եթե կենտրոնական բանկը ինտերվենցիաները իրականացնում է իր արժութային պորտֆելը ճշգրտելու նպատակով: Գործառնությունների իրականացումից հետո, բնականաբար պետք է ապահովվի վերջիններիս վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ինչպես և ներկայումս կատարում են կենտրոնական բանկերի մեծամասնությունը:

Արտարժութային ինտերվենցիաներ իրականացվում են աշխարհի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: ԵՏՄ անդամ պետությունների (բացի ՀՀ-ից) կողմից 2014-2015թթ. իրականացված արտարժութային ինտերվենցիաների ծավալները ներկայացված են գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

Արտարժութային ինտերվենցիաների ծավալները, մլն ԱՄՆ դոլար 2014-2015թթ.



Աղբյուր՝ ԵՏՄ անդամ պետությունների կենտրոնական բանկերի պաշտոնական կայքեր:

2014-2015թվականների ընթացում ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթի արժեզրկման տեմպերի նվազեցման նպատակով՝ ԵՏՄ անդամ պետությունները արտարժութային շուկայում իրականացրել են միջամտություն՝ հիմնականում արտարժույթի վաճառքի գործարքներ իրականացնելով: Բացառություն է կազմել Ռուսաստանի Դաշնությունը: Եթե 2014 թվականի կտրվածքով ՌԴ կենտրոնական բանկի արտարժութային շուկայում իրականացրած գործարքների մոտ 90%-ը արտարժույթի վաճառքի գործարքներն էին, ապա 2015 թվականին ՌԴ ԿԲ կողմից արտարժութային ինտերվենցիաների մոտ 86%-ը արտարժույթի առքի գործարքներն էին: ԵՏՄ պետություններից Ղազախստանը, Ղրղըզստանը և Բելառուսը նշված ժամանակահատվածում իրականացրել են արտարժույթի վաճառքի գործառնություններ: Վերջիններիս արժույթների արժեզրկումը պայմանավորված էր ՌԴ ռուբլու՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկմամբ, ինչի պատճառով էլ կենտրոնական բանկերը ստիպված էին արտարժույթի վաճառքի գործառնությունների միջոցով որոշ չափով զսպել սեփական արժույթի արժեզրկման տեմպերը:

Աղյուսակ 2

ՀՀ ԿԲ կողմից իրականացրած արտարժութային ինտերվենցիաները 2014-2015թթ., մլն ՀՀ դրամ[1]

	Առք(USD)		Վաճառք(USD)		Զուտ առք(Վաճառք) 2014	Առք(USD)		Վաճառք(USD)		Զուտ առք (Վաճառք) 2015
Ամիս	**Գումար**	**Փոխ**	**Գումար**	**Փոխ**		**Գումար**	**Փոխ**	**Գումար**	**Փոխ**	
Հունվար	_	_	7,130,000	408.9	-7,130,000	_	_	84,700,000	477.7	-84,700,000
Փետրվար	_	_	61,530,000	412.4	-61,530,000	_	_	56,000,000	477.9	-56,000,000
Մարտ	1,000,000	412	65,270,000	414.6	-64,270,000	10,050,000	472.1	18,900,000	480.6	-8,850,000
Ապրիլ	_	-	3,100,000	415.7	-3,100,000	3,600,000	472.6	_	_	3,600,000
Մայիս	_	-	_	_	_	_	_	15,000,000	481.7	-15,000,000
Հունիս	20,150,000	408.6	_	_	20,150,000	36,430,000	473.2	_	_	36,430,000
Հուլիս	19,850,000	407.2	_	_	19,850,000	_	_	_	_	_
Օգոստոս	2,000,000	408.2	5,600,000	413.3	-3,600,000	_	_	95,000,000	484.6	-95,000,000
Սեպտեմբեր	2,000,000	407	_	_	2,000,000	25,000,000	480.2	12,000,000	485.4	13,000,000
Հոկտեմբեր	_	_	_	_	_	_	_	_	_	_
Նոյեմբեր	_	_	93,840,000	422.2	-93,840,000	_	_	19,200,000	482.7	-19,200,000
Դեկտեմբեր	_	_	118,700,000	458.1	-118,700,000	_	_	20,800,000	482.5	-20,800,000
Ընդամենը	45,000,000		355,170,000		-310,170,000	75,080,000		321,600,000		-246,520,000

2014-2015թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ԿԲ կողմից իրականացված արտարժութային ինտերվենցիաների ծավալները համապատասխանաբար կազմել են 400.170 մլրդ ՀՀ դրամ և 397.680 մլրդ դրամ: Իրականացված ինտերվենցիաների կառուցվածքում մեծ տեսակարար բաժին են զբաղեցրել արտարժույթի վաճառքի գործարքները՝88.8% և 80.9%: 2016թ. առաջին երկու ամսվա ընթացքում ՀՀ ԿԲ կողմից իրականացվել է բացառապես արտարժույթի վաճառքի գործառնություններ՝94,6 մլրդ ՀՀ դրամ ծավալով: Նշված գործառնություններով ՀՀ դրամի արժեզրկման տեմպերի զսպման նպատակն էր հետապնդվում: Սակայն ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը 2014-2015թթ. ընթացքում ցուցաբերեց արժեզրկման միտումներ, մասնավորապես՝նշված ժամանակահատվածում ազգային արժույթի արժեզրկման տեմպը կազմել էր մոտ 20%:

Արտարժութային ինտերվենցիաները իրենց ուրույն դերակատարությունը ունեն դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում: Արտարժութային ինտերվենցիաների իրականացումը պետք է լինի հիմնավորված և խիստ նպատակային: Այն երկրներում, որոնք վարում են լողացող փոխարժեքի քաղաքականություն՝ արտարժութային ինտերվենցիաների իրականացման գործընթացը պետք է կրի ոչ պարբերական և կարճաժամկետ բնույթ: Հակառակ դեպքում՝ արտարժութային ինտերվենցիաների միջոցով կենտրոնական բանկերի միջամտությունը կարող է հանգեցնել տնտեսության առջև ծառացած խնդիրների ավելի սրմանը:

[1] www.cba.am/ Վիճակագրական հրապարակումներ/ամսական տեղեկագրեր:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԵՎԳԵՆՅԱ ՌԱԶՄԻԿԻ ՀԱՅՐԻՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Արցախի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոն

Համառոտագիր

Արտարժութային ինտերվենցիաները հանդիսանալով դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներից մեկը՝ իրենց ուրույն դերն ունեն դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրականացման գործընթացում: Արտարժութային ինտերվենցիաների իրականացումը պետք է լինի հիմնավորված և նպատակային: Այն երկրներում, որտեղ վարվում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, ինտերվենցիաների իրականացման գործընթացը պետք է կրի ոչ պարբերական բնույթ: Հակառակ դեպքում՝ արտարժութային ինտերվենցիաների միջոցով կենտրոնական բանկերի միջամտությունը կարող է հանգեցնել տնտեսության առջև ծառացած խնդիրների սրմանը:

Բանալի բառեր. *արտարժույթ, ինտերվենցիա, արժեզրկում, փոխարժեք, առք, վաճառք, դրամավարկային քաղաքականություն, կենտրոնական բանկ:*

РОЛЬ ВАЛЮТНЫХ ИНТЕРВЕНЦИЙ В РЕАЛИЗАЦИИ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ

ЕВГЕНИЯ РАЗМИКОВНА АЙРИЯН, *к.э.н., доцент*
Кафедра финансового учета Арцахского государственного университета

Аннотация

Валютные интервенции, являясь одним из косвенных инструментов денежно-кредитной политики, играют особую роль в эффективном осуществлении денежно-кредитной политики. Реализация валютных интервенций должна быть обоснованной и целенаправленной. В тех странах, где ведется политика плавающего валютного курса, реализация интервенций должна носить непериодический характер. В противном случае, вмешательство центральных банков посредством валютных интервенций может привести к эскалации проблем, стоящих перед экономикой.

Ключевые слова: *валюта, интервенция, девальвация, обменный курс, покупка, продажа, денежно-кредитная политика, Центральный банк.*

THE ROLE OF FOREIGN EXCHANGE INTERVENTIONS IN CARRYING OUT MONETARY POLICY

YEVGENYA RAZMIK HAYRIYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Finances and Accounting, Artsakh State University

Abstract

Foreign exchange interventions, one of the indirect tools of monetary policy, play a unique role in the process of carrying out an effective monetary policy. Conducting foreign exchange interventions needs to be justified and targeted. In those nations with floating foreign exchange regimes the process of conducting interventions needs to be a one-time action and not to be conducted on a regular basis. Otherwise, by conducting foreign exchange intervention the interventions of central banks could put additional pressure on the issues the economies face.

Keywords: *Foreign exchange, intervention, depreciation, foreign exchange rate, purchase, sale, monetary policy, central bank.*

ԱՆՆԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

Անցումային տնտեսության անցած և արդեն տնտեսապես զարգացած երկրների փորձը վկայում է այն մասին, որ տնտեսական աճ ապահովելու համար կարևորվում են ոչ միայն արտերկրներից և միջազգային կազմակերպություններից, այլ նաև առևտրային բանկերի կողմից վարկային ներդրումները, որոնք իրենց նպատակայնությամբ պետք է օգտագործվեն առանձին ոլորտներում ու տարբեր ուղղություններով: Այսպես, պարզաբանման առումով նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում, սկսած 2003 թվականից օտարերկրյա ներդրումներն օգտագործվում են՝

1. Դրամավարկային կարգավորման մարմիններով:
2. Պետական կառավարման մարմիններով:
3. Բանկային և ֆինանսական հատվածներով:
4. Մասնավոր հատվածներով:

Հիմք ընդունելով վերոնշյալները, պետք է նշել, որ երկրի տնտեսական գործընթացների բարելավման նպատակով, կարևորվում է առևտրային բանկերի մասնակցության ակտիվացումը ներդրումային միջավայրում, որը բխում է բանկային համակարգի և ընդհանուր տնտեսական կայուն զարգացման անհրաժեշտությունից: Այսպես, եթե մի կողմից առևտրային բանկերը շահագրգռված են գործելու կայուն տնտեսական միջավայրում, ապա մյուս կողմից էլ այդ միջավայրի ձևավորումն էլ մեծապես կախված է բանկային համակարգի կայունությունից, ճկունությունից և նրա արդյունավետ գործունեությունից: Միաժամանակ, քանի որ առևտրային բանկերն արդյունավետ գործում են միայն տնտեսության առկա չափավոր ռիսկի պայմաններում, ուստի այդ բանկերին էլ անհրաժեշտ է կայուն տնտեսական միջավայր:

Պետք է առանձնացնել այն կարևոր նախապայմանները, որ ցանկացած բանկի համար արժևորվում է ավանդների ներգրավմանը համահունչ վարկային միջոցների տրամադրումը, որոնք բանկային գործունեության ամենահիմնական բաղադրատարրերն են: Հետևաբար, ինչպես տեսնում ենք աղյուսակում բերված վիճակագրական տվյալներից, որոնք վերաբերում են առևտրային բանկերի կողմից տնտեսության առանձին հատվածներին (ռեզիդենտներ, ձեռնարկություններ, տնային տնտեսություններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, ոչ ռեզիդենտներ, այլ ֆինանսական կազմակերպություններ) տրամադրվող վարկային միջոցներին, ներկայացված են ըստ 2000-2015 թթ.: Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ՀՀ տնտեսության հատվածների գծով տրամադրված վարկերը հիմնականում ունեցել են աճման միտում և միայն 2015 թվականի վերջի դրությամբ այն կազմել է 29.4 տրիլիոն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա (2014 թ.) նկատմամբ ավելացել է 6.5 տրիլիոն ՀՀ դրամով կամ 28.2 տոկոսով, իսկ 2002 թվականի նկատմամբ՝ 29.5 անգամ ավելի:

Մեր հետազոտության նպատակն է կատարել ըստ աղյուսակի տվյալների վերլուծություն՝ վարկային ներդրումների փոխկապվածությունները բացահայտելու համար:

Ուստի այդ առումով վերլուծությունն իրականացվելու է երկու տարբերակներով: Ըստ առաջին տարբերակի արդյունքային ցուցանիշ է համարվելու ՀՀ առևտրային բանկերի կողմից տնտեսության առանձին հատվածներին (ձեռնարկություններ, տնային տնտեսություններ, շահույթ

չհետապնդող կազմակերպություններ, այլ ֆինանսական կազմակերպություններ) տրամադրվող վարկերը (Z):

Իր հերթին ըստ երկրորդ տարբերակի արդյունքային ցուցանիշ (Y) է համարվելու ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրվող ընդամենը վարկերը:

Աղյուսակ 1

ՀՀ առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների[1] (2000-2015թթ.)
(ժամանակահատվածի վերջ, մլն.ՀՀ դրամ)[2]

Վարկեր	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
(1) Ռեզիդենտներին	1.136.177	1.186.708	953.434	1.070.386	1.446.650	1.872.285	2.565.702	3.876.084	6.559.680
(2) Դրամով	187.361	208.794	200.255	313.463	453.701	652.524	1.113.543	2.242.036	4.053.402
(3) Արտարժույթով	948.816	977.914	753.179	756.922	992.948	1.219.761	1.452.159	1.634.047	2.506.277
(4) Այդ թվում՝									
(5) Ձեռնարկություններին	653.594	719.594	653.787	662.358	816.477	986.887	1.279.001	1.753.245	2.858.168
(6) Դրամով	119.179	153.171	155.473	216.221	297.505	363.407	570.192	774.272	1.236.631
(7) Մասնավոր	108.149	135.716	132.667	201.155	263.629	332.084	546.088	767.656	1.205.055
(8) Պետական	11.030	17.455	22.807	15.067	33.875	31.323	24.104	6.617	31.575
(9) Արտարժույթով	534.415	566.423	498.313	444.136	518.973	623.481	708.809	978.973	1.621.537
(10) Մասնավոր	289.838	372.873	398.879	372.879	459.629	591.126	682.493	965.073	1.611.859
(11) Պետական	244.577	193.551	99.434	71.257	59.344	32.355	26.316	13.900	9.678
(12) Տնային տնտեսություններին[3]	351.047	284.103	220.178	346.118	554.442	809.488	1.183.286	1.986.034	3.465.745
(13) Դրամով	48.201	36.582	36.231	63.715	129.841	241.403	454.386	1.366.542	2.710.392
(14) Արտարժույթով	302.846	247.520	183.947	282.404	424.601	568.086	728.900	619.492	755.354
(15) Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	2.348	2.011	1.315	604	466	961	2.261	20.682	115.113
(16) Դրամով	1.986	1.746	1.090	369	284	626	1.659	763	2.957
(17) Արտարժույթով	361	266	225	236	183	335	602	19.919	112.155
(18) Այլ ֆինանսական կազմակերպություններին	0	0	0	62.784	75.148	74.945	101.154	116.122	120.653
(19) Դրամով	0	0	0	33.158	26.072	47.089	87.306	100.459	103.422
(20) Արտարժույթով	0	0	0	29.626	49.077	27.856	13.848	15.63	17.231
(21) Ոչ ռեզիդենտներին[4]	38.821	13.006	43.423	75.645	83.120	118.427	81.367	48.423	52.702
(22) Դրամով	3.037	1.758	722	17.652	19.753	6.498	3.298	16.045	29.297
(23) Արտարժույթով	35.784	11.249	42.701	57.993	63.367	111.929	78.069	32.378	23.405
(24) ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐԿԵՐ	1.174.998	1.199.714	996.857	1.146.030	1.529.769	1.990.712	2.647.069	3.924.507	6.612.382

[1] Կուտակված տոկոսներն ընդգրկված չեն. վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները:

[2] www.cba.am

[3] Ներառյալ բանկի աշխատակիցների և բանկի հետ կապված անձանց տրված վարկերը:

[4] Տրված վարկերը ընդգրկված են ոչ ռեզիդենտ ձեռնարկություններին, տնային տնտեսություններին և ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններին:

Աղյուսակ 1-ի շարունակություն

Վարկեր	2009	2010	2011	2012	2013	2014	2015
(1) Ռեզիդենտներին	7.780.401	9.472.887	12.823.111	17.012.537	19.629.138	22.222.314	28.131.728
(2) Դրամով	3.966.575	4.345.336	5.261.213	6.252.898	7.240.444	8.262.654	9.496.306
(3) Արտարժույթով	3.813.826	5.127.551	7.561.898	10.759.639	12.388.695	13.959.660	18.635.422
(4) Այդ թվում՝							
(5) Ձեռնարկություններին	3.825.963	5.180.553	7.565.987	10.264.871	11.304.891	12.412.200	15.866.565
(6) Դրամով	1.224.386	1.548.662	1.772.282	1.884.627	1.918.145	2.029.727	2.427.669
(7) Մասնավոր	1.191.714	1.508.167	1.740.740	1.860.357	1.875.376	1.995.033	2.404.510
(8) Պետական	32.673	40.495	31.542	24.270	42.768	34.694	23.160
(9) Արտարժույթով	2.601.577	3.631.891	5.793.705	8.380.244	9.386.746	10.382.473	13.438.896
(10) Մասնավոր	2.569.782	3.583.633	5.561.485	8.206.810	9.159.053	10.166.192	13.143.982
(11) Պետական	31.795	93.257	232.220	173.434	227.693	216.281	294.914
(12) Տնային տնտեսություններին[1]	3.716.564	3.988.096	4.854.519	6.138.041	7.416.363	8.789.931	10.984.885
(13) Դրամով	2.629.041	2.628.060	3.268.393	4.091.912	4.921.685	5.777.942	6.610.402
(14) Արտարժույթով	1.087.523	1.360.036	1.586.126	2.046.129	2.494.951	3.011.989	4.374.483
(15) Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	123.716	127.754	156.189	263.907	456.038	539.921	786.502
(16) Դրամով	5.199	6.012	13.792	24.674	58.697	79.024	63.907
(17) Արտարժույթով	118.517	121.743	142.397	239.233	397.341	460.896	722.596
(18) Այլ ֆինանսական կազմակերպություններին	114.158	176.483	246.416	345.718	451.574	480.263	493.775
(19) Դրամով	107.948	162.601	206.746	251.685	341.917	375.962	394.328
(20) Արտարժույթով	6.209	13.882	39.670	94.033	109.657	104.301	99.447
(21) Ոչ ռեզիդենտներին[2]	240.250	434.892	641.375	508.706	744.016	739.186	1.312.238
(22) Դրամով	73.671	128.732	127.609	145.143	170.982	200.624	474.859
(23) Արտարժույթով	166.579	306.161	513.767	363.564	573.034	538.562	837.378
(24) ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐԿԵՐ	8.020.651	9.907.779	13.464.487	17.521.243	20.373.154	22.961.500	29.443.966

Վերոնշյալ գծով ավելի պարզ պատկերացում ունենալու համար կառուցենք գծապատկեր 1-ը և 2-ը, որոնցում ինչպես նշեցինք վերևում, ոչ գծային տեսքով կատարվել է ուսումնասիրվող տարիների կտրվածքով վարկային միջոցների աճման միտումները:

[1] Ներառյալ բանկի աշխատակիցների և բանկի հետ կապված անձանց տրված վարկերը:

[2] Տրված վարկերը ընդգրկված են ոչ ռեզիդենտ ձեռնարկություններին, տնային տնտեսություններին և ոչ բանկային ֆինանսական կազմակերպություններին:

Գծապատկեր 1

ՀՀ առևտրային բանկերի կողմից տարբեր ոլորտներին տրամադրված վարկային միջոցները



Գծապատկեր 2

ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային միջոցները



Այժմ ներկայացնենք այն ռեգրեսիայի հավասարումները՝ 1-ին և 2-րդ, որոնց միջոցով իրականացվելու է առանձին–առանձին արդյունքային ցուցանիշների ու ազդող գործոնների վերլուծություն: Ռեգրեսիայի հավասարումները հետևյալներն են՝

$$Z=b_0+b_1x_1+b_2x_2+b_3x_3+b_4x_x \qquad (1)$$

որտեղ՝

Z–ը՝ առևտրային բանկերի կողմից տնտեսության առանձին հատվածներին տրամադրված վարկերն են,

x_1–ը՝ ձեռնարկություններին տրված վարկերն են,

x_2–ը՝ տնային տնտեսություններին տրված վարկերն են,

x_3–ը՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններին տրված վարկերն են:

x_4–ը՝ այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկերն են:

b_0, b_1, b_2, b_3, b_4 –անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուրի ազդեցությունը կախյալ փոփոխականի կամ այլ կերպ արդյունքային ցուցանիշի (Z) վրա:

Աղյուսակ 2

Z–ի հաշվարկային տվյալներն ըստ 2000-2015թթ.

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	37909.90	16710.01	2.268695	0.0444
CL	1.082056	0.022736	47.59137	0.0000
HL	1.003526	0.22447	44.70680	0.0000
NPC	-0.430973	0.732381	-0.588455	0.5681
NREZL	-0.319196	0.163178	-1.956126	0.0763
R-squared	0.999957	Mean dependent var	4272892	
Adjusted R-squared	0.999941	S.D.dependent var	5080641	
S.E.of regression	38941.40	Akaike info criterion	24.22781	
Sum squared resid	1.67E+10	Achwarz criterion	24.46924	
Log likelihood	-188.8225	F-statistic	63830.23	
Durbin-watson stat	1.041604	Prob (F-statistic)	0.000000	

Փոքրագույն քառակուսիների մեթոդի հիման վրա հաշվարկվել և ստացվել են համապատասխան b_0, b_1, b_2, b_3, b_4 գործակիցների արժեքները (տե՛ս աղյուսակ 2), որոնք տեղադրելով (1) հավասարման մեջ, ստացվել է հետևյալ հավասարումը՝

$$Z = 37909.90166 + 1.082055974^* x_1 + 1.003526438 * x_2 – 0.4309729406 * x_3 – 0.3191957585 * x_4$$

Վերոնշյալ ռեգրեսիայի հավասարումը հավասարում է այն մասին, որ արդյունքային ցուցանիշի վրա դրականորեն են ազդում x_1–ը և x_2–ը, իսկ x_3–ն ու x_4–ը ունեն բացասական ազդեցություն: Այստեղից հետևություն, որ այն ճիշտ է արտահայտում այսօվա իրականությունը, քանի որ ձեռնարկություններն ու տնային տնտեսություններըն են, որ վարկերի նպատակային օգտագործման դեպքում կապահովեն եկամուտների ապահովում, որոնք էլ կնպաստեն ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը:

Երկրորդ տարբերակով ռեգրեսիայի հավասարումն ունի հետևյալ տեսքը՝

$$Y= a_0 +a_1x_1+a_2x_2 \qquad (2)$$

որտեղ՝

Y–ը՝ ընդամենը վարկերն են,

x_1–ը՝ ռեզիդենտներին տրված վարկերն են,

x_2–ը՝ ոչ ռեզիդենտներին տրված վարկերն են:

a_0, a_1, a_2 –ը՝ անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուրի ազդեցությունը կախյալ փոփոխականի կամ այլ կերպ՝ արդյունքային ցուցանիշի (Y) վրա:

Վերջիններս նույնպես փոքրագույն քառակուսիների մեթոդի հիման վրա հաշվարկվել են և ստացվել է հետևյալ ռեգրեսիայի հավասարումը՝

$$Y = -0.219467531 + 0.9999999991^* x_1 + 1.000001075 * x_2$$

Աղյուսակ 3

Y–ի հաշվարկային տվյալներն ըստ 2000-2015 թթ.

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	-0.219468	0.138497	-1.584634	0.1371
REZL	1.000000	5.17E-08	19346272	0.0000
NRL	1.000001	1.31E-06	761767.3	0.0000
R-squared	1.000000	Mean dependent var	4422630	
Adjusted R-squared	1.000000	S.D.dependent var	5263661	
S.E.of regression	0.417994	Akaike info criterion	1.260663	
Sum squared resid	2.271350	Achwarz criterion	1.405523	
Log likelihood	-7.085303	F-statistic	1.19E+15	
Durbin-watson stat	2.567491	Prob (F-statistic)	0.000000	

Նույն տնտեսագիտական մեկնաբանությունները կարող են կատարել նաև (Y) արդյունքային ցուցանիշի վրա ազդող գործոնների միջոցով: Այսինքն, առևտրային բնակերը, որոնք տրամադրում են վարկեր ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին, ունեն իրենց դրական ազդեցությոնը դրանց գործունեության վրա, հատկապես, երբ դրանք օգտագործվում են նպատակային և ժամկետային առումով, երբ դրանք վերադարձվում են համապատասխան վարկատու բանկերին:

Այստեղից հետևություն, որ տնտեսական աճի ապահովման գործընթացում առևտրային բանկերի գործունեությունն էլ ավելի ընդլայնելու համար անհրաժեշտ է աստիճանաբար ավելացնել մասնավորապես արդյունաբերական կազմակերպությունների թվաքանակը, հաշվի առնելով ՀՀ կառավարության կողմից մշակված ճիշտ ռազմավարական քաղաքականության վարումը՝ ըստ վարկերի օգտագործման նպատակային պատկանելիության:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

ԱՆՆԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Ցանկացած երկրի տնտեսական աճի ապահովման գործընթացում իրենց ուրույն տեղն ունեն առևտրային բանկերը, որոնք իրականացնելով բանկային գործունեություն, նպաստում են տնտեսության առանձին ոլորտների, ինչու չէ նաև ֆիզիկական անձանց գործընթացների անընդհատությանը: Ուստի այդ առումով լուսաբանված են մի քանի տարիների կտրվածքով ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկային միջոցների պատկերը, ըստ դրանց օգտագործման պատկանելիության: Կազմված աղյուսակների և գծապատկերների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ և տնտեսագիտական մեկնաբանություններ: Միաժամանակ ռեգրեսիոն հավասարումներով պայմանավորված հիմնավորվել են արդյունքային ցուցանիշները (ռեզիդենտներին տրամադրված վարկերը և ընդհանուր վարկերը) համապատասխան ազդող գործոնների միջոցով:

Բանալի բառեր. *առևտրային բանկ, փոխկապվածությունների վերլուծություն, օգտագործման պատկանելիություն, ներդրումներ, ռեզիդենտներ, ոչ ռեզիդենտներ, տնային տնտեսություններ, վարկեր, ռեգրեսիայի հավասարում, ռեգրեսիայի գործակիցներ:*

КОРРЕЛЯЦИОННЫЙ АНАЛИЗ ОСУЩЕСТВЛЯЕМЫХ КОММЕРЧЕСКИМИ БАНКАМИ РА КРЕДИТНЫХ ИНВЕСТИЦИЙ ПО ИСТОЧНИКАМ ИСПОЛЬЗОВАНИЯ

АННА ВЛАДИМИРОВНА АРУТЮНЯН
аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

В обеспечении экономического роста любой страны особое место занимают коммерческие банки, которые, осуществляя банковскую деятельность, поддерживают непрерывность функционирования отдельных сфер экономики, и даже деловых операций физических лиц. В связи с этим представлена картина предоставленных со стороны коммерческих банков Армении кредитных средств по источникам их использовния в интервале нескольких лет. На основе составленных таблиц и рисунков проведены соответствующие анализы и дана их экономическая интерпретация. Одновременно, обусловленные регрессионными уравнениями, обоснованы исходные показатели (предоставленные резидентам кредиты и общие кредиты) посредством соответствующих воздействующих факторов.

Ключевые слова: *коммерческий банк, корреляционный анализ, использование по источникам, инвестиции, резиденты, нерезиденты, домохозяйства, кредиты, уравнение регресии, коэффициент регрессии.*

CORRELATION ANALYSIS OF INVESTMENT LOANS PROVIDED BY THE ARMENIAN COMMERCIAL BANKS BY PURPOSE OF USE

ANNA VLADIMIR HARUTYUNYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of Armenia

Abstract

Commercial banks play a unique role in the process of ensuring economic growth of any nation that by carrying out banking activities support and ensure continuous performance of various sectors of the economy and natural persons as well. Therefore, the article presents the trends in loans provided by commercial banks and the purpose of use of these loans for the period of several years. The article provides the analysis of tables and figures prepared by the author with respective economic interpretations. Meanwhile, by estimating regression equations the author identifies and justifies those independent variables that cause respective changes in dependent variables (loans to residents and total of loans).

Keywords: *Commercial bank, correlation analysis, purpose of use, investments, residents, non-residents, households, loans, regression equation, regression coefficients.*

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ազգային տնտեսության վճարային հաշվեկշռի կարգավորումն այլևս զուտ տնտեսագիտական խնդիր չէ: Այն առաջվա պես պայմանավորված է լինելու կառավարության կողմից իրականացվող նպատակային տնտեսական քաղաքականությամբ և առավել մրցունակ գործարարների կողմից իրականացվող քայլերով, սակայն հիշատակված միտումներն ինքնին առաջ են քաշում նոր պահանջներ: Ապագայի գործարարը հաջողության հասնելու համար հարկադրված է լինել համաշխարհային ռազմավարության գիտակ, տեխնոլոգիայի վարպետ, գերազանց քաղաքագետ և առաջնորդ՝ օժտված մարդկանց շահագրգռելու կարողությամբ: Տնտեսագետների կողմից ակնկալվում է նաև, որ ապագան ի վերջո պատկանելու է գերհզոր ընկերություններին՝ համաշխարհային գործարար դաշնություններին: Դրանց կառավարիչների գլխավոր մտահոգություններից մեկը կլինի հավասարակշռել տնտեսական շահերը մշակութային առանձնահատկությունների հետ:

Այսպիսով, ազգային տնտեսությունների վճարային հաշվեկշիռներին առնչվող գլխավոր միտումներն են. տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործումը, որը թույլ է տալիս համադրել ընկերության աշխատանքները միջազգային մասշտաբով, միջազգային դրամական համակարգի հետագա ազատականացումը, որը հնարավորություններ է ընձեռում օգտվել փոխարժեքների շարունակական տատանումներից, քաղաքական թշնամանքի, հակամարտության զգալի նվազումը, որը նոր շուկաներ մուտք գործելու և տնտեսական միություններ ձևավորելու լայն հնարավորություն է տալիս, Արևելքի և զարգացող, նորանկախ երկրների աճող դերը համաշխարհային տնտեսության ներսում և միջազգային կազմակերպություններում, որը տանում է դեպի ուժերի որոշակի վերաբաշխման: Արևելքի շուկաների որոշակի հզորացումը, որը նոր շուկա է ստեղծում և այն գրավիչ դարձնում ներդրումների համար, արտադրությունից դեպի ծառայությունների ոլորտի գերակայության անցումը, որը գիտելիքը դարձնում է արտահանման ամենակարևոր բաղադրիչներից մեկը, տնտեսական, արդյունաբերական նպատակներով տիեզերքի օգտագործումը, որը գործարարության համար նոր հեռանկարներ է բացում: Մեր կողմից քննարկված գլխավոր միտումները թույլ են տալիս կանխատեսումներ անել ոչ միայն առանձին երկրների կամ դրանց խմբերի ու միությունների, այլև օրեցօր ավելի հստակ ուրվագծվող համաշխարհային նոր տնտեսակարգի վերաբերյալ:

Արտահանման վրա հիմնված զարգացմանն անցնելու և զուգահեռաբար ինովացիոն զարգացման ինստիտուտներ ներդնելու համար կառավարության առաջնահերթ նպատակներից մեկը պետք է դառնա գոյություն ունեցող և պոտենցիալ զարգացման կլաստերների իդենտիֆիկացումը, ինչպես արտահանման ներուժի, այնպես և ինովացիոն զարգացման հնարավորությունների տեսանկյունից: Արտահանմանը կողմնորոշված աճի տեսակետից կարելի է դասակարգել 4 տիպի զարգացման կլաստերներ.

Այն կլաստերները, որոնք ձևավորվել են կամ կարող են ձևավորվել՝ ելնելով Հայաստանում ստեղծվող ավելացված արժեքի մաքսիմալացման սկզբունքից: Դրանք պետք է հիմնված լինեն պատրաստի արտադրանքի մակարդակով տեղական հումքի վերամշակման վրա: Արդեն ձևավորված սեկտորների զարգացումը կարող է կատարվել արտադրանքի քանակի, անվանացանկի

մեծացման կամ որակի բարձրացման ճանապարհով (օրինակ՝ սննդի, փայտամշակման կամ շինանյութերի արդյունաբերության մեջ) կամ արժեքի ավելացման շղթայում օղակների թվի մեծացման ճանապարհով (օրինակ՝ գունավոր մետաղների արդյունաբերության համար շղթայի ընդլայնումը մինչև մալուխների կամ էլեկտրաշարժիչների արտադրությունը՝ պղնձաձուլական կոմբինատի կառուցման հետ մեկտեղ):

Ինչպես հայտնի է, ճգնաժամը նաև շանս է՝ վերադիրքավորվելու և դուրս գալու ստեղծված իրավիճակից ավելի մրցունակ տնտեսությամբ: Սա, իր հերթին, ենթադրում է ոչ միայն առանձին միջոցառումների իրականացում, այլ՝ որակապես նոր տնտեսական քաղաքականության իրականացում: Ըստ որում, անհրաժեշտություն է առաջանում տարանջատել իրական և թվացյալ զարգացման միտում բնութագրող գործընթացները: Մասնավորապես,

- արտաքին առևտրային ապրանքաշրջանառության ավելացումը դեռ չի նշանակում մրցունակության բարձր մակարդակ և արտահանման ավելացում. այն կարող է ավելանալ ներմուծման աճի հաշվին և ավելացնել արտաքին առևտրի դեֆիցիտը,
- ներմուծման փոխարինման քաղաքականությունը դեռևս չի նշանակում արտահանման խթանման քաղաքականություն, որը թույլ է տալիս առևտրային միսիաներով, գործարար համաժողովներով, արտոնյալ վարկավորմամբ և արժութային արդյունավետ քաղաքականությամբ խթանել երկրի արտահանման կարողությունը,
- տնտեսական մրցակցության աջակցությունը չի կարող նույնացվել հակամենաշնորհային պայքարի հետ, որը վերջ կդնի կլանների կողմից գների վերաբերյալ հանցավոր համաձայնություններին, որից տուժում են թե՛ բարեխիղճ ձեռներեցները, և թե՛ սպառողները ու տնտեսության մրցունակությունն ընդհանրապես,
- նոր աշխատատեղերի ստեղծումը դեռ չի նշանակում գործազրկության կրճատում և տնտեսության զարգացում, քանի որ միաժամանակ կարող են կրճատվել աշխատատեղեր տնտեսության այլ ոլորտներում,
- ներդրումների առկայությունը կարող է պայմանավորված լինել քաղաքականացված արտաքին ներդրումներով, որը դեռ չի նշանակում ներքին ներդրումների աճ և վստահության ձևավորում:

Այս տարբերությունները նկատելով, անհրաժեշտ է մշակել ազգային տնտեսության առանձնահատկություններից բխող տնտեսական դեղատոմսեր և բուժումը սկսել այնտեղից, որտեղից սկիզբ է առել հիվանդությունը, և բարձրացնել տնտեսական օրգանիզմի դիմադրողականությունը

1. ծավալուն և նպատակային ներդրումներ կատարել մարդկային կապիտալի մեջ,
2. արտոնյալ պայմաններ ստեղծել ինովացիաների և նոր տեխնոլոգիաների զարգացման և դրանց կիրառման համար,
3. ըստ ամենայնի աշխուժացնել փոքր և միջին ձեռներեցությունը հանրապետությունում,
4. պետական աջակցությամբ խթանել բնակարանային և արտադրական շինարարության ոլորտը,
5. արտոնյալ վարկեր տրամադրելիս առաջնահերթություն սահմանել կառուցվածքաստեղծ արտադրությունների և այլ գործարար ծրագրերի համար, որոնց իրականացնողներն առավել կենսունակ են ու մրցունակ և իրենց ետևից լոկոմոտիվի պես կարող են շարժել-տանել նաև մյուսներին,
6. պետության նախաձեռնությամբ զարկ տալ հանրային աշխատանքներին՝ հատկապես ենթակառուցվածքների զարգացման ասպարեզում,
7. մատչելի պայմաններով սկսել հիպոթեկային վարկավորում, որը դրականորեն կներազդի ընդհանուր տնտեսության առողջացման վրա,
8. կոշտ հարկային վարչարարության փոխարեն անցում դեպի ճկուն հարկային քաղաքականություն՝ աստիճանաբար անցում կատարելով նաև դեպի հարկային շրջանայնացում՝ հանրապետության ողջ տարածքով մեկ, ուր գործարարության խթանման նպատակով յուրաքանչյուր մարզի և բնակավայրի համար կսահմանվեն Երևանի և նրա ագլոմերացիայից տարբեր հարկային դրույքաչափեր,
9. ձևավորել ազատ տնտեսական գոտիներ,

10. իրականացնել տարբերակված մաքսային քաղաքականություն, որն ուղղված կլինի նոր սարքավորումների, նոր տեխնոլոգիաների ներմուծման խթանմանը, հետևաբար նաև՝ տեղական արտադրության մրցունակության բարձրացմանը,
11. անցում կատարել դեպի ցածր վարկերի տրամադրման նպատակային քաղաքականության՝ խթանելու գործարար աշխուժությունը,
12. անցնել «էժան» դրամի քաղաքականության, որը դրականորեն կանդրադառնա տնտեսության տարբեր ճյուղերի (մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, այլ ոլորտների) մրցունակության բարձրացման վրա և կարող է հանգեցնել առևտրային հաշվեկշռի բացասական սալդոյի կրճատմանը:

Այս ամենը կարող է թույլ տալ խուսափել այն սխալներից, ինչ կատարվեցին 1998թ. ասիական, հետո նաև ռուսական ֆինանսական ճգնաժամի շրջանում, և առավելագույնս օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից:

Այս իրավիճակում մեզ համար կարևորագույն խնդիրներն են ոչ միայն տնտեսության վրա ֆինանսական ճգնաժամի հետևանքների վերացումը, այլև առաջացած սոցիալական խնդիրների ժամանակին և արդյունավետ լուծումները:

Միաժամանակ, լիարժեք ֆինանսական շուկայի կայացումը կարող է նպաստել համահայկական տնտեսական ներուժի և մրցակցային առավելությունների բացահայտմանն ու դրանց առավել արդյունավետ իրացմանը, որը կարող է հանգեցնել Հայաստանում տնտեսական իրական վերելքի: Ինչ վերաբերում է արդյունավետ ֆինանսական շուկայի կայացմանն ուղղված տնտեսական քաղաքականությանն, ապա առաջարկվում է այն նպատակաուղղել հարկային օրենսդրության կատարելագործմանը, ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների, ապահովագրական շուկայի ձևավորմանը, ներդրումային ընկերությունների գործունեության աջակցությանը: Հայաստանում ֆինանսական շուկայի կայացման համար առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում «բաց» ֆինանսական շուկայի քաղաքականության իրականացումը՝ կապիտալների փոխներթափանցման հնարավորությունների ապահովման, այդ թվում՝ Ռուսաստանի, Եվրոպայի առավել զարգացած ֆոնդային շուկաների հետ Հայաստանի շուկայի տեխնոլոգիական ինտեգրման շնորհիվ, ինչը իրացվելի գործիքների ի հայտ գալու միջոցով կհանգեցնի բուն շուկայի ակտիվացմանը, իսկ մյուս կողմից թույլ կտա այդ ծավալուն շուկաները հայ թողարկողների համար օգտագործել որպես կապիտալացման աղբյուրներ:

Պատճառներն ու լուծումներն այս հարցում միանգամայն պարզ են ու փոխկապակցված: Մեր համոզմամբ հիմնական պատճառն այն է, որ որքան էլ կատարելագործվում են առանձին երկրների զարգացման տնտեսական մոդելները, այնուամենայնիվ, տնտեսական գլոբալացման և ազգային տնտեսությունների միմյանցից աճող և բացահայտ փոխկախվածության պայմաններում տարբեր (առաջին հերթին՝ զարգացած) երկրների կառավարություններն այդպես էլ չեն կարողանում գտնել համաշխարհային տնտեսությունը համատեղ կառավարելու որևէ մոդել: Իսկ մինչ այդ կարող են լինել ոչ միայն ֆինանսական դեֆոլտներ, այլև պերմանենտ անկումներ, իսկ համաշխարհային ճգնաժամն, ամենայն հավանականությամբ, պարբերաբար կրկնվելու է:

Հայաստանի, ինչպես նաև ցանկացած երկրի վճարային հաշվեկշռի վրա ազդում են տվյալ երկրի բոլոր մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպիսիք են՝

- Ազգային եկամուտը, որը երկրի ռեզիդենտների վաստակած շահույթի, աշխատավարձի, շահաբաժինների, ռենտայի և տոկոսների ընդհանուր գումարն է:
- Տոկոսադրույքների մակարդակը, որը որոշում է վարկերի տրամադրման պայմանները: Այստեղ կարևոր է այն փաստը, որ տոկոսադրույքների բարձրացման գործընթացը ուղեկցվում է վճարային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդի մեծացմամբ: Բացի այդ, տոկոսադրույքների բարձրացումը երկրի արժեթղթերը միջազգային շուկայում դարձնում է առավել գրավիչ և խթանում նրա վաճառքը:
- Փողի զանգվածի շրջանառությունը և էմիսիայի ծավալը, որը ներքին շուկայում էականորեն ազդում է վճարային հաշվեկշռի վրա:
- Արժույթի փոխարժեքը, որպես երկրի մակրոտնտեսական ցուցանիշ, յուրահատուկ տեղ է գրավում վճարային հաշվեկշռի պետական կարգավորման միջոցների համակարգում:

- Մեծ ազդեցություն կարող է ունենալ վճարային հաշվեկշռի վրա նաև միջազգային արժութաֆինանսական համակարգը:

Վճարային հաշվեկշռի միջազգային փորձը վկայում է, որ առավել արդյունավետ է ընթացիկ հաշվի՝ առևտրային հաշվեկշռի պետական կարգավորումը: Մասնավորապես, արտահանման խթանումն ապրանքների իրացման փուլում իրականացվում է հիմնականում ներազդելով գների վրա՝ արտահանողներին հարկային, վարկային արտոնություններ տրամադրելով և փոփոխելով արժութային փոխարժեքը: Ինչ վերաբերում է ապրանքների արտահանման աճի և նոր շուկաներ գրավելու, ինչպես նաև արտահանման խթանման համալիր ծրագրի իրականացման հարցում ձեռնարկատերերին շահագրգռելու խնդրին, ապա պետությունն այդ կարող է անել արտահանման ավելացմանն ուղղված նպատակային վարկերի տրամադրման, տնտեսական և քաղաքական ռիսկերից ապահովագրման, հիմնական կապիտալի արտոնյալ ամորտիզացիոն մեխանիզմների և այլ նպաստավոր պայմանների ձևավորման միջոցով:

Արտաքին շուկաներում մրցակցության սրման պայմաններում առավելապես կարևորվում է արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների կարգավորումն ու խթանումը ներճյուղային մասնագիտացման խորացման և տեղի ու արտերկրի ընկերությունների միջև համագործակցության զարգացման միջոցով: Բազմաթիվ երկրներում (Հնդկաստան, Չինաստան, Թաիլանդ) հատուկ ուշադրություն է դարձվում, մի կողմից գյուղատնտեսական արտադրանքի արտահանման խթանմանը, որը դիտարկվում է որպես «կանաչ նավթ», իսկ մյուս կողմից՝ նոր մեքենաների և սարքավորումների օգտագործմանն ու արտադրության արդիականացմանը: Պետությունն ամեն կերպ փորձում է կողմնորոշել հայրենական արտադրությունները դեպի արտաքին շուկաներ, դրանց համար ռեսուրսներ հատկացնելով ավելին, քան ներքին շուկայի պահանջարկի բավարարմանն ուղղված արտադրություններին: Ընդսմին, արտահանման խթանման քաղաքականությունը տարածվում է ամբողջ շղթայի վրա՝ սկսած արտերկրի շուկաների պահանջարկի ուսումնասիրությունից և վերջացրած արտահանվող ապրանքների երաշխիքային սպասարկման կազմակերպման աջակցությունը:

Արտահանման խթանման մեթոդները սովորաբար կիրառվում են ավելի համալիր ձևով: Դրանք ներառում են արտահանողներին աջակցման արժութային, վարկային, ֆինանսական, կազմակերպչական ձևեր, ներառյալ գովազդը, տեղեկատվության տրամադրումը և մասնագետների պատրաստումը: Արտահանման խթանման համար օգտագործվում է նաև կապիտալի արտահոսքն իր տարբեր ձևերով: Գաղտնիք չէ նաև, որ վճարային պասիվ հաշվեկշռի դեպքում ներմուծման կարգավորումն իրականացվում է դրա կրճատման և ներմուծման փոխարինման նպատակով հայրենական ապրանքների և ծառայությունների ծավալների ավելացմամբ:

Առևտրային հաշվեկշռի կարգավորման նպատակով գնալով ավելի լայն կիրառում են ստանում ոչ սակագնային արգելքներն ու սահմանափակումները, ինչպես նաև առաքող երկրների հետ համաձայնություններն՝ այդ երկրներից արտահանման կամավոր սահմանափակման վերաբերյալ: Մասնավորապես նման մեթոդներ կիրառվել են ԱՄՆ-ի կողմից՝ Ճապոնիայի, Իսպանիայի, Մեքսիկայի և Բրազիլիայի հետ առևտրում՝ անցյալ դարի 80-ական թվականներին:

Ինչ վերաբերում է վճարային հաշվեկշռի «չերևացող» գործարքների գծով եկամուտների և վճարումների կարգավորմանն, ապա այդ նպատակով օգտագործվում են հետևյալ միջոցները.

- տվյալ երկրի զբոսաշրջիկների կողմից արժույթի արտահոսքի սահմանափակումներ,
- արտերկրից զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման գործում պետության անմիջական կամ անուղղակի մասնակցություն,
- տրանսպորտային ծախսերի կրճատման նպատակով պետական բյուջեի ծախսերի հաշվին նավերի ձեռքբերմանը և օգտագործմանն աջակցություն,
- պատենտների, լիցենզիաների, գիտատեխնիկական գործունեության արդյունքների առևտրից ստացվող մուտքերի ավելացման նպատակով գիտահետազոտական աշխատանքների գծով պետական ծախսերի ավելացում,
- աշխատուժի միգրացիայի կարգավորում:

Վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատումն, այնուամենայնիվ, հաճախակի հակասության մեջ է մտնում տնտեսական քաղաքականության այնպիսի նպատակների հետ, ինչպիսիք

են՝ տնտեսական աճի և զբաղվածության ապահովման խթանումը, որոնք պահանջում են տնտեսական ակտիվության, բյուջետային ծախսերի ավելացում և տոկոսադրույքների կրճատում: Վճարային հաշվեկշռի կարգավորման արդյունավետ միջոց է նաև ռազմական ծախսերի կրճատումը: Վերջինս, մասնավորապես, մինչև 2015թ. ԱՄՆ-ի վարչակազմի հռչակած նպատակներից մեկն է և հիմնական արդյունքը, որը ձեռք է բերվել ֆինանսական դեֆոլտից խուսափելու շուրջ բանակցությունների ժամանակ: Ընդսմին, ԱՄՆ-ի իշխանություններին չհաջողվեց խուսափել իր պետական պարտատոմսերի վարկանիշի անկումից, որն արձանագրեց նախ Standard and Poor's, ապա նաև՝ միջազգային այլ վարկանիշային գնահատման ընկերություններ, որն իր հերթին, բացասական ազդեցություն կթողնի ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի վրա:

Այսպիսով, երկրի վճարային հաշվեկշիռը պատկերացում է տալիս տվյալ երկրի՝ համաշխարհային տնտեսությանը մասնակցության, նրա միջազգային տնտեսական կապերի կառուցվածքի, մասշտաբների և բնույթի մասին: Վճարային հաշվեկշիռը հաշվապահական տեսանկյունից միշտ գտնվում է հաշվեկշռված վիճակում, սակայն դրա առանձին բաժինները կարող են ունենալ դրական կամ բացասական հաշվեմնացորդ, որոնք ընդհանուր հանրագումարում արտահայտվում են հաշվեկշռված տեսքով: Բացի այդ, փորձը վկայում է, որ վճարային հաշվեկշռի վրա դրական կամ բացասական ազդեցություն են թողնում բազմաթիվ գործոններ, որոնց կարգավորման համար գոյություն ունեն հատուկ մեթոդներ և կոնկրետ ուղղություններ:

Հայաստանի Հանրապետությունը, բնութագրվելով որպես փոքր երկիր և ունենալով արտադրական արդյունքների սպառման համար ոչ բավարար տարողունակ ազգային շուկա, տնտեսական դինամիկ աճ ապահովելու համար պետք է ուղիներ փնտրի դուրս գալու միջազգային շուկա՝ զարգացնելով իր արտաքին առևտուրը: Սակայն, ՀՀ միջազգային առևտրի զարգացմանը դեռևս զգալի խոչընդոտում է երկրի շրջափակված լինելը, որի արդյունքում բարձրանում են ապրանքների տրանսպորտային ծախսերը, որն էլ բացասաբար է անդրադառնում արտաքին առևտրի իրականացման և զարգացման վրա: Հարկ է նշել, որ չնայած Հայաստանի և Թուրքիայի միջև առկա քաղաքական ոչ կայուն վիճակին, Հայաստանը ներկայումս ունի բավական սերտ առևտրատնտեսական կապեր Թուրքիայի հետ, որը կարող է ավելի զարգանալ, եթե երկու երկրների միջև լուծվեն քաղաքական անհամաձայնությունները:

Ներկայիս պայմաններում անհրաժեշտ է բացահայտել ՀՀ արտաքին առևտրի զարգացման ուղիները: Արտաքին առևտրի զարգացումը չպետք է դիտարկվի որպես ինքնաբերաբար ի հայտ եկող երևույթ, այլ այն պետք է համակարգվի և ուղղորդվի այնպես, որպեսզի խթանվի ՀՀ տնտեսական զարգացման ողջ գործընթացը, և այս իրավիճակում առանձնահատուկ կերպով կարևորվում է պետության դերը:

Հարկ է նշել, որ չնայած 2012թ. ակնկալվում էր արտահանման աճի տեմպերի գերազանցում՝ ներմուծման աճի տեմպերի նկատմամբ, այդուհանդերձ առևտրային հաշվի պակասուրդը մնում է անցանկալի մակարդակի վրա[1]: Այսինքն՝ արտահանման աճի տեմպի պատճառ եղել են ոչ թե հիմնադրված նոր ձեռնարկություն կամ կատարված որևէ դրական քայլ, այլ միջազգային բարենպաստ պայմանները:

Միայն հանքարդյունաբերության արտադրանքն ապահովում է ՀՀ ամբողջ արտահանման կեսից ավելին: Այդ պատճառով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ բարելավելու ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, մասնավորապես ընդլայնել ապրանքային կառուցվածքը: Ներմուծման ծավալների անընդհատ մեծացման և արտահանման նման սահմանափակ կառուցվածքի պայմաններում անհրաժեշտ է խթանել արտահանման ներուժ ունեցող ձեռնարկությունների և ներմուծումը փոխարինող արտադրությունների զարգացումը, ինչը, մասնավորապես ամրագրված է ՀՀ կառավարության գործունեության ծրագրում[2]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ի վճարային հաշվեկշռին բնորոշ է խրոնիկ բացասական հաշվեմնացորդը գլխավորապես առևտրային հաշվեկշռի գծով, խիստ կարևորվում է տարբեր միջոցառումների ձեռնարկումն առևտրային հաշվեկշռի կարգավորման նպատակով:

[1] www.cba.am.
[2] ՀՀ կառավարության ծրագիրը, Երևան, 2012թ., հունիսի 18:

Հայաստանում ստեղծված նոր ձեռնարկությունները լուրջ խնդիրների են հանդիպում օտարերկրյա բազմամյա փորձ ունեցող ձեռնարկությունների կողմից թողարկված ապրանքների հետ մրցակցության պայմաններում: Այս առումով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել չափավոր և ժամանակավոր պետական հովանավորչական քաղաքականություն, քանի որ ժամանակի ընթացքում արտադրության ծախսերը կարող են նվազել և դառնալ հարաբերականորեն ավելի մրցունակ, ինչին կարող է նպաստել նաև ներկայումս տեղ գտած դրամի արժեզրկումը: Նոր ձևավորվող ձեռնարկությունների հովանավորչությունը կարող է արտահայտվել նաև ներմուծումը փոխարինող նպատակաուղղված առևտրային քաղաքականության գործիքներից մեկը՝ առևտրային հաշվեկշիռը կարգավորելու նպատակով:

ՀՀ առևտրային հաշվեկշռի կարգավորման գործում անհրաժեշտ են ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումները: Հարկ է նշել, որ կապիտալի և ֆինանսական շարժի հաշվում շատ փոքր տեսակարար կշիռ են կազմում պորտֆելային ներդրումները, ինչը պայմանավորված է նաև Հայաստանում արժեթղթերի շուկայի թերզարգացածությամբ: Կապիտալի ներհոսքը հիմնականում իրականացվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով: ՕՈՒՆ-երի արդյունքն առավելագույն դարձնելու համար անհրաժեշտ է դրանք նպատակաուղղված վերաբաշխել արտահանման ներուժ ունեցող տնտեսական գործունեության ոլորտներում, որոնցից են թեթև արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, հանքահումքային արդյունաբերությունը, սննդի և գյուղատնտեսական վերամշակող արդյունաբերությունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Ներկայումս գոյություն ունեցող տնտեսական և սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծումը պահանջում է տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման համալիր մոտեցում, որն, իր հերթին կարող է նպաստել երկրի վճարային հաշվեկշռի արդյունավետ կարգավորմանը և ազգային տնտեսության զարգացմանը: Անկախության տարիներին աստիճանաբար արմատավորվող տնտեսության կառավարման արդյունավետ քաղաքականությունը նպատակաուղղվում է ինչպես ներքին շուկայի խնդիրների լուծմանն ու հեռանկարային ծրագրերի մշակմանը, այնպես էլ արտաքին տնտեսական կապերի կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր օղակներում ժողովրդավարական սկզբունքների արմատավորմանը և զարգացմանը: Այս առումով կարևոր է հաշվի առնել, որ ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում, գոյություն ունեն ոչ միայն ընդհանուր բնույթ կրող հիմնախնդիրներ, որոնք հատուկ են տվյալ երկրին, այլև արտաքին վճարային յուրահատուկ հիմնահարցեր, որոնց հանդեպ անհրաժեշտ է որդեգրել տեղական պայմանների համար կիրառելի մոտեցումներ և սկզբունքներ:

Բանալի բառեր. *տնտեսական քաղաքականություն, վճարային հաշվեկշիռ, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ, հարկային վարչարարություն, մաքսային քաղաքականություն, ինովացիա, մրցունակություն, օտարերկրյա ներդրումներ:*

ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ И ПЕРСПЕКТИВЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ПЛАТЕЖНОГО БАЛАНСА

ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., профессор*
директор Института экономики им. М.Котаняна НАН РА, член-корр. НАН РА

ДАВИТ ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н.*
старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Решение существующих в настоящее время многочисленных социально- экономических проблем требует комплексного подхода к разработке и реализации экономической политики, что, в свою очередь, может способствовать эффективному регулированию платежного баланса страны и развитию национальной экономики. Эффективная политика управления экономикой, постепенно реализующаяся в годы независимости, нацелена как на решение проблем внутреннего рынка и разработку перспективных программ, так и на управление внешнеэкономическими связями, а также внедрение и развитие демократических принципов во все звенья местного самоуправления. В связи с этим важно иметь в виду, что в процессе социально-экономического развития любой страны существуют проблемы не только общего характера, но и особые внешние платежные проблемы, являющиеся специфическими для данной страны, по которым необходимо принимать приемлемые для местных условий подходы и принципы.

***Ключевые слова**: экономическая политика, платежный баланс, экспорт, импорт, торговый баланс, налоговое администрирование, таможенная политика, инновации, конкурентоспособность, иностранные инвестиции.*

ECONOMIC POLICY PRIORITIES AND THE PROSPECTS OF IMPROVING THE STATE REGULATION OF THE BALANCE OF PAYMENTS

VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Director, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia

DAVIT VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Addressing many of currently existing economic and social issues requires a complex approach to the design and implementation of the economic policy that, in its turn could contribute to the effective regulation of the balance of payments the development of the national economy. Since the years of independence the effective policy of managing the economy being shaped has been aimed at addressing the domestic market issues and designing prospective projects, managing foreign economic relations, and at introducing democratic principles and strengthening democracy at all levels of the local self-governance. Therefore, one must take into account the fact that in the process of socioeconomic development of any nation, not only general issues could be addressed that are specific to a given nation, but also issues of external payments could be addressed by adopting approaches and principles that are unique to the local settings.

***Keywords:** Economic policy, balance of payments, exports, imports, trade balance, tax administration, customs policy, innovation, competitiveness, foreign investments.*

ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսությունում վերջին տարիներին նկատվող զարգացումները որոշակիորեն նպաստում են տարբեր երկրների արտաքին տնտեսական կապերի զարգացմանը, որոնք ուղեկցվում են այդ երկրների միջև ապրանքների, ծառայությունների, մտավոր գործունեության օբյեկտների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ակտիվացմամբ:

Որպես կանոն, պետությունն իր անմիջական մասնակցությունն է ունենում արտաքին տնտեսական կապերի զարգացմանը: Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորման համակարգը ձևավորելիս հաշվի են առնվում տնտեսական, սոցիալ-քաղաքական, աշխարհագրական, պատմական և մի շարք այլ գործոններ:

Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորման ժամանակակից համակարգերի հիմնական առանձնահատկություններից է դրանց համապարփակ նորմատիվաիրավական ապահովվածությունը: Գործուն օրենսդրական բազան երաշխավորում է պետական կարգավորման իրավական կայունություն: Ընդունվում են հատուկ օրենքներ, օրենսդրական ակտեր, որտեղ նշվում են գործադիր իշխանության մարմինների իրավասության շրջանակները, արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Սովորաբար, երկրի արտաքին առևտրային կապերը ձևավորվում են ելնելով տվյալ երկրի տնտեսական կայունացման ու զարգացման պահանջներից: Սովորաբար փոքր երկրներն իրենց առևտրային կապերը չեն կառուցում այլ երկրներում տնտեսական և քաղաքական ազդեցություն ունենալու համար, այլ ցանկանում են ստեղծել փոխադարձ շահերի վրա ձևավորվող հարաբերություններ:

Թեև շուկայական տնտեսությանն անցման փուլում նախկին խորհրդային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում, արտաքին առևտրի պետական մենաշնորհը վերացավ, այնուամենայնիվ դրա պետական կարգավորումը, հատկապես արտահանման պետական խթանման առումով, օբյեկտիվ անհրաժեշտություն է, քանի որ ձեռնարկությունների մեծ մասը չունի ինքնուրույն արտահանման փորձ և զգալի դժվարությունների է հանդիպում այդ ոլորտում:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման հիմնական նպատակները ներառում են երկրի տնտեսական անկախության, տնտեսական անվտանգության ապահովումը, տնտեսության զարգացման խթանումը, տեղական ապրանքների ու ծառայությունների մրցունակության բարձրացման աջակցությունը, ինչպես նաև համաշխարհային տնտեսությանն ազգային տնտեսության ինտեգրման արդյունավետ պայմանների ապահովումը:

Տնտեսական ինքնիշխանությունը նշանակում է պետական իշխանության ամբողջական հաստատում երկրի ներսում և պետության մասնակցությունը միջազգային տնտեսական հարաբերություններում:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման միջոցով ապահովվում է երկրի տնտեսական անվտանգությունը՝ ստեղծելով այնպիսի տնտեսական պայմաններ, որոնք երաշխավորում են սոցիալական, քաղաքական և պաշտպանական զարգացման բավարար մակարդակ և ներքին ու արտաքին հնարավոր սպառնալիքներից տնտեսական շահերի պաշտպանություն: Արտադրության կրճատման, ներդրումային և նորամուծական ակտիվության նվազման, գիտատեխնիկական ներուժի կորստի, պետական բյուջեի եկամտային մասի կրճատման, պետական պարտքի ավելացման և վճարային հաշվեկշռի վատթարացման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամային իրավիճակը լուրջ սպառնալիք է երկրի տնտեսական անվտանգությանը:

Պետության տնտեսական անվտանգությունն ուղղակիորեն կապված է վճարային հաշվեկշռի հետ: Վճարային հաշվեկշռի հավասարակշռման նպատակով պետությունը կարող է որոշում ընդունել ներմուծումը ժամանակավորապես սահմանափակելու մասին: Պետությունը կարող է երկրի տնտեսական անվտանգությունն ապահովել նաև այն ապրանքների արտա-

հանումը սահմանափակելու միջոցով, որոնց պահանջարկը մեծ է՝ ներքին շուկայում գոյություն ունի պակասուրդ:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման խնդիրներից է ներմուծման ապրանքային կառուցվածքի օպտիմալացումը: Դրան հասնելու համար պետությունը, որպես կանոն, իջեցնում կամ ամբողջությամբ վերացնում է երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ ապրանքների ներմուծման մաքսատուրքերը և, միաժամանակ, բարձր մաքսատուրքեր է սահմանում հայրենական արտադրանքի հետ մրցակցող ապրանքների վրա:

Ազգային տնտեսության զարգացումը խթանելու կարևոր միջոց է օտարերկրյա մրցակցության ոչ ցանկալի ներգործությունից դրա պաշտպանության ապահովումը: Միջազգային շուկայում գոյություն ունեն համանման ապրանքներ մատակարարողներ, որոնցից շատերն իրենց արտադրանքի տեխնիկական պարամետրերով և արտադրության վրա կատարված ծախսերով զգալիորեն գերազանցում են հայրենական արտադրողներին: Այդ մասին է վկայում արտաքին առևտրային մրցակցության բարձր մակարդակը և գնային խտրականության առկայությունը ներքին և արտաքին շուկաներում: Տնտեսության զարգացման համար առավել նպատակահարմար է համահարթել գները, այլ ոչ թե կիրառել արգելակիչ միջոցներ:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման խնդիրներից է նաև հայրենական արտադրության մրցունակության բարձրացումը, որն ապահովելու համար պետությունը խթանում է նոր տեխնոլոգիաների ստեղծումը և յուրացումը:

Արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը պետք է խթանի համաշխարհային տնտեսության հետ երկրի տնտեսական կապերի ակտիվացումը: Այդ օրենսդրության զարգացման հիմնական ուղղվածությունը նրա ներդաշնակությունն ու միասնականությունն է՝ ընդունված միջազգային նորմերին համապատասխան: Միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացում պետությունն այլ պետությունների հետ ստեղծում է մաքսային միություններ, ազատ առևտրի գոտիներ, ստորագրում է համաձայնագրեր առևտրատնտեսական հարցերի կարգավորման, մաքսային ոլորտում համագործակցության ապահովման մասին:

Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորումն իրականացվում է որոշակի սկզբունքներով, որոնք ելակետային կազմակերպանորմատիվային հիմնադրույթներ են: Դրանք ապահովում են արտաքին առևտրային գործունեությունը կարգավորող օրենսդրության և քաղաքականության փոխկապվածությունը: Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն հետևյալ սկզբունքները.

1. *Երկրի ընդհանուր արտաքին քաղաքականության և արտաքին առևտրային քաղաքականության ներդաշնակությունը:* Արտաքին առևտրային քաղաքականությունը բխում է պետության արտաքին քաղաքականության նպատակներից ու պահանջներից և դուրս չի գալիս դրա սահմաններից: Այս հանգամանքով պայմանավորված՝ արտաքին առևտրի ոլորտում կայացվող կոնկրետ որոշումները համաձայնեցվում են արտաքին քաղաքականության ընդհանուր նպատակների հետ: Հնարավոր է, որ արտաքին քաղաքականության շահերը երկրորդ պլան մղեն արտաքին առևտրային որևէ գործարքի տնտեսական արդյունավետության նախադրյալները, օրինակ՝ որևէ երկրի հետ հարաբերություններում պետությունը կիրառելով միջազգային պատժամիջոցներ, կարող է դադարեցնել արտաքին առևտրային հարաբերությունները տվյալ երկրի հետ, որքան էլ այդ առևտրային գործարքը շահավետ լինի:

2. *Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման և դրա իրականացման վերահսկողության համակարգերի միասնականությունը:* Վերահսկողությունն արտաքին առևտրի պետական կարգավորման կարևոր գործառույթներից է, որն ապահովում է որոշումների կատարման և ստացվող արդյունքների ստույգությունը: Արտաքին առևտրային գործունեության վերահսկողությունն իրականացվում է երկրի գործադիր իշխանության մարմինների կողմից:

3. *Արտահանման վերահսկողության քաղաքականության միասնականությունը:* Արտահանման վերահսկողության համակարգը միջոցառումների ամբողջություն է, որոնք իրականացվում են գործադիր իշխանության մարմինների կողմից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, զինամթերքի և ռազմական տեխնիկայի, առանձին տեսակի հումքի, նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների և գիտատեխնիկական տեղեկատվության արտահանման նկատմամբ: Այդպի-

սի քաղաքականության նպատակն է ազգային անվտանգության, քաղաքական, տնտեսական և ռազմական շահերի ապահովումը, ինչպես նաև զանգվածային ոչնչացման և այլ վտանգավոր զինամթերքի արտահանումը խոչընդոտելու վերաբերյալ պետության միջազգային պարտավորությունների կատարումը:

4. *Պետության մաքսային տարածքի միասնականությունը:* Մաքսային տարածքն այն վայրն է, որտեղ գործում է տվյալ պետության մաքսային օրենսդրությունը: Մաքսաիրավական կարգավորման համար կիրառվում է մաքսային սահման հասկացությունը, որն իրենից ներկայացնում է այն եզրերը, որոնք սահմանափակում են մաքսային տարածքը: Մաքսային սահմանն ընդգծում է տվյալ պետության մաքսային օրենսդրության գործողության տարածական սահմանները և առանձնացնում է մաքսային տարածքը մեկ այլ պետության մաքսային տարածքից: Այլ կերպ ասած, մաքսային տարածքը սահմանում է պետության մաքսային ինքնուրույն գործունեության ոլորտը: Մաքսային տարածքի միասնականության սկզբունքն ուղղված է արտաքին առևտրի և մաքսային անջատողականության առաջացման վերացմանը: Այն բացառում է ներքին մաքսային սահմանների առաջացման հնարավորությունը:

5. *Արտաքին առևտրային գործունեության պետական կարգավորման տնտեսական միջոցների առաջնայնությունը:* Արտաքին առևտրի պետական քաղաքականությունն իրականացվում է տնտեսական և վարչական մեթոդների կիրառմամբ՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կարգավորելով արտաքին առևտրային գործունեությունը: Դրա համար պետությունը կիրառում է տարբեր գործիքներ՝ մաքսային սակագներ, ոչ սակագնային գործիքներ, ֆինանսաարժութային կարգավորում, հակադեմպինգային և փոխհատուցման տուրքեր, արտաքին առևտրում առանձին ապրանքների գծով պետական մենաշնորհ, տեխնիկական արգելքներ, արտոնագրում և քվոտավորում:

Զարգացման ներկա փուլում պետությունը ձգտում է արտաքին առևտրային գործունեությունը կարգավորել ոչ թե վարչական արգելքներով և սահմանափակումներով, այլ ստեղծելով բարենպաստ տնտեսական պայմաններ՝ արտաքին առևտրային գործունեություն իրականացնելու համար: Վարչական միջոցները կարող են օգտագործվել այն դեպքում, երբ տնտեսական միջոցներով անհնար է հասնել պետության առջև դրված նպատակներին:

6. *Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների հավասարությունը և նրանց նկատմամբ խտրականության կիրառման բացառումը:* Այս սկզբունքը նեղ իմաստով կապված է սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքի և մասնավոր, պետական, համայնքային և սեփականության այլ ձևերի հավասարության ճանաչման ու պաշտպանության հետ: Հարկ է նշել, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հավասարության՝ սահմանադրությամբ ամրագրված սկզբունքը չի բացառում առանձին կատեգորիաների անձանց հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների առկայությունը: Պետությունն արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև խտրականություն չի դնում:

7. *Արտաքին առևտրային գործունեության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը պետության կողմից:* Պետությունն ապահովում է իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Եթե արտաքին առևտրային գործունեության մասնակիցները տուժել են պետության կիրառած միջազգային պատժամիջոցներից, ապա նրանք իրավունք ունեն իրենց կրած վնասները փոխհատուցել պետական բյուջեի միջոցների հաշվին՝ դատական կարգով: Եթե տվյալ երկրի քաղաքացիները տուժել են այլ պետության գործողություններից, ապա նրանց տնտեսական շահերը պաշտպանելու համար պետությունը կարող է իրականացնել պատասխան միջոցառումներ: Արտաքին առևտրի զարգացման տարեկան ծրագրերի հատուկ բաժինը պետք է ընդգրկի տվյալ պետության քաղաքացիների հանդեպ խտրականության և պարտավորությունների խախտման դեպքերի, ինչպես նաև ընդունված պատասխան միջոցառումների ցանկը:

8. *Արտաքին առևտրային գործունեությանը պետության չարդարացված միջամտության բացառումը, որն ամբողջությամբ վերցրած դրա մասնակիցներին և տնտեսությանը պատճառում է վնասներ:* ՀՀ սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ազատորեն օգտագործել իր ունակությունները՝ ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ

տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Սա նշանակում է, որ պետության կողմից ընդունված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի շրջանակներում արտաքին առևտրային գործունեության մասնակիցներն ունեն գործունեության լրիվ ազատություն: Արտաքին առևտրի ոլորտում ծագած հարաբերությունների կարգավորման համար կիրառվում են այնպիսի սկզբունքներ, որոնք ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Դրանք են՝ քաղաքացիական իրավահարաբերության սուբյեկտների իրավահավասարությունը, դրանց գործերին միջամտելու անթույլատրելիությունը, սեփականության անձեռնմխելիությունը, պայմանագրի ազատությունը, իրավունքների անարգել կատարման անհրաժեշտությունը, խախտված իրավունքների վերականգնման ապահովումը, նրանց դատական պաշտպանությունը: Փաստորեն, պետության միջամտության հնարավորությունը, որպես այդպիսին, չի բացառվում: Վերոնշյալ սկզբունքը վերաբերում է պետության չարդարացված միջամտության դեպքերի բացառմանը:

Համաշխարհային շուկայում տարբեր երկրներ զբաղեցնում են տարբեր դիրքեր: Իր շահերի պաշտպանության համար յուրաքանչյուր երկիր այդ շուկայում վարում է ինքնուրույն արտաքին առևտրային քաղաքականություն, որն այլ պետությունների հետ առևտրային հարաբերություններում պետության կողմից իրականացվող նպատակաուղղված միջոցառումների ամբողջությունն է: Այդ քաղաքականության հիմնական նպատակներն են՝ տվյալ երկիրն աշխատանքի միջազգային բաժանման գործընթացի մեջ ընդգրկելը, արտահանման և ներմուծման հարաբերակցության բարելավումը և արտաքին առևտրի կառուցվածքի դրական փոփոխությունը: Արտաքին առևտրային քաղաքականության ուղղությունները երկուսն են՝ *ազատ առևտուր և հովանավորչություն:*

Ազատ առևտրի քաղաքականություն իրականացնելիս արտաքին առևտրի վրա պետության անմիջական միջամտությունը վերանում է, պետությունը կատարում է միայն կարգավորման գործառույթ: Սա չի նշանակում, որ պետությունն ընդհանրապես հրաժարվում է արտաքին տնտեսական գործունեության վրա ներգործելուց: Պետությունն այլ երկրների հետ պայմանագրեր կնքելու միջոցով իր երկրի տնտեսվարող սուբյեկտներին ապահովում է հնարավոր առավելագույն արտոնություններ: Այսպիսի քաղաքականությունը նպաստում է նաև երկրի տնտեսական բարեկեցության ավելացմանը, կայուն քաղաքական մթնոլորտի ձևավորմանը, որի արդյունքում պետությունները դառնում են ավելի փոխկապված, և պատերազմների վտանգն էապես նվազում է: Սակայն գործնականում այս քաղաքականությունը երբևէ ոչ մի երկրում լիարժեք չի կիրառվել:

Իր զարգացման և կատարելագործման ճանապարհին է անցել նաև արտաքին առևտրային քաղաքականության մյուս ուղղությունը՝ հովանավորչությունը, որով ապահովվում է ազգային տնտեսության պաշտպանությունը օտարերկրյա մրցակցությունից: Այս դեպքում շուկայի սուբյեկտների ազատ գործողությունները բացառվում են: Համաշխարհային շուկայում առանձին երկրների տնտեսական ներուժի ու մրցունակության տարբերության պատճառով տնտեսվարող սուբյեկտների ազատ գործողությունները կարող են ձեռնտու չլինել զարգացող երկրներին: Հովանավորչությունը կարող է նպաստել երկրի տնտեսության նոր ճյուղերի զարգացմանը, արտադրության խթանմանը, զբաղվածության և պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, երկրի տնտեսական անվտանգության ապահովմանը, հատկապես կարճ ժամկետում: Սակայն այս քաղաքականության երկարաժամկետ կիրառումը տնտեսության մեջ նույնպես առաջացնում է լճացում, քանի որ արտադրությունը օտարերկրյա մրցակցությունից զերծ պահելու դեպքում նվազում է տեղական արտադրողների շահագրգռվածությունը՝ բարձրացնելու արտադրանքի տեխնիկական մակարդակը և արտադրության արդյունավետությունը: Բացի այդ, կարող են սրվել միջպետական հակասությունները և կրճատվել արտահանման ծավալները:

Հաճախ ազատ առևտրի և հովանավորչության քաղաքականության տարրերը կիրառվում են միաժամանակ՝ կախված տվյալ երկրի տնտեսական զարգացման մակարդակից և տնտեսության առջև դրված խնդիրներից:

Արտաքին առևտրի պետական կարգավորման նպատակներն ու սկզբունքները հասկանալու համար անհրաժեշտ է պարզաբանել նաև արտաքին առևտրի հիմնական տեսությունները և դրանց կիրառման հնարավորությունները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Ներկայումս երկրի տնտեսական քաղաքականության էական բաղադրիչը համարվող վճարային հաշվեկշռի կարգավորման խնդիրը մանրակրկիտ և համակարգված հետազոտությունների դեռ չի ենթարկվել: Ավելին, անկախության երկու տասնամյակների ընթացքում վճարային հաշվեկշռի բացասական մնացորդը հիմնականում աճի միտում է դրսևորել, ինչը լուրջ խոչընդոտ կարող է դառնալ հանրապետության կայուն զարգացման համար: Հիշատակված խնդիրների լուծման անհրաժեշտությամբ և ուսումնասիրվածության ոչ պատշաճ մակարդակով էլ պայմանավորված է ներկայացվող հոդվածի բովանդակությունը:

Բանալի բառեր. *շուկայական տնտեսություն, արտաքին առևտուր, պետական կարգավորում, տնտեսական անվտանգություն, ներմուծման սահմանափակություն, համաշխարհային տնտեսություն, վճարային հաշվեկշիռ, տնտեսական հարաբերություններ, մաքսային սակագին, մաքսային տարածք, հովանավորչական քաղաքականություն:*

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ТЕКУЩЕГО СЧЕТА

ДАВИТ ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н.*
старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В настоящее время проблема регулирования текущего счета платежного баланса, являющегося существенным компонентом экономической политики страны, пока еще не подверглась тщательному и систематизированному исследованию.Более того, за два десятилетия независимости проявилась тенденция роста отрицательного сальдо платежного баланса, что может стать серьезным препятствием для стабильного развития экономики республики. Необходимостью решения упомянутых проблем и недостаточным уровнем их исследования обусловлено содержание представленной статьи.

Ключевые слова: *рыночная экономика, внешняя торговля, государственное регулирование, экономическая безопасность, ограничения на импорт, мировая экономика, платежный баланс, экономические отношения, таможенный тариф, таможенная территория, протекционистская политика.*

ISSUES OF CURRENT ACCOUNT STATE REGULATION

DAVIT VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics)*

Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Currently, the issues of regulating the current account balance, one of the main components of the economic policy, haven’t been yet well studies. Moreover, during two decades of independence, the deficit of the current account was growing, which could be a serious impediment to the sustainable development in the Republic. The article attempts to fill the gap, by proposing measures and steps to address these issues and carrying out a comprehensive study.

Keywords*: Market economy, foreign trade, government regulation, economic security, import restrictions, global economy, balance of payments, economic relations, customs tariffs, customs territory, protectionism policy.*

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ*
«Ջեներալ Ստանդարդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի առաջին ավագ մենեջեր

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Տնտեսական կայուն զարգացման և տնտեսական համակարգի կառուցվածքի արդիականացման գործում չափազանց մեծ է ձեռնարկատիրական գործունեության դերակատարումը: Զարգացած երկրները՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության շնորհիվ հասել են տնտեսության դիվերսիֆիկացման բարձր մակարդակի և զարգացման կայուն տեմպերի: Դրանում, անշուշտ, սկզբունքային նշանակություն ունեն տվյալ երկրներում ձևավորված հարկային համակարգերը և իրականացվող հարկային քաղաքականությունները:

Ձեռնարկատիրական գործունեության համակարգում զգալի է փոքր և միջին ձեռնարկությունների դերը, որոնք մեծապես նպաստում են ազգաբնակչության զբաղվածության ապահովմանը, նրանց կենսամակարդակի բարելավմանը, հասարակության միջին խավի ձևավորմանը, ինչպես նաև ՀՆԱ-ի զգալի մասի ապահովմանը: Այդ իսկ պատճառով, Հայաստանի Հանրապետության ներկայիս տնտեսական պայմաններում հրատապ խնդիր է փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության բարելավումը և, հատկապես, նրանց համար բարենպաստ հարկային ռեժիմների ապահովումը: Վերջինս, ակնհայտորեն, կնպաստի նրանց գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների հաղթահարմանը:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման և միջազգային ու տարածաշրջանային շուկաներին ինտեգրման պայմաններում ՀՀ փոքր և միջին ընկերությունների ներդրումային ռազմավարությունների ձևավորման և կենսագործման ոլորտում առկա հիմնախնդիրները կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

- ֆինանսական միջոցների բաշխման խնդիրներ՝ պայմանավորված հնամաշ տեխնոլոգիաներով և սարքավորումներով,
- ֆինանսական միջոցների ներգրավման խնդիրներ՝ կապված արտադրության ծախսերի աճի, կապիտալ ներդրումների անբավարարության, շրջանառու կապիտալի փոքր ծավալի և վարկավորման անբարենպաստ պայմանների հետ,
- խնդիրներ՝ կապված ֆինանսական միջոցների օպտիմալացման և ապահովագրական պահուստների ստեղծման հետ,
- դրամական միջոցների հավաքագրման խնդիրներ՝ կապված գործընկեր-կազմակերպություններում հաճախակի ծագող վճարունակության դժվարությունների, պահանջարկի ցածր մակարդակի, բարձր մրցակցության հետ:

Վերոհիշյալ խնդիրների լուծման նպատակով կիրառելի գործիքների շարքում կարելի է նշել օվերդրաֆտը, բանկային վարկը, լիզինգը և ֆակտորինգը: Միաժամանակ, հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ ներկայացված գործիքներից ֆակտորինգը, լիզինգը և երաշխիքները դեռևս լայն կիրառում չունեն ՀՀ ֆինանսաբանկային ծառայությունների համակարգում: Որպես խնդրի լուծում՝ կարելի է դիտարկել միջազգային լիզինգային ընկերությունների, հիմնադրամների և ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցությունը, որի արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող ծառայությունների արժեքը և տրամադրել լրացուցիչ երաշխիքներ՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսական և միջբանկային վարկավորման շուկաներում դրամական միջոցների ներգրավման առումով միջազգային կազմակերպությունների համեմատական առավելությունները:

Մեր հանրապետությունում ՓՄՁ-ների զարգացման խոչընդոտների շարքին կարելի է դասել

նաև գործարար ներդրողների միջոցով ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման բացակայությունը: Այս իրավիճակը կարելի է մասամբ բացատրել համապատասխան իրավահարաբերությունները կարգավորող փոքր ու միջին ընկերությունների և գործարար ներդրողների շահերը պաշտպանող օրենսդրական հենքի բացակայությամբ: Այս համատեքստում պետք է արձանագրել, որ ֆինանսաբանկային հատվածի և ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչների փոխհարաբերությունների պայմաններն ամբողջությամբ չեն արտացոլվել առկա օրենսդրական ակտերում, բացակայում են վենչուրային հիմնադրամի, ռիսկային կապիտալի և գործարար ներդրողի բնորոշումները: Թույլ է զարգացած նաև նորարար գործունեության ենթակառուցվածքը, որը կբավարարեր ընկերությունների, ինչպես նաև ներդրումային հիմնադրամների պահանջմունքները:

Վերը նշվածը ենթադրում է պետական և միջազգային ծրագրերի համակարգի միջոցով ֆինանսավարկային կազմակերպությունների ու հիմնադրամների կողմից ՓՄՁ-ներին տրամադրվող աջակցության համակողմանի ուսումնասիրություն: Իսկ այդ ծրագրերը նպատակաուղղված են ենթակառուցվածքների ձևավորմանն ու զարգացմանը, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցմանը, ՓՄՁ-ներին ֆինանսական միջոցներով ապահովմանը, վերլուծական հետազոտությունների իրականացմանը, մասնագետների և պետական ծառայողների վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, նորարարական ձեռնարկատիրության զարգացմանը և այլն:

Հայաստանի Հանրապետությունում միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությունը հիմնականում զարգանում է հետևյալ ուղղություններով.

- ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության կառավարման որակի բարելավում,
- գործող օրենսդրական դաշտի կատարելագործում, տնտեսվարող սուբյեկտների կայացման և ընդլայնման իրավական արգելքների վերացում՝ ՀՀ-ում նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորման նպատակով,
- Հայաստանի ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ընկերությունների ֆինանսավորման արգելքների նվազեցում, մատուցվող ֆինանսական ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովում:

Միաժամանակ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների գործունեության դրական փորձի հետ մեկտեղ առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել արտասահմանյան մասնագետների կողմից հայաստանյան գործարար միջավայրի յուրահատկությունների ու պայմանների տարրըմբռնումը, ծրագրերի իրագործման մեջ տեղական մասնագետների ներգրավվածության համեմատաբար ցածր մակարդակը, որոշ դեպքերում տեղական իշխանության ներկայացուցիչների կողմից փոխըմբռնման բացակայությունը: Առկա են նաև որոշ բացթողումներ միջազգային կառույցների գործունեության պետական կարգավորման ոլորտում:

Մյուս կողմից, փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակով միջազգային փորձի կիրառման համատեքստում անհրաժեշտ է ապահովել ոլորտի զարգացման պետական և միջազգային ծրագրերի կոորդինացումը՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման գերակա ուղղությունները:

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման առումով կարևոր նշանակություն ունի նաև ՓՄՁ-ների արտահանման ներուժի ընդլայնումը: Ներկայումս փոքր և միջին ընկերությունների կողմից արտահանման գործընթացն իրականացվում է մեծապես սեփական ուժերով: Այս պարագայում միջազգային շուկայում ընկերությունների արտադրանքի ինքնուրույն առաջմղման գործընթացի արդյունավետությունը չի կարող լինել բարձր: Ըստ այդմ, ՓՄՁ-ների արտահանման ծրագրերի աջակցության որոշ դրական օրինակները, որոնք հայաստանյան շուկայում իրագործվում են մասնագիտացված մարքեթինգային-խորհրդատվական ծառայությունների և նման

այլ կառույցների միջոցով, բացառություն պետք է համարել:

ՓՄՁ-ների արտահանման ներուժի զարգացման խոչընդոտներից են նաև արտաքին շուկայում հայրենական փոքր և միջին ընկերությունների ցածր մրցունակությունը, արտադրանքի առաջխաղացման մարքեթինգային աջակցության մեխանիզմների թույլ զարգացածությունը կամ բացակայությունը, ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը և արտահանման ներուժի ընդլայնմանն ուղղված պետական քաղաքականության բացակայությունը, այս ոլորտում իրականացվող տարբեր ծրագրերի միջև կոորդինացման ոչ արդյունավետ լինելը, տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության ցածր մակարդակը:

Հաշվի առնելով վերոհիշյալ գործոնները, ինչպես նաև հիմնվելով փոքր և միջին ձեռնարկությունների արտահանման ներուժի և ներդրումային գրավչության բարձրացման խնդիրների լուծման ոլորտում առկա համաշխարհային փորձի վրա՝ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան քայլեր ոլորտի ենթակառուցվածքային համակարգում ՓՄՁ-ների դերի գնահատման և նրանց համապատասխան վարկանիշի շնորհման մասնագիտացված հաստատության ստեղծման ուղղությամբ: Ընդ որում, արտահանման կողմնորոշմամբ և սոցիալական նշանակության նախագծեր իրականացնող ընկերությունների համար անհրաժեշտ է սահմանել պարտադիր վարկանիշավորման հստակ մեխանիզմ: Այս համատեքստում առավել կարևոր է պետության դերակատարումը՝ հաշվարկված վարկանիշերի ճանաչման և միջազգային ու տարածաշրջանային շուկաներում ծառայությունների մրցունակության ապահովման նպատակով վարկանիշային կազմակերպության ձևավորման առումով:

Վերադառնալով ՓՄՁ-ների ներդրումային ռազմավարության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներին՝ անհրաժեշտ է նաև անդրադառնալ այդ գործընթացներում ֆինանսական ու առևտրային կազմակերպությունների և պետության ակտիվ մասնակցության ապահովմանը՝ ձեռնարկելով հետևյալ քայլերը՝

- միջազգային լավագույն փորձի կիրառմամբ նորմատիվաիրավական դաշտի բարելավումը և սեղմ ժամկետներում հեռանկարային նախագծերի մշակման ու գնահատման մեծ կարողություններով օժտված վենչուրային հիմնադրամների և մասնավոր ներդրողների ընկերակցությունների ստեղծմանը,
- ձեռնարկատերերի վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի ներդրումը,
- փոքր ու միջին ձեռնարկատիրության ենթակառուցվածքի և ներդրումային ծրագրերի աջակցության առաջատար ինստիտուտների ձևավորումն ու զարգացումը, ներառյալ՝ հիմնադրման փուլում ընկերությունների ֆինանսավորման և գրավի երաշխիքային մեխանիզմները, ֆրանչայզինգի կիրառումը, արտահանման կողմնորոշում ունեցող ձեռնարկությունների վարկավորումը, նրանց կողմից գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, ընկերությունների նորարարական և արտահանման գործընթացներին առնչվող ընթացիկ արտադրական ծախսերի փոխհատուցումը,
- գործարքի հնարավոր մասնակիցների միջև վստահության ամրապնդումը, այդ թվում՝ ՓՄՁ-ների վարկանիշավորման համակարգի ներդրման միջոցով:

Ընդ որում, այս ոլորտում հիմնական շուկայական մեխանիզմ պետք է դիտարկվի, մի կողմից, արտահանման վարկավորումը, որը բանկերի և երաշխիքային կազմակերպությունների միջոցով կտրամադրվի պետության կողմից արտոնյալ վարկերի, միջազգային մրցույթներում մասնակցության երաշխիքների ճանապարհով՝ կոնկրետ արտահանման պայմանագրերի հիման վրա: Այս ամենի հետ մեկտեղ, աջակցության գործիքների համակարգը պետք է ներառի նաև առևտրային ու քաղաքական ռիսկերից արտահանման վարկերի պարտադիր ապահովագրությունը, ինչպես նաև արտաքին շուկաներ ներթափանցելու հետ կապված արտահանման գոր-

ծառնությունների ապահովագրումը: Մյուս կողմից, ՓՄՁ-ների աջակցության նպատակով շուկայական մեխանիզմներից հարկային խթաններն ու հարկային արտոնությունը բերում են վերջիններիս էքստենսիվ և ինտենսիվ զարգացումներին, որոնք ապահովում են պետական բյուջեում եկամուտներ, և կարևորը՝ չեն զսպում բարենպաստ բիզնես միջավայրի ձևավորմանը, հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների համար:

Հարկ է նշել, որ այդ ուղղությամբ թերևս առավել մեծ ներուժ ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունները, որոնց համար սկզբնական փուլերում առավել գրավիչ է գործարար ներդրողների ինստիտուտը: Դա բացատրվում է նրանով, որ ներդրողը, բացի ընկերության ներդրումային գործընթացներից, մասնակցում է նաև կառավարման գործընթացներին, ընդ որում, ներդրողի «պարգևավճարը» տվյալ ընկերության կապիտալի մի մասն է՝ ձևակերպված արժեթղթերի տեսքով: Այսպիսով, տվյալ ֆինանսավորման եղանակը վենչուրային ասոցիացիաների ծառայությունների համեմատ դառնում է ավելի էժան, քանի որ այս դեպքում վերանում է արտաքին խորհրդատուների ներգրավման անհրաժեշտությունը: Դա է պատճառը, որ EBAN-ի միջոցով ֆինանսավորվող միջին գործարարության ընկերությունների թիվը շուրջ 605-ով գերազանցում է EVCA-ի միջոցով ֆինանսավորվող ընկերությունների թվին[1]:

ԵՄ երկրներում ՓՄՁ-ների ներդրումային ռազմավարությունների մշակման և իրագործման փորձի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանում՝ նույն ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումների կիրառման առումով: Կարևոր հարցադրումներից է հանդիսանում նաև հարկային համակարգի վերլուծությունը, որն ազդում է գործարար ակտիվության, ՓՄՁ-ների զարգացման վրա: Վերլուծել ԵՄ երկրենրում հարկային համակարգերը նվիրատվությունների իրականացման դեպքում:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ հարցի շրջանակներում առաջ քաշված դրույթներն ու առաջարկությունները, կարող ենք եզրակացնել, որ ՓՄՁ-ների գնահատման և նրանց համապատասխան վարկանիշավորման համար կարևոր դերակատարում ունեն ոչ միայն հարկային խթաններն ու հարկային արտոնությունները, այլ նաև արտահանման վարկավորումը, ձեռնարկատիրության ենթակառուցվածքի և ներդրումային ծրագրերի աջակցության առաջատար ինստիտուտների ձևավորումը: Դրանք ապագայում կընձեռեն նոր հնարավորություններ ՀՀ-ում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրեր ձևավորելու հարցում, հատկապես փոքր և միջին հարկ վճարողների համար:

[1] Munck C., Saublens C., “Statistics compendium”, EBAN, 2006, pp. 3-4.

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆ

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ*
«Ջեներալ Ստանդարդ Քընսալթինգ» ՍՊԸ-ի աուդիտի ավագ մենեջեր

Համառոտագիր

Հարկային համակարգը եկամուտների բաշխման համակարգ է իրավաբանական կամ ֆիզիկական անձանց և պետության միջև, իսկ հարկերը պարտադիր վճարներ են, որոնք օրենքով սահմանված կարգով մուտքագրվում են համապատասխան մակարդակի բյուջեներ՝ պահանջմունքների բավարարման համար: Հարկերը արտահայտում են եկամուտներ ստացողների պարտավորությունները մասնակցելու պետության ֆինանսական ռեսուրսների ձևավորմանը: Հանդիսանալով վերաբաշխման գործիք՝ հարկերը նախատեսված են մարելու բաշխման համակարգի տատանումները և աջակցելու անձանց բնակչության գործունեության որևէ ձևի զարգացմանը:

Բանալի բառեր. *տնտեսական զարգացում, հարկերի վճարում, ֆինանսական միջոցներ, հարկային քաղաքականություն, տնտեսական գործունեություն, հարկային համակարգ, ապահովագրական պահուստներ, հարկ վճարողներ:*

НАЛОГОВАЯ СИСТЕМА В КАЧЕСТВЕ СТИМУЛИРУЮЩЕГО ФАКТОРА ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

ТИГРАН ВЛАДИМИРОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., доцент*
старший менеджер по аудиту компании ООО «Дженерал Стандарт Консалтинг»

Аннотация

Налоговая система - это система распределения доходов между юридическими или физическими лицами и государством, а налоги – обязательные платежи, которые в установленные законом порядке зачисляются в бюджеты соответствующего уровня для удовлетворения потребностей.Налоги отражают обязанности получателей доходов для участия в формировании финансовых ресурсов государства. Являясь инструментом перераспределения, налоги предназначены для ослабления колебаний системы распределения и поддержки развития любой формы общественной деятельности лиц.

Ключевые слова*: экономическое развитие, уплата налогов, финансовые средства, налоговая политика, экономическая деятельность, налоговая система, страховые резервы, налогоплательщики.*

THE TAX SYSTEM AS A FACTOR PROMOTING ENTREPRENEURIAL ACTIVITY

TIGRAN VLADIMIR HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), AssociateProfessor*
Audit Senior Manager, "General Standard Consulting" LLC

Abstract

The tax system is a system of revenue distributing and/or allocating among individuals and/or legal entities and the state, and the taxes are mandatory fees and are collected as revenues for respective budgets of different levels to meet various needs as defined by the law. Taxes reflect the responsibilities of income recipients to participate in the formation of financial resources of the state. As a redistributive tool, taxes are supposed to reduce fluctuations in the distribution and/or allocation system, and support the development of any form of activities of individuals, and the population.

Keywords: *Economic development, paying taxes, financial resources, tax policy, economic activity, tax system, insurance reserves, taxpayers.*

ՀԱՅԿ ՍԱՄՎԵԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերի և ոլորտների բնականոն գործունեությունը և զարգացումն ապահովելու գործում մեծապես կարևորվում է անհրաժեշտ ծավալով ներդրումների ներգրավումը: Վերջիններս տնտեսության համար երկակի դեր են խաղում. մի կողմից ապահովում են ներդրողների համար համապատասխան շահույթ, իսկ մյուս կողմից՝ մեծապես կանխորոշում են տնտեսության կայուն զարգացումը, ազգաբնակչության զբաղվածությունը և կենսամակարդակը՝ դրանով իսկ ապահովելով հասարակության առաջընթացը:

Հարկ է նշել, որ ներկայիս պայմաններում յուրաքանչյուր երկիր փորձում է ստեղծել համապատասխան բարենպաստ իրավական և տնտեսական դաշտ, որի արդյունքում հնարավորություն կունենա իր առավելագույն մասնաբաժինն ունենալ համաշխարհային ներդրումային շուկայում[1]: Այս առումով, ներկայումս մեր հանրապետությունում անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել ինչպես ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Վերջինս կնպաստի մեր երկրի ներդրումային վարկանիշի աճին, ինչի արդյունքում մեր տնտեսությունը կարող է մեծ հետաքրքրություն առաջացնել օտարերկրյա պոտենցիալ ներդրողների շրջանում:

Շուկայական տնտեսության պայմաններում ֆիզիկական և իրավաբանական անձանց համար գոյություն ունեն ներդրումների իրականացման համար բազմաթիվ հնարավորություններ: Ընդհանուր առմամբ, ներդրումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

- ուղղակի ներդրումներ, որոնք կատարվում են ներդրողի կողմից որոշակի իրական ակտիվներում, ոչ միայն եկամուտ ստանալու, այլև ընկերության կառավարմանը մասնակցելու նպատակով, օրինակ, արտադրական ընկերության կապիտալում ներդրումները,
- պորտֆելային (ֆինանսական) ներդրումներ. տարբեր ընկերությունների բաժնետոմսերում, պարտատոմսերում և այլ արժեթղթերում կատարվող ներդրումներն են՝ ներդրումային ռիսկերը դիվերսիֆիկացնելու և դրանց արդյունավետ կառավարումից որոշակի եկամուտներ ստանալու նպատակով: Հարկ է նշել, որ պորտֆելային ներդրումների մի մասը ներդրվում է նյութական արտադրության ճյուղերի ձեռնարկությունների բաժնետոմսերում, որոնք, ըստ էության, կարող են դիտարկվել նաև որպես ուղղակի ներդրումներ,
- իրական ներդրումներ. ֆինանսական ներդրումներն են անշարժ գույքի, մեքենասարքավորումների, պաշարների և այլ ակտիվների մեջ՝ կոնկրետ եկամուտ ստանալու նպատակով,
- բիզնես նախագծերում ներդրումներ, որոնք կատարվում են շահութաբեր նորարարական նախագծերի իրականացման նպատակով[2]:

Ինչպես և ցանկացած տնտեսական գործունեության դեպքում, վերը նշված ցանկացած ուղղությամբ ներդրումների իրականացումն ենթակա է տարբեր ռիսկերի ազդեցությունների՝ հնարավոր անորոշությունների արդյունքում: Հետևաբար, ներդրումների իրականացման ժամանակ մեծապես կարևորվում է ներդրումային ռիսկերի ուսումնասիրությունը՝ դրանց բացասական ազդեցությունները չեզոքացնելու համար:

---

[1] Հարությունյան Դ. Ներդրումային միջավայրի և դրա վրա ազդող հիմնական գործոնները. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում (հանրապետական գիտաժողովի նյութեր): Եր., ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2008, էջ 279:

[2] Абрамов С.И. Инвестирование. - М.: Центр экономики и маркетинга, 2008 г., 440с, стр 214.

Ներդրումային ռիսկերն իրենց բնույթով դասվում են ֆինանսական ռիսկերի խմբին: Վերջիններս հանդիսանում են սպեկուլյատիվ ռիսկեր, որոնց դեպքում հնարավոր են ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքներ: Դրանց առանձնահատկությունն է՝ վնասների առաջացման հավանականությունն այնպիսի գործառնությունների իրականացման արդյունքում, որոնք իրենց բնույթով ռիսկային են[1]:

Ներդրումային ռիսկերը բնութագրվում են ֆինանսական կորուստների առաջացման հնարավորություններով՝ ներդրումային գործունեության իրականացման գործընթացում: Վերջիններս արտահայտվում են ներդրողի պլանավորված շահույթի չստացման հնարավորություններով՝ ներդրումային նախագծերի իրականացման ընթացքում: Ընդ որում, որպես ռիսկերի օբյեկտներ՝ տվյալ դեպքում հանդես են գալիս ներդրումային նախագծի մեջ այս կամ այն ձևով միջոցներ ներդրող անձի գույքային շահերը[2]:

Ներդրողների համար ներդրումային ռիսկերի ազդեցությունները հանդես են գալիս 3 հիմնական ձևերով.

1. շահույթի ստացման հնարավորության չօգտագործում,
2. շահութաբերության մակարդակի նվազում,
3. ուղղակի ֆինանսական կորուստներ:

Ինչպես և ցանկացած կառավարչական որոշման դեպքում, ներդրումների վերաբերյալ որոշումների կայացումը ևս տեղի է ունենում որոշակի անորոշության և ռիսկի պայմաններում: Ուստի, ներդրողների կողմից ներդրումներ իրականացնելիս գլխավոր խնդիրներն են հանդիսանում առկա իրավիճակի ճշգրիտ և հնարավորինս օբյեկտիվ գնահատումը, ռիսկերի վաղօրոք հայտնաբերումը, գնահատումը և կառավարումը: Վերջիններս, որպես կանոն, իրականացվում են ներդրումային գործունեության նախնական փուլում՝ նպաստելով տվյալ ոլորտում հիմնավոր և խելամիտ կառավարչական որոշումների կայացմանը:

Ներդրումային ռիսկերը հայտնաբերելու և արդյունավետ կառավարելու նպատակով կարևոր ենք համարում վերջիններիս հիմնական տեսակների դասակարգումը: Հարկ է նշել, որ ռիսկերի դասակարգումը համարվում է վերջիններիս կառավարման գործընթացում դրանց տարբերակման հիմնական չափանիշը, իսկ ռիսկի կոնկրետ տեսակի առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել այդ ռիսկն առաջացնող գործոնների մասին, ինչը թույլ է տալիս կապակցել տվյալ ռիսկից բխող ֆինանսական կորուստների առաջացման հավանականության գնահատականը՝ համապատասխան գործոնների դինամիկայի հետ:

Ըստ ծագման՝ ներդրումային ռիսկերը դասակարգվում են համակարգային և ոչ համակարգային տեսակների: Համակարգային (ընդհանուր, չդիվերսիֆիկացվող) ռիսկերը գոյություն ունեն ներդրումային գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար՝ ներդրումների բոլոր տեսակների դեպքում և բնորոշ են ողջ տնտեսությանը: Դրանք առաջանում են, մասնավորապես, քաղաքական իրավիճակի անկայունության, օրենսդրության փոփոխությունների, շուկայում համախառն վճարունակ պահանջարկի մակարդակի կտրուկ տատանումների և նմանատիպ այլ գործոնների ազդեցության արդյունքում, որոնց վրա ներդրողը չի կարող ազդել՝ ներդրման օբյեկտն ընտրելիս: Համակարգային ռիսկերի առանձին տեսակներ են համարվում տարածաշրջանային, քաղաքական, օրենսդրական, սղաճային և արժութային ռիսկերը: Համակարգային ռիսկերը ներդրողները չեն կարող վերահսկել և, հետևաբար, դրանց չեզոքացումը կարող է հա-

[1] Шапкин В. А., Шапкин А. С., Теория риска и моделирование рисковых ситуаций. - М.: «Дашков и К°», 2007. – 880 с., 165 стр.

[2] Шапкин В. А., Шапкин А. С., Теория риска и моделирование рисковых ситуаций. - М.: «Дашков и К°», 2007. – 880 с., стр. 208.

մարվել պետության կարևոր գործառույթներից՝ ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ոչ համակարգային (յուրահատուկ, դիվերսիֆիկացվող) ռիսկերին, ապա վերջիններս բնորոշ են ներդրումային կոնկրետ օբյեկտին կամ ներդրումային կոնկրետ գործունեությանը: Մասնավորապես, դրանք կարող են կապված լինել ընկերության աշխատակազմի որակավորման մակարդակով, շուկայում մրցակցային պայմանների փոփոխություններով, կապիտալի ոչ համարժեք կառուցվածքով և այլ գործոններով: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը, որպես կանոն, իրականացնում են հենց իրենք՝ ներդրողները:

Ներդրումային գործունեության հիմնական տեսակներից կախված՝ կարելի է տարբերակել իրական ներդրումային ռիսկեր և ֆինանսական ներդրումային ռիսկեր:

Իրական ներդրումային ռիսկերը կապված են հետևյալ գործոնների հետ.

- հումքի և սարքավորումների մատակարարումների ընդհատում,
- ներդրումային ապրանքների գների աճ,
- ոչ որակյալ կամ անբարեխիղճ աշխատակազմի ընտրություն, ինչի արդյունքում ձգձգվում է օբյեկտի շահագործումը կամ նվազում է վերջինիս արդյունքում ստացվող եկամուտը:

Ինչ վերաբերում է ֆինանսական ներդրումային ռիսկերին, ապա վերջիններս բնութագրվում են հետևյալ գործոններով.

- ֆինանսական գործիքների ոչ արհեստավարժ կամ չհիմնավորված ընտրություն,
- ներդրումների պայմանների չնախատեսված փոփոխություններ և այլն:

Ներդրումային ռիսկերն՝ ըստ առաջացման գործոնների իրականում բազմազան են ու բազմաբնույթ: Ստորև ներկայացվում են դրանցից առավել հիմնականները.

- Քաղաքական ռիսկ, որը պայմանավորված է տեղի ունեցող քաղաքական գործընթացներով և գործոններով:
- Տարածաշրջանային ռիսկ, որը պայմանավորված է առանձին վարչական կամ աշխարհագրական տարածքների տնտեսական, քաղաքական և սոցիալական դրությամբ:
- Օրենսդրական ռիսկ, որը պայմանավորված է օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններով (հատկապես հարկային և մաքսային օրենքների անկայունությամբ), որոնք ձևավորում են անվստահության մթնոլորտ, ապագայի նկատմամբ անորոշություն և կարճաժամկետ ներդրումների գծով եկամտաբերության զգալի փոփոխություն:
- Սղաճային ռիսկ. այն կորուստների հավանականությունն է, որը կկրի ներդրողը՝ սղաճի չվերահսկվող տեմպերի դեպքում ներդրումների իրական արժեքի, սպասվելիք եկամուտների և շահույթի արժեզրկման հետևանքով:
- Շուկայական ռիսկ. ակտիվների արժեքի փոփոխությունների հավանականությունն է՝ տոկոսադրույքի տատանումների, արժույթի փոխարժեքների, արժեթղթերի գնանշումների, ապրանքի շուկայական գների տատանումների հետևանքով: Շուկայական ռիսկի տարատեսակներն են հանդիսանում տոկոսադրույքի և արժութային ռիսկերը:
- Իրացվելիության ռիսկ. ներկա կամ ապագա հավանականությունն է այն բանի, որ կազմակերպությունն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի դրա շահույթի և (կամ) կապիտալի վրա:
- Վարկային ռիսկ, որն արտահայտվում է այն դեպքում, երբ ներդրումները ֆինանսավորվում են վարկային ռեսուրսների հաշվին և ակտիվների արժեզրկման կամ սկզբնական որակի կորստի հետևանքով ներդրողը չի կարողանում մարել վարկային պայմանագրից բխող իր պարտավորությունները:
- Սելեկտիվ ռիսկ, որը կապված է ներդրումային օբյեկտի ոչ ճիշտ ընտրության հետ:

- Ժամանակային ռիսկ, որը պայմանավորված է ոչ ճիշտ ընտրված ժամանակ կատարված ներդրումներից բխող կորուստներով:
- Բնակլիմայական և էկոլոգիական ռիսկ, որը պայմանավորված է բնակլիմայական փոփոխություններով, անկանխատեսելի բնական երևույթներով (ֆորս-մաժորային), ինչպես նաև էկոլոգիայի, մթնոլորտի աղտոտման հետ կապված այլ բնապահպանական միջոցառումների, որոշումների, օրենքների և այլ օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի ընդունման արդյունքում հնարավոր կորուստների հավանականությամբ:
- Տեղեկատվական ռիսկ. հիմնականում վերաբերում է այնպիսի տեղեկատվության ստացման անհնարինությանը, որն անհրաժեշտ է ներդրողին՝ տվյալ տնտեսական իրավիճակում ճիշտ և արդյունավետ որոշումներ կայացնելու համար:
- Արտադրատեխնոլոգիական ռիսկ, որը պայմանավորված է բարձր տեխնոլոգիական սարքավորումների և ավտոմատացված արտադրության միջոցների հնարավոր խափանումների հետ, որոնց հետևանքները կարող են զգալի վնասաբեր լինել ընկերության համար:
- Նորարարական ռիսկ, որը կապված է նորարարական բնույթ կրող ներդրումային ծրագրերի անհաջող իրականացման հետ:
- Բաց թողնված օգուտի ռիսկ, որը կապված է որոշակի միջոցառման կամ գործարքի չիրականացման արդյունքում հավանական անուղղակի կորուստների (շահույթի չստացում կամ ոչ ամբողջ ծավալով ստացում) առաջացման հավանականության հետ:
- Գործառնական ռիսկ. առաջանում է այն դեպքերում, երբ ներդրում իրականացնող սուբյեկտի գործունեության ընթացքում առկա են ներդրումային գործառնությունների տեխնոլոգիաների խախտումներ, տվյալների մշակման տեղեկատվական և համակարգչային համակարգերի խափանումներ և այլն[1]:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված ներդրումային ռիսկերի դասակարգումը բավական ընդարձակ է և թույլ է տալիս համակարգել ներդրումային ռիսկերի հիմնական մասը: Սակայն, միևնույն ժամանակ, ներկայացված դասակարգումը որոշակի առումով պայմանական է, քանի որ, երբեմն բավական դժվար է հստակ միմյանցից տարանջատել ներդրումային ռիսկերի առանձին տեսակները: Բացի այդ, մի շարք ներդրումային ռիսկեր գտնվում են միմյանց հետ որոշակի փոխկախվածության մեջ և դրանցից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել նաև մյուսի փոփոխությանը, ինչը, բնականաբար, հավելյալ ազդեցություններ կունենա ներդրումային գործունեության վրա:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ ներդրումների ներգրավման ուղղությամբ մեծապես կարևորվում է ներդրումային ռիսկերի վաղօրոք հայտնաբերումը և վերջիններիս բացասական ազդեցությունների նվազեցումը: Համակարգային ռիսկերի նվազեցման ուղղությամբ հիմնական դերակատարումը պետությանն է, իսկ ոչ համակարգային ռիսկերի նվազեցման ուղղությամբ՝ ներդրողներինը, որոնց համար ներդրումներ իրականացնելիս գլխավոր խնդիրներ են հանդիսանում առկա իրավիճակի ճշգրիտ և հնարավորինս օբյեկտիվորեն գնահատումը, ռիսկերի վաղօրոք հայտնաբերումը և կառավարումը:

[1] Абрамов С.И. Инвестирование. - М.: Центр экономики и маркетинга, 2008 г., 440 с., стр. 330

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԿ ՍԱՄՎԵԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ներդրումային ռիսկերի էության և առանձնահատկությունների հետազոտությանը: Ինչպես և ցանկացած տնտեսական գործունեություն, ներդրումների իրականացումը ևս ենթակա է որոշակի ռիսկերի ազդեցությունների, որոնք առաջանում են ներդրումային գործունեություն իրականացնելիս՝ հնարավոր անորոշությունների արդյունքում:

Ներդրումային ռիսկերը հայտնաբերելու և արդյունավետ կառավարելու նպատակով կարևորվում է վերջիններիս հիմնական տեսակների դասակարգումը և վերլուծությունը: Հոդվածում ներկայացված է ներդրումային ռիսկերի դասակարգումն՝ ըստ տարբեր չափանիշների:

Բանալի բառեր. *ներդրումային ռիսկ, տնտեսություն, պետություն, ֆինանսական կորուստներ, դասակարգում, գնահատում, անորոշություն, հավանականություն:*

ОСНОВНЫЕ ПОДХОДЫ К КЛАССИФИКАЦИИ ИНВЕСТИЦИОНЫХ РИСКОВ

АЙК САМВЕЛОВИЧ МХИТАРЯН
аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена исследованию сущности и особенностей инвестиционных рисков. Как и любая экономическая деятельность, реализация инвестиций также подвержена воздействию определенных рисков, которые возникают при осуществлении инвестиционной деятельности в результате возможных неопределенностей. В выявлении и эффективном управлении инвестиционными рисками важное значение имеют классификация и анализ их основных видов. В этой связи в статье представлена классификация инвестиционных рисков по разным критериям.

Ключевые слова: *инвестиционный риск, экономика, государство, финансовые потери, классификация, оценка, неопределенность, вероятность.*

MAIN APPROACHES TO CLASSIFYING INVESTMENT RISKS

HAYK SAMVEL MKHITARYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article studies the meaning and nature of investment risks and their characteristics. As any economic activity, making investments is associated with some risks as well that could occur while investing owing to possible uncertainties. In order to identify and effectively manage the investment risks, classification of the main types of risks and their analysis is stressed. The article provides the classification of investment risks that is based on various criteria.

Keywords: *Investment risk, economy, government, financial losses, classification, valuation, uncertainty, probability*.

САЯД АМБАРЦУМОВИЧ ПЕТРОСЯН, *д.э.н., доцент*
Кафедра экономики агропромышленного комплекса Национального аграрного университета Армении

ВОЗМОЖНОСТИ УВЕЛИЧЕНИЯ ИНВЕСТИЦИОННОГО ПОТЕНЦИАЛА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Теория рыночной экономики опирается на исходный постулат: все субъекты предпринимательства функционируют в условиях ограниченных ресурсов. Из этого следует основополагающий методологический вывод, что каждый элемент хозяйственной системы обладает определёнными видами преимуществ. При этих допущениях под потенциалом понимается возможность и готовность субъектов рынка специализироваться в тех видах деятельности и производства, по которым в каждый момент времени имеются абсолютные или сравнительные преимущества.

Абсолютные преимущества складываются из геостратегических, географических, природно-климатических, демографических условий. Сравнительные преимущества, обусловлены инвестиционным потенциалом, позволяющим реализовывать стратегии снижения издержки или дифференцировать выпуск. Снижение издержек имеет экономический смысл только тогда, когда предельный спрос (потребительский потенциал) на «внешнем» рынке ниже “наших” текущих предельных издержек. Стратегия дифференциации возможна при развитом производственном и научно-исследовательском потенциале.

Под категорией «инвестиционный потенциал» понимается совокупная возможность отраслевых непостоянных ресурсов, позволяющих увеличивать капиталовооружённость труда и способность хозяйствующих субъектов, оперирующих запасами этих ресурсов, обеспечивать во времени устойчивый экономический доход. В данном определении непостоянный запас ресурсов, имеющихся в наличии на данный момент времени, позволяющий увеличивать производительность труда, образует производственный фактор «капитал». «Экономический доход» – это стоимостное выражение потока предпринимательских услуг, порождённых этими запасами в течение определённого времени.

Инвестиционный потенциал страны – это ее способность освоить необходимые объемы инвестиций в строительство новых предприятий и их комплексов, расширение и реконструкцию действующих предприятий, в развитие человеческого потенциала, создание объектов и учреждений производственной и социальной инфраструктуры.

Инвестиционный потенциал – объективно имеющаяся возможность реализации инвестиционных целей. Количественно измеряется суммой ликвидных активов предприятия, оцененных по рыночной стоимости, умноженных на коэффициент мультипликации.Ликвидные активы – стоимостное выражение активов, имеющих платежеспособный спрос. Мультипликатор – это коэффициент, выражающий соотношение между приростом дохода и вызывающим этот прирост увеличением объема инвестиций. В нашем случае имеется в виду прирост доходов предприятия.При этом темп прироста доходов должен опережать темп прироста инвестиций. В этом случае возникает социально-экономический резонанс или резонансная синхронизация усилий участников инвестиционного процесса, лежащая в основе ускорения развития.

Уровень развития инвестиционного потенциала страны определяют объемы и структура капиталовложений и строительно-монтажных работ, качество и технический уровень вводимых в эксплуатацию объектов, а также накопленные материальные и нематериальные ценности, квалификация рабочей силы.

Основными составляющими инвестиционного потенциала являются проектно-изыскательские, строительно-монтажные организации и такие отрасли народного хозяйства и промышленности, как строительство, промышленность строительных материалов, конструкций и деталей (строительный комплекс).

Инвестиционный потенциал (или «инвестиционная емкость территории») формируется из объективных предпосылок для осуществления инвестиций и зависит как от разнообразия объектов и сфер инвестирования, так и от социально-экономического благосостояния страны. Потенциал страны – это количественная характеристика, которая учитывает ключевые показатели экономического развития страны, ее насыщенность факторами производства (рабочей силой, природными ресурсами, капиталом, инфраструктурой), спрос со стороны населения[1].

Инвестиционный потенциал-это объективно имеющаяся возможность реализации инвестиционных целей.

Совокупный потенциал страны включает следующие интегрированные его виды:

- ресурсно-сырьевой - рассчитанный на основе средневзвешенной обеспеченности балансовыми запасами природных ресурсов;
- производственный, идентифицируемый как общий результат хозяйственной деятельности в стране;
- потребительский - понимаемый как совокупная покупательная способность населения страны;
- инфраструктурный - в основе расчета которого положена оценка экономико-географического положения страны и инфраструктурной насыщенности его территории;
- инновационный - при расчете которого учитывался комплекс научно-технической деятельности в стране;
- трудовой, при расчете которого используются сведения о количестве экономически активного населения и уровне его образования;
- институциональный, который понимается как уровень развития институтов рыночной экономики в стране;
- финансовый, выраженный через общую сумму налоговых и иных денежных поступлений в бюджетную систему.

Уровень развития инвестиционного потенциала страны определяют объемы и структура капиталовложений и строительно-монтажных работ, качество и технический уровень вводимых в эксплуатацию объектов, а также накопленные материальные и нематериальные ценности, квалифицированность рабочей силы[2].

Наиболее значимыми для оценки инвестиционного потенциала Армении являются следующие параметры:

- *Ресурсно-сырьевой.* Армения – индустриально-аграрная страна. Страна располагает существенными запасами медно-молибденовых и полиметаллических руд, строительного камня, минеральных вод, месторождениями драгоценных металлов, полудрагоценных и поделочных камней. В целом же степень соответствия страны указанному фактору инвестиционной привлекательности следует признать удовлетворительной.
- *Потребительский.*Совокупная покупательная способность населения страны определяется как недостаточно высокая по сравнению с соседними странами. ВВП на душу населения составляет около 6,5 тыс. долл. Четко прослеживается связь между состоянием производственной сферы и уровнем доходов населения. Большая часть трудоспособного населения занята в аграрной и социальной сферах (27% и 48%), так как после приобретения независимости Армении большинство промышленных предприятий перестали работать. Невысокую покупательскую способность населения эксперты называют в качестве одной из причин миграции высококвалифицированных специалистов из Республики Армения[3].
- *Инфраструктурный.*Экономико-географическое положение Армении эксперты считают благополучным. Серьезные замечания делаются в адрес качества и количества автомобильных

[1] http://works.doklad.ru/vies/SsBFR76-NMohtm/

[2] Направление развития. Механизм управления. Уч. Пособия/Под общей редакции В.Н.Шимова. Минск, 2005, с. 210.

[3] Петросян С.А. Стратегия привлечения иностранных инвестиций в развитие экономики Республики Армения, Ереван, 2015г., с. 144.

дорог на территории республики и в адрес обеспеченности информационными коммуникациями и их относительной дороговизны, а также невысокого уровня сервиса.

- *Интеллектуальный.* Уровень образования в Армении является одним из самых высоких в регионе. По индексу образования, Армения занимает 56-е место. В 2005 г. Армения присоединилась к Болонской конвенции, взяв на себя обязательство привести в соответствие с ее требованиями вузовское и поствузовское образование. Высокий уровень образования армянского народа - одно из конкурентных преимуществ в регионе. В 2014 г. в высших учебных заведениях обучались более 5 тыс. студентов из-за рубежа. Интеллектуальный потенциал Республики является важным фактором инвестиционной привлекательности.
- *Институциональный.* Данный фактор инвестиционной привлекательности в целом определяется как умеренно развитый. Для Армении по сей день остается проблемой формирование и развитие институтов поддержки развития малого и среднего бизнеса. До сих пор для Армении актуальна проблема монополизма в большинстве отраслей экономики. Недостаточно хорошо развиты профессиональные сообщества, способные конструктивно влиять на экономический климат Республики.
- *Производственный.*Исследование показывает, что производство в целом является наиболее потенциально перспективным для развития Армении. Однако текущее состояние этого сектора экономики требует существенных изменений, которые в свою очередь требуют большого количества привлеченных ресурсов.

По мнению д.э.н.Т.Манасеряна Армения обладает серьезным инвестиционным потенциалом в сфере информационных технологий, и настало время,чтобы их задействовать. «Я верю в развитие экономики Армении, и считаю, что инвестиционный потенциал и способность достаточно высоки. Особенно требуются инвестиции в человеческий капитал, и в этом случае мы можем ожидать результатов», - сказал он[1].

«Инвестиционный потенциал армянской диаспоры составляет в $400 млрд.»,– считает юрист-международник Т.Авакян. «Но в полной мере эффективному использованию этого потенциала во благо Армении, равно как и всей модели сотрудничества, еще только предстоит состояться»,– заявил он в интервью Analitika.at.ua. Возможно, одной из причин такого замедленного развития отношений, является тот факт, что все общины, независимо от места их дислокации, в равной мере подвержены серьезным вызовам современности и в равной степени испытывают «болевую точку» утраты молодым поколением своей идентичности, которая выражается в потере знания языка, закрытии школ и уменьшении числа учащихся.

«Недостаток квалифицированных кадров и финансирования дополняют ключевые проблемы, решение которых требует времени и неимоверных усилий со стороны всех участников процесса. Немаловажно, что проводимые в рамках Министерства диаспоры Армении культурные акции, способствуют объединению армянской диаспоры, укрепляют чувства принадлежности молодых армян диаспоры к своей исторической родине», – заявил главный редактор журнала армян Узбекистана «ДепиАпага», Георгий Сааков. Он считает, что одно из требований для сохранения идентичности – это дальнейшее укрепление связи с исторической родиной. И в этом вопросе он большую роль отводит созданному в Армении в 2008 году Министерству диаспоры. «Свыше 33 тысяч армянских организаций действуют за рубежами исторической родины, и буквально во всех странах армяне являются структуросоздающим социальным элементом», - сказал он.[2]

Для сохранения и развития инвестиционного потенциала Армении на уровне развитых стран требуются модернизация производственной базы строительного комплекса.Основными целями его развития в перспективе должны быть:

[1] www.tert.am/ru/news/2015/10/14/tatul-manaseryan/1813274

[2] Regnum.ru/news/134175.htm

- техническое перевооружение и модернизация действующих предприятий и на этой основе более полное удовлетворение потребностей населения и народного хозяйства в высокоэффективной строительной продукции;
- внедрение ресурсосберегающих технологий, выпуск новых видов материалов, конструкций и изделий, отвечающих требованиям международных стандартов;
- совершенствование проектирования, внедрение прогрессивных архитектурных шанировочно-конструктивных решений;
- совершенствование законодательно-нормативной и информационной базы, организационных структур управления строительным комплексом, адекватных рыночным условиям;
- эффективная реализация долгосрочных программ и инвестиционных проектов, обеспечивающих снижение себестоимости продукции и работ;
- разработка новой государственной политики развития территорий и населенных пунктов с созданием рациональной модели расселения, инженерной и транспортной инфраструктурой.

Для достижения этих целей необходимо обеспечить реализацию системы мероприятий, включающих:

- совершенствование внутриотраслевой структуры строительного комплекса на основе приоритетного развития экспортоориентированных и импортозамещающих производств, базирующихся на высоких и экологически чистых технологиях;
- создание новых архитектурно-планировочных систем зданий и сооружений, возведение жилых и административных зданий по современным эффективным проектам, обеспечивающим снижение уровня затрат на всех стадиях инвестиционно-строительного цикла;
- модернизацию технологий строительства и производства строительных материалов до уровня передовых европейских стран, постепенное поэтапное закрытие энергоемких и экологически вредных производств, требующих импорта дорогостоящего и экологически вредного сырья и перепрофилирования их на новые виды продукции;
- расширение международного сотрудничества, прежде всего с Россией и другими странами СНГ, Евросоюза, направленного на привлечение иностранных инвестиций и кредитов в приоритетные подотрасли – цементную промышленность, промышленность стеновых и теплоизоляционных материалов;
- активизацию проведения подрядных торгов на строительство объектов за пределами страны, поиск потенциальных потребителей строительных материалов и изделий;
- обеспечение развития территорий, моделей расселения, инженерно-транспортной инфраструктуры в соответствии с утвержденными генеральными планами.

Несмотря на то,что примерного 70 % иностранных инвесторов в Армении являются армянами из других стран или связанными с ними компаниями, они совокупно инвестируют всего 24 % от всех ПИИ. Основная причина-низкая привлекательность бизнес-проектов в Армении для чисто коммерческого инвестирования и неблагоприятная среда для бизнеса.

Общее улучшение среды и качества бизнес-проектов может вызвать скачкообразный рост вложений в Армению свободного армянского капитала, ищущего новые сферы применения.

Формирование инвестиционного потенциала нации и его эффективное использование в значительной степени зависят от государства, его способности регулировать пропорции между текущим потреблением и сбережением произведенного общественного продукта. Учитывая экономическую ситуацию в Армении, необходимо ориентироваться, в первую очередь, на мобилизационную модель наращивания инвестиционного потенциала страны, не исключая и более либеральные финансово-налоговые меры стимулирования инвестиций.

Государственная инвестиционная политика должна быть нацелена на создание благоприятного инвестиционного климата в стране, на стимулирование привлечения частного капитала как национального, так и иностранного, а также поиск новых форм совместного (частного и государственного) инвестирования в перспективные проекты.

Вмешательство государства должно отвечать интересам всех слоев общества - для того, чтобы достичь наиболее эффективного общественного производства. Общественное производство может считаться эффективным только тогда, когда происходит гармоничное развитие всех структур общества, т.е. когда наряду с производственным сектором инвестиции обеспечивают необходимое развитие социальной, экономической и культурной сферы.

Посредством осуществления приведенных мероприятий значительно увеличится инвестиционный потенциал Армении. В сегодняшних реалиях Армения может рассчитывать на инвестиционный потенциал в размере $1-1,5 млрд.Если брать в расчёт показатели Восточной Европы, в том числе Грузии, то ежегодный объем иностранных инвестиций в Армению может составлять $1-1,5 млрд. В 2008 году Армения уже привлекала более $1 млрд. инвестиций.

Как известно, рентабельность инвестиций в Западной Европе в среднем составляет 10-15%, что является хорошим показателем для этих стран. Эксперты отмечают, что для повышения интереса иностранных инвесторов к Армении рентабельность должна составлять в среднем 20-25% - в зависимости от конкретного проекта или сектора.

В сентябре 2016 года в Нью-Йорке пройдёт инвестиционный форум «Армения 2016», направленный на стимулирование иностранных инвестиций в республику.Армения после первого форума в 2001 году снова появится на инвестиционной карте. Основная задача инвестиционного форума привлечь как можно больше инвесторов. А основная отдача от форума - это переломить тренд снижения иностранных инвестиций, который наблюдается в течение последних семи лет. Выбор секторов для возможных инвестиций будет определен к середине октября. Для иностранных инвесторов наиболее привлекательными отраслями в Армении являются сельское хозяйство, в частности теплицы, садоводство, рыбоводство, а также возобновляемая энергетика, в частности, солнечная и геотермальная.По данным Нацстатслужбы, совокупные иностранные инвестиции в реальный сектор экономики Армении сократились с $1,2 млрд, в 2008 г. до $597,4 млн. в 2013-ом. В 2014 году совокупный приток иностранных инвестиций в Армению составил 839,7 млрд. драмов. ($1-476,53 драма).[1]

Таким образом, увеличение инвестиционного потенциала Республики Армения имеет важное стратегическое значение для развития экономики страны, поскольку только посредством осуществления эффективной инвестиционной деятельности станет возможным обеспечение занятости населения, стимулирование платежеспособного спроса, улучшение деятельности компаний и повышение благосостояния общества.

[1] Revolution.allbest.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱՅԱԴ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ, *տ.գ.դ., դոցենտ*
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոն

Համառոտագիր

Ներդրումային ներուժը (կամ «տարածաշրջանի ներդրումային տարողությունը») ձևավորվում է ներդրումների իրականացման օբյեկտիվ նախադրյալներից, և կախված է ինչպես ներդրման օբյեկտների և ոլորտների բազմազանությունից, այնպես էլ երկրի սոցիալ-տնտեսական վիճակից: Մանրամասնորեն վերլուծելով Հայաստանի ներդրումային ներուժը, հոդվածի հեղինակը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունն օժտված է անհրաժեշտ ներդրումային հնարավորություններով:Ներկայացված են այդ ներուժի պահպանման և զարգացման հիմնական ուղիները:

Բանալի բառեր. *ներդրումներ, ներուժ, ռեսուրս, տարածաշրջան, ենթակառուցվածք, նորամուծություն, միգրացիա, արտահանում, գործոն:*

ВОЗМОЖНОСТИ РОСТА ИНВЕСТИЦИОННОГО ПОТЕНЦИАЛА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

САЯД АМБАРЦУМОВИЧ ПЕТРОСЯН, *д.э.н., доцент*
Кафедра экономики агропромышленного комплекса Национального аграрного университета Армении

Аннотация

Инвестиционный потенциал (или «инвестиционная емкость региона») формируется, исходя из объективных предпосылок осуществления инвестиций и зависит как от разнообразия объектов и сфер инвестирования, так и от социально-экономической ситуации в стране. Подробно анализируя инвестиционный потенциал Армении, автор статьи считает, что Республика Армения обладает необходимыми инвестиционными возможностями. Представлены основные пути сохранения и развития этого потенциала.

Ключевые слова: *инвестиции, потенциал, ресурс, регион, инфраструктура, инновация, миграция, экспорт, фактор.*

POSSIBILITIES TO INCREASE THE INVESTMENT POTENTIAL OF THE REPUBLIC OF ARMENIA

SAYAD HAMBARDZUM PETROSYAN, *Doctor of Sciences(Economics), Associate Professor*
Chair of Economics of Agri Industrial Complex, Armenian National Agrarian University

Abstract

The investment potential (or “investment capacity of a region”) is shaped by objective preconditions to make investments and depends on diversity of both investment objects and sectors, and the state of socio-economic development of the nation. By thoroughly analyzing the investment potential of Armenia the author of the article finds that Republic of Armenia has the required opportunities. The article presents the main directions to maintain and develop that potential.

Keywords: *Investments, potential, resource, region, infrastructure, innovation, migration, exports, factor.*

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԴՐԱՄ/ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 1995-2015ԹԹ.

Հայտնի է, որ արտարժույթի փոխարժեքը մի երկրի դրամական միավորի արժեքն է՝ արտահայտված այլ երկրի դրամական միավորով[1]: Հաշվի առնելով գնաճը, տարբերում ենք անվանական և իրական փոխարժեքներ, որոնք միմյանցից տարբերվում են համեմատվող երկրներում գների հարաբերակցությունից կախված: Անվանական փոխարժեքը մեկ արժույթի գինն է՝ արտահայտված մեկ այլ արժույթով, իսկ իրական փոխարժեքը երկու երկրների գների հարաբերությունն է՝ բերված ընդհանուր արժույթի, քանի որ անվանական փոխարժեքը արտահայտված է մեկ միավոր արտարժույթի դիմաց տրվող ազգային արժույթով[2]:

$$ԻՓ = \frac{Գ1}{Գ2} \times ԱՓ,$$

որտեղ՝ ԻՓ-ն իրական փոխարժեքն է,
ԱՓ-ն անվանական փոխարժեքը,
Գ1-ը և Գ2-ը ապրանքների գներն են համեմատվող երկրներում:

Ինչպես ամեն մի գին, փոխարժեքը նույնպես ձևավորվում է արժութային շուկայում՝ ըստ արժույթի պահանջարկի և առաջարկի հարաբերակցության: Իր հերթին՝ առաջարկն ու պահանջարկը կախված են մի շարք գործոններից: Փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոններն են՝

- Գնաճի մակարդակը: Արտարժույթի փոխարժեքի ձևավորման հիմքում ընկած է արժույթների հարաբերակցությունն ըստ դրանց գնողունակության (գնողունակության պարիտետ): Վերջինիս հետ կապված գնաճի տեմպը զգալիորեն ազդում է փոխարժեքի վրա. որքան բարձր է գնաճի տեմպը, այնքան ցածր է ազգային արժույթի փոխարժեքը:
- Վճարային հաշվեկշռի վիճակը: Վճարային հաշվեկշռի անկայունությունը հանգեցնում է համապատասխան արժույթների նկատմամբ պահանջարկի փոփոխության:
- Տոկոսադրույքի մակարդակը: Գլոբալացման պայմաններում զգալիորեն մեծացել է վճարային հաշվեկշռի վրա ֆինանսական, այդ թվում սպեկուլյատիվ կապիտալի ազդեցությունը, ինչը չի կարող չանդրադառնալ համապատասխան արժույթների փոխարժեքների վրա: Տոկոսադրույքների փոփոխությունը այլ հավասար պայմաններում խթանում է կապիտալի շարժը դեպի առավել շահավետ տեղաբաշխում: Բարձր տոկոսադրույքները գրավիչ են օտարերկրյա կապիտալի համար, իսկ ցածր տոկոսադրույքները կրճատում են դրանց ներհոսքը:
- Եվրոշուկայում և միջազգային հաշվարկներում արտարժույթի օգտագործման աստիճանը: ԱՄՆ դոլարը մնում է միջազգային հաշվարկների հիմնական արժույթ, եվրոշուկայում գործառնությունների 60 տոկոսն իրականացվում է ԱՄՆ դոլարով, այդ պատճառով համաշխարհային գների բարձրացումը, արտաքին պարտքի աճող վճարումները կարող են նպաստել ԱՄՆ դոլարի փոխարժեքի բարձրացմանը նույնիսկ նրա գնողունակության անկման պայմաններում:
- Արժույթի նկատմամբ վստահության աստիճանը, որը որոշվում է տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշներով և քաղաքական իրադրության կայունությամբ: Որոշումների

[1] Международные валютно-финансовые и кредитные отношения. Учеб. Пособие/ О.Б. Аникин.-М: Флинта: МПСИ, 2008, с. 14.

[2] S. Սարգսյան, Փոխարժեքի դերը դրամավարկային քաղաքականության մեջ, Եր., 2008,էջ 9, 26:

ընդունման ժամանակ կարևոր է հաշվի առնել ոչ միայն այդ ցուցանիշների վիճակը, այլ նաև դրանց դինամիկան:

- Արժութային քաղաքականությունը: Փոխարժեքի դինամիկան զգալիորեն կախված է շուկայական և պետական կարգավորման հարաբերակցությունից: Փոխարժեքի պետական կարգավորումը, մասնավորապես՝ կենտրոնական բանկերի արտարժութային ինտերվենցիաների միջոցով, ուղղված է դրա կա՛մ բարձրացմանը, կա՛մ նվազմանը՝ ելնելով տնտեսական քաղաքականության խնդիրներից[1]:

Տվյալ հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի զարգացման միտումները ՀՀ-ում երկարատև ժամանակաընթացքում՝ վերջին 20 տարում: Տվյալները ներկայացված են ներքոհիշյալ աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքները ՀՀ-ում 1995-2015թթ.[2] (եռամսյակային կտրվածքով)

Ժամանակաշրջան (եռամսյակներ)	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
I եռ	405.08	402.67	465.48	499.42	538.68	527.46	550.52	567.15	586.59	565.23	477.03
II եռ.	408.80	407.13	495.31	502.89	539.87	536.22	552.23	579.93	586.42	551.14	448.69
III եռ.	407.95	415.24	502.51	503.31	539.12	542.79	554.23	562.87	577.49	518.99	452.68
IV եռ.	401.70	428.72	499.78	513.93	522.58	551.63	563.33	583.46	564.56	498.45	452.34

Ժամանակաշրջան (եռամսյակներ)	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
I եռ	450.95	359.44	308.06	325.56	384.08	366.14	388.43	409.47	411.04	477.26
II եռ.	436.78	353.97	307.11	370.53	384.33	374.18	401.53	414.90	412.84	476.48
III եռ.	402.39	337.83	302.30	372.64	365.51	368.78	410.66	408.66	408.48	479.39
IV եռ.	374.04	317.08	306.41	384.40	360.73	380.90	406.44	405.48	431.32	478.54

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի 21 տարվա դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ փոխարժեքի առաջին կտրուկ բարձրացումը դիտարկվել է 1997թ.՝ ըստ եռամսյակների համապատասխանաբար կազմելով 465.48 դրամ, 495.31 դրամ, 502.51 դրամ և 499.78 դրամ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանների 402.67 դրամ, 407.13 դրամ, 415.24 դրամ, 728.72 դրամի փոխարեն, նույն միտումը շարունակվել է մինչև 2005թ, այնուհետև արտարժույթի փոխարժեքը դրսևորել է նվազման միտում և 2008թ. եռամսյակներին ընդունել է 308.06 դրամ, 307.11 դրամ, 302.30 դրամ և 306.41 դրամ արժեքները: 2008թ-ից հետո արտարժույթի փոխարժեքը աստիճանաբար բարձրացել է և դրսևորել աճման միտում մինչ օրս:

Վիճակագրության մեջ և էկոնոմետրիկայում երևույթների ըստ ժամանակի զարգացման հիմնական միտումը արտացոլելու համար կիրառվում են տարբեր հավասարումներ, տարբեր աստիճանների պոլինոմներ, էքսպոնենտներ, լոգիստիկական կորեր և ուրիշ ֆունկցիաներ:

Պոլինոմները ունեն հետևյալ տեսքը.

- առաջին աստիճանի պոլինոմ $\bar{y}_t = a_0 + a_1 t$
- երկրորդ աստիճանի պոլինոմ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2$
- երրորդ աստիճանի պոլինոմ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2 + a_3 t^3$
- n-րդ աստիճանի պոլինոմ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2 + \ldots + a_n t^n$

[1] Международные валютно-кредитные отношения. Учебник/ Под общ. Ред. Н.П.Гусакова.-М.: ИНФРА-М, 2008, с. 27,28.

[2] Կազմված է ըստ՝ ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 1999», էջ 24, ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2000», էջ 24, ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2005», էջ 41, ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2010», էջ 66, ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2014», էջ 72, ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին» և մշակված է հեղինակի կողմից:

որտեղ՝ $a_0, a_1, \ldots\ldots a_n$ –ը՝ պոլինոմների պարամետրերն են,

t – ն՝ ժամանակի պայմանական նշանակումն է:

Վիճակագրության պրակտիկայում ոչ բարձր աստիճանի պոլինոմների պարամետրերը երբեմն ունենում են դինամիկայի շարքի բնութագրիչների կոնկրետ մեկնաբանություն: Այսպես, օրինակ, a_0 պարամետրը մեկնաբանվում է որպես դինամիկայի շարքի միջին պայմանների բնութագրիչ, իսկ a_1, a_2 և a_3 պարամետրերը՝ արագացման փոփոխություն:

Վիճակագրության մեջ մշակված է զարգացման մոդելի պոլինոմի աստիճանի ընտրության կարգ, որը հիմնված է դինամիկայի շարքերի մակարդակների վերջնական տարբերությունների որոշման վրա: Համաձայն դրա, առաջին աստիճանի պոլինոմը (ուղիղը) կիրառվում է որպես մոդել այնպիսի դինամիկայի շարքի համար, որի առաջին տարբերությունները (բացարձակ հավելաճերը) կայուն են, երկրորդ աստիճանի պոլինոմները կիրառվում են կայուն երկրորդ տարբերություններ (արագացումներ) ունեցող դինամիկայի շարքի արտացոլման համար, երրորդ աստիճանի պոլինոմներ՝ կայուն երրորդ տարբերություններ ունեցող շարքերի համար և այլն:

Պոլինոմիալ մոդելների համար բնութագրական է ուղիղ կապի բացակայությունը բացարձակ հավելաճերի և դինամիկայի շարքի մակարդակների հավելաճերի միջև[1]:

Վերլուծությունը կատարել ենք երրորդ աստիճանի պոլինոմիալ հավասարման (մոդելի) օգնությամբ, որը ներկայացված է գծապատկեր 1-ի տեսքով:

Գծապատկեր 1

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքների մակարդակի դինամիկան 1995-2015թթ.



Վերլուծության արդյունքների հիման վրա տրենդը ներկայացնող հավասարման պարամետրերի համաձայն, տրված ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը յուրաքանչյուր եռամսյակ աճել է 23.985 դրամով (a_1=23.985), սակայն, այս ցուցանիշը տարեցտարի ունեցել է դանդաղեցման միտում և միջին տարեկան բացարձակ դանդաղեցումը կազմել է 0.7169 դրամ (a_2=-0.7169):

Ներկայացված մոդելի պարամետրերի համաձայն կատարել ենք նաև կանխատեսումներ 2016 թվականի եռամսյակների համար, որի արդյունքները ներկայացված են գծապատկեր 2-ի տեսքով:

Տրենդը ներկայացնող մոդելի համաձայն, կանխատեսման արդյունքում ստացանք, որ 2016թ. վերջում (մնացած հավասար պայմաններում) 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կհատի 624 դրամի սահմանը:

[1] Գ.Վ. Վարդանյան, Էկոնոմետրիկայի հիմունքները» ուս. ձեռնարկ, Երևան, 2003, էջ 60-61:

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կանխատեսված մակարդակները 2016թ եռամսյակների համար



Այսպիսով, վերլուծելով ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքները ՀՀ-ում 1995-2015թթ. կտրվածքով պարզ է դառնում, որ փոխարժեքի առաջին կտրուկ բարձրացումը դիտարկվել է 1997թ.՝ ըստ եռամսյակների համապատասխանաբար կազմելով 465.48 դրամ, 495.31 դրամ, 502.51 դրամ: 2005թ.-ից արտարժույթի փոխարժեքը դրսևորել է նվազման միտում և 2008թ. եռամսյակներին ընդունել է 308.06 դրամ, 307.11 դրամ, 302.30 դրամ և 306.41 դրամ արժեքները: 2008թ.-ից հետո արտարժույթի փոխարժեքը աստիճանաբար բարձրացել է և դրսևորել է աճման միտում մինչ օրս: Այնուհետև կատարելով ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքների դինամիկայի վերլուծություն երրորդ աստիճանի պոլինոմիալ հավասարման (մոդելի) օգնությամբ, ստացվում է, որ տրված ժամանակահատվածում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը յուրաքանչյուր եռամսյակ աճել է 23.985 դրամով (a_1=23.985), սակայն, այս ցուցանիշը տարեցտարի ունեցել է դանդաղեցման միտում: Կատարվել է նաև կանխատեսում 2016թ. եռամսյակների համար, որի արդյունքում պարզ է դառնում, որ մնացած հավասար պայմաններում 2016թ. վերջում 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կհատի 624 դրամի սահմանը:

ՀՀ ԴՐԱՄ/ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ 1995-2015ԹԹ.

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածում վերլուծվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի զարգացման միտումների դինամիկան վերջին 21 տարիների ընկած ժամանակահատվածում: Վերլուծության համար հիմք է ընդունվել եռաստիճանային պոլինոմիալ մոդելը, հաշվարկված պարամետրերի հիման վրա կատարվել է կանխատեսում 2016թ. բոլոր եռամսյակների համար, որի արդյունքում ստացվել է, որ 2016թ. վերջին 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կհատի 624 դրամի սահմանը:

Բանալի բառեր. *արտարժույթի փոխարժեք, զարգացման միտումներ, դրամական միավոր, տրենդ, կանխատեսում:*

ИССЛЕДОВАНИЕ ТЕНДЕНЦИЙ РАЗВИТИЯ ВАЛЮТНОГО КУРСА AMD/USD В РА ЗА ПЕРИОД 1995-2015 ГГ.

ЛИЛИТ ГЕВОРКОВНА ПОГОСЯН
аспирант кафедры финансов и кредита Национального аграрного университета Армении

Аннотация

В статье проанализированы динамика и тенденции изменения валютных курсов AMD/USD в РА за последние 21 год. В качестве основы для анализа выбрана трехступенчатая полиномиальная модель. На основе рассчитанных параметров прогнозированы ожидаемые уровни валют для всех кварталов 2016 года. По результатам анализа получено, что к концу 2016 года курс AMD/USD достигнет 624 драмов.

Ключевые слова: *валютный курс, тенденции развития, денежная единица, тренд, прогноз.*

THE STUDY OF TRENDS ON ARMENIAN DRAM TO US DOLLAR EXCHANGE RATE FROM 1995 TO 2015

LILIT GEVORG POGHOSYAN
Ph.D.Student, Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University

Abstract

The article analyzes the trends in of the Armenian dram to US dollar exchange rate for the period of 21 years (from 1995 to 2015). To analyze the quarterly data, the author relied on a polynomial model, and based on estimation results the authorforecasts exchange rates for each quarter of 2016, and based on the estimates the forecasted value of US dollar to Armenian dram exchange rate could reach 624 Armenian drams in the last quarter of 2016.

Keywords: *Foreign exchange rate, development trend, monetary unit, trend, forecasting.*

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀՀ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հարկաբյուջետային քաղաքականությունը պետության մակրոտնտեսական քաղաքականության այն կարևոր ուղղությունն է, որի միջոցով վերջինս ազդում է տնտեսության վրա՝ ապահովելով վերջինիս բնականոն զարգացումը: Հարկաբյուջետային քաղաքականությունը ներառում է երեք կարևոր գործառույթներ՝ պետական եկամուտների ապահովման կամ ֆիսկալային, տնտեսական կարգավորման և սոցիալական:

Ժամանակակից հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակներն են.

- տնտեսական աճի ապահովումը,
- լրիվ զբաղվածության ապահովումը,
- սղաճի կրճատումը կամ դրա որոշակի սահմաններում վերահսկումը,
- տնտեսական ցիկլային տատանումների կրճատումը,
- ֆինանսատնտեսական ճգնաժամերի հետևանքների հաղթահարումը և այլն:

Արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության էությունը կայանում է պետական բյուջեի ճշգրիտ պլանավորման մեջ, ինչն ապահովվում է հարկային արդյունավետ համակարգի և բյուջետային միջոցների ծախսային ուղղությունների ճշգրիտ սահմանման միջոցով:

Միանգամայն ակնհայտ է, որ պետական ծախսերը և հարկային համակարգը հանդիսանում են տնտեսության կարգավորման կարևորագույն գործիքներ, քանի որ վերջիններիս միջոցով պետությունը հնարավորություն է ունենում կառավարել ՀՆԱ-ի աճն՝ ըստ սահմանված նպատակների և ցուցանիշների, քանի որ պետական ծախսերը և հարկերը անմիջական ազդեցություն են ունենում համախառն եկամտի, համախառն պահանջարկի, արտադրության ծավալային մակարդակի և զբաղվածության վրա: Կարող են ասել, որ ժամանակակից պայմաններում հարկային համակարգը պետական եկամուտների ձևավորման աղբյուրից բացի վերածվել է համախառն պահանջարկի վրա ներազդելու գործիքի, ինչը, բնականաբար, պայմանավորված է տնտեսության կառավարման համակարգի զարգացմամբ և տնտեսական առաջընթացով:

Հարկ է նշել, որ հարկաբյուջետային քաղաքականության գործիքակազմով տնտեսության վրա պետության ներազդումը կատարվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեթոդներով: Ուղղակի մեթոդներից, թերևս ամենահիմնականը բյուջետային կարգավորումն է՝ եկամուտների ապահովման և ծախսերի իրականացման միջոցով: Ինչ վերաբերում է անուղղակի մեթոդներին, ապա վերջիններիս միջոցով պետությունն ազդեցություն է գործում տնտեսվարողների ֆինանսական հնարավորությունների և երկրում համախառն վճարունակ պահանջարկի ձևավորման վրա: Հարկերի դրույքաչափերի փոփոխության, հարկային զանազան արտոնությունների տրամադրման, չհարկվող եկամտի շեմի փոփոխության միջոցով պետությունն ապահովում է համախառն պահանջարկի նախընտրելի մակարդակ, համախառն արտադրության կայուն ծավալներ և ամենակարևորը՝ տնտեսական աճի համապատասխան նախադրյալներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, տնտեսագիտության մեջ առանձնացվում են հարկաբյուջետային քաղաքականության դիսկրեցիոն և ոչ դիսկրեցիոն ուղղությունները: Դիսկրեցիոն քաղաքականությունը՝ պետության կողմից հարկերի և ծախսերի նպատակաուղղված մանիպուլյացիան է՝ արտադրության և զբաղվածության մակարդակները փոփոխելու, սղաճը վերահսկելու և տնտեսական աճը արագացնելու նպատակով: Այս քաղաքականության մեթոդներից կարող ենք առանձնացնել հարկերի դրույքաչափերի փոփոխությունները, ինչպես նաև՝ պետական աջակցության ծրագրերի, պետական գնումների և պետական պատվերներով իրականացվող զանազան ծրագրերի ծավալային փոփոխությունները: Սոցիալ-տնտեսական ոչ բարենպաստ իրավիճակներում պետությունը կիրառում է դիսկրեցիոն քաղաքականության տարբեր գործիքներ՝ սոցիալական լարվածությունը թուլացնելու, ազգաբնակչության անապահով խավերին նյութա-

կան լրացուցիչ աջակցություն ցուցաբերելու, արտադրության հետագա անկումը կանխելու և գործազրկության մակարդակը նվազեցնելու նպատակով: Տնտեսվարողների և ազգաբնակչության եկամուտների կտրուկ նվազումը կանխելու համար կիրառվում են հարկային զանազան արտոնություններ, ինչպես նաև վերանայվում են որոշակի հարկերի դրույքաչափերը:

Հավելենք, որ դիսկրեցիոն քաղաքականությունն իրականացվում է նաև պետական տրանսֆերտների և գնումների համակարգի միջոցով: Վերջիններիս փոփոխությունը անմիջականորեն բերում է համախառն ծախսերի ուղղակի փոփոխության, որն էլ, իր հերթին, համախառն պահանջարկի աճի: Այս քաղաքականության բնույթը և դրա այս կամ այն գործիքի կիրառումը, հիմնականում, կախված է երկրում ստեղծված տնտեսական իրավիճակից և պետության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունից[1]:

Հարկաբյուջետային դիսկրեցիոն քաղաքականության շրջանակներում առկա են ֆինանսական հետևյալ առանձնահատկությունները և փոխկապվածությունները.

1. Պետական ծախսերի ավելացումը մեծացնում է համախառն պահանջարկը թե՛ մասնավոր սպառման, և թե՛ ներդրումների աճի միջոցով, ինչի արդյունքում աճում են արտադրության ծավալները և զբաղվածությունը,
2. Հարկերի ավելացումը նվազեցնում է տնտեսվարողների ու ազգաբնակչության եկամուտները, և արդյունքում կրճատվում է համախառն առաջարկը, ինչն էլ, իր հերթին, բերում է արտադրության կրճատման և գործազրկության մակարդակի աճի:

Տնտեսական անկման պայմաններում պետությունը վարում է խթանող ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականություն, ինչը, դիսկրեցիոն քաղաքականության ոլորտում արտահայտվում է պետական ծախսերի զգալի ավելացման և հարկերի դրույքաչափերի կրճատման որոշակի համադրությամբ: Հիմնականում, այսօրինակ քաղաքականությունը ենթադրում է պետական բյուջեի զգալի պակասուրդ, սակայն, մյուս կողմից, այն թույլ է տալիս կանխել արտադրության զգալի անկումը: Պետական ծախսերի ավելացման արդյունքում տեղի է ունենում, այսպես կոչված, «դուրսմղման» էֆեկտ՝ պետության ու մասնավոր ներդրումների մրցակցության արդյունքում և արտադրության գործոնների վերաբաշխում՝ հօգուտ պետության: Պետության կողմից ծախսերի աճն, ի վերջո, բերում է շուկայական տոկոսադրույքների աճի, որն էլ, իր հերթին, նույնպես նպաստում է մասնավոր ներդրումների կրճատմանը, ինչը նպաստում է կապիտալի արտահոսքին և բացասաբար է անդրադառնում երկրում տնտեսական աճի ու ազգաբնակչության կենսամակարդակի վրա: Այս քաղաքականության արդյունավետությունը կախված է պետական ծախսերի օպտիմալ ծավալի սահմանումից: Ընդհակառակը, տնտեսական վերելքի շրջանում՝ հավելյալ պահանջարկը զսպելուն և գների կայունությունը պահպանելուն միտված պետական դիսկրեցիոն քաղաքականությունն իրականացվում է պետական ծախսերի կրճատման և հարկերի ավելացման միջոցով: Այսպիսի քաղաքականության կիրառման ժամանակ, սովորաբար, պետական բյուջեն հավելուրդային է՝ հավաքագրվող եկամուտները գերազանցում են նախատեսված ծախսերը:

Ինչ վերաբերում է ոչ դիսկրեցիոն հարկաբյուջետային քաղաքականությանը, ապա վերջինս ենթադրում է պետական բյուջեի հարկային զուտ մուտքերի փոփոխություններ՝ ազգային արտադրության ծավալների փոփոխության արդյունքում: Հիմնականում, պետական ծախսերը և հարկերը փոփոխվում են ավտոմատ կերպով: Սա, որպես կանոն, արդյունք է հարկերի պրոգրեսիվ դրույքաչափերի և պետական տրանսֆերտային համակարգի: Ոչ դիսկրեցիոն քաղաքականությունը գործում է համեմատաբար անկախ՝ շնորհիվ ներքին շուկայական կարգավորիչների: Վերջիններս իրենցից ներկայացնում են պետության քաղաքականությունից անկախ գործող շուկայական մեխանիզմներ, որոնց միջոցով զգալիորեն համահարթեցվում են տնտեսության անկումները և վերելքները: Ներքին կարգավորիչների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հարկերի դրույքաչափերը փոխկապակցված են եկամուտների մակարդակի հետ, օրինակ, եկամտահարկը, շահութահարկը և այլն: Հարկային մուտքերի փոփոխությունը՝ կախված եկամուտների մակարդակի փոփոխությունից՝ ներքին կարգավորիչների դրսևորման

[1] Սարգսյան Կ.Ս.,Պետական հակաճգնաժամային արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 154:

հետևանք է: ՀՆԱ-ի բարձր աճի պայմաններում հարկային մուտքերը մեծանում են, պայմանով, որ հարկային համակարգը պրոգրեսիվ է: Արդյունքում, սահմանափակվում է ազգաբնակչության գնողունակությունը, ինչն էլ, իր հերթին, զսպում է տնտեսական աճը: Իսկ տնտեսական անկման ժամանակաշրջանում տեղի է ունենում ճիշտ հակառակ գործընթացը: Ինչպես տեսնում ենք, ներքին կարգավորիչները տնտեսական կայունության ապահովման կարևոր գործիքներ են: Դրանք, հանդիսանալով պետության հարկաբյուջետային քաղաքականության կարևոր բաղադրիչներ, մեղմացնում են արտադրության ծավալների և զբաղվածության անցանկալի տատանումները, սակայն չեն վերացնում արտադրության ծավալային փոփոխության անբարենպաստ այլ հետևանքները: Ներքին կարգավորիչները, հիմնականում, ազդում են արտադրության ծավալների, գների մակարդակի և շուկայական տոկոսադրույքի վրա: Համախառն պահանջարկի կրճատման դեպքում՝ ներքին կարգավորիչները կանխում են արտադրության ծավալների կտրուկ փոփոխությունները: Դրանց ազդեցությունը արտացոլվում է բյուջեների ցիկլային հավելուրդի կամ պակասորդի վրա:

Հարկաբյուջետային դիսկրեցիոն և ոչ դիսկրեցիոն քաղաքականությունները կիրառվում են՝ հաշվի առնելով ինչպես պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականության առանձնահատկությունները, այնպես էլ տնտեսության կարգավորման ուղղակի կամ անուղղակի ֆինանսական գործիքների և մեթոդների կիրառման հնարավորությունները: Հարկ է նշել, որ պետության հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է դրա թիրախավորվածությունից և տնտեսական իրավիճակներին համարժեք արձագանքելու կարողությունից: Զուտ քաղաքական նպատակներով դրա կիրառումը, ինչպես նաև արտաքին տնտեսական միջավայրում տեղի ունեցող ճգնաժամային իրավիճակները նվազեցնում են պետության հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով, այդ քաղաքականության այս կամ այն ուղղությունը գործի դնելուց առաջ մեծապես կարևորվում է արտաքին և ներքին տնտեսական իրավիճակների, ինչպես նաև այդ քաղաքականությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ երկրի տնտեսության վրա դրանց հնարավոր ազդեցությունների ճշգրիտ գնահատումը[1]:

Հարկաբյուջետային քաղաքականությունն, ինչպես նշվեց, իրականացվում է իր գործիքակազմի միջոցով: Վերջինիս մեջ ներառվում են այն տնտեսական մեխանիզմները, որոնք ապահովում են այդ քաղաքականության հիմքում դրված նպատակների իրագործումը: Այդպիսի գործիքների շարքին են դասվում պետական սուբսիդիաները և տրանսֆերտները, պետական գնումները, հարկերի և դրանց դրույքաչափերի փոփոխությունները, նոր հարկերի և այլ պարտադիր վճարների սահմանումը: Նշված գործիքներից յուրաքանչյուրը յուրովի է ազդում տնտեսության վրա: Օրինակ, տարբեր հարկերի դրույքաչափերի փոփոխությունները յուրովի են ազդում թե՛ տնտեսական ցուցանիշների վրա, և թե՛ այն խթանների վրա, որոնց միջոցով ապահովվում է տնտեսական աճը: Պետական ծախսերի տարբեր ձևերի կիրառումը նույնպես միանշանակ կերպով չեն ազդում տնտեսության վրա, քանի որ ծախսերի բազմարկիչի էֆեկտը տարբեր կերպ է ի հայտ գալիս: Օրինակ, բնական է, որ երկրի պաշտպանության համար ծախսերի ավելացումը այլ կերպ կազդի տնտեսության վրա, իսկ պետական տրանսֆերտների ավելացումը՝ մեկ այլ կերպ: Կախված տնտեսական ցիկլի համապատասխան փուլից, որում գտնվում է երկրի տնտեսությունը տվյալ ժամանակահատվածում և պետության տնտեսական քաղաքականության առանձնահատկություններից, հարկաբյուջետային քաղաքականության գործիքները տարբեր կիրառություն են գտնում: Մասնավորապես, տնտեսական անկման շրջանում, որպես խթանող և ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության գործիքներ կարող են հանդես գալ.

- հարկերի նվազեցումը, ինչպես նաև որոշ հարկատեսակների վերացումը,
- տրանսֆերտների ավելացումը,
- պետական գնումների ծավալների ավելացումը:

Զսպողական հարկաբյուջետային քաղաքականության գործիքներից կարելի է առանձնացնել.

- պետական գնումների ծավալների կրճատումը,

[1] Սարգսյան Կ.Ս., Պետական հակաճգնաժամային արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 157:

- հարկերի դրույքաչափերի ավելացումը, ինչպես նաև նոր հարկերի սահմանումը,
- պետական տրանսֆերտների կրճատումը:

Անդրադառնանք ՀՀ-ում մինչճգնաժամային և հետճգնաժամային հարկաբյուջետային քաղաքականության առանձնահատկությունների վերլուծությանը: Հարկ է նշել, որ ՀՀ–ում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը մինչ ֆինանսատնտեսական ճգնաժամը՝ 2004 թվականից հետո եղել է զսպողական: Այս քաղաքականության շնորհիվ զգալի կերպով զսպվեց համախառն առաջարկը, ինչպես նաև կրճատվեց պետական բյուջեի պակասորդը, ինչը ճիշտ ուղղություն էր տնտեսական վերելքի տվյալ ժամանակահատվածում: Արդյունքում, հնարավորություն ընձեռվեց նաև կրճատել պարտք/ՀՆԱ ցուցանիշը: Այսպես, եթե 2000 թվականին արտաքին պետական պարտքը ՀՆԱ-ի շուրջ 45 տոկոսն էր կազմում, ապա հետագա տարիներին այդ ցուցանիշն ունեցել է կայուն նվազման միտում և 2008 թվականի վերջին հասել էր 13.2 տոկոսի: Սա մեծապես նպաստեց հետագայում նոր ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու հնարավորությանը՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները հաղթահարելու նպատակով: Նշենք, որ հարկաբյուջետային զսպողական քաղաքականությունն ուղեկցվել է նաև մեղմ զսպողական դրամավարկային քաղաքականությամբ: Սակայն, տեղին է նշել, որ չնայած զսպողական տնտեսական քաղաքականության կիրառմանը, ՀՀ տնտեսության մեջ, այնուամենայնիվ, մինչև 2008 թվականը դիտվել է որոշակի գերտաքացում: Փաստացի պետական հարկաբյուջետային քաղաքականությունն այդ ընթացքում թեև եղել է զսպողական, սակայն, ոչ բավարար չափով: Սա արդյունք էր, հիմնականում, հարկահավաքման մակարդակի ոչ բարձր լինելու, տնտեսության որոշ հատվածներում մրցակցության բացակայության, ձևավորված կոշտ գների, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային բարեփոխումների իրականացման ոլորտում որոշակի բացթողումների: Նշված հանգամանքները էապես նվազեցնում են ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու տնտեսության ճկունությունը և ֆիսկալ քաղաքականության բազմարկիչ բնույթի ազդեցությունը: Արդյունքում, տնտեսական վերելքի փուլում տնտեսությունը ավելի շուտ է հայտնվում գերտաքացման մեջ, իսկ ճգնաժամերի ժամանակ՝ ավելի խորն է լինում տնտեսական անկման մակարդակը:

ՀՀ տնտեսության վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունները սկսեցին պարզորոշ դրսևորվել 2008 թվականի հոկտեմբեր ամսից և տնտեսական աճը 2008 թվականի վերջին՝ նախորդ տարիների երկնիշ ցուցանիշներից նվազեց՝ կազմելով ընդամենը 6.8 տոկոս: Իսկ արդեն 2009 թվականից՝ հայաստանյան տնտեսության մեջ սկսեցին ավելի վառ դրսևորվել ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2009 թվականի հունվար-ապրիլ ամիսներին՝ 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվեց 9.7 տոկոս տնտեսական անկում[1]:

Հաշվի առնելով ճգնաժամի ազդեցությունները՝ հարկաբյուջետային քաղաքականությունը 2008 թվականի 4-րդ եռամսյակից հետո սկսեց ունենալ որոշակի դժվարություններ: Մասնավորապես, այն դրսևորվեց հարկահավաքման հետ կապված խնդիրներով, քանի որ տնտեսական ակտիվության անկման պատճառով՝ պետբյուջեի հարկային մուտքերի տեմպը դանդաղեց:

2009 թվականի սկզբին արդեն հարկային եկամուտների հավաքագրման համար լուրջ դժվարություններ առաջացան: Կարևորելով տնտեսական աճի խթանման քաղաքականությունը, կառավարությունը պետական բյուջեի ծախսերի մի զգալի մաս սկսեց իրականացնել պետական բյուջեի պակասուրդի մեծացման հաշվին: Արդյունքում, եթե տարեսկզբին պետական բյուջեի պակասուրդի մակարդակը նախատեսված էր ՀՆԱ-ի 1 տոկոսի չափով, ապա հետագայում այն բարձրացվեց մինչև 6.5 տոկոս՝ դրանով իսկ ընդլայնելով համախառն պահանջարկը[2]:

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ավելի ակտիվացավ 2009 թվականի սկզբից: Մասնավորապես, զգալիորեն մեծացան պետական արժեթղթերի թողարկման ծավալները: Սակայն, լայնամասշտաբ խթանող քաղաքականության համար անհրաժեշտ էին մեծածավալ ֆինանսական միջոցներ, և կարևորվում էր նաև միջազգային կառույցների և առանձին երկրների ֆինանսական օժանդակությունը, ինչը ՀՀ կառավարությունը ստացավ:

[1] www.armstat.am

[2] www.minfin.am

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները մեղմելու համար՝ ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ընթացել է հետևյալ ուղղություններով.

- ենթակառուցվածքային նախագծերի իրականացում, ինչն անմիջապես նպաստելու էր ներքին պահանջարկին՝ հետևաբար և տնտեսական աճին ու նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- հասցեական օժանդակություն՝ ժամանակավոր ֆինանսական դժվարություններ ունեցող ձեռնարկություններին,
- գործարար միջավայրի բարելավման և գործունեության համար անհրաժեշտ առկա խոչընդոտների վերացման միջոցով՝ օժանդակություն փոքր ու միջին բիզնեսին,
- սոցիալական ուղղվածություն ունեցող բյուջեի ծախսերի հետևողական իրականացում՝ թուլացնելու սոցիալական ճնշումները և հասարակության հոռետեսական սպասումները:

Վերը նշված միջոցառումները մեծապես նպաստեցին ճգնաժամի ազդեցությունների մեղմմանը՝ թույլ չտալով մեր տնտեսության մեջ խոշոր ցնցումներ: Սակայն, նկատենք, որ այդ քաղաքականությունը բավական խթանիչ բնույթ չկրեց՝ ապահովելու տնտեսական աճի տեմպերի վերականգնումը՝ հետճգնաժամային փուլում: Այսպես, ՀՀ-ում մակրոտնտեսական ցուցանիշները նույնիսկ 2014 թվականի դրությամբ չեն հասել մինչճգնաժամային մակարդակին: Ընդ որում, իրական ՀՆԱ-ի աճի գծով դրական ցուցանիշ արձանագրվեց միայն 2010թ.՝ 2.2%: 2011 թվականին իրական ՀՆԱ-ի աճը կազմեց 7,13%, ինչը բարձր էր 2008 թվականի արձանագրված մակարդակից, սակայն զգալիորեն զիջում էր 2007 թվականի մինչճգնաժամային 13.74% ցուցանիշը: Հարկ է նշել, որ իրական ՀՆԱ-ի աճի տեմպերը կրկին նվազել են 2013 և 2014 թվականներին՝ կազմելով համապատասխանաբար՝ 3.53% և 3.43%: Վերոգրյալն առավել պատկերավոր կերպով արտացոլված է ստորև բերված գծապատկերում:

Գծապատկեր 1

Իրական ՀՆԱ աճի շարժընթացը ՀՀ-ում 2007-2014թթ.[1]



ՀՀ-ում արդյունաբերական իրական աճի տեմպը 2010թ. թեև դրական ցուցանիշ արձանագրեց՝ 5,52%, սակայն 2011թ. կրկին նվազեց 0,01%-ով: Այնուհետ, 2012թ. այն կրկին աճեց՝ 5,16%-ով, 2013թ. կրկին կրճատվեց 0.87%-ով և 2014թ. աճ գրանցվեց՝ 0.52%: Ինչպես տեսնում ենք, արդյունաբերության իրական ծավալները դեռևս հեռու են մինչճգնաժամային մակարդակից և դրա հետ մեկտեղ նաև հետճգնաժամային ժամանակահատվածում կայուն դինամիկա չեն ցուցաբերում:

Անդրադառնալով հիմնական միջոցներում համախառն ներդրումների ցուցանիշին, արձանագրենք, որ այն ընդհուպ մինչև 2014 թվականը դեռևս բացասական դինամիկա է ունեցել: Ընդ որում, 2009թ. -25,35% ցուցանիշից հետո ամենացածր ցուցանիշն արձանագրվել է 2011թ.՝ -11,7%:

[1] Source: IMF, World Economic Outlook Database: October 2015 Edition,

2013թ. այս ցուցանիշը կազմել է՝ -7,90%, 2014թ.՝ -1,90%: Ավելի պատկերավոր կարծիք կազմելու համար նշենք, որ նշված ցուցանիշի գծով նախաճգնաժամային ցուցանիշը եղել է 18,16%՝ 2007թ.[1]:

Տնային տնտեսությունների վերջնական սպառման գծով թեև դրական շարժ է արձանագրվել 2010թ.՝ 3,79%, սակայն, այն ևս չի հասել նախաճգնաժամային մակարդակին և դրա հետ մեկտեղ նաև կայուն աճի միտումներ չի ցուցաբերում: Այսպես, 2012թ. այն կազմել է 9,09%, սակայն 2013թ. կտրուկ նվազել է՝ կազմելով 1,99%, իսկ 2014թ. ավելի է նվազել՝ հասնելով 0,49%[2]:

Հանրապետությունում ցավոտ հիմնախնդիր է մնում գործազրկությունը, որի մակարդակը ճգնաժամից հետո չի նվազել: Հետճգնաժամային ժամանակահատվածում գործազրկության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2010թ.՝ 19%: 2011-2014թթ. ժամանակահատվածում՝ ըստ տարիների այն կազմել է համապատասխանաբար 18,39%, 17,30%, 16,20%, 17.1%:

Վերը նշված հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար, կարծում ենք, ներկա փուլում ՀՀ կառավարության կողմից տարվող հարկաբյուջետային քաղաքականության մեջ պետք է ներառվեն այնպիսի միջոցառումներ, որոնց իրականացման արդյունքում մեր հանրապետությունում երկարաժամկետ և տնտեսական աճի համար բարենպաստ պայմաններ կձևավորվեն: Այդ ուղղությունները հետևյալն են.

1. Տնտեսության իրական հատվածում գործող ընկերություններին՝ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու գործում աջակցելու նպատակով պետական երաշխիքային հիմնադրամների ստեղծում,
2. Հարկային վարչարարության առավել պարզեցում և թափանցիկության ապահովում:
3. Գործարար միջավայրի վրա հարկային բեռի նվազեցում, այդ թվում՝ նախկինում ձևավորված հարկային ժամկետանց պարտավորությունների լրիվ ներում՝ պայմանով, որ ընկերությունները կշարունակեն իրենց գործունեությունը և նոր լրացուցիչ աշխատատեղեր կստեղծեն:
4. Նոր հավելյալ աշխատատեղեր ստեղծող ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրում:
5. Արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին ֆինանսական աջակցության և հարկային արտոնությունների տրամադրում:
6. Նոր ստեղծվող ընկերություններին հարկային արտոնյալ ժամկետի տրամադրում, իսկ փոքր կամ ընտանեկան բիզնես ստեղծելու դեպքում՝ նաև առաջին երկու տարում ընդհանրապես հարկերից ազատում:
7. Գործազուրկ անձանց վերամասնագիտացման նպատակով լայնամասշտաբ կրթական ծրագրերի մեկնարկի կազմակերպում և օժանդակում,
8. էներգախնայող և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների զարգացում և նորարարությունների խթանում:
9. Անշարժ գույքի շուկայի ակտիվացման նպատակով հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների համաֆինանսավորում: Նմանատիպ միջոցառումներ արդեն իսկ մեկնարկել են, մասնավորապես, երիտասարդ ընտանիքների և գիտնականների համար, սակայն, այդ վարկերի տոկոսադրույքները դեռևս բավական բարձր են, իսկ օգտվելու պայմանները սահմանափակված են, ուստի և լայն հասանելի չեն բոլոր ցանկացողների համար: Նպատակահարմար կլինի, որ այդպիսի ծրագրեր իրականացվեն բնակչության այլ խավերի համար և վերանայվեն այդպիսի աջակցությամբ վարկերի թե տոկոսադրույքները, և թե պայմանները:
10. Ազատ տնտեսական գոտիների ստեղծում՝ հիմնականում, ՀՀ հեռավոր շրջաններում, տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդիրները լուծելու, այդ տարածքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև աշխատուժի արտագաղթը կանխելու նպատակով:

Կարծում ենք, որ վերը նշված միջոցառումների իրականացումն էլ ավելի արդյունավետ ու հասցեական կդարձնի ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը և առաջիկա ժամանակահատվածում կապահովի կայուն տնտեսական աճ:

[1] Նույն տեղում:

[2] Source: IMF, World Economic Outlook Database: October 2015 Edition,

ՀՀ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրներին: Ներկա փուլում ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության մեջ պետք է ներառվեն այնպիսի միջոցառումներ, որոնց իրականացման արդյունքում մեր հանրապետությունում երկարաժամկետ տնտեսական աճի համար բարենպաստ պայմաններ կձևավորվեն:Այդպիսի միջոցառումներից կարող ենք առանձնացրել՝ ձեռնարկություններին ֆինանսական օժանդակությունը, գործարար միջավայրի վրա հարկային բեռի նվազեցումը և հարկային արտոնությունների տրամադրումը, էներգախնայող և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների զարգացումը, նորարարությունների խթանումը:

Բանալի բառեր. *պետություն,հարկաբյուջետային քաղաքականություն,երկարաժամկետ տնտեսական աճ, իրական ՀՆԱ աճի տեմպ:*

ОСОБЕННОСТИ ФИСКАЛЬНОЙ ПОЛИТИКА РА И ЕЕ ПРОБЛЕМЫ

КАРЕН САМВЕЛОВИЧ САРГСЯН, *к.э.н., доцент*
старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена проблемам фискальной политики в РА. На данном этапе в фискальную политику правительства РА должны быть включены такие мероприятия, в результате реализации которых будут сформированы благоприятные условия для долгосрочного экономического роста в нашей республике. К таким мерам причислены: оказание предприятиям финансовой поддержки, снижение налоговой нагрузки на бизнес-среду и предоставление налогых льгот, развитие энергосберегающих и ресурсосберегающих технологий, стимулирование инноваций.

Ключевые слова: *государство, фискальная политика, долгосрочный экономический рост, темпы роста реального ВВП.*

CHARACTERISTICS OF THE FISCAL POLICY IN THE REPUBLIC OF ARMENIA AND CURRENT ISSUES

KAREN SAMVEL SARGSYAN, *Ph.D., Associate Professor*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciencies, Republic of Armenia

Abstract

The article discusses the issues of fiscal policy in the Republic of Armenia. At the current stage of development the fiscal policy carried out by the Government of the Republic of Armenia needs to incorporate such measures if implemented, would ensure favorable environment for the long-run economic growth in the Republic. Among these measures the followings could be specifically mentioned: financial assistance to enterprises; reduction of the tax burden on the business climate and providing tax incentives; development energy- and resource-saving technology; and promoting innovation.

Keywords: *State fiscal policy, long-run economic growth, real GDP growth rates.*

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ֆինանսատնտեսական ճգնաժամերի հաղթահարման գործում կարևոր դերակատարում ունի պետական հակաճգնաժամային մակրոտնտեսական քաղաքականության իրականացումը ինչպես դրամավարկային, այնպես էլ հարկաբյուջետային ոլորտներում: Խոսելով ճգնաժամերի հաղթահարմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության մասին, հարկ է նշել, որ, մասնավորապես, տնտեսական անկման շրջանում, որպես խթանող և ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության գործիքներ կարող են հանդես գալ հարկերի նվազեցումը, ինչպես նաև որոշ հարկատեսակների վերացումը, տրանսֆերտների ավելացումը, պետական գնումների ծավալների ավելացումը և այլն:

Հարկ է նշել, որ ճգնաժամի պայմաններում՝ գործարար միջավայրի ակտիվացման և տնտեսական աճի խթանման տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունի հարակային բեռի կրճատումը: Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման նպատակով աշխարհի բազմաթիվ երկրներ նվազեցրեցին հարկային բեռը՝ ընդհուպ մինչև որոշակի հարկատեսակների լրիվ վերացում: Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա այստեղ հարկային բեռի որևէ կրճատում տեղի չունեցավ: Ներկայումս, տնտեսության ակտիվացման, պահանջարկի, սպառման և ներդրման խթանման համար խիստ անհրաժեշտություն կա հարկային բարեփոխումների ճանապարհով նվազեցնել հարկային բեռը և միաժամանակ ընդլայնել հարկման բազան, ինչը թույլ կտա Հայաստանի հարկային համակարգն ավելի արդյունավետ դարձնել:

Այժմ փորձենք ներկայացնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հարցում կարևոր նշանակություն ունեցող հարկատեսակներից մի քանիսի հետ կապված բարեփոխումները՝ հակաճգնաժամային հարկային միջոցառումների համատեքստում:

Մեր հանրապետության հարկային համակարգը բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով, իսկ իրականացվող հարկային քաղաքականությունը հիմնվում է բացառապես հարկերի ֆիսկալ գործառույթի վրա: Հանրապետությունում հարկային համակարգի կայացումից ի վեր ԱԱՀ-ն մեծ տեսակարար կշիռ է կազմել ինչպես հարկային եկամուտների կազմում, այնպես էլ ՀՆԱ-ում, և վերջինս կայուն աճի միտում է ունեցել տարիների ընթացքում[1]: Այսպես, 2008թ. ՀՀ պետական բյուջեի ԱԱՀ գծով մուտքերը կազմել են ընդհանուր հարկային եկամուտների 52%-ը, իսկ արդեն 2009 թվականին, երբ ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունները զգացվում էին ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերում, այս ցուցանիշը մի փոքր նվազում արձանագրեց՝ կազմելով 49%, սակայն, ակցիզային հարկի և մաքսատուրքի հետ միասին նշված տարում այն կազմում էր ընդհանուր հարկային եկամուտների շուրջ 60%-ը: Ինչ վերաբերում է հաջորդող տարիներին, ապա առկա է եղել հետևյալ պատկերը: Այսպես, 2010թ. ԱԱՀ գծով մուտքերը կազմել են ընդհանուր հարկային եկամուտների 49.90%-ը, 2011թ. 51,5%, 2012թ. 50,4%, 2013թ. 41% , իսկ 2014թ. 43% [2]: Չնայած նկատվել են որոշակի նվազման միտումներ, սակայն նշված ցուցանիշը գտնվում է դեռևս բարձր մակարդակի վրա: Ինչպես տեսնում ենք, ԱԱՀ-ն հանդիսանում է պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուրը: Սակայն, միաժամանակ, հարկ է նշել, որ բացի զուտ ֆիսկալային գործառույթից այս հարկատեսակն ունի նաև այլ՝ կարգավորիչ գործառույթ, որը լայնորեն կիրառվում է աշխարհի բազմաթիվ երկրներում: ԱԱՀ-ն հանդիսանալով անուղղակի հարկ, մտնելով ապրանքի գնագոյացման մեջ հանդիսանում է վերջինիս շուկայական առաջարկի և պահանջարկի ձևավորման կարևոր գործոն և անմիջականորեն ազդում է արտադրության ու իրացման ծավալների վրա և, հետևաբար, նաև երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա:

---

[1] Հարությունյան Վ.Լ.,Հարությունյան Տ.Վ.,Հարությունյան Դ.Վ., Հարկեր և հարկագանձում, Երևան, ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2010, էջ 337;

[2] http://www.taxservice.am/Content.aspx?itn=TIY2013

Ներկայումս, հանրապետությունում ԱԱՀ-ին առնչվող կարևորագույն խնդիրներից մեկը կապված է այդ հարկատեսակի բարձր և ստանդարտ կերպով կիրառվող հարկադրույքի հետ: Տնտեսական զարգացումների ներկա փուլում՝ ԱԱՀ-ի դրույքի նվազեցումը կարող է էականորեն նպաստել արտադրության ծավալների ընդլայնմանը և ապրանքների ընդհանուր գների նվազեցմանը, ինչը հատկապես կարևոր է ճգնաժամի պայմաններում: Հակաճգնաժամային հարկային միջոցառումների շարքում նպատակահարմար կլինի նաև կենսական նշանակության ապրանքների և ծառայությունների համար կիրառել ԱԱՀ-ի նվազեցված դրույք (ինչպես արվում է աշխարհի բազմաթիվ երկրներում): Նվազեցված դրույքը հիմնականում կիրառվում է առաջին անհրաժեշտության մթերային, դեղագործական ապրանքների, ջրամատակարարման, էներգամատակարարման, պարբերականների տպագրության, ուղևորատար տրանսպորտային ծառայության և նման այլ սոցիալական նշանակության ոլորտի ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Նշենք նաև, որ ԵՄ երկրներում ԱԱՀ-ի նվազեցված դրույքը սահմանվում է 5-9% միջակայքում, իսկ որոշ երկրներում՝ նույնիսկ 0%[1]: Կարծում ենք, որ այս քայլը մեր հանրապետությունում կնպաստի ազգաբնակչության սոցիալական վիճակի էական բարելավմանը և սոցիալական բևեռացման կրճատմանը:

Կարծում ենք, որ ճգնաժամային իրավիճակում հարկադրույքի իջեցման պատճառով բյուջետային մուտքերի նվազեցումը հնարավոր կլինի փոխհատուցել շնորհիվ այլ հարկային մուտքերի ավելացման, ինչպես նաև անարդյունավետ բյուջետային ծախսերի կրճատման ճանապարհով: Մասնավորապես, գների իջեցման շնորհիվ աճող պահանջարկը կարող է նպաստել նաև արտադրության ծավալների ընդլայնմանը, դրանով իսկ հանգեցնելով արտադրողների ֆինանսական վիճակի բարելավմանը, շահույթի մեծացմանը և հետևաբար, նաև այդ մասով հարկային եկամուտների ավելացմանը: Կարևոր է նշել նաև, որ հարկադրույքի իջեցումն անհրաժեշտ է իրականացնել աստիճանաբար, ինչը հնարավորություն կտա խուսափել բյուջետային հարկային մուտքերի կտրուկ նվազումից, իսկ սկզբնական շրջանում կրած կորուստներն էլ հնարավոր կլինի մասնակի ծածկել շահութահարկի գծով հարկային եկամուտների ավելացման շնորհիվ:

Ճգնաժամի պայմաններում ԱԱՀ-ի դրույքի իջեցումը և նվազեցված (արտոնյալ) դրույքի կիրառումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության հատկապես արդյունաբերական ոլորտի աճին՝ հետճգնաժամային փուլում: Դրանից առաջին հերթին կարող են շահել ավելացված արժեքի բարձր ցուցանիշ ունեցող արդյունաբերական ձեռնարկությունները, որոնք հնարավորություն կստանան ԱԱՀ-ի նվազեցման շնորհիվ ձևավորված ազատ դրամական միջոցներն ուղղել արտադրության վերազինմանը և հիմնական կապիտալի ընդլայնմանը:

Այսպիսով, ենթադրվում է, որ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը կարող է նպաստել ապրանքների գների իջեցմանը, սպառման և արտադրության ծավալների, ինչպես նաև ՀՆԱ-ի աճին, հարկատուների եկամուտների ավելացմանը և դրանով բյուջեի ուղղակի հարկերի գծով մուտքերի աճին, սակայն կա նաև մտավախություն, որ հարկադրույքի իջեցումը տեղական արտադրողների կողմից կարող է կիրառվել այլ տեսանկյունից: Մասնավորապես, հնարավոր է, որ կազմակերպությունները, սեփական շահերից ելնելով, ԱԱՀ-ի դրույքի նվազեցումը փորձեն դիտել որպես իրենց եկամտային հոսքերի ավելացման ևս մեկ հնարավորություն: Այսինքն՝ չնվազեցնելով ապրանքների գները և չկատարելով նոր ներդրումներ՝ կազմակերպությունները կփորձեն ավելացնել իրենց սեփական օգուտները այն միջոցների հաշվին, որոնցից «հրաժարվել է» պետությունը:

Նման իրավիճակում պետությունը պետք է փորձի վարչարարական բնույթի որոշակի միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու արտադրողների կողմից գնագոյացման հարցում կամայականությունների բոլոր հնարավոր դրսևորումները: Մասնավորապես, պետությունը կարող է օրենսդրորեն սահմանափակել արտադրողների կողմից ապրանքի ինքնարժեքի անհիմն բարձրացումը: Այսպիսով, պետության քայլերը պետք է ուղղված լինեն ԱԱՀ-ի նվազեցման՝ շնորհիվ մանրածախ գների իջեցման ապահովման:

Ի տարբերություն զարգացած երկրների, որտեղ ԱԱՀ-ն համարվում է տնտեսության պետական կարգավորման առավել արդյունավետ գործիք՝ անցումային տնտեսությամբ երկրներում, ինչպիսին Հայաստանն է, հատկապես ճգնաժամային պայմաններում ԱԱՀ-ի գծով բարեփոխումների հնարավոր բացասական դրսևորումները հիմք են ստեղծում առավել մանրամասն ուսումնասիրելու և առավել հստակ սահմանելու ԱԱՀ-ի դրույքի ցանկացած չափով փոփոխություն:

[1] VAT Rates Applied in the Member States of the European Union. Situation at 14th January 2013,Brussels – Belgium

Ինչ վերաբերում է շահութահարկին, ապա որոշակի կարծիքներ կան, որ շահութահարկը տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների շարքում երկրորդական դերակատարում ունի: Այս տեսակետը հիմնվում է այն իրողության վրա, որ ցանկացած կազմակերպության հմուտ հաշվապահ կարող է շրջանցել այս հարկի գծով օրենքի դրույթները և կազմակերպության շահույթը ներկայացնել ավելի քիչ, քան իրականում կա: Այսպիսով, այս հարկատեսակի դրույքների հետ կապված հակաճգնաժամային փոփոխությունները կարող են ավելի քիչ բացասական դրսևորումներ ունենալ, քան ԱԱՀ-ի դեպքում: Այս հարկատեսակի հետ կապված՝ որպես հակաճգնաժամային միջոցառումներ կարող են հանդես գալ տարաբնույթ արտոնությունների կիրառումը հատկապես ներդրումների խթանման, գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների ֆինանսավորման, փոքր ձեռնարկությունների աջակցության նպատակով: Այդ արտոնությունները կարող են հանդես գալ հարկման ենթակա շահույթի կրճատման, հարկադրույքի իջեցման, հարկի գումարի նվազեցման, հարկերի վճարման հետաձգման կամ նույնիսկ հարկից ազատելու միջոցով: Գործունեության առանձին տեսակների աջակցության և տնտեսության որոշակի ճյուղերի աշխուժացման նպատակով նման քայլերի կիրառումը կարող է իր դրական ազդեցությունն ունենալ ճգնաժամի հաղթահարման համար:

Շահութահարկի գծով հակաճգնաժամային բարեփոխումներից կարելի է առանձնացնել նաև արագացված ամորտիզացիայի կիրառումը, որի շնորհիվ հարկման ենթակա եկամուտներից նվազեցվող ամորտիզացիոն մասհանումների հաշվարկային մեծությունը գերազանցում է տնտեսապես հիմնավորված ամորտիզացիայի մեծությանը: Դրա շնորհիվ շահույթի որոշակի մասն ազատվում է հարկումից՝ ամորտիզացվող գումարը ծախսերին վերագրելու միջոցով: Արագացված ամորտիզացիայի կիրառման հիմնական առանձնահատկությունը ներդրումների աճին նպաստելն է հատկապես էկոլոգիական նշանակության, ինչպես նաև ջուր և էներգիա խնայող տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման ուղղությամբ: Որպեսզի դրա կիրառումը լինի արդյունավետ, անհրաժեշտ կլինի այդ մասով փոփոխություններ կատարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում՝ վերանայելով գործող ամորտիզացիոն նվազագույն ժամկետները: Բացի այդ, նպատակահարմար կլինի պաշտոնապես հաստատել արագացված ամորտիզացիայի ենթակա հիմնական միջոցների ցանկը, ինչպես նաև տարբեր տեսակի հիմնական միջոցների համար արագացված ամորտիզացիայի կիրառման մեթոդներն ու դրույքները:

Շահութահարկի գծով հարկային արտոնությունների կարևոր ուղղություններից է հարկվող շահույթի նվազեցումը, եթե այդ շահույթն ուղղվելու է ներդրումների ֆինանսավորմանը: Ներդրումների մեծությունից կախված՝ կարող են սահմանվել առանձին դրույքներ, քանի որ պետական քաղաքականության տեսանկյունից հատկապես ճգնաժամի պայմաններում արդարացված չէ այն, որ կապիտալ ներդրումներ իրականացնող և չիրականացնող կազմակերպությունները հարկման տեսանկյունից գրեթե նույն պայմաններում են գտնվում:

Հակաճգնաժամային հարկային բարեփոխումների շարքում կարելի է առանձնացնել նաև շահութահարկի գծով կանխավճարների վճարման կարգի փոփոխությունը: Ճգնաժամի պայմաններում կազմակերպությունները հայտնվում են ֆինանսական դժվար կացության մեջ: Նման իրավիճակում նպատակահարմար չի լինի ստիպել կազմակերպություններին շարունակել նախկին ձևով կատարել կանխավճարների գծով իրենց պարտավորությունները: Օրենսդրության փոփոխության արդյունքում շահութահարկի կանխավճարների վերացումը կամ առնվազն գոնե դրանց մուծման հաճախականության նվազեցումը հնարավորություն կտա ձեռնարկություններին ֆինանսական որոշակի միջոցներ ունենալ իրենց տրամադրության տակ, որոնք կարող են օգտագործվել արտադրության արդիականացման և վերազինման, ինչպես նաև գործունեության ընդլայնման համար: Նման կերպ հարկատուները կարող են հատկապես անկումային տարիներին առավել արդյունավետ տնօրինել իրենց ֆինանսական միջոցները:

Կարծում ենք, որ պետության հարկային քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարում պետք է ուղղված լինի տնտեսությունում ներդրումների խթանման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը, մասնավորապես՝ նոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արտադրությանը, ինչպես նաև դրանց պահանջարկի աճի խթանմանը: Նման քայլերը կարող են նպաստել ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը, նոր կազմակերպությունների ստեղծմանը, ինչպես նաև երկրի տնտեսական զարգացվածության ցածր մակարդակ ունեցող շրջանների զարգացմանը:

Շահութահարկի մասով հակաճգնաժամային միջոցառումների համատեքստում նպատակահարմար կլինի նաև շահույթից նվազեցվող ծախսերի առավելագույն նորմաների վերանայումը: Կազմակերպությունները պետք է հնարավորություն ունենան համախառն շահութից նվազեց-

նելու փաստաթղթերով հիմնավորվող բոլոր ծախսերը, այլապես նորմալ վերարտադրության գործընթացի կազմակերպումը կարող է լուրջ խնդիրների բախվել:

Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանցից գանձվող հարկերին, ապա դրանց կառուցվածքում մեծ մասնաբաժին են կազմում եկամուտներից գանձվող հարկերը: Ընդ որում, դրանք նաև բյուջեի ձևավորման հարցում մեծ կարևորություն ունեցող հարկեր են: Ներկայումս, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը հիմնականում կենտրոնացած է աշխատավարձի հարկման ուղղությամբ: Սակայն, կան նաև եկամտի այլ աղբյուրներ, որոնք ընդհանրապես հարկման դաշտում չեն կամ նվազեցվում են հարվող եկամտից՝ թեև ֆիզիկական անձանց եկամուտների մաս են կազմում (ինչպես օրինակ՝ ժառանգությունն ու նվիրատվությունը, ֆինանսական ոլորտի գործառնություններից ձևավորվող եկամուտը, օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպություններից ստացվող եկամուտները, արտասահմանյան դրամական փոխանցումները, չհայտարարագրված ունեցվածքը և այլն): Այսպիսով, ստացվում է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը չի կրում համընդհանուր և համահավասար բնույթ, չի ապահովվում արդյունավետ վերաբաշխում՝ բնակչության եկամուտների համահարթեցման նպատակով, դրանով իսկ անտեսվում է արդարության սկզբունքը: Այս ոլորտում լուրջ բարեփոխումների կարիք կա՝ հարկման բազայի ընդլայնման, հարկման արդյունավետության բարձրացման և համահավասարության, համընդհանրության ու արդարության սկզբունքների արմատավորման գործում:

Նման խնդիրներն ավելի ակնհայտ են դառնում ու ավելի բացասական ազդեցություն են ունենում հատկապես ճգնաժամի պայմաններում: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հարկային համակարգի առանձնահատկությունները և առկա ճգնաժամային երևույթները՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումները կարող են ուղղված լինել՝

- ֆիզիկական անձանց եկամուտների բոլոր աղբյուրների հարկման միջոցով բյուջեի եկամուտների ավելացմանը և պրոգրեսիվ հարկման կիրառմանը,
- ֆիզիկական անձանց եկամուտների ու ծախսերի նկատմամբ արդյունավետ հսկողություն սահմանելուն,
- հարկման գործընթացում արդարության ապահովմանը, բնակչության եկամուտների չափազանց մեծ տարբերակվածությունը նվազեցնելու և հասարակության անապահով մասի օգտին դրանք վերաբաշխելու նպատակով՝ պրոգրեսիվ հարկման կիրառմանը և հարկային արտոնությունների սահմանմանը:

Նշված նպատակների իրագործման համար անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել փոխկապակցված հարկերի համակարգ, որն ընդգրկի ֆիզիկական անձանց բոլոր եկամուտները և ունեցվածքը, ինչպես նաև հիմնված լինի կատարված ծախսերի միջոցով ֆիզիկական անձանց եկամուտների չափը բացահայտելուն: Համակարգը կարող է առավել արդյունավետ գործել համընդհանուր պրոգրեսիվ հարկ կիրառելու դեպքում՝ հիմքում դնելով ֆիսկալ և սոցիալական (արդարացի լինելու) տեսանկյուններից դրա արդյունավետությունը: Նպատակահարմար կլինի հարկման դրույքը սահմանել՝ ելնելով ոչ թե անվանական, այլ իրական եկամտի մեծությունից (այսինքն հաշվի առնելով եկամուտների գնողունակությունը), հասարակության ապահովված և հարուստ խմբերի համար սահմանել ավելի բարձր դրույք, քան ապահովվածության միջին և ցածր մակարդակ ունեցողների համար, հարկումից ազատել կենսաապահովման նվազագույն մակարդակից ցածր եկամուտ ունեցողներին, եկամտահարկի հաշվարկման մեխանիզմում ներառել ինֆլյացիայի մակարդակը հաշվի առնող գործակից: Անհրաժեշտ կլինի նաև կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և ապահովել համակարգի գործողության նկատմամբ համապատասխան պետական հսկողություն:

Տնտեսական ճգնաժամի առկայության, բյուջեի հարկային մուտքերի նվազման և հարկերից խուսափելու դեպքերի ավելացման պայմաններում պետության կողմից իրականացվող նման հակաճգնաժամային միջոցառումները կարող են հանգեցնել ֆիզիկական անձանց եկամուտների հարկման սոցիալական ուղղվածության խթանմանը, ինչպես նաև անհավասարության և անարդարության կրճատմանը:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԿԱՐԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Պետության հարկաբյուջետային քաղաքականությունը կարևոր դերակատարում ունի ֆինանսատնտեսական ճգնաժամերի արդյունավետ հաղթահարման գործում: Ճգնաժամի պայմաններում՝ գործարար միջավայրի ակտիվացման և տնտեսական աճի խթանման տեսանկյունից առավել մեծ նշանակություն ունի հարակային բեռի կրճատումը, որը մեր հանրապետությունում տեղի չունեցավ:

Ներկայումս, տնտեսության ակտիվացման, պահանջարկի և ներդրումների խթանման համար խիստ անհրաժեշտություն կա հարկային բարեփոխումների ճանապարհով նվազեցնել հարկային բեռը և միաժամանակ ընդլայնել հարկման բազան, ինչը թույլ կտա Հայաստանի հարկային համակարգն ավելի արդյունավետ դարձնել:

Բանալի բառեր. *հարկաբյուջետային քաղաքականություն, ֆինանսատնտեսական ճգնաժամ, պետական բյուջեի եկամուտներ, հարկային բեռի կրճատում:*

РОЛЬ И ОСОБЕННОСТИ НАЛОГОВО-БЮДЖЕТНОЙ ПОЛИТИКИ В КОНТЕКСТЕ ПРЕОДОЛЕНИЯ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКИХ КРИЗИСОВ

КАРЕН САМВЕЛОВИЧ САРГСЯН, *к.э.н., доцент*
старший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Фискальная политика государства играет важную роль в эффективном преодолении финансово-экономических кризисов. В условиях кризиса с точки зрения активизации бизнес-среды и стимулирования экономического роста наиболее важное значение имеет сокращение налоговой нагрузки, что не было проведено в нашей республике.

В настоящее время для стимулирования экономической активности, спроса и инвестиций крайне необходимо путем проведения налоговых реформ снизить налоговое бремя и одновремено расширить налогооблагаемую базу, что позволит сделать налоговую систему Арменнии более эффективной.

Ключевые слова: *налогово-бюджетная политика, финансово-экономический кризис, доходы государственного бюджета, сокращение налоговой нагрузки.*

THE ROLE AND CHARACTERISTICS OF FISCAL POLICY IN THE CONTEXT OF FIGHTING FINANCIAL AND ECONOMIC CRISES

KAREN SAMVEL SARGSYAN, *Ph.D., Associate Professor*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciencies, Republic of Armenia

Abstract

The fiscal policy implemented by the government plays a crucial role in effectively copying with financial and economic crises. To boost the business climate and promote the economic growth during crises, reduction of the tax burden is of high importance that wasn't reported in our Republic. Currently, in order to boost the economy and demand, and promote investments, it is highly required to reduce the tax burden and widen the tax base, by implementing tax reforms that will enable to make the tax system of Armenia more effective.

Keywords: *Fiscal policy, financialand economic crisis, state budge revenuet, tax burden reduction.*

ԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՍԵՐՈԲՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հարկային և ֆինանսական հաշվառման համակարգերի միասնականացման հիմնախնդիրը դեռևս շարունակվում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Կատարվել են բազմաթիվ վերլուծություններ միասնական համակարգի ստեղծման նպատակով, սակայն դեռևս այդ հարցում վերջնական լուծում չի տրվել:

Հաշվապահական և հարկային հաշվառումների ինտեգրացիայի մեթոդը որպես մեկ միասնական հաշվառումային մեթոդի իրականացնումը հնարավոր է, եթե

ա) առանձնացվում են ենթահաշիվների ստեղծման և հաշվառման օբյեկտների վերլուծական չափանիշները,
բ) ստեղծվում է պահուստաֆոնդ:

Ենթահաշիվների ստեղծումը և հաշվառման օբյեկտների վերլուծական չափանիշների առանձնացումը գործնականում չի կիրառվում, քանի որ տվյալ մեթոդն իդեալական է միայն այն դեպքերում, երբ հարկային հաշվառման համար ցուցանիշի մեծությունն ավելի փոքր է, քան ֆինանսական հաշվառման մեջ: Երբեմն տեղի է ունենում և հակառակը: Այսպես, օրինակ, ֆինանսական հաշվառման նպատակով ծախսերը վերաբերում են գործառնություններին, իսկ հարկադրման նպատակով ծախսերը՝ արտահիրացումային գործունեությանը, քանի որ հարկային հաշվառման մեջ գործառնական ծախս հասկացություն ընդհանրապես գոյություն չունի: Այդ դեպքում, տվյալ մեթոդը նպատակահարմար չէ կիրառել, քանի որ ֆինանսական բաժնի պատասխանատուն ստիպված է լինելու արտահամակարգային հաշվառում վարել:

Միասնականացման տվյալ մեթոդի իրացման դեպքում հարկային ռեգիստրների մշակման անհրաժեշտություն է առաջանում, որի դերում կարող են հանդես գալ ֆինանսական հաշվառման հաշիվների շրջանառության տեղեկագրերը, ներառյալ՝ ենթահաշիվները և վերլուծական չափանիշները և հարկային հաշվառման արտահամակարգային և արտահաշվեկշռային հաշիվները:

Հաշվապահական և հարկային հաշվառումների տվյալների խմբավորման տարբեր մեթոդների արտացոլման համար կարելի է կիրառել պահուստավորման մեթոդը: Պահուստավորումը լայնորեն կիրառվում է ֆինանսական հաշվառման մեջ օբյեկտների մի քանի թվային ցուցանիշներով (հիմքերով) միաժամանակ գնահատման համար:

Պահուստավորման կանոնները հետևյալն են[1].

- եթե «ֆինանսական» արժեքը մեծ է «հարկային» արժեքից, ապա կիրառվում է հակադիր հաշիվը,
- եթե «ֆինանսական» արժեքը փոքր է «հարկային» արժեքից, ապա կատարվում է լրացուցիչ գրանցում:

Այսպիսով՝ տարբեր մեթոդների օգտագործման հնարավորությունը հարկային հաշվառում վարելու համար պահանջում է մանրամասն քննարկում և ֆինանսական և հարկային հաշվառումների ինտեգրացիայի այնպիսի մեթոդի ստեղծում, որը կհամապատասխանի հաշվառման տեղեկատվության ձևավորման պահանջներին բոլոր շահագրգիռ կողմերի համար, այդ թվում և հարկային մարմինների:

Գոյություն ունի երկու տեսակի հաշվառումների տվյալների միասնական համակարգի մեկ աշխատանքային հաշվային պլանում տեղադրման ակնհայտ առավելություն[2]:

---

[1] ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ՀՀՊՏ, N12 (746), 24.03.2010, էջ 406-417:

[2] Малявкина Ж.И., Тарасова Е.Ю. Налоговый учет: дополнительная и самостоятельная система учета // Аудиторские ведомости, 2013. – № 7. – С. 73 – 76.

Առաջինը, առանց ՀՀ ֆինանսների նախարարության թույլտվության, ազատ սինթետիկ հաշիվների օգտագործման արգելքը վերաբերում է միայն տնտեսվարող սուբյեկտի հատուկ գործառույթների արտացոլման դեպքերին, այսինքն՝ այդ հաշիվների այնպիսի օգտագործման, որի դեպքում այդ հաշիվների գրանցումներն ազդում են ֆինանսական հաշվետվության վրա: Ազատ հաշիվների օգտագործումը միայն վարչական հաշվառման նպատակներով, միասնական ֆինանսական հաշիվների լրիվ և ճիշտ օգտագործմամբ, չի հակասում ֆինանսական հաշվառման նպատակներին:

Երկրորդը, հաշվային պլանի կիրառման հրահանգներով[1] իրավունք է տրվում բաժանել և միացնել ենթահաշիվները, նոր ենթահաշիվ բացել՝ ելնելով վերահսկողության և հաշվետվության վերլուծության պահանջներից: Այդ պատճառով էլ նախադրյալներ կան միայն ենթահաշիվներով ինտեգրացված հաշվառման համակարգեր ստեղծելու համար, օգտագործելով հատուկ արտացոլող ենթահաշիվ, որպեսզի ֆինանսական ենթահաշիվների և սինթետիկ հաշիվների մնացորդները և շրջանառությունները չփոփոխվեն:

Որպես թերություն կարելի է նշել երկակի գրանցման բացակայությունը, որն ապահովում է հարկային բազայի ձևավորման թափանցիկությունը և այն, որ հարկային բազայի հաշվարկի համար անհրաժեշտ ոչ բոլոր տվյալները կարող են ձևակերպվել արտահաշվեկշռային հաշիվներում:

Այսպիսով՝ մեր կողմից առաջարկվում է հաշվային պլանում ավելացնել *431 «Մշտական տարբերություններ»* ակտիվապասիվային հաշիվը, որի դեբետում կարտացոլվի հարկային բազան նվազեցնող մշտական տարբերությունները, իսկ կրեդիտում՝ հարկային բազան ավելացնող մշտական տարբերությունները: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին այս հաշվի մնացորդը կտեղափոխվի *4313 «Մշտական տարբերությունների սալդո» հաշվին:*

431 «Մշտական տարբերություններ» հաշվին կից առաջարկվում է բացել հետևյալ ենթահաշիվները՝

4311 «Հարկային բազան ավելացնող մշտական տարբերություններ»,

4312 «Հարկային բազան նվազեցնող մշտական տարբերություններ»,

4313 «Մշտական տարբերությունների սալդո»:

Հարմարավետության համար 4311 «Հարկային բազան ավելացնող մշտական տարբերություններ» և 4312 «Հարկային բազան նվազեցնող մշտական տարբերություններ» հաշիվներին կից ստեղծել հետևյալ հաշիվները՝

1 - իրացումից հասույթ,

2 - ոչ գործառնական եկամուտներ,

3 – ուղղակի ծախսեր,

4- անուղղակի ծախսեր

5- ոչ գործառնական ծախսեր:

Գծապատկեր 1-ում ներկայացրել ենք 431 «Մշտական տարբերություններ» հաշվի կառուցվածքը:

431 «Մշտական տարբերություններ» հաշվին զուգահեռ առաջարկում ենք հաշվառումը վարել նաև *432 «Ժամանակավոր տարբերություններ»* արտահաշվեկշռային հաշվով: Այս հաշվի դեբետում կարտացոլվի այն մշտական տարբերությունները, որոնք կնվազեցնեն հարկային բազան, իսկ կրեդիտում՝ որոնք կավելացնեն հարկային բազան:

432 «Ժամանակավոր տարբերություններ» հաշվին կից առաջարկում ենք բացել հետևյալ ենթահաշիվները՝

432.1 - իրացումից հասույթ,

432.2 - ոչ գործառնական եկամուտներ,

432.3 - ուղղակի ծախսեր,

432.4 - անուղղակի ծախսեր

432.5 - ոչ գործառնական ծախսեր:

[1] Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան և դրա կիրառման հրահանգ, Հավելված ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի ապրիլի 17-ի թիվ 353-ն հրաման:

«Մշտական տարբերություններ» հաշվի կառուցվածքը[1]



Ֆինանսական և հարկային հաշվառումների տարբերությունների առաջացման պատճառներից է նաև հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքի հաշվարկման հետ տարբեր մոտեցումները, մեթոդները: Հարկվող շահույթը որոշելիս հարկային օրենսդրությամբ համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների չափով[2]:

Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության հաշվառումը հարկային օրենսդրության պահանջներին համապատասխան վարելու համար առաջարկում ենք 433 «Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն» արտահաշվեկշռային հաշիվը: 433 «Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն» հաշվին կից առաջարկում ենք բացել հետևյալ ենթահաշիվները՝

433.1 – Հիմնական միջոցների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն,

433.2 – Ոչ նյութական ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն:

Գծապատկեր 2-ում ներկայացրել ենք ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության միասնական հաշվառման մեխանիզմը 433 «Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն» (ժամանակավոր տարբերություններ մաշվածության գծով) հաշվի կիրառմամբ:

[1] Կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Լ.Ի.Կուլակովայի «Մշտական հարկային պարտավորությունների հաշվառում» հետազոտությունը:

[2] «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, ՀՕ-155, ՀՀՊՏ, N27, 03.12.1997, էջ 8:

Գծապատկեր 2

Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածության միասնական հաշվառման մեխանիզմ[1]



Մաշվածության հետևանքով առաջացած ժամանակավոր տարբերությունների արտացոլման գործընթացը ներկայացրել ենք գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3

Մաշվածության հետևանքով առաջացած ժամանակավոր տարբերություններ[2]



Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ֆինանսական հաշվառման մեջ մաշվածության գումարի աճը հանգեցնում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների աճին, և հակառակը,

[1] Կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի ապրիլի 17-ի թիվ 353-ն հրամանը:

[2] Նույն տեղում:

ֆինանսական հաշվառման մեջ մաշվածության գումարի նվազումը հանգեցնում է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների նվազմանը, այս ամենը համապատասխանաբար կարտացոլվի 432 «Ժամանակավոր տարբերություններ» հաշվի դեբետում և կրեդիտում:

Ոչ ընթացիկ ակտիվների օտարման դեպքում միավոր ոչ ընթացիկ ակտիվի հաշվառումը 432 «Ժամանակավոր տարբերություններ» և 433 «Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն» հաշիվների կիրառությամբ առաջարկում ենք վարել գծապատկեր 4-ում ներկայացված ալգորիթմի համաձայն:

Գծապատկեր 4

Ոչ ընթացիկ ակտիվների օտարման դեպքում միավոր ոչ ընթացիկ ակտիվի հաշվառումը 432 «Ժամանակավոր տարբերություններ» և 433 «Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն հարկային օրենսդրության համաձայն» հաշիվների միջոցով



Այս ալգորիթմը ներկայացնում է ոչ ընթացիկ ակտիվների հաշվառման հաշիվների շարժի արտացոլումը միասնական հաշվառման համակարգում:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ մշտական և ժամանակավոր տարբերությունների հիման վրա ֆինանսական և հարկային հաշվառման միասնական համակարգերի ստեղծումը ապահովում է.

- ֆինանսական և հարկային հաշվառման համակարգերի միասնականացում,
- ֆինանսական և հարկային հաշվառման տարբեր սկզբունքների պատճառով առաջացած հարկային տարբերությունների արժանահավատ, թափանցիկ և հետևողական հաշվառում,
- աշխատուժի և ֆինանսական ծախսերի նվազեցում,
- կազմակերպության հաշվապահական հաշվառման և վերլուծական համակարգերի միասնականացում նորմատիվ պահանջների համապատասխան:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՆԻ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՍԵՐՈԲՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

Հոդվածում քննարկվել է հարկային և ֆինանսական հաշվառման համակարգերի միասնականացման հիմնախնդիրը և մեր մոտեցումներն ու առաջարկությունները մեկ միասնական համակարգի ստեղծման հարցի շուրջ: Այսպիսով՝ առաջարկվել է ֆինանսական և հարկային հաշվառման միասնական համակարգերի ստեղծումը ապահովել մշտական և ժամանակավոր տարբերությունների հիման վրա, որը կապահովի աշխատուժի, ֆինանսական ծախսերի նվազեցում, ֆինանսական և հարկային հաշվառման տարբեր սկզբունքների պատճառով առաջացած հարկային տարբերությունների արժանահավատ, թափանցիկ և հետևողական հաշվառման, ֆինանսական և հարկային հաշվառման համակարգերի միասնականացում:

Բանալի բառեր. *ֆինանսական հաշվառման համակարգ, հարկային հաշվառման համակարգ, ժամանակավոր տարբերություններ, ժամանակավոր տարբերություններ մաշվածության գծով, մշտական տարբերություններ, հիմնական միջոցներ, ոչ ընթացիկ ակտիվներ, հարկային բազա:*

К ВОПРОСУ О СОЗДАНИИ ЕДИНОЙ СИСТЕМЫ НАЛОГОВОГО И ФИНАНСОВОГО УЧЕТА

АНИ АРТАВАЗДОВНА СЕРОБЯН
соискатель кафедры финансового учета
Армянского государственного экономического университета

Аннотация

В статье обсуждена проблема унификации систем налогового и финансового учета и представлены подходы, а также предложения автора относительно вопроса создания единой системы. Так, предложено создание единой системы налогового и финансового учета на основе постоянных и временных разниц, что обеспечит снижение трудовых и финансовых затрат, достоверный, прозрачный и последовательный учет налоговых разниц, возникающих в результате различных принципов финансового и налогового учета, а также унификацию систем налогового и финансового учета.

Ключевые слова: *система фиансового учета, система налогового учета, временные разницы, временные разницы по амортизации, постоянные разницы, основные средства, внеоборотные активы, налоговая база.*

ON THE ISSUE OF BUILDING A SINGLE SYSTEM OF TAX AND FINANCIAL ACCOUNTING

ANI ARTAVAZD SEROBYAN
Ph.D. Student, Chair of Financial Accounting
Armenian State University of Economics

Abstract

The article discusses the issue of unification of the tax and financial accounting systems, our approaches and recommendations on building a unified system. Therefore, the author proposes to ensure building a single, unified financial and tax accounting system based onpermanent and temporary differences. This would ensure areduction of labor and financial costs;reliable, transparent and consistent accounting of tax differences that result from the different rules of tax and financial accounting, convergence of tax and financial accounting systems.

Keywords: *Financial accounting system, tax accounting system, temporary differences, temporary difference with respect to depreciation, permanent differences, fixed assets, noncurrent assets, tax base.*

ՏԱԹԵՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս
ՀԱԱՀ ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

ԼԻԶԻՆԳԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿ ԵՎ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Համաձայն տնտեսագիտական գրականության, լիզինգ բառը ծագել է անգլերեն lease բառից, որը նշանակում է «վարձակալություն»: «Լիզինգ» հասկացությունը հիմնված է սեփականության իրավունքի մասնատման վրա, որի էությունն է տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավունքները: Հատկապես իրավական պայմանագրային ներդրումների ձև է ֆինանսական լիզինգը: Լիզինգը կնքվում է լիզինգատուի հետ ում առևտրական գործունեությունը կապված ֆինանսավորման հետ իրականացվում է առևտրական սկզբունքներով, ինչպես նաև մասնագիտական հիմունքներով: Դրանում է կայանում նրա առավելությունը արտադրանքի բաշխման պայմանագրից, որի կազմերից մեկը հանդես է գալիս ինքը պետությունը: Ֆինանսական լիզինգի պայմանագիրը, որպես ֆինանսական վարձակալության հեռանկար ծագել է կողմերի պահանջարկի գոյության շնորհիվ՝ նրանց միջև ունեցվածքի շահագործումից առաջացած հարկային բեռի և ծախսերի բաշխման ընթացքում: Այդ դեպքում հարկերի և այլ վճարումների հարցում պետության հետ առնչություն չի ունենում, իսկ պարտավորությունները կատարվում են ամբողջ ծավալով, և միայն հարկային բեռի բաշխումն է, որ իրականացվում է ըստ պայմանագրի:

Լիզինգի առավել ստույգ հասկացողությունը պարունակվում է Համաշխարհային բանկի մեկնաբանություններում.

«Լիզինգը դա կողմերի միջև պայմանագրային փոխհարաբերություններ են, որոնք թույլատրում են կողմերից մեկին պայմանավորված պարբերական վճարումների փոխարեն օգտագործել տեխնիկան և այլ նյութական արժեքներ»[1]:

Լիզինգը, որպես ֆինանսական գործիք լայն հնարավորություններ է ընձեռում տնտեսվարող սուբյեկտների համար, մասնավորապես[2]՝

- լիզինգի առարկայի և մատակարարի ընտրության բացարձակ իրավունքի տրամադրում վարձակալին,
- գույքի ձեռքբերման, տեղափոխման, մաքսազերծման և այլ ծախսերի ներառում լիզինգի առարկայի արժեքի, բնականաբար, նաև լիզինգի պայմանագրի մեջ,
- երկարաժամկետ ֆինանսավորում՝ առանց բիզնես-պլաններ պահանջելու,
- լիզինգի պայմանագրի կնքում ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ ԱՄՆ դոլարով և եվրոյով,
- լիզինգառուի շրջանառու միջոցների տնտեսման հնարավորություն,
- լիզինգի առարկաների ընտրություն ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտերկրից,
- լիզինգային պայմանագրի կնքում՝ առանց լրացուցիչ գրավների,
- փաստաթղթերի պարզեցված փաթեթ,
- գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան նորագույն սարքավորումների և տեխնոլոգիաների ձեռքբերում՝ առանց լրացուցիչ միջոցներ ներգրավելու,
- վարձավճարների իրականացում՝ գույքի փաստացի մատակարարումից մեկ ամիս անց,
- մարումների արտոնյալ ժամանակահատված, լիզինգի առարկայի պատվերի փոփոխում,

[1] Газман В.Д Финансовый лизинг. Москва 2003г., 302 стр.
[2] www.acbleasing.am/ advantages

- հայտի քննարկման և լիզինգային պայմանագրերի սպասարկման միջնորդավճարների բացակայություն,
- անվճար խորհրդատվություն՝ սկսած առաջին զրույցից մինչև լիզինգի պայմանագրերի կնքումը. լիզինգի մասնագետների խորհրդատվական աջակցություն,
- ֆինանսավորման հատուկ առաջարկներ և զեղչեր՝ մատակարար կազմակերպություններից,
- լիզինգի առարկայի շահագործման և պայմանագրի գործողության ընթացքում առաջացած ծախսերի արտացոլում լիզինգառուի հաշվապահությունում. ԱԱՀ-ի հաշվանցման հնարավորություն՝ մարումներին զուգահեռ:

Իրավաբանորեն ձևակերպված ունեցվածքի սեփականատերը ենթադրաբար ակնկալում է տեխնիկական օգտագործողից ստանալ կանխիկ միջոցների հոսք, նրա համար, որպեսզի իրականացնի լիզինգային վճարումներ, այլ ոչ թե վարկային ակտիվների կազմ:

Լիզինգն արդյունավետ ներդրումային գործիքի ճիշտ ընտրություն է, որը թույլ է տալիս՝

- անցկացնել արդիականացում և հիմնական միջոցների ընդլայնում, առանց սեփական ռեսուրսների շեղման,
- նվազեցնել վերադարձվող վարկային ռեսուրսների պահանջվող ապահովությունը,
- սպասարկել լիզինգային պայմանագիրը ստացված վարձակալության հաշվին, որը ստացվում է լիզինգային գույքի օգտագործումից,
- իրականացնել հարկաբյուջետային քաղաքականություն՝ ելնելով ընկերության նախատեսված դրամական միջոցների հոսքերից,
- օգտագործել ստացված ամորտիզացիայի մեխանիզմը, ինչը նվազեցնում է գույքահարկի և եկամտահարկի գումարը[1]:

ԱԱՀ-ն, որը ներգրավված է լիզինգային վճարի մեջ, ընդունվում է հարկային մարմինների կողմից ամբողջությամբ:

Ծախսերը, որոնք կապված են գույքի շահագործմանը, ինչպես նաև բոլոր լիզինգային վճարները վերաբերում են ինքնարժեքին՝ նվազեցնելով հարկային բազան եկամտահարկի վրա:

Լիզինգային գործունեության զարգացումը հանգեցրել է լիզինգի տարբեր ձևերի ու պայմանների առաջացմանը: Լիզինգի հիմնական ձևերն են.

- ֆինանսական,
- գործառնական:

Ֆինանսական լիզինգը երկարաժամկետ համաձայնագիր է, որը նախատեսում է դրա գործողության ժամանակաշրջանի ընթացքում վճարել սարքավորման իրական արժեքը կամ դրա մեծ մասը, ինչպես նաև վարձատուի շահույթը: Նման համաձայնագրի գործողության ժամկետը լրանալիս հնարավոր են սարքավորումների գնում վարձակալի կողմից մնացորդային արժեքով (սեփականության իրավունքն անցնում է նոր տիրոջը), վարձակալության օբյեկտի վերադարձ վարձատուին, ժամկետի երկարացում՝ նոր համաձայնագրի կնքմամբ: Ի տարբերություն գործառնական լիզինգի, ֆինանսականի դեպքում լիզինգատուի ռիսկը նվազում է, քանի որ պայմանագրով հատուկ նախատեսված չլինելու դեպքում չի թույլատրվում պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ լուծարել պայմանագիրը, և նախատեսվում է սարքավորման գրեթե ողջ արժեքի մարում լիզինգառուի կողմից: Լիզինգի այս ձևը շատ նման է երկարաժամկետ բանկային վարկավորմանը: Իսկ ահա ֆինանսական լիզինգի դեպքում սովորաբար սարքավորման տեխնիկական սպասարկման և ապահովագրության ծախսերը կրում է լիզինգառուն:

Յուրաքանչյուր երկիր ունի իր ֆինանսական լիզինգի վարձակալության պայմանները, և այն Հայաստանի համար հետևյալն է (տե՛ս աղյուսակը).

[1] Лещенко М.И. Основы лизинга, Уч. Пособие 2001, 333 стр.

Աղյուսակ

Ֆինանսական վարձակալության պայմանները[1]

1	Կանխավճար	0-50% կանխավճար չկատարելու դեպքում լրացուցիչ ապահովությունը պարտադիր է:
2	Տարեկան տոկոսադրույք	սկսած 12%-ից
3	Ֆինանսավորման արժույթ	AMD, USD, EUR
4	Ֆինանսավորման ժամկետ	մինչև 5 տարի
5	Գործարքի իրականացման միանվագ միջնորդավճար	1% ֆինանսավորվող գումարից, բայց ոչ ավել, քան 600000 ՀՀ դրամ: Միջնորդավճարը գանձվում է միանվագ՝ լիզինգի տրամադրման պահին:
6	Հիմնական գումարի և տոկոսագումարի վճարման կարգ	1. Ամենամսյա հավասարաչափ վճարումներ 2. Կախված բիզնեսի սեզոնայնությունից՝ ճկուն գրաֆիկով վճարումներ
7	Ապահովագրություն	Պարտադիր /տարեկան/ ապահովագրություն:
8	Լիզինգի ժամկետանց մայր գումարի նկատմամբ կիրառվող տույժ	0.2% օրական
9	Լիզինգի ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ կիրառվող տույժ	0.2% օրական
10	Տուգանք՝ մոնիթորինգի պայմանները չկատարելու համար	1% լիզինգի գումարի մնացորդից, բայց ոչ ավել, քան 2000000 ՀՀ դրամ
11	Միջնորդավճար՝ վերջնական օֆերտային հրաժարվելու դեպքում	0.15% ֆինանսավորվող գումարից
12	Տուգանք՝ վաղաժամկետ մարվող պարտավորությունների նկատմամբ	Պարտավորությունների վաղաժամկետ վճարման պարագայում տուգանք չի կիրառվում:
13	Լրացուցիչ ապահովություն	Երաշխավորություն, շարժական և անշարժ գրավի տեսքով և այլն:

Գործառնական լիզինգի պայմանագրի առարկա են հանդիսանում նախ և առաջ բարոյական մաշվածության արագ տեմպեր ունեցող սարքավորումները: Օրինակ՝ էլեկտրոնային տեխնիկա, գիտական հետազոտությունների համար նախատեսված սարքավորումներ, պատճենահանման մեքենաները, մարդատար մեքենաներ և այլ տրանսպորտային միջոցներ: Շուկայի հատվածներից ելնելով, այսինքն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որտեղ է իրականացվում լիզինգային գործառնություն՝ առանձնացնում ենք ներքին կամ ներազգային լիզինգ և արտաքին կամ միջազգային լիզինգ:

Ներքին լիզինգի իրականացման դեպքում լիզինգատուն, լիզինգառուն հանդիսանում են ռեզիդենտներ: Ներքին լիզինգը կարգավորվում է ներքին օրենսդրությամբ:

Միջազգային լիզինգի դեպքում լիզինգատուն և լիզինգառուն հանդիսանում են տարբեր երկրների ռեզիդենտներ:

ԼՂՀ-ի տնտեսության իրական հատվածը ներդրումների՝ հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման սուր կարիք ունի հիմնական միջոցների արմատական փոփոխման և ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերման համար: Միայն գյուղատնտեսության մեջ տեխնիկայի շուրջ 70%-ը շահագործվում է 20 տարուց ավելի և այդ ընթացքում նորացվել է միայն 30%-ը: Տեխնիկայի 5%-ն է համապատասխանում շահագործման նորմաներին:

Կարևոր մեխանիզմներից մեկը օտարերկրյա ներդրումների ներգրավումն է արդյունաբերական նշանակության հիմնական միջոցների ձեռքբերման համար: Այդ գործում կարևոր դեր կարող է կատարել միջազգային լիզինգը, որի առանձնահատկությունն է միաժամանակ և՛ ֆինանսավորման, և՛ ներգրավման մեխանիզմը:

Միջազգային ֆինանսական կորպորացիան, որը Համաշխարհային բանկի անդամ է, անցկացնելով շուկայական մոնիթորինգ ՄԱԿ-ի համար, ցանկություն է հայտնել մասնակցելու ԼՂՀ-ի՝ լիզինգային օպերացիաների մեջ հնարավորությունների ստեղծմանը:

[1] Tariffs Arm 17.10.12, pdf

Զարգացած երկրներում, ինչպես նաև ԱՊՀ շատ երկրներում լիզինգի բաժինը ՀՆԱ-ում հասնում է 10%-ի, քանի որ այդ երկրներում գոյություն է ունեցել պետվաճառքը: ԼՂՀ-ում լիզինգային գործարքի բաժինը ՀՆԱ-ում չի հասնում 1%-ի: Իրավիճակի լավացման համար պետք է ներդնել որոշ փոփոխություններ գործող օրենսդրությունում կամ ստեղծել առանձին օրենսդրական նորմեր: Նշենք, որ լիզինգային շուկայի գործունեությունը կարգավորվում է ԼՂՀ-ի քաղաքացիական օրենսգրքով և կրեդիտային կազմակերպությունների օրենքով, որտեղ լիզինգային կազմակերպություններին տրվում է առանձին տեղ: Սակայն գործող օրենսդրությունը և պայմանները թույլ չեն տալիս օգտագործել արագացված ամորտիզացիայի մեթոդները, ինչը տարածված է միջազգային պրակտիկայում: Հենց օպտիմալացման գնի ամորտիզացիոն հնարավորությունն ընկերությանը նպատակադրում է ներազդել արտադրության ֆինանսական արդյունքի վրա: Ներկա պահին հիմնական միջոցների ամորտիզացիան ոչ արդյունավետ ձևով է կազմակերպվում, ինչը լիզինգը դարձնում է ոչ մրցունակ կրեդիտայինի համեմատ;

ԼՂՀ-ում լիզինգի զարգացմանը խանգարում է թերի հարկային օրենսդրությունը: Այդ պատճառով այսօրվա լիզինգը չի համընկնում ֆինանսական վարձակալության հասկացության տակ, որի համաձայն զարգացած տնտեսությունում նորացվում է տեխնոլոգիան, այլ ավելի շատ նման է իր բոլոր թերություններով ցածր արդյունավետության ապրանքային կրեդիտի:

Լիզինգային գործառնությունները, որոնց նախատիպը հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից, սկիզբ են առել ամերիկայից և աստիճանաբար տարածվել գրեթե բոլոր երկրներում:

Լիզինգի հիմնական տեսակները ֆինանսական և գործառնական վարձակալություններն են: Լիզինգի հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս սկսնակ ձեռնարկատերերին նախաձեռնել կամ մեծապես ընդլայնել սեփական գործը՝ ունենալով սահմանափակ սեփական սկզբնական կապիտալ: Լիզինգն արտադրությունների ընդլայնման հնարավորություն է ընձեռում մանր ու խոշոր արտադրողների համար հավասար պայմաններով:

Համաշխարհային լիզինգային շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լիզինգն առավել հեռանկարային ներդրումային գործիք է, քանի որ միանշանակ գրավիչ է ինչպես ներդրողի, այնպես էլ փոխատուի համար:

Ներկայումս լիզինգը բիզնեսի ամենատարածված ձևերից մեկն է: Այսօր Եվրոպայում ներդրումների առավել քան 25%-ը կատարվում է լիզինգի ճանապարհով: Վերջին 20 տարիներին լիզինգային գործառությունների տարեկան ծավալն աշխարհում աճել է 10 անգամ՝ 2000թ. կազմելով մոտ 540 մլրդ. դոլար: Ընդ որում ԱՄՆ-ին և Կանադային բաժին է ընկնում 41%-ը, Ասիային՝ 28%-ը, Եվրոպային՝ 19%-ը: Չնայած ձեռնարկատիրության լիզինգային ձևի անհամեմատ շահավետությանը, ցավոք, այն մեր տնտեսության մեջ դեռևս շատ դանդաղ է արմատավորվում: Բացի օրենսդրական բացթողումները, շատ ձեռնարկատերեր և, հատկապես, սկսնակները, դեռևս չունեն լիզինգային գործարքների մեխանիզմների վերաբերյալ բավարար գիտելիքներ: Այնուամենայնիվ, ներկայումս մեր հանրապետությունում լիզինգային գործունեության վերաբերյալ հետաքրքրությունը շարունակում է աճել[1]:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալները, առաջարկվում է հեռանկարում ստեղծել միջբանկային լիզինգային ընկերություններ, որոնք հնարավորություն կտան խոշոր ծրագրերի իրացման համար օպերատիվ ձևով համակենտրոնացնել զգալի կապիտալ, համահարթեցնել ռիսկը, առավել արդյունավետ համագործակցել արևմտյան գործընկերների հետ և օգտագործել լիզինգի տարբեր ձևերը: Միաժամանակ լիզինգի զարգացումը մեզ մոտ բախվում է նշանակալի դրամական միջոցների մոբիլիզացման խնդրի հետ, որոնք կարող էին սարքավորումների գնման համար կազմավորման աղբյուր հանդիսանալ: Արտասահմանյան փորձը վկայում է, որ նպատակահարմար է լիզինգային գործարքներն ընդգրկել բանկերի գործունեության մեջ:

[1] aif.am1

ԼԻԶԻՆԳԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿ ԵՎ ՆՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս
ՀԱԱՀ ԱՊՀ էկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

Համառոտագիր

ԼՂՀ-ի տնտեսության իրական հատվածը ներդրումների, հատկապես օտարերկրյա ներդրումների ներգրավման սուր կարիք ունի հիմնական ֆոնդերի արմատական փոփոխման և ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերման համար: Միայն գյուղատնտեսությանն մեջ տեխնիկայի շուրջ 70%-ը շահագործվում է 20 տարուց ավելի և այդ ընթացքում նորացվել է միայն 30%: Տեխնիկայի 5%-ն է համապատասխանում շահագործման նորմաներին:

Հոդվածում հիմնավորվում է լիզինգը որպես ներդրման տեսակ և նրա օգտագործման կարևորությունն ու անհրաժեշտությունը ԼՂՀ տնտեսությունում՝ ելնելով այն հանգամանքից, որ ԼՂՀ տնտեսությունը կարիք ունի օտարերկրյա ներդրումների՝ հիմնական միջոցերի ձեռքբերման, ժամանակակից տեխնոլոգիայի ներդրման, որոնք կարող են մրցունակ լինել այլ ընկերություններին;

Բանալի բառեր. *լիզինգային գործարք, պայմանագիր, հարկեր, տեխնոլոգիա, ֆինանս, ռեսուրս, ֆոնդ, մոնիթորինգ, փոխառություն:*

ЛИЗИНГ КАК ФОРМА ИНВЕСТИЦИЙ И НЕОБХОДИМОСТЬ ЕГО ИСПОЛЬЗОВАНИЯ В НКР

ТАТЕВИК ВЛАДИМИРОВНА ВЕРДЯН
преподаватель кафедры экономики АПК, агробизнеса, бухгалтерского учета и аудита Степанакертского филиала Национального аграрного университета Армении
соискатель кафедры экономики АПК Национального аграрного университета Армении

Аннотация

Реальный сектор экономики НКР крайне нуждается в инвестициях, особенно иностранных, для коренного обновления основных фондов и внедрения современных технологий. Только в сельском хозяйстве срок службы около 70% техники превышает 20 лет, и лишь 30% сельхозтехники было обновлено за это время. 5% техники соответствует нормам эксплуатации. Исходя из вышесказанного, в статье обосновывается необходимость и важность использования лизинга в экономике НКР как формы инвестиций, обеспечивающей повышение конкурентоспособности компаний.

Ключевые слова: *лизинговая сделка, соглашение, налоги, технология, финансы, ресурс, фонд, мониторинг, заем.*

EQUIPMENT LEASING AS A FORM OF INVESTMENTS AND ITS NEED IN THE NKR

TATEVIK VLADIMIR VERDYAN
Lecturer, Chair of Economics of Agri Industrial Complex, Agri-business, Accounting and Auditing, Stepanakert Branch of Armenian National Agrarian University
Ph.D. Student, Chair of Economics of Agri Industrial Complex, Armenian National Agrarian University

Abstract

The real sector of the economy of the NKR desperately needs investments, namely foreign investments for completely replacing the fixed assets with new ones. Only in the agriculture the operation period of about 70% of the machinery and equipment exceeds 20 years, and the remaining 30% was replaced during that period. Based on the above stated argument, the article justifies the need for and importance of using equipment leasing in the economy of the NKR as a form of investments, thus making companies more competitive.

Keywords: *Leasing transaction,contract, taxes, technology, finance, resource, fund, monitoring, lending.*

ՄԱՐԻՆԱ ԳԱՌՆԻԿԻ ՓՈՓԻԿՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդներ ամբիոնի հայցորդ
ՀԱԱՀ ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների ամբիոնի ասիստենտ

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ՁԵՂՉԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Շուկայական մրցակցային իրավիճակներին յուրահատուկ է արտադրատեսակների առատությունը, որի պատճառով առաջանում է տարբեր ծավալների չիրացված և հետևաբար արժեզրկված արտադրանք՝ պատճառելով արտադրողին համապատասխան ծավալի եկամուտների կորուստներ: Պիտանելիության ժամկետով հերթական թողարկված արտադրանքի իրացված ծավալները որոշվում են սահմանված ժամկետի վերջում: Չիրացվող արտադրանքի տեմպերը մեղմելու նպատակով կիրառվում են գնային զեղչեր: Համատարած են զեղչերի կրկնվող դեպքերը, որը փաստում է չիրացվող արտադրանքի ծավալների քառասային բարդությամբ պայմանավորված անկառավարելի վիճակը:

Աշխատանքում արտադրանքի իրացված ծավալների վիճակագրական վերլուծության[1] միջոցով հստակեցվել է պահանջարկների բազմությունը և առաջարկ-պահանջարկ գործընթացը ներկայացվել որպես տնտեսամաթեմատիկական մոդելավորման խնդիր: Արտադրանքի իրացման գնի և հաջորդաբար երկու անգամ գնային զեղչերի վիճակները անվանվել են զրոյական, առաջին և երկրորդ փուլեր:

Խնդիրը հետևյալն է. հայտնի են զրոյական, առաջին և երկրորդ փուլերից յուրաքանչյուրում արտադրանքի պահանջարկների բազմությունները համապատասխան հավանականություններով, պահանջվում է որոշել արտադրածավալ, որը կապահովի առավելագույն եկամուտ: Այս խնդրի տնտեսամաթեմատիկական մոդելը կառուցելու համար իրադրությունը ներկայացվում է հետևյալ ուրվագծի տեսքով.

Ուրվագիծ 1

Զրոյական, առաջին և երկրորդ փուլերում արտադրանքի պահանջարկների, հավանականությունների և իրացվող ծավալների փոխկապակցվածությունները:



[1] Елисеева И. И., Юзбашев М.М. – Общая теория статистики., М. Финансы и статистика, 2004.

Ուրվագիծ 1-ում կատարվել են հետևյալ նշանակումները.
i-զրոյական փուլի պահանջարկի և հավանականության արժեքները նշող ինդեքս,
n-զրոյական փուլի արտադրանքի պահանջարկների և համապատասխան հավանականությունների քանակը,
b_{0i} - զրոյական փուլի արտադրանքի պահանջարկի i-րդ արժեքը,
P_{0i}- զրոյական փուլի արտադրանքի պահանջարկի i-րդ արժեքի հավանականությունը,
x_{0i}- զրոյական փուլի արտադրանքի պահանջարկի i-րդ արժեքի դեպքում իրացվող ծավալը,

$\frac{P_{0i}}{b_{0i}}$ • x_{0i} -ով նշվել է, որ զրոյական փուլի b_{0i} պահանջարկի դեպքում արտադրանքի իրացվող x_{0i} ծավալը տեղի է ունենում P_{0i} հավանականությունով:

j-առաջին փուլի արտադրանքի պահանջարկների և հավանականությունների արժեքները նշող ինդեքս,
m-առաջին փուլի արտադրանքի պահանջարկների և համապատասխան հավանականությունների քանակը,
b_{1j} - առաջին փուլի արտադրանքի պահանջարկի j-րդ արժեքը,
P_{1j} - առաջին փուլի արտադրանքի պահանջարկի j-րդ արժեքի հավանականությունը,
x_{ij} - զրոյական փուլի պահանջարկի i-րդ արժեքի դեպքում չիրացվող արտադրանքի այն ծավալը, որը իրացվում է առաջին փուլի պահանջարկի j-րդ արժեքի դեպքում:

$\frac{P_{1j}}{b_{1j}}$ • x_{ij}-ով նշվել է, որ զրոյական փուլի i-րդ պահանջարկի դեպքում չիրացվող արտադրանքից առաջին փուլի b_{1j} պահանջարկի դեպքում իրացվող x_{ij} ծավալը տեղի է ունենում P_{1j} հավանականությունով:

$P_{0i} \rightarrow$ -ով նշվել է, որ զրոյական փուլի i-րդ պահանջարկի դեպքում չիրացվող արտադրանքից առաջին փուլի նշված տողով պայմանավորված իրադրությունները տեղի են ունենում P_{0i} հավանականությունով: Նշված տողով պայմանավորված իրադրությունները առաջին փուլում իրացվող $x_{i1}, x_{i2},\ldots, x_{im}$ ծավալներն են այդ փուլի պահանջարկի բոլոր արժեքների և համապատասխան հավանականությունների պայմաններում:
k-երկրորդ փուլի արտադրանքի պահանջարկների և համապատասխան հավանականությունների արժեքները նշող ինդեքս,
t - երկրորդ փուլի արտադրանքի պահանջարկների և համապատասխան հավանականությունների քանակը,
b_{2k} - երկրորդ փուլի արտադրանքի պահանջարկի k-րդ արժեքը,
P_{2k} - երկրոդ փուլի արտադրանքի պահանջարկի k-րդ արժեքի հավանականությունը,
x_{ijk} - զրոյական փուլի պահանջարկի i-րդ արժեքի և առաջին փուլի պահանջարկի j-րդ արժեքների դեպքում չիրացվող արտադրանքի այն քանակը, որը իրացվում է երկրորդ փուլի պահանջարկի k-րդ արժեքի դեպքում:

$\frac{b_{2k}}{P_{2k}}$ x_{ijk} -ով նշվել է, որ առաջին փուլի i-րդ և երկրորդ փուլի j-րդ պահանջարկների դեպքում չիրացվող ծավալի այն քանակը, որն իրացվում է երկրորդ փուլի k-րդ պահանջարկի դեպքում, տեղի է ունենում P_{2k} հավանականությունով:

$P_{0i} \times P_{1j}$ - ով նշվել է, որ զրոյական փուլի i-րդ և առաջին փուլի j-րդ պահանջարկների դեպքում չիրացվող արտադրանքից երկրորդ փուլի նշված տողով պայմանավորված իրադրությունները տեղի են ունենում $P_{0i} \cdot P_{1j}$ հավանականությունով: Նշված տողով պայմանավորված իրադրությունները երկրորդ փուլում իրացվող $x_{ij1}, x_{ij2},\ldots, x_{ijt}$ ծավալներն են պահանջարկների b_{2j} (j=1,2,…,t) բոլոր արժեքների և համապատասխան հավանականությունների P_{2j} (j=1,2,…,t) պայմաններում:
i-րդ էտապ- անվանվել է զրոյական փուլի i-րդ պահանջարկի և առաջին փուլի բոլոր պահանջարկների դեպքում չիրացվող արտադրանքի ծավալներից երկրորդ փուլի բոլոր պահանջարկների դեպքում իրացվող արտադրանքի ծավալներով պայմանավորված իրադրությունները:
Այսպես. զրոյական փուլի i-րդ պահանջարկի և առաջին փուլի j-րդ պահանջարկի դեպքում

չիրացվող արտադրանքի այն ծավալները, որոնք իրացվում են երկրորդ փուլի բոլոր պահանջարկների դեպքում հետևյալն են՝ $x_{ij1}, x_{ij2},\ldots, x_{ijt}$:

Նյութի կրճատ ձևակերպման համար ուրվագիծ 1-ում ներկայացվել է միայն i-րդ էտապը, որոնց ընդհանուր քանակը որոշվում է զրոյական փուլի պահանջարկների թվով՝ n:

Կատարված նշանակումների պայմաններում հաշվի առնելով ուրվագիծ 1-ը, զրոյական փուլում արտադրանքի իրացվող ծավալը այդ փուլի բոլոր պահանջարկների դեպքում որոշվում է հետևյալ կերպ.

$$y_0(x_0) = \sum_{i \in I} x_{0i} \cdot P_{0i} \tag{1}$$

Զրոյական փուլում արտադրանքի իրացվող ծավալից ստացվող գումարը հաշվի առնելով (1) արտահայտությունը, որոշվում է հետևյալ կերպ.

$$l_0 = C_0 \cdot \sum_{i \in I} x_{0i} \cdot P_{0i} \tag{2}$$

Այստեղ C_0-ն զրոյական փուլում արտադրանքի մեկ միավորի իրացման գինն է:

Զրոյական փուլի i-րդ պահանջարկի դեպքում չիրացվող արտադրանքի այն քանակը, որը իրացվում է առաջին փուլի բոլոր պահանջարկների դեպքում, ըստ ուրվագիծ 1-ի, որոշվում է հետևյալ կերպ.

$$y_{1i}(x_1) = P_{0i} \cdot \sum_{j \in J} x_{ij} \cdot P_{1j},\ J = \{1,2,...,m\} \tag{3}$$

Զրոյական փուլի բոլոր պահանջարկների դեպքում չիրացվող արտադրանքի այն քանակը, որն իրացվում է առաջին փուլի բոլոր պահանջարկների դեպքում ըստ (3) արտահայտության որոշվում է հետևյալ կերպ.

$$y_1(x_1) = \sum_{i \in I} P_{0i} \cdot \sum_{j \in J} x_{ij} \cdot P_{1j} \tag{4}$$

Առաջին փուլում արտադրանքի իրացվող ծավալներից ստացվող գումարի չափը համաձայն (4) արտահայտության որոշվում է հետևյալ կերպ.

$$l_1 = C_1 \cdot \sum_{i \in I} P_{0i} \cdot \sum_{j \in J} x_{ij} \cdot P_{1j} \tag{5}$$

Այստեղ C_1–ը առաջին փուլում արտադրանքի մեկ միավորի իրացման գինն է:

Զրոյական փուլի i-րդ և առաջին փուլի j-րդ պահանջարկների դեպքում չիրացվող արտադրանքի այն ծավալը, որն իրացվում է երկրորդ փուլի $P_{0i} \times P_{1j}$- տողի (ուրվագիծ 1) իրադրությունների պայմաններում որոշվում է հետևյալ կերպ.

$$y_{2ij}(x_2) = P_{0i} \cdot P_{1j} \cdot \sum_{k \in T} x_{ijk} \cdot P_{2k},\ T = \{1,2,...,m\} \tag{6}$$

Զրոյական փուլի i-րդ պահանջարկի դեպքում չիրացվող արտադրանքի այն ծավալը, որը իրացվում է առաջին և երկրորդ փուլերի բոլոր պահանջարկների դեպքում համաձայն (6) արտահայտության և ուրվագիծ 1-ի (i-րդ էտապ) որոշվում է հետևյալ կերպ.

$$y_{2i}(x_2) = P_{0i} \cdot \sum_{j \in J} P_{1j} \cdot \sum_{k \in T} x_{ijk} \cdot P_{2k} \tag{7}$$

Երկրորդ փուլում արտադրանքի սպառվող ծավալը համաձայն (7) արտահայտության որոշվում է հետևյալ կերպ.

$$y_2(x_2) = \sum_{i \in I} P_{0i} \cdot \sum_{j \in J} P_{1j} \cdot \sum_{k \in T} x_{ijk} \cdot P_{2k} \tag{8}$$

Երկրորդ փուլում իրացվող արտադրանքից ստացվող գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ.

$$l_2 = C_2 \cdot \sum_{i \in I} P_{0i} \cdot \sum_{j \in J} P_{1j} \cdot \sum_{k \in T} x_{ijk} \cdot P_{2k} \tag{9}$$

Այստեղ C_2- ը երկրորդ փուլում մեկ միավոր արտադրանքի իրացման գինն է:

Ոչ մի փուլում չիրացվող արտադրանքի ծավալը որոշվում է արտադրածավալի և զրոյական, առաջին և երկրորդ փուլերում իրացվող արտադրանքի ծավալների գումարի տարբերությունով, որը հաշվի առնելով (3), (6), (8) արտահայտությունները կգրվի հետևյալ կերպ.

$$y_3(x_p) = x - (\sum_{i\in I} x_{0i}\cdot P_{0i} + \sum_{i\in I} P_{0i}\cdot \sum_{j\in J} x_{ij}\cdot P_{1j} + \sum_{i\in I} P_{0i}\cdot \sum_{j\in J} P_{1j}\cdot \sum_{k\in T} x_{ijk}\cdot P_{2k}) \qquad (10)$$

Այստեղ x –ը արտադրանքի արտադրածավալն է:

Զրոյական, առաջին և երկրորդ փուլերում չիրացվող արտադրանքից ստացվող գումարի չափը համաձայն (10) արտահայտության որոշվում է հետևյալ կերպ.

$$l_3 = C_3\cdot(x - \sum_{i\in I} x_{0i}\cdot P_{0i} - \sum_{i\in I} P_{0i}\cdot \sum_{j\in J} x_{ij}\cdot P_{1j} - \sum_{i\in I} P_{0i}\cdot \sum_{j\in J} P_{1j}\cdot \sum_{k\in T} x_{ijk}\cdot P_{2k}) \qquad (11)$$

Այստեղ C_3 –ը զրոյական, առաջին և երկրորդ փուլերում չիրացվող արտադրանքի մեկ միավորի արժեզրկված գինն է:

Ձևակերպված խնդրի նպատակային ֆունկցիան համաձայն (2),(5),(9) և (11) արտահայտությունների գրվում է հետևյալ կերպ.

$$\begin{aligned} L(x_p) &= -И\cdot x + C_0\cdot\sum_{i\in I} x_{0i}\cdot P_{0i} + C_1\cdot\sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} x_{ij}\cdot P_{1j} + C_2\cdot\sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} P_{1j}\cdot\sum_{k\in T} x_{ijk}\cdot P_{2k} + \\ &+ C_3\cdot(x - \sum_{i\in I} x_{0i}\cdot P_{0i} - \sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} x_{ij}\cdot P_{1j} - \sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} P_{1j}\cdot\sum_{k\in T} x_{ijk}\cdot P_{2k}) = \max \end{aligned} \qquad (12)$$

Կատարելով (12) արտահայտության մեջ փոփոխականների խմբավորում կգրվի հետևյալ կերպ.

$$\begin{aligned} L(x) &= (C_3 - C_p)\cdot x + (C_0 - C_3)\cdot\sum_{i\in I} x_{0i}\cdot P_{0i} + (C_1 - C_3)\cdot\sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} x_{ij}\cdot P_{1j} + \\ &+ (C_2 - C_3)\cdot\sum_{i\in I} P_{0i}\cdot\sum_{j\in J} P_{1j}\cdot\sum_{k\in T} x_{ijk}\cdot P_{2k} = \max \end{aligned} \qquad (13)$$

Ձևակերպված խնդրի բալանսային արտահայտությունները հետևյալն են.

1) Զրոյական փուլում արտադրանքի իրացվող ծավալները չեն կարող գերազանցել այդ փուլի պահանջարկի ծավալներին.

$$x_{0i} \le b_{0i}, \text{ որտեղ } i \in I \qquad (14)$$

2) Զրոյական փուլում արտադրանքի իրացվող ծավալները չեն կարող գերազանցել առաջարկի ծավալին.

$$x_{0i} \le x, \text{ որտեղ } i \in I \qquad (15)$$

3) Առաջին փուլում արտադրանքի իրացվող ծավալները չեն կարող գերազանցել այդ փուլի պահանջարկի ծավալներին.

$$x_{ij} \le b_{1j}, \text{ որտեղ } i \in I,\ j \in J \qquad (16)$$

4) Երկրորդ փուլում արտադրանքի իրացվող ծավալները չեն կարող գերազանցել այդ փուլի պահանջարկի ծավալներին.

$$x_{ijk} \le b_{2k}, \text{ որտեղ } i \in I,\ j \in J, k \in T \qquad (17)$$

5) (13)-(17) արտահայտություններում ձևակերպված բոլոր փոփոխականները չեն կարող ընդունել բացասական արժեքներ.

$$x \ge 0;\ x_{0i} \ge 0;\ x_{ij} \ge 0;\ x_{ijk} \ge 0, \text{ որտեղ } i \in I,\ j \in J, k \in T \qquad (18)$$

(13)-(18) մոդելը գծային է և պատկանում է ստոխաստիկ մոդելների դասին[1]:

Արտադրանքի իրացման գնի՝ $C_0 = 200$ ինքնարժեքի՝ $C_p = 170$, առաջին և երկրորդ փուլերում զեղչված գների՝ $C_1 = 180, C_2 = 160$ և արժեզրկված արտադրանքի իրացման գների՝ $C_3 = 50; 100; 150$ ցուցանիշների և գծապատկեր 1-ում բերված տվյալների համար լուծված խնդիրների արդյունքները բերվում են աղյուսակ 1-ում:

[1] Юдин Д. Б. Математические методы управления в условиях неполной информации. Москва, 2010.

Գծապատկեր 1

Զրոյական, առաջին և երկրորդ փուլերում արտադրանքի պահանջարկները և համապատասխան հավանականությունները:



Աղյուսակ 1

$C_0 = 200,\ C_p = 170,\ C_1 = 180,\ C_2 = 160$ և C_3-ի

տարբեր արժեքների համար լուծված խնդիրների արդյունքները

C_3	x	x_{01}	x_{02}	x_{03}	x_{01}	x_{02}	x_{03}	$L(x)$
50	1400	1000	1400	1400	100	200	200	38600
100	1400	1000	1400	1400	100	200	200	39100
150	1400	1000	1400	1400	100	200	200	47400

Այն փոփոխականները, որոնց արժեքները զրո են աղյուսակում չեն բերվել:

Լուծված խնդիրների արդյունքների վերլուծությունից հետևում է մոդելի կիրառելիության արդյունավետությունը:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ԳՆԱՅԻՆ ԶԵՂՉԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԱՐԻՆԱ ԳԱՌՆԻԿԻ ՓՈԹԻԿՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդներ ամբիոնի հայցորդ
ՀԱԱՀ ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների ամբիոնի ասիստենտ

Համառոտագիր

Կառուցվել է պիտանելիության ժամկետով արտադրատեսակների օպտիմալ արտադրածավալների որոշման տնտեսամաթեմատիկական մոդելը, երբ իրացման ծավալների տեմպերը կանոնավորելու նպատակով կիրառվում են կրկնակի գնային զեղչեր: Նորմալ իրացման գնի և երկու անգամ գնային զեղչերից յուրաքանչյուրի դեպքում արտադրանքի իրացվող ծավալները կրում են պատահական բնույթ, որի պատճառով մոդելը կրում է ստոխաստիկ բնույթ: Լուծված խնդիրների արդյունքների վերլուծությունից հետևում է նրա կիրառման նպատակահարմարությունը:

Բանալի բառեր. *արժեզրկում, պահանջարկ, առաջարկ, անորոշություն, մոդել, պիտանելիության ժամկետ, գնային զեղչեր, իրացման գին:*

ЭКОНОМИКО-МАТЕМАТИЧЕСКАЯ МОДЕЛЬ ОЦЕНКИ ОБЪЕМОВ ПРЕДЛОЖЕНИЯ В УСЛОВИЯХ НЕОПРЕДЕЛЕННОСТИ СПРОСА НА ПРОДУКЦИЮ И ДВОЙНОЙ ЦЕНОВОЙ СКИДКИ

МАРИНА ГАРНИКОВНА ПОТИКЯН
соискатель кафедры экономико-математических методов Армянского государственного экономического университета
ассистент кафедры информатики и математических методов Национального аграрного университета Армении

Аннотация

Построена экономико-математическая модель определения оптимальных обьемов производства по видам изделий со сроком годности, когда в целях регулирования темпов реализации обьемов применяются двойные ценовые скидки. При нормальной цене реализации и дважды в каждом из случаев скидок реализуемые объемы имеют случайный характер, вследствие чего модель носит стохастический характер. Из анализа результатов решенных задач следует целесообразность применения данной модели.

Ключевые слова: *инфляция, спрос, предложение, неопределенность, модель, срок годности, ценовые скидки, цена реализации.*

ECONOMIC-MATHEMATICAL ESTIMATION OF SUPPLY UNDER UNCERTAINTY OF DEMAND FOR GOODS AND A DOUBLE PRICE DISCOUNT

MARINA GARNIK POTIKYAN
Ph.D. Student, Chair of Mathematical Methods in Economics, Armenian State University of Economics
Assistant, Chair of Informatics and Mathematical Methods, Armenian National Agrarian University

Abstract

The author constructs an economic-mathematical model to identify the optimal volume of productionof goods with a definite expiration date when double price discounts are offered to control the sales turnover.In case of regular sales price, and each of 2 price discount policies sales turnover seems to be random, and therefore the model is stochastic. The analysis of the results of problems solved proves that the model could be of useful application.

Keywords: *Depreciation, demand, supply, uncertainty, model, expiration date, price discounts, sales price.*

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐԻԻ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հարկային հարաբերությունները պետք է կառուցված լինեն ամենից առաջ հարկման արդյունավետության սկզբունքի հիման վրա: Հարկման արդյունավետություն ասելով պետք է հասկանալ հարկային դրույքաչափերի, գործընթացների և հարկային վարչարարության այնպիսի մակարդակ, որի դեպքում հարկատուների ունեցած դրամական և ժամանակային ծախսերը, ինչպես նաև գործունեության հետ կապված այլ խոչընդոտները չնվազեցնեն տնտեսվարող սուբյեկտների կողմից ձեռնարկատիրությամբ զբաղվելու ձգտումը, իսկ հարկային եկամուտների տեսքով պետության ստացած դրամական միջոցները հնարավորինս բավարար լինեն տնտեսական, սոցիալական, ռազմական և այլ բնույթի ծախսերը հոգալու համար: Իհարկե, միջոցների ոչ բավարար լինելու դեպքում կարելի է սահմանել ավելի բարձր դրույքաչափեր այդ ծախսերը հոգալու համար, սակայն դա միայն կարճաժամկետ հատվածում կարող է ունենալ դրական ազդեցություն, քանի որ հետագայում դա կհանգեցնի ձեռնարկատիրական ակտիվության կրճատմանը, ինչն էլ իր հերթին կնվազեցնի հարկային վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե մուտքագրվող գումարները: Սակայն դա չի նշանակում, որ հարկադրույքների ցածր մակարդակ սահմանելու դեպքում կնկատվի ձեռնարկատիրական ակտիվության բարձրացում և տեղի կունենա հարկային վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե մուտքագրվող գումարների էական ավելացում: Սակայն հարկային բեռը չի որոշվում միայն հարկադրույքների ցածր կամ բարձր մակարդակով: Ցածր հարկադրույքների դեպքում կարող են լինել մի շարք պատճառներ, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն: Օրինակ՝ հարկային վարչարարության ցածր մակարդակը, կիրառվող տույժերի անհիմն բարձր մակարդակը, նույն գործունեությամբ զբաղվող տարբեր սուբյեկտների նկատմամբ տարբեր մոտեցումները (այսպես կոչված ոչ օրինական հարկային արտոնությունների տրամադրումը) և այլն: Գոյություն ունեն հարկային բեռի որոշման տարբեր մոտեցումներ: Օրինակ՝ բնակչության մեկ շնչին ընկնող հարկի գումարը, հարկեր/շահույթ հարաբերակցությունը, հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը և այլն: Բնակչության մեկ շնչին ընկնող հարկի գումարի միջոցով հարկային բեռի որոշման մոտեցումն այնքան էլ արդարացի համարել չի կարելի՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այն արհեստականորեն նվազեցնում է հարկային բեռը, քանի որ բնակչության աշխատող հատվածի կողմից կատարված հարկային վճարները հարաբերվում են բնակչության ամբողջ քանակի վրա և դա այն դեպքում, երբ այդ բնակչության մի զգալի հատվածը չի աշխատում ու չի կատարում հարկային վճարումներ: Հարկեր/շահույթ հարաբերակցությունը նույնպես ամբողջական պատկերացում չի կարող տալ հարկային բեռի վերաբերյալ, քանի որ այն ներկայացնում է գործունեության կոնկրետ տեսակի գծով առկա հարկային բեռը: Հարկային բեռի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում է տալիս հարկեր/ՀՆԱ ցուցանիշը, քանի որ այն իրենից ներկայացնում է հարկային վճարների տեսքով ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների հարաբերակցություն այդ վճարների հաշվարկման համար հիմք հանդիսացող համախառն ներքին արդյունքին: 2014թ. տվյալներով հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 23.5 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 0.09 տոկոսով (աղյուսակ 1)[1]:

[1] ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գործունեության 2014թ. տարեկան հաշվետվություն, էջ 3:

Աղյուսակ 1

Հարկերի և ՀՆԱ-ի ծավալները ու հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունն ըստ 2012-2014թթ.

Ցուցանիշ	Չափման միավոր	2012	2013	2014
Հարկեր	մլրդ. դրամ	878.4	1,000.9	1,064.1
ՀՆԱ (շուկայական գներով)	մլրդ. դրամ	4,000.7	4,276.2	4,528.9
Հարկեր/ՀՆԱ	%	21.96	23.41	23.50

Աղյուսակ 1-ից երևում է, որ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը տարեցտարի ավելանում է: Սակայն դա չի կարելի պայմանավորել հարկային բեռի ավելացմամբ: Ավելի շուտ դա պայմանավորված է ստվերի կրճատմամբ: Հենց ստվերի դեմ պայքարը հարկման արդյունավետության բարձրացման առաջնային մեխանիզմներից կարելի է համարել, քանի որ իրենց շրջապատում տեսնելով ստվերային գործունեության բազմաթիվ օրինակներ՝ մարդիկ արդարացի չեն համարում գործող ստվերի պայմաններում օրինական աշխատելու տարբերակը և իրենք էլ փորձում են աշխատել այդ ստվերի պայմաններում և չվճարել հարկեր՝ այդ հարկային վճարումները համարելով որպես լրացուցիչ հարկային բեռ: Իսկ ստվերի նվազեցման կամ վերացման պարագայում, ինչը գործնականում անհնար է, կատարված հարկային վճարումները մարդկանց կողմից կդադարեն դիտվել որպես անարդարացի կատարված վճարումներ:

Ստվերի դեմ պայքարի լուրջ քայլ կարելի է համարել 2014թ. նոյեմբերի 19-ին ընդունված և 2014 թվականի դեկտեմբերի 29-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքը, որով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը վերադարձվում է ՀՀ տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ ՀՀ տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի առավելագույնը սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով[1]: Այս օրենքը կնպաստի նրան, որ աշխատակիցները կպահաջեն իրենց գործատուներից աշխատավարձի իրական չափի հայտարարագրում, ինչի շնորհիվ կավելանան եկամտային հարկի տեսքով պետական բյուջե մուտքագրվող գումարները: Նախկինում կառուցապատողները բնակարանների նախնական առքուվաճառքը էժան գներով կնքում էին իրենց բարեկամների, ընկերների և ծանոթների հետ՝ հարկային մեծ վճարումներից խուսափելու նպատակով, իսկ հետագայում այդ բնակարանները ավելի թանկ գներով վերավաճառում էին իրական գնորդներին: Իսկ այժմ, քանի որ եկամտային հարկը հետ է վերադարձվելու անմիջապես կառուցապատողից բնակարանի ձեռքբերման դեպքում ստացած հիփոթեքային վարկի տոկոսների վճարման համար, բնակարանների պոտենցիալ գնորդները կստիպեն կառուցապատողին դուրս գալ ստվերային դաշտից:

Ստվերի դեմ պայքարի լուրջ քայլ կարելի է համարել նաև «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, որոնց հիմնական նպատակը առևտրական (առքուվաճառքի) գործունեության փաստաթղթավորման հնարավորինս բարձր մակարդակի ապահովումն էր: Այս ամենը ուղղված էր ոչ միայն շրջանառության հարկով հարկվող գործունեության մեջ ստվերի նվազեցմանը, այլ նաև խոշոր բիզնեսին հարկային դաշտ բերելուն, քանի որ եթե շրջանառության հարկով հարկվող ձեռնարկատերը ստիպված է փաս-

[1] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենք՝ ընդունված 19.11.2014թ., հոդված 1, կետ 1:

տաթղթավորել խոշոր բիզնեսից ձեռք բերվող ապրանքները, ապա ավտոմատ կերպով վերջինիս գործունեությունը ևս դառնում է փաստաթղթավորված և թափանցիկ: Սկզբում առևտրական (առքուվաճառքի) գործունեության մասով շրջանառության հարկի դրույքաչափը 3.5%-ից նվազեցվեց մինչև 1%, իսկ ապրանքների ձեռքբերման և իրացման փաստաթղթավորումը դարձավ պարտադիր պայման, որի խախտման դեպքում կիրառվեցին պատժամիջոցներ[1]: Սակայն հետագայում օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում պատժամիջոցները հանվեցին, իսկ ապրանքների ձեռքբերումը և իրացումը փաստաթղթավորելու դեպքում դրույքաչափը 3.5%-ից նվազեցվեց մինչև 1%, չփաստաթղթավորելու դեպքում՝ բարձրացվեց մինչև 5%[2]:

Համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելը զեկույցում Հայաստանը զբաղեցնում է 41-րդ տեղը հարկային բեռի տեսանկյունից: Այդ հաշվարկի հիմքում ընկած են մի շարք ցուցանիշներ, մասնավորապես՝ կատարվող հարկային վճարումների քանակը, այդ վճարումները կատարելու համար ծախսվող ժամանակը, ընդհանուր հարկային դրույքը և այլն: Հարկային վճարումների քանակով Հայաստանը զբաղեցնում է 45-49-րդ տեղը, ծախսվող ժամանակի առումով՝ 147-րդ տեղը, իսկ ընդհանուր հարկային դրույքի առումով՝ 17-րդ տեղը: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և մեր հարևան երկրների շարքում Հայաստանի զբաղեցրած դիրքը ներկայացված է աղյուսակ 2-ում[3]:

Աղյուսակ 2

Համաշխարհային բանկի գործարարությամբ զբաղվելը զեկույցում նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և ՀՀ հարևան երկրների շարքում Հայաստանի զբաղեցրած դիրքը հարկային բեռի տեսանկյունից

Երկիր	Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	Հարկային բեռ	Վճարումների քանակ	Ծախսվող ժամանակ	Ընդհանուր հարկային դրույք
Ղազախստան	41	18	7.00	188.00	29.20
Լատվիա	22	27	7.00	193.00	35.90
Էստոնիա	16	30	8.00	81.00	49.40
Ադրբեջան	63	34	7.00	195.00	39.80
Վրաստան	24	40	5.00	362.00	16.40
Հայաստան	35	41	10.00	313.00	19.90
ՌԴ	51	47	7.00	168.00	47.00
Լիտվա	20	49	11.00	171.00	42.60
Թուրքիա	55	61	11.00	226.00	40.90
Բելառուս	44	63	7.00	176.00	51.80
Մոլդովա	52	78	21.00	186.00	40.20
Ուկրաինա	83	107	5.00	350.00	52.20
Ուզբեկստան	87	115	33.00	192.50	41.10
Իրան	118	123	20.00	344.00	44.10
Ղրղզստան	67	138	51.00	225.00	29.00
Տաջիկստան	132	172	28.00	276.00	81.80

Նշված ցուցակում Հայաստանը հարկային բեռի առումով զբաղեցնում է 6-րդ տեղը, հարկային վճարումների քանակով՝ 9-րդ տեղը, ծախսվող ժամանակով՝ 13-րդ տեղը, իսկ ընդհանուր հարկային դրույքով՝ 2-րդ տեղը:

[1] «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք՝ ընդունված 21.06.2014թ., հոդված 2, կետ 2 և հոդված 3, կետ 1:

[2] «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք՝ ընդունված՝ 07.05.2015թ., հոդված 3, կետ 1 և 2:

[3] http://russian.doingbusiness.org/data/exploretopics/paying-taxes

Վերը նշվածից պարզ է դառնում, որ հարկային բեռի առումով ավելի մրցունակ երկիր դառնալու համար պետք է քայլեր ձեռնարկվեն նվազեցնելու այսպես կոչված լրացուցիչ հարկային բեռը, որը առաջանում է հարկային վճարումները կատարելու, ինչպես նաև հարկային հաշվետվությունները ներկայացնելու համար ծախսվող ժամանակի պատճառով: Այդ ուղղությամբ արդեն կան կատարված քայլեր, մասնավորապես՝ հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացումը, որի կատարելագործման ուղղությամբ տարվում են շարունակական աշխատանքներ: Հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացումը հնարավորություն է տալիս պարզեցնելու հարկային հաշվետվությունների հանձնման գործընթացը և ավտոմատացնելու հարկային հաշվետվությունների լրացումն ու ստուգումը: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հարկ վճարողների համար պարբերաբար կազմակերպվող դասընթացները հնարավորություն են տալիս բարձրացնելու վերջիններիս՝ հարկային համակարգի և հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ գիտելիքները, ինչը նույնպես նպաստում է հարկային վճարումների կատարմամբ և հաշվետվությունների ներկայացմամբ պայմանավորված լրացուցիչ հարկային բեռի նվազեցմանը:

Հարկման արդյունավետության տեսանկյունից կարևոր հանգամանք կարելի է համարել նաև ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի ստացած եկամուտների և իրավաբանական անձանց ստացած շահույթի նկատմամբ հարկման պրոգրեսիվ դրույքաչափի կիրառումը: Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի ստացած եկամուտների նկատմամբ հարկման պրոգրեսիվ դրույքաչափը ներկայումս էլ կիրառվում է (աղյուսակ 3 և 4)[1]՝

Աղյուսակ 3

Ֆիզիկական անձանց ստացած եկամուտների նկատմամբ հարկման պրոգրեսիվ դրույքաչափը

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 120,000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
120,000-2,000,000 դրամ	29,280 դրամին գումարած 120,000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը
2,000,000 դրամից ավելի	518,080 դրամին գումարած 2,000,000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը

Աղյուսակ 4

Անհատ ձեռնարկատերերի ստացած եկամուտների նկատմամբ հարկման պրոգրեսիվ դրույքաչափը

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև 1,440,000 դրամ	Հարկվող եկամտի 24.4 տոկոսը
1,440,000 դրամից ավելի	351,360 դրամին գումարած 1,440,000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը

120,000 - 2,000,000 ՀՀ դրամի չափով ինտերվալ սահմանելը և այն նույն դրույքաչափով հարկելը այնքան էլ արդարացի չի կարելի համարել: Այն կարելի է գոնե 2 մասի բաժանել՝ հարկելով համապատասխան դրույքաչափերով:

Ընդհանրապես՝ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի ստացած եկամուտների նկատմամբ հարկման համապատասխանաբար երկմակարդակ և եռամակարդակ պրոգրեսիվ դրույքաչափի կիրառումը կարելի է վերանայել՝ երկուսն էլ դարձնելով քառամակարդակ կամ հնգամակարդակ, իսկ հարկման դրույքաչափը ըստ մակարդակների բարձրացնել մինչև 50 տոկոս: Իհարկե, դա կարող է որոշ դժգոհություններ առաջացնել հասարակության շրջանում, սակայն հասարակության մեծ մասը ստանում է միջին կամ միջինից ցածր եկամուտ, ուստի նրանց ստացած եկամուտների նկատմամբ հարկման դրույքաչափերը չփոխելը և համեմատա-

[1] «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 22.12.2010թ., հոդված 10, կետ 1:

բար բարձր դրույքաչափերը միջինից բարձր եկամուտ ստացողների նկատմամբ կիրառելը կմեղմացնի հասարակության շրջանում հնարավոր դժգոհությունները: Ի վերջո արդարացի կլինի, եթե հարկման բարձր դրույքաչափ կիրառվի այն քաղաքացիների նկատմամբ, ում ստացած մաքուր եկամուտը՝ հարկային վճարումները կատարելուց հետո, միևնույն է մնում է չափազանց բարձր:

Իրավաբանական անձանց նկատմամբ էլ կարելի է շահութահարկի պրոգրեսիվ դրույքաչափ կիրառել՝ սահմանելով շահույթի որոշակի մակարդակ և դրանից քիչ շահույթ ստացողների նկատմամբ կիրառելով գործողից ցածր, իսկ շատ շահույթ ստացողների նկատմամբ՝ գործողից բարձր դրույքաչափ: Սակայն այս պարագայում չափազանց բարձր դրույքաչափերը կարող են խոչընդոտ հանդիսանալ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար, մանավանդ օտարերկրյա ներդրումների դեպքում, ինչը կհանգեցնի խոշոր բիզնեսի արտահոսքի այլ երկրներ: Ուստի այդ դրույքաչափերը կիրառելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել տարածաշրջանում, հատկապես հարևան երկրներում գործող դրույքաչափերը և սահմանել շահութահարկի այնպիսի պրոգրեսիվ դրույքաչափ, որի դեպքում ընդհանուր հարկային բեռը ամեն դեպքում կլինի բավականին մրցունակ: Օտարերկրյա ներդրումների նկատմամբ կարելի է ցուցաբերել նաև ամբողջովին առանձնացված մոտեցում և վերջիններիս տրամադրել արտոնությունների բավականին գրավիչ փաթեթներ:

Ամփոփելով սույն հոդվածը՝ առանձնացնենք հարկման և հարկային բեռի համատեքստում գործարարությամբ զբաղվելու արդյունավետության բարձրացման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը՝

- ոչ օրինական հարկային արտոնությունների տրամադրման դեմ շարունակական պայքարի իրականացում,
- ստվերի դեմ պայքարի իրականացում, ինչը հարկման արդյունավետության բարձրացման առաջնային մեխանիզմներից կարելի է համարել,
- հարկային վճարումները կատարելու, հարկային հաշվետվությունները ներկայացնելու և հարկային այլ հարաբերությունների ընթացքում ժամանակային ու ֆինանսական ծախսերով պայմանավորված լրացուցիչ հարկայի բեռի նվազեցմանն ուղղված արդեն իսկ կատարված քայլերի կատարելագործում և նոր մեխանիզմերի մշակում,
- ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի ստացած եկամուտների ու իրավաբանական անձանց ստացած շահույթի նկատմամբ հարկման առավել պրոգրեսիվ դրույքաչափերի կիրառում,
- օտարերկրյա ներդրումների նկատմամբ ամբողջովին առանձնացված մոտեցման ցուցաբերում:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ ԵՎ ՀԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆԱՐԵԿ ԳՐԻԳՈՐԻԻ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Սույն հետազոտության շրջանակներում փորձ է կատարվել ուսումնասիրելու, թե ինչ է իրենից ներկայացնում հարկման արդյունավետություն հասկացությունը, ինչ հիմնական նպատակ է հետապնդում այն, ինչ գործոններով է այդ արդյունավետությունը պայմանավորված, ինչ քայլեր են կատարվել դրա բարձրացման ուղղությամբ, դրանցում ինչ դեր ունի հարկային բեռը և ինչ ազդեցություն է այդ ամենը ունենում գործարարությամբ զբաղվելու վրա: Նշված հարցերը հետազոտելու համար մասնավորապես ուսումնասիրվել են հարկման և գործարարությամբ զբաղվելու արդյունավետության բարձրացման նպատակով ստվերի դեմ պայքարի շրջանակներում «Եկամտային հարկի մասին» և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքներում կատարված փոփոխությունները, ինչպես նաև այդ նույն նպատակով հարկային բեռի անհրաժեշտ փոփոխությունները և այլ կարևոր քայլեր:

Բանալի բառեր. *հարկման արդյունավետություն, հարկային բեռ, ստվեր, գործարարությամբ զբաղվելը, եկամտային հարկ, շրջանառության հարկ:*

ВЕДЕНИЕ БИЗНЕСА И ЭФФЕКТИВНОСТЬ НАЛОГООБЛОЖЕНИЯ В КОНТЕКСТЕ НАЛОГОВОГО БРЕМЕНИ

НАРЕК ГРИГОРЬЕВИЧ КАРДУМЯН
аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В рамках настоящей статьи сделана попытка исследования сущности понятия «эффективность налогообложения», основной цели налогообложения, факторов, обусловливающих эффективность налогообложения и шагов, предпринятых в направлении ее повышения, роли налоговой нагрузки и влияния ее на ведение бизнеса. Для исследования указанных вопросов, в частности, были изучены поправки, внесенные в законы РА «О подоходном налоге» и «О налоге с оборота», нацеленные на повышение эаффективности налогообложения и ведение бизнеса в рамках борьбы против коррупции, а также необходимые изменения налогового бремени и другие важные шаги.

Ключевые слова: *эффективность налогообложения, налоговая нагрузка, коррупция, ведение бизнеса, подоходный налог, налог с оборота.*

DOING BUSINESS AND TAXATION EFFECTIVENESS IN THE CONTEXT OF TAX BURDEN

NAREK GRIGORI QARDUMYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article attempts to study what is the meaning of the term “taxation effectiveness”, what are the main objectives, and which factors explain that efficiency, and what has been initiated to increase the effectiveness, what is the role of the tax burden in increasing the effectiveness and how all that affects doing business. In order to research the above stated issues, the changes made in two laws of the Republic of Armenia (namely Income Tax, and Turnover Tax) in the framework of reducing the size of the shadow economy have been studied that could enable to increase the effectiveness of the taxation and improve conditions for doing business; and for the same purpose respective changes in the tax burden and other important steps have been studied as well.

Keywords: *Taxation effectiveness,tax burden, shadow economy, doing business, income tax, turnover tax*.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՎԱՀԱԳՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ, ԲԵԼԱՌՈՒՍ, ԷՍՏՈՆԻԱ

Գտնվելով աշխարհաքաղաքական փոփոխությունների կիզակետում՝ յուրաքանչյուր հետխորհրդային հանրապետության տնտեսական համակարգում դիտարկվեցին զարգացումների յուրօրինակ ձևաչափեր: Զարգացնելով դեռևս ԽՍՀՄ տարիներից վերջիններիս որպես ժառանգություն հասած ենթակառուցվածքային մի շարք ուղղություններ՝ որոշ պետություններ զարկ տվեցին նաև տնտեսական նոր ուղղությունների զարգացմանը և ձեռնոց նետեցին առաջ եկած բազմապիսի մարտահրավերներին դիմակայելու ուղղությամբ:

Այնուամենայնիվ, հարկ է նշել նաև, որ խորհրդային տնտեսաքաղաքական համակարգը կազմալուծող մարտահրավերների շարքում, ոչ վերջին դերը խաղացին գլոբալ մասշտաբով հարաշարժ տեխնոլոգիական զարգացումները: Խորհրդային համակարգին բնորոշ գերկենտրոնացվածությունը և կառավարման բյուրոկրատական-հրամայական եղանակը, ռեսուրսների բաշխման ուժային-վարչական աշխատակարգերը, ենթարկվածությունը ռազմաարդյունաբերական համալիրի պահանջներին, տնտեսական անազատությունը և մրցակցության բացակայությունը, արդիականացման դժվարությունները, անարդյունավետությունն ու անընկալունակությունը տեխնոլոգիական նորաստեղծությունների նկատմամբ կանխորոշեցին նախ՝ ԽՍՀՄ տնտեսության կազմալուծումը, իսկ հետագայում նաև՝ քաղաքական համակարգի փլուզումը[1]:

Գաղտնիք չէ, որ գիտելիքահենք տնտեսությունը չունի համընդհանուր սահմանում, քանի որ գիտություն հասկացողությունն օժտված է տնտեսության վրա ազդեցության անչափելիությամբ: Սակայն, համաշխարհային երկարամյա տնտեսական փորձի վերլուծությունը, այնուամենայնիվ, թույլ է տալիս ժամանակակից ուսումնասիրողներին որոշակիորեն չափելի դարձնել այս ուղղությունը՝ հիմք ընդունելով երկրների կամ մասնավոր ձեռնարկությունների կողմից ԳՀՓԿԱ-ների ուղղությամբ իրականացվող ծախսերի և արդյունքների մակարդակը, գիտության զարգացման արդյունքում ստեղծված նորարարությունների միջոցով ողջ տնտեսության և դրա սուբյեկտների արդյունավետության և մրցունակության բարձրացման մակարդակը և այլն:

Ըստ ռուս գիտնականներ Կուդինայի և Սաժինայի՝ գիտության տնտեսությունը տարբերվում է նյութական բարիքների տնտեսությունից նրանով, որ սպառման գործընթացում նյութական բարիքները վերանում են, իսկ գիտելիքները՝ հակառակը՝ ավելանում են: Տնտեսության մեջ կամայական գործունեություն գիտելիքի ավելի մեծ ծավալ է ի հայտ բերում՝ ի համեմատություն դրա սպառմանը: Եվ որքան ավելի շատ է հասարակությունում ավելանում գիտելիքի սպառումն, այնքան ավելի շատ է այն ընդլայնվում՝ թե՛ քանակապես, թե՛ որակապես[2]:

Ընդհանուր առմամբ գիտելիքահենք տնտեսության զարգացումը և բարձր մրցունակության ապահովումը էապես կախված է այս կամ այն պետության՝ ինովացիոն և բարձրորակ տնտեսական աճ ապահովող տնտեսական քաղաքականությունից:

---

[1] Մարգարյան Ա.Շ., Տնտեսության նորաստեղծական արդիականացման հիմնախնդիրները, - Եր.: «Գիտություն» հրատ., 2013, էջ 6:

[2] Инновационная экономика: научно-методическое пособие / под ред. М.В. Кудиной и М.А. Сажиной . – М. : ИД “Форум” : ИНФРА-М, 2014. с. 27.

Ռուսաստանցի գիտնական Միլներն առանձնացնում է նմանօրինակ քաղաքականության հետևյալ ութ բնորոշ գծերը[1].

1. ազգային տնտեսական և տեխնոլոգիական զարգացման երկարաժամկետ հեռանկարի (ոչ պակաս, քան 15-20 տարի) կանխատեսում, ռազմավարության սահմանում և ծրագրավորում,
2. մասնակցություն միասնական համաշխարհային գիտատեխնիկական հարթակի և բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների շուկայի ձևավորմանը (մասնակիցների սահմանափակ շրջանակներով),
3. մոնոպոլիաներից ռենտայի ստացման և գիտելիքի ու բարձր տեխնոլոգիաների ուղղությամբ դրա վերաբաշխման գլոբալ մեխանիզմների ձևավորում,
4. միջազգային մակարդակի ինտեգրմամբ օժտված ազգային ինովացիոն համակարգերի ձևավորում (նմանօրինակ համակարգերը իրենց մեջ են ընդգրկում գիտելիքների և նորարարությունների փոխանցելիությունն ու նոր տեխնոլոգիաների շուկայնացումն ապահովող կառույցների ողջ համալիրը),
5. պետության և ձեռնարկատիրության սերտ համագործակցություն, ակտիվ տնտեսական դիվանագիտություն և համաշխարհային շուկայում նոր սեգմենտների զարգացմանը նպաստող համակարգի կառուցում:

Շատ հաճախ գիտելիքահենք տնտեսական արդյունքի դիտարկման ուղղությամբ հետազոտողները ունենում են տարբեր կարծիքներ: Կամայական արտադրատեսակ բարձր տեխնոլոգիական անվանելով՝ թյուր կարծիք է ստեղծվում դրանում կիրառված գիտելիքի մասշտաբների վերաբերյալ, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է մեծ քանակությունների արտադրությանը, ներկրմանը կամ արտահանմանը: Որպես հիմնական չափորոշիչ առանձնացնելով ներդրումից մինչև վերջնական թողարկումն ընկած ժամանակահատվածում իրականացված ԳՀՓԿԱ-ների ինտենսիվության բարձր մակարդակը, գիտելիքահենք են սահմանվում՝ ավիացիոն և տիեզերական, համակարգչային, դեղագործական, գիտական սարքավորումների և էլեկտրական մեքենաների ոլորտի արտադրանքները:

Դիտարկենք ՀՀ-ում, Վրաստանում, Բելառուսում և Էստոնիայում գիտելիքահենք տնտեսության կայացման մակարդակները, վերլուծենք վերջիններիս վրա ազդեցություն ունեցող հիմնական ցուցանիշները և վերհանենք անցումային տնտեսության պայմաններում գիտելիքահենք տնտեսության վերափոխման զարգացումները վերոնշյալ պետություններում:

Հայաստան: Խորհրդային պլանային տնտեսության պայմաններում Հայաստանի տնտեսության գիտելիքահենք ենթակառուցվածքները ունեին զարգացվածության բավականին բարձր մակարդակ: Տնտեսության կենտրոնացվածության պայմաններում՝ Հայաստանի տարածքում գործող գիտահետազոտական մարմինները առավելապես ներգրավված էին ողջ ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի աշխատանքներում: Այս ժամանակաշրջանում երկրում գործարկվում են մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ և գիտաարտադրական միավորումներ, որոնք գործում էին ճշգրիտ հաշվողական տեխնիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, մեքենաշինության և այլ բնագավառներում: Սովետական Հայաստանը՝ նախկին ԽՍՀՄ գիտության, ԳՀՓԿԱ-ների իրականացման, բարձր տեխնոլոգիաների արտադրության ամենից ակտիվ կենտրոններից էր: Աճման շրջանի իր առավելագույն կետում՝ 1987թ.-ին գիտության և տեխնոլոգիաների ոլորտում աշխատում էին շուրջ 100 000 մասնագետներ[2]:

1991-1997 թվականներին ոլորտն անցնել է բավականին ծանր անցումային շրջան, երբ տարածաշրջանային հակամարտությունները, բազմաթիվ տնտեսական հիմնախնդիրների առկայությունը և բարձրակարգ մասնագետների արտագաղթը զգալիորեն խոչընդոտում էին տնտեսության ընդհանուր վերականգմանը:

ՀՀ ներկայիս տնտեսական համակարգում առկա իրավիճակներից ելնելով՝ պատասխանատու մարմինների կողմից պարբերաբար տեսականորեն առաջ է բերվում գիտելիքահենք և նո-

[1] Инновационное развитие: Экономика, интеллектуальные ресурсы, управление знаниями / Под ред. Б.З. Мильнера. – М.: ИНФРА-М, 2014. с. 51

[2] “Armenian information technology sector software and services 2010 state of industry report” Enterprise Incubator Foundation, Yerevan, 2004-2010.

բարարական տնտեսության ներդրման անհրաժեշտության աքսիոմը, որի ուղղությամբ իրականացվող քայլերը դեռևս ընդլայնվելու կարիք ունեն: Այնուամենայնիվ, ՀՀ-ում առկա են բազմապիսի հնարավորություններ և փորձ՝ գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ: Առկա են մշակված համապատասխան ռազմավարական ծրագիրը և ոլորտի զարգացման ուղղվածությամբ գործող մի շարք կառույցները (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, տեղական և հայկական սփյուռքի ֆինանսավորմամբ գործող այլ կառույցներ):

Տնտեսության գիտելիքահենք ճյուղերից ներկայումս մեր երկրում բուռն զարգացում է ապրում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը: Համաձայն վիճակագրական տվյալների[1] ոլորտը սկսել է գրանցել աճի միտումներ՝ սկսած 1998թ.-ից: «Ծրագրային ապահովում և ծառայություններ» սեգմենտը և «Ինտերնետ ծառայությունների պրովայդեր» սեգմենտն ընդգրկող ոլորտի ընդհանուր եկամուտը, առկա վիճակագրության համաձայն[2], հասել է 559.1 մլն ԱՄՆ դոլարի (474.9 մլն ԱՄՆ դոլար՝ 2014 թվականին), ինչը վկայում է 17.7% աճի մասին՝ ի տարբերություն նախորդ տարվա:

Ներկայումս Հայաստանում գործում են մոտ 450 ՏՀՏ ընկերություններ, որոնք միջինում ապահովում են տարեկան 10% աճ: Այս ընկերությունների մեծ մասը տեղակայված է Երևանում (գրեթե 88%-ը), այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է ՀՀ այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու: Ոլորտի համար պետության կողմից պարբերաբար մշակվում են համապատասխան զարգացման ռազմավարություններ:

Համաձայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ինդեքսի մասին տարեկան զեկույցի[3]՝ 2015թ.-ին Հայաստանը՝ 167 հետազոտված պետությունների շարքում զբաղեցրել է 76-րդ հորիզոնականը՝ 2010թ.-ի համեմատ առաջ անցնելով 2 հորիզոնականով: Նշենք նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, մասնավորապես, գիտելիքահենք տնտեսությանն ամբողջապես նպաստող գործոններից, օրինակ՝ համացանցից օգտվողների թիվը, որը 2016թ.-ի դրությամբ ՀՀ-ում կազմում է ընդհանուր բնակչության թվի 49,9%-ը[4] և հանրապետության չափահաս բնակչության գրագիտության մակարդակը 99,65% է:

Որպես գիտելիքահենք տնտեսական ենթակառուցվածք՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից բացի, ՀՀ-ում զարգացում է ապրում նաև դեղագործության ոլորտը: Համաձայն վիճակագրական տվյալների՝ 2014թ.-ի համեմատությամբ՝ 2015թ.-ին ՀՀ-ում գրանցվել է դեղագործական արտադրանքի արտադրության շուրջ 22% աճ[5]: Տարբեր գնահատականներով Հայաստանում ներկայումս արտադրվում է ավելի քան 450 անուն դեղատեսակ:

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ-ում և դիտարկվող պետություններում գիտելիքահենք ազգային ինովացիոն համակարգի ստեղծման վրա ազդեցություն ունեցող որոշակի առանձնացված ցուցանիշներ՝ հիմնված Global Innovation Index 2015 (Գլոբալ ինովացիոն ինդեքս 2015)[6], Doing Business 2016 (Գործարարություն 2016)[7], Measuring the Information Society Report 2015 (Տեղեկատվական հասարակության չափորոշումը 2015) տարեկան զեկույցների տրամադրած տվյալների և համացանցից օգտվողների թիվն արտացոլող՝ համապատասխան էլեկտրոնային ռեսուրսից:

---

[1] "Armenian information and communications technology sector 2012 state of industry report" Enterprise Incubator Foundation, Yerevan, 2012.

[2] Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, «ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2015», Եր., 2015

[3] "Measuring the Information Society Report 2015", International Telecommunication Union, Geneva Switzerland, 2015.

[4] http://www.internetlivestats.com/internet-users/armenia/

[5] http://www.armstat.am/am/?nid=246

[6] Soumitra Dutta, Bruno Lanvin, and Sacha Wunsch-Vincent "The Global Innovation Index 2015 Effective Innovation Policies for Development", WIPO,Geneva Switzerland, 2015.

[7] "Doing Business 2016 Measuring Regulatory Quality and Efficiency" 6 International Bank for Reconstruction and Development / The World Bank, Washington DC, 2016.

Երկրների ինովացիոն զարգացման մակարդակի ցուցանիշներ

	ԳԻԻ ցուցանիշ	Զբաղվածությունը գիտելիքահենք աշխատատեղերում (% - ընդ.-ից)	ԳՀՓԿՄ ծախսեր (% ըստ ՀՆԱ-ի)	Բարձր միջին բարձրության տեխնոլոգիաների ոլորտի արտադրություններ (% - ընդհ.-ից)	Հանակարգչային ծառայությունների արտահանում	Գործարարություն 2016-ի ցուցանիշ	Համացանցից օգտվողներ (% ընդհ. բնակչության թվից)	SS ոլորտի զարգացվածության ինդեքս
Հայաստան	61	26,9% (52-րդ)	0,2% (83-րդ)	0,1% (91րդ)	2,8% (21-րդ)	74.22 (35-րդ)	49,9%	76
Վրաստան	73	35,4% (35-րդ)	0,2% (94-րդ)	0,3% (71-րդ)	0,7% (87-րդ)	77.45 (24-րդ)	52,9%	78
Բելառուս	53	35,9% (33-րդ)	0,7% (49-րդ)	0,66% (35-րդ)	1,7% (54-րդ)	72.33 (44-րդ)	61%	36
Էստոնիա	23	41,8% (21-րդ)	1,8% (20-րդ)	0,78% (23-րդ)	2,6% (25-րդ)	79.49 (16-րդ)	91,4%	20

Վրաստան: Խորհրդային տարիներին Վրաստանի տնտեսությունը բնութագրվում էր որպես ինդուստրիալ-ագրարային, զարգացած արդյունաբերությամբ և արդյունավետ գյուղատնտեսությամբ տնտեսություն: Բարձր տեխնոլոգիական ոլորտներից զարգացած էր մեքենաշինությունը, գործում էր ինքնաթիռների արտադրության գործարան: Սկսած անկախության առաջին տարիներից, ունենալով մի շարք գլոբալ քաղաքական և տնտեսական խնդիրներ՝ սույն պետության տնտեսությունը մեծ անկում ապրեց:

Ներկայիս Վրաստանի տնտեսության ուժեղ կողմերին կարելի է դասել վերջին տարիներին այս երկրի կառավարության խորը ինստիտուցիոնալ վերափոխումները, որոնք նպատակ են հետապնդում բարձրացնելու տնտեսական թափանցիկությունը, վերացնելու կաշառակերությունը, ներգրավվելու արտասահմանյան ուղղակի ներդրումներ և նպաստելու ձեռնարկատիրության զարգացմանը: Նմանօրինակ բարդ ինստիտուտներում (օրենքներ, կանոններ, կանոնակարգեր) իրականացված բարեփոխումների արդյունքում Վրաստանում բավականին լավ մթնոլորտ է առաջացել բիզնես նախաձեռնությունների, մատչելի հարկային վճարումների և վարկերի ստացման, ներդրողների պաշտպանվածության բարձր մակարդակի ապահովման և ձեռնարկատիրությունը խթանող ուղղություններում: Transparency International գործակալության տրամադրած տվյալներով 2015թ. Վրաստանը կոռուպցիայի ընկալման համաթվով զբաղեցնում է 48-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով համեմատվող Հայաստանից (95-րդ) և Բելառուսից (107-րդ)[1]:

Նորարարական գործունեության աջակցությամբ զբաղվող Վրաստանի հիմնական պետական հաստատությունը՝ Վրաստանի ինովացիաների և տեխնոլոգիաների գործակալությունն է, որը պատկանում է Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությանը: Բավականին երիտասարդ այս կառույցը (հիմնվել է 2014թ. փետրվարին) ներգրավված է երկրում ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման ապահովման և ոլորտի կոորդինացման աշխատանքներում[2]:

Վրաստանի համար առաջնային պետք է հանդիսանա այս բարեփոխումների հայեցակարգային տեղափոխումը գիտության և տեխնոլոգիական զարգացման ասպարեզ: Այսպես, համաձայն Համաշխարհային Բանկի համապատասխան խմբի կողմից իրականացված հետազոտության՝ վրացական այն ընկերությունները, որոնք ակտիվորեն կիրառում են նորարարություններն իրենց աշխատանքներում 30%-ով ավել աշխատատեղեր են ստեղծում՝ ի համեմատություն մնացյալ այլ ոլորտների ընկերությունների[3]:

[1] https://www.transparency.org/country/#BLR

[2] http://gita.gov.ge/eng.html

[3] Smita Kuriakose, Editor "Fostering Enterpreniourship in Georgia" International Bank for Reconstruction and Development / The World Bank, Washington DC, 2013.

Համեմատականներ անցկացնելով հարևան Հայաստանում այս ոլորտում արձանագրված ցուցանիշների (աղյուսակ 1) միջև՝ կարելի է փաստել, որ Վրաստանը, ունենալով մի շարք մրցակցային առավելություններ (բարիդրացիական հարաբերություններ և բաց սահմաններ հարևան պետությունների հետ, կոռուպցիայի անհամեմատելի ցածր մակարդակ, գիտելիքահենք և մրցունակ տնտեսությամբ եվրոպական պետությունների հետ քաղաքական և տնտեսական ինտեգրացիոն բարեհաջող գործընթացներ, ելք դեպի ծով և այլն) իր դիրքերն էապես զիջում է նորարարական գործունեության խթանման քաղաքականությամբ և դրա արդյունքներով:

Բելառուս: Դիտարկելով Բելառուսում գիտելիքահենք տնտեսության կայացման պատմությունն ու առկա իրավիճակը կարող ենք փաստել, որ անցումը դեպի շուկայական տնտեսական համակարգ և տնտեսության վերակազմավորումը այստեղ որոշակի արդյունավետություն է ապահովել: Դեռևս ԽՍՀՄ տարիներին հիմնված ԳՀՓԿԱ-ներ պահանջող տնտեսական ուղղություններից Բելառուսում ներկայումս զարգացած է էլեկտրատեխնիկական սարքավորումների արտադրությունը, մեքենաշինությունը, դեղագործությունը, անկախության տարիներից թափ է առել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը: Խորհրդային տարիների մայրամուտին արդեն՝ սկսած 1987թ., ծանր արդյունաբերության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը բավականին մեծ տարածում ուներ: Համարվում էր, որ տեղեկատվայնացումը կարող է դառնալ «տնտեսության զարգացման արագացման» և խորհրդային արդյունաբերության մրցունակության բարձրացման միջոց: Այդպիսով, Բելառուսում սկսում է գործել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որը ներկայումս զարգացման բավականին կայուն տեմպեր և բարձր մակարդակ ունի: Համաձայն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ինդեքսի մասին տարեկան զեկույցի Բելառուսը զբաղեցնում է 36-րդ հորիզոնականը՝ հետազոտված 167 պետությունների շարքում (աղյուսակ 1): Ինչպես երևում է աղյուսակից՝ այս պետությունը համեմատաբար բարենպաստ դիրքեր է գրավում նաև դիտարկվող այլ ուղղություններում:

Համաձայն կատարված հետազոտությունների[1]՝ 2015թ. դրությամբ Բելառուսում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների շուրջ 930 ընկերություններ, որոնցից 24-ը՝ պետական են, 137-ը գործում են տեխնոպարկերի շրջանակներում: 2014թ. SS ծառայությունների արտադրության ծավալը կազմել է 678 մլն. դոլար, իսկ ոլորտի ընդհանուր ծավալը գնահատվում է 990 մլն. դոլար: Զարգացման 11 տարիների ընթացքում SS ծառայությունների արտահանումն աճել է շուրջ 50 անգամ: Ներմուծումը կազմում է ընդհանուր արտահանման 13%-ը:

Շուրջ 17 պետությունների ներկայացուցիչներ ուղղակի ներդրումներ են կատարում Բելառուսի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Ներդրումներ իրականացնող առաջին երեք երկրներն են՝ ԱՄՆ-ը (19%), Ռուսաստանը (18%) և Նիդեռլանդները (11%):[1]

Բացի տեղեկատվական տեխնոլոգիաներից՝ Բելառուսում ավանդական համարվող գիտելիքահենք արտադրություններից շարունակում են գործել էլեկտրական սարքավորումների արտադրությունը և մեքենաշինությունը (խոշոր մարդատար, բեռնատար, տրակտորներ, կոմբայններ և ինքնաթափեր): Երկրում թողարկվում են հեռուստացույցներ և այլ կենցաղային տեխնիկա, վերելակներ:

Հարկ է նշել, սակայն, որ այս ուղղությամբ ներկայիս զարգացումները փաստում են տնտեսության կախվածությունը գլոբալ աշխարհաքաղաքական իրադարձություններից, որոնք, մասնավորապես, արտացոլվում են Բելառուսի երկու հարևան պետությունների՝ Ռուսաստանի և Ուկրաինայի առկա զարգացումներում: 2015թ. ընթացքում երկրի ողջ արդյունաբերությունում գրանցվել է 6,6%-ով անկում: Մեր թվարկած ուղղություններից՝ 6,3%-ով կրճատվել է էլեկտրական սարքավորումների արտադրությունը (2016թ. հունվար-փետրվար ամիսներին թողարկվել է 22700 միավոր հեռուստացույց, արտադրությունը 2015թ. վերջի դրությամբ կրճատվել է շուրջ 76%-ով), 25,2%-ով՝ մեքենաների և սարքավորումների, և 13,7%-ով՝ տրանսպորտային միջոցների արտադրությունները: Հատկանշական է, սակայն, դեղագործության ոլորտում 2015թ. գրանցված 38,5% աճը:

[1] «Рынок ИТ-услуг 2015», Инвестиционная компания «ЮНИТЕР»,Минск 2015.

Ընդհանուր առմամբ, համեմատականներ անցկացնելով Բելառուսի և Հայաստանի գիտելիքահենք տնտեսական ուղղություններում տեղի ունեցող զարգացումների միջև, կարելի է փաստել, որ մի շարք ոլորտներում Բելառուսի տնտեսվարողները և, առաջին հերթին, պետությունը կարողացել են զարգացնել ԽՍՀՄ-ի տարիներից որպես ժառանգություն մնացած ենթակառուցվածքները՝ դրանք համապատասխանեցնելով ներկայիս գլոբալ շուկայի պահանջներին: Երկու երկրներում առկա են որոշակի նմանություններ, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների և դեղագործության զարգացման բարձր տեմպերի ուղղությամբ: Երկու երկրների անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը համագործակցության և փորձի փոխանակման լայն հնարավորություններ է ստեղծում, որոնց կիրառման դեպքում կարելի է էլ ավելի շոշափելի ու բարձր արդյունքների հասնել այս, ինչպես նաև այլ գիտելիքահենք ոլորտներում:

Էստոնիա: Ներկայացնելով Էստոնիայի գիտելիքահենք տնտեսության զարգացվածության մակարդակը, հարկ է նշել, որ բոլոր հետխորհրդային հանրապետությունների շարքում այս պետությունը տվյալ ուղղությամբ գրանցված ցուցանիշներով բացարձակ առաջատարն է և, հետևապես, այստեղ բավականին բարձր է բնակչության կենսամակարդակը: 2015թ.-ին բնական պաշարներով ոչ այնքան հարուստ այս պետության բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը կազմում է շուրջ 25600 դոլար[1], որը շատ մոտ է Ռուսաստանի համանուն ցուցանիշին և 3 անգամ գերազանցում է Հայաստանի համանուն տնտեսական ցուցանիշը:

Շուրջ 50 տարի գտնվելով Խորհրդային Միության կազմում, Էստոնիայի արդյունաբերությունը հանդիսանում էր միակենտրոն պլանային տնտեսական համակարգի մի մասը: Տեղի գործարանների թողարկած արտադրանքը համամիութենական տնտեսվարման շղթայի համապատասխան ոլորտի՝ մեկ կամ մի քանի բաղկացուցիչն էր կազմում, չկար վերջնական փակ շղթա և հավաքական արտադրանքի թողարկում: Օրինակ՝ Էստոնիայի գործարաններից մեկում էին թողարկվում ողջ ԽՍՀՄ տարածքում արտադրվող քաղաքացիական և ռազմական ինքնաթիռների սև արկղերը: Ընդհանուր առմամբ, գործում էին էլեկտրական սարքավորումներ թողարկող 13 արտադրական միավորներ, որտեղ մինչև ԽՍՀՄ փլուզումը ներգրավված էր շուրջ 26000 աշխատակից: Այս ձեռնարկությունները թողարկում էին բժշկական, օպտիկական և այլ ճշգրիտ սարքավորումներ, ռադիոհաղորդիչներ և հեռուստացույցներ: 1989-1990 թվականներից արդեն սկիզբ առան այս արտադրությունների սեփականաշնորհման գործընթացները: Տվյալ ժամանակաշրջանում Էստոնիայում զարգացած էր նաև քիմիական և դեղագործական արդյունաբերությունը: Բնակչության գրագիտության մակարդակը կազմում էր 100%[2]:

1990-ականների կեսերից Էստոնիայի կառավարությունը սկսեց մշակել և իրականացնել գիտելիքահենք տնտեսության կառուցման և միջազգային ինտեգրման ռազմավարական մի շարք ծրագրեր: Ըստ իրականացվող ծրագրերի՝ պետական ֆինանսական միջոցներ սկսեցին տրամադրվել, մասնավորապես, գիտության, կրթության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության, շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներին: Մինչև 2002 թվականը կառավարությունն իրականացնում էր սեփականաշնորհման համապատասխան ծրագիր, որի արդյունքում տնտեսության մեջ ներգրավվեցին արտասահմանյան մի շարք խոշոր ընկերություններ:

Ներկայումս Էստոնիայում շարունակում են ինտենսիվորեն զարգանալ տնտեսվարման գիտելիքահենք ուղղությունները: Բարձր ցուցանիշներ են արձանագրվում տեղեկատվական տեխնոլոգիաների, մեքենաշինության, էլեկտրական սարքավորումների արտադրության, բժշկական ծառայությունների մատուցման և դեղագործության ոլորտներում: Էստոնիայի տնտեսական համակարգի զարգացվածության մակարդակի մասին է վկայում այստեղ առկա նորարարական կլաստերների առկայությունը:

Էստոնիայում, բացի տեղեկատվական տեխնոլոգիաների կլաստերից, գործում են նաև առողջապահության տեխնոլոգիական կլաստերը, մաքուր տեխնոլոգիաների, լոգիստիկայի, նա-

[1] Report for Selected Countries and Subjects, IMF, Washington DC, October 2015.

[2] Orjan Solvell, Michael E. Porter, “Estonia in Transition”, Harvard Business School, 9-702-436 REV: November 27, 2002.

վաշինության և այլ կլաստերներ: Առողջապահության ոլորտում գործում են բիոտեխնոլոգիական, դեղագործական և բժշկական սարքավորումների արտադրություններ, բավականին ուշագրավ է տեղեկատվական տեխնոլոգիաների ներգրավվածությունն այս ոլորտում[1]: Էստոնիան առաջատար է համարվում էլեկտրոնային առողջապահական լուծումների ոլորտում (առցանց բժշկական խորհրդատվություններ, առցանց հիվանդանոց, հեռահար դերմատոսկոպիա): Դեղատոմսերի 94%-ը գրվում է առցանց[2]:

Տվյալները փաստում են, որ Էստոնիայում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը (20-րդ հորիզոնական՝ SS զարգացվածությամբ) լայնորեն տարածվել է սոցիալ-տնտեսական այլ ուղղությունների վրա: Էստոնիայում ծրագրային ապահովման ոլորտում, թերևս, ամենից հանրահայտ արտադրանքը՝ Skype համակարգչային ծրագիրն է իր համապատասխան հավելվածներով:

Զուգահեռներ անցկացնելով Էստանիայի և ՀՀ տնտեսությունների զարգացման պատմության միջև կարելի է փաստել, որ տնտեսության գիտելիքահենք ենթակառուցվածքներում Էստանիայի առկա դիրքերը էապես գերազանցում են մեր պետության համանուն ցուցանիշները: Այնուամենայնիվ, որոշ ցուցանիշներից տեսանելի է դառնում ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման մեծ ներուժը և ձեռքբերումները: Որպես ՀՀ-ում էստոնական մոդելի տեղայնացման, փորձի կիրառման առաջին քայլ կարելի է դիտարկել մեր երկրում տեղեկատվական հասարակության ստեղծման և կայացման գործընթացը: Համացանցի ընձեռնած լայն հնարավորությունների շրջանակներում հարկ է ստեղծել միասնական էլեկտրոնային հարթակ, որն ի զորու կլինի լուծել որոշակի սոցիալական խնդիրներ՝ վերացնելով կոռուպցիոն ռիսկերը և բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը, և հաղթահարել ձեռնարկատիրական մարտահրավերները, որոնք կանգնած են մեր տնտեսվարողների առջև: Մասնավորապես, հարթակի միջոցով հարկ է ստեղծել և խրախուսել կապերը ներդրողների և գյուտարարների, սկսնակ գործարարների, նախաձեռնողների, արտադրողների, վաճառողների և սպառողների, արտահանողների ու ներկողների և այլ ինստիտուտների միջև: Տեխնոլոգիաների տրանսֆերի արագությունը բարձրացնող այս նախաձեռնությունը կարող է մեծապես նպաստել երկրում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը:

Տնտեսական գործընթացների էլեկտրոնացումը նոր զարկ կարող է հաղորդել տեղի ծրագրային ապահովմամբ զբաղվող ընկերություններին՝ շնորհիվ պետական պատվերների ինտենսիվացման և այս ոլորտում պետական միջոցների օգտագործման:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով վերոնշյալ երկրներում գիտելիքահենք տնտեսության զարգացման տեմպերը, անցումային ժամանակաշրջանում ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները ու զարգացումները, նպաստող և խոչընդոտող գործոնները՝ որոշակիորեն տեսանելի է դառնում ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման մրցունակության ապահովման հիմնական գործիքակազմը, որն իր մեջ պետք է ներառի հետևյալը.

- կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը (Վրաստանի օրինակով),
- պետություն-մասնավոր հատված կապերի ամրապնդումը (Բելառուսի օրինակով),
- տեղեկատվական հասարակության ստեղծումը (Էստոնիայի օրինակով),
- նորարարական արտադրական/տարածքային կլաստերների ստեղծումը և զարգացումը (Էստոնիայի օրինակով):

Այսպիսով, վերոնշյալ գործիքակազմի կիրառումը կնպաստի նաև գիտելիքահենք այլ ոլորտների զարգացմանը և նորարարական կլաստերների ստեղծմանը, որոնք իրենց հերթին տնտեսական զարգացման բարձր տեմպեր կարող են առաջացնել ՀՀ ողջ տարածքով մեկ:

[1] http://www.clusnet.eu/Cluster-mapping-Accessible-version.63.0.html

[2] «Tallinn: Facts and Figures 2013», Tallinn, 2013, URL: http://www.tallinn.ee/est/ettevotjale/g2606s71202 [2.12.2013].

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆ, ՎՐԱՍՏԱՆ, ԲԵԼԱՌՈՒՍ, ԷՍՏՈՆԻԱ

ՎԱՀԱԳՆ ԱՐԹՈՒՐԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Վերլուծելով ՀՀ գիտելիքահենք տնտեսության ներկայիս մարտահրավերները՝ անհրաժեշտություն է առաջանում համեմատություններ իրականացնել վերջիններիս զարգացման առկա մակարդակի և այլ պետություններում ինովացիոն, գիտելիքահենք տնտեսության զարգացման մակարդակների միջև: Հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել վերլուծելու Հայաստանի, Վրաստանի, Բելառուսի և Էստոնիայի ինովացիոն զարգացվածության մակարդակները:

Պետություններն ընտրվել են՝ հաշվի առնելով վերջիններիս աշխարհագրական դիրքը, արտաքին քաղաքական ուղղվածությունը, չափերը, ներգրավվածությունը տարածքային կոնֆլիկտներում, բնակչության թվաքանակը, առկա տեխնոլոգիական նվաճումների մակարդակը և այլն:

Բանալի բառեր. *գիտելիքահենք տնտեսություն, նորարարություններ, ազգային ինովացիոն համակարգ, բարձր տեխնոլոգիաներ, ազգային մրցունակություն, տեխնոլոգիական զարգացում, տեղեկատվական հասարակություն, տեխնոլոգիաների տրանսֆեր:*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РАЗВИТИЯ НАУКОЕМКОЙ ЭКОНОМИКИ В ПОСТСОВЕТСКИХ СТРАНАХ: АРМЕНИИ, ГРУЗИИ, БЕЛАРУСИ, ЭСТОНИИ

Ваагн Артурович АМИРХАНЯН
аспирант Института экономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

При анализе нынешних вызовов наукоемкой экономики Республики Армения возникает необходимость в проведении сравнения уровня ее развития с уровнем развития инновационной, наукоемкой экономики других государств. В рамках статьи делается попытка анализа уровня инновационного развития экономики Армении, Грузии, Беларуси и Эстонии.

Страны были выбраны с учетом их географического положения, внешнеполитической направленности, размеров, вовлеченности в территориальные конфликты, численности населения, существующего уровня технологических достижений и т.д.

Ключевые слова: *наукоемкая экономика, инновации, национальная инновационная система, высокие технологии, национальная конкурентоспособность, технологическое развитие, информационное общество, трансфер технологий.*

COMPARATIVE ANALYSIS OF THE DEVELOPMENT OF KNOWLEDGE-BASED ECONOMIES IN THE POST-SOVIET COUNTRIES: ARMENIA, GEORGIA, BELARUS AND ESTONIA

VAHAGN ARTUR AMIRKHANYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

By analyzing the challenges the knowledge-based economy of the Republic of Armenia is currently facing, the authorstresses need for comparing the state of development of the latter one with the level of development of the other innovation- and knowledge-based economies. This article attempts to analyze the state of development of innovation- and knowledge-based economies of Armenia, Georgia, Belarus and Estonia. The following criteria are considered while choosing a respective nation: geographical location, size, foreign policy orientation, involvement in territorial and/or regional conflict, population, level of technological achievement, and etc.

Keywords: *Knowledge-based economy, innovations, national innovation system, high-tech, national competitiveness, technological development, information society, technology transfer.*

ԼԻԼԻԹ ՄԵՍՐՈՊԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, արտադրական և սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը հուսալի նախադրյալներ են ստեղծել գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար:

Հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը, ՀՀ անկախության հռչակումից անմիջապես հետո ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն: Արդյունքում, ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ տնտեսական համակարգ, որը ներառում է շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

Գյուղատնտեսության ոլորտում վարկային ներդրումների առանձնահատկությունները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնք կարելի է դասակարգել հետևյալ կերպ,

1. Գործոններ, որոնք կապված են գյուղատնտեսության արտադրությունում առկա տնտեսվարող սուբյեկտների՝ գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների կազմակերպման և ֆինանսական գործունեության հետ:
2. ՀՀ գյուղատնտեսությանը բնորոշ հատկանշական առանձնահատկություններով:
3. Երկրի միկրոտնտեսական և մակրոտնտեսական իրավիճակով պայմանավորված գործոններով:

Առաջին գործոնի մեջ ներառվում են՝ գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների իրենց գործունեությանը ոչ համահունչ չափսերը, սովորաբար փոքր, կազմակերպությունների ենթակառուցվածքը, վարկունակության ցածր մակարդակը և առկա գրավի ցածր իրացվելիությունը:

Երկրորդ գործոնի մեջ ներառվում են՝ գյուղատնտեսության բարձր ռիսկային աստիճանը, ինչպես նաև գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների գործունեության ռիսկը:

Երրորդ գործոնի մեջ ներառվում են՝ գյուղատնտեսության ոլորտում նորամուծական ֆինանսական հաստատությունների ստեղծումը, որոնցով պայմանավորված ներկայիս փուլում դրանց պակասն է, որը հանգեցնում է վարկավորման ցածր արդյունավետության, վարկերի անբարենպաստ տոկոսադրույքը և ֆերմերներին ոչ բարենպաստ պայմաններով տրամադրումը: Կարևորվում են նաև սղաճի երևույթները, որոնք ազդում են գյուղատնտեսության վրա, գյուղատնտեսական ռեսուրսների գների և շուկայում ապրանքային գների ոչ համապատասխան աճով:

Գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների զարգացման արդյունքում կարելի է ունենալ արտադրության ծավալների զգալի աճ, ստվերային տնտեսության կրճատում, կազմակերպությունների մրցակցության բարձրացում, հայրենական ապրանքների որակի աճ, ներմուծման կրճատում, արտասահմանյան ծավալների աճ, ներքին նյութատեխնիկական ռեսուրսների առավելագույն օգտագործում, մարզերի տնտեսական զարգացում և ապրանքատեսակների դիվերսիֆիկացիա:

ՀՀ կառավարությունը, միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությամբ ու աջակցությամբ տնտեսության իրական հատվածի՝ մասնավորապես գյուղատնտեսական կազմակերպությունների վարկավորման նպատակով վերջին տարիներին մեծածավալ ռեսուրսներ է ներդրել: Ֆինանսական համակարգի ակտիվներ/ ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշները նախորդ 5 (2010-2014թթ.) տարիներին ապահովել են ավելի քան կրկնապատիկ աճ՝ 2015 թվականի վերջի դրությամբ կազմելով համապատասխանաբար 60% և 40%: Միաժամանակ ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցության արդյունքում՝ վերջին 5 տարիների ընթացում միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավվել և հայկական բանկերի միջոցով տրամադրվել է մոտ 400 մլրդ. դրամի ֆինանսական միջոցներ: Դա կազմել է նույն ժամանակահատվածում բանկերի կողմից տնտեսության վարկավորման մոտ 70%-ը: Վարկային շուկայի մասնակիցների գերակշիռ մասը զարգացել է իր առաջարկի մեջ «գյուղատնտեսական կազմակերպությունների վարկ» բաղադրիչը, իսկ իրականացվող արդյունաբերական քաղաքականության շրջանակներում ՀՀ կառավարության կողմից կիրառվող գործիքակազմը նպաստել և շարունակում է նպաստել տնտեսվարողների մոտ ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ձևավորմանը[1]:

Վերջին ութ տարիների ընթացքում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությանը տրամադրված վարկերը տարեկան աճել են միջինը 29%-ով, և դա այն դեպքում, երբ տնտեսությանը տրամադրված վարկերի միջին տարեկան աճը կազմել է մոտ 22%: Արդյունքում գյուղատնտեսության ճյուղի ֆինանսական միջնորդության մակարդակն ավելացել է մոտ հինգ անգամ:

Աշխատանքներ են իրականացվել նաև վարկային ռեսուրսների ձեռքբերման ժամկետայնության ու մատչելիության բարձրացման ուղղությամբ, և որոնց համահունչ են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի համատեղ ծրագրի իրականացման շնորհիվ ֆինանսավորվել է շուրջ 74 մլրդ դրամի 83 հազար վարկ, որոնք տրվել են բացառապես դրամով և հասանելի են գյուղացիներին 8%-ով, իսկ 6%-ը սուբսիդավորվել է պետության կողմից: 2015 թվականի վերջի դրությամբ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված գյուղատնտեսական վարկերի ծավալը կազմել է 203 մլրդ դրամ, թվով մոտ 170 հազար վարկ, որոնց միջին տոկոսադրույքը կազմել է 15.5%[2]:

Սակայն վերոնշյալներին համահունչ արդեն գոյություն ունեցող հնարավորությունների ավելացման հետ մեկտեղ ներկայումս կարևորվել են նոր հիմնախնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

Առաջինը վերաբերում է չաշխատող վարկերի տեսակարար կշռի աճին: Հաշվի առնելով, որ բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը 2015թ. տատանվել է 15%-ի սահմաններում, ակնհայտ է, որ խնդիրը կարգավորվող է և ունի ժամանակավոր բնույթ: Ուստի վարկերի որակի ժամանակավոր վատացումը չի կարող էական ազդեցություն ունենալ ֆինանսական կայունության վրա, քանի դեռ բանկերը ապահովում են կապիտալի բավարար համարժեքություն՝ կլանելու վարկային պորտֆելի գծով հնարավոր կորուստները: Հատկապես գյուղատնտեսության ոլորտում այլ ճյուղերի համեմատությամբ գոյություն ունի ժամկետանց վարկերի տոկոսային զգալի տատանումներ, իսկ ասվածն ավելի հստակ պատկերացնելու համար աղյուսակում ներկայացրել ենք «ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի վարկային պորտֆելն ըստ ժամկետայնության:

[1] Կայք- www.cba.am , Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը և վերահսկողությունը 2015:

[2] Վարկավորման արդի զարգացումները և խնդիրները, կայք - http://www.armworld.am/detail.php?paperid=5264&pageid=160455&lang

Աղյուսակ

«ԱԿԲԱ-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ վարկային պորտֆելն ըստ ժամկետայնության 31.12.2015 դրությամբ[1], հազ. դրամ

Գյուղատնտեսական վարկեր	**Զուտ վարկեր**
Ոչ ժամկետանց	63172055
Մինչև 30 օր ժամկետանց	118124
31-90 օր ժամկետանց	1247665
91-180 օր ժամկետանց	210752
181-270 օր ժամկետանց	78988
Ընդամենը գյուղատնտեսական վարկեր	**64756584**
Սպառողական վարկեր	
Ոչ ժամկետանց	28,831,053
Մինչև 30 օր ժամկետանց	164,698
31-90 օր ժամկետանց	85,214
91-180 օր ժամկետանց	24,108
181-270 օր ժամկետանց	4,787
Ընդամենը սպառողական վարկեր	29,109,860
Վարկային քարտեր	
Ոչ ժամկետանց	12,841,666
Մինչև 30 օր ժամկետանց	127,943
31-90 օր ժամկետանց	34,239
91-180 օր ժամկետանց	20,324
181-270 օր ժամկետանց	1,875
Ընդամենը վարկային քարտեր	13,026,047
Հիփոթեքային վարկեր	
Ոչ ժամկետանց	6,729,729
Մինչև 30 օր ժամկետանց	49,335
31-90 օր ժամկետանց	51,376
91-180 օր ժամկետանց	12,181
181-270 օր ժամկետանց	7,909
Ընդամենը հիփոթեքային վարկեր	6,850,530
Ոսկու գրավադրմամբ վարկեր	
Ոչ ժամկետանց	5,358,600
Մինչև 30 օր ժամկետանց	10,315
31-90 օր ժամկետանց	7,240
91-180 օր ժամկետանց	11,523
181-270 օր ժամկետանց	869
Ընդամենը ոսկու գրավադրմամբ վարկեր	5,388,547

Աղյուսակի տվյալներից հստակ երևում է, որ թեև գյուղատնտեսության ոլորտն ի համեմատ վարկավորվող այլ ոլորտների ունի վարկավորման ավելի բարձր մակարդակ, բայց և այնպես այստեղ նկատվում է ժամկետանց վարկերի բարձր մակարդակ: Այս երևույթը, թերևս, կարելի է բացատրել գյուղատնտեսությանը բնորոշ առանձնահատկությունների, մասնավորապես կապված ապրանքային շուկայում սպառման և վարկերի ամսական մարումների անհամապատասխանության, անբարենպաստ եղանակային պայմանների կամ անակնկալների հետ, որի արդյունքում գյուղացին շատ հաճախ կանգնում է անելանելի իրավիճակների առաջ և որն էլ իր հերթին հանդիսանում է լուրջ խոչընդոտ թե՛ առևտրային բանկերի, և թե՛ գյուղատնտեսական կազմակերպությունների համար:

Երկրորդը վարկերի դոլարայնացման ներկա մակարդակի հետ կապված հիմնախնդիրն է:

Երևույթը գտնվում է հիմնականում ուղիղ համեմատական կապի մեջ արժույթի շուկայի կայունության հետ: Այս առումով պետք է նշել, որ արժույթի շուկայի կայուն զարգացման ապահովումը, որին միտված են կենտրոնական բանկի գործողությունները, էապես կարող է իր ազդեցությունն ունենալ վարկերի դոլարայնացման մակարդակի նվազման վրա՝ ավելացնելով վստահությունը ՀՀ դրամի հանդեպ՝ միաժամանակ նպաստելով տնտեսության զարգացմանը:

[1] «ԱԿԲԱ-կրեդիտ ագրիկոլ բանկի» տարեկան ֆինանսական հաշվետվությունը, 2015թ.:

Ուսումնասիրելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վարկավորման առանձնահատկություններն ու խնդիրները գյուղատնտեսական կազմակերպությունների կողմից վարկային ներդրումներն ավելի արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ և բարելավման նպատակով ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները՝ կապված գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների զարգացման խթանման համար

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսական կազմակերպությունների հատվածի զարգացման համար կարևորության նախապայմաններ են՝ բարենպաստ մակրոտնտեսական միջավայրի առկայությունը, վերահսկվող սղաճը, առողջ մրցակցային դաշտի առկայությունը, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով պետական համակարգված տնտեսական արդյունք են: Ուստի, պետության առաջնահերթ խնդիրն է ապահովել բարենպաստ իրավաօրենսդրական դաշտը, որը կհանգեցնի ձեռնարկատիրության բնականոն զարգացմանը: Հայաստանի Հանրապետությունում, ցավոք, դեռևս բացակայում է գյուղատնտեսական կազմակերպություններին ուղղակիորեն առնչվող օրենսդրությունը: Չնայած այն հանգամանքին, որ գյուղատնտեսական կազմակերպությունների հիմնական մասը ՀՀ համայնքային բյուջեներում հարկային վճարումները էական ծավալ չունեն՝ մասնավորապես կապված շահութահարկի, եկամտային հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և ԱԱՀ-ի գծով արտոնությունների հետ, ինչը դրական ներգործություն է ունենում վերջիններիս ֆինանսական վիճակի վրա, բայց և այնպես, գյուղատնտեսական կազմակերպությունների ոլորտներում գերակա ուղղությունների զարգացման համար անհրաժեշտ է կիրառել հարկային խթաններ նոր կազմակերպությունների ստեղծման, նոր տեխնոլոգիաների ներդրման, առևտրային բանկերի միջոցները կազմակերպությունների ձևավորմանն ուղղելու նպատակով:
2. Հայաստանում ձեռնարկատերերն իրենց գործունեության և նոր կազմակերպությունների ստեղծման ժամանակ բախվում են մի շարք հիմնախնդիրների հետ, որոնցում առաջնային տեղ է զբաղեցնում ֆինանսավորումը: Քանի որ փորձագիտական հետազոտությունները վկայում են այն մասին, որ գյուղատնտեսական կազմակերպություններին՝ վարկային ու ֆինանսական աջակցությունը խիստ սահմանափակ է և անբավարար: Հատկապես ակնհայտ է փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հարցերում պետական օժանդակության բացակայությունը: Միաժամանակ առկա է գործող ֆինանսավորման աղբյուրների և գյուղատնտեսական կազմակերպությունների սուբյեկտների անհամատեղելիությունը: Ռիսկերի կառավարման նկատառումներից ելնելով կառավարությունը կարող է աջակցի՝ գյուղատնտեսությանն ազատելով վերջինիս հարկերից և տրամադրելով վարկային երաշխիքներ:
3. Կազմակերպությունների ֆինանսավորման հիմնախնդրի հաղթահարման արդյունավետ և լայն տարածում գտած միջոցներից է վարկային երաշխիքների տրամադրման մեխանիզմը, որը հաջողությամբ կիրառվում է ինչպես զարգացած, այնպես էլ անցումային տնտեսությամբ երկրներում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վարկային երաշխիքների մեխանիզմը բարելավում, կատարելագործում և դարձնում է ավելի հասանելի ֆինանսական հաստատություններից ֆինանսական միջոցների հասանելիությունը: Այս մեխանիզմը, նվազեցնելով վարկային ռիսկը, տրամադրում է երաշխիքներ ֆերմերների այն խմբին, որոնք չունեն բավարար վարկունակություն[1,2]:
4. Վարկերի գրավային ապահովման գործում էական ներդրում կլինի հողի շուկայի ձևավորումը, որին կնպաստի նոր մեթոդականության հիման վրա հողային կադաստրի մշակումն ու ընդունումը: Այն էապես կմեղմի հատկապես առկա գրավադրման հիմնախնդիրները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալները, գյուղատնտեսական կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունների զարգացման արդյունքում կարելի է ունենալ արտադրության ծավալների զգալի աճ, ստվերային տնտեսության կրճատում, կազմակերպությունների մրցակցության բարձրացում, հայրենական ապրանքների որակի աճ, ներմուծման կրճատում, արտասահմանյան ծավալների աճ, ներքին նյութատեխնիկական ռեսուրսների առավելագույն օգտագործում, մարզերի տնտեսական զարգացումը, ապրանքատեսակների դիվերսիֆիկացիան:

[1] Miller, Senior Officer, Agricultural Management, Marketing and Finance Service, Rural Infrastructure and Agro-Industries Division, FAO, Rome, Italy, pg 16 (1-5).

[2] Investment in Agriculture, Policy brief # 3, Challenges of agricultural financing, Mariana Ruete, September 2015, pg 12 (3).

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՄԵՍՐՈՊԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը, անկախության հռչակումից անմիջապես հետո, հանրապետության տնտեսության ազատականացման շրջանակներում ընտրվեց հողի և ամբողջ գյուղատնտեսական արտադրության հետ կապված համալիր մոտեցում՝ սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն, ինչը ստեղծեց հուսալի նախադրյալներ գյուղում առկա ներուժի արդյունավետ օգտագործման համար: Բայց և այնպես, շուկայական տնտեսության պայմաններում վարկային ներդրումներ իրականացնելու նկատառումներից ելնելով պետք է հաշվի առնել ՀՀ գյուղատնտեսության ոլորտում վարկավորման առանձնահատկություններն ու խնդիրները:

Բանալի բառեր. *գյուղատնտեսության վարկավորում, վարկային ներդրումներ, վարկային երաշխիքներ, վարկերի գրավային ապահովում, գյուղատնտեսական կազմակերպություններ:*

ОСОБЕННОСТИ И ПРОБЛЕМЫ КРЕДИТОВАНИЯ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ

ЛИЛИТ МЕСРОПОВНА АРАКЕЛЯН
аспирант Национального аграрного университета Армении

Аннотация

Учитывая важность сельского хозяйства в жизнеобеспечении и стабилизации экономики страны, сразу же после провозглашения независимости в рамках либерализации экономики республики была избрана политика приватизации земли и всего комплекса сельскохозяйственного производства: инфраструктуры производства и обслуживания, организаций, реализующих и перерабатывающих сельхозпродукцию, что создало надежные предпосылки для эффективного использования имеющегося в селе потенциала. В то же время, в условиях рыночной экономики, исходя из соображений осуществления эффективных кредитных инвестиций, следует учитывать особенности и проблемы кредитования в сфере сельского хозяйства РА.

Ключевые слова: *кредитование сельского хозяйства, кредитные инвестиции, кредитные гарантии, залоговое обеспечение кредитов, сельскохозяйственные организации.*

THE PECULIARITIES AND PROBLEMS OF LENDING IN THE AGRICULTURE IN THE REPUBLIC OF ARMENIA

LILIT MESROP ARAKELYAN
Ph.D. Student, Armenian National Agrarian University

Abstract

Having regard the importance of agriculture in the country’s life and economic stability, immediately after the declaration of independence, within the framework of the liberalization of the economy the privatization policy of the whole complex of agricultural production and land, serving infrastructures, sales and processing organizations was introduced, which created solid prerequisite for the efficient usage of available potential of the villages. However, in case of market economy, bearing in mind credit-financed investments, peculiarities and problems of lending in the agricultural sector of the Republic of Armenia should be taken into consideration.

Keywords: *Agricultural loans, investment loans, loan guarantees, loan collateral, agricultural organizations.*

ՇՈՒՇԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կառավարում մասնագիտությամբ
մագիստրատուրայի ուսանող

ՄԵՐՉԱՆԴԱՅԶԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Գովազդը մարդկանց ուղղորդում է դեպի ապրանքը,
իսկ մերչանդայզինգը՝ ապրանքը դեպի մարդը»:
Մորրիս Հայթ

Համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի բարձր մակարդակը հավասարեցնում է կազմակերպությունների տնտեսական առավելությունները մրցակիցների նկատմամբ, ինչը վերջիններիս դրդում է ավելի մեծ ջանքեր գործադրել գնորդների ներգրավման համար:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացման ողջ ընթացքում վաճառողը ցանկացել է առանձնացնել իր ապրանքը, դարձնել այն ավելի գրավիչ: Այսօր խնդիրը կայանում է նրանում, որ ապրանքը պետք է պահանջված լինի, ունենա այն առավելությունները, որոնք անհրաժեշտ են սպառողին: Սակայն, դա բավական չէ, որպեսզի այն լավ վաճառվի, քանի որ այն պետք է առանձնանա ապրանքների բազմազանությունից: Եթե մերչանդայզերը կարողանա ապրանքին հաղորդել այդ հատկությունները, ապա դա կխթանի վերջինիս վաճառքը: Ներկայումս գնորդի ընտրության միայն 20%-ն է պայմանավորված ապրանքի հիմնական հատկություններով, մնացած 80%-ը բաժին է ընկնում դիզայնին, գնին, ապրանքանիշին և այլն[1]:

Արտասահմանյան պրակտիկայում վաճառքի խթանման ավանդական մեթոդների (ապրանքների գինը, կիրառվող զեղչերը, գովազդը և այլն) հետ մեկտեղ կիրառվում են նաև ժամանակակից մեթոդներ, որոնք նպատակաուղղված կերպով ներազդում են գնորդների հոգեբանության վրա: Այդպիսի մեթոդների շարքին է դասվում մերչանդայզինգը, որը թարգմանաբար նշանակում է առևտրի արվեստ[2]: Այն միջոցառումների համախումբ է, որն ուղղված է ապրանքի նախապատրաստմանը վաճառքի մանրածախ ցանցում, ներառյալ՝ առևտրական սարքավորումների տեղաբաշխումը, ապրանքների դասավորվածությունը առևտրային սրահում, սպառողներին ապրանքի մասին ամբողջական տեղեկատվության ներկայացումը և այլն:

Մերչանդայզինգը ծնունդ է առել անհիշելի ժամանակներում, երբ դեռևս զարգացած չէին փողային հարաբերությունները: Սակայն, որպես ինքնուրույն գիտություն, այն ձևավորվել է 20-րդ դարի 30-ական թվականներին և ավելի արագ զարգացել դարավերջին՝ գլոբալ մի շարք փոփոխությունների արդյունքում: Նշենք, որ հենց այդ ժամանակահատվածում առևտուրը կտրուկ սկսեց աճել և, հատկապես, ցանցային առևտուրը:

Նշենք, որ 1950-ական թվականներին առևտրային հարաբերություններում ներդրվեց ինքնասպասարկման մեթոդը և գրեթե նույն ժամանակահատվածում մարքեթինգի, սոցիոլոգիայի և հոգեբանության հետ մեկտեղ ձևավորվեց նոր գիտություն՝ սպառողների վարքագծի մասին: Այս ամենը ևս խթան հանդիսացավ մերչանդայզինգի զարգացման համար:

Զարգացած երկրներում վաղուց արդեն ուշադրություն է դարձվում մերչանդայզինգի կիրառմանը, քանի որ շուկայական մրցակցությունը գնալով սրվում է և, հետևաբար, մրցակիցների նկատմամբ առավելությունների ձեռքբերումն էլ ավելի է կարևորվում:

Մերչանդայզինգի միջոցով առևտրային կազմակերպությունն իր առջև դնում և իրագործում է հետևյալ հիմնական նպատակները՝

- իրացման խթանումը,
- առևտրական կազմակերպության և առանձին ապրանքանիշների մրցակցային առավելությունների ստեղծումը,
- առևտրային կազմակերպության նկատմամբ գնորդների նվիրվածության ձևավորումը, հավատարիմ գնորդների թվաքանակի ավելացումը և նորերի ներգրավումը,
- առևտրատեխնոլոգիական գործընթացների կատարելագործումը,
- գովազդի և հաղորդակցության քաղաքականության կատարելագործումը,
- գնորդների վարքագծի կառավարումը:

[1] Rosemary Varley, "Retail Product Management: Buying and Merchandising", Routledge, 2014, p. 24.

[2] Сысоева С.В., Бузукова Е.А., Мерчендайзинг. Курс управления ассортиментом в рознице. Питер, 2009, с. 8.

Հարկ է նշել, որ մերչանդայզինգի ներդրման ու զարգացման հետ կապված խնդիրները մեր երկրում առայժմ բավականին շատ են: Դրանցից առավել հատկանշականներն են.

- Մերչանդայզինգը գիտության նոր զարգացող ոլորտ է, որն ուղղված է առևտրի իրականացման վայրերում գնորդների համար առավելագույն հարմարավետության ստեղծմանը: Մերչանդայզինգի ստանդարտները ՀՀ-ում դեռևս ներդրման փուլում են, և շատ առևտրային կազմակերպություններ չեն գիտակցում դրա տեղն ու դերը ժամանակակից առևտրում:
- Նշված ոլորտում զգացվում է համապատասխան մասնագետների պակաս, մերչանդայզինգն իրականացվում է հիմնականում խանութի վաճառողների կողմից՝ այն էլ ենթագիտակցական մակարդակով: Վաճառողի հիմնական խնդիրը այն է, որ բաց տեղեր չմնան դարակաշարերում:
- ՀՀ առևտրային կազմակերպություններում առկա են բազմաթիվ խնդիրներ մերչանդայզինգի կիրառման առումով: Մասնավորապես, խախտվում են շրջակա միջավայրի պահպանման, խանութների արտաքին տեսքի, ապրանքների ցուցադրման, գնապիտակների ձևավորման պահանջները և այլն:
- Առևտրի սրահի մակերեսի օպտիմալ բաշխման պլանավորումը մերչանդայզերի կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում: Դրա նպատակն է առևտրային սարքավորումների և բաժինների ճիշտ տեղաբաշխման միջոցով կառավարել գնորդների հոսքն առևտրի սրահում: Մերչանդայզերի գլխավոր նպատակն է՝ հաճախորդին «ստիպել» անցնել խանութի ամբողջ սրահով, որը, բնականաբար, կմեծացնի իմպուլսիվ գնումների իրականացման հավանականությունը: Մինչդեռ, հարկ է նշել, որ ՀՀ մանրածախ առևտրային ցանցը բնութագրվում է մեծաթիվ փոքր կազմակերպություններով[1]: Իսկ մերչանդայզինգային տեխնոլոգիաները նախատեսված են ինքնասպասարկման մեթոդով աշխատող, առևտրային բավականին մեծ սրահներ ունեցող սուպերմարքեթների համար:
- Մերչանդայզինգային ստանդարտները կիրառվում են միայն Երևան քաղաքի առևտրային որոշ կազմակերպություններում, քանզի հանրապետության մյուս շրջաններում դեռևս չի կիրառվում մերչանդայզինգը՝ որպես առանձին գործընթաց, այլ օգտագործվում են դրա առանձին բաղադրիչներն, այն էլ առանց խորը ուսումնասիրության (բացառություն են կազմում որոշ ընկերությունների մասնաճյուղերը):

Վերը նշված խնդիրների լուծման ուղղությամբ, կարծում ենք, դրական քայլ կհանդիսանա շուկայագիտության և բիզնես կառավարման մասնագիտությունների ուսումնական ծրագրերում «Մերչանդայզինգ» առանձին մասնագիտական դասընթացի ներառումը, քանի որ այն շատ ընդգրկուն ոլորտ է, և մերչանդայզինգի բարձրակարգ մասնագետները պետք է քաջածանոթ լինեն բոլոր նրբություններին:

Միաժամանակ, դրական արդյունքներ կարող է ապահովել յուրաքանչյուր կազմակերպության կողմից՝ մերչանդայզինգ իրականացնելուց առաջ սպառողների, վերջիններիս հոգեբանության հանգամանալից ուսումնասիրությունը և ըստ այդմ էլ համապատասխան մերչանդայզինգի կիրառումը, քանի որ հաճախ մերչանդայզինգի սխալ կիրառումը ոչ միայն չի տալիս ցանկալի արդյունք, այլև իրավիճակն էլ ավելի է վատթարացնում, իսկ դա մարդկանց մեջ ձևավորում է սխալ կարծիք և առաջացնում հիասթափություն:

Բավականաչափ կարևորվում է նաև դիզայների և մերչանդայզերի գործառույթների տարանջատումը: Մերչանդայզերը կարող է նաև չունենալ դիզայներական հմտություններ, քանի որ նրա գործառույթները ավելի շատ հոգեբանական և տնտեսագիտական բնույթի են: Իսկ դիզայները պետք է ուղղակի կարողանա գեղեցիկ ներկայացնել մերչանդայզերի մասնագիտական մտքերը:

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել խանութների անվանումներին և լոգոյին: Եթե առևտրային կազմակերպությունը չի ներկայացնում համաշխարհային ճանաչում ունեցող ապրանքանիշ, ապա ցանկալի է, որ խանութը կրի հայկական անվանում և նպաստի հայկական ապրանքանիշերի առաջմղմանը, ինչպես նաև խանութի անվանումը լինի մեծատառերով, ինչի շնորհիվ խանութը ավելի տեսանելի կդառնա:

Միաժամանակ, արդյունավետ է նաև գրագետ արոմամերչանդայզինգի կիրառումը: Անհրաժեշտ է չեզոքացնել տհաճ հոտերը և տարածել ավելի հաճելի բույրեր՝ հաշվի առնելով գնորդների վրա ունեցած դրանց ազդեցությունը: Արոմամերչանդայզինգի յուրահատուկ օրինակ կարող է լինել նաև բուրավետ այցեքարտերի կամ կատալոգների կիրառումը:

[1] http://www.armstat.am/file/doc/99493668.pdf

Բացի այդ, զգալի դերակատարում ունի տեղեկատվական ռեսուրսների ավելացումն ու մշտական թարմացումը: Տեղեկատվական ռեսուրսները, ցուցանակները, գովազդային նյութերը պետք է հաճախորդներին տան լիարժեք տեղեկատվություն ապրանքների գտնվելու վայրի, գնի, բաղադրության, ծագման վայրի և այլնի մասին, ինչպես նաև պետք է դրանք մշտապես թարմացնել, որպեսզի գնորդների հետաքրքրությունը պահպանվի:

Կարևոր է նաև, որ ապրանքները լինեն գնապիտակներով և դրվեն ապրանքների ձախ մասում, որոշ դեպքերում գնապիտակների փոխարեն կիրառվեն գրատախտակներ՝ մասնավորապես, մրգերի բաժնում, ինչպես նաև մեծ ուշադրություն դարձվի գնապիտակների վրա տեղադրված թվերին: Գնապիտակների բացակայությունը հաճախ ավելի վատ կարող է անդրադառնալ վաճառքի վրա, քան, օրինակ, ապրանքի բարձր գինը: Գնապիտակները պետք է լինեն տեղեկացնող: Կենցաղային տեխնիկա, համակարգիչ և այլ նմանատիպ ապրանքներ գնելիս մարդիկ շատ ուշադիր են կարդում գնապիտակների վրա արտացոլված տեղեկությունը: Առևտրային սրահում հայելիների կիրառման շնորհիվ ապրանքը ավելի վիզուալ կներկայացվի գնորդներին:

Անհրաժեշտ է նաև ապրանքները դասավորել մեծ խմբաքանակներով այնպես, որ հաճախորդին հարմար լինի վերցնել, զննել և գնել՝ խուսափելով ապրանքների դասավորությունը խախտելուց կամ դրանց քանդվելուց:

Ապրանքները հաճախորդին ավելի պատկերավոր ներկայացնելու համար ցանկալի է ապրանքներից որոշների ցուցադրումը վերջիններիս ֆունկցիոնալ նշանակությամբ, օրինակ՝ սառնարանում կարելի է տեղադրել սառեցրած գարեջրի շիշ՝ ցույց տալու համար սառնարանի սառեցման հզորությունը:

Արդյունավետ է նաև իմպուլսիվ պահանջարկով ապրանքների ցուցադրումը խանութի մուտքային գոտում: Շատ դեպքերում այդպիսի ապրանքները տեղադրվում են դրամարկղի մոտ, սակայն, դրանք պետք է տեղադրված լինեն նաև մուտքային գոտում, երբ հաճախորդի դրամապանակը դեռ լիքն է, և նա պատրաստ է ենթարկվելու համապատասխան իմպուլսների ազդեցությանը:

Խանութներում պարենային բաժնին կից կարելի է ստեղծել տվյալ բաժնի ապրանքների համտեսման հնարավորություն, ինչը, կարծում ենք, ավելի արդյունավետ կգործի հացամթերքի բաժնում, հատկապես, եթե տեղում առկա է նաև այդ ապրանքների արտադրությունը: Համտեսման բաժին կարող է նախատեսվել նաև հրուշակեղենի, կաթնամթերքի և պարենային ապրանքների այլ բաժիններում:

Կարևոր է նաև պարբերաբար ուսումնասիրությունների անցկացումը՝ «սառը» գոտիների բացահայտման և դրանք «տաք» գոտիների վերածելու նպատակով: Սա պետք է իրականացնեն առևտրային կազմակերպության այն աշխատակիցները, ովքեր ամեն օր շփվում են հաճախորդների հետ և կարող են համապատասխան տեղեկատվություն տալ այդպիսի գոտիների վերաբերյալ:

Առևտրային կազմակերպությունները նաև մեծ ուշադրություն պետք է դարձնեն ավտոկայանատեղի առկայությանը, քանի որ վերջինիս բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ ապրանքաշրջանառության ծավալի վրա:

Առևտրային կազմակերպությունների դարակները նպատակահարմար է, որ լինեն ավտոմատ լրացման համակարգով, այսինքն, ապրանքը վերցնելուց հետո այն ավտոմատ լրացվի:

Դրական արդյունքներ կարող է ապահովել նաև առևտրային սրահում իրականացվող մերչանդայզինգի զուգակցումը էլեկտրոնային մերչանդայզինգի հետ: Այսպես, եթե առևտրային կազմակերպությունն ունի ինտերնետային կայք կամ սոցիալական կայքերում համապատասխան էջեր, կարող է այնտեղ տեղադրել խանութի դասավորության, առկա ապրանքատեսակների համապատասխան լուսանկարներ: Տեսնելով դրանք, մարդկանց մոտ հետաքրքրություն կառաջանա, և հավանական է, որ նրանք կայցելեն խանութ, որպեսզի տեսնեն այդ ապրանքը: Հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ մարդիկ ուղղակի թերթեն այդ նկարներն առանց ուշադրության կենտրոնացման և, երբ որոշ ժամանակ անց այցելեն խանութ ու տեսնեն համացանցում ցուցադրված ապրանքները, արդեն իսկ ենթագիտակցորեն ծանոթ կլինեն դրանց, ինչը կհեշտացնի գնում կատարելը:

Այսպիսով, վերլուծելով ՀՀ առևտրային կազմակերպությունների ներկա վիճակը, կարող ենք նշել, որ ՀՀ-ում մերչանդայզինգի ներդրման և զարգացման հետ կապված խնդիրները առայժմ բավականին շատ են: Ժամանակի ընթացքում այդ խնդիրները կստանան որոշակի լուծումներ, իսկ խոչընդոտները կհարթվեն, որի շնորհիվ հայ սպառողը քաղաքակիրթ առևտրի միջոցով ոչ միայն կբավարարի իր պահանջմունքները, այլև մեծ բավականություն կստանա գնման պրոցեսից:

ՄԵՐՉԱՆԴԱՅԶԻՆԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՇՈՒՇԱՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կառավարում մասնագիտությամբ
մագիստրատուրայի ուսանող

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված է մերչանդայզինգի էությունը, դերն ու նշանակությունը ժամանակակից առևտրում: Ներկայումս մերչանդայզինգի ստանդարտների կիրառումը մեր հանրապետությունում բավականին բարդ է, և փորձ է արվել բացահայտել այն խնդիրները, դժվարություններն ու խոչընդոտները, որոնք առկա են ՀՀ առևտրային կազմակերպություններում: Վերջիններիս հիման վրա առաջարկվել են մերչանդայզինգի կիրառման և զարգացման ուղիներ, ինչի շնորհիվ հայ սպառողը քաղաքակիրթ առևտրի միջոցով ոչ միայն կբավարարի իր պահանջմունքները, այլև մեծ բավականություն և հաճույք կստանա գնման պրոցեսից:

Բանալի բառեր. *մերչանդայզինգ, իմպուլսիվ գնում, առևտրի խթանում, մանրածախ առևտուր, տեղեկատվական ռեսուրս, ենթագիտակցական մակարդակ, սպառողի հոգեբանություն, սպառողների վարքագիծ, արոմամերչանդայզինգ, մրցակցային առավելություն:*

ПРОБЛЕМЫ ВНЕДРЕНИЯ МЕРЧЕНДАЙЗИНГА В КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ РА

ШУШАН САСУНИКОВНА АСАТРЯН
студентка магистратуры Научно-образовательного
международного центра НАН РА по специальности «Управление»

Аннотация

В статье представлена сущность мерчендайзинга, его роль и значение в современной торговле. В настоящее время применение стандартов мерчендайзинга в нашей республике достаточно сложно. В связи с этим в статье сделана попытка выявить те проблемы, сложности и преграды, которые имеются в коммерческих организациях РА. На их основе предложены пути улучшения качества мерчендайзинга, благодаря чему армянский потребитель с помощью цивилизованной торговли не только удовлетворит свои потребности, но и получит большое удовлетворение и удовольствие от процесса покупки.

Ключевые слова: *мерчендайзинг, импульсивная покупка, стимулирование торговли, розничная торговля, информационные ресурсы, подсознательный уровень, психология потребителя, поведение потребителя, аромамерчендайзинг, конкурентное преимущество.*

THE WAYS OF IMPLEMENTATION OF MERCHANDISING IN THE COMMERCIAL ORGANIZATIONS OF THE REPUBLIC OF ARMENIA

SHUSHAN SASUNIK ASATRYAN
Graduate Student, Management Major, International Scientific-Educational Center
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Currently, the application of the merchandizing standards is quite complicated in our Republic, so we tried to disclose the problems, barriers and difficulties existing in trade organizations of the Republic of Armenia. Based upon the latter, certain ways of application and development of merchandizing are suggested that would enable Armenian consumers to satisfy not only the needs but will also be enjoyable for the latter

Keywords: *Merchandising, promotion of trade, retail trade, information resource, subconscious level, consumer behavior, consumer psychology, aroma merchandising, competitive advantage.*

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ

Տնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը ոչ միայն տվյալ երկրի տնտեսական աճի կարևոր գործոն է, այլ նաև այն ռազմավարական նշանակություն ունի տնտեսության հետագա զարգացման և հաջորդ սերունդների համար՝ ռեսուրսների պահպանման և փոխանցման տեսանկյունից:

ՀՀ-ում այդ ռեսուրսների շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում գյուղատնտեսական նշանակության հողերը, որոնց ոչ արդյունավետ օգտագործման ապացույցն է նաև այն, որ հանրապետության համար այդքան կարևոր նշանակություն ունեցող սահմանափակ ռեսուրսի որոշակի հատվածը (միջինում մոտ 1/3-ը)տարբեր պատճառներով շրջանառությունից դուրս են մնացել և նպատակային են օգտագործվում: Այդ հողատարածքների չմշակման պատճառները, տարբերվում չեն ըստ երկրի տարածքային առանձնահատկությունների և ունեն խորիմաստության տարբեր աստիճան: Իհարկե, ստեղծված իրավիճակը չէր կարող ՀՀ կառավարության ուշադրությունից դուրս մնալ: Այդ հիմնախնդրի մեղմացմանն ուղղված հանրապետությունում իրականացվել են տարբեր ծրագրեր: Այսպես, օրինակ, գյուղատնտեսության և գյուղի զարգացմանն են ուղղված արտոնյալ վարկերի տրամադրման, էլիտար սերմերով ապահովման, ոռոգման համակարգի վերականգնման, ոլորտին հարկային արտոնություններ տրամադրելու և մի շարք այլ ծրագրեր: Դրանք իրականացվել են ինչպես միջազգային տարբեր կառույցների ֆինանսական աջակցությամբ, այնպես էլ հանրային միջոցների հաշվին: Սակայն, անժխտելի փաստ է այն, որ այդ ծրագրերը գյուղատնտեսության ոլորտի էքստենսիվ աճի վրա էական ազդեցություն չեն թողել և չմշակվող հողատարածքների մասնաբաժինն ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերում դեռևս կայուն նվազման միտում չի ցուցաբերում:

Շուկայական տնտեսության պայմաններում, երբ գյուղատնտեսական նշանակության հողերը հիմնականում տնային տնտեսությունների սեփականությունն են, այդ ռեսուրսի արդյունավետ օգտագործմանն ուղղված պետության միջամտությունը և նպատակային քաղաքականություն իրականացնելու խնդիրը բարդացնող հանգամանքներից մեկն էլ այն է, որ հանրապետության տարածքային միավորներում՝ մարզերում և առավել ևս համայնքներում այդ հիմնախնդրի (հողերի չմշակման) ձևավորման պատճառները էապես տարբերվում են իրենց բնութագրերով, խորության աստիճանով և, բնականաբար, բոլոր համայնքների ներառումով ցանկացած պետական միջամտություն չի կարող ցանկալի արդյունք ապահովել:

Շուկայական տնտեսության պայմաններում այդպիսի սահամանափակ և անփոխարինելի ռեսուրսի ոչ լրիվ օգտագործման պատճառները կարող են պայմանավորված լինել գյուղացիական տնտեսությունների ֆիզիկական, ֆինանսական, արտադրական կարողությունների սահմանափակությամբ, իրացման հետ կապված բարդություններով, այդ գործընթացի ոչ եկամտաբերությամբ, եկամտի այլընտրանքային տարբերակներ ունենալու և մի շարք այլ գործոններով, և թվարկված գործոններից յուրաքանչյուրի պարագայում պահանջվում է և արդյունավետ կարող են գործել միայն իրավիճակին համապատասխանող ազդեցության լծակները:

Քանի որ ըստ համայնքների, նշված գործոնների համեմատական կարևորությունը և ազդեցության չափը գյուղատնտեսության էքստենսիվ աճի վրա չի կարող նույնը լինել, խնդրի պետական կարգավորման մեխանիզմները նույնպես պետք է լինեն տարբերակված: Խնդրի այսպիսի դրվածքը բարդանում է ինչպես գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատ-

ճառների բազմազանության, այնպես էլ հանրապետությունում գյուղական համայնքների մեծ թվի պատճառով:

Այս բարդություններից կարելի է խուսափել, եթե հաշվի առնենք, որ տարածքային միավորները բնութագրող գործոնների խիստ տարբերությունների առկայության դեպքում կոնկրետ նպատակի ձեռք բերմանն (հիմնախնդրի լուծմանն) ուղղված տնտեսական քաղաքականությունը հասցեական կարելի է դարձնել երկրի նույնանման բնութագրերով տարածքային միավորների շրջանացման ճանապարհով:

Այսպիսով՝ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված քաղաքականության շրջանակներում լուծվող խնդիրների բաղադրիչ պետք է համարել երկրի շրջանացումը ըստ այն բնութագրիչների, որոնք խոչընդոտում կամ նպաստում են առաջադրված նպատակի ձեռք բերմանը: Ասվածից հետևում է, որ երկրի տարածքը կարելի է շրջանացնել ըստ տարբեր հատկանիշների:Ուստի այն կարելի է շրջանացնել նաև ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի մշակման վրա ազդող հիմնախնդիրների ևս:

Երկրի տարածքային շրջանացումը գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ (լրիվ) օգտագործման նպատակից ելնելով նպատակահարմար է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ:

Նախ՝ անհրաժեշտ է ըստ համայնքների հստակեցնել այն հիմնախնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման և գնահատել դրանցից յուրաքանչյուրի խորության աստիճանը: Որպես հիմնախնդրի խորության աստիճանը բնութագրող ցուցանիշ, կարծում ենք, կարելի է դիտարկել կոնկրետ պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը համայնքում չմշակվող հողատարածքների նկատմամբ դիտարկվող տարում:

$$C_{ij} = \frac{x_{ij}}{x_i}$$

որտեղ,

i – ն համայնքի համարհիվն է,

j – ն հողերի մշակմանը խոչընդոտող գործոնի համարհիվն է,

C_{ij} – ն հողերի չմշակման պատճառ հանդիսացող j -րդ գործոնի գնահատականն է i -րդ համայնքում,

x_i – ն i -րդ համայնքում չմշակվող հողերի մակերեսն է,

x_{ij} – ն i -րդ համայնքում j -րդ գործոնի պատճառով չմշակվող հողերի մակերեսն է:

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների ցանկը կարելի է հստակեցնել փորձագիտական հարցումների միջոցով: Նշենք, որ ՀՀ տարածքային զարգացման և կառավարման նախարարության նախաձեռնությամբ ձևավորված «համայնքների սոցիալ-տնտեսական իրավիճակը» ներկայացնող փորձագիտական հարցումների հիման վրա ձևավորված տվյալների բազայում որպես գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման հիմնախնդիրներ առանձնացվել են հետևյալները[1].

1. ականապատված/բռնազավթված հողեր,
2. աղակալված/ ճահճակալված և/կամ դեգրադացված հողեր,
3. ոչ եկամտաբեր,
4. բնակավայրից հեռու հողեր,
5. չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող,
6. սեփականատերը բացակայում է,
7. սեփականատերը նյութական միջոցներ չունի,
8. սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել,
9. այլ պատճառներ:

[1] Գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի և չմշակման պատճառների վերաբերյալ փորձագիտական տեղեկատվություն պարբերաբար հավաքագրվում է տարածքային զարգացման և կառավարման նախարարության նախաձեռնությամբ:

Կարծում ենք, վերոնշյալ թվարկման մեջ պետք է ավելացնել նաև արտադրանքի իրացման հետ կապված բարդությունները ևս: Այս ցանկը կարելի է համալրել փորձագիտական հարցումների հիման վրա, սակայն թվարկված գործոններն էլ բավարար են պատկերացում կազմելու՝ դրանց մեղմելուն ուղղված տարբերակված մոտեցումների անհրաժեշտության մասին:

Այնուհետ, որպես շրջանացման գործընթացի երկրորդ քայլ, անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուր տարածքային միավորի (համայնքի) գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող տարածքները և չմշակման պատճառները:

Հաջորդ փուլում առանձնացված յուրաքանչյուր հիմնախնդրի համար պետք է ձևավորել փոփոխման միջակայքի սանդղակ և դրա հիման վրա դասակարգել համայնքները:

Վերջին փուլում ձևավորված դասակարգման հիման վրա երկրի գյուղական համայնքները կարելի է շրջանացնել ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների խորության աստիճանի:

Այս մոտեցումը, կարծում ենք, օգտակար կարող է լինել գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործմանն ուղղված տարբերակված տարածաշրջանային քաղաքականություն մշակելու և այն իրողություն դարձնելու գործընթացի համար: Այն նաև հնարավորություն կտա ապահովել այդ քաղաքականության հասցեականությունը:

Այսպես, օրինակ, եթե համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառը ականապատված/բռնազավթված լինելն է, այս հիմնախնդրի լուծման մոտեցումները տնտեսական քաղաքականության շրջանակներից դուրս են: Նկատենք, որ այս պատճառով հանրապետությունում չեն մշակվում գյուղատնտեսական նշանակության չմշակվող հողերի մոտ 5.5%-ը:

Հողերի աղակալված/ ճահճակալված և/կամ դեգրադացված լինելու պատճառով չմշակվող հողերը շրջանառության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է իրականացնել խնդրի լուծմանն ուղղված համապատասխան նպատակային ծրագրեր: Այս պատճառով չմշակվող հողերի մասնաբաժինը նույնպես մեծ չէ: Այն կազմում է չմշակվող հողերի 1.1%-ը:

Ըստ այս գործոնների շրջանացումը նեղացնում է գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետությանն ուղղված տարածաշրջանային քաղաքականության շրջանակներում ներառվող համայնքների ցանկը:

Ներկայացնենք վերը նշված բազայի հողերի չմշակման պատճառները ներկայացնող տվյալներով պայմանավորված վերլուծության արդյունքները:

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման պատճառների շարքում դիտարկված գործոններից համեմատաբար մեկ կարևորություն ունի «ոչ եկամտաբեր լինելու» հանգամանքը, որի պատճառով, ըստ փորձագետների տեղեկատվության, չի մշակվում մոտ 127,860 հա հողատարածք, որը կազմում է չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի 28.2%-ը: Ըստ այս պատճառի չմշակվող գյուղատնտեսական նշանակության հողերի մասնաբաժինը ընդգծված բարձր է Շիրակի մարզում (չմշակվող հողերի մոտ 93%-ը չի մշակվում ոչ եկամտաբեր լինելու պատճառով) և Լոռու մարզում (համապատասխանաբար՝ 65.7%-ը):

Գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման լուրջ հիմնախնդիր է համարվում սեփականատիրոջ նյութական միջոցներ չունենալը: Այդ պատճառով չեն մշակվում չօգտագործվող այդ ռեսուրսի մոտ 24.2%-ը: Այս հիմնախնդիրն առավել ընդգծված է Արագածոտնի (30.1%) և Գեղարքունիքի (13.6%) մարզերում:

Բոլոր մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակման լուրջ հիմնախնդիր է սեփականատիրոջ բացակայությունը: Ըստ էության այս հիմնախնդիրը լուրջ է նաև այն առումով, որ այն պայմանավորում է նաև աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը:

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների չմշակման վերը ներկայացված գործոնների ազդեցության խորության մասին պատկերացում է տալիս աղյուսակը:

Աղյուսակ

Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողատարածքները և չմշակման պատճառները

Չմշակման պատճառները	հա	%
Ականապատված, բռնազավթված	24,933.32	5.5
Աղակալված/ճահճակալված և/կամ դեգրադացված	4,986.66	1.1
Ոչ եկամտաբեր	127,839.95	28.2
Բնակավայրից հեռու հողեր	36,266.65	8
Չոռոգվող կամ ոչ բավարար ոռոգվող	67,999.97	15
Սեփականատերը բացակա է	49,866.65	11
Սեփականատերը նյութական միջոցներ չունի	109,706.62	24.2
Սեփականատերը ֆիզիկապես անկարող է մշակել	22,666.66	5
Այլ	9,066.66	2
Ընդամենը	***453,333.2***	***100***

Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի պատճառների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

- գյուղատնտեսական նշանակության հողերի չմշակվող հատվածի մարզային տեղաբաշխումն անհավասարաչափ է, և չմշակվող հողատարածքներում մեծ մասնաբաժին ունի Արագածոտնի մարզը (21.7%),
- գյուղատնտեսական նշանակության հողատարածքների չմշակման հիմնախնդրի պատճառներն ըստ համայնքների և մարզերի դիֆերենցված են, ուստի այս հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունն ու այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները ևս պետք է տարբերակվեն,
- հիմնախնդրի հաղթահարմանը նպատակաուղղված տնտեսական քաղաքականությունն ու այն իրողություն դարձնելու միջոցառումներն ու գործիքները կարելի է տարբերակել և հասցեական դարձնել միայն համայնքների շրջանացման ճանապարհով,
- վերլուծվող հիմնախնդրի առաջացման պատճառներից առավել կարևորվում է հողերի մշակումից ստացվող եկամտի ցածր մակարդակը (ոչ եկամտաբեր լինելը), ինչը վկայում է, որ շուկայական տնտեսության պայմաններում այդ հիմնախնդիրը չի կարելի համարել ինքնակարգավորվող, և պետության միջամտությունն իր համապատասխան քաղաքականությամբ անհրաժեշտություն է,
- գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածը չմշակելու հիմնախնդրի ձևավորման հաջորդ պատճառը (գործոնը) սեփականատիրոջ նյութական միջոցների ոչ բավարար լինելն է, որի մեղմացման ուղղությամբ հանրապետությունում իրականացվել են որոշակի ծրագրեր, օրինակ՝ այդ նպատակին է ծառայել նաև գյուղացիական տնտեսություններին արտոնյալ վարկերի տրամադրումը: Սակայն դիտարկված 2006-2014 թվականներին այս հիմնախնդիրը հիմնականում աճի միտում է ցուցաբերել այն մարզերում, որտեղ այդ վարկերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է: Այս հիմնախնդրի մասին որոշակի պատկերացում է տալիս նաև մարզային կտրվածով արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը: Ըստ այս ցուցանիշի առանձնանում են Գեղարքունիքի, Շիրակի և Արագածոտնի մարզերը, որոնցում արտագնա աշխատանքի մեկնողներ ունեցող տնային տնտեսությունների թիվը դիտարկված տարիներին տատանվում է մարզի գյուղական համայնքների տնային տնտեսությունների 1/3-ի սահմաններում, ինչը խոսում է նաև հանրապետության աշխատանքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման մասին,

գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի որոշակի հատվածի չմշակման հիմնախնդրի ձևավորման կարևոր պատճառներից է ոռոգման ջրի անմատչելիությունը, սակայն այս հիմնախնդիրը նվազման միտում է ցուցաբերում, ինչը պետք է վերագրել ՀՀ կառավարության և տարբեր միջազգային կառույցների կողմից այդ ոլորտում իրականացվող ծրագրերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ԸՍՏ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հատվածի չօգտագործման հիմնախնդրի վրա ազդող գործոնների ուսումնասիրությանը: Հիմնավորվում է այդ հիմնախնդրի լուծմանն ուղղված ըստ տարածքային միավորների տարբերակված քաղաքականության անհրաժեշտությունը:Այդ հիմնախնդրի լուծմանն ուղղված քաղաքականության հասցեականությունն ապահովելու համար առաջարկվում է համայնքների շրջանացման գաղափարը, և միաժամանակ ըստ գյուղատնտեսական հողերի չմշակման պատճառների առաջարկվել է շրջանացման ալգորիթմը:

Բանալի բառեր. *գյուղատնտեսական նշանակության հողեր, շրջանացում, տարբերակված տնտեսական քաղաքականություն, չմշակման պատճառներ, հիմնախնդրի խորություն, տարածքային տարբերություններ, զարգացման անհամաչափություններ, գյուղատնտեսության էքստենսիվ աճ:*

РЕГИОНИРОВАНИЕ ТЕРРИТОРИАЛЬНЫХ ЕДИНИЦ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В СООТВЕТСТВИИ С ПРОБЛЕМАМИ, ПРЕПЯТСТВУЮЩИМИ ЭФФЕКТИВНОМУ ИСПОЛЬЗОВАНИЮ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ ЗЕМЕЛЬНЫХ РЕСУРСОВ

АНДРАНИК АКОПОВИЧ БАГДАСАРЯН
аспирант Ереванского государственного университета

Аннотация

Статья посвящена изучению факторов, влияющих на проблему неиспользования определенной части земель сельскохозяйственного назначения в Республике Армения. Обоснована необходимость направленной на решение проблемы политики, дифференцированной по территориальным единицам. Предлагается концепция регионирования территориальных единиц в целях обеспечения адрессности политики для решения этой проблемы, а также алгоритм регионирования, исходя из причин некультивирования сельскохозяйственных земель.

Ключевые слова: *сельскохозяйственные земли, регионирование, дифференцированная экономическая политика, причины некультивирования, глубина проблемы, территориальные различия, диспропорции развития, экстенсивный рост сельского хозяйства.*

REGIONALIZATION OF TERRITORIAL UNITS OF THE REPUBLIC OF ARMENIA IN ACCORDANCE WITH THE PROBLEMS IMPEDING THE EFFICIENT USE OF AGRICULTURAL LAND RESOURCES

ANDRANIK HAKOB BAGHDASARYAN
Ph.D. Student, Yerevan State University

Abstract

The article discusses the factors affecting the problem of non-usage of particular parcels of the agricultural lands in the Republic of Armenia. In particular, we tried to corroborate the need for a differential policy with respect to the territorial units that would tackle the problem. Especially, the concept the regionalization of the territorial units is proposed, in order to ensure that policies aimed at solving the issues are well-targeted. Regionalization algorithm is proposed, based on the reasons for not cultivating the agricultural lands.

Keywords: *Agricultural lands, regionalization, differentiated economic policy, reasons for not cultivating, the depth of the problem, territorial differences, development disparities, extensive agricultural growth.*

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոն

ՀՀ-ՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱ-Ի ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Աշխարհի ցանկացած երկրի տնտեսության կայունությունը պայմանավորող գործոններում, իրենց ուրույն տեղն ունեն համախառն ներքին արդյունքն ու ապրանքաշրջանառությունը: Հատկապես այդ գործոնների քանակական և արժեքային գնահատականներն են, որ հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու երկրի իրական տնտեսական հատվածի վերաբերյալ: Այդ գնահատականների հիման վրա են մշակվում ինչպես կառավարության միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, այնպես էլ երկրի համար հույժ կարևոր նշանակություն ունեցող ազգային անվտանգության ռազմավարությունը[1]:

Վերոնշյալ գործոնների (ցուցանիշների) ժամանակագրական շարժը բնութագրելու համար, 1994-2015թթ. վիճակագրական տվյալները ներկայացնենք աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

ՀՀ ապրանքաշրջանառության և համախառն ներքին արդյունքի ժամանակագրական փոփոխություններն ըստ 1994-2015թթ.[2]

մլն. ԱՄՆ դոլար

Տարիները	Ապրանքաշրջանառություն	Արտահանում	Ներմուծում	ՀՆԱ
1	2	3	4	5
1994	706,4	247,1	459,3	628,3
1995	1108,1	307,9	800,2	1286,7
1996	1267,3	371,7	895,4	1599,3
1997	1287,4	332,3	955,1	1638,9
1998	1359,5	359,6	999,9	1892,3
1999	1302,2	383,1	919,1	1845,5
2000	1185,2	300,5	884,7	1911,6
2001	1219,1	341,8	877,3	2153,3
2002	1492,3	505,1	987,2	2376,3
2003	1965,1	685,6	1279,5	2807,1
2004	2073,6	722,9	1350,7	3576,6
2005	2775,6	973,9	1801,7	4900,4
2006	3176,7	985,1	2191,6	6384,5
2007	4420,1	1152,3	3267,8	9204,5
2008	5483,3	1057,2	4426,1	11916,6
2009	4031,3	710,2	3321,1	8540,6
2010	4794,3	1011,4	3782,9	9263,8
2011	5479,6	1334,3	4145,3	10138,1
2012	5641,4	1380,2	4261,2	9958,0
2013	5864,6	1478,7	4385,9	10431,9
2014	5900,9	1519,3	4401,6	10786,6
2015	4740.9	1486.9	3254.0	10994.5

Աղյուսակ 1-ի տվյալներն ավելի պատկերավոր դարձնելու համար կազմենք գծապատկեր 1-ը:

[1] 2014-2016թթ. ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության 04.07.2013թ., 740Ն որոշմամբ:

[2] Htt//arnstat.am/am/

Գծապատկեր 1

ՀՀ-ի ապրանքաշրջանառության (ներմուծման, արտահանման) ՀՆԱ-ի ժամանակագրական փոփոխությունները ըստ 1994-2015թթ.



Աղյուսակ 1-ի և գծապատկեր 1-ի ելակետային տվյալները վկայում են, որ այս ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության ոլորտում տեղի են ունեցել բավականաչափ դրական տեղաշարժեր: Արդյունքում ընդլայնվել է տարբեր երկրների հետ ապրանքաշրջանառության ծավալները թե՛ ներմուծման, և թե՛ արտահանման գծով: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստացված արդյունքները հանդես են եկել անկայուն դրսևորումներով, իսկ վերջիններիս պատճառներն ավելի հստակ պատկերացնելու համար անհրաժեշտություն ենք համարում դիտարկվող ժամանակաշրջանը բաժանել երկու հատվածների՝ 1994-2008թթ. և 2009-2015թթ., քանի որ դրանք իրենց էությամբ ենթադրում են տարբեր տնտեսական միջավայրեր: Պարզաբանման առումով նշենք, որ 1994 թվականից, ներառյալ՝ 2008 թվականը ՀՀ-ում արձանագրվել է ՀՆԱ-ի կայուն աճ և արդյունքում 628,3 մլն. ԱՄՆ դոլարից այն հասել է 11,917 մլրդ ԱՄՆ դոլարի: Միաժամանակ նույն ժամանակաշրջանում ապրանքաշրջանառության ծավալները 706,4 մլն. դոլարից հասել են 5,483 մլրդ դոլարի, գրեթե աճելով 6,8 անգամ: Իսկ ահա 2008 թվականի վերջում, երբ տեղի ունեցավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, դրա հետևանքով 2009 թվականին վերոնշյալ երկու ցուցանիշների գծով արձանագրվեց նվազման միտում՝ ՀՆԱ-ի գծով այն կազմեց 8,541 մլրդ. դոլար, իսկ ապրանքաշրջանառության գծով՝ 4,031 մլրդ. դոլար: Այնուհետ և որոշ բարեփոխումներից հետո հետագայում, ներառյալ՝ 2015 թվականը տեղի ունեցավ աճման միտում, դեռևս չապահովելով 2008 թվականի մակարդակը, ինչպես վկայում են աղյուսակ 1 –ում բերված վիճակագրական տվյալները: Միաժամանակ ըստ այդ տվյալների կարող ենք գալ այն հետևության, որ նույն օրինաչափությունները պահպանվել են ապրանքաշրջանառության արտահանման և ներմուծման գծով:

Միաժամանակ հարկ է նշել, որ չնայած վերոնշյալ ժամանակամիջոցում ձևավորված ՀՆԱ-ի համեմատաբար կայուն աճին, այնուհանդերձ ապրանքաշրջանառություն և ՀՆԱ հարաբերակցությունն ինչպես նշված է աղյուսակ 2-ում, անհրաժեշտ չափով կայուն մակարդակ չի ապահովել, որի հիմնական պատճառն ըստ ճյուղային բաշխվածության ՀՆԱ-ի կառուցվածքային անկայունությունն է: Քանի որ ՀՆԱ-ի ավելացումը հիմնականում պայմանավորված է շինարարության, հանքարդյունաբերության և հումք վերամշակող արդյունաբերական ճյուղերի արտադրանքի աճով: Միաժամանակ ՀՆԱ-ի և տրանսֆերտների աճով պայմանավորված մեծացել է սպառումը,

ինչն էլ իր հերթին պատճառ է դարձել արտահանման համեմատությամբ ներմուծման անհավասարակշռված ծավալների աճին՝ դրանով իսկ նպաստելով առևտրային (վճարային) հաշվեկշռի պակասուրդի ավելացմանը: Ավելի հստակ պատկերացնելու համար, ըստ աղյուսակ 2-ի տվյալների կառուցենք գծապատկեր 2-ը, որը բնութագրում է ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքաշրջանառության, ներմուծման և արտահանման հարաբերակցությունները, որոնք ըստ ուսումնասիրվող տարիների ունեցել են ոչ կայուն տատանողական բնույթ:

Աղյուսակ 2

ՀՀ ապրանքաշրջանառության (ներմուծման, արտահանման) և ՀՆԱ-ի հարաբերակցություններն են՝ ըստ 1994-2015թթ.

Տարիները	Ապրանքաշրջ. / ՀՆԱ	Արտահանում / ՀՆԱ	Ներմուծում / ՀՆԱ	Արտահանում / Ներմուծում
1994	1.1243	0.3933	0.7310	0.5380
1995	0.8612	0.2394	0.6219	0.3848
1996	0.7923	0.2324	0.5599	0.4151
1997	0.7855	0.2028	0.5828	0.3479
1998	0.7184	0.1900	0.5284	0.3596
1999	0.7056	0.2076	0.4980	0.4168
2000	0.6200	0.1572	0.4628	0.3397
2001	0.5662	0.1587	0.4074	0.3896
2002	0.6280	0.2126	0.4154	0.5116
2003	0.7000	0.2442	0.4558	0.5358
2004	0.5798	0.2021	0.3776	0.5352
2005	0.5664	0.1987	0.3677	0.5405
2006	0.4976	0.1543	0.3433	0.4495
2007	0.4802	0.1252	0.3550	0.3526
2008	0.4601	0.0887	0.3714	0.2389
2009	0.4720	0.0832	0.3889	0.2138
2010	0.5175	0.1092	0.4084	0.2674
2011	0.5405	0.1316	0.4089	0.3219
2012	0.5665	0.1386	0.4279	0.3239
2013	0.5622	0.1417	0.4204	0.3371
2014	0.5489	0.1409	0.4081	0.3452
2015	1.4545	0.4569	1.0052	0.4569

Գծապատկեր 2

ՀՀ ապրանքաշրջանառության (ներմուծման, արտահանման) և ՀՆԱ-ի հարաբերակցություններն են՝ ըստ 1994-2015թթ.



Ցանկացած ցուցանիշի ժամանակագրական (դինամիկ) փոփոխությունները ավելի իրատեսական դարձնելու համար կարևորվում են նաև դինամիկ շարքի հարթեցումները, մասնավո-

բապես՝ սահող միջիններով և անալիտիկ եղանակներով կատարումը: Սահող միջիններով դինամիկ շարքի հարթեցումը երեք տարիների կտրվածքով արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$Y_j = \frac{Y_{j-1} + Y_j + Y_{j+1}}{3} \qquad (j=1, 2, 3,\ldots,n), \qquad (1)$$

որտեղ

Y_{j-1}–ը ուսումնասիրության ենթակա ցուցանիշի (j) մեծությունն է,

Y_j–ն $_j$-րդ ցուցանիշի մեծությունն է, տվյալ ժամանակաշրջանում,

Y_{j+1} -րդ ցուցանիշի մեծությունն է հաջորդող ժամանակաշրջանում:

Իր հերթին դինամիկ շարքի անալիտիկ եղանակով հարթեցումը, արտահայտվում է հետևյալ հավասարումների տեսքով.

$$Y_t = a_o + a_1 t \qquad \text{կամ} \qquad Z_t = b_o + b_1 t \qquad (2)$$

Վերոնշյալ հավասարումներում՝ Y_t –ն ապրանքաշրջանառության, իսկ Z_t-ն համախառն ներքին արդյունքի դինամիկ շարքի մեծություններն են, իսկ դրանցում ներառված a_o, a_1, b_o և b_1 գործակիցները հաշվարկելու համար հիմնվում ենք «փոքրագույն քառակուսիների մեթոդի» ու դրանով պայմանավորված նորմալ հավասարումների համակարգի վրա: Վերջիններս ունեն հետևյալ տեսքը՝

- ապրանքայնության գծով

$$\begin{cases} \sum Yt = nao + a1\sum t \\ \sum Ytt = ao\sum t + a1\sum t2 \end{cases} \qquad (3)$$

- համախառն ներքին արդյունքի գծով

$$\begin{cases} \sum Zt = nbo + b1\sum t \\ \sum Zt = bo\sum t + b1\sum t2 \end{cases} \qquad (4)$$

Լուծման արդյունքում ստանում ենք՝

- ապրանքաշրջանառության գծով

$$ao = 3058,9 , \quad a1 = - 258,6$$

որտեղից՝

$$Y_t = 3058,9 - 258,6\ t \qquad (5)$$

- համախառն արդյունքի գծով

$$b_o = 5642,4 , \qquad b_1 = -551,8$$

որտեղից՝

$$Z_t = 5642,4 - 551,8\ t \qquad (6)$$

Այժմ ելնելով աղյուսակ 1-ի ելակետային տվյալներից, կապված ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի, ինչպես վերոնշյալ բանաձևերի հետ, բոլոր հաշվարկային տվյալները ներկայացնենք աղյուսակ 3-ում և դրանց վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ստանալու համար կազմենք գծապատկեր 3-ը՝ սահող միջինների գծով և գծապատկեր 4-ը՝ անալիտիկ հարթեցման գծով: Ստացված արդյունքներից ակնհայտ է, որ ինչպես ապրանքաշրջանառությունը, այնպես էլ ՀՆԱ-ն ըստ ուսումնասիրվող տարիների ունեցել են ոչ գծային բնույթ, իսկ անալիտիկ հարթեցումներն էլ բնորոշում են դրանց աճման միտումները: Միաժամանակ պետք է նշել նաև այն իրողությունը, որ համախառն ներքին արդյունքով է պայմանավորված ապրանքաշրջանառության ավելացումը, որն իր դրական ազդեցությունն է թողնում արտահանման վրա և դրանով իսկ նվազեցնում վճարային հաշվեկշռի մնացորդը (պակասուրդը):

ՀՀ-ում ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի ցուցանիշների սահող միջիններով և անալիտիկ եղանակներով հարթեցումներն ըստ 1994-2015թթ.*

Տարիները	Ապրանքա-շրջանառու-թյունը (y_t)	Սահող միջինների հարթեցում	y-ի անալիտիկ հարթեցում $y_t = a_0 + a_1 t$				ՀՆԱ (Z_t)	Սահող միջինների հարթեցում	Z-ի անալիտիկ հարթեցում $Z_t = b_0 + b_1 t$	
			t	t^2	yt	y_t (հաշվ)			Zt	Z_t (հաշվ)
1994	706.4	-	11	161	7770.4	214.3	628.3	-	6911.3	-415.5
1995	1108.1	1027.2	10	100	11080.1	472.9	1286.7	1171.4	12867.0	135.2
1996	1267.1	1220.9	9	81	11403.9	731.5	1599.3	1508.3	14393.7	685.9
1997	1287.4	1304.7	8	64	10299.2	990.1	1638.9	1710.2	13111.2	1236.6
1998	1359.5	1316.4	7	49	9516.5	1248.7	1892.3	1792.2	13246.1	1787.4
1999	1302.2	1282.3	6	36	7824.0	1507.3	1845.5	1883.1	11073.0	2338.1
2000	1185.2	1235.5	5	25	5926.0	1765.9	1911.6	1970.1	9558.0	2888.8
2001	1219.1	1298.9	4	16	4876.4	2024.4	2153.3	2147.1	8613.2	3440.0
2002	1492.3	1562.2	3	9	4476.9	2283.0	2376.3	2445.6	7128.9	3990.3
2003	1965.1	1843.7	2	4	3930.2	2541.6	2807.1	2920.0	5614.2	4541.0
2004	2073.6	2271.4	1	1	2073.6	2800.3	3576.6	3761.4	3576.6	5091.7
2005	2775.6	2675.3	-1	1	-2775.6	3317.4	4900.4	4953.8	-4900.4	6193.1
2006	3176.7	3457.5	-2	4	-6353.4	3576.0	6384.5	6829.8	-12769.0	6743.8
2007	4420.1	4360.0	-3	9	-13260.3	3834.6	9204.5	9168.5	-27613.5	7294.6
2008	5483.3	4644.8	-4	16	-21933.2	4093.2	11916.6	9887.2	-47666.4	7845.3
2009	4031.3	4769.6	-5	25	-20156.5	4351.8	8540.6	9907.0	-42703.0	8396.0
2010	4794.3	4768.4	-6	36	-28765.8	4610.4	9263.8	9314.2	-55582.8	8946.7
2011	5479.6	5305.1	-7	49	-38357.2	4869.0	10138.1	9786.6	-70966.7	9497.4
2012	5641.4	5661.8	-8	64	-45131.2	5127.6	9958.0	10176.0	-79664.0	10048.2
2013	5864.6	5809.0	-9	81	-52781.4	5386.1	10431.9	10392.2	-93887.1	10598.9
2014	5920.9	5508.8	-10	100	-59209.0	5644.7	10786.6	10736.7	-107866.0	11149.6
2015	4740.9	-	-11	121	-52149.9	5903.3	10991.5	-	-120906.5	11700.3
Ընդամենը $\sum y = 67294.7$		-	$\sum t = 0$	1012	-261696.3	67294.2	124132.4	-	-558432.3	124132.7

* Աղյուսակներ 2-ն ու 3-ը և բոլոր գծապատկերները կազմված են հեղինակի կողմից

Գծապատկեր 3

ՀՀ-ում ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի ցուցանիշների սահող միջիններով և անալիտիկ եղանակներով հարթեցումներն ըստ 1994-2015թթ.



Գծապատկեր 4

ՀՀ-ում ՀՆԱ-ի ցուցանիշների սահող միջիններով և անալիտիկ եղանակներով հարթեցումներն ըստ 1994-2015թթ.



Այսպիսով, ցանկացած երկրի տնտեսական աճի ապահովման հիմնական նպատակն է հնարավորության սահմաններում դառնալ մրցունակ որակյալ արտադրատեսակներ արտահանելու գործընթացում: Ուստի այդ առումով էլ ՀՀ-ում մրցունակ արտադրանք ապահովելու, ՀՆԱ-ի և ապրանքաշրջանառության ծավալներն ավելացնելու համար, առաջարկում ենք դրանց կարգավորման հետևյալ ուղիները՝

- նյութական արտադրության բոլոր ոլորտների գծով կարևոր տեղեկատվական և խորհրդատվական աջակցության շրջանակներում՝ արտաքին տնտեսական գործունեության իրականացում, նորարարությունների և նորովի տեխնոլոգիաների ներդրում, ֆինանսական միջոցների ներգրավում ու դրանց նպատակային օգտագործում, ինչպես նաև գործարար և ներդրումային ծրագրերի կիրառում,
- ՀՀ կառավարության քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի՝ մասնավոր կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, որոնք իրենց էությամբ ֆինանսական շուկայի և շուկայական մեխանիզմների միջոցով կուղղորդվեն արտադրական գործընթացների բարելավմանը,
- այնպիսի երկրներում, ինչպիսին նաև Հայաստանն է, որտեղ առկա է արտահանման և ներմուծման բարձր կենտրոնացվածություն՝ թե՛ մակրոտնտեսական, և թե՛ ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից կարևորվում են ոչ միայն ապրանքաշրջանառություն իրականացնող հիմնական գործընկեր երկրների կազմը, այլ նաև այդ գործընթացն ապահովող որակյալ ապրանքատեսակներն ու ապրանքախմբերը:

ՀՀ –ՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱ-Ի ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող
ԱՆՆԱ ԱՇՈՏԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոն

Համառոտագիր

Ցանկացած երկրի տնտեսական աճի ապահովման գործընթացում իր առանցքային տեղն է զբաղեցնում համախառն ներքին արդյունքը, որի մեծությունը պայմանավորված է արտադրանքի արտադրման (ծառայությունների մատուցման) և ապրանքաշրջանառության ծավալների ավելացմամբ: Ուստի հաշվի առնելով վերոնշյալների կարևորությունը սույն հետազոտությունում անդրադարձ ենք կատարել 22 տարիների կտրվածքով դրանց ժամանակագրական փոփոխությունների վերլուծությանը, որին համահունչ ներկայացվել և հաշվարկվել են ապրանքաշրջանառություն, դրանց ներմուծում, արտահանում և ՀՆԱ, ինչպես նաև արտահանում և ներմուծում հարաբերակցությունները: Միաժամանակ ապրանքաշրջանառության և ՀՆԱ-ի ժամանակագրական փոփոխությունների աճման կամ նվազման միտումները բացահայտելու համար կատարված են հարթեցումներ՝ ըստ սահող միջինների և անալիտիկ եղանակների: Պարզաբանման նպատակով կազմված են նաև գծապատկերներ, իսկ վերլուծության արդյունքների հիման վրա առաջարկվել են կարգավորման ուղիներ:

Բանալի բառեր. *ապրանքաշրջանառություն, ՀՆԱ, ժամանակագրական փոփոխություն, ապրանքաշրջանառություն և ՀՆԱ հարաբերակցություն, ներմուծում և արտահանում, սահող միջիններով հարթեցում, անալիտիկ հարթեցում, կարգավորման ուղիներ:*

ДИНАМИЧЕСКИЕ РЯДЫ ВВП И ТОВАРООБОРОТА И ПУТИ ИХ РЕГУЛИРОВАНИЯ В РА

АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН, *д.э.н., профессор*
зав. отделом, главный научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА
АННА АШОТОВНА БАЯДЯН, *к.э.н., доцент*
Кафедра управленческого учета и аудита, Армянского государственного экономического университета

Аннотация

В обеспечении экономического роста любой страны ключевое место занимает показатель - внутренний валовый продукт (ВВП), величина которого обусловлена увеличением объемов производства продукции (оказания услуг) и товарооборота. С учетом важности вышесказанного авторы настоящего исследования обратились к анализу динамических рядов ВВП и товарооборота в интервале 22 лет, в соответствии с которым были представлены и рассчитаны объемы товарооборота (суммы экспорта и импорта) и ВВП, а также соотношение объемов экспорта и импорта к ВВП. Одновременно, для выявления тенденций роста или снижения динамических рядов ВВП и товарооборота проведены сглаживание с помощью средних скользящих и аналитическое выравнивание. С целью пояснения составлены также рисунки, а на основе результатов анализа предложены пути регулирования рядов.

Ключевые слова: *товарооборот, ВВП, динамические ряды, соотношение ВВП и товарооборота, импорт и экспорт, сглаживание с помощью скользящих средних, аналитическое выравнивание, пути регулирования.*

THE CHANGES AND OF THE TURNOVER AND THE GDP IN A TIME-SPAN AND THE WAYS OF THEREOF REGULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT HAKOB BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Head of Department, Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
ANNA ASHOT BAYADYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*
Chair of Managerial Accounting and Auditing, Armenian State University of Economics

Abstract

The gross domestic product (GDP) is pivotal in insuring the economic growth, the value of which is determined by the increase in the volumes of production (services) and commodity turnover. Whereas the importance of the aforementioned, in the present study, the authors carried out a time series analysis of the GDP and commodity for 22 year-long period, in accordance to which the volume of the trade (export and Import) and GDP as well as the ratio of exports and imports to GDP were illustrated and calculated. At the same time, to identify trends in the growth or decline of the GDP and the commodity turnover, the smoothing of the time-series was conducted in accordance to the moving averages and analytical alignment method. For further clarification, figures are also drawn and the regulation ways are proposed based upon the results of the analysis.

Keywords: *Commodity turnover, GDP, time series, the ratio of GDP and commodity turnover, import and export, smoothing with moving averages, analytical alignment, regulation ways.*

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ *տնտ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԻՐԶԱԽԱՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող

ՀՀ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Այժմյան տնտեսվարման պայմաններում իր ուրույն տեղն ունի նաև ագրովերամշակող արդյունաբերությունը, որը համարվում է ՀՀ տնտեսության կարևոր և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը: Այն երկրի գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման գործում անփոխարինելի է, քանի որ գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջավայրի մատակարարման և այլ բազմաթիվ խնդիրներով պայմանավորված առավել արդյունավետ կարող է լուծվել ագրովերամշակվող կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ բազմաբնույթ աշխատանքների և միջոցառումների շնորհիվ՝ ինչպիսիք են մասնավորեցումը, ՀՀ օրենսդրական դաշտի բարելավումը, շուկայական ենթակառուցվածքների ստեղծումն ու մեծածավալ ներդրումները, հնարավորություն տրվեց աստիճանաբար զարգացնել վերամշակող արդյունաբերությունը: Հատկապես Համաշխարհային բանկի օգնությամբ, իսկ հետագայում արտասահմանյան մի շարք ընկերությունների աջակցությամբ վերամշակող կազմակերպությունները կարողացան վերազինվել ու նորացնել տեխնոլոգիական գործընթացները, որոնց շնորհիվ էլ սկսեցին արտադրել արտահանման համար արժեքավոր պարենային մթերքներ:

Տարեցտարի պարենամթերքի արտահանման ծավալների ավելացմանը համահունչ կրճատվում է ապրանքաշրջանառության բացասական հաշվեկշիռը:

Պարզաբանումների առումով նշենք, որ 2015թ. պարենամթերքի ներմուծում - արտահանում հարաբերակցությունը կազմել է 1.7:1, 2010թ. 3.6:1 համեմատությամբ[1]:

Այսպես, ՀՀ ագրարային ոլորտի վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կազմում կարևորվում են սննդի, խմիչքների և ծխախոտի արտադրությունները, որոնց վկայությունն է 2010-2015թթ. վիճակագրական տվյալներով ներկայացված աղյուսակ 1-ը:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների, ինչպես տեսնում ենք վերամշակող արդյունաբերության մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում սննդի արդյունաբերական արտադրությունը, որը ըստ ուսումնասիրությունների տատանվում է 37.1-35.0%, խմիչքների արտադրությունը՝ 13.2-12.5% , իսկ ծխախոտի արտադրությունը 2015թ. վերջին հասել է մինչև 11.6%-ի: Իր հերթին սննդի արդյունաբերությունը տարիների ընթացքում աստիճանաբար ավելացել է և արդյունքում, օրինակ, 2015թ.-ին 2011թ.-ի համեմատ ավելացել է 20.4%-ով, սակայն 2014թ. նկատմամբ նվազել է 6.7%-ով: Խմիչքների արտադրությունը նույնպես ունեցել է աճման միտում, մինչև 2015թ., իսկ ահա ծխախոտի արտադրությունը ավելացել է 5.9 անգամ 2015 թվականին ի համեմատ 2011 թվականի: Այս բոլոր տվյալները վկայում են այն մասին, որ գյուղատնտեսական մթերքների կարևորությունը վերամշակման գործում հանդես է գալիս մի քանի տեսանկյունից: Նախ բավարար պայմաններ են ստեղծվում ներքին շուկան ապահովելու, արտահանման ծավալները և զբաղվածությունը ավելացնելու, ինչպես նաև գործազրկության ու արտագաղթի մեղմացման համար համապատասխան պայմաններ ձևավորելու:

[1] ԱՎԾ պարենային ապահովություն և աղքատություն 2012-2015-2016թթ.:

Աղյուսակ 1

Ագրարային ոլորտի վերամշակող արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ տնտեսական գործունեության (2011-2015թթ.)

ընթացիկ գներով մլն. դրամ

	2011թ.		2012թ.		2013թ.		2014թ.		2015թ.		2015թ. %	
	ընդամենը	% նախորդի մեջ	ընդամենը	% նախորդի մեջ	ընդամենը	% նախորդի մեջ	ընդամենը	% նախորդի մեջ	ընդամենը	% նախորդի մեջ	2011թ. նկատմամբ	2014թ. նկատմամբ
Ընդամենը վերամշակող մշակող արդյունաբերություն, որից	644775.4	100,0	699418.1	100,0	777016.9	100,0	847749.3	100,0	821210.2	100,0	27.4	-3.1
սննդի արդյունաբերություն	238887.6	37.1	250416.2	35.8	274747.6	35.4	308441.2	36.4	287818.5	35,0	20.4	-6.7
խմիչքի արտադրություն	85185.5	13.2	101323.3	14.5	126272.4	16.2	125118.9	14.8	102645.9	12.5	20.5	-18
ծխախոտի արտադրություն	16193.3	2.5	25420.3	3.6	38306.7	4.9	63112.2	7.4	94935.3	11.6	5.9 անգամ	50.4
այլ արտադրություն	304509.0	47.2	322258.3	46.1	337690.2	43.5	351077.0	41.4	335810.5	40.9	0.3	-4.4

ԱՎԾ Տարեգիրք 2014թ.
Սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ.

Էկոլոգիապես մաքուր արտադրանքը և կլիմայական բարենպաստ պայմանները հնարավորություն են տալիս տարեցտարի ավելացնելու վերամշակվող արտադրանքների թե քանակը և թե որակը: Այժմ էլ ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանի սննդի արդյունաբերությունն ունի բավականին կայուն աճ և արտահանման լայն հնարավորություններ: Տվյալ արդյունաբերությանը ենթակա կազմակերպությունները հիմնականում արտադրում են պահածոյացված մրգեր, բանջարեղեն, խմիչքներ, մսամթերք և տարբեր տեսակի կաթնամթերքներ: Այսօր, ըստ 2015թ. վիճակագրության տվյալների, Հայաստանում գործում են շուրջ 40 պահածոների, 45 գինեգործության, ավելի քան 280 կաթի և 72 մսի ու 4 ծխախոտի վերամշակման ընկերություններ: Հատկապես իրենց ուրույն տեղն ունեն խմիչքներ արտադրող ընկերությունները, որոնցից են՝ Երևանի կոնյակի գործարանը, Երևանի Արարատ կոնյակի, գինու, օղու գործարանը, Արմավիրի ՄԱՊ-ը, Գինեթասը, որոնք արտահանման բնագավառում հասել են որոշակի հաջողությունների:

Վերոնշյալների մասին ավելի պարզ պատկերացում ունենալու համար, աղյուսակ 2-ում բերված վիճակագրական տվյալների հիման վրա ներկայացնենք 2011-2015թթ.՝ խաղողի, մրգերի և բանջարեղենների վերամշակումից ստացված արտադրության ծավալները:

Աղյուսակ 2

Խաղողի, մրգերի և բանջարեղենի վերամշակումից ստացված արտադրական ծավալները 2011-2015թթ.

Անվանումները	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2015թ. %	
						2011թ. նկ.	2014թ. նկ.
Խաղողի գինի, 1000 լ	6192	5804	6680.3	6130.9	5934.9	- 4.2	- 4.8
Կոնյակ, 1000 լ	15385	18527	2028.4	18725.5	16947.6	10.1	- 9.5
Շամպայն, 1000 լ	623	479	536	634.4	658.1	5.6	3.7
Օղի, 1000 լ	9136	10104	9942	9499.5	9348.7	2.3	- 7.5
Բնական հյութեր, 1000 լ	14591	16718	19542	21102.6	17080.0	17.1	- 19.1
Պահածոներ, տոննա	11514	9551	9867	11704.7	11163.4	3.0	- 4.6

ԱՎԾ, Տարեգիրք 2014թ.
Սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ.

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ վերամշակող արդյունաբերության արտադրական ծավալները տարիների ընթացքում դինամիկ աճ են արձանագրել: Այսպես, կոնյակի արտադրությունը 2015թ. 2011թ. համեմատությամբ ավելացել է 10,1%-ով, շամպայնի արտադրությունը՝ 5.6%-ով, իսկ բնական հյութերի արտադրությունը 17.1%-ով և այլն, չնայած բացի շամպայն ապրանքատեսակից, մնացածների գծով ունեցել է նվազման միտում ի համեմատ 2014թ.:

Ինչպես հայտնի է, ռուսական շուկան մեր հանրապետության համար համարվում է առաջնային, ուստի 2014 թվականի նոյեմբերից այդ շուկայում դոլար – ռուբլի փոխարժեքի ճգնաժամի հետևանքով հայրենական արտահանողները զգալի վնասներ կրեցին: Միաժամանակ վերջին տարիներին աշխուժացել են տարբեր տեսակի չրերի արտադրությունը հիմնականում արտասահմանյան կազմակերպությունների աջակցության շնորհիվ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մսամթերքի վերամշակման և արտադրության մասնագիտացված շուրջ 30 փոքր և միջին ձեռնարկություններ հագեցած են նոր սարքավորումներով, տեխնիկայով ու բարձր տեխնոլոգիայով, որոնցով էլ պայմանավորված արտադրվում են բարձրորակ և մեծ տեսականի ունեցող մսամթերք, որոնք հիմնականում սպասարկում են ներքին շուկան: Մսամթերք արտադրող առաջատար ընկերություններից են «Մուշը», «Գեղարդը», «Աթենքը», «Բարի Սամարացին» և այլն, որոնք տարեկան վերամշակում են 10-12 հազ. տոննա միս, ըստ վերջին տարիների տվյալների: Միաժամանակ կաթի վերամշակման ընկերություններից են՝ «Աշտարակ կաթ» ՍՊԸ, «Թամարա» ՍՊԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Արզնի կաթ» և այլն:

Վերոնշյալների արտադրական ծավալների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու համար ներկայացնենք աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3

Մսամթերքի և կաթնամթերքի վերամշակման ծավալներն ըստ 2011-2015թթ.

Անվանումները	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2015թ. %	
						2011թ. նկ.	2014թ. նկ.
Միս, 1000 տ	61.1	65.2	72.3	81.3	85.8	40.4	7.3
Երշիկեղեն, տոննա	3577	3717	4030	5240	5997	67.7	14.5
Կաթ. մլն. լ	316	320	363	430	448	41.8	4.2
Պանիր, 1000 տ	17.6	17.6	17.4	18.3	18.6	5.7	1.6

ԱՎԾ, Տարեգիրք 2014թ.
Սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ.

Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ 2015թ. նախորդ տարիների նկատմամբ վերամշակման ծավալները ավելացել են: Այսպես, օրինակ, երշիկեղենի արտադրությունը 2011թ. համեմա-

տությամբ աճել է 67.7%-ով, նախորդ տարվա համեմատությամբ՝ 14.5%-ով, կաթի արտադրությունը համապատասխանաբար՝ 41.8 և 4.2%-ով: Արտադրված մթերքները հիմնականում սպառվում են ներքին շուկայում, որը և հնարավորություն է տալիս կրճատել ներմուծումը:

Ագրովերամշակման ոլորտում առկա հզորությունները դեռևս օգտագործվում են թերբեռնված, որը կապված է շրջանառու միջոցների պակասի, իսկ կատարված ներդրումներն էլ դեռևս բավարար չեն ոլորտի զարգացման և մրցունակության բարձրացման գործում:

Նշված խնդիրների լուծման և ագրովերամշակման ոլորտի հետագա զարգացման համար առաջարկվում է.

- ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանության նպատակով վերանայել հանրապետությունում արտադրվող պարենային մթերքների ներմուծումների մաքսատուրքի դրույքաչափերը,
- խստացնել ներմուծվող պարենամթերքի (մասնավորապես թռչնամսի), ինչպես նաև անասնակերի և դրա բաղադրատոմսերի (հավելումների) որակի նկատմամբ պետական վերահսկողությունը,
- ուշադրությունը կենտրոնացնել գյուղական տարածքների համաչափ զարգացմանը և արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխմանը,
- պետական աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին, որը էապես կնպաստի ագրովերամշակման ոլորտում մրցունակության բարձրացմանը և առիթ կհանդիսանա արտահանվող մթերքների ծավալների ավելացմանը:

Միաժամանակ ոլորտի զարգացման ֆինանսական և տնտեսական խթանների ապահովման գործում կարևոր է պետական և մասնավոր հատվածների մասնակցությամբ դրամաշնորհային ծրագրերի իրականացումը: Իր հերթին սննդամթերքի անվտանգության ապահովումը հանդիսանում է արտահանման կազմակերպման ու խթանման կարևոր նախապայման և այդ նպատակով էլ անհրաժեշտ է նյութատեխնիկական բազայով և սարքավորումներով ապահովված սննդամթերքի որակի ստուգման լաբորատորիաների ստեղծումը, սպանդանոցների կառուցումը և դրանց կից փորձաքննական լաբորատորիաների գործարկումը: Այս միջոցառումների իրականացման համար պետք է մասնակցեն ինչպես պետությունը, այնպես էլ դոնոր կազմակերպությունները:

Արտադրված արտադրանքը պետք է համապատասխանի ՀՀ-ի կողմից սահմանված ստանդարտներին ու տեխնիկական կանոնակարգերին, ինչպես նաև ոլորտը կարգավորող համապատասխան օրենքների և այլ իրավական փաստաթղթերի դրույթներին:

Ներկայումս շատ արտադրողների և վերամշակողների ներքին պահանջարկն է սննդամթերքի անվտանգության ու որակի բարելավման անհրաժեշտությունը: Հատկապես առավել որակյալ ներկրվող ապրանքներն արդեն իսկ հուշում են այն մասին, որ հարկավոր է խստացնել գոյություն ունեցող ստանդարտները, ներքին շուկան պահպանելու, ներկրվող սննդամթերքները տեղական արտադրանքով փոխարինելու և արտահանման հնարավորություններ ստեղծելու համար:

Վերամշակվող մթերքների մրցունակության բարձրացման կարևոր ուղղություններից է սննդի անվտանգության միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի ներդրումը և վերջինիս զարգացումը: Վերամշակվող մթերքների մրցունակությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների սննդամթերքների անվտանգությանը:

Արտերկրներից պարենամթերքի ներքին շուկա մուտք գործելու մատչելիության ապահովման տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը դասվում է ամենաազատական (բաց) շուկա-

ներ ունեցող երկրների շարքին: Քանի որ հանրապետությունում արտադրված պարենամթերքը (ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված տեսքով) բարձր համային և որակական ցուցանիշների շնորհիվ միանգամայն մրցունակ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ինչը հույժ կարևոր է պարենամթերքի արտաքին ապրանքաշրջանառության ներկայիս բացասական հաշվեկշիռը բարելավելու առումով:

Ներմուծվող, ինչպես նաև թարմ և վերամշակված սնունդ արտադրող տնտեսավարող սուբյեկտների բազմազանությունը վերջիններիս կողմից տարբեր տեխնոլոգիաների կիրառումն ու սննդամթերքների անվտանգության վերահսկման պատշաճ համակարգի թերացումը լուրջ վտանգ կարող է ստեղծել սպառողների առողջության համար, իսկ սննդի անվտանգության ստանդարտներին համապատասխանությունն էլ իր հերթին կբարձրացնի Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունը:

Մրցունակությունը բարձրացնելու համար գյուղատնտեսության ագրոպարենային և վերամշակող հատվածները պետք է կարողանան արդյունավետ կերպով արձագանքել տեղական սպառողների սննդամթերքի անվտանգությանն առնչվող պահանջներին և մրցակցել ներկրվող ապրանքների, իսկ արտահանման դեպքում արտասահմանյան ապրանքների որակական ստանդարտների հետ:

Կառավարությունը պետք է կենտրոնանա ստեղծելու խթանների համակարգ, որը կարող է նպաստել պետություն – մասնավոր հատվածի համագործակցության զարգացմանը:

Անհրաժեշտ է վարել հավասարակշռված քաղաքականություն տարածքային զարգացման գործում և յուրաքանչյուր մարզին տրամադրել այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս ամեն շրջան ունենալու անհրաժեշտ և բավարար ռեսուրսներ, որպեսզի ապահովվի արժանապատիվ կյանքի պայմաններ, ինչպես նաև համակողմանի զարգացում արդյունաբերության, գյուղատնտեսության, սննդի և վերամշակող արդյունաբերության միջև:

ՀՀ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԱՇՈՏ ՀԱԿՈԲԻ ԲԱՅԱԴՅԱՆ, *տնտ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող
ՇՈՒՇԱՆԻԿ ՄԻՐԶԱԽԱՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Վերամշակվող մթերքների արտադրությունը տարիների ընթացքում զգալի առաջընթաց է ունեցել, այն մշակող արդյունաբերության մեջ 2015թ. հասել է մինչև 59.1%-ի, որը նպաստավոր պայմաններ է ստեղծել ներքին շուկայի պահանջները բավարարելու, արտահանման ծավալները ավելացնելու, ինչպես նաև գործազրկությունը մեղմելու գործում: Սննդամթերքի անվտանգության ապահովումը հանդիսանում է արտահանման կազմակերպման ու խթանման կարևոր նախապայման: Ոլորտի զարգացման ֆինանսական և տնտեսական խթանների ապահովման գործում կարևոր է պետական և մասնավոր հատվածների արդյունավետ համագործակցությունը:

Բանալի բառեր. *արդյունաբերություն, վերամշակում, ծավալներ, արդյունավետություն, ներդրումներ, խթանում, մրցակցություն:*

УЛУЧШЕНИЕ ПРОИЗВОДСТВА ПРОДУКЦИИ АГРОПЕРЕРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА КАК ВАЖНЕЙШАЯ ПРЕДПОСЫЛКА УВЕЛИЧЕНИЯ ОБЪЕМОВ ИХ ЭКСПОРТА

АШОТ АКОПОВИЧ БАЯДЯН, *д.э.н., профессор,*
зав. отделом, главный научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА
ШУШАНИК МИРЗАХАНОВНА КОСТАНЯН
научный сотрудни Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

За последние годы в производстве продуктов переработки достигнут значительный прогресс. В 2015 г. его удельный вес в обрабатывающей промышленности составил 59,1%, что создало благоприятные условия для удовлетворения потребностей рынка, увеличения объемов экспорта, а также снижения безработицы. Обеспечение безопасности пищевых продуктов является самой главной предпосылкой стимулирования организации экспорта. В обеспечении финансовых и экономических стимулов развития сферы важное значение имеет эффективное сотрудничество государственного и частного секторов.

Ключевые слова: *промышленность, переработка, объем, эффективность, инвестиции, поддержка, конкуренция.*

INCREASE OF THE QUALITY OF FOOD ITEMS PRODUCED BY FOOD-PROCESSING INDUSTRY AS THE MOST CRUCIAL PRECONDITION FOR INCREASING THEIR EXPORTS

ASHOT HAKOB BAYADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Head of Department, Chief Research Associate,
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
SHUSHANIK MIRZAKHAN KOSTANYAN
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The food processing industry has reported a significant growth over the time, and in 2015, the respective share of the food processing industry in the manufacturing reached 59.1%, thus allowing the sector to meet the needs of the domestic industry and report increase in exports, and mitigate unemployment as well. Ensuring food safety is one of the crucial preconditions for promoting exporters and actually exporting. Effective private-public partnership is stressed in providing economic and financial incentives and for developing the industry.

Keywords: *Industry, processing, volume, effectiveness, investments, promotion, competition.*

ՀՐԱՉԻԿ ԳԱՐՍԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՄՊՀ Լ.Մ և ԲՏ և Կ սեկտոր

ԱՐՓԻՆԵ ՎԱԼԵՐԻԻ ՄՈՒՍԱԵԼՅԱՆ
ՀՄՊՀ Լ.Մ և ԲՏ և Կ սեկտորի դասախոս

ՀՀ ՏԵԽՆԱԾԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ

Հայաստանը հանքահումքային պաշարներով հարուստ երկիր է, որտեղ հետախուզված պաշարների հիման վրա ստեղծվել և հաջողությամբ գործում է գունավոր և ազնիվ մետաղների, ինչպես նաև տարբեր տեսակի ոչ մետաղական օգտակար հանածոների (հիմնականում շինանյութերի) արդյունահանման և վերամշակման արդյունաբերություն:

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը՝ այդ թվում՝ 22 մետաղական[1]:

ՀՀ մաքսային ծառայության 2015 թվականի առաջին կիսամյակի տվյալներով Հայաստանի արտահանման 59.3 %-ը բաժին է ընկնում լեռնամետալուրգիական արդյունաբերության արտադրանքին[2], հետևաբար հանքահումքային հենքի ընդլայնումը հանրապետության տնտեսության զարգացման առաջնային գործոններից մեկն է:

Հանքային հումքի առաջնային մշակման հիմնական պաշարները աստիճանաբար սպառվում են, հանքավայրերի տեղադրման երկրաբանական պայմանները բարդանում, իսկ դրանց շահագործումը ավելի ծախսատար է դառնում: Հետևաբար շուկայի պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտություն է առաջանում վերամշակել և օգտահանել տեխնածին հանքավայրերը (երկրորդական հումքի), դրանք դիտելով որպես հանքային հումքի աղբյուր: Սակայն հարցի լուծումը բավականին բարդ է և կապված է մի շարք բնապահպանական, տեխնոլոգիական և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հետ[3]:

Նշենք, որ գունավոր և ազնիվ մետաղների հարստացման ժամանակ հանքաքարերի մինչև 98 %-ը թափոնների տեսքով հեռացվում են՝ կուտակվելով պոչամբարներում, լցակույտերում, որտեղ կորում է նաև մետաղների որոշակի քանակություն:

Մեր կարծիքով թվարկած խնդիրները կարելի է հաջողությամբ լուծել միայն առաջնային և ածանցյալ (տեխնածին) հանքավայրերի կաղաստրավորման միջոցով: Ժամանակակից պայմաններում կադաստրավորումը, այդ թվում և տեխնածին հանքավայրերի, ունի պետական և տնտեսական կարևոր նշանակություն:

Հայաստանի Հանրապետության հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- լիովին վերազինել հանքարդյունաբերության ոլորտը ինովացիոն և սակավաթափոն տեխնոլոգիաներով՝ ապահովելով հանքաքարում օգտակար բաղադրիչների լիարժեք և համալիր կորզում և հնարավորինս կրճատելով դրանց կորուստը պոչանքներում,
- վերամշակել և օգտահանել առաջացած թափոնները,
- օգտակար հանածոների արդյունահանումը և մշակումը (հանքահարստացումը) իրականացնել առանց շրջակա միջավայրին վնաս պատճառելու,
- իրականացնել էկոլոգիական վնասի տնտեսական ճիշտ գնահատում և ռեկուլտիվացիա,

[1] http://www.minenergy.am/page/472#sthash.o6B5aqn3.dpuf
[2] http://www.customs.am
[3] Մովսեսյան Ռ.Ս., Մովսիսյան Հ.Ի., Հայաստանի Հանրապետության հարստապոչերի հետ կապված առաջնահերթ խնդիրները: ԵՊՀ գիտական տեղեկագիր: Երկրաբանություն և աշխարհագրություն, 2014, N2, էջ 16-22:

- կադաստրավորել հետախուզված հանքավայրերի հանքահումքային առաջնային պաշարները, ինչպես նաև տեխնածին հանքավայրերի (պոչամբարների, հարստապոչերի) պաշարները:

Մետաղական տեխնածին հանքավայրերի (պաշարների) առաջացման և օգտագործման սխեման պատկերված է նկարում (տե՛ս գծապատկերը):

Գծապատկեր

Մետաղական տեխնածին հանքավայրերի (պաշարների) առաջացման և օգտագործման ուղղությունները



Կադաստրը, ըստ իր էության և նշանակության գիտականորեն հիմնավորված արժանահավատ տվյալների ամբողջություն է, յուրաքանչյուր օբյեկտի (տեխնածին հանքավայրի, պոչամբարի) երկրաբանական, քանակական և որակական բաղադրության (պաշարների կազմի ու կառուցվածքի), դրա բաղադրիչ մասերի (տեղամասերի), սեփականատիրոջ (պատկանելության ձևի) մասին: Ըստ որում՝ թվարկած տվյալներն անընդհատ պետք է թարմացվեն և համալրվեն[1,1]:

[1] Крымов С.М., Павлюшкевич Т.Б., Методология определения цели системной оценки техногенных месторож¬дений, 2 стр. 2006:

Բնական ռեսուրսների՝ այդ թվում և տեխնածին հանքավայրերի կադաստրավորումն ունի հետևյալ առանձնահատկությունները. ա) տեխնածին հանքավայրի կադաստրը ժամանակի և տարածության մեջ անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի դեռ հանքավայրի պաշարները ամբողջովին չեն արդյունահանվել և վերամշակվել (օգտահանվել), բ) բնական պաշարների կադաստրը կազմվում է ըստ ոլորտի (պաշարի տեսակի) և պոչամբարների կուտակման վայրի, գ) տեխնածին հանքավայրի կադաստրը պետք է կազմվի ըստ տեղադրման վայրի՝ հողի, պոչամբարի, լցակույտի, տեղամասի, դ) կադաստրում պարունակող տվյալները օգտագործողների համար պետք է լինի հնարավորինս հասանելի, ե) կադաստրը պետք է պարունակի հստակ և հիմնավոր տվյալներ երկրորդական պաշարների վերամշակման և օգտագործման (օգտահանման) սոցիալ-տնտեսական արդյունավետության վերաբերյալ, որի հիման վրա դրանք դառնում են ազգային հարստության մի մասը, զ) կադաստրը պետք է հաշվի առնի էկոլոգիական գործոններն ու պահանջները:

Յուրաքանչյուր տեխնածին հանքավայրի կադաստրի ուսումնասիրության առարկան երկրորդական հանքանյութն է, որի քանակական և որակական գնահատման ցուցանիշները պետք է համատեղելի լինեն նույն տեսակի այլ հանքավայրերի պաշարների գնահատման ցուցանիշների հետ: Այն պետք է կազմվի միասնական պահանջներով և մեթոդներով, որը պարունակում է հանքային հումքի աղբյուրի վերաբերյալ հիմնավոր ու ամփոփ անձնագրային և աղյուսակային տվյալներ:

Կադաստրի տեղեկությունների և ցուցանիշների համակարգը պետք է ընդգրկի երկրաբանահետախուզական, լեռնատեխնիկական, տեխնոլոգիական, էկոլոգիական և սոցիալ-տնտեսական բնույթի ամփոփ տվյալներ, որոնք անհրաժեշտ են տեխնածին հանքավայրի վերամշակման կամ օգտահանման հիմնավորման, նախագծման և իրագործման համար: Ըստ որում՝ պետք է հաշվի առնվեն ոչ միայն արդեն կուտակված հանքարդյունաբերության թափոնները (հարստապոչերը, ոչ կոնդիցիոն և արտահաշվեկշռային պաշարները), այլ նաև հանքարդյունաբերության ընթացիկ և ապագա թափոնները և հարստապոչերը:

Կադաստրում կուտակված տվյալները կարող են հաջողությամբ օգտագործվել հանքահումքային երկրորդական պաշարների (հարստապոչերի) օգտահանման և վերամշակման, ինչպես նաև նախագծման, ներդրումների կատարման և դրանց արդյունավետության որոշման համար:

Տեխնածին հանքավայրի (պոչամբարների) կադաստրային հաշվառումը, որը իրագործվում է հատուկ մարմնի կողմից, ընդգրկում է հետևյալ հարցերը՝ա) վկայում է տեխնածին հանքավայրի (պոչամբարների)՝ որպես ապագա արդյունաբերական օբյեկտի մասին, բ) պարունակում է որոշակի կոնկրետ տվյալներ օբյեկտի մասին, որոնց հիման վրա կազմվում և տրվում է կադաստրային անձնագիր, գ) տեխնածին օբյեկտի զբաղեցրած (տարածքային) տեղամասի համար ստեղծվում է չափագրված պլան հստակ աշխարհագրական կոորդինատներով, դ) կադաստրային պլանը գրաֆիկական (քարտեզի) տեսքի է , որն ունի կից տեքստային (բացատրական) մաս: Այն պարունակում է տվյալներ տեխնածին օբյեկտի չափագրված սահմանների մասին, ե) տեխնածին օբյեկտի տեղադրման վայրի (հողամասի, տարածքի) գրանցման համարը, հողամասի համարը, մակերեսը, սեփականությունը (պատկանելիությունը), սահմանները, օգտագործման հեռանկարները, կադաստրային (նորմատիվային) գինը, հարկման մեխանիզմները, զ) առաջացման (ծագման) պայմանները և որակական ու քանակական այլ տվյալներ:

Այսպիսով՝ տեխնածին հանքավայրի (պոչամբարի) կադաստրի հիմնական խնդիրն է հավաքագրել, խմբավորել, ընդհանրացնել, տնտեսապես հիմնավորել, պարբերաբար թարմացնել, պահպանել և ընդերքօգտագործողներին տրամադրել հավաստի տվյալներ տեխնածին հանքավայրի պաշարների վերաբերյալ, իսկ առարկան է տեխնածին հանքավայրերը (հանքային արտադրության լցակույտերը և պոչամբարները), որոնք առաջացել են ընդերքօգտագործման բոլոր մակարդակներում՝ հետախուզման, մշակման և հանքահարստացման:

---

[1] Абдисаев Б.А., Современные проблемные задачи кадастрового учета минерально-сырьевых ресурсов, стр. 5 http://vestnik.kazntu.kz/files/newspapers/59/1958/1958.pdf

Տեխնածին հանքավայրի կադաստրի համար կիրառելի են հողային կադաստրի վարման հիմնական մեթոդներն ու սկզբունքները[1]: Այսպիսով, տեխնածին հանքավայրի կադաստրավորումը կարևոր և խիստ արդիական հարց է, որի միջոցով կհամակարգվեն ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերության գործունեության արդյունքում տասնամյակներով կուտակված տեխնածին հումքի վերամշակման և օգտահանման բարդ խնդիրները:

Ներկայացնենք մեր կողմից մշակված ՀՀ մետաղական տեխնածին հանքավայրերից մի քանիսի («Զանգեզուրի պղինձ, մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ) (պոչամբարների, հարստապոչերի) կադաստրային անձնագրերը (տե՛ս աղյուսակը):

Աղյուսակ

«ՋՊՄԿ» ՓԲԸ տեխնածին հանքավայրերի (պոչամբարների, հարստապոչերի) կադաստրային անձնագիրը (աղյուսակ)

Կադաստրի կոդը	Պոչամբարի անվանումը (տեղադրման վայրը)	Կազմավիճակը	Ծավալը, մլն մ³		Զանգվածը, մլն. տ	Հիմնական մետաղների պարունակությունները, %		Պաշարները, հազ. տ		Պայմանական օգտակար բաղադրիչի պարունակությունը, %	Նվազագույն արդյունաբերական պարունակություն, %
			նախ.	փաստ	փաստ	Cu	Mo	Cu	Mo	Cu	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
09. …	Արծվանիկ		310.0	280.0	700.0	0.05	0.008	750.0	56.0	0.080	0.13
09. …	(Արծվանիկ գետի վրա)	գործող	30.0	19.4	50.0	0.05	0.009	25.0	4.2	0.084	0.13
09. …	Ողջի (Ողջի գետի վրա, Լեռնաձոր գյուղի մոտ)	կոնսերվացվել է 1977թ.	6.0	3.2	8.0	0.05	0.012	4.0	0.7	0.088	0.13
09. …	Փխրուտ (Ողջի գետի աջափնյա վտակի վրա, Փխրուտ գյուղի մոտ)	կոնսերվացվել է 1969թ.	4.0	3.0	7.5	0.05	0.014	3.75	1.05	0.095	0.13

*) մարզի կոդը (09-Սյունիքի մարզ),
**) համայնքի (քաղաք, գյուղ) կոդը,
***) հողամասի (թաղամասի) կոդը:

Աղյուսակում բերված տվյալները վկայում են, որ նշված տեխնածին հանքավայրերի տեխնածին պաշարների վերամշակումը տնտեսապես ձեռնտու չէ (առ. 01.01.2016), քանի որ տեխնածին հանքավայրերում պղնձի և մոլիբդենի փաստացի պարունակությունները մի քանի անգամ փոքր են հաշվարկված նվազագույն արդյունաբերական պարունակությունից 5000 ԱՄՆ դոլար 2015 թվականի ընթացքում 1 տ. պղնձի միջին գնի[2] և 4.0 ԱՄՆ դոլար 1 տ տեխնածին ռեսուրսի արժեքի դեպքում: Նշենք, որ վերը նշված չորս տեխնածին հանքավայրերն էլ պատկանում են «ՋՊՄԿ» ՓԲԸ-ը:

[1] Ա.Ս. Եզակյան, Գյուղատնտեսական հողատեսքերի կադաստրային գնահատումը: Դասագիրք: Եր.: ՀԱԱՀ, 2014,- 132 էջ:
[2] http://metal4u.ru/lme/

ՀՀ ՏԵԽՆԱԾԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ

ՀՐԱՉԻԿ ԳԱՐՍԵՎԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱՊՀ ԼՄ և ԲՏ և Կ սեկտոր

ԱՐՓԻՆԵ ՎԱԼԵՐԻԻ ՄՈՒՍԱԵԼՅԱՆ
ՀԱՊՀ ԼՄ և ԲՏ և Կ սեկտորի դասախոս

Համառոտագիր

Տեխնածին հանքավայրերի կադաստրի հիմնական նպատակն է ապահովել բոլոր արտադրական լցակույտերի, տեխնածին ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու պահպանումը, դրանց սեփականատերերի և ընդերքօգտագործողների իրավունքների պաշտպանությունը, բնօգտագործման և բնապահպանական վճարների սահմանման և արտադրական շրջանառության մեջ տեխնածին ռեսուրսների մասնակցության համար օբյեկտիվ հիմքերի ստեղծումը: Տեխնածին հանքավայրերի կադաստրը տեխնածին հանքային հումքի պաշարների իրավական, բնական և տնտեսական վիճակի, օգտագործման և պահպանության վերաբերյալ տեղեկությունների ամբողջությունն է:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ մետաղական տեխնածին հանքավայրերի կադաստրավորման խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիներն ու միջոցները:

Բանալի բառեր. *պոչամբար, հարստապոչեր, տեխնածին հանքավայր, վերամշակում, օգտահանում, կոնդիցիայի պարամետր, նվազագույն արդյունաբերական պարունակություն, կադաստրավորում:*

ОБЩИЕ ВОПРОСЫ КАДАСТРИРОВАНИЯ ТЕХНОГЕННЫХ МЕСТОРОЖДЕНИЙ

ГРАЧИК ГАРСЕВАНОВИЧ ГЕВОРКЯН, *к.э.н., доцент*
сектора горно-металлургической промышленности, экономики и управления природопользованием Национального политехнического университета Армении

АРПИНЕ ВАЛЬЕРЕВНА МУСАЕЛЯН
преподаватель сектора горно-металлургической промышленности, экономики и управления природопользованием Национального политехнического университета Армении

Аннотация

Основной целью кадастра техногенных месторождений является: обеспечение эффективного использования и сохранения всех производственных отвалов, техногенных ресурсов, защита прав их владельцев и пользователей недр, создание объективных основ для определения природоохранных и природопользовательских платежей, а также для участия техногенных ресурсов в производственном обороте. Кадастр техногенных месторождений представляет собой систематизированный свод сведений о правовом, природном и экономическом состоянии, использовании и охране техногенных минеральных сырьевых ресурсов. Целью статьи является исследование проблем кадастра техногенных месторождений металлических полезных ископаемых и предложение путей и средств их решения.

Ключевые слова: *хвостохранилище, хвосты обогащения, техногенное месторождение, переработка, утилизация, параметры кондиций, минимальное промышленное содержание, кадастрирование.*

ON GENERAL ISSUES OF INVENTORYING THE TECHNOGEN MINE SITES IN THE REPUBLIC OF AREMNIA

HRACHIK GARSEVAN GEVORGYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*
Sector of Mining and Metallurgical Industry, Economics, and Natural Resource Management
National Polytechnic University of Armenia

ARPINE VALERI MUSAYELYAN
Lecturer, Sector of Mining and Metallurgical Industry, Economics, and Natural Resource Management
National Polytechnic University of Armenia

Abstract

The main purpose of inventory and/or cadastre oftechnogen mine sites is to ensure effective use and maintenance of production piles, technogen resources; protect of rights of the owners and subsoil and mineral resource users; create objective foundation to determine natural resources rents and ensure use of technogen resources in the production process. The cadastre of technogen mine sites is a complete source of information on the legal, natural and economic status, use, and maintenance and/or preservation of mineral resources. The purpose of the article is to study the issues on inventorying metallic technogen mine sites and to propose approaches and measures to address them.

Keywords: *Tailing dump, enriched tailings, technogen mine site, processing, parameters, minimum industrial content, inventorying.*

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ խորհրդատու, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը Ռուսաստան արտահանում է պատրաստի արտադրանքի բացարձակ մեծամասնությունը: Նշենք, որ պատրաստի արտադրանքի արտահանումը, ի տարբերություն հումքի արտահանման, առանցքային հիմնախնդիր է տնտեսության համար: Ռուսաստանի ՀՆԱ-ն կազմում է ԵԱՏՄ երկրների ՀՆԱ 85%-ը[1], դրամական փոխանցումների (մասնավորապես՝ Հայաստան) կրճատվող ծավալները, ընդհանուր պահանջարկի իջնող մակարդակը հանգեցնում են ՀՆԱ աճի տեմպի նվազմանը և վճարային հաշվեկշռի վատթարացմանը ԵԱՏՄ երկրներում: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի վարկանիշների իջեցումը միջազգային գործակալությունների կողմից կարող է բացասաբար անդրադառնալ վարկային ռեսուրսների ստացման հնարավորությունների վրա:

Արտարժույթով բյուջետային եկամուտների կրճատումը, գնողունակության անկումը Ռուսաստանում, ներդրումների նվազումը բերեց Հայաստանից ներկրվող պատրաստի արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազեցմանը, ինչպես նաև կրճատվեցին Ռուսաստանից փոխանցվող տրանսֆերտները, որոնք կազմում են ընդհանուր տրանսֆերտների մոտ 80%-ը: Այստեղ իր դերն է ունեցել նաև այն, որ ռուսական ռուբլու փոխարժեքը դոլարի նկատմամբ էապես ավելի շատ նվազեց, քան հայկական դրամի փոխարժեքը: Ռուսական շուկայի պահանջարկի նվազումը արտաքին մարտահրավեր է Հայաստանի տնտեսության համար: Նշենք որ ռուսական շուկայի իրավիճակի բացասական երևույթները անդրադարձել են տարածաշրջանի բոլոր երկրների վրա և դա փաստացի կախված չէ Եվրասիական տնտեսական միության հետ:

Հակառակը, ԵԱՏՄ երկրներում տնտեսության անորոշության միջակայքի կտրուկ աճի պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման հավանականությունը կարող է էապես բարձրանալ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետ իրականացվող համաձայնեցված քաղաքականությամբ:

«ՌԴ արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքը[2] միջնաժամկետ հեռանկարում կարող է նպաստել այն բեկումնային ներուժի ստեղծմանը, որը թույլ կտա մոտ ապագայում հասնել արմատական փոփոխության երկարաժամկետ դինամիկ տնտեսական աճի ապահովման հնարավորությունների հարցում՝ հիմք ունենալով մարդկային և ինովացիոն ներուժը, հինգերորդ տեխնոլոգիական կարգի վերականգնման և վեցերորդ տեխնոլոգիական կարգին անցնելու համար պայմանների ստեղծման նպատակով: Սա կարող է նաև հիմք ծառայել, որպեսզի Ռուսաստանը ներկայանա ոչ թե միայն որպես խոշոր տարածաշրջանային երկիր, այլև պետություն՝ մեծ ներուժով, առաջին հերթին՝ տնտեսության այն ոլորտներում, որոնք կապահովեն նոր ինդուստրիալիզացումը: Ռուսաստանը մի շարք նորարարական ոլորտների գծով զբաղեցնում է աշխարհում առաջատար դիրքեր, բայց առայժմ դա համընդհանուր բնույթ չունի: Ռուսաստանը, կարող է էապես հզորացնել ինովացիոն հատվածը տնտեսության շատ ոլորտներում: Դա անհրաժեշտ է Ռուսաստանին, ակնհայտ է, որ դրանից պետք է օգտվի նաև Հայաստանը, քանի որ փոքր տնտեսություն ունեցող երկրները, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, սովորաբար չեն կարող արժանի տեղ գրավել արդի ինդուստրիալիզացման ոլորտում՝ առանց տարողունակ շուկայի, համաձայնեցված տնտեսական քաղաքականության և ֆինանսական ու հումքային ներուժի համատեղման: Այդ հնարավորությունից օգտվելու համար հրամայական է ելնելով ԵԱՏՄ պայմանագրի դրույթներից ձեռք բերել համապատասխան համաձայնություններ և իրականացնել դրանք: Նշենք, որ ԵԱՏՄ Պայմանագրի 4-րդ հոդվածը

[1] IMF, Gross domestic product, nominal

[2] Федеральный закон от 31.12.2014 N 488-ФЗ (ред. от 13.07.2015) "О промышленной политике в Российской Федерации"

ուղղակի նշում է, որ Միության հիմնական նպատակն է նաև ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացումը, կոոպերացիան և մրցունակության աճը[1]:

Գոյություն ունի առասպել այն մասին, թե զարգացած երկրների հետ ինտեգրման պարագայում կարելի է շատ արագ դառնալ ինովացիոն երկիր, բայց եթե համագործակցության այս վեկտորը չի համապատասխանում երկրի տնտեսական զարգացման իրական վեկտորին, ապա ակնկալվող արդյունքը չի ստացվի: Տնտեսական զարգացման վեկտորն առաջին հերթին որոշում են պետության տնտեսական շահերը, այլ ոչ թե այս կամ այն համաձայնագրերը: Բացի այդ, այստեղ կարևոր է ոչ միայն զուտ տնտեսական աճը, այլ նաև զարգացման սցենարը: Եթե ինտեգրացիան հանգեցնում է հիմնականում միայն ներքին շուկայի աշխուժացմանը՝ ի հաշիվ վարկերի, դրամաշնորհների և դրամական փոխանցումների, ապա հարկ կլինի երկար սպասել ՀՆԱ էական աճի և արդի ինովացիոն կառուցվածքի, դրա հավանականությունը շատ փոքր է: Իսկ եթե ինտեգրացիայի միջոցով էապես զարգացվի արտահանումը, ընդ որում՝ հնարավորինս բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքինը (այդ թվում՝ ինովացիոն), ապա դա, իհարկե, կայուն կերպով կնպաստի որակապես նոր տնտեսական աճի կայացմանը:

Հաջորդ արտաքին մարտահրավերը Եվրասիական տնտեսական միության ոչ համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունն է, որի համաձայնեցման պայմանները նշված են ԵԱՏՄ պայմանագրում և, չնայած բավականին լայն հնարավորություններ են տալիս, դրանք չեն կատարվում: Հայտնի է, որ կամայական միությունում մակրոտնտեսական ցուցանիշների համաձայնեցումը միության կարևորագույն հիմնախնդիրն է, օրինակ՝ Եվրամիությունում մակրոցուցանիշները համաձայնեցվում են 1992թ. ընդունված Մաստրիխտյան հայտանիշների հիման վրա՝ պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, պետական պարտքը՝ 60%-ը, գնաճը երկրում չպետք է գերազանցի ամենացածր գնաճային մակարդակը 1.5 տոկոսային կետով, երկարաժամկետ վարկավորման տոկոսադրույքները չպետք է գերազանցեն նվազագույնը 2 տոկոսային կետով, իսկ ազգային փոխարժեքը փաստացի փոխկապակցվում է եվրոյին[2]: ԵԱՏՄ-ում համաձայն պայմանագրի 63 հոդվածի պակասուրդը նույնպես չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը, պետական պարտքի նկատմամբ նույնիսկ ավելի խիստ ցուցանիշ է դրված՝ այն չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը, սակայն թույլ է տրվում, որ գնաճը տարբերվի նվազագույն գնաճից 5 տոկոսային կետով, փոխարժեքի մասով 64 հոդվածում չնայած նշվում է համաձայնեցված արժույթային քաղաքականության մասին, սակայն այդ դրույթը կոնկրետացված չէ: Նույնիսկ գնաճի վերաբերյալ բավականին լիբերալ այս ցուցանիշը չի կատարվում: Իսկ արժույթային քաղաքականությանը փաստացի չի համաձայնեցվում: Այսպես Հայաստանում գնաճը 2015թ. եղել է -0.1%, Ռուսաստանում՝ 13%, իսկ ԵԱՏՄ այլ երկրներում՝ նույնիսկ ավելի բարձր: Փաստացի լիարժեք չհամաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունը միությունում մարտահրավեր է հայկական ապրանքների արտահանման և տնտեսության զարգացման համար: Զարգացած փոքր երկրներում արտահանման և ՀՆԱ հարաբերակցությունը ցածր չէ 30%-ից, քանի որ ակնհայտ է, որ շուկան այնտեղ մեծ չէ, և արտահանումը դառնում է զարգացման վճռական գործոն:

Երրորդ մարտահրավերը տարածաշրջանի ոչ կայուն իրավիճակն է, որը պարտադրում է ռազմական ծախսերի աճ, ռազմաարդյունաբերական համալիրի և դրա հետ ուղղակի փոխկապակցված գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացում:

ՀՀ տնտեսության համար մարտահրավեր է նաև գունավոր մետաղների վերջին տարիներին գների ոչ բավարար դինամիկան: 2015թ. պղնձի գինը նվազել է 24% 6230 դոլարից, մինչև 4760 դոլար[3], ի դեպ գունավոր մետաղների խտանյութի արտահանումը Հայաստանում կազմում է մոտ 30%: Գունավոր մետաղների գների երկարաժամկետ անկումը արտաքին մարտահրավեր է. այստեղ որպես ներքին մարտահրավեր կարելի է նշել, որ գունավոր մետաղները արտահանվում են խտանյութով: Որպեսզի մեծացվի գունավոր մետաղների արտադրական համալիրի ավելացված արժեքը նպատակահարմար է իրականացնել համապատասխան փոփոխություններ տնտեսական քաղաքականությունում:

Կարծում եմ մարտահրավեր է նաև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցումը: Դա կարող է բերել բարձր իրական վերաֆինանսա-

[1] http://docs.cntd.ru/document/420205962

[2] http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=URISERV:l25014

[3] Динамика цен на медь (LME.Copper, USD за тонну) https://news.yandex.ru/quotes/1501.html

վորման տոկոսադրույքին, ոչ բավարար փողայնացման մակարդակին, միջազգային պահուստների կրճատմանը, պետական պարտքի աճին, արտահանման համար ոչ նպաստավոր պայմանների ստեղծմանը, պետական բյուջեի եկամուտների կրճատմանը և ՀՆԱ-ի աճի համար պայմանների վատթարացմանը: Ելնելով սահմանադրության դրույթներից ուղղակի անհրաժեշտ է, որ դրամավարկային քաղաքականությունը նպաստի ոչ միայն գների կայունությանը, այլ նաև ընդհանուր ֆինանսական կայունությանը:

Ներքին մարտահրավեր է կոռուպցիայի մակարդակը Հայաստանում, ինչը ձեռք է բերում առավել նշանակություն հատկապես ճգնաժամային իրավիճակում: Transparency International-ի դասակարգմամբ՝ կոռուպցիայի մակարդակը ԵԱՏՄ երկրներում չի կարելի բավարար համարել, վիճակը համեմատաբար բարվոք է գնահատվում Հայաստանում, թեև այստեղ էլ կոռուպցիայի ընկալման ինդեքսը դեռ բավարար չէ: Կոռուպցիայի ընկալման առավելագույն հնարավոր ինդեքսի (100 միավոր) պարագայում Հայաստանում այդ ինդեքսի մեծությունը հավասար է 35-ի, ԵԱՏՄ մյուս երկրներում՝ 32 և ավելի ցածր[1]: Հնարավոր 100 միավորից այդ ինդեքսի կրիտիկական շեմին՝ 50 միավորին, արագ հասնելը պետք է ուղենիշ դառնա Հայաստանի համար:

Արտահանման աճը առավել հավանական է այն ոլորտներում և այն երկրներում, որտեղ կա տվյալ ապրանքի պահանջարկը: Այն հնարավոր մակարդակի չի հասնում այն պատճառով, որ առայժմ բավարար չափով համաձայնեցված չէ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունը, ինչը պայմանավորված է նաև ԵԱՏՄ-ում ազգային արժույթների փոխարժեքների չհամաձայնեցվածությամբ: Հայաստանի համար արտահանման ներուժ ունեն գյուղատնտեսական և գինու-կոնյակի արտադրանքները, թեթև և քիմիական արդյունաբերությունը, գունավոր մետաղների խոր վերամշակումը, թանկարժեք քարերի և մետաղների մշակումը: Հատկապես առաջնահերթ է ռազմարդյունաբերության ոլորտի, գիտատեխնոլոգիական արտադրության էապես զարգացնելը և արտահանման նոր հնարավորությունների ստեղծումը:

Անհրաժեշտ է ճշգրտել և համաձայնեցնել տնտեսական քաղաքականության գերակայությունները, հստակ որոշել նրա նպատակները, ձևավորել ՀՀ տնտեսության զարգացման նոր մոդելը, կանխատեսել ակնկալվող արդյունքները: Չափազանց կարևոր է տնտեսական քաղաքականության, հատկապես դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության արձագանքը տնտեսական անվտանգության խախտման արձանագրվող ազդակներին՝ ՀՆԱ անկում, առևտրային հաշվեկշռի պակասուրդի մեծացում, գնաճի և գործազրկության աճ: Արտաքին բացասական ազդեցություններին դիմակայելու ունակությունը տնտեսության զարգացման կարևոր պայման է:

Նպաստավոր է նաև մշակել հակաճգնաժամային ծրագիրը, որը պետք է ունենա մի շարք կարևոր ուղղություններ, մասնավորապես՝ ոչ հումքային, հատկապես բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանմանն աջակցություն, փոքր և միջին բիզնեսի, պաշտպանության պատվերի իրականացման խրախուսում, բյուջետային եկամուտների և ծախսերի օպտիմալացում: Միասնական տնտեսական տարածքում պետք է հնարավորինս օգտվել կոոպերացիայի, նաև հակաճգնաժամային միջոցառումների առումով, հատկապես բարձր տեխնոլոգիական ապրանքների, պաշտպանության արտադրության ոլորտներում, հումքի վերամշակման խնդիրները լուծելիս:

Արտահանողներին և, առաջին հերթին՝ ներքին շուկայում ներմուծմանը փոխարինող արտադրությանը պետք է տրվեն պետական երաշխիքներ, որոնք, ի տարբերություն բյուջետային վարկերի, չեն ենթադրում առանց այդ էլ սահմանափակ պետական միջոցների ծախսում: Միևնույն ժամանակ, գերակայություն պետք է ունենա ոչ թե հումքային արդյունաբերությունն իր էքստենսիվ աճով, այլ այն ձեռնարկությունները, որոնք հենվում են հումքի վերամշակման խոր արդիականացման վրա՝ ավելացված արժեքի էական ավելացման նպատակով:

Նպատակահարմար է պետական երաշխիքներն առաջին հերթին տրամադրել արտադրության այն տեսակներին, որոնցում՝ օգտագործվում են տեղական հումքը, վերամշակումը հնարավոր է տեղում, կա կայուն պահանջարկ ներքին կամ համաշխարհային շուկայում և, հետևաբար, բարձր է տվյալ արտադրանքի արտահանման հնարավորությունը: Երաշխիքներ տրամադրելիս պետք է խրախուսել ընկերությունների՝ բաց տիպի ընկերությունների վերակազմակերպվելու հնարավորությունը: Հակառակ պարագայում փոքրանում է լուրջ ներդրումների հավանականությունը:

[1] https://www.transparency.org/country/#ARM

Անհրաժեշտ է արագացնել հարկման բարեփոխումը ինչպես հարկերի տոկոսադրույքների ճշտման, այնպես էլ վարչարարության մասով, ինչը թույլ կտա աշխուժացնել տնտեսությունը, այդ թվում շոշափելիորեն նվազեցնել ներկրվող ապրանքների մենաշնորհային մակարդակն ու խթանել արտահանման դիվերսիֆիկացիան: Ավելացված արժեքի հարկը Հայաստանում ավելի բարձր է, քան տարածաշրջանի երկրներում, ընդ որում՝ ավելի ցածր տոկոսադրույք չի կիրառվում: Նպատակահարմար է ԱԱՀ-ն նվազեցնել առնվազն 20-ից մինչև 18%-ի, իսկ որոշ ապրանքների համար սահմանել նույնիսկ ավելի ցածր: Հաշվի առնելով, որ այս միջոցները պետք է խթանեն տնտեսությունը, բյուջետային կորուստներ (հատկապես երկարաժամկետ առումով) չեն սպասվում: Անուղղակի հարկի իջեցումը, զսպելով անկումը, խթանում է տնտեսությունը, ինչպես նաև հակազդում է գնաճին: Նպատակահարմար է նաև ԵԱՏՄ երկրների մյուս հարկային տոկոսադրույքների համաձայնեցումը: Հայաստանում չեն կիրառվում նաև հումքի արտահանման մաքսատուրքերը:

Բյուջետային ծախսերի օպտիմալացումը, հատկապես ճգնաժամային իրավիճակում, չափազանց կարևոր է: Պետական բյուջեի ծախսերի կրճատումը, օրինակ, օտարերկրյա սարքավորումների և մեքենաների ձեռքբերման վրա, և նվազագույն աշխատավարձի ու թոշակի բարձրացումը նպաստում են ոչ միայն սոցիալական խնդիրների լուծմանը: Խթանվում է նաև հայրենական արտադրանքի ներքին պահանջարկը՝ հավելյալ ազդակ հաղորդելով հայրենական արտադրության, հատկապես գյուղատնտեսության զարգացմանը:

Բնակչության անապահով խավերի եկամուտների աճը՝ ի հաշիվ պետական բյուջեում առաջարկվող փոփոխությունների, հանգեցնում է առաջին հերթին հանրապետությունում արտադրվող արտադրանքի պահանջարկի աճին և ներկրվող արտադրանքի հանդեպ պահանջարկի համապատասխան կրճատմանը: Այս խմբում առաջին անհրաժեշտության արտադրանքների սպառման բաժինը էապես բարձր է: Հետևաբար, թոշակների և նպաստների բարձրացումը, սոցիալական խնդիրներ լուծելուց բացի, նպաստավոր է նաև տեղական արտադրության համար:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրում մի շարք բաժիններ առանցքային նշանակություն ունեն, մասնավորապես XIV՝ «Արժութային քաղաքականություն» բաժինը և համապատասխան N15 հավելվածը՝ «Համաձայնեցված արժութային քաղաքականության անցկացմանն ուղղված միջոցառումների մասին»: Այս բաժնի դրույթների առաջնահերթ կոնկրետացումը շատ կարևոր է ճգնաժամային իրավիճակում:

Այլ երկրների արժույթներից կախվածությունը նվազեցնելը, ազգային արժույթի դերի և ոսկու պաշարների նշանակալիության բարձրացումը արտաքին տնտեսական հաշվարկներում արդարացված են: Բայց դա արդյունք չի տա, եթե չիրականացվի համաձայնեցված դրամավարկային քաղաքականություն: Անհրաժեշտ է փուլային անցում, որպեսզի Եվրասիական տնտեսական միության երկրներում գնաճը 5%-ից բարձր չլինի: Իսկ ազգային արժույթների փոխարժեքների նվազումը ԱՄՆ և Եվրամիության արժույթների համեմատ պետք է համապատասխանի գնաճին: Միևնույն ժամանակ, պետք է ապահովել փողայնացման աճը և ունենալ տնտեսության զարգացմանը համապատասխանող իրական վերաֆինանսավորման տոկոսադրույք:

Ռուսաստանում փողայնացման մակարդակը մոտ 50% է, ԵԱՏՄ մյուս երկրներում՝ էլ ավելի ցածր, այն դեպքում, երբ Եվրամիության երկրներում այդ ցուցանիշը 100%-ի կարգի է: Չինաստանում և Ասիայի արագ զարգացող երկրներում դրամայնացումը զգալիորեն բարձր է 100%-ից[1]: Տնտեսության զարգացմանը նպաստող իրական վերաֆինանսավորման տոկոսադրույքը նպաստավոր է նաև փողայնացման մակարդակի փուլ առ փուլ մոտեցմանը 70%-ի սահմանին, հակառակ դեպքում պարբերաբար առաջ կգան որոշակի դժվարություններ տնտեսության կայուն աճի և դրա դիվերսիֆիկացման հնարավորությունների հետ կապված:

Անհրաժեշտ է մշակել կոռուպցիայի հակազդման համաձայնեցված միջոցառումներ, այստեղ, ի դեպ, դեր կարող է ունենալ նաև Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 69-րդ՝ «Թափանցիկություն» հոդվածը:

Անարդյունավետությունը, հատկապես կոռուպցիոն դրսևորումները սկզբից ևեթ պետք է հանգեցվեն նվազագույնի: Դա շատ ավելի արդյունավետ է, քան կամա թե ակամա կոռուպցիոն ռիսկեր թույլ տալը և դրանից հետո միայն դրանք վերահսկելն ու չարաշահումները բացահայտելը: Վաղուց հասունացել է հակակոռուպցիոն փորձաքննության, հատկապես տնտեսական գործունեությունը կարգավորող օրենքների անհրաժեշտությունը:

[1] World Bank data, Money and quasi money (M2) as % of GDP

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՇՈՏ ԱՂԱՍՈՒ ԹԱՎԱԴՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՊՏՀ խորհրդատու, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ներկայացված են ՀՀ տնտեսության արտաքին և ներքին մարտահրավերները: Որպես արտաքին մարտահրավեր նշվում են Ռուսաստանում գնողունակության անկումը, Եվրասիական տնտեսական միության ոչ համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականությունը և տարածաշրջանի ոչ կայուն իրավիճակը: Որպես մարտահրավեր նշվում է նաև գունավոր մետաղների գների փոփոխությունը: Հայաստանի ներքին մարտահրավերներից են դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ բավարար համաձայնեցումը, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակը: Ներկայացված են տվյալ մարտահրավերների հաղթահարման ուղիները:

Բանալի բառեր. *արտաքին մարտահրավերներ, ներքին մարտահրավերներ, ԵՍՏՄ, դրամավարկային քաղաքականություն, հարկաբյուջետային քաղաքականություն, կոռուպցիա, արտահանում, գերակայություններ, հակաճգնաժամային ծրագիր:*

ВНЕШНИЕ И ВНУТРЕННИЕ ВЫЗОВЫ ЭКОНОМИКИ АРМЕНИИ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

АШОТ АГАСИЕВИЧ ТАВАДЯН, *д.э.н., профессор*
консультант, заведующий кафедрой экономико-математических методов
Армянского государственного экономического университета
главный научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье представлены внешние и внутренние вызовы экономики Армении.В качестве внешних вызовов отмечены снижение покупательной способности в России, несогласованная макроэкономическая политика ЕАЭС и нестабильная ситуация в регионе, а также изменение цен на цветные металлы. В числе внутренних вызовов Армении выделены недостаточная координация денежно-кредитной и налогово-бюджетной политики, а также высокий уровень коррупции. Представлены пути преодоления данных вызовов.

Ключевые слова*: внешние вызовы, внутренние вызовы, ЕАЭС, денежно-кредитная политика, налогово-бюджетная политика, коррупция, экспорт, приоритеты, антикризисная программа.*

EXTERNAL AND INTERNAL CHALLENGES OF ARMENIA'S ECONOMY AND WAYS TO OVERCOME THEM

ASHOT AGHASI TAVADYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Adviser, Head of Chair of Mathematical Methods in Economics, Armenian State University of Economics
Chief Research Associate, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article presents the external and internal challenges the Armenian economy faces. The decline in the purchasing power in Russia, uncoordinated macroeconomic policies of the EAEU member-countries and unstable situation in the region are among the external challenges. The fluctuation in the prices of nonferrous metals is an external challenge the economy of Armenia faces as well. As internal challenges the article highlights the lack of coordination of monetary and fiscal policies, as well as the level of corruption. The author presents approaches toaddressing and overcoming these challenges.

Keywords: *External challenges, internal challenges, EAEU, monetary policy, fiscal policy, corruption, exports, priorities, crisis response program.*

ՔՆԱՐԻԿ ՀՐԱՀԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ասպիրանտ

ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ծախսերի հաշվառումը ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այնպես էլ գինեգործության ոլորտում կառավարման առաջնահերթ նպատակն է, որն ուղղված է կալկուլյացիայի կատարելագործմանը և յուրաքանչյուր արտադրատեսակի գծով ծախսումների ու ծախսերի վերահսկողությանը: Ծախսերի հաշվարկման ողջ գործընթացը հիմք է հանդիսանում արժեքի որոշման համար և այն ներկայացնում է կանոնների ու սկզբունքների մի ամբողջություն, որի հիման վրա հաշվարկվում է ինքնարժեքը[1]:

Ծախսն ըստ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումն է, որը տեղի է ունենում ակտիվների արտահոսքի, դրանց նվազման, պարտավորությունների առաջացման կամ աճի ձևով, որն էլ հանգեցնում է սեփական կապիտալի իջեցման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա իջեցման դեպքի: Ծախսերի ճշգրիտ դասակարգումը հիմք է հանդիսանում ինքնարժեքի հաշվարման համար[2]: Ծախսերը և ծախսումները դասակարգվում են որպես հիմնական և վերադիր, արտադրական և ոչ արտադրական, վերադարձվող և չվերադարձվող, պլանավորված և չպլանավորված, արտադրական և կոմերցիոն, ընթացիկ և միանվագ, միատարր և բազմատարր, այլընտրանքային և տարբերակված, վերահսկելի և անվերահսկելի և այլն[3]: Ըստ արտադրության ծավալից ունեցած կախվածության ծախսումները լինում են փոփոխուն, հաստատուն, կիսափոփոխուն և այլն[4]:

Արտադրանքի ինքնարժեքն իրենից ներկայացնում է արտադրության ընթացքում օգտագործված ապրանքների, հումքի, նյութի, էներգիայի, հիմնական միջոցների, աշխատանքային ռեսուրսների, աշխատանքների և ծառայությունների արժեքը, ինչպես նաև մնացած բոլոր ծախսումները, որոնք կապված են արտադրության և իրացման հետ:

Ինքնարժեքի մեջ ներառվելու տեսանկյունից ծախսերը լինում են ուղղակի և անուղղակի: Հաշվապահական հաշվառման մեջ օգտագործվում են ծախսերի հաշվառման և ինքնարժեքի որոշման հետևյալ տեսակները[5].

- պատվերային,
- սովորական,
- նորմատիվներով կարգավորվող (standard cost),
- ուղղակի ծախսեր (direct costing):

Ըստ կառավարման տեսանկյունից ինքնարժեքի որոշման համար կիրառվում են հետևյալ մեթոդները.

- պատասխանատու կենտրոնների մեթոդը,
- ABM մեթոդը (always better control):

Գինեգործության ոլորտում արտադրանքի իրացման ծախսերը և արտադրության ծախսումները ծագում են արտադրամասերում, տեղամասերում տեխնոլոգիական որոշակի փուլերում, ուստի վերջիններիս հաշվառումը դրանք խմբավորում են ըստ ծագման և վերահսկողության կենտրոնների: Իսկ երկրորդ տարբերակի դեպքում որոշվում է յուրաքանչյուր փուլի համար նյութի նկատմամբ պահանջարկը, և հաշվարկվում են դրանցից տեսակարար կշիռները:

---

[1] Աղբյուրը՝ Cost and managment accounting modul 1, paper , Study material, The Institute of Company Secretaries of India, 2013y., p.2.

[2] Աղբյուրը՝ Н.В. Пошерстник, М.С.Мейксин “Самоучитель по бухгалтерскому учету” Издание седьмое, переработанное и дополненное по состоянию на 1 октября 2002 года Москва - Санкт-Петербург«2003г. стр. 84

[3] Աղբյուրը՝ Cost and managment accounting modul 1, paper , Study material, The Institute of Company Secretaries of India, 2013y., p.7.

[4] Աղբյուրը՝ «Հաշվապահական հաշվառման պարզեցված ուղեցույց փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար», Գիրք 1, Երևան, 2006թ., Էջ 105:

[5] Աղբյուրը՝ Ю.Ю. Кончинев, Аудит организаций пазлищчних видов деятельности, Питер, Москва, Сантк Петербург, 2010 , стр 9-10.

Վերոնշյալները պարզաբանելու նպատակով ներկայացվել է «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2014 թվականի գինու արտադրատեսակների համար ինքնարժեքի տեսակները (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

«Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2014 թ. ինքնարժեքի տեսակները (հազ դրամ)

Ծախսումները	Տեխնոլոգիական ինքնարժեք	Լրիվ ծախսումներով ինքնարժեք	Մասնակի ինքնարժեք	Փոփոխուն ինքնարժեք
Տեխնոլոգիական ծախսումներ	**867 180.0**	867 180.0		
Ինքնարժեք	867 180.0			
Ուղղակի այլ ծախսումներ	563 667.2	563 667.2		
Ընդամենը ուղղակի ծախսեր		1 430 847.2		
Անուղղակի ծախսումներ	81 109.6	81 109.6		
Ինքնարժեք		**1 511 956.8**		
Փոփոխուն ծախսումներ			1 438 958.0	1 438 958.0
Հաստատուն ծախսումներ			72 999.0	72 999.0
Ինքնարժեք			**1 438 958.0**	
Իրացման փոփոխուն ծախսեր				274 539.8
Իրացման հաստատուն ծախսեր				5 032.3
Ընդամենը իրացման ծախսեր	279 572.1	279 572.1	279 572.1	279 572.1
Ինքնարժեք				**1 713 497.7**
Վարչական ծախսեր	198 462.4	198 462.4	198 462.4	198 462.4
Լրիվ ինքնարժեք	**1 989 991.5**	**1 989 991.5**	**1 989 991.5**	**1 989 991.5**

Գինեգործական կազմակերպություններում ինքնարժեքի հաշվարկի ժամանակ կարելի է առանձնացնել հինգ մակարդակ, որի ժամանակ առաջնային ծախսումներով ձևավորված ինքնարժեքը տեխնոլոգիական ինքնարժեքն է, որին հետագայում ավելանալով ծախսումների և ծախսերի մյուս գումարները, ձևավորվում է լրիվ ինքնարժեքը: Տվյալ պարագայում տեխնոլոգիական ինքնարժեքը 2014 թվականի համար կազմել է 867 180.0 հազ դրամ, մասնակի ինքնարժեքը՝ 1 438 958.0 հազ դրամ (867 180.0+563 667.2+8 110.8), արտադրական ինքնարժեքը՝ 1 511 956.8 հազ դրամ (867 180.0+563 667.2+81 109.6), իսկ փոփոխուն ինքնարժեքը՝ 1 713 497.7 հազ դրամ (1 438 958.0+274 539.8): Այսպիսով, տեխնոլոգիական ինքնարժեքը ներառում է միայն տեխնոլոգիապես անհրաժեշտ ծախսումները, իսկ ուղղակի այլ ծախսումները տեխնոլոգիական գործընթացի մեջ չեն ներառվում: Մասնակի և արտադրական ինքնարժեքի մեջ կենտրոնականը տեխնոլոգիական ինքնարժեքն է, բացի որից առաջինի մեջ ներառվում են տեխնոլոգիական փոփոխուն ծախսերը, ուղղակի փոփոխուն ծախսումները, իսկ արտադրական ինքնարժեքի դեպքում ներառվում են ուղղակի այլ ծախսումները և անուղղակի ծախսումները: Փոփոխուն ինքնարժեքի ձևավորման ժամանակ ներառվում են տեխնոլոգիական և փոփոխուն ծախսումները, իսկ լրիվ ինքնարժեքը ներառում է բոլոր տեսակի ծախսերը և ծախսումները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվող ընկերությունում, իր ուրույն դերն ունի գինեգործությունը, ուստի այս ոլորտի ինքնարժեքի ձևավորման կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ արտադրանքի պատրաստի դառնալու համար այն պետք է տարիներով պահվի համապատասխան տարաներում հասունացման նպատակով: Ստացվում է, որ մինչև հասունացումը դեռ ոչ լիովին պատրաստ արտադրանքը նախորդ բոլոր ժամանակաշրջանների համար դիտարկվում է որպես անավարտ արտադրանք:

Քանի որ գինեգործության ոլորտում արտադրությունը իրականացվում է փուլերով, որոնցից յուրաքանչյուրի վերջնական արդյունքը լինում է կիսապատրաստուկը, ըստ այդմ էլ՝ ինքնարժեքը ձևավորվում է բազմաստիճան համակարգով: Այդ դեպքում հարկ է լինում կատարել կիսապատրաստուկի՝ ըստ յուրաքանչյուր փուլի քանակի ու ծախսումների հաշվառում[1]:

[1] Աղբյուրը՝ И.Гулина Л.Х. Икандрова “Бухгалтерский управленческий учет” Москва 2007 стр. 49.

Աղյուսակ 2

«Ոռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2014 թ. գինու արտադրական ինքնարժեքն ըստ արտադրական փուլերի (հազ դրամ)

Ցուցանիշները	Ուղղակի ծախսումներ	Անուղղակի ծախսումներ	Ընդամենը
Արտադրական ինքնարժեք	**1 430 847.2**	**81 109.6**	**1 511 956.8**
Գինենյութի ստացման փուլ	**572 338. 7**	**32 444.0**	**604 782.7**
Նյութական ծախսումներ	479 680.3	-	479 680.3
Աշխատավարձ	51 200.0	29 840.0	81 040.0
Սոց. վճար	4950.0	3100.0	8 050.0
Մաշվածություն		8 250.0	8 250.0
Նորոգման ծախսումներ	15550.0	6020.0	27 862.4
Հնեցման և կուպաժի փուլ	**214 627.1**	**12 166.4**	**226 793.5**
Աշխատավարձ	50 500.0	31 500.0	82 000.0
Սոց. վճար	5 100.0	3 150.0	8 250.0
Մաշվածություն		6 700.0	6 700.0
Նորոգման ծախսումներ	101 000.0	28 813.5	129 813.5
Շշալցման փուլ	**643 881.2**	**36 499.4**	**680 380.6**
Նյութական ծախսումներ	195 095.0	-	195 095.0
Աշխատավարձ	32 000.0	20 000.0	54 000.0
Սոց. վճար	1800.0	1200.0	3 000.0
Մաշվածություն	-	28 500.0	28 500.0
Այլ ծախսումներ	352 585.6	-	352 585.6
Նորոգման ծախսումներ	-	47 200.0	47200.0

Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տվյալներից, գինու արտադրական ինքնարժեքի 5.36%-ը կազմում են անուղղակի ծախսումները, իսկ 94.64%-ը՝ ուղղակի ծախումները: Խաղողի վերամշակման և գինենյութի ստացման փուլի ընթացքում ձևավորվում է ինքնարժեքի մոտ 40%-ը, հնեցման և կուպաժի փուլում՝ 14.9% -ը, իսկ շշալցման փուլը ապահովում է ինքնարժեքի 45.1%–ը:

Ոլորտի առանձնահատկությունը ենթադրում է ինքնարժեքի ձևավորման համար նյութական ծախսումների առանձնացում, իսկ քանի որ գինեգործական արտադրանքի արտադրությունը փուլային է, հետևաբար՝ ինքնարժեքը հաշվարկվում է յուրաքանչյուր փուլում յուրովի: Այս մեթոդի դեպքում հումքի վերամշակումից մինչև վերջնական արտադրանքի թողարկումը իրականացված արտադրական ծախսումները կազմում են ամբողջական ինքնարժեքը, իսկ յուրաքանչյուր արտադրամասում ձևավորվում է կիսապատրաստուկի ինքնարժեքը:

Գինեգործության ոլորտի ինքնարժեքի ուսումնասիրման բնագավառում կարևորվում է տեխնոլոգիական ինքնարժեքի ուսումնասիրությունը, որը ձևավորվում է գինենյութի ստացման ու մշակման, հնեցման ու կուպաժի փուլերում: Ուսումնասիրվող կազմակերպության գինու արտադրատեսակների գծով ըստ տնտեսական տարրերի տեխնոլոգիական ինքնարժեքը ներկայացվել է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

«Ոռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2014 թ. գինու տեխնոլոգիական ինքնարժեքն ըստ տնտեսական տարրերի (հազ դրամ)

Արտադրատեսակներ	Նյութական ծախսումներ	Աշխատա-վարձ	Սոց. վճար	Այլ տեխ ծախսումներ	Տեխ. ինքնարժեք
Հայկական գինիների հավաքածու	70740.0	19587.0	2880.0	38560.0	131767.0
Նռան (18 տեսակ)	211420.0	58752.0	3620.0	115500	389292.0
Ասպետի հավաքածու	82180.0	22850.0	2050.0	44800	151880.0
Կազոր	11740.0	3264.5	200.0	6378.0	21582.5
Սապերավի	12400.0	3320.5	180.0	6410.0	22310.5
Այլ տեսակներ	80500.0	22806.0	3670.0	43372.0	150348.0
Ընդամենը	**468980.0**	**130580.0**	**12500.0**	**255120.0**	**867 180.0**

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, ընդհանուր տեխնոլոգիական ինքնարժեքի 54%-ը կազմում են նյութական ծախսերը, աշխատավարձի և սոցիալական վճարների տեսակարար կշիռը կազմում է 16.5%, իսկ այլ ծախսումները՝ 29.5%:

Ուղղակի նյութական ծախսումներն ու ուղղակի աշխատանքային ծախումները հանդիսանում են փոփոխուն ծախսումներ, հետևաբար փոփոխուն ինքնարժեքի ձևավորումը այս փուլում առանձնապես չի տարբերվում արտադրական ինքնարժեքից՝ բացառությամբ հաստատուն ծախսումների չներառման պարագայի: Գինու փոփոխուն ինքնարժեքը ներկայացվել է հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 4

«Ոռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2014 թ. գինու փոփոխուն ինքնարժեքն ըստ փուլերի (հազ դրամ)

Ցուցանիշներ	Փոփոխուն ծախսումներ	Փոփոխուն ծախսեր	Ընդամենը
Փոփոխուն ինքնարժեք	**1287517.7**	**425980.0**	**1 713 497.7**
Գինենյութի ստացման փուլ	**504706.5**		**504706.5**
Նյութական ծախսումներ	416200.0		416200.0
Աշխատավարձ	26500.0		26500.0
Սոց. վճար	1800.0		1800.0
Սպասարկման և նորոգման ծախսումներ	39850.0		39850.0
Այլ ծախսումներ	20356.5		20356.5
Հնեցման և կուպաժի փուլ	**204400.0**		**204400.0**
Աշխատավարձ	25800.0		25800.0
Սոց. վճար	1650.0		1650.0
Սպասարկման և նորոգման ծախսումներ	107950.0		107950.0
Այլ ծախսումներ	69000.0		69000.0
Շշալցման փուլ	**578411.2**		**578411.2**
Նյութական ծախսումներ	296500.6		296500.6
Աշխատավարձ	10500.0		10500.0
Սոց. վճար	1000.0		1000.0
Սպասարկման և նորոգման ծախսումներ	101200.0		101200.0
Այլ ծախսումներ	169210.6		169210.6
Իրացման փուլ		**425980.0**	**425980.0**
Նյութական ծախսեր		**425980.0**	**425980.0**

Այսպիսով, գինու ոլորտում ծախսերի և ինքնարժեքի հաշվառումն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են ոլորտի յուրահատկություններով, մասնավորապես՝

1. Մշտապես առկա է անավարտ արտադրանքի մնացորդ:
2. ՀՀ-ում խաղողի սեզոնային բերքահավաքից սկսած մինչև գինենյութի ստացումը ավարտվում է դեկտեմբերի սկզբին, և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս անավարտ հոդվածը ներառում է նաև տվյալ տարվա մնացած արտադրանքը:
3. Տվյալ տարում հաշվետու ժամանակաշրջանի ծախսումներին գումարվում է նախորդ տարիների անավարտ արտադրանքի ինքնարժեքը և հանվում է այն արտադրատեսակների ինքնարժեքը, որոնց հասունացման ժամկետը ավարտվում է տվյալ տարում:
4. Անավարտ արտադրանքը գտնվում է կոնկրետ արտադրամասում՝ հասունացման և կուպաժի արտադրամասն անալիտիկ հաշվառման ենթարկելիս, ստացվում է, որ անավարտ արտադրանքի մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջում պետք է դուրս գրվեն հաշվեկշռային հաշվին, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում պետք է փոխանցվեն 811 արտադրամասի հաշվին այլ գումարով, քանի որ որպես պատրաստի արտադրանք կարող է բոլորովին այլ խմբաքանակ ուղղվել շշալցման:

5. Հիմնական արտադրության հաշիվը ձևավորվում է անավարտ արտադրանքի սկզբնական մնացորդով, այնուհետև հաշվետու ժամանակաշրջանի ծախսումներով, որոնք կարող են և ամբողջությամբ վերագրվել անավարտ արտադրանքին, իսկ անավարտ արտադրանքի այն մասը, որը տեխնոլոգիապես համարվում է արդեն հասունացած, որպես պատրաստի արտադրանք, պետք է անցնի շշալցման արտադրամաս: Դրանցից են՝

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք որոշակի առաջարկությունների՝

1. Անհրաժեշտ է կատարել կիսապատրաստուկի քանակի ու ծախսումների հաշվառում՝ ըստ յուրաքանչյուր փուլի և ըստ յուրաքանչյուր արտադրատեսակի: Փուլային մեթոդի դեպքում արտադրական ծախսումները սկսած հումքի վերամշակումից մինչև վերջնական արտադրանքի թողարկումը, անհրաժեշտ է հաշվարկել յուրաքանչյուր արտադրամասում՝ ներառելով այն կիսապատրաստուկի ինքնարժեքը, որը ստացվել է նախորդ արտադրամասում:
2. Արտադրական ինքնարժեքը, բացի ուղղակի արտադրական ծախսումներից, ներառում է նաև անուղղակի արտադրական ծախսումները, որոնք բաշխվում են արտադրատեսակի վրա՝ բաշխման որոշակի բազայով, ուստի առաջարկվում է ինքնարժեքին վերագրելու փոխարեն այս ծախսերը վերագրել իրենց կատարման ժամանակաշրջանին համահունչ ֆինանսական արդյունքներին:
3. Արտադրատեսակի տարայի արժեքին, փաթեթավորմանը ուղղվող ուղղակի ծախսերը, որոնք հանդիսանում են իրացման փոփոխուն ծախսեր, առաջարկվում է ուղղակիորեն վերագրել տվյալ արտադրատեսակին և ուղղակիորեն ներառել այդ արտադրատեսակի ինքնարժեքում:
4. Կազմակերպությունում կիրառվող ոչ կիսապատրաստուկային մեթոդը ձեռնտու չէ, քանի որ անհրաժեշտ է կատարել անավարտ արտադրանքի գույքագրում բոլոր արտադրամասերում, արդյունքում հնարավոր չի լինում որոշել մի արտադրամասից մյուսին անցնող կիսապատրաստուկի ինքնարժեքը: Այս առումով առաջարկվում է կիրառել կիսապատրաստուկային տարբերակը, որի դեպքում կիսապատրաստուկի ինքնարժեքը և դրա կալկուլյացիան որոշվում է արտադրամասից արտադրամաս փոխանցելիս: Այս առումով առաջարկվում է ներմուծել սեփական արտադրության կիսապատրաստուկների ենթահաշիվների համակարգը:

ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ՀՐԱՀԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածում գինեգործության ոլորտում ծախսերի և ինքնարժեքի ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով կատարվել է ծախսերի և ծախսումների, ինքնարժեքի ձևավորման փուլային եղանակի և ըստ տնտեսական տարրերի ուսումնասիրություն: Գինեգործության ոլորտում գործող ընկերությունների առջև դրված խնդիրները այս առումով կարելի է բաժանել 2 խմբի՝ ծախսերի կալկուլյացիայի կատարելագործում և հաշվառման և վերահսկողության մեթոդաբանության կատարելագործում:

Քանի որ գինեգործական արտադրանքի արտադրությունը փուլային է, հետևաբար՝ ինքնարժեքը հաշվարկվում է յուրաքանչյուր փուլում յուրովի: Բոլոր փուլերի արտադրական ծախսումների և տվյալ փուլում ստացված կիսապատրաստուկի քանակի հարաբերության հանրագումարով ձևավորվում է պատրաստի արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան, իսկ գինեգործության դեպքում՝ անավարտ արտադրանքի ինքնարժեքը, որով հետագայում ձևավորվում է պատրաստի արտադրանքի միավորի ինքնարժեքը:

Բանալի բառեր. *հաստատուն և փոփոխուն ծախսումներ, ուղղակի և անուղղակի ծախսումներ, իրացման ծախսեր, տեխնոլոգիական և մասնակի ինքնարժեք, փոփոխուն և լրիվ ինքնարժեք:*

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ЗАТРАТ И СЕБЕСТОИМОСТИ В СФЕРЕ ВИНОДЕЛИЯ

КНАРИК ГРАГАТОВНА ХАЧАТРЯН
аспирант кафедры управленческого учета и аудита Армянского государственного экономического университета

Аннотация

В статье целях исследования особенностей формирования затрат и себестоимости в сфере виноделия проведено исследование расходов и затрат, формирования себестоимости поэтапным способом и по экономическим элементам. В сфере виноделия задачи, поставленные перед действующими компаниями, с этой точки зрения можно разделить на две группы: совершенствование калькуляции расходов и совершенствование методологии учета и контроля. Поскольку производство продукции виноделия является поэтапным, то себестоимость на каждом этапе производства рассчитывается особо.

Отношением суммы производственных затрат всех этапов производства к объему полуфабрикатов, полученных на данном этапе технологического процесса, исчисляется себестоимость готовой продукции, а в случае с виноделием–себестоимость незавершенной продукции, которой в дальнейшем формируется себестоимость единицы готовой продукции

Ключевые слова: *постоянные и переменные затраты, прямые и косвенные затраты, расходы по реализации, технологическая и частичная себестоимость, переменная и общая себестоимость.*

THE PECULIARITIES OF PRIME COSTS AND EXPENSES IN THE WINEMAKING

KNARIK HRAHAT KHACHATRYAN
Ph.D. Student, Chair of Managerial Accounting and Auditing
Armenian State University of Economics

Abstract

To study the expenses and features of the prime cost in the winemaking, an analysis of the costs and expenses, was carried out in accordance with the stages method with respect to the investigation of the economic elements. In this regard, in the sphere of winemaking, the tasks for the existing companies are divided into the following two groups; improvement of cost calculation and development of the methodology of calculation and supervision. As the production of the wine-products is implemented on stage-by-stage basis, the prime cost in each stage is being calculated in consideration of the peculiarities of each stage. Calculation of the prime cost of the final product is determined through the ratio of the total costs in all the stages to the quantity of the unfinished products in a certain stage, while in case of wine-making the mentioned method determines the prime cost of the unfinished product. Based upon the prime cost of the unfinished product the prime cost of the unit of the final product is determined in the later stages.

Keywords*: Fixed and variable costs, direct and indirect costs, sales cost, technological and partial costs, variable and full costs.*

ԲԵԱՏՐԻՍԱ ԿԱՐՊԻՍԻ ԿԵՈՎՏԵՐԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կարևոր նշանակություն ունի ցանկացած երկրի տնտեսության զարգացման և հասարակության կենսամակարդակի բարելավման համար: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնախնդիրներին անդրադառնալիս, առաջին հերթին, անհրաժեշտ է հստակ որոշել, թե ինչ է իրենից ներկայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը**:**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) մասնագիտական գործունեություն է, որը հիմնված է գիտականորեն մշակված և նորմատիվ ամրագրում ստացած մեթոդների և չափանիշների վրա, իսկ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխման նպատակով փորձաքննությունը ընկերությունների կողմից նախատեսվող գործունեության համապատասխան ստուգումն է պահանջներին: Ազդեցության փորձաքննություն կարող է իրականացվել միայն ազդեցության գնահատականի հիման վրա, այսինքն՝ սահմանված կարգով ազդեցության գնահատական տրվելուց հետո միայն:

Կարևոր է նաև իրավաբանորեն հստակ սահմանել, որ ՇՄԱԳ-ը փորձագիտական նշանակություն և արժեք ունեցող փաստաթուղթ է, իսկ ՇՄԱՓ-ը՝ վարչական ակտ, որը ենթակա է սահմանված կարգով, այդ թվում՝ դատական կարգով բողոքարկման: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը փաստաթղթերի այն փաթեթն է, որում ընդգրկված է նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ամբողջական և համապարփակ տեղեկատվություն՝ նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության բոլոր տեսակների, այդ ազդեցության համաչափության և թույլատրելիության, տեխնիկական հնարավորությունների և այլ հարցերի վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը առաջացել է անգլերեն EIA հապավումից (EIA՝ Environmental Impact Assessment) և կիրառվում է որպես Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջազգային միության (IAIA, International Association for Impact Assessment[1]) եզրույթ: Վերջինիս միջոցով հիմնավորվում է շրջակա միջավայրի և հասարակական առողջության վրա պլանավորվող տնտեսական գործունեության ցանկացած տեսակների ազդեցության վտանգավորության աստիճանի և ինտենսիվության բացահայտումը: Կարելի է ասել, որ ՇՄԱԳ-ը վերաբերում է այն ուղղությանը, որն ունի նախագծերի գնահատման ընդհանուր «հովանոցային բրենդ»: ՇՄԱԳ-ի անցկացումը պլանավորվող տնտեսական և գործունեության այլ տեսակների համար նախատեսվում է «Էկոլոգիական փորձաքննության մասին» օրենքով, ինչը Հայաստանի Հանրապետությունում կոչվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք[2]: Նշված օրենքի հոդված 4-ի համաձայն, այսպիսի փորձաքննության նպատակն է կանխորոշել, կանխել կամ նվազեցնել գաղափարի և պլանավորված գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական բնականոն զարգացման վրա: Բացի այդ, օրենքը նախատեսում է փորձաքննության ենթակա գործունեությունների ցանկը:

Պետք է նշել, որ ՇՄԱԳ-ը նպաստում է էկոլոգիապես խելամիտ կառավարչական որոշումների ընդունմանը, ինչպիսիք են՝ նախատեսվող տնտեսական և գործունեության այլ տեսակների իրականացման հնարավոր անբարենպաստ ազդեցությունների որոշումը, էկոլոգիական

[1] http://www.americanbar.org/content/dam/aba/publications/natural_resources_environment/Winter%202016/NRE_v030n03_feat01_Cullen.authcheckdam.pdf

[2] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք: ՀՕ-110-Ն: ՀՀՊՏ 2014.07.30/41(1054):

հետևանքների գնահատումը «հասարակական կարծիքի» չանտեսումը, «ազդեցությունների նվազեցման և կանխարգելման» միջոցառումների մշակումը և այլն[1]:

Փորձենք ավելի մանրամասնորեն անդրադառնալ այդ մասնակիցներին: ՇՄԱԳ-ի գործընթացում մասնակցում են պատվիրատուն, ազդեցության գնահատման աշխատանքների կատարողը և հասարակայնությունը[2]:

- **Պատվիրատուն** ֆիզիկական կամ իրավաբանական անձ է պատասխանատու նախատեսվող գործունեության փաստաթղթերի պատրաստման համար ՝ համաձայն նորմատիվային պահանջների, որոնք ներկայացվում են տվյալ գործունեության տեսակին՝ էկոլոգիական փորձաքննության անցկացման դեպքում:
- **Կատարողը** ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որն իրականացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը, և որին պատվիրատուն իրավունք է տվել կատարել գնահատման աշխատանքները: Կատարողը պատասխանատու է գնահատման ամբողջականության ու հավաստիության, ինչպես նաև դրանց՝ էկոլոգիական ստանդարտներին ու նորմատիվներին համապատասխանության համար:
- **Հասարակայնությունը** կարող է գործընթացի մեջ ընդգրկվել սկզբնական տեղեկատվության տրամադրման և ՇՄԱԳ-ի անցկացման փուլերում, մասնակցել հասարակական լսումներին և քննարկումներին:

Բացի այդ, կարևոր հարցադրումներից են նաև ՇՄԱԳ-ի սկզբունքները[3]՝

- ՇՄԱԳ-ի՝ որպես լուծումների ձևավորման գործիքի կիրառում,
- նախագծի տեխնոլոգիական, տեխնիկական, սոցիալական, բնապահպանական և տնտեսական ցուցանիշների համալիր դիտարկում,
- նախագծային լուծումների այլընտրանքայնություն, նոր տարբերակների մշակումը,
- օբյեկտի շահագործման հետ կապված հնարավոր բացասական հետևանքների համար պատվիրատուի պատասխանատվություն:

Ինչպես հայտնի է, պատվիրատուն կրում է ՇՄԱԳ-ի կատարման հետ կապված բոլոր ծախսերը և ՇՄԱԳ-ը ներառում է՝

1. տարածքի ռեսուրսային ներուժի և շրջակա միջավայրի վիճակի որոշում,
2. ՇՄԱԳ-ի ծրագրի մշակումը,
3. տնտեսական գործունեության և շինարարության այլընտրանքային տարբերակների գնահատումը,
4. շրջակա միջավայրի վրա նախագծի շահագործման հետևանքով ազդեցության ծավալի և տևողության գնահատումը,
5. շրջակա միջավայրի վրա նախագծի ազդեցության մոնիթորինգը,
6. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մակարդակի նվազեցման միջոցների և միջոցառումների համակարգի ստեղծումը,
7. հասարակական լսումները և էկոլոգիական փորձաքննությունը,
8. շրջակա միջավայրի վրա նախագծի ազդեցության վերլուծության հաշվետվության պատրաստումը:

Համաձայն Շրջակա միջավայրի վրա միջազգային կազմակերպության մեթոդաբանության՝ ՇՄԱԳ-ի գործընթացը բաղկացած է հաջորդական փուլերից[4].

1. ***սքրինինգ*** (screaning), որի շրջանակներում որոշվում է ՇՄԱԳ-ի անցկացման անհրաժեշտությունը և լիարժեքության աստիճանը,

---

[1] Худолей В.В., Мизгирев И.В. 1996. Экологически опасные факторы. СПб, Изд-во АОЗТ УПФФ, 186 с.

[2] Авалиани С.Л., Ревич Б.А., Захаров В.М. 2001. Мониторинг здоровья человека и здоровья среды. М., Центр экологической политики России, 76 с.

[3] Позняков С.П., Румак В.С., Софронов Г.А., Умнова Н.В. 2006. Диоксины и здоровье человека. Научные основы выявления диоксиновой патологии. СПб, изд-во «Наука», 275 с.

[4] Большаков А.М., Крутько В.М., Пуцилло Е.В. 1999. Оценка и управление рисками влияния окружающей среды на здоровье населения. М., Изд-во «Эдиториал УРСС», 254 с.

2. ***սկոպինգ*** (scopping), այս փուլում վեր են հանվում խնդիրները և ազդեցության ոլորտները, ինչպես նաև՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը,
3. ***այլընտրանքային տարբերակների գնահատում***, ինչի արդյունքում ընտրվում է նախատեսված նպատակներին հասնելու այն տարբերակը, որն առավել բարենպաստ է շրջակա միջավայրի համար
4. ***ազդեցության գնահատում***, որը ենթադրում է նախագծի իրականացման էկոլոգիական, կենսաբանական և սոցիալական հետևանքների աստիճանի կանխատեսում և որոշում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում վերլուծվում են ազդեցության քանակական ցուցանիշները, մասնավորապես.

- ազդեցության ինտենսիվությունը՝ միավոր ժամանակում աղտոտիչների հոսքը,
- ազդեցության որոշակի ուժգնություն՝ միավոր տարածքի վրա աղտոտիչների հոսքը,
- ազդեցության հաճախականությունը ժամանակի ընթացքում՝ ընդհատ, անընդհատ, միանվագ ազդեցությունը
- ազդեցության տևողությունը ՝ տարի, ամիս և այլն,
- ազդեցության տարածական սահմանները՝ խորություն, չափեր և ազդեցության գոտու ձև:

5. ***Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարում***, որն իրականացվում է միջոցառումների սահմանման միջոցով՝ ուղղված նախագծի շահագործման անբարենպաստ հետևանքների վերացմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանը :
6. ***Նշանակալիության գնահատում***, որի հիման վրա իրականացվում են շրջակա միջավայրի վրա այլ բաղադրիչների ազդեցության կարևորության և ընդունելիության որոշման գործընթացները, օրինակ՝ այն գործընթացները, որոնք հնարավոր չէ վերացնել: Այս փուլի նպատակը առաջնահերթ ազդեցությունների նվազեցումն է՝ ընտրելով միայն նրանք, որոնք բնութագրվում են առավելագույն ինտենսիվությամբ և պարբերականությամբ: Այստեղ հաշվի են առնվում այն ցուցանիշները, որոնց դեպքում ազդեցությունը նշանակալից է[1].

- տվյալ տարածքի վրա զգալի ազդեցությունը,
- հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունը,
- չափազանց վտանգավոր արտադրությունը:

7. ***Հաշվետվությունների կազմում***՝ ՇՄԱԳ-ի անցկացման վերաբերյալ:
8. ***Որոշումների ընդունում***՝ նախագծի ընդունման դրական կամ բացասական եզրակացություն, ինչպես նաև իրականացման վերաբերյալ պայմանների սահմանում:
9. ***Հսկողություն*** նախագծի իրականացման վերաբերյալ սահմանված պայմանների կատարման նկատմամբ, վերահսկողություն նախագծի իրականացման նկատմամբ, ինչպես նաև նախատեսվող միջոցառումների՝ բացասական հետևանքների նվազեցման արդյունավետության նկատմամբ:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ՇՄԱԳ-ը ներառում է ելակետային իրավիճակի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում նաև չափումների և վերլուծությունների անցկացում, նախատեսվող տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերի (ներառյալ՝ կոնսերվացիայի և դեմոնտաժի)՝ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության որոշում, այլընտրանքային տարբերակների վերլուծություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկում, բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների (մոնիտորինգի) ծրագրերի մշակում և այլն:

[1] Кучма В.Р., Гильденскиольд С.Р. 1995. Окружающая среда и здоровье жителей города с развитой промышленностью. МО, Изд-во «Олег и Павел», 123

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԲԵԱՏՐԻՍԱ ԿԱՐՊԻՍԻ ԿԵՈՎՏԵՐԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Համառոտագիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը ներառում է ելակետային իրավիճակի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում նաև չափումների և վերլուծությունների անցկացում, նախատեսվող տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերի (ներառյալ՝ կոնսերվացիայի և դեմոնտաժի)՝ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա ազդեցության որոշում, այլընտրանքային տարբերակների վերլուծություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունքում առաջացած տնտեսական վնասի հաշվարկում, բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների (մոնիտորինգի) ծրագրերի մշակում և այլն։

Բանալի բառեր. *շրջակա միջավայր, էկոլոգիական փորձաքննություն, մարդու առողջություն, պատվիրատու, իրավաբանական անձ, ֆիզիկական անձ, էկոլոգիական ստանդարտներ, նորմատիվներ:*

ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ

БЕАТРИСА КАРПИСОВНА КЕОВТЕРЕЛЯН
соискатель Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Оценка воздействия на окружающую среду включают в себя исходные исследования, а также, в случае необходимости, проведение измерений и анализов, определение воздействия на окружающую среду и здоровье человека всех этапов (включая консервацию и демонтаж) намечаемых технологических процессов, анализ альтернативных вариантов, расчет экологического ущерба, возникшего в результате воздействия на окружающую среду, разработку программ экологического управления и мониторинга и т.д.

Ключевые слова: *окружающая среда, экологическая экспертиза,, здоровье человека,заказчик, юридическое лицо, физическое лицо, экологические стандарты, нормативы.*

ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT ISSUES

BEATRISA KARPIS KEOVTERELYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The environmental impact assessment includes baseline studies, and if necessary other measurements and analyses that need to be carried out; figuring out the impact of all stages of expected technological processes (including the conservation and dismantling) on the environment and human health; analysis of alternatives, assessment of economic losses that occur from the damage to the environment; design of environmental management and monitoring programs, and etc.

Keywords: *Environment, Environmental examination, human health, client, legal person, natural person, environmental standards, norms.*

ԳԱՅԱՆԵ ԷՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԻՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հայաստանում կարծես աստիճանաբար նվազում է տնտեսական աճի «ավանդական» հենարանների դերը (գյուղատնտեսություն, շինարարություն, հանքարդյունաբերություն)[1]. 2011-2014թթ. ընթացքում երկրի ՀՆԱ կառուցվածքում գյուղատնտեսության բաժինը նվազել է 20,3%-ից մինչև 18,5%, շինարարությանը՝ 13%-ից մինչև 9,2%, իսկ հանքագործական արդյունաբերության մասնաբաժինն ընդհանուր արդյունաբերական արտադրանքում կրճատվել է 17.2%-ից մինչև 15%, այն դեպքում, երբ կրճատվել է նաև ընդհանուր արդյունաբերության բաժինը ՀՆԱ–ում՝ 17%-ից մինչև 16.2%[2]: Անհրաժեշտ են աճի նոր հենարաններ, ընդ որում ժամանակային բոլոր հորիզոնների համար՝ մոտ ապագայից մինչև երկարաժամկետ հեռանկարներ: Տնտեսության արդիականացումը և մրցունակության բարձրացումը շարունակում են մնալ գերխնդիր, որի լուծման գործուն հնարավորություն կարող է հանդիսանալ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործումը:

Հայաստանի տնտեսական զարգացման եվրասիական ուղեծիրն այլևս իրողություն է: Դարձել են ժամանակավրեպ այդ ուղու անայլընտրանքայնության մասին բանավեճերը, ներկայի պահանջն է ուղիներ որոնել՝ ՀՀ տնտեսության զարգացման բոլոր իրատեսական և անիրատեսական հեռանկարների իրացման հանգույցները եվրասիական տնտեսական տիրույթում շաղկապելու համար, քանի որ նվազագույնը դա է պահանջում միասնական տնտեսական տարածքի գաղափարը: Ինտեգրացիոն համագործակցության համատեքստում անդամ-պետությունների տնտեսական զարգացման ուղղությունների մասին «հանձնարարական» բնույթի առաջարկություններ է ներկայացրել Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհուրդը[3]: Ըստ այդ փաստաթղթի, անդամ-պետությունների ինտեգրացիոն ներուժի գնահատման համար առաջարկվում են որոշակի ուղղություններ (հայտանիշներ), որոնք պետք է պայմանավորեն այն ոլորտների ընտրությունը, որոնց զարգացումը կարող է հանգեցնել տվյալ երկրի և ընդհանուր միության տնտեսական աճին: ՀՀ ինտեգրացիոն ներուժի վերաբերյալ մեր դիտարկումները նպատակահարմար ենք համարել ներկայացնել ըստ ԵԱՏՄ տնտեսական զարգացման համար առաջարկված այդ «հիմնական ուղղությունների»:

Ոլորտներ, որոնց զարգացումը կպայմանավորի բազմարկչային (մուլտիպլիկատիվ) էֆեկտ ամբողջ տնտեսության համար: Այս ուղղությունն առաջին հերթին ենթադրում է էներգետիկ, ֆինանսական, տեղեկատվական և տրանսպորտային ծառայությունների ոլորտների զարգացում: Վերջիններս ակներև համակարգաստեղծ նշանակություն ունեն ցանկացած երկրի տնտեսության համար, բայց ինտեգրացիոն համագործակցության համատեքստում դրանց զարգացումն, ըստ ամենայնի, ենթադրում է նաև ընդհանուր օգտագործման որոշակի ենթակառուցվածքների ապահովում, այնպես, որ դրանց բացակայությունն անդամ-պետություններից որևէ մեկում չհանգեցնի ինտեգրացիայի հնարավոր առավելություններից օգտվելու «խտրական» զարգացումների: Ինչ խոսք, գոնե տրանսպորտային ենթակառուցվածքների դեպքում, նման մոտեցման պահպանումը խիստ դժվար է, քանի որ Հայաստանը միության այլ անդամ-պետություններից ոչ մեկի հետ ընդհանուր սահման չունի: Ավելի իրատեսական է ներկայանում ֆինանսական և տեղեկատվական դաշտում համագործակցությունը, որտեղ իրականացվող քաղաքականության միաս-

[1] Ըստ ՏԳՏՀԴ ծածկագրի համապատասխանաբար՝ A, F և B խմբերը:

[2] Բոլոր ցուցանիշները ներկայացված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա՝ Հայաստանը թվերով 2012, 2013, 2014, 2015 հրապարակումներից:

[3] Об Основных направлениях экономического развития Евразийского экономического союза. Решение от 16 октября 2015 года N 28.

նականացման պահանջներն ամրագրված են Միության հիմնադիր պայմանագրում[1], և նախատեսում են օրենսդրահիրավական որոշակի փոփոխություններ՝ համագործակցության արդյունավետության բարձրացման համար:

Ինչ վերաբերում է էներգետիկ ոլորտի զարգացմանը, ապա հարկ է նկատել, որ ինտեգրացիոն կառույցի ձևավորման հենց սկզբից այս ոլորտում համագործակցության առավելությունները դիտվել են որպես ինտեգրացիայի հիմք, ինչը հիմնավորված է այն փաստով, որ ԵԱՏՄ անդամ-պետություններից երկուսն էներգակիրների խոշոր արտահանողներ են, իսկ մյուս երեքը՝ դրանք ներկրող և նաև դրանց հիման վրա էլեկտրաէներգիա արտադրող պետություններ: Հետևաբար, համագործակցող պետություններից յուրաքանչյուրը կարող է ունենալ էներգետիկ ոլորտի զարգացման իր հեռանկարները, որոնք ոչ միշտ կհամընկնեն Միության ընդհանուր հեռանկարներին: Այսպես, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության գնահատականով ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունը հնարավորություն կտա բնական գազը և նավթամթերքը ավելի ցածր և կայուն գներով ներմուծել (միության արդյունահանող երկրների արտադրողների գներով), երկրում արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկը արտահանել միասնական շուկայի տարածք, ինչպես նաև՝ հայկական էներգահամակարգի տեխնիկական հնարավորություններն օգտագործել՝ միության անդամ-պետությունների արտադրած էլեկտրաէներգիան հարևան ոչ անդամ-պետություններ հաղորդելու համար[2]: Սակայն, եթե խնդիրը քննարկենք էներգետիկ գլոբալ շուկայում արդի զարգացումների տեսանկյունից, ապա Հայաստանի նման փոքր, բաց տնտեսությամբ երկրները, որոնք զգալի կախվածություն ունեն էներգակիրների ներկրումից, պետք է աստիճանական անցում կատարեն էներգիայի այլընտրանքային (առավելապես վերականգնվող) աղբյուրների օգտագործմանը: Ավելին, նավթ արդյունահանող Նորվեգիայում 2013 թվականին սպառվող էներգիայի 65.5%-ը վերականգնվող էներգիայի արդյունք էր, Դանիայում՝ 27.2%, Ավստրիայում՝ 32.6%, Ֆինլանդիայում՝ 38.6%, Շվեդիայում՝ 52.1%: Այս ուղղությամբ զգալի հաջողություններ ունեն նաև նախկին ԽՍՀՄ պետություններից Էստոնիան, Լատվիան և Լիտվան՝ համապատասխանաբար 25.6%, 37.1% և 23% ցուցանիշներով[3]: Համաշխարհային տնտեսությունում ընդհանուր միտումները, հնարավորություն են տալիս կանխատեսել, որ արդեն մոտ ապագայում՝ 2020 թվականին, «կանաչ էներգիայի» բաժինն ընդհանուրի մեջ կկազմի 25%-ից ավելին[4], ներկայի՝ 9.8%-ի[5] փոխարեն: Նման պայմաններում էներգետիկ ոլորտի ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրը Հայաստանի համար այլ իմաստ է ստանում, պահանջելով ոչ թե վերածվել արդեն ռազմավարական նշանակությունը կորցրած ածխաջրածնային ռեսուրսների սպառման շուկայի, այլ հանդես գալ որպես վերականգնվող էներգիայի աղբյուրներն արդյունավետ շահագործող երկիր:

Հրատապ ներմուծման փոխարինման անհրաժեշտություն[6] և (կամ) ԵԱՏՄ այլ անդամ-պետությունների հետ համագործակցության շնորհիվ ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտներ: Այս հայտանիշում շեշտադրվում է երրորդ երկրներից ներմուծման փոխարինման հնարավորությունների օգտագործումը: Սակայն, պետք է նկատել, որ «ներմուծման փոխարինում» կամ այս ենթատեքստում դրան համարժեք՝ «ԵԱՏՄ շրջանակներում տնտեսական համագործակցության խորացում» հասկացությունները կիրառման որոշակի զգուշավորություն են պարտադրում Հայաստանի համար վերլուծություններ իրականացնելիս: Մասնավորապես, ցածր դիվերսիֆիկացված (թե ապրանքային և թե աշխարհագրական առումներով) արտաքին առևտրի կառուցվածքի պայմաններում, համագործակցության սահմանափակումը միայն ԵԱՏՄ անդամ-պետություններով չի կարող խնդրի արդյունավետ լուծում համարվել: Օրինակ, Հայաստանի հա-

[1] Տե՛ս ԵԱՏՄ պայմանագիր, բաժին 5, հոդված 23՝ «Տեղեկատվական փոխգործակցությունը Միության շրջանակներում» և բաժին 16 «Ֆինանսական շուկաների կարգավորում»:

[2] Տեղեկատվություն Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) միանալու վերաբերյալ տնտեսվարողների կողմից բարձրացվող առավել կարևոր հարցերի վերաբերյալ: http://mineconomy.am/arm/556/gortsaruyt.html

[3] Голубь И.А. Прогнозы развития мировой энергетики: конец «нефтяного века»? http://www.scienceforum.ru/2016/1834/23493

[4] Энергетика не зеленеет. Ведомости. № 3221 от 31.10.2012.

[5] Ветер вместо угля. http://www.gazeta.ru/business/2015/06/15/6842313.shtml

[6] Փաստաթղթի հայերեն տարբերակում՝ «բարձր արդիականություն ունեցող ոլորտներ», ինչի հետ համաձայն չենք:

մար շահավետ կարող է դիտվել հարևան Իրանից գազի, նավթի, ինչպես նաև ուրանի հանքաքարի ներկրումը՝ ցածր սակագնի, տեղափոխման քիչ ծախսերի, տրանզիտային երկրի բացակայության հիմնավորմամբ: Մինչդեռ, ներմուծման նշված ուղղության համար որպես այլընտրանքային, հիմնականում քննարկվում է Ղազախստանի տարբերակը՝ ԵԱՏՄ շրջանակներում գործընկերության հիմնավորմամբ: Այս ուղղությամբ տնտեսական միության անդամ-երկրների ներուժի իրացման հանձնարարականի անտեղի, ոչ հիմնավոր կիրառման հնարավորությունը հանգեցնում է այն մտայնությանը, թե ժամանակակից գերազատական միջազգային առևտրատնտեսական կապերի պայմաններում փորձ է արվում ստեղծել նոր ավտարկիա, որի բացասական հետևանքներն, իդեպ, արդեն քառորդ դար է չենք կարողանում հաղթահարել: Այլ է իրավիճակը, երբ խոսքը գնում է որակ-գին համադրությամբ երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներին գերազանցող տարբերակների մասին: Այս դեպքում, ԵԱՏՄ շրջանակներում հիմնավորված կարելի է համարել Բելառուսից կաթնամթերքի, ձավարեղենի, պարարտանյութերի, դեղորայքի, էլեկտրական ապարատների, մեքենաների, սարքավորումների ներկրման ծավալների մեծացման հնարավորությունները, այնպիսի երկրներից ներմուծման փոխարեն, որոնց հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերը պատահական բնույթի են և (կամ) չունեն զարգացման իրատեսական հեռանկարներ (Թուրքիա, Միացյալ Թագավորություն, Ավստրիա, Չիլի, Էկվադոր, Բանգլադեշ, Պակիստան և այլն): Ղազախստանի տնտեսությունը հանքահումքային արտահանման կողմնորոշում ունի, և ԵԱՏՄ շրջանակներում տնտեսական ինտեգրացիայի ներկա փուլում, այս երկիրը Հայաստանի համար կարող է միայն դիտարկվել որպես հացահատիկի, վառելիքաէներգետիկ ռեսուրսների, ոսկու և ալյումինի այլընտրանքային ներկրման ուղղություն: Ինչ վերաբերում է ընդհանրապես ներմուծման փոխարինման անհրաժեշտությանն Հայաստանում, ապա այդ խնդիրը պերմանենտ հրատապություն ունի, և կարող է լուծվել միայն տնտեսության կառուցվածքում էական տեղաշարժերի պարագայում. ներուժային են օրինակ, պատրաստի սննդի արտադրանքի, ծխախոտի, դեղորայքի, պլաստմասսայի և դրանից իրերի, կաուչուկի, հագուստի, կոշկեղենի, ոսկերչական իրերի, սև և գունավոր մետաղներից պատրաստի արտադրանքի ներքին պահանջարկի մի զգալի մասը սեփական արտադրությամբ բավարարելու հնարավորությունները:

Երրորդ երկրներ արտահանման աճի և դիվերսիֆիկացիայի ներուժ ունեցող ոլորտներ, որտեղ ինտեգրացիոն փոխգործակցությունը պետք է ծավալվի հիմնականում իրացումային և մարքեթինգային քաղաքականության, ինչպես նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղություններով: Մեր կարծիքով, սա ԵԱՏՄ զարգացման այն հիմնական ուղղությունն է, որի ներուժային հնարավորությունները պիտի հանդիսանան արդյունավետ ինտեգրացիայի հիմքը: Միության այլ անդամ-պետությունների հետ համագործակցությունը կարող է ներուժային հնարավորությունների արդյունավետ իրացման նախապայման դառնալ այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը (կաուչուկի, անվադողերի, պլաստմասսայի, պարարտանյութերի, դեղորայքի արտադրության մասով), մեքենաշինությունը (զգալի գիտական բաղադրիչով և նվազ նյութատար ենթաճյուղերի առումով), թեթև արդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը, ոսկերչությունը և այլն[1]: Կարևոր ուղղություն կարելի է համարել ռազմաարդյունաբերական համագործակցությունը ՌԴ հետ, հատկապես, եթե հաշվի առնենք, որ սա Հայաստանի համար հանդիսանալու է ոչ թե մասնագիտացման նոր ուղղություն, այլ պարզապես մասնագիտացման ավանդական ուղղությունների վերագործարկում. խորհրդային տարիներին Հայաստանի ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը մեծ հաջողությամբ սպասարկել է ամբողջ միության ռազմաարդյունաբերական համալիրը: Այս ուղղությամբ համագործակցելու ներուժ ունի նաև Բելառուսը, ավելին, Հայաստանը և Բելառուսը կարող են նաև համատեղ արտադրական նախագծեր ունենալ մեքենաշինության այլ ենթաճյուղերում նույնպես

[1] Այս արտադրական ուղղությունների ինտեգրալ համեմատական առավելությունների և արտահանման ներուժի վերաբերյալ իրականացված վերլուծությանն (առանձին ապրանքային խմբերով) ամբողջությամբ կարելի է ծանոթանալ հեղինակի «ՀՀ արտաքին առևտրի հետագիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» մենագրությունում (Երևան, 2013թ):

(սարքաշինություն, հաստոցաշինություն, տրանսպորտային միջոցների արտադրություն՝ առանձին դետալների արտադրության տեսանկյունից):

Միության ներսում մրցակցային առավելություններ և մասնագիտացման հեռանկարներ ունեցող ոլորտներ, ինչն, ըստ փաստաթղթում տրված ձևակերպման, չի նախատեսում արտադրության արգելում նմանատիպ արտադրանք արտադրող այլ անդամ-պետություններում (թեև կարող է հանգեցնել արտադրության ծավալների որոշակի կրճատման), բայց հնարավորություն կտա վերաբաշխել արտադրության գործոններն առավել արդյունավետ ընկերություններին, դրանով իսկ բարձրացնելով անդամ-պետությունների տնտեսությունների ընդհանուր արդյունավետությունը: Ակներև է, որ այս ուղղությունը նախորդ ուղղության «մասնավոր դեպքն» է: Տրամաբանորեն, այն բոլոր ոլորտները, որոնք երրորդ երկրներ արտահանման ծավալների մեծացման ներուժ ունեն, միության շուկայում նույնպես դիրքավորվելու մեծ հնարավորություն կունենան: Մյուս կողմից էլ, միության 170 մլն-ոց շուկան արդեն իսկ գրավիչ շարժառիթ է արտադրության ծավալների ընդլայնման և շուկան գրավելու ռազմավարության մշակման համար: Թերևս, այն հանգամանքը, որ Հայաստանն այսօր իսկապես արտահանման դիվերսիֆիկացման և կառուցվածքի բարելավման լրջագույն խնդիրներ ունի, խանգարում է գոնե ինտեգրացիայի այս փուլում միության և համաշխարհային շուկանները դիտել որպես թիրախային տարբեր դաշտեր՝ արտահանման ռազմավարական մոտեցումների մշակման ժամանակ: Այնուամենայնիվ, տարբերակումն անհրաժեշտ է, պայմանավորված մաքսային արտոնությունների և սահմանափակումների, տրանսպորտային և տրանզիտային ծախսերի, շուկայի հագեցվածության և տարողության, որակի նկատմամբ պահանջների և այլ հանգամանքներով:

Ավելացված արժեք ստեղծող միջազգային և միութենական արտադրական շղթաներում անդամ-պետությունների մասնակցության և ներկայության ընդլայնման հեռանկար ունեցող ոլորտներ, որոնց զարգացումը կապահովի անդամ-պետությունների դերի բարձրացում համաշխարհային ավելացված արժեքի ստեղծման գործում: Զարգացման բավական գայթակղիչ ուղղություն է, հատկապես երբ այն դիտարկում ենք մեծ ավելացված արժեք պարունակող ապրանքների արտադրական շղթաներում Հայաստանի ներառվելու հեռանկարների տեսանկյունից: Այսօր միջազգային արտադրական շղթաներում ներառված ուղղություն կարելի է համարել ադամանդագործությունը, բայց արդյունավետության դիտակետից այն կարելի է ներուժային համարել միայն եթե վերամշակվող ադամանդը Հայաստանից ոչ թե լրիվությամբ արտահանվի, այլ դրա մի մասը հենց Հայաստանում վերածվի պատրաստի արտադրանքի՝ ադամանդե զարդերի: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ ներկայում ալմաստը լայն կիրառություն է ստացել նաև միկրոէլեկտրոնիկայում, քվանտային համակարգիչների, միջուկային ռեակտորների արտադրությունում և սարքաշինությունում (հատկապես ժամացույցների): Հայաստանի համար մեծ ձեռքբերում կլիներ նման արտադրություններում նույնիսկ մասնակի մասնակցությունը: Ինչ վերաբերում է միության ներսում արտադրական շղթաներին մասնակցությանը, ապա արդեն նշել ենք, որ նման հեռանկարային ուղղություն համարում ենք մեքենաշինության գիտատար ճյուղերի զարգացումը՝ Ռուսաստանի և Բելառուսի հետ կոոպերացիոն կապերի խորացման շնորհիվ: Իհարկե, այստեղ կարևոր է խուսափել միության անդամ-պետությունների միջև չհիմնավորված ու տնտեսապես չարդարացված փոխսերտաճման և փոխկախվածության միտումներից՝ ապագայում չառերեսվելու համար ԽՍՀՄ փլուզումից հետո դրսևորված իրողությունների անալոգիային:

Ոլորտներ, որոնց զարգացումը հնարավորություն կտա «հետևող»[1] *տնտեսական աճից (catch up growth-հեղ.) անցում կատարել առաջանցիկ տնտեսական աճի,* շնորհիվ նոր տեխնոլոգիաների ներգրավման և ստեղծման, այլ կերպ ասած, *«ապագայի ոլորտներ» (նանոտեխնոլոգիաներ, տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտ, 3D տպագրություն, ֆոտոնիկայի տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա, արտադրության ավտոմատացում, բիոտեխնոլոգիա, հազվագյուտ տարրերի վերամշակում, էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և այլն):* Անշուշտ, սա

[1] Տերմինաբանական անճշտություններից խուսափելու նպատակով նշենք, որ «Եվրասիական տնտեսական միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մասին» որոշման հայերեն թարգմանված տարբերակում օգտագործված է «հետ ընկած զարգացում» եզրը:

այն ուղղություն է, որը պետք է պայմանավորի ՀՀ տնտեսության և ընդհանուր միության հետագա զարգացումը, քանի որ ենթադրում է դիրքավորում համաշխարհային շուկայի այն տիրույթում, որտեղ դեռևս առկա է որոշակի վակուում: Շեշտադրելով մարդկային ներուժի զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը և նվազ ծախսատարությունը, այս ուղղությունը միության անդամ-երկրների համար կարող է դառնալ միակ հնարավորությունը փոխելու արդեն կենսացիկլի նախնական փուլերն անցած տեխնոլոգիաներ ներմուծողի կարգավիճակը դրանք արտահանողի կարգավիճակով: Այս ուղղությամբ Հայաստանի զարգացման հեռանկարները կապվում են առավելապես SS ոլորտի և ավտոմատացված արտադրական տեխնոլոգիաների (թվածրագրային կառավարմամբ հաստոցներ, սարքավորումների, մշակող կենտրոնների) արտադրության հետ: Իհարկե, պետք է նկատել, որ տեղեկատվահեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ինդեքսով[1] (տե՛ս աղյուսակ 1) Հայաստանը զգալիորեն հետ է մնում միության անդամ-երկրներից (բացառությամբ Ղրղըզստանի), ունենալով գրեթե նույն ցուցանիշները հարևան երկրների հետ: Նման պայմաններում, ոլորտի զարգացման լավատեսական կանխատեսումները, չնայած ներուժի առկայությանը, քիչ հիմնավորված են ներկայանում: Այնուամենայնիվ, տնտեսության կառուցվածքի որակական բեկման գործընթացն անհրաժեշտ է սկսել հենց այս ոլորտներից:

Աղյուսակ 1

Տեղեկատվահեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ինդեքս-2015

Դիրքը	*Երկիրը*	*Ցուցանիշը*
36.	*Բելառուս*	*7.18*
45.	*Ռուսաստան*	*6.91*
58.	*Ղազախստան*	*6.2*
67.	*Ադրբեջան*	*5.79*
69.	*Թուրքիա*	*5.58*
76.	*Հայաստան*	*5.32*
78.	*Վրաստան*	*5.25*
91.	*Իրան*	*4.79*
97.	*Ղրղըզստան*	*4.62*

Պետական կարգավորման կամ մասնակցության բարձր աստիճանով հատկանշվող ոլորտներ, որտեղ հնարավոր կլինի ուղղակիորեն կիրառել ինտեգրացիոն միջոցառումները, դրանով իսկ ապահովելով զգալի տնտեսական էֆեկտ: Այս ուղղությունը մեր կողմից հեռանկարային չի դիտվել: Ըստ այն սահմանած փաստաթղթի, այստեղ հիմնական տնտեսական ներուժը կայանում է նրանում, որ կարելի է «ստեղծել պայմաններ դրանց ազատականացման և զարգացման համար, ինչը կապահովի անդամ պետությունների արտադրողների ծախքերի նվազեցում, կբարձրացնի արտադրվող արտադրանքի մրցունակությունը և համապատասխան արտադրանքի ազատ շուկա կձևավորի»[2]: Մյուս կողմից էլ՝ Հայաստանում պետական մասնակցությամբ ընկերությունները գործում են հիմնականում այն ոլորտներում, որոնք ինտեգրացիոն ներուժի տեսանկյունից չեն կարող հետաքրքրություն ներկայացնել:

Ամփոփելով ԵԱՏՄ շրջանակներում Հայաստանի ինտեգրացիոն ներուժի իրացման հիմնական ուղղությունների վերլուծությունը, կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի համար արդյունավետ ինտեգրումը պետք է ընթանա ոչ թե ԵԱՏՄ տարբեր մարմինների կողմից ընդունված որոշումներով նախապես սահմանված սցենարով, այլ ինտեգրացիոն ուղղություններին համապատասխան պետք է մշակի սեփական ռազմավարություն, առավելագույնս հաշվի առնելով երկրի տնտեսական անվտանգության խնդիրները (այլ երկրներից կախվածության թուլացում, ռազմավարական նշանակության արտադրատեսակներով ինքնապահովման ձգտում, տեխնոլոգիական խզվածքի հաղթահարում) և տնտեսական արդյունավետության չափորոշիչները: Միության ընդհանուր շահերում անհրաժեշտ է հասնել նրան, որ Հայաստանի տնտեսական ու քաղաքական շահերը նույն առաջնահերթությունն ունենան, ինչ և այլ անդամ-պետություններինը: Թեև շահերը միշտ էլ բախման որոշակի ներուժ ունեն, ուստի, ինտեգրացիոն այս իրողությունների պարագայում հանրապետությունը մշտապես պետք է պահպանի և վերարտադրի բոլոր ուղղություններով այլընտրանքային զարգացման հնարավորությունները:

---

[1] Measuring the Information Society Report- 2015.

[2] Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի թիվ 25 կարգադրություն ««ԵԱՏՄ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծի մասին, 2015թ ապրիլի 7:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԻՐԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԾՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԳԱՅԱՆԵ ԷՐՆԻԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, բաժնի վարիչ

Համառոտագիր

ՀՀ տնտեսության արդիականացումը և մրցունակության բարձրացումը շարունակում են մնալ գերխնդիր, որի լուծման գործուն հնարավորություն կարող է հանդիսանալ ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործումը: Անհրաժեշտ է ուղիներ որոնել՝ ՀՀ տնտեսության զարգացման բոլոր իրատեսական և անիրատեսական հեռանկարների իրացման հանգույցները եվրասիական տնտեսական տիրույթում շաղկապելու համար: Հոդվածում ներկայացված են դիտարկումներ ՀՀ ինտեգրացիոն ներուժի իրացման հեռանկարների և խոչընդոտների վերաբերյալ՝ ըստ ինտեգրացիոն համագործակցության զարգացման այն ուղղությունների, որոնք առաջարկվել են Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի կողմից:

Բանալի բառեր. *Եվրասիական տնտեսական միություն, ինտեգրացիա, ինտեգրացին ներուժ, էներգետիկա, ներմուծման փոխարինում, արտահանման դիվերսիֆիկացիա, մրցակցային առավելություն, ավելացված արժեք, տնտեսական աճ, տեղեկատվա-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ինդեքս:*

ВОЗМОЖНОСТИ РЕАЛИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА РА В ЕАЭС: ПРЕПЯТСТВИЯ И ПЕРСПЕКТИВЫ

ГАЯНЕ ЭРНИКОВНА АРУТЮНЯН, *к.э.н., доцент*
зав.отделом, научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Модернизация и повышение конкурентоспособности экономики РА продолжают оставаться приоритетной задачей, действенным решением которой может стать эффективное использование интеграционного потенциала Евразийского экономического союза. Необходимо найти эффективные пути, чтобы все узлы реалистичных и нереалистичных перспектив экономического развития связались в евразийском экономическом пространстве. В статье представлены наблюдения о перспективах и возможных препятствиях на пути реализации интеграционного потенциала РА по тем направлениям развития интеграционного сотрудничества, которые были предложены на заседании Высшего Евразийского экономического совета.

Ключевые слова: *Евразийский экономический союз, интеграция, интеграционный потенциал, энергетика, импортозамещение, диверсификация экспорта, конкурентное преимущество, добавленная стоимость, экономический рост, индекс развития информационно-телекоммуникационных технологий.*

THE REALIZATION OF THE ECONOMIC POTENTIAL OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE EAEU FRAMEWORK: OBSTACLES AND PROSPECTS

GAYANE ERNIK HARUTYUNYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Head of Department, Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The modernization and the enhancement of the competitiveness of the economy of the Republic of Armenia continues to be a priority, the effective achievement of which can be the effective usage of the potential of integration of the Eurasian Economic Union. Hence, it is necessary to find out effective ways to intertwine all the nodes of realistic and unrealistic economic outlook in Eurasian economic domain. The article presents observations on the perspective and potential obstacles of the realization of the Armenia's integration potential with respect to those directions of the improvement of the cooperation of integration that have been proposed by the Supreme Eurasian Economic Council.

Keywords: *Eurasian Economic Union, integration, integration potential, energy, import substitution, export diversification, competitive advantage, added value, economic growth, information and communication technology (ICT) development index.*

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր տնտեսական նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Վերջին տարիներին օգտակար հանծոներ արդյունահանող և երկրաբանական ուսումնասիրություններ կատարող կազմակերպությունների կողմից դիտվում է ընդերքի նոր և նախկինում թերի ուսումնասիրված տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքների ակտիվացում: Երկրաբանահետախուզական և արդյունահանման ծավալների աճը անխուսափելիորեն հանգեցնում է տարածաշրջանի բնապահպանական և էկոլոգիական հավասարակշռության խախտման: Վերջինս ստիպում է, որ հաշվի առնվեն բոլոր բացասական հետևանքները և լուրջ ուսումնասիրություններից հետո միայն տրվեն համապատասխան ընդերքօգտագործման թույլտվություններ, լիցենզիաներ և այլն:

Մի շարք պատճառներով Լոռու մարզում լեռնահանքային կոմբինատների աշխատանքն իրականացվում է առանց ժամանակակից մաքրող սարքավորումների, ինչը հանգեցնում է հոսքաջրերի մուտքին դեպի մակերևութային ջրահոսքեր, պոչամբարների բարձիթողությունը, որոնք էլ շարունակում են վատթարացնել առանց այն էլ բարդ էկոլոգիական իրավիճակը Լոռու մարզում[1]: Լոռու մարզի ներկա էկոլոգիական իրադրության վրա մեծ ազդեցություն ունեցան 1988թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը, վերջին տասնամյակների տնտեսական ճգնաժամը, որոնց հետևանքով բնապահպանական միջոցառումները մարզում կտրուկ սահմանափակվել են և հասել նվազագույնի: Պետք է նշել, որ էկոլոգիական քաղաքականության նախկին բացթողումները չստացան անհրաժեշտ մակարդակի տեխոլոգիական, տեխնիկական, բնապահպանական, տնտեսական և գիտական լուծումներ: Արդյունքում քիմիական և հանքային արդյունաբերությունը շարունակում է զարգանալ հիմնականում տնտեսական շահերի իրացման շրջանակներում, նվազեցնելով հատկապես էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրները: Դրանք առավելագույնս վերաբերում են մթնոլորտային օդի, ջրոլորտի և հողային ռեսուրսների կենսապահովող էկոլոգիական որակի պահպանմանը՝ կանխելով անտառային էկոհամակարգերի կայունության ապահովումը:

Տարածաշրջանի հիմնական խնդիրն է շրջակա ծանր մետաղներով միջավայրի աղտոտվածությունը: Այս տեսանկյունից վտանգավոր են ոչ միայն տիպոմորֆ տարրերը՝պղինձը (Cu), ցինկը (Zn), կապարը (Pb), այլ նաև ուրիշ թունավոր մետաղներ՝ սնդիկը(Hg), կադմիումը (Cd), արսենը (As) և այլն: Վերջիններիս կոնցենտրացիաները հանքաքարում մեծ չեն, սակայն, ընդերքից հանքաքարի կորզման և վերամշակման գործընթացում դրանք ընկնում են շրջակա միջավայրի բաղադրիչների մեջ՝ դառնալով էկոլոգիական ռիսկի հիմնական գործոն:

Որպես շրջակա միջավայրի աղտոտիչներ՝ ծանր մետաղները ունեն մի շարք յուրահատկություններ: Դրանք չեն ներգրավվում ինքնամաքրման գործընթացների մեջ. միգրացիայի ընթացքում փոփոխվում են միայն կոնցենտրացիաները և պարունակության ձևերը: Ներառվելով միգրացիայի բոլոր տեսակներում և կենսաբանական շրջապտույտի մեջ ծանր մետաղները հանգեցնում են բոլոր կենսապահովող բնական միջավայրերի՝ ջրի, օդի, հողի աղտոտմանը և թափանցում սնման շղթա: Կենդանի օրգանիզմներում կուտակվելու հատկությունը հանգեցնում է ինչպես յուրահատուկ հիվանդությունների առաջացմանը (բնածին անոմալիաներ և զարգացման շեղումներ, սոմատիկ խրոնիկական և էնդոկրին հիվանդություններ), այնպես էլ իմունային համակարգի թուլացմանը և ընդհանուր հիվանդացության մակարդակի աճին: Բացի ուղղակի թունավոր ազդեցությունից, ծանր մետաղներին հատուկ են, այսպես կոչված, երկարատև էֆեկտները, որոնք խախտում են օրգանիզմի հիմնարար ֆունկցիաները՝ վերարտադրությունը և ժառանգականությունը: Վերջին հաշվով ծանր մետաղների վնասակարության աստիճանը մեծ է, քանի որ վտանգը առաջանում է ոչ թե առանձին օրգանիզմների, այլ ամբողջ սերունդների համար:

[1] http://www.ecolur.org/hy/news/air/vecological-disasterv-term-entirelt-proper-for-alaverti-town/435/:

Մարզի մշակովի հողատարածքների մեծ մասը տարիներ շարունակ անմշակ մնալու հետևանքով առաջ է եկել գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի դեգրադացիա և խոպանացում: Վարելահողերում մեխանիկական և քիմիական համապատասխան գործողություններ չկատարելու հետևանքով նախկինում բերրի հողերը կորցնում են իրենց բուն նպատակային նշանակությունը: Հողատեսքերում ակտիվ կերպով զարգանում են մկնանման կրծողները, որոնք ոչ միայն խիստ կերպով ազդում են բերքատվության վրա, այլև առաջացնում են հողաթմբեր և դրանով իսկ լուրջ խոչընդոտ են հանդիսանում բուսաբուծության և անասնապահության համար[1]: Տվյալ հանգամանքները նպաստում են գյուղատնտնեսական նշանակության հողատեսքերում մոլախոտերի և կիսաանապատային բույսերի բուռն զարգացմանը, որը տանում է դեպի հողերի աստիճանաբար անապատացման:

Հողի բերրի շերտի արտադրության և պահպանության գործում կարևոր դեր են խաղում մարզի անտառածածկ տարածքները, որոնք վերջին 20 տարիների ընթացքում ենթարկվել են անտրոպոգեն և բնական (հիմնականում քամատապալ) խաթարման: Անտառների ինտենսիվ հատումների հետևանքով ի հայտ են եկել մի շարք բացասական երևույթներ, մասնավորապես, խիստ ակտիվացել են սելավաստողանքային և էռոզիոն երևույթները, որոնք առանց այն էլ սևահողով աղքատ սարալանջերից քշում են դեպի գետերը դարերի ընթացքում գոյացած սևահողը: ՀՀ Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101835 հա, որից անտառածածկ է 80867 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 26%-ը[2]: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, գիտական բարձր արժեք և աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ:

Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին մեծ վնաս են պատճառում նաև անկանոն և տարերային ձևով առաջացող աղբավայրերը, որոնք բացի կենցաղային աղբից պարունակում են նաև ժամկետանց թունաքիմիկատներ, մարտկոցներ, նավթամթերքների արգասիքներ, ազբեստ պարունակող շինարարական թափոններ և այլ թունավոր ու քաղցկեղածին նյութեր: Վերը նշված հանգամանքը ոչ միայն վտանգավոր է դարձնում տվյալ հողատարածքի օգտագործումը, այլև աղբավայրի թունավոր նյութերը տարրալուծվելով մակերեսային և ստորերկրյա ջրերի մեջ սպառնալիք են առաջացնում մոտակա ջրային ռեսուրսներից օգտվող ազգաբնակչության և կենդանական աշխարհի համար:

Հողի վերին շերտի համար լուրջ սպառնալիք է հանդիսանում աղբավայրերից և ազգաբնակչության կողմից դեպի շրջակա միջավայր թափանցող պոլիէթիլենային և պլաստմասե թափոնները, որոնք հողում չեն քայքայվում և տարիների ընթացքում առաջացնում են մեկուսացնող շերտ, դրանով իսկ փոխելով հողի բնականոն ռեժիմը :

Թափոնների ծավալի աճը վկայում է ռեսուրսների կառավարման և քաղաքական մեխանիզմների թերիության մասին, միաժամանակ վտանգի ենթարկելով էկոլոգիական հավասարակշռությունը:

Այս տեսանկյունից ակնհայտ է դառնում առաջնային կարևորության երկու հիմնահարց: Առաջինը ռեսուրսների ներուժի մաքսիմալ օգտագործումն անհրաժեշտությունն է, որը հնարավորություն կտա նվազեցնել բնությունից հումքի կորզման (արդյունահանման) տեմպերը, հետևաբար՝ կրճատել ծախսերը այդ գործունեության իրականացման համար: Խնայված միջոցները ուղղել նոր՝ ավելի արդյունավետ և անվտանգ տեխնոլոգիաների մշակմանը, ինչը հիրավի հանդիսանում է կայուն տնտեսական աճի և էկոլոգիական հավասարակշռության գրավականը: Այս հիմնահարցի լուծումը անմիջականորեն նպաստում է երկրորդ հիմնահարցի՝ էկոլոգիական անվտանգության ապահովման գործընթացին: Կրճատելով նոր հումքի կորզումը բնությունից, նախ և առաջ ապահովվում է առանձին էկոհամակարգերի ամբողջականության պահպանումը և գործող կապերի անքակտելիությունը, ինչպես նաև կրճատում է հումքի վերամշակման, արտադրանքի ստացման և դրա սպառման արդյունքում գոյացող թափոնների բազմաբնույթ բացասական ազդեցությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալը, բարձր արդյունավետություն ունի արդեն իսկ գոյացած, և դեռ զգալի ներուժ ունեցող թափոնների վերամշակումը, որի խելամիտ իրականացման պարագայում, ստացված երկրորդային հումքը կապահովի շոշափելի եկամուտ: Սրան զուգահեռ, նման

[1] http://lori.agro.am/index.php?id=4436&tx_ttnews%5Btt_news%5D=11733&cHash=5f6e36aa7cf66b2d1880ac8de3dfb309:

[2] ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

գործունեությունը էական ներդրում կունենա բնության պահպանության բնագավառում: Երկրորդային հումքի օգտագործումն ունի մի շարք առավելություններ: Այսպիսով թափոնների վերամշակման և երկրորդային հումքի ստացման արդյունքում նվազում են աղբավայրերում տեղաբաշխելու անհրաժեշտություն ունեցող թափոնների ծավալը, հետևաբար ավելի քիչ տարածք է անհրաժեշտ: Միաժամանակ, դրանց այրման կամ թաղման համար ծախսվող ֆինանսական միջոցների բաժինը պետական կամ համայնքային բյուջեյում կփոքրանա և ազատ միջոցները կարող են ծառայել այլ նպատակների իրականացման համար: Դրա հետ մեկտեղ նվազում է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ ջերմոցային գազերի արտանետման, գրունտային ջրերի աղտոտման նվազեցման, կենսաբազմազանության բնական միջավայրի և բնակության արեալների պահպանության, մարդկանց առողջական խնդիրների կրճատման և այլ առումներով:

Վերամշակման և երկրորդային հումքի ստացման առավելությունները կարելի է մեկնաբանել նաև այլ տեսանկյունից: Նոր ապրանքների ստեղծման նպատակով երկրորդային հումքի օգտագործումը հնարավորություն է տալիս խնայել հսկայական քանակությամբ էներգիա: Մասնավորապես, արտադրության մեջ ալյումինի ջարդոնի օգտագործումը ապահովում է 95% էներգախնայողություն, համեմատած նոր արդյունահանված հումքի հետ: Բացի այդ, նոր հումքի արդյունահանման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա չափազանց բարձր է, և երկրորդային հումքի օգտագործումը թույլ է տալիս խուսափել բացասական ազդեցությունից: Միևնույն ժամանակ երկրորդային վերամշակված հումքի գինը, սովորաբար, ավելի ցածր է, որը թույլ է տալիս արտադրողին ավելի մրցունակ արտատադրանք թողարկել: Եվ, վերջապես, մի շարք երկրներում երկրորդային հումքի օգտագործումը արտադրության մեջ խրախուսվում է: Կազմակերպություններին կարող են տրամադրվել հարկային արտոնություններ, բանկերի կողմից վարկային արտոնյալ պայմաններ, ֆինանսական աջակցություն պետության կողմից և այլն:

Հողերի պահպանության համար գործնականում պետք է հասնել նրան, որ ոչ մետաղական օգտակար հանածոների շահագործման ժամանակ չառաջանան թափոններ, որը ներկայումս ջարդող-տեսակավորող ագրեգատների բացակայության պատճառով աղտոտում և անպիտան են դարձնում ահռելի տարածքներ: Միաժամանակ պետք է խրախուսվեն այն կազմակերպությունները, որոնք լեռնահարստացման ֆաբրիկաների թափոնները կվերածեն լայն օգտագործման արտադրատեսակների և բարիքի:

Լոռու մարզի «ցավոտ» բնապահպանական խնդիրներից է նաև Թեղուտի պղնձմոլիբդենային հանքավայրի շահագործման ընթացքում շուրջ 357 հա անտառների հատումը: Թեղուտի պղնձամոլիբդենային հանքը հայտնաբերվել է 1972թ., սակայն Խորհրդային Միության ժամանակ չի շահագործվել հաշվի առնելով, որ բնությանը հասցնող վնասը շատ անգամ գերազանցում է ստացվելիք օգուտները: Սակայն, 2007թ. նոյեմբերի 7-ին ՀՀ կառավարությունը հաստատեց Թեղուտում հանքի շահագործման նախագիծը: Իսկ հանքը շահագործելու արտոնագիրը տրամադրվեց «Արմենիան քափր փրոգրամ» (ACP, Էյ-Սի-Փի) ՓԲԸ-ին: Հանքավայրի շահագործման դեպքում, ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» փաստաթղթի, 25 տարվա ընթացքում վերամշակվելու է 175 մլն տոննա պղնձամոլիբդենային հանքաքար (պղնձի պարունակությունը՝ 0,355, իսկ մոլիբդենինը՝ 0,0215 տոկոս է): Կորզվելու է պղնձի 85,78, իսկ մոլիբդենի՝ 70,05 տոկոսը: Թեղուտի հանքավայրի շահագործումը, որը կտևի ավելի քան 30 տարի, ինչ խոսք, կհանգեցնի տարածաշրջանում բնապահպանական լուրջ խնդիրների, որոնք հանքավայրի շահագործման դեպքում պետք է պահվեն լուրջ և զգոն հսկողության ներքո[1]: Հանքավայրի շահագործմանը զուգընթաց կաճեն Ալավերդու գործարանի կոնվեկտորային պղնձի արտադրության քանակությունը, հետևապես, նաև արտանետումները, իսկ նոր պահանջներին համապատասխանող գործարանն՝ ըստ ընկերության նախագծի պետք է կառուցվի հանքավայրի շահագործման 6-7-րդ տարում: Անտառային էկոհամակարգի ոչնչացումից բացի Թեղուտի հանքավայրի շահագործումն առաջացրել է նաև այլ լուրջ բացասական հետևանքներ, որոնցից մեկն է հանքավայրին հարակից տարածքներում հոսող գետերի ջրերի որակի խիստ վատթարացումը: Որպես ապացույց կարելի է նշել ՀՀ ԳԱԱ քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Սեյրան Մինասյանի «Շնող գետի ջրերի որակի դինամիկան 2009-2015թթ. ընթացքում» հետազոտության արդյունքները[2]: Հետազոտությունը վերաբերում է հանքավայրի շահագործման գոտու ազդակիր՝ շրջակա միջավայրի կարևորագույն բաղադրիչներից մեկին՝ Շնող գետին, որը

[1] Teghut.am-Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնություն:

[2] http://aarhus.am/Expert_2015/Seyran_Analiz%20situation%20Shnogh%20Water.pdf.

հանդիսանում է Դեբեդ գետի աջ վտակը: Հետազոտության արդյունքներից պարզվել է, որ վերջին 5-6 տարվա ընթացքում Շնողի գետաբերանի ջրերում Թեղուտի հանքարդյունաբերական համալիրի գործունեության հետևանքով բազմակի աճել են մի շարք մետաղ և այլ տոքսիկ տարրերի կոնցենտրացիաները, մեծապես վատթարացել են ջրի ֆիզիկաքիմիական բնութագրերը: Իսկ գետաբերանի ջրերում մետաղ և այլ տոքսիկ տարրերի կոնցենտրացիաները բազմակի գերազանցում են ակունքի հատվածի ջրերում առկա կոնցենտրացիաների արժեքներին: Միաժամանակ, գետաբերանի ջրերում ակունքի հատվածի ջրերի համեմատ աղետալի նվազում է հատակային կենսաբազմազանությունը: Այն դառնում է շատ աղքատիկ ու բնորոշ կեղտոտ, վատ որակի ջրերին: Ակունքի և գետաբերանի ջրերի որակի ցուցանիշների համեմատությունը և որակի անկումը պայմանավորող ցուցանիշների համախումբը ցույց են տալիս, որ գետի ջրային էկոհամակարգի որակի անկման պատճառը Թեղուտի հանքավայրի շահագործման նախապատրաստումն ու բուն շահագործումն է: Շնող գետը՝ ըստ Եվրամիության ՋՇԴ դասակարգման ներկայումս արդեն դասվում է «ռիսկային» ջրային մարմինների դասին (մինչև 2011 թվականը այն չէր համարվում ռիսկային): Իսկ գետաբերանի հատվածում 2014-2015 թթ. ընթացքում, ըստ ՀՀ որակի էկոլոգիական նորմերի, մոլիբդենի բարձր պարունակության պատճառով գետի ջրերի որակը մի քանի անգամ գնահատվել է որպես 5-րդ՝ «վատ» դասի, այսինքն խիստ աղտոտված: Փաստորեն, արդեն նախապատրաստական փուլում Թեղուտի հանքարդյունաբերական համալիրի բացասական ազդեցության հետևանքով, «լավ» դասին պատկանող ջրային մարմինը 3-4 տարում վերածվել է «ռիսկային» կամ 5-րդ՝ «վատ» դասի ջրային մարմնի:

Այս խնդիրն է, որ ներկայումս անհանգստացնող է: Պետք է նշել, որ առկա է «էկոլոգիական անորոշությունը», ինչը կապված է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդական բացթողումների հետ: Թեղուտի հանքավայրի շահագործման ներկայիս միտումները, միանգամայն վկայում են այն մասին, որ նախագիծն ի սկզբանե պետք է ենթարկվեր ռազմավարական էկոլոգիական գնահատմանը, այլ ոչ թե դիտվեր «պարզ» օբյեկտների տեսանկյունից: Այստեղ, միանշանակ, մեծ է հավանականությունը ռիսկային գործոնների ասպեկտի ընդլայնման և վտանգի աղբյուրների առաջացման մասով:

Դեբեդ գետի խոշոր աղտոտողներից է նաև Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատը: Դա պայմանավորված է հիմնականում լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի մոտակայքում գտնվող պոչամբարի լցվելու հետ, որը առանց կապիտալ վերանորոգման աշխատանքների (հենապատի բարձրացում բետոնով), թերևս, ընդունակ չէ ամբարելու հանքաքարի մշակումից առաջացած թափոնները: Դեբեդ գետի վրա կառուցված են մի շարք ջրհան և կենսաբանական մաքրման կայաններ: Գետը ունի հիդրոէներգետիկ նշանակալի պաշարներ: Ջուրն հիմնականում օգտագործվում է ոռոգման և արդյունաբերական նպատակներով: Մարզում գոյություն ունեցող ջրամաքրման կայանները (Սպիտակի, Վանաձորի, Ալավերդու, Թումանյանի) հայտնվել են խիստ անմխիթար վիճակում և գործնականորեն չեն գործում: Անմխիթար վիճակում են գտնվում նաև կեղտաջրերի հեռացման խողովակաշարերը: Դեբեդի գետավազանի կոյուղու մաքրման կայանների անգործության և ջրահեռացման ցանցի մաշվածության հետևանքով արտադրական և կենցաղային կեղտաջրերն անմիջապես լցվում են բնակավայրերի տարածքները, և գետերը աղտոտելով շրջակա միջավայրը, խախտելով էկոհամակարգերի կայունությունը, ստեղծելով հակասանիտարական վիճակ և աղբյուր, դառնում են համաճարակային բռնկումների սպառնալիք:

Այսպիսով, Լոռու մարզում արդյունաբերական և բնապահպանական հիմնախնդիրները սերտորեն փոխկապակցված են: Տվյալ հիմնախնդիրների հիմնավորված վերլուծությունը և համապատասխան միասնական համալիր ծրագրի ընդունումը և իրականացումը կհանգեցնի մարզի տնտեսական ու բնապահպանական ոլորտների ներդաշնակությանը: Կարևոր նախապայմաններից է լեռնաարդյունաբերության, հոսքաջրերի, աղբավայրերի և մաքրման կայանների վերազինումը ժամանակակից տեխնոլոգիաներով, որոնք կնվազեցնեն մարզի շրջակա միջավայրի աղտոտումը: Հաշվի առնելով անտառածածկ տարածքների անմխիթար վիճակը, անհրաժեշտ է միանշանակ արգելել տվյալ տարածքներում երկրաբանահետախուզական և հանքարդյունահանման աշխատանքները:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ Լոռու մարզի էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրներին և շրջակա միջավայրի էկոլոգիական որակի փոփոխության արդի միտումներին: Լոռու մարզը Հայաստանի Հանրապետության կարևոր տարածաշրջաններից է, որն ունի արդյունաբերական մեծ ներուժ, սակայն, արդյունաբերության զարգացմանը զուգահեռ մեծանում է նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչը առաջ է բերում մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես, անտառների ոչնչացումը, հողային ռեսուրսների դեգրադացիան, ջրային ռեսուրսների աղտոտումը և այլն:

Բանալի բառեր. *տնտեսություն, էկոլոգիա, ջրային ռեսուրսներ, աղտոտում, հողի դեգրադացիա, թափոններ, երկրորդային ռեսուրսաօգտագործում, անտառհատում:*

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В ЛОРИЙСКОЙ ОБЛАСТИ РА

АРУТЮН АМАЗАСПОВИЧ АРУТЮНЯН
аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Статья посвящена проблемам обеспечения экологической безопасности Лорийской области РА и современным тенденциям изменения экологического качества окружающей среды. Область Лори со своим большим промышленным потенциалом является одним из важных регионов Республики Армения. Однако развитие промышленности увеличивает также негативное воздействие на окружающую среду, что вызывает целый ряд проблем, таких как уничтожение лесов, деградация земельных ресурсов, загрязнение водных ресурсов и т.д.

Ключевые слова: *экономика, экология, водные ресурсы, загрязнение, деградация почвы, отходы, вторичное использование ресурсов, вырубка леса.*

ISSUES ON ENSURING ENVIRONMENTAL SAFETY IN LORI MARZ OF THE REPUBLIC OF ARMENIA

HARUT HAMAZASP HARUTYUNYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article discusses the issues on ensuring environmental security of Lori Marz of the Republic of Armenia, and current trends on changes in the quality of environment. Lori Marz is one of the important regions of the Republic of Armenia with high industrial potential, however, along with the development of the industry the damage to the environment grows that causes several issues, namely, deforestation, deterioration of the soil, water pollution, and etc.

Keywords: *Economy,environment, water resources, pollution, soil deterioration, wastes, secondary use of resources, deforestation.*

ԼԵՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գյուղատնտեսությունը ֆինանսական ներդրումների տեսանկյունից համարվում է բարձր ռիսկային ոլորտ, ինչը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններից անմիջական կախվածությամբ: Գյուղատնտեսության ոլորտն առավել ևս աչքի է ընկնում ֆինանսական ներդրումների սակավությամբ, քանի որ առկա է նաև ցածր եկամտաբերության գործոնը: Ուստի գաղտնիք չէ նաև այն իրողությունը, որ տվյալ ոլորտի ռիսկայնությունից ելնելով, վարկերը տրամադրվում են բարձր տոկոսադրույքներով:

Հանրապետության ֆինանսատնտեսական զարգացման տեմպերն արագացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք հիմնարար միջոցառումներ, որոնցում էական դեր ունեն թե՛ պետական, և թե՛ մասնավոր ներդրումների վերաուղղումը դեպի գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունները, որոնք աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին, պարտավորվելով բարձրացնել աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել արտադրությունը: 2014 թվականին վերամշակող արդյունաբերության ոլորտում վարկավորման ծավալները կազմել են 179,9մլրդ. դրամ, իսկ հարաբերական շեղումը՝ 9,2%՝ նախորդ տարվա նկատմամբ: Իրոք, գյուղատնտեսության մեջ վարկերի ներգրավումը բավականին բարդ խնդիր է, որովհետև դրանք համարվում են մեծ ռիսկայնություն ունեցող գործընթացներ, սակայն առանց վարկային միջոցների ներգրավման տնտեսության տվյալ ճյուղը կդադարի գոյություն ունենալուց և տնտեսական աճի ապահովում չի լինի: Տնտեսության զարգացման համար կարևոր է առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային քաղաքականության վերանայումը, հատկապես տոկոսադրույքների նվազեցման, ինչպես նաև վարկերի վերադարձման ժամկետի խախտման դեպքում տուգանքների, պատժամիջոցների և ներդրման ավելի արդար մեխանիզմների ստեղծում, որն ավելի շատ անհրաժեշտ է հատկապես գյուղատնտեսական վարկերի ներդրման պարագայում:

Վերամշակման ոլորտում կարևորությունը՝ բուսաբուծության և անասնաբուծության ոլորտների ցիկլային աճի որոշակիորեն ազդեցությունն է մթերք վերամշակող արդյունաբերության զարգացման վրա, որի ակտիվացումն ու արտահանման ծավալների աստիճանական ավելացումը կնպաստի գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմանը և գյուղացիական տնտեսությունների *ապրանքայնության մակարդակի* բարձրացմանը (զգալիորեն ցածր է), որը կազմում է 40-45%, և չի կարող ապահովել արդյունավետ վերարտադրություն, որով էլ պայմանավորվում է տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարման հնարավորությունները: Գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններն աստիճանաբար հարմարվում են շուկայական տնտեսության պայմաններին, իրենց առաջ խնդիր դնելով բարձրացնելու աշխատանքի արդյունավետությունն ու թողարկվող արտադրանքի մրցունակությունը՝ ներդնելով արդիական տեխնոլոգիաներ և դիվերսիֆիկացնել արտադրությունը, ինչպես նաև ընդլայնել ու զարգացնել հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունները: Հանրապետության հումք վերամշակող արդյունաբերությունն արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության ձևավորման հիմնական նախապայմանն է: Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման խնդիրներն առավել արդյունավետ

կերպով կարող են լուծվել ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

ՀՀ–ում գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության կազմակերպություններ, այդ թվում՝ 35 պտուղբանջարեղենի, 50 խաղողի վերամշակման, 70 կաթի մշակման, 70 մսի վերամշակման, 20 փոքր սպանդանոցներ, 60 ալրաղաց, 10 ձկնամթերքի, 700 հացաթխման, 135 հրուշակեղենի և մակարոնեղենի, 7 գարեջրի, 3 բուսական յուղի և 2 շաքարի արտադրության: Արդեն կան ընկերություններ, որոնք հաջողությամբ մրցում են ինչպես ներքին, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում՝ կատարելով ներդրումներ արտադրության հետագա զարգացման համար:

ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության, արտահանման, ներմուծման, ինքնաբավարարության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2013-2014թթ. կտրվածքով հաշվարկված է ըստ ՀՀ ԱՎԾ- ի տվյալների (տե՛ս աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ՀՀ գյուղատնտեսական հումքի վերամշակման գծով հիմնական ցուցանիշներն ըստ 2013-2014թթ.

Արտադրատեսակը	*Չափի միավոր*	*Տեղական արտադրություն*		*Արտահանում*		*Ներմուծում*		*Ինքնաբավության մակարդակը, %*		*Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը, %*	
		2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.	2013թ.	2014թ.
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	4943,8	5718,3	368	412,3	5388	5942,7	49,6	50,8	45,9	47,2
Պանիր	տոննա	17375,4	18317,3	1541,2	1542,4	1243,7	1187,9	101,7	102,0	92,7	93,4
Պտուղբանջարանոցային պահածոներ	տոննա	9989,6	11714,2	7954,5	9600,3	8174,9	8519,8	97,8	110,2	19,9	19,9
Յութեր	հազ. լիտր	19544,2	21106,2	2013,3	2942,3	4429,6	2992,2	89,0	99,8	79,8	85,9
Հրուշակեղեն	տոննա	16543,6	18092,6	1118,7	1536,3	16374,3	16764,8	52,0	54,3	48,5	49,7
Մակարոնեղեն	տոննա	4093,1	4467,6	155,6	128,4	4825,4	5337,6	46,7	46,2	44,9	44,8
Կոնյակ	հազ. լիտր	20383,3	18725,5	18188	18556	911,6	4925,9	140,8	210,8	98,2	44,6
Գինի	հազ. լիտր	7216,7	6765,3	1398,5	2120,7	379,7	288,7	116,4	137,1	93,9	94,1
Գարեջուր	հազ. լիտր	19847,8	23716,,5	2346,4	1987,8	2731,1	2837,5	98,1	96,5	86,5	88,4
Բուսական յուղ	տոննա	4650,3	3967,7	1,8	0,9	26430,7	26204,8	15,0	13,2	15,0	13,1
Շաքարավազ	տոննա	69625	89189	899,2	200,0	4851,2	5643,8	94,6	94,2	93,4	94,0

Ագրովերամշակում minagro. am

Հանրապետության գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտին վերաբերող հիմնախնդիրների լուծման, տեղական արտադրողների մրցունակության բարձրացման, դրանց շահերի պաշտպանության, ստեղծված աշխատատեղերի պահպանման և նորերի ստեղծման, միջազգային շուկային ինտեգրման ու արտահանման ծավալների ավելացման նպատակով անհրաժեշտ միջոցառումները կարող են իրականացվել պետության կողմից հատուկ ծրագրերի շրջանակներում՝ առաջնային համարելով սննդամթերքի անվտանգության, ենթակառուցվածքների կարողությունների հզորացման, գյուղական համայնքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, գիտական կադրերի պատրաստման ու այլ նմանատիպ հարցեր:

Անհրաժեշտ է ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կարողությունների հզորացման և մրցունակության բարձրացման միջոցով ապահովել հիմնական պարենամթերքի ներմուծման փոխարինում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքով՝ ապահովելով ինքնաբավության մակարդակի բարձրացում:

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռի վերլուծության համաձայն, մի շարք անհրաժեշտ առաջնային պարենամթերքների ինքնաբավության մակարդակը բավականին ցածր է: Ըստ աղյուսակ 2-ի տվյալների 2014թ. դրությամբ դրանց թվում են՝ բուսական յուղը (13,2%), մակարոնեղենը (46,2%), հրուշակեղենը (54,3%) և այլն:

Բացի վերոհիշյալներից այսօր կարևորվում է նաև ՀՀ գյուղատնտեսական մթերքների իրացման գործընթացը գյուղացիական տնտեսությունների կողմից (տե՛ս աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

ՀՀ գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2013-2014թթ.

(տոկոսով)

	Ընդամենը	այդ թվում՝					
		վաճառվել է	տրվել է ապրանքափոխանակման	տրվել է մթերքով ծառայությունների դիմաց	օգտագործվել է տնտեսությունում	Ընդամենը վերամշակվել է	մնացորդ տնտեսությունում
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
Հացահատիկ և հատիկաընդեղեն							
2013թ.	100	21,9	7,4	3,8	37,8	60,2	29,1
2014թ.	100	23.7	7.5	3.6	35.8	56.6	29.4
Կարտոֆիլ							
2013թ.	100	38.0	6.0	1.9	29 .9	-	24.2
2014թ.	100	35.9	7.0	1.8	26.2	-	29.1
Բանջարեղեն							
2013թ.	100	71.3	6.4	0.5	18.7	31.6	3.1
2014թ.	100	73.94.2	4.2	0.8	16.8	31.9	4.6
Բոստան							
2013թ.	100	84.2	5.3	-	10.5	-	-
2014թ.	100	81.8	5.3	1.3	11.6	-	-
Պտուղ և հատապտուղ							
2013թ.	100	58.0	8.3	1.1	27.0	33.2	5.6
2014թ.	100	51.8	6.6	0.6	32.3	44.7	8.7
Խաղող							
2013թ.	100	76.5	3.5	0.3	17.1	32.8	2.6
2014թ.	100	78.1	2.3	0.4	16.7	26.2	2.9
			Միս				
2013թ.	100	80.9	3.0	0.2	15.1	4.1	0.8
2014թ.	100	81,5	1,4	0,1	16,5	19,8	0,5
Կաթ և կաթնամթերք							
2013թ.	100	44.7	9.1	0.8	42.0	69.7	3.4
2014թ.	100	56,6	3,8	0,4	36,3	62,7	2,9
Ձու							
2013թ.	100	37.8	9.4	0.1	52.5	-	0.2
2014թ.	100	35,1	7,8	0,2	54,8	-	2,1
Բուրդ							
2013թ.	100	26.2	13.3	1.2	21.6	10.5	37.7
2014թ.	100	32,9	10,3	0,8	19,1	15,7	36,9
Մեղր							
2013թ.	100	49,7	6.2	0.9	29.0	-	14.2
2014թ.	100	41,4	5,4	0,4	38,1	-	14,7

ԱՎԾ- տվյալներն ըստ 2013-2014թթ.

Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդրի լուծման համար նախատեսվում է՝

- Գյուղատնտեսական մթերքների կանոնակարգված գործող մեծածախ շուկաների ձևավորումը, հավաքման կետերի, գյուղական մթերքների իրացման տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովումը:
- Հանրապետության մեծ քաղաքներում գյուղական մթերքների տոնավաճառների ստեղծումը և դրանց գործունեության ապահովումը:
- Գյուղատնտեսական մթերքների վերամշակողների և արտադրողների միջև երկարաժամկետ փոխշահավետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը:
- Գյուղատնտեսական մթերքների արտահանման խթանումը:

Թե ինչպիսին է ՀՀ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կողմից առանձին ապրանքատեսակների գնումների ծավալները վերջին տարիների առումով ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից 2012-2014 թթ. պտղի, բանջարեղենի և խաղողի գնումների ծավալները

Հումքի անվանումը	*2012թ.*		*2013թ.*		*2014թ.*	
	հազ. դրամ	տես կշիռ.	Հազ. դրամ	տես կշիռ.	Հազ. դրամ	տես կշիռ.
Պտուղ ընդամենը	25620,0	100.0	28791,5	100.0	13875,8	100.0
այդ թվում՝						
Խնձոր	4767,0	18,6	5187,8	18,0	3084,1	22,2
Դեղձ	6163,4	24,1	1921,0	6,7	2917,0	21,0
Ծիրան	8854,1	34,6	13038,6	45,3	710,0	5,2
Կեռաս, սալոր, բալ	1454,9	5,7	2079,6	7,2	2776,9	20,0
Ընկույզ	213,0	0,8	232,7	0,8	165,0	1,1
Հատապտուղ	752,0	2,9	1714,4	6,0	1145,3	8,2
այլ պտուղ	3416,0	13,3	4617,4	16,0	3077,5	2,3
Բանջարեղեն ընդամենը	33645,8	100.0	27970,1	100.0	34076,9	100.0
այդ թվում՝						
Լոլիկ	26229,0	77,9	18970,0	67,7	23252,0	68,2
Վարունգ	355,5	1,0	468,5	1,7	598,7	1,7
Սմբուկ	2021,0	6,0	2324,0	8,5	3477,4	10,2
Պղպեղ	2313,0	6,9	2455,0	8,8	2801,0	8,3
Լոբի	831,0	2,5	1612,0	5,7	1644,0	4,8
այլ բանջարեղեն	1896,8	5,7	2140,6	7,8	2303,8	6,8
Խաղող	156590,2	-	167184,7	-	184149,0	-
Ընդամենը	215856,0	-	223946,3	-	232101,7	-

Ագրովերամշակում minagro. am

Հանրապետությունում մոտ 250,0 հազ. տոննա է կազմում պտուղբանջարեղեն վերամշակող կազմակերպությունների մթերման հզորությունները, որից բանջարեղենային պահածոների բաժինը կազմում է 154.,5 հազ. տոննա, պտուղ-հատապտղային պահածոներինը և հյութերինը՝ 94,5 հազ. տոննա: Հզորությունները օգտագործվում են ոչ ծանրաբեռնված, ընդհանուր մթերման հզորությունների 23,9%-ն է օգտագործվել, որից բանջարեղենային պահածոներինը՝ 21,2%-ը, իսկ պտուղ-հատապտղայինը և հյութերինը՝28,6%-ը:

Աղյուսակ 4

ՀՀ գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների արտադրության ծավալները 2010-2014թթ.

Արտադրատեսակները	*Չափի միավոր*	*Արտադրությունը*				
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակող (ներառյալ ներքին սպառումը)	տոննա	54497,3	60987,1	65895,7	72334,6	82257,1
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	3953,5	4488,8	4757,0	4943,8	5718,3
Պանիր	տոննա	17050,0	17525,0	17658,0	17375,4	18317,3
Կաթ, կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերահաշվարկումը (բացառությամբ ներքին սպառումը)	տոննա	279400,0	315800,0	319800,0	362700,0	386500,0
Պաղպաղակ	հազ. լիտր	3312,9	3480,8	3628,6	4265,1	6345,0
Հրուշակեղեն	տոննա	11589,4	13013,2	14319,8	16543,6	18092,6
Մակարոնեղեն	տոննա	2614,8	3247,9	3563,0	4093,1	4467,6
Բուսական յուղ	տոննա	1034,3	696,5	2656,1	4650,3	3967,7
Կենդանական յուղ	տոննա	950,4	812,8	645,5	518,0	1092,5
Պահածոներ ընդամենը	տոննա	8025,0	11772,6	9134,2	9989,6	11714,7
այդ թվում՝բանջարեղե	տոննա	4558,7	4248,2	2951,2	2814,2	4856,3
Կոնյակ, օղի	հազ. լիտր	24535,8	24568,0	28586,6	30222,6	28231,6
Բնական հյութեր	հազ. լիտր	11689,5	14615,2	116741,6	19544,2	21106,2
Գինի և շամպայն	հազ. լիտր	6430,2	6814,6	6192,5	7216,7	6765,3
Գարեջուր	հազ. լիտր	15352,7	14744,3	13668,2	19847,8	23716,5
Ոչ ալկոհոլային	հազ. լիտր	38232,1	45756,0	45320,8	63400,0	79972,6
Հանքային ջուր	հազ. լիտր	30000,0	29232,8	32977,3	43215,3	58618,3
Շաքարավազ	տոննա	32508,4	72159,4	69267,0	69625,0	89189,0

Ագրովերամշակում minagro. am

Ըստ աղյուսակ 5-ի տվյալների 2014 թվականին 2013 թվականի համեմատ գրանցվել է որոշակի աճ՝ հումքի վերամշակումից ստացվող որոշ արտադրատեսակների ծավալներում, մասնավորապես՝ մսամթերքն ավելացել է 15.6%-ով, կաթն ու կաթնամթերքը՝ 6,5 %-ով, բնական հյութերը՝ 8,0%-ով, գարեջուրը՝ 19.5%-ով, հրուշակեղենը՝ 9.3 %-ով, իսկ շաքարավազը՝ 28.0%-ով:

Այս առաջընթացը պայմանավորված է ի հաշիվ գործող և նոր ստեղծվող արտադրական կազմակերպության արդիական տեխնոլոգիաների կիրառման, արդյունավետ կառավարման և մարքեթինգային ծառայությունների զարգացման հաշվին: Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, տեխնոլոգիաների կատարելագործման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի գծով չափորոշիչների կիրառման հիմնահարցերը կարող են լուծել հումք արտադրողների և վերամշակողների միջև շատ կարևոր՝ պայմանագրային հարաբերություններ, որոնք կնպաստեն փոխշահավետ համագործակցության զարգացմանը՝ հիմնական նպատակը լինելով, ինչպես արտադրական հզորությունների տեսականու ընդլայնումը, այնպես էլ արտադրանքի մրցունակության բարձրացումը:

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԼԵՆԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը ներդրումների տեսանկյունից բարձր ռիսկային է, պայմանավորված ոչ միայն բնակլիմայական պայմաններով, այլ նաև ցածր եկամտաբերության գործոնից էլ կախված, վարկերի բարձր տոկոսադրույքներով: Հայաստանում կարևորվում են ագրովերամշակող կազմակերպությունները, որոնցում իրական դեր ունեն թե՛ պետական, և թե՛ մասնավոր ներդրումները: Վերջիններս էլ հարմարվելով շուկայական պայմաններին և ներդնելով բարձր տեխնոլոգիաներ, կպարտավորվեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի մրցունակությունը: Վերլուծությունները պայմանավորված են գործող և նոր ստեղծվող կազմակերպություններում արդիական տեխնոլոգիաների կիրառմամբ, արդյունավետ կառավարմամբ և մարքեթինգային ծառայությունների զարգացմամբ:

Բանալի բառեր, *ներդրումներ, ռիսկային, վարկեր, եկամտաբերություն, տոկոսադրույք, բարձր տեխնոլոգիաներ, առաջընթաց, վերամշակող, մրցունակություն, արտադրանք:*

ПУТИ УЛУЧШЕНИЯ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ПРОДОВОЛЬСТВИЯ АГРОПЕРЕРАБАТЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

ЛЕНА МНАЦАКАНОВНА ОГАНИСЯН, *к.э.н*
старший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Инвестиции в сельском хозяйстве считаются высокорисковыми, что обусловлено не только природно-климатическими условиями, но также предоставлением в зависимости от фактора низкой доходности высоко-процентных кредитов. В Армении важное значение имеют агроперерабатывающие предприятия, в которых существенная роль принадлежит как государственным, так и частным инвестициям. Предприятия, приспосабливаясь к рыночным условиям и внедряя высокие технологии, обязаны повышать производительность труда и конкурентоспособность продукции. Исследования обусловлены важностью примененининия современных технологий в действующих и вновь создаваемых предприятиях, эффективным управлением последних и развитием маркетинговых услуг.

Ключевые слова: *инвестиции, рисковые кредиты, доходность, процентная ставка, высокие технологии, прогресс, перерабатывающая, конкурентоспособность, продукция.*

APPROACHES TO IMPROVING THE PRODUCTION, DISTRIBUTION AND SALES IN THE AGRI-PROCESSING SECTOR OF THE REPUBLIC OF ARMENIA

LENA MNATSAKAN HOVHANNISYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Investments in the agriculture are highly risky associated with not only natural disasters, but also with low rates of profitability, and high loan interest rates. In Armenia, the role of agri-processing companies is stressed and therefore, the Government and private sector investments play a crucial role. These companies, by facing the challenges of the market and investing in high technology, would increase labor productivity, and competitiveness of produced items. The analysis is based on the utilization of modern technology, management practices and application of marketing tools in the acting and newly established companies.

Keywords: *Investment, risky, loans, profitability, interest rate, high technology, progress, processing, competitiveness, production.*

ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ մագիստրանտ

ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՏՏ ոլորտը աշխարհի ամենաարագ զարգացող ոլորտներից մեկն է: 21-րդ դարը նշանավորվում է ՏՏ միջավայրի զարգացմամբ և ՏՏ հասարակության ձևավորմամբ: Տեղեկատվական հասարակություն ասելով՝ կարելի է հասկանալ տեղեկատվական տեխնոլոգիաների մի նոր հասարակություն, որտեղ հասարակության բարեկեցությունը կախված է նոր տեղեկատվական գիտելիքների ձեռքբերումից և դրանց ճիշտ օգտագործումից[1]: Աշխարհում ձևավորվում է համաշխարհային տեղեկատվական հասարակություն, որը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ազգային տնտեսության մրցակցությունը կապված է ՏՏ ոլորտի զարգացման հետ: Այսպիսով՝ ինովացիոն դարաշրջանում, որում ապրում ենք, հաջող տնտեսական զարգացումը պայմանավորված է ՏՏ ոլորտի զարգացման հետ: Ներկայումս զարգացած և զարգացող երկրների մեծ մասում տեղի է ունենում ՏՏ հասարակության կայացում, իսկ դրանց արդյունավետ օգտագործումը դառնում է շատ արդիական:

Հատկանշական է, որ յուրաքանչյուր երկրի զարգացումը որոշվում է ՀՆԱ-ում ՏՏ-ի մասնաբաժնով: Հաշվի առնելով վերոնշյալ փաստը՝ կարևոր է ՏՏ արտադրության արդյունավետ կառավարումը: Համաշխարհային պատմությունը ցույց է տալիս, որ տնտեսական ինտեգրումը անդամ երկրներին կարող է շոշափելի օգուտներ տալ: Երկրները, որոնք չեն օգտագործում ինտեգրման ներուժը իրենց ռազմավարության շրջանակներում, չեն կարող երկար գոյատևել ներկայիս մրցակցային և գլոբալիզացման պայմաններում: Հարկ է նշել, որ ՀՀ-ը, ներգրավված լինելով ինտեգրացիոն գործընթացներին, կարող է օգտվել ընդհանուր որոշումներից, մասնակցել բոլոր նախագծերին, դրա հետ մեկտեղ ունենալ ընդհանուր պարտավորություններ: Ինտեգրման շրջանակներում հարկավոր է դիտարկել ինչպես ապագա ձեռքբերումները, այնպես էլ հնարավոր կորուստները: Ինչպես ցույց է տալիս փորձը, միավորվելով տնտեսական ինտեգրացիոն կազմակերպություններին՝ զարգացող պետությունները կարող են հասնել ավելի մեծ տեմպերի և ավելի ճիշտ օգտագործել սեփական առավելությունները:

Սոցիալ-տնտեսական ընդհանուր տարածաշրջանի ստեղծումը առաջին հերթին կարող է նպաստել ՏՏ ոլորտի զարգացմանը, քանի որ այն այժմ հանդիսանում է հիմնարար ոլորտներից մեկը: Ոլորտը նպաստում է արտադրողականության բարձրացմանը: Հարկ է նշել, որ ՀՀ-ը զբաղեցնում է առաջատար դիրք տարածաշրջանում: ՏՏ-ն հսկայական ներդրումներ ունի ՀՀ-ի արդյունավետության բարելավման գործում, դրա հետ մեկտեղ դրանք ակտիվորեն խթանում են բիզնես գործընթացների զարգացմանը:

ՀՀ-ում ՏՏ ոլորտի ճիշտ ռազմավարության իրականացումը կօգնի նվազեցնել տնտեսական հումքի արտահանման մասնաբաժինը: Ռազմավարության համակարգված իրականացումը կնպաստի տեղեկատվական ապահովության անվտանգությանը, այդ թվում՝ ՏՏ ոլորտի սպառնալիքների կանխարգելմանը: Ինտեգրացիայի շրջանակներում ՏՏ ոլորտը կդրվի որակական նոր մակարդակի վրա՝ ապահովելով աճի բարձր տեմպեր: ՀՀ-ի ռազմավարական նպատակը այս փուլում հասարակության լիարժեք անդամ դառնալն է՝ դրա հետ մեկտեղ պահպանելով իր քաղաքական անկախությունը, ազգային ինքնուրույնությունը և մշակութային ավանդույթները: Տնտեսական ինտեգրումը տեղի է ունենում ինչպես ազգային տնտեսական, այնպես էլ ձեռնարկությունների, ընկերությունների և կազմակերպությունների մակարդակով[2]: Ինտեգրացիայի

[1] Арутюнян М. Л. Риски, обусловленные трансформацией социально-политического пространства в современном информационном обществе 2014г.

[2] Борисов А.Б. Большой экономический словарь 2009 г.

մասին խոսելիս կարևոր է դիտարկել ԵԱՏՄ-ն որպես համակարգ՝ հաշվի առնելով դրանում առկա անդամ երկրների ներքին տնտեսական և քաղաքական համակարգերը, անդամ երկրների փոխհարաբերությունները, տեխնոլոգիական հագեցվածությունն ու դինամիկան և անդամ երկրների ռազմավարական նպատակները: Այսպիսով՝ տնտեսական ինտեգրումը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական միտումներից մեկն է, և այն ավելի նշանակալից դարձավ վերջին տասնամյակում:

Ինտեգրումը ՀՀ-ին հնարավորություն կտա ավելի համակարգված համագործակցել Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի հետ: ՀՀ-ի համար ՏՏ ոլորտի զարգացումը շատ կարևոր է, քանի որ այն թույլ կտա կատարել նշանակալից ներդրումներ: ՏՏ ոլորտի զարգացումը սոցիալական ոլորտում կհանգեցնի մի շարք բարեփոխումների: Ինտեգրացիայի շրջանակներում ՏՏ ոլորտը կդրվի որակական նոր մակարդակի վրա՝ ապահովելով աճի բարձր տեմպեր:

Հարկ է նշել, որ ինտեգրվող երկրները ունեն մի շարք տարբերություններ՝ մասնավորապես կառավարման և գործարարության համակարգերում: Միասնական ՏՏ դաշտի ստեղծումը ենթադրում է համակարգված բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական աղբյուրների, նյութական և գիտական ռեսուրսների, ինչպես նաև համապատասխան իրավական կարգավորումների ամբողջություն:

ՏՏ ոլորտի հետևողական ծրագրի իրականացումը կարող է բեկումնային զարգացում ապահովել: Ոլորտի զարգացման համալիր ծրագիրը կապահովի ոլորտի աճ և որակական նոր մակարդակի զարգացման հիմք կհանդիսանա: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է բացահայտել առկա խոչընդոտները, ձեռնարկել քայլեր դրանք հաղթահարելու համար:

Աղյուսակ 1

ՀՀ-ի ՏՏ ոլորտի հիմնական ցուցանիշները 2010-2015թթ.[1]

		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
ՀՀ	գործող ընկերությունների ընդհանուր քանակ	197	281	360	380	400	450
	կուտակային տարեկան աճ (%)	15.6	22.6	23	20	19	21
	ոլորտի շրջանառությունը (մլն. ԱՄՆ դոլար)	14.8	205.1	244	294	349.4	559.1

Ըստ վերջին կանխատեսումների՝ 2015թ. ՌԴ-ի շուկայի ծավալը կկազմի 15-16 մլրդ դոլար: Մինչդեռ, ըստ սեփական հաշվետվությունների, 10 տարի առաջ ՌԴ-ի ՏՏ շուկան 2005-ին հասել էր 12 մլրդ. դոլարի: Այս անհամապատասխանությունը բացատրվում է այն փաստով, որ ավելի վաղ զեկույցում չեն ներառվել վաճառքի որոշ սեգմենտներ՝ բջջային հեռախոսներ, սմարթֆոններ: Հետագայում այս սեգմենտները դարձան ՏՏ-ի մի մաս, ինչն էլ իր հերթին ազդեց ընդհանուր ծավալի վրա: 2013թ. ՌԴ-ի ՏՏ շուկան կազմել է մոտ 35 մլրդ. դոլար, իսկ 2014թ.՝ մոտ 29 մլրդ. դոլար:

ՏՏ ոլորտը Ղազախստանում վերջին տարիներին զգալի աճ է գրանցել: Ըստ վիճակագրական տվյալների՝ Ղազախստանի 2014թ. ՏՏ մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 3.9%: Ղազախստանը մոտ է գտնվում ՌԴ-ին, և թերևս այդ է պատճառը, որ ռուսական ՏՏ ընկերությունները նախատեսում են ընդլայնել իրենց ծրագրերը հարևան երկրների հետ:

Ինչ վերաբերում է Բելառուսին, ապա վերջին ժամանակներս Բելառուսը վաստակել է ՏՏ առաջատար երկրի համբավ: Վերջին 10 տարիների ընթացքում Բելառուսի ՏՏ ոլորտը բնութագրվում է կայուն աճի տեմպերով: Տարեկան աճի տեմպը միջինում կազմում է 35-40 %, մինչդեռ աշխարհում այն կազմում է 4-6%:

Աղյուսակ 1-ից պարզ է դառնում, որ 2015թ. Հայաստանում ՏՏ ոլորտում գործող ընկերությունների շրջանառությունը աճել է: Ընդհանուր առմամբ՝ 2010-2015թթ. ժամանակահատվածում ՏՏ ոլորտը տարեկան աճել է միջինը 20.1%: Ոլորտում գործում է գրեթե 450 ընկերություն: 2014թ. համեմատ՝ դրանց թիվը աճել է 12%-ով: Հարկ է նշել նաև, որ ընկերությունների զգալի մասը ձևավորվում են Գյումրիում և Վանաձորում: 2010-2015թթ. տարեկան մոտավորապես 30 ընկե-

[1] Աղյուսակը կազմվել է՝ http://www.mineconomy.am, վիճակագրական տվյալների հիման վրա:

րություն է հիմնվում, մինչդեռ 90-ականներին ընդամենը՝ 5-6: 44 ընկերությունների տարեկան շրջանառությունը գերազանցում է 1 մլն դոլարը: Ընկերությունների մոտավորապես կեսն ունի 100 հազարից մինչև 1 մլն. դոլարի շրջանառություն:

ՀՀ-ում 2015թ. ՏՏ ոլորտը նշանավորվեց ֆինանսական կառուցվածքների ներդրմամբ, տեխնոլոգիական ձեռնարկությունների խթանմամբ, ոլորտի կարողությունների զարգացմամբ, արտադրողականության բարձրացմամբ, ինչպես նաև որակյալ մասնագետների պատրաստմամբ և վերապատրաստմամբ, վաճառքի ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանմամբ: ՀՀ-ի ՏՏ ոլորտի մրցակցային կարևոր առավելություններից մեկը ոլորտի աշխատուժն է: Ներդրողների համար գրավիչ է նաև մեր մասնագետների բարձր արտադրողականությունը և աշխատուժի մատչելիությունը: Հարկ է նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին խթան կհանդիսանա ակտիվացնելու Ռուսաստանի ՏՏ ընկերությունների գործունեությունը ՀՀ-ում:

Ներկայումս հայաստանյան ՏՏ ոլորտը արտահանման մեծ ներուժ ունի, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել Հայաստանի տնտեսության աճին և զարգացմանը: ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող որակյալ արտադրանք ու ծառայություններ: Պետք չէ սակայն մոռանալ,որ ոլորտում առկա են խնդիրներ արտաքին շուկա դուրս գալու և ՏՏ ոլորտի համար մասնագետներ պատրաստելու հարցում: Այստեղ կարևորվում է կառավարության կողմից խրախուսման քաղաքականությունը և աջակցման ծրագրերի իրականացումը: Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այնպես էլ ՏՏ-ում, զարգացման համար հատկանշական դեր են խաղում ներդրումները: Անդամ երկրների ինտեգրումը կարող է փոխշահավետ լինել և՛ ընկերությունների, և՛ պետության համար: Ընդ որում՝ հարկ է նշել, որ վերջին տարիների ընթացքում ԱՊՀ երկրներում ՏՏ ոլորտի ներդրումների աճ է նկատվել:

ՏՏ ոլորտում Հայաստանը տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունի հետևյալ մրցակցային առավելությունները[1]՝

- տեղեկատվության, ճարտարագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքների իրականացման կարողություն,
- համագործակցության մեծ փորձ,
- տեխնիկական հմտություններով և օտար լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետների առկայություն,
- գործառնական ցածր ծախսեր և էժան աշխատուժ,
- ոլորտի կայուն զարգացում,
- ԲՈՒՀ-ական ծրագրեր ՏՏ ոլորտի շրջանակներում,
- միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ:

Կարևոր ենք համարում նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը Եվրասիական Միությանը դեռևս չի տվել էական ազդեցություն ՏՏ ոլորտում, սակայն, անշուշտ ընդհանուր սահմանի բացակայությունը ԵԱՏՄ երկրների հետ այս ոլորտում չունի էական ազդեցություն, իսկ ընդհանուր շուկայում ոլորտի համակարգված զարգացման պարագայում լայն հնարավորություններ է ստեղծվում այդ ոլորտում Հայաստանի առավելությունները և ներուժը էապես մեծացնելու ու կիրառելու համար:

[1] http://www.mineconomy.am/

ՏՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՄԵՐԻ ԱՐՄԵՆԻ ՂՈՒԲԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ մագիստրանտ

Համառոտագիր

ՀՀ-ի ինտեգրումը Եվրասիական տնտեսական միությանը կարող է ապահովել ՏՏ ոլորտի զարգացման բարձր ներուժ: Ոլորտը տնտեսության ամենաարագ և արագ զարգացող ճյուղերից է, որն էլ իր հերթին նպաստում է երկրում տեխնոլոգիական նորարարության և արտադրողականության բարձրացմանը: Սույն հոդվածում քննարկվում են ԵՏՄ-ին ՀՀ ինտեգրման շրջանակներում ՏՏ ոլորտի զարգացման հեռանկարները:

***Բանալի բառեր**. ինտեգրացիա, Եվրասիական տնտեսական միություն, ՏՏ ոլորտ, տեղեկատվական հասարակություն, մարտահրավերներ, համագործակցություն, ներուժ:*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ИТ- СЕКТОРА В РАМКАХ ИНТЕГРАЦИИ

МЕРИ АРМЕНОВНА ГУБАСАРЯН
младший научный сотрудник Института экономики им. М.Котаняна НАН РА
магистрант Армянского государственного экономического университета

Аннотация

Интеграция Армении в Евразийский экономический союз может обеспечить высокий потенциал развития ИТ-сектора. Сектор является одной из наиболее успешных и динамично развивающихся отраслей экономики, что в свою очередь способствует повышению технологического инновационного потенциала и производительности в стране. В статье рассматриваются перспективы развития ИТ-сектора в рамках интеграции Армении в Евразийский экономический союз.

***Ключевые слова:** интеграция, Евразийский экономический союз, ИТ-сектор, информационное общество, вызовы, сотрудничество, потенциал.*

IT SECTOR DEVELOPMENT PROSPECTS WITHIN THE INTEGRATION FRAMEWORK

MERI ARMEN GHUBASARYAN
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
Graduate Student, Armenian State University of Economics

Abstract

Integration of the Armenian economy into the Eurasian Economic Union could ensure a high potential for the development of the IT sector. The sector is the most successful and dynamically sectors of the sectors of the economy that in its turn contributes to technological innovation, and increase in productivity. This article discusses the development prospects of the IT sector upon accession to the EAEU within the framework of integration.

***Keywords:** Integration, Eurasian Economic Union, IT sector, information society, challenges, cooperation, potential.*

ՌՈՒԶԱՆՆԱ ՅԱԿՈՎԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

21-րդ դարը նոր դարաշրջան է, երբ համաշխարհային տնտեսության միտումները առաջ են բերում բազմաթիվ մարտահրավերներ, որոնց դիմակայելու միակ ուղին արագացող տեխնոլոգիական, սոցիալական, մշակութային փոփոխություններին հարմարվելն է: ԼՂՀ-ի համար այդ մարտահրավերները կրկնապատկվում են աշխարհաքաղաքական ներկա զարգացումներով, երկրի յուրահատուկ իրավիճակով և նրա շուրջ տեղի ունեցող մտահոգիչ իրադարձություններով պայմանավորված: Այդ առումով ներկա պայմաններում հանրապետության հիմնական մարտահրավերների շարքում կարելի է ընդգծել նաև Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը՝ որպես երկրի դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք: Հատկապես վերջերս Արցախի դեմ Ադրբեջանի սկսած քառօրյա պատերազմը և շարունակվող մարտական գործողությունները լուրջ մարտահրավեր են ԼՂՀ և ՀՀ համար, որի արդյունքում ԼՂՀ տնտեսությունը կկրի ուղղակի և անուղղակի վնասներ, ինչը միանշանակ տնտեսական զարգացման խաթարման պատճառ կարող է հանդիսանալ:

Ձևավորված իրավիճակում կարծում ենք ԼՂՀ տնտեսության զարգացման հրամայականը պետք է դառնա ինովացիոն զարգացման միջոցով գիտելիքահենք տնտեսության ձևավորումն ու կայացումը: ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության ամրապնդմանն ուղղված որոշակի քայլեր ձեռնարկվել են: Այդպիսին է Դիլիջանի տեխնոլոգիական դպրոցի բացումը, որը, գտնվելով ակտիվ համագործակցության մեջ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի հետ, առանձնանում է միջազգային ստանդարտներին համապատասխան ուսումնական ծրագրերով, փորձառու մասնագետներով, բազմակողմանի զարգացում ապահովող առարկայացանկով և համարվում է միջազգային կրթության բարձրագույն նվաճումների ազգային բյուրեղացումը: Կարծում ենք, որ նման որակի կրթություն հասանելի է նաև ԼՂՀ-ին, ուր մշակվել և մշակվում են կադրային, մասնագիտական որակավորման մի շարք ծրագրեր: Հատկապես վճռորոշ է Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) կենտրոնի դերը, որն ապահովում է SS ոլորտում բիզնեսի զարգացման համար բարենպաստ պայմաններ և փորձում նպաստել ԼՂՀ տնտեսության զարգացմանն ու բարգավաճմանը՝ սատարելով սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին: Կրթական ծրագրերի և մրցունակ աշխատուժի պատրաստմանը, ինովացիան խթանող բիզնես միջավայրի ձևավորմանը, տեխնոլոգիական ձեռներեցության խթանմանը զուգընթաց, այն նպատակ ունի տարածաշրջանում պատրաստել մրցունակ աշխատուժ և բարձրակարգ մասնագետներ: Այդ առումով խոշոր քայլ է նաև տարածաշրջանային նշանակության «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ստեղծումը, որը նույնպես գիտության և կադրերի պատրաստման բնագավառներում աննախադեպ աճ ապահովելու նպատակ է հետապնդում: Նախատեսվում են կրթական նոր մոդելներ, մոտեցումներ, դասավանդման նոր մեթոդաբանություն և գաղափարախոսություն, ազգային հենքի վրա կրթական բարձրագույն ձեռքբերումների փորձարկման ու մշակման նոր հիմքեր՝ ի նպաստ գիտելիքահենք տնտեսության մրցունակության բարձրացման:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գիտելիքահենք տնտեսության մրցունակության հիմքում ընկած է հենց ինովացիան՝ գիտելիքը ուղղված նոր արտադրանքի, գործընթացների և ծառայությունների փոխակերպելու ճանապարհով հավելյալ տնտեսական արժեքի ստացմանը: Իհարկե, այս ոլորտում զարգացման ինստիտուցիոնալ որոշակի հիմքեր առկա են, սակայն հարկ ենք համարում առանձնացնել ներքոհիշյալ հիմնախնդիրները.

- գիտական հետազոտությունների և մշակումների առևտրայնացման ոչ արդյունավետ մակարդակը,
- օրենսդրահիրավական դաշտի անկատարությունը, որը դժվարացնում է մտավոր սեփականության նկատմամբ իրավունքի պաշտպանությունը,
- տեխնոպարկերի բացակայությունը՝ որպես ինովացիոն գլխավոր ենթակառուցվածքների,
- պետության կողմից կազմակերպությունների նորամուծական գործունեության ֆինանսավորման ոչ բավարար մակարդակը:

Ընդգծենք, որ ինովացիոն գործունեության զարգացումը պահանջում է առաջին հերթին կանոնակարգված և հիմնավորված ֆինանսական միջոցների ստեղծում: Սակայն, հաշվի առնելով երկրի բյուջետային միջոցների անբավարարությունը, նորամուծություններին ուղղվող ծախսերի ավելացում կարելի է ակնկալել միայն հայրենական գործարարության ինովացիոն ակտիվության ընդլայնումից: Այդ առումով կարծում ենք, որ ԼՂՀ-ում գիտելիքի տնտեսություն տանող ամենահիրական ճանապարհը պետք է դառնա արտասահմանյան մասնավոր կապիտալի ներհոսքը:

Ընդհանրացնելով կարելի է առանձնացնել ԼՂՀ ինովացիոն զարգացման ներքոհիշյալ գերակա ուղղությունները.

- միջազգային գիտելիքն ու ֆինանսավորման աղբյուրները մատչելի դարձնելը,
- բարձրակարգ մասնագետներ պատրաստելը,
- տեղական ընկերությունները գլոբալ ցանցերում ընդգրկելու հնարավորությունների ընդլայնումն ու կատարելագործումը:

Վերոնշյալ միջոցառումները միանշանակ կհանգեցնեն հասարակության կյանքի որակի բարձրացմանը, տնտեսության զարգացմանն ու առաջընթացի ապահովմանը:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակված Համաշխարհային ռիսկերի զեկույցի՝ 2016թ. գլոբալ ռիսկերի ցանկում կարևորվում են պարտադրված միգրացիոն հոսքերը: Ամենահավանական ռիսկը համարվում է արտագաղթը: Ներկա պայմաններում ԼՂՀ-ի շուրջը տեղի ունեցող մտահոգիչ իրադարձությունները անկասկած բացասական ազդեցություն կունենան երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա, կավելանա արտագաղթողների թիվը, ինչը պետության և ազգային անվտանգության համար լուրջ սպառնալիք է: Հանրապետությունում պետականության գոյությանը սպառնացող ահավոր վտանգը՝ արտագաղթը, բացատրվում է ոչ միայն ապագայի նկատմամբ հավատ ու երաշխիք չունենալու հուսահատությամբ, այլև սոցիալական անարդարությամբ, աշխատանքային ներուժի ոչ արդյունավետ օգտագործմամբ:

Այդ պայմաններում հանրապետությունն ստիպված էր դիմագրավել ժողովրդագրական լուրջ մարտահրավերների: Հրատապ խնդիր է առաջացել՝ որդեգրել ժողովրդագրական նոր քաղաքականություն, ինչը կկանխի ժողովրդագրական բացասական երևույթների խորացումը և կստեղծի առկա իրավիճակը շտկելու և ժողովրդագրական զարգացման կայուն ու հետևողական միտումներ ապահովելու ծանրակշիռ նախադրյալներ:

ԼՂՀ կառավարությունը քաջ գիտակցում է ժողովրդագրական մարտահրավերների բարդությունը և համակարգված միջոցառումներ է ձեռնարկում խնդիրների լուծման ուղղությամբ: Դրա վկայությունն է «ԼՂՀ պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի իրականացումն ապահովող 2015-2016 թվականների ծրագիրը», որը բխում է ԼՂՀ կառավարության 2010թ. հունվարի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին» N 21-Ն որոշման պահանջներից: Ծրագրի հիմնական նպատակը երկրում ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը ապահովող միջոցառումների իրականացումն է:

2014թ. միգրացիոն տեղաշարժերի տարեկան ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրապետությունում ներքին միգրացիոն տեղաշարժերում ներգրավված է եղել 1347 մարդ, որից 455 երեխա: Միգրացիայի մնացորդը 2014թ. կազմել է 368 մարդ՝ 2013 թ. 312 մարդու դիմաց: 2014թ. եկողների թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 6.4 մարդ, մեկնողներինը՝ 3.9 մարդ՝ 2013թ., համապատասխանաբար, 5.8 մարդու և 3.7 մարդու դիմաց[1]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պոտենցիալ միգրանտների մեկնելու ամենահավանական ուղղությունը Ռուսաստանն է: Տնային ծառայություններում, շինարարության և տրանսպորտի ոլորտներում զբաղվածները ավելի հակված են արտագաղթելու ցանկություն հայտնելու, քան այլ պատրաստվածության տեր մարդիկ: Արտագաղթին նախապատրաստվելու հարցում տեղեկատվության և աջակցության հիմնական աղբյուրները սոցիալական կապերն են: Ռուսաստանի՝ որպես միգրացիոն ուղղության, ժողովրդականությունը կարելի է բացատրել երկիր մուտք գործելու հեշտությամբ, տեղի լեզվին տիրապետելով, աշխատանք գտնելու, ինչպես նաև Ռուսաստանում արդեն գոյություն ունեցող սոցիալական կապերով:

[1] Հաշվարկները կատարված են ԼՂՀ ԱՎԾ 2015թ. պաշտոնական տվյալների հիման վրա:

Աշխատանքային միգրացիայի շուրջ չկան միանշանակ դրական կամ բացասական արդյունքներ: Աշխատողները, ովքեր հայրենի երկրում գործազուրկ էին, աշխատանք են գտնում արտերկրում, դրամական փոխանցումներ են կատարում իրենց ընտանիքներին՝ այդ կերպ կրճատելով աղքատությունը և առաջացնելով ներդրումներ, որոնք արագացնում են տնտեսության աճը և աշխատատեղերի ստեղծումը, և վերադառնում նոր հմտություններով և տեխնոլոգիաներով, որոնք հանգեցնում են նոր արտադրության և աշխատատեղերի ստեղծման: Այնուհանդերձ, տնտեսական դրդապատճառներով տեղի ունեցող միգրացիան կարող է նաև բացասական գործընթացի հիմք դառնալ այն դեպքերում, երբ որոշակի մասնագիտությունների տեր անձինք, աշխատանք են ստանում արտերկրում, իսկ հայրենի երկրի տնտեսության համապատասխան ոլորտներում չկան մասնագիտական հմտություններ ունեցող մասնագետներ, որի հետևանքով տուժում է համապատասխան արտադրության և ծառայությունների որակը և քանակը: Այս դեպքում դրամական փոխանցումները, եթե այդպիսիք կան, վերածվում են գնաճը խթանող գործոնների, քանի որ ուղղվում են սպառմանը, ոչ թե աշխատատեղերի ստեղծմանը:

ԼՂՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը կարող է նպաստել Արցախ վերադառնալու ցանկություն հայտնած ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման, նրանց բնակտարածքով ապահովման աշխատանքների արդյունավետության բարձրացման, զբաղվածության և մի շարք այլ խնդիրների լուծման ուղղությամբ հանրապետությունում իրականացվող միգրացիոն քաղաքականությունը: Այդ նպատակով 1994թ.-ից ի վեր ԼՂՀ կառավարությունն իրականացնում է «Վերադարձ Արցախ» ծրագիրը: Նպատակն էր՝ վերաբնակեցնել և վերականգնել պատերազմական գործողությունների հետևանքով ամայացած Արցախի տարածքները: Աշխատանքը տարվում է երկու ուղղությամբ՝ նորաստեղծ գյուղերի բնակեցում և գյուղերի հզորացում:

Կարծում ենք, որ վերաբնակեցումը այն կարևոր ռազմավարական խնդիրն է, որի ճիշտ և արդյունավետ իրականացման դեպքում հնարավոր է խթանել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացումը, լուծել ԼՂՀ թերբնակեցված շրջանների բնակեցման խնդիրը, ինչպես նաև դեմոգրաֆիական գործոնի հետևանքով փոփոխության ենթարկված աշխատանքային ռեսուրսների կազմը: Պետք է ակնկալել, որ, ի դեմս հայրենադարձների, կունենանք ոչ թե սոցիալապես անապահով խավ, այլ տնտեսական ներուժ:

ԼՂՀ-ում դիտվող հիմնական վտանգավոր միտումը ծնելիության գործակցի դեռևս ցածր մակարդակն է, ինչը շատ հաճախ նույնիսկ չի ապահովում բնակչության պարզ վերարտադրությունը: Հարկ է ընդգծել, որ 2014թ. հանրապետությունում գրանցվել է 2428 ծնունդ, որը 2013թ. համեմատ ավելացել է 57-ով: Հանրապետությունում 2004-2014 թվականներին գրանցված ծնունդների թիվը ներկայացվում է ստորև բերվող գծապատկերում[1].

Գծապատկեր 1

Ծնունդների բաշխումը 2008-2014 թվականներին



Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրում ծնելիության դեռևս ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից է ամուսնությունների ոչ բավարար մակարդակը: Այսպես, 2014թ. գրանցված ամուսնությունները 2013թ. համեմատ աճել են 450-ով և կազմել 1412 դեպք, իսկ

[1] www.stat-nkr.am

ամուսնալուծությունները՝ 14.6 %-ով կամ 27-ով և կազմել 212 դեպք: Ընդհանուր առմամբ 2004-2014թթ. ամուսնությունների միջին ցուցանիշը կազմել է 1116 դեպք[1]:

ԼՂՀ-ում 2014թ. «Ծնելիության և բազմազավակության խթանման» ծրագրի շրջանակներում շարունակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստների տրամադրումն ու 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացումը: 2014թ. այդ ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1092,3 մլն դրամ: Շարունակվել են նաև ծնելիության խթանմանն ուղղված վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները, որն իրականացվում է կապիտալ ներդրումների ծրագրով: 2014թ. հաշվառվել են 51 ընտանիքներ: Իրականացվում է «Նորաստեղծ ընտանիքներին ամուսնության միանվագ նպաստի տրամադրում» ծրագրի շրջանակներում տրվող նպաստի հատկացումը ամուսիններից յուրաքանչյուրին՝ 150,0 հազ. դրամի չափով[2]:

Նկատենք, որ չնայած ձևավորված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակին, ընթացիկ տարում երկրում ծնելիության ցուցանիշի բարելավմանը կարող է նպաստել 2015թ. նոյեմբերին «Հայաստան» համահայկական հիմնադրամի շրջանակներում կայացած հեռուստամարաթոնը, որի գլխավոր նշանակետն է՝ Արցախում հինգ և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին բնակարանային պայմաններով ապահովելը[3]: Կարծում ենք, որ այդ ծրագիրը կխթանի ոչ միայն ծնելիության մակարդակի բարձրացմանը, այլև կբարելավի բնակչության սոցիալ-կենցաղային պայմաններն ու ընդհանուր ժողովրդագրական իրավիճակը, քանի որ ընտանիքների բարեկեցությունը Արցախի զարգացման նախադրյալներց է:

Հանրապետության տնտեսությունում խոցելի է դառնում նաև նվազող տրանսֆերտային ներհոսքի և մետաղների համաշխարհային գների մակարդակի, արտաքին շուկաների անկայունության խորացման հետևանքով արտահանման տեմպի թուլացումը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԼՂՀ-ում որպես առավել էական ռիսկեր կարելի է առանձնացնել. ֆիսկալ ճգնաժամը, արտարժութային, էներգակիրների, հումքային ռեսուրսների գնային տատանումները, տարածաշրջանում ռազմական դիմակայության սրումը, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ ժողովրդագրական և անվտանգային հավասարակշռության խախտումը: Հանրապետությունում ձևավորված ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտաքին և ներքին ներքոհիշյալ հիմնախնդիրներով.

- Տնտեսության մեջ դիտարկվող պարտքի չափազանց մեծ բեռի առկայությունը, ինչը սահմանափակում է տնտեսվարող սուբյեկտների ակտիվ գործունեությունը:
- Երկրի միջազգայնորեն չճանաչված լինելու հանգամանքը և տարածաշրջանային անկայուն վիճակը, ինչպես նաև օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ոչ ամբողջական լինելը, ինչը խոշոր խոչընդոտ է ներդրումների ներգրավման տեսակետից:
- Տնտեսության տեխնոլոգիական վերազինումը, առանց որի անհնար է տնտեսական առաջընթաց արձանագրել: Այս տեսանկյունից կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների ու ինովացիաների ոլորտի գերակայությունը:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկրի տնտեսական զարգացման առանցքը տնտեսության ճկունության բարձրացումն է, արտահանման ապրանքային և աշխարհագրական դիվերսիֆիկացումը, ինովացիոն զարգացման համար անհրաժեշտ կառուցակարգերի ձևավորումը, արտաքին բացասական ազդեցությունների նկատմամբ տնտեսության զգայունության նվազեցումը և, ընդհանուր առմամբ, երկրի տնտեսական անվտանգության ապահովումը:

[1] www.stat-nkr.am

[2] ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2014 թվականին վարած քաղաքականության, իրականացրած միջոցառումների և ստացված արդյունքների մասին հաշվետվություն:

[3] himnadram.org

ԼՂՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՌՈՒԶԱՆՆԱ ՅԱԿՈՎԻ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

Համառոտագիր

Հոդվածում դիտարկվում են տնտեսության արդի մարտահրավերներն ու ռիսկերը, ինչպես նաև դրանց կանխատեսման արդյունավետ մեխանիզմների դերն ու նշանակությունը տնտեսության կայուն զարգացման գործում: Մեկնաբանվում են համաշխարհային տնտեսությունում կանխատեսվող ապագա փոփոխություններն ու տեղաշարժերը: Գլոբալ տնտեսական մարտահրավերների համատեքստում դիտարկվում են ԼՂՀ տնտեսական ռիսկերն ու մարտահրավերները:

Բանալի բառեր. *միգրացիա, արտագաղթ, մրցունակություն, ինովացիա, տնտեսական մարտահրավերներ, գլոբալ ռիսկեր, գիտելիքահենք տնտեսություն, տնտեսական զարգացում:*

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ НКР

РУЗАННА ЯКОВЛЕВНА МАНГАСАРЯН, *к.э.н доцент*
Кафедра экономической теории и управления Арцахского государственного университета

Аннотация

В статье рассматриваются современные вызовы и риски экономики, а также роль и значение эффективных механизмов их прогнозирования в развитии устойчивой экономики. Дается интерпретация прогнозируемых будущих изменений и сдвигов в мировой экономике. Автором рассматриваются также экономические риски и вызовы в НКР в контексте глобальных экономических вызовов.

Ключевые слова: *миграция, эмиграция, конкурентоспособность, инновации, экономические вызовы, глобальные риски, наукоемкая экономика, экономическое развитие.*

CURRENT CHALLANGES FOR DEVELOPMENT OF THE NKR ECONOMY

RUZANNA YAKOV MANGASARYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Economic Theory and Management, Artsakh State University

Abstract

In the article the current challenges and risks to the economy as well as the role and the importance of the mechanisms for predicting the stable development of the economy are considered. Moreover, the future changes and the shifts in the global economy are also illustrated. The current economic risks and challenges of the NKR are considered in the context of the global economic challenges.

Keywords: *Migration, emigration, competitiveness, innovation, economic challenges, global risks, knowledge-based economy, economic development.*

ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության կարևորագույն, ինչպես նաև տնտեսական գործունեության ամենառիսկային ճյուղերից մեկը: Գյուղատնտեսությունը ՀՀ-ում ունի ռազմավարական նշանակություն: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում ըստ 2015թ. վիճակագրական տվյալների կազմում է 17,3%[1], բնակչության 36,5%-ը ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների 35,3%-ը[2]:

ՀՀ-ում գյուղատնտեսությունը գրեթե ամեն տարի հսկայական վնասներ է կրում տարատեսակ ռիսկերի, մասնավորապես տարերային աղետների հետևանքով (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, փոթորիկ, հողատարում և այլն), ինչը խոչընդոտում է այս ոլորտի կայունությանը և զարգացմանը: ՀՀ կառավարությունը համապատասխան միջոցառումներ է իրականացնում տարերային աղետների կառավարման, ինչպես նաև դրանցից տուժած գյուղացիական տնտեսություններին աջակցելու ուղղությամբ (հակակարկտային կայանների, կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, հետաղետային օգնությունների տրամադրում և այլն), սակայն ուսումնասիրությունները վկայում են, որ այդ միջոցառումների ազդեցության արդյունավետությունը դեռևս այնքան էլ բարձր չէ, և անհրաժեշտ է կիրառել գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այլ գործիքներ, որոնցից ամենակարևորը գյուղատնտեսության ապահովագրությունն է:

Գյուղատնտեսության ապահովագրությունը որպես ռիսկի կառավարման գործիք, իրականացվել է դեռևս 17-րդ դարում Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այսօր այն կիրառվում է ավելի քան 100 երկրում, ընդ որում՝ տնտեսապես զարգացած երկրներում գործում են գյուղատնտեսության ապահովագրության բավականին արդյունավետ համակարգեր, մինչդեռ զարգացող երկրներում գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում է ընդամենը փորձնական եղանակով և ունի մի քանի տարվա պատմություն: Ներկայումս ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրական համակարգն ընդհանրապես բացակայում է, որն անդրադառնում է գյուղացիական տնտեսությունների կայունության, եկամուտների, արտագաղթի և գործազրկության մակարդակների վրա:

Գյուղատնտեսության ապահովագրության ամենահին և ներկայումս էլ տարածված գործընթացներից մեկն էլ անվանական կամ մեկ ռիսկից ապահովագրությունն է, որը կիրառվել է հիմնականում հացահատիկային մշակաբույսերի, պտղատու այգիների, ինչպես նաև կենդանիների, անտառների և ջերմոցների ապահովագրության համար[3]: Կարկուտից մշակաբույսերի ապահովագրություն իրականացվել է Արևմտյան Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում, որտեղ 1791թ. կնքվել է կարկուտի ռիսկից ապահովագրության առաջին պայմանագիրը[4]: Այնուհետև այս պրոդուկտը լայն կիրառություն է ստացել նաև ԱՄՆ-ում: Բազմակի ռիսկերից բերքի ապահովագրություն իրականացվել է 1950-80-ական թթ. Լատինական Ամերիկայում (Բրազիլիա, Կոստա Ռիկա, Էկվադոր, Մեքսիկա), Եվրոպայում (Իսպանիա) և Ասիայում (Հնդկաստան), որը հիմնականում կապված էր փոքր գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի հետ: Խորհրդային Միությունում պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացվում էր պարտադիր եղանակով «Պետապ»-ի կողմից և տարածվում էր պետության սեփականություն հանդիսացող կոլեկտիվ տնտեսությունների վրա: Այս պայմաններում ապահովագրությունը չուներ զարգացման հեռանկար, իսկ ֆիզիկական անձինք, ձեռ-

[1] Պարենային ապահովություն և աղքատություն: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2016թ. հունվար-մարտ, Երևան 2016թ., էջ 9:

[2] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-մարտին: Տեղեկատվական ամսական զեկույց: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2016թ., էջ 100:

[3] Ramiro Iturrioz, Agricultural Insurance, The World Bank, 2009, p. 6-8

[4] www. fao.org

նարկություններն ու կազմակերպություններն ապահովագրությունն ընդունում էին որպես լրացուցիչ հարկատեսակ[1]: Հասկանալի է, որ ունենալով այդպիսի «ժառանգություն» և հաշվի առնելով վերջին երեք տասնամյակում տնտեսական վերափոխումների բարդությունները, որոնք պայմանավորված էին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, հանրապետությունում հնարավորություն չէր ընձեռվում շուկայական տնտեսությանը բնորոշ ապահովագրության արդյունավետ համակարգի ձևավորման համար:

Յուրաքանչյուր պետության կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը ռիսկերի հնարավորինս ճշգրիտ գնահատումն (կանխորոշումը, կանխատեսումը) ու արդյունավետ կառավարումն է: Ուստի այդ առումով էլ ագրարային ոլորտի պետական կարգավորումը՝ կապված այդ ռիսկերի ապահովագրության ներդրման և զարգացման հետ, հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսական արտադրանքի, հումքի, պարենի և այլ մթերքների արտադրության, վերամշակման և իրացման գործընթացների խթանման կարևորագույն պայման:

Գյուղատնտեսական ապահովագրության համակարգի զարգացումը մնում է շուկայական տնտեսության պայմաններում ագրոարդյունաբերական արտադրության կայունության ապահովման համար առավել կարևոր գործոնը: Գյուղատնտեսական ապրանք արտադրողը, ինչպես նաև ցանկացած ազատ ձեռնարկատեր, նյութական ռեսուրսներ և աշխատանք ներդնելով, իրավունք ունի իր արտադրական գործունեության արդյունքում ակնկալելու շահույթ: Ի տարբերություն նյութական արտադրության այլ ոլորտների, գյուղատնտեսությունը հանդիսանում է կապիտալի ներդրման ռիսկային ոլորտ՝ կապված պատահական, նախօրոք անկանխատեսելի կլիմայական և այլ իրադարձությունների հետ:

Շուկայական տնտեսության իրավահարաբերությունների անցման բարդ գործընթացում համընդհանուր օրինաչափությունների հետ մեկտեղ, յուրաքանչյուր պետության տնտեսական վերափոխումները բխում են տվյալ երկրի առանձնահատկություններից, ուստի դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը հնարավորություն է ընձեռում այս կամ այն բնագավառում առավել արդյունավետ քաղաքականության մշակման ու իրականացման համար: Նշվածն ամբողջությամբ վերաբերում է նաև երկրի գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրմանը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ այդ ուղղությամբ գործնական քայլեր դեռևս գրեթե չեն իրականացվել, ուստի նշված գործընթացի զարգացմանը խոչընդոտող գործոնների բացահայտումը, ծառացած հիմնախնդիրների «հանգուցալուծումը» արդիական է և հրատապ, քանի որ գյուղատնտեսությունում ապահովագրական գործուն համակարգի ներդրումը ոլորտի զարգացման կարևորագույն նախադրյալներից է: Դրա մասին է վկայում նաև արտերկրների (այդ թվում անցումային տնտեսության երկրների) փորձի ուսումնասիրությունը: Հարցն այն է, որ ինչպես նախկին տնտեսակարգի պայմաններում, այնպես էլ հողի սեփականաշնորհումից (մասնավորեցումից) ի վեր, գյուղատնտեսությունում կուտակվել են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք, գյուղատնտեսական ապահովագրության համակարգի բացակայության հետ մեկտեղ, խոչընդոտում են ոլորտի զարգացումը, պայմանավորում են վերջինիս խոցելիությունը և մրցունակության դեռևս ոչ բավարար մակարդակը:

Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում գործուն ապահովագրական համակարգի ձևավորմանը խոչընդոտում են մի շարք գործոններ.

- ճյուղում ապահովագրական գործընթացը կանոնակարգող օրենսդրական դաշտի անկատարությունը,
- ոլորտի բարձր ռիսկայնությունը,
- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարող սուբյեկտների անվստահությունը ապահովագրական գործի նկատմամբ,
- գյուղացիական տնտեսությունների կողմից հնարավոր կորուստների թերագնահատումը,
- գյուղացիների հոգեբանության իներցիան: Նրանց մոտ դեռևս որոշակիորեն առկա է այն մտայնությունը, թե բնական աղետի դեպքում պետությունը կփոխհատուցի իրենց վնասները, իսկ պետությունն այդպիսի միջոցներ չունի, ապահովագրական վճարների վճարման գործում,
- գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակությունը,
- տնտեսության տարբեր ոլորտներում ապահովագրություն իրականացնող կառույցների նկատմամբ տարբերակված պայմանների (հարկային և այլ) բացակայությունը,

[1] Կիրակոսյան Կ., «Ապահովագրական գործ», ուսումնական ձեռնարկ, Երևան, «Սարվարդ հրատ.», 2003, էջ 7, 240 էջ:

- հանրապետությունում գործող ապահովագրական կառույցների գործունեության փորձի պակասը գյուղատնտեսության բնագավառում:

Գյուղատնտեսության ապահովագրությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով պայմանավորված են դրա ներդրման դժվարությունները և պետական աջակցության անհրաժեշտությունը: Գյուղատնտեսության ապահովագրության օբյեկտներ են հանդիսանում հիմնականում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը և կենդանիները, որոնք անընդհատ գտնվում են աճի ու զարգացման գործընթացում: Ագրոապահովագրության իրականացման համար անհրաժեշտ են մասնագետներ, որոնք տիրապետում են ոչ միայն ապահովագրական, այլև գյուղատնտեսական գիտելիքների: Մասնավոր ընկերության համար բավականին բարդ է հավաքագրել անհրաժեշտ, ամբողջական և հավաստի տվյալներ, իրականացնել անդերայթինգի քաղաքականություն: Գյուղատնտեսական ռիսկերին բնորոշ է սիստեմատիկ բնույթը, դրանց տեղի ունենալու արդյունքում և՛ վնասված տարածքներն են հսկայական, և՛ առաջացած վնասները: Սա է հիմնական պատճառը, որ մասնավոր ապահովագրական ընկերությունները խուսափում են կնքել գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրեր: Ապահովագրության այլ տեսակների հետ համեմատած գյուղատնտեսության ապահովագրության դեպքում բարձր են գործավարման ծախսերը, ինչը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեության աշխարհագրական ցրվածությամբ: Գյուղատնտեսության ապահովագրության ռիսկայնության և գործավարման ծախսերի բարձր մակարդակները հիմք են հանդիսանում բարձր ապահովագրավճարների սահմանման համար և առանց պետական աջակցության գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար դժվար, իսկ որոշ դեպքերում անհնար է լինում վճարել ապահովագրավճարները:

Ընդ որում, բազմաթիվ երկրներում նշված ապահովագրությունն իրականացվում է պետության ֆինանսական աջակցությամբ՝ ապահովագրավճարների սուբսիդավորման միջոցով, ինչը չի հակասում ԱՀԿ-ի պահանջներին[1]: Չնայած այն հանգամանքին, որ ապահովագրավճարների սուբսիդավորումը մտնում է «կանաչ զամբյուղի» մեջ, որի գծով որևէ սահմանափակում գոյություն չունի, սակայն սուբսիդավորման չափը պետք է լինի հիմնավորված, որպեսզի չխախտվի շուկայի հավասարակշռվածությունը և այն «բեռ» չհանդիսանա պետության համար: ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության սկզբնական փուլում ճիշտ կլինի սուբսիդավորման 50% սահմանաչափը՝ հետագայում կիրառելով սուբսիդավորման տարբերակված մոտեցում՝ առավելությունը տալով Հայաստանի Հանրապետության համար կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող մշակաբույսերին և տարածաշրջաններին:

Հաշվի առնելով այս հանգամանքները, առաջարկվում է ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման գործընթացն իրականացնել ՀՀ կառավարության հիմնադրած պետական ապահովագրական ընկերության միջոցով: Մեր հանրապետությունում պետական աջակցությամբ ապահովագրական ընկերություն ստեղծելու նախաձեռնությունը համահունչ է գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձին: Նշված ընկերության ստեղծման նախաձեռնությամբ պետք է հանդես գան ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կենտրոնական բանկը, գյուղացիական միավորումները, գյուղատնտեսական կոոպերատիվները:

Այսպիսով, կարող ենք նշել, որ ՀՀ-ում պետական աջակցությամբ ապահովագրության ներդրման համար անհրաժեշտ է մշակել և գործողության մեջ դնել հետևյալ իրավական ակտերը,

- «Պետական աջակցությամբ գյուղատնտեսության ապահովագրության մասին» ՀՀ օրենքը,
- «Փոխադարձ ապահովագրության մասին» ՀՀ օրենքը,
- Գյուղատնտեսության ապահովագրության տարեկան ծրագիրը,
- Գյուղատնտեսության ապահովագրության երկարաժամկետ ծրագիրը,
- «Անկախ փորձագետների որակավորման և փորձաքննության անցկացման կարգը»,
- «Գյուղատնտեսության ապահովագրության ապահովագրավճարների սուբսիդավորման կարգը»:

Հիշյալ փաստաթղթերով, մեր կարծիքով, հստակ պետք է սահմանվեն գյուղատնտեսության ապահովագրության հետևյալ հիմնական դրույթները.

[1] Government Support to Agricultural Insurance; Challenges ang Options for Developing countries, Olivier Mahul, Charles J. Stutley, 2010, 250p., www. worldbank.org.

1. Պետության մասնակցությունը ապահովագրության մեջ. պետք է նախատեսվի պետական միջոցների օգտագործման հնարավորությունը թե՛ ապահովագրական մուտքերի սուբսիդավորման, և թե՛ գյուղմթերքներ արտադրողների վնասների փոխհատուցման համար միայն այն դեպքում, երբ նրանց ունեցվածքն ապահովագրված է, ինչպես նաև այն դեպքերում, երբ վնասները կրում են բացառիկ բնույթ: Վնասները, որոնք առաջացել են զուտ անբարենպաստ եղանակային պայմանների արդյունքում, պետք է ծածկվեն ապահովագրական ընկերությունների կողմից:

2. Անհրաժեշտ է հստակ որոշել գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման այն տեսակները, որոնք երաշխավորված կլինեն պետական աջակցությամբ, ինչպես նաև գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության տեղը ապահովագրության տեսակների դասակարգման ընդհանուր համակարգում:

3. Հարկ է ամրագրել ապահովագրության կազմակերպման երկու մոդել.

- գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրումն առևտրային ապահովագրական կազմակերպությունների կողմից: Այստեղ կարևոր է օրենսդրորեն սահմանել ապահովագրական խմբերում դրանց միավորման սկբունքները, նպատակներն ու խնդիրները, ապահովագրական խմբի մասնակիցների նկատմամբ պահանջները,
- գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրումը գյուղական համայնքում փոխադարձ ապահովագրության ասոցիացիաների ստեղծման միջոցով: Նպատակահարմար է նաև որոշել դրանց աշխատանքի հիմնական չափորոշիչները:

4. Ապահովագրության պայմանները պետք է սահմանվեն ըստ հիմնական տեսակների.

- ապահովագրական ռիսկերի տիպային ցանկը՝ դրանց չափանիշների նկարագրությամբ,
- ապահովագրական արժեքի և գումարի սահմանման կարգը,
- ապահովագրական երաշխիքային նորմերը,
- ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետները և այլն:

5. Ապահովագրության համար բանկային վարկի ստացման արտոնյալ պայմանները,

6. Պետական աջակցության իրականացման կարգը, պայմանները: Բյուջեից ֆինանսավորման չափը որոշելու համար պետք է մշակել ապահովագրական շուկայի տարողունակությունը բնութագրող ցուցանիշների ցանկը: Անհրաժեշտ է նաև ամրագրել բյուջետային միջոցների հատկացման տարբերակները (արդեն վճարված ապահովագրական մուտքերի փոխհատուցման կամ դոտացիաների տեսքով), ապահովագրական մուտքերում պետության մասնակցության չափը, բյուջետային միջոցների հատկացման ժամկետները և այլն:

7. Տարածաշրջանային բյուջեների, ապահովագրական պահուստային միջոցների օգտագործման կարգը՝ տարերային աղետների հասցրած վնասները փոխհատուցելու համար:

8. Մասնագետների պատրաստումն ու տեղեկատվական աշխատանքը:

9. Մշակվող հայեցակարգի առավել արդիական հարցերից պետք է լինեն արդյունավետ սակագնային քաղաքականության սահմանումը, գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրման ամբողջական համակարգի ստեղծումը՝ անկախ ապահովագրության կազմակերպչական մոդելներից, ինչպես նաև պետական կենտրոնացված ռեզերվների ձևավորման, ապահովագրական մոնիթորինգի իրականացման հարցերը: Մեծ մասամբ դրանք վերաբերում են գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրմանը, քանի որ ապահովագրության այս տեսակն առավել ծախսատար է՝ ապահովագրության արժեքի, և հետևաբարար, մուտքերի սուբսիդավորման ծավալների տեսանկյունից, տարերային է՝ շատ բարձր ապահովագրական արժեքի և ապահովագրական դեպքերի ի հայտ գալու հավանականության տեսանկյունից, ինչն իր հերթին առաջացնում է ապահովագրության արդյունավետ համակարգի մշակման և կենտրոնացված ռեզերվների ստեղծման անհրաժեշտությունը:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ ՀՀ գյուղատնտեսությունում պետական աջակցությամբ ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացմանը, գյուղատնտեսությունում ներդրումներ կատարելու գրավչության բարձրացմանը, ցանքատարածությունների ավելացմանը, գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի ավելացմանը, աղքատության և արտագաղթի մակարդակների նվազեցմանը, գյուղական համայնքներում ապահովագրական մշակույթի տարածմանը և ապահովագրական շուկայի զարգացմանը, ապահովագրության ոլորտի մասնագետների համար նոր աշխատատեղերի ստեղծմանը և այլն:

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրումը մնում է շուկայական տնտեսության պայմաններում ագրոարդյունաբերական արտադրության կայունության ապահովման համար առավել կարևոր գործոնը: Կատարված ուսումնասիրությունները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ ՀՀ գյուղատնտեսությունում պետական աջակցությամբ ապահովագրական համակարգի ներդրումը կնպաստի գյուղացիական տնտեսությունների եկամուտների կայունացմանը, գյուղատնտեսությունում ներդրումներ կատարելու գրավչության բարձրացմանը, ցանքատարածությունների ավելացմանը, գյուղատնտեսությունում զբաղվածների թվաքանակի ավելացմանը, աղքատության և արտագաղթի մակարդակների նվազեցմանը, գյուղական համայնքներում ապահովագրական մշակույթի տարածմանը և ապահովագրական շուկայի զարգացմանը, ապահովագրության ոլորտի մասնագետների համար նոր աշխատատեղերի ստեղծմանը և այլն:

Բանալի բառեր. *գյուղատնտեսության ապահովագրություն, պետական աջակցություն, սուբսիդիա, ապահովագրավճար, ապահովագրական գումար, պայմանագիր, ներդրում, ռիսկ:*

НЕОБХОДИМОСТЬ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ В ОСУЩЕСТВЛЕНИИ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ

МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, *к.э.н*
младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Внедрение системы сельскохозяйственного страхования в условиях рыночной экономики остается наиболее важным фактором обеспечения стабильности агро-промышленного производства. Проведенные исследования дают основание для вывода о том, что внедрение системы сельскохозяйственного страхования, осуществляемого при государственной поддержке, будет способствовать стабилизации доходов фермерских хозяйств, повышению привлекательности инвестиций в сельском хозяйстве, увеличению посевных площадей, росту занятости в сельском хозяйстве, снижению уровня бедности и эмиграции, распространению страховой культуры в сельских общинах и развитию страхового рынка, созданию новых рабочих мест для специалистов страховой отрасли и т.д.

Ключевые слова: *сельскохозяйственное страхование, государственная поддержка, субсидия, страховой взнос, страховая сумма, контракт, инвестиции, риски.*

THE NEED FOR THE STATE SUPPORT IN THE IMPLEMENTATION OF AGRICULTURAL INSURANCE

MERI GAGIK MANUCHARYAN, *Ph.D. in Economics*
Junior Research Associate,M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The introduction of agricultural insurance system remains the most important factor in market economy to ensure the sustainability of agro-industrial production. The accomplished researches provide a basis to conclude that the introduction of state-supported insurance system in the agriculture of the Republic of Armenia will help to stabilize farm incomes, to increase the attractiveness of investing in the agriculture, to enlarge the sowed areas, to increase the number of people employed in the agriculture, to reduce the levels of poverty and migration, to the spread of the insurance culture in the rural areas and the development of the insurance market, to create a new employment opportunities for insurance industry professionals etc.

Keywords: *Agricultural insurance, state support, subsidy, insurance fee, insurance amount, contract, investment, risk.*

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2009Թ. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԸ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ

2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արձանագրման սկզբնական փուլում գերիշխող էր այն կարծիքը, որ Հայաստանը կկարողանա խուսափել այդ ճգնաժամի խորը ազդեցությունից՝ պայմանավորված արժեթղթերի շուկայի թերզարգացվածության, համաշխարհային տնտեսությանը ոչ բավարար ինտեգրվածության, արտահանման ծավալների համեմատաբար փոքր մեծության և մի շարք այլ հանգամանքներով[1]: Ավելին, կարծիք կար, որ ճգնաժամը նոր հնարավորություններ կստեղծի Հայաստանի համար, քանի որ ենթադրվում էր, որ նախորդ տարիներին արձանագրված երկնիշ մեծությամբ տնտեսական աճը բավարար հիմքեր է ստեղծել հետագա տարիների կայուն տնտեսական աճ ապահովելու համար: Սակայն նման ենթադրությունները շատ արագ հօդս ցնդեցին, երբ 2009թ. Հայաստանում արձանագրվեց ամբողջ աշխարհում մեծությամբ 5-րդ տնտեսական անկումը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՆԱ աճի դինամիկան ճգնաժամային և մինչ ճգնաժամային տարիներին, 2009թ. առավել մեծ անկում արձանագրած 10 երկրներում[2]

	Երկիրը	2006	2007	2008	**2009**	2010
1	Լիտվա	7.4	11.1	2.6	**-14.8**	1.6
2	Ուկրաինա	7.3	7.9	2.3	**-14.8**	4.2
3	Էստոնիա	10.3	7.7	-5.4	**-14.7**	2.5
4	Լատվիա	11.9	10.0	-3.6	**-14.3**	-3.8
5	**Հայաստան**	**13.2**	**13.7**	**6.9**	**-14.1**	**2.2**
6	Անտիգա և Բարբադոս	13.4	9.5	0.1	**-12.0**	-7.1
7	Պալաու	-1.8	0.1	-4.7	**-10.7**	1.8
8	Ֆինլանդիա	4.1	5.2	0.7	**-8.3**	3.0
9	Ռուսաստան	8.2	8.5	5.2	**-7.8**	4.5
10	Սլովենիա	5.7	6.9	3.3	**-7.8**	1.2

Հետագա տարիներին, երբ արդեն ակնհայտ էին պոզիտիվ կանխատեսումներին լրիվ հակառակ զարգացումները, տարբեր հետազոտողներ խնդրի վերաբերյալ ներկայացրեցին իրենց հեղինակային մոտեցումները՝ մեծ շեշտադրում կատարելով ինչպես տարբեր օբյեկտիվ գործոնների, այնպես էլ հակաճգնաժամային սխալ կամ թերի քաղաքականության վրա: Այնուամենայնիվ, հարկ է փաստել, որ 2009թ.-ից հետո թեկուզև փոքր, սակայն դրական տնտեսական աճը հնարավոր է եղել ապահովել ՀՀ պետական պարտքի շեշտակի աճի գնով, ինչը թույլ է տալիս փաստել, որ ՀՀ տնտեսությունում կային ավելի խորը, տարիներ շարունակ քողարկված խնդիրներ:

Հետադարձ հայացքով ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչճգնաժամային տարիների, հատկապես 2002-2008թթ. ՀՀ տնտեսությունում ի հայտ եկած բացասական միտումները զարմանալիորեն նման են տնտեսագիտական գրականությունում քննարկված հոլանդական հիվանդության ախտանիշներին: Հետևաբար սույն հետազոտությունում փորձ է արվել ցույց տալ, որ Հայաստանում 2009թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խորը հետևանք-

[1] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարար Ն.Երիցյանի 17.12.2008թ. հարցազրույցը «Արմենպրես» գործակալությանը, էլեկտրոնային աղբյուր՝ http://armenpress.am/arm/news/453071/

[2] Ըստ Համաշխարհային բանկի տվյալների: Էլեկտրոնային աղբյուր՝ http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?cid=DEC_SS_WBGDataEmail_EXT

ները կարող էին պայմանավորված լինել հենց Հայաստանում հոլանդական հիվանդության առկայությամբ: Վերջինս տնտեսագիտական կատեգորիա է, որն առավելապես բնութագրում է հանքահումքային ռեսուրսներով հարուստ երկրներում հումքի արդյունահանման և արտահանման բացասական ազդեցությունը տնտեսության վրա: Առաջին անգամ երևույթը գիտականորեն նկարագրվել և անվանակոչվել է 1977թ., Հոլանդիայի օրինակով, օգտագործելով 1959թ. հայտնաբերված բնական գազի խոշոր պաշարների արդյունահանման հետևանքով արձանագրված տնտեսական վերափոխումները[1]: Մասնավորապես, այստեղ բնական գազի արդյունահանումը և արտահանումը հանգեցրին ինֆլյացիայի ու գործազրկության, վերամշակող արդյունաբերական արտադրանքի կրճատման և բնակչության դրամական եկամուտների հավելաճի տեմպերի նվազման: Նման զարգացումն անսպասելի էր, քանի որ ակնկալվում էր լրիվ հակառակ արդյունք՝ ընձեռված արտահանմամբ պայմանավորված դրամական հոսքերով և հնարավորություններով: Ավելին, հետագա տնտեսական զարգացումների հետևանքով, մասնավորապես 20-րդ դարի 70-80–ական թթ. նավթի գների աճի արդյունքում նմանատիպ երևույթներ արձանագրվեցին նաև այլ երկրներում, ինչպիսիք են Սաուդյան Արաբիան[2], Մեքսիկան[3], Նիգերիան[4] և այլն, ինչը ցույց տվեց, որ Հոլանդիայի օրինակը ոչ միայն եզակի չէր, այլև օրինաչափ էր:

Երկարաժամկետ ժամանակահատվածում հոլանդական հիվանդությունը հանգեցնում է ռեսուրսների տեղաշարժի վերամշակող արդյունաբերությունից դեպի հումքային և ծառայությունների ոլորտ, որտեղ ավելի փոքր հավելյալ արժեք է ստեղծվում: Հետագա զարգացումների արդյունքում տնտեսության գիտական հենքը սկսում է անկում ապրել, քանի որ վերամշակող արդյունաբերությունն է առավել մեծ նորարարությունների և գիտական հետազոտությունների պատվիրատուն: Այս ամենի արդյունքում տնտեսության մրցունակության անկումն ավելի ու ավելի է խորանում՝ նվազեցնելով հոլանդական հիվանդության արագ հաղթահարման հնարավորությունները:

Հարկ է արձանագրել, որ հոլանդական հիվանդությունն իր էությամբ ֆենոմեն չէ, և տնտեսագիտական տեսանկյունից լիովին բացատրելի է: Երևույթի ի հայտ գալու հիմնական մեխանիզմը կապված է այն հանգամանքի հետ, որ բնական ռեսուրսների արտահանումից ստացվող զուտ դրամական հոսքերը հանգեցնում են ազգային արժույթի ամրապնդմանը, որի հետևանքով երկրից այլ ապրանքատեսակների արտահանումը հարաբերականորեն թանկանում է: Բացի այդ, ամրապնդված ազգային արժույթը հանգեցնում է ներմուծման էժանացման, ինչի արդյունքում տնտեսության մյուս ճյուղերը ոչ միայն կորցնում են արտաքին շուկաները, այլև ներքին շուկան:

Հեշտ է համոզվել, որ մինչճգնաժամային Հայաստանում հստակ արտահայտված է նկարագրված միտումը: Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ դրամի փոխարժեքի դինամիկան 2000-2008թթ. համար, որում արտացոլված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2002թ.-ից նկատվում է դոլար/դրամ փոխարժեքի սրընթաց անկում գրեթե 2 անգամ՝ 579-ից մինչև 306 դրամ 1 ԱՄՆ դոլարի համար, ինչը բավականին մեծ տատանում է:

Ավելին, քանի որ արտահանվող ռեսուրսների գները որպես կանոն ենթարկվում են կտրուկ տատանումների, ապա արդյունքում արտարժույթի փոխանակման կուրսը նույնպես ենթարկվում է տատանումների՝ բացասաբար անդրադառնալով արտաքին տնտեսական գործընթացների վրա, միաժամանակ մեծացնելով օտարերկրյա ներդրումների ռիսկայնությունը:

Հոլանդական հիվանդությունն իր ազդեցությունն է թողնում նաև տնտեսության այլ հատվածների վրա: Հոլանդական հիվանդության հետևանքներից է արտաքին մրցակցությունից զուրկ ոլորտների արագընթաց աճը: Մասնավորապես, քանի որ այն ուղեկցվում է բնակչության գնո-

[1] W. Max Corden; J. Peter Neary, Booming Sector and De-Industrialisation in a Small Open Economy, The Economic Journal, Vol. 92, No. 368. (Dec., 1982), pp. 825-848.

[2] Robert E. Looneya, Oil Revenues and Dutch Disease in Saudi Arabia: Differential Impacts on Sectoral Growth, Canadian Journal of Development Studies, Volume 11, Issue 1, 1990, Pp. 119-133.

[3] Norio Usui, Dutch disease and policy adjustments to the oil boom: A comparative study of Indonesia and Mexico, Resources Policy, Volume 23, Issue 4, December 1997, Pp. 151–162.

[4] Otaha, Jacob Imo, Dutch Disease and Nigeria Oil Economy. African Rsearch Review, An International Multidisciplinary Journal, Ethiopia, Vol. 6 (1), Serial No. 24, January, 2012, ISSN 1994-9057, Pp. 82-90.

ղունակության ավելացման հետ, ապա այն մեծ ազդեցություն է թողնում նաև այնպիսի ոլորտների վրա, ինչպիսին է անշարժ գույքի շուկան: Քանի որ այստեղ պահանջարկը կարող է բավարարվել միայն ներքին ռեսուրսների հաշվին, արդյունքում նկատվում է գների արագընթաց աճ:

Գծապատկեր 1

ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի դինամիկան ըստ 2000-2008թթ.



	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Միջին տարեկան	539.5	555.1	573.4	578.8	533.5	457.7	416.0	342.1	306.0
Տարեվերջին	552.2	561.8	584.9	566.0	485.8	450.2	363.5	304.2	306.7

Վստահորեն կարելի է պնդել, որ 2000-ականների ՀՀ տնտեսական պատմության ամենահիշարժան և լայնորեն քննարկված թեմաներից է անշարժ գույքի շուկայում արձանագրված սրընթաց աճը: Ինչպես ներկայացված է գծապատկեր 2-ում, 2002-2008 թթ. արձանագրվել է անշարժ գույքի գների միջինում 30% տարեկան աճն, ինչը ևս ցույց է տալիս, որ հոլանդական հիվանդության այս ախտանիշը նույնպես հստակ արտահայտված էր Հայաստանում:

Գծապատկեր 2

1999-2008թթ. Երևան քաղաքում բնակարանների և բնակելի տների շուկայական միջին գների տարեկան միջին աճի տեմպը նախորդ տարվա համեմատությամբ[1]



	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Բնակարաններ	-30	-7	5	35	45	32	25	29	31	15
Բնակելի տներ	-17	-7	2	24	32	29	23	25	30	18

[1] Գծապատկերը կառուցվել է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների (www.cadastre.am)

Ինչպես նշվեց, հոլանդական հիվանդության դրսևորումների արդյունքում երկրից ընդլայնվող ճյուղերից բացի այլ ապրանքատեսակների արտահանումը հարաբերականորեն թանկանում է: Ամրապնդված ազգային արժույթը հանգեցնում է ներմուծման էժանացման, ինչի արդյունքում տնտեսության մյուս ճյուղերը ոչ միայն կորցնում են արտաքին շուկաները, այլև ներքին շուկան: Հետևաբար, պետք է ակնկալել, որ Հայաստանում ևս պետք է նկատվի արտահանման համեմատությամբ ներմուծման առաջանցիկ տեմպերով աճ:

Աղյուսակ 2

ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներն ու աճի տեմպը, 2002-2008թթ. համար[1]

	2002	2003	2004	2005	2006	2007	2008
Արտահանում, մլն ԱՄՆ դոլար	505.16	685.6	722.91	973.92	991.95	1162.55	1065.91
Աճը նախորդ տարվա համեմատ, %		35.7	5.4	34.7	1.9	17.2	-8.3
Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	863.58	1115.86	1173.06	1556.11	1883.7	2755.97	3719.6
Աճը նախորդ տարվա համեմատ, %		29.2	5.1	32.7	21.1	46.3	35.0

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալները հաստատում են նաև արտահանման և ներմուծման վերաբերյալ վերջին ենթադրությունը: Ընդ որում հատկանշական է այն հանգամանքը, որ ինչպես և ենթադրվում էր, ներմուծման տեմպի ավելացումը պետք էր ակնկալել ավելի ուշ տարիների համար, քանի որ ներքին արտադրության անկումն ու ներմուծմամբ փոխարինումը տեղի է ունենում աստիճանաբար և ոչ թե անմիջապես: Միաժամանակ ներկայացված տվյալներն ավելի քան համոզիչ ցույց են տալիս, որ 2006-2008թթ-երին արտահանման ծավալները ոչ միայն անհամեմատ զիջում են ներմուծման ծավալներին, այլև արձանագրել են անգամ բացասական ցուցանիշ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մինչ‌ճգնաժամային տարիներին Հայաստանում իրոք առկա էին հոլանդական հիվանդության բոլոր հիմնական ախտանիշերը: Հետևաբար տրամաբանական հարցադրում է առաջանում առ այն, թե որոնք են Հայաստանում հոլանդական հիվանդության առաջացման պատճառները: Ի սկզբանե ենթադրվում էր, որ հոլանդական հիվանդության ի հայտ գալու համար անհրաժեշտ էր, մի կողմից բաց տնտեսություն, և մյուս կողմից՝ բնական ռեսուրսներով հարստություն: Չնայած առավել հաճախ այն կապվում է բնական ռեսուրսների գների աճի, և դրա արդյունքում արտարժույթի ներհոսքի հետ, այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ երևույթը կարող է դիտվել նաև արտարժույթի խոշոր ներհոսքերի դեպքերում, մասնավորապես, արտահանվող ապրանքների գնի, միջազգային ֆինանսական օգնության, օտարերկրյա ուղղակի ներդրումների և այլ դեպքերում: Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում հոլանդական հիվանդության ձևավորման գործում մեծ ազդեցություն են թողել մետաղական հանածոների խտանյութի արտահանումից ստացվող արտարժութային եկամուտները, և որ ամենատարօրինակն է, ֆիզիկական անձանց կողմից ստացվող արտարժութային խոշորածավալ տրանսֆերտները: Հետևաբար հարկ է արձանագրել, որ ստացվող տրանսֆերտներն ընթացիկ սոցիալական խնդիրներ լուծելով զգալի հարված են հասցնում տնտեսության կառուցվածքային ամբողջականությանը, որի մեղման համար անհրաժեշտ է մշակել և ներդնել գործուն մեխանիզմներ:

[1] Աղյուսակը կառուցվել է ՀՀ ԱՎԾ 2003-2009թթ. վիճակագրական տարեգրքերի հիման վրա:

ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2009Թ. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԽՈՐԸ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համառոտագիր

Մինչճգնաժամային տարիներին Հայաստանում առկա էին հոլանդական հիվանդության բոլոր հիմնական ախտանիշները, ինչը և կարող էր պայմանավորել ֆինանսատնտեսական ճգնաժամի խորը հետևանքները: Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում հոլանդական հիվանդության ձևավորման գործում մեծ ազդեցություն են թողել մետաղական հանածոների խտանյութի արտահանումից ստացվող եկամուտները և ֆիզիկական անձանց կողմից ստացվող արտարժութային տրանսֆերտները: Հետևաբար ստացվող տրանսֆերտները ընթացիկ սոցիալական խնդիրներ լուծելով զգալի հարված են հասցնում տնտեսության կառուցվածքային ամբողջականությանը:

Բանալի բառեր. *ճգնաժամ, տնտեսական անկում, հոլանդական հիվանդություն, տրանսֆերտներ, փոխանակային կուրս, կայուն զարգացում, ներդրումներ, արտահանում, ներմուծում:*

«ГОЛЛАНДСКАЯ БОЛЕЗНЬ» КАК ОСНОВНАЯ ПРИЧИНА УГЛУБЛЕНИЯ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА 2009 Г. В АРМЕНИИ

АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН, *к.э.н.*
старший научный сотрудник Института экономики НАН РА

Аннотация

В предкризисные годы в Армении были очевидными все основные симптомы «голандской болезни», что и могло обусловить глубокие последствия финансово-экономического кризиса. Проведенные исследования показывают, что в Армении большое влияние на формирование «голландской болезни» оказали доходы, полученные от экспорта концентратов металлических полезных ископаемых, и валютные трансферты, получаемые физическими лицами. Следовательно, получаемые трансферты, решая текущие социальные проблемы, наносят значительный вред структурной целостности экономики.

Ключевые слова: *кризис, экономический спад, голландская болезнь, трансферты, обменный курс, устойчивое развитие, инвестиции, экспорт, импорт.*

THE DUTCH DISEASE AS THE MAIN CAUSE-ROOT OF SERIOUS NEGATIVE IMPACT OF THE FINANCIAL AND ECONOMIC CRISIS IN ARMENIA IN 2009

HAYK ASHOT MAKROSYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In Armenia, all main Dutch Diseasesyndromescould have been observedduring the period of several years prior to the Crisis that could explain the shocking aftermath of the Crisis. The observations show that the Dutch Disease is largely explained by the revenues received from exporting concentrates of ores of various metals, and remittances and/or transfers received by the Armenian households from abroad (in foreign currencies). Therefore, the remittances received, by addressing everyday social issues, are a real threat to the structure of the economy.

Keywords: *Crisis, economic downturn, Dutch Disease, remittances, foreign exchange rate, sustainable development, investments, exports, imports.*

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տարբեր երկրների միջև երկարաժամկետ խորը տնտեսական համագործակցությունը հնարավոր է միայն փոխշահավետ պայմանների առկայության պարագայում: Հակառակ դեպքում տնտեսական հարաբերությունները կլինեն փխրուն և անկայուն, իսկ դրանց վերաբերյալ այդ երկրների ազգաբնակչության վերաբերմունքը, ի վերջո, կհանգի շահագործողի և շահագործվողի տրամաբանությանը, որտեղ շահագործվող կողմը անընդհատ կլինի նման կարգավիճակից դուրս գալու ուղիների, իսկ մյուս կողմը՝ նման սցենար թույլ տալու ուղիների շարունակական փնտրտուքի մեջ:

Հայաստանի պարագայում ներկայացված տրամաբանությունը բարդանում է նրանով, որ անմիջական սահմանակից պետություններից ուղիղ կեսի հետ Հայաստանի հարաբերությունները խիստ լարված են, որի պարագայում ազգային տնտեսական քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս առաջնային հրամայական է բոլոր առկա հնարավորություններից օգտվելը: Դա ամենևին չի նշանակում, որ Հայաստանը պետք է տնտեսական հարաբերությունների պահպանման նպատակով գնա վերը նկարագրված սցենարով, այլ ընդհակառակը, ստիպում է համագործակցության այնպիսի եզրեր գտնել, որոնք իրոք կլինեն փոխշահավետ, և հետևաբար՝ երկարաժամկետ և կայուն:

Իրանի հետ Հայաստանի տնտեսական հարաբերություններն ունեն դարերի պատմություն, սակայն, խորհրդային տարիներից հետո ստացել են բոլորովին նոր բովանդակություն: Ուստի, տնտեսական համագործակցության ամենահեռանկարային ուղղությունների բացահայտման նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երկրների տնտեսությունները: Դրանից հետո արդեն կարող ենք պատկերացում կազմել ինչպես այդ երկրների առաջնահերթությունների, այնպես էլ փոխադարձ շահերի և այդ շահերի հնարավոր բախումների վերաբերյալ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի տնտեսական վերափոխումների մասին շատ է խոսվել: Վրա հասած ճգնաժամային վիճակը պայմանավորված էր ոչ միայն տնտեսության արմատական վերակառուցումներով, այլ նաև 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքներով, Ադրբեջանի ագրեսիայով սկիզբ առած ղարաբաղյան պատերազմում Ղարաբաղի Հանրապետությանն անհետաձգելի շարունակական և մեծածավալ աջակցությամբ, տնտեսական շրջափակմամբ և այլն: Սրանց գումարվում էր նաև նախկին շուկաների մեծ մասի կորուստը, բնակչության մեծ թվով արտագաղթը: Հենց այս տարիներին էր, որ փակվեցին երկրում գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, ներդրումների ծավալը գնալով սկսեց նվազել, իսկ աղքատության մակարդակն օրեցօր ավելանում էր: Կարելի է փաստել, որ անցումային շրջանի առաջին մի քանի տարիները մեր երկրի պատմության մեջ ամենադժվարներից էին:

Նկատենք, սակայն, որ 20-րդ դարի երկրորդ կեսն Իրանի համար նույնպես մեծ վերափոխումների ժամանակաշրջան էր: Մինչև 1970-ական թվականները Իրանն առավելապես ագրարային երկիր էր: 1978թ. տեղի ունեցած «Սպիտակ հեղափոխությունը» մեծ փոփոխություններ չբերեց: Արդյունքում, 1979թ. փետրվար-ապրիլ ամիսներին իշխանափոխություն տեղի ունեցավ (իսլամական հեղափոխություն): Ձևավորված Իսլամական Հանրապետության տնտեսության կառուցման հիմնական նպատակը՝ բնակչության մաքսիմալ զբաղվածության և արևմտյան երկրներից տնտեսական անկախության ապահովումն էր[1]:

[1] Иванов М.С. Антифеодальные восстания в Иране в середине XIX века / Главная редакция восточной литературы. –М.: изд-во «Наука», 1982. стр. 135.

Սակայն, 1980-ականներին տնտեսության աճը դադարեց Իրաքի հետ պատերազմի պատճառով: Սկսվեց գյուղերի բնակչության զանգվածային միգրացիան դեպի քաղաք, ինչը կործանարար էր գյուղատնտեսության համար[1]:

Ըստ Իրանի սահմանադրության՝ պետական հատվածին են պատկանում մեքենաշինությունը, արտաքին առևտուրը, նավթաքիմիական արդյունաբերությունը, բանկային ծառայությունները, ապահովագրությունը, էներգետիկան, տեղեկատվական կապուղիները, տրանսպորտը, հեռախոսակապը, փոստը[2]: Իսկ մասնավոր հատվածին ավելի շատ բաժին է ընկնում շինարարությունը, գյուղատնտեսությունը, թեթև արդյունաբերությունը, ծառայությունները և այլն:

Իսլամական հեղափոխությունից հետո հանրապետությունում մեծ թափով սկսեց զարգանալ առողջապահությունն ու կրթությունը: Նոր կառավարությունը խոշոր միջոցներ ուղղեց կրթական համակարգին, որպեսզի հնարավոր լինի արևմտյան մասնագետներին փոխարինել սեփականով և սրանով դիմակայել երկրում տիրող անգրագիտությանը:

1992թ. Իրանը, մեկուսացած լինելով Պարսկական նեղուցի երկրներից, անցավ միջազգային կապերի հաստատմանը Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների հետ: Այս նպատակով երկրում սկսեցին զարգանալ տրանսպորտային ենթակառուցվածքները՝ ավտոմոբիլային, երկաթուղային ճանապարհները, թունելները և այլն: Միաժամանակ զարգացման մի նոր փուլ սկսվեց մեքենաշինության, ավտոմոբիլաշինության ճյուղերում[3]:

Հայաստանի և Իրանի ընդհանուր տնտեսական շահերի և համագործակցության եզրերի բացահայտման նպատակով ճիշտ կլինի ուսումնասիրել այդ երկրներում տնտեսության հիմնական ճյուղերում տիրող իրավիճակը: Ստորև ներկայացված են Հայաստանում և Իրանում գյուղատնտեսության, արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության և արտաքին առևտրի զարգացման ժամանակակից միտումներն ու առանձնահատկությունները:

Գյուղատնտեսություն: Հանդիսանում է տնտեսության հիմնական ճյուղերից մեկը: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Իրանը գտնվում են լեռնային գոտում: Հետևաբար, երկու երկրներում էլ չորային կլիմայի, լեռնային ռելեֆի, նաև աշխարհագրական դիրքի պատճառով հողերի մեծ մասը պիտանի չեն գյուղատնտեսության համար:

Մեր երկրում համեմատաբար խոշոր վարելահողերը գտնվում են Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Շիրակի մարզում: Աճեցվող հիմնական կուլտուրաներն են՝ բանջարաբոստանային, կարտոֆիլ, ցորեն, խաղող, պտղատու բազմապիսի ծառեր: Ջերմոցներում հիմնականում աճեցնում են ծաղիկներ և բանջարեղեն:

Ինչ վերաբերում է հարևան պետությանը, ապա պետք է նշել, որ ամենազարգացած գյուղատնտեսությունն ունի երկրի Հյուսիսային շրջանը, որը հայտնի է նաև Մերձկասպյան անունով: Այն ընկած է երկրի խոնավ, մերձարևադարձային շրջանում: Առատ տեղումներն ու մեղմ ձմեռները հնարավորություն են տալիս աճեցնելու տարբեր տեսակի մշակաբույսեր՝մասնավորապես բրինձ, թեյ, բամբակեղեն, ծխախոտ, ցիտրուսներ, շաքարի ճակնդեղ, շաքարեղեգ, ափիոնի կակաչ, յուղատուներ: Զարգացած են նաև այգեգործությունն ու բանջարաբուծությունը[4]:

Կոոպերատիվների և գյուղատնտեսական բանկի միջոցով գյուղատնտեսությամբ զբաղվողները պետությունից ստանում են զգալի աջակցություն արտոնյալ վարկերի, ցածր արժեքով վառելանյութի, գյուղատնտեսական տեխնիկայի և սերմերի տեսքով: Տրամադրվող սուբսիդիաների մեծ մասն ուղղվում է ցորենի աճեցմանը, քանի որ վերջինս կազմում է իրանցիների սննդակարգի հիմնական մասը:

Մեր երկի կառավարությունը նույնպես մեծ ուշադրություն է դարձնում այս հարցին: Գյուղացիներին տրամադրում է գյուղատնտեսական վարկեր և սուբսիդիաներ՝ համապատասխան պայմաններով ու տոկոսադրույքներով:

---

[1] Иран: История и современность /Под ред. Л.М.Кулагиной, Н.М.Мамедовой; Сост. И.Е.Федорова, Л.М.Раванди-Фадаи. – Москва, ИВ РАН, Центр страт. Конъюнктуры, 2014, стр. 62.

[2] Конституция Исламской республики Ирана, http: //legalportal.am/download/constitutions/105_ru.pdf

[3] Иран: История и современность /Под ред. Л.М.Кулагиной, Н.М.Мамедовой; Сост. И.Е.Федорова, Л.М.Раванди-Фадаи. – Москва, ИВ РАН, Центр страт. Конъюнктуры, 2014, стр. 219.

[4] Анализ состояния экономики Исламской Республики Иран и перспективных направлений сотрудничества для российского бизнеса. Омск. 2015, стр. 10.

Եթե մեր հանրապետությունը հայտնի է իր քաղցրահամ և էկոլոգիապես մաքուր միրգ ու բանջարեղենով, անարատ մեղրով, ողջ աշխարհում ճանաչում գտած բարձրակարգ կոնյակով, հանքային ջրերով, ապա Իրանը հայտնի է իր համեմունքներով(շաֆրան, չաման), բուսական բուժիչ նշանակություն ունեցող բույսերով, արմավով: Իրանը համաշխարհային շուկա փյունիկյան արմավի (խուրմայի) խոշոր մատակարարն է: Այստեղ տարեկան կտրվածքով արտադրվում է 12.մլն. տ. բանջարեղեն և 8 մլն.տ. պտուղներ, որի մի մասն արտահանվում է: Իրանից գյուղատնտեսական արտադրանք ներմուծվող երկրների շարքում է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Արդյունաբերություն: Անկախության ձեռքբերումից հետո, ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց ճգնաժամային իրավիճակում: Սա իր անմիջական արտացոլումը գտավ տնտեսության վրա: Երբեմնի խոշոր արդյունաբերական երկիրը կորցրեց իր արդյունաբերական հզորությունը: Առանց նավթի, գազի և ծովային ելքի այս իրավիճակը երկրում ավելի արմատավորվեց:

Իր հերթին Իրանի արդյունաբերության վրա բացասաբար անդրադարձավ ութ տարուց ավել տևած Իրանա-իրաքյան պատերազմը: Իսլամական հեղափոխությունից հետո օտարերկրյա կապիտալից տնտեսության կախվածությունը խիստ թուլացավ: Տիրապետող դարձան իրանական պետական և մասնավոր ընկերությունները[1]:

Այսօր նավթարդյունաբերությունը երկրի տնտեսության զարգացման մեջ ամենաառաջնային և գլխավոր դերում է: Իրանը նավթի արդյունահանմամբ ողջ աշխարհում առաջին հնգյակի մեջ է մտնում և համարվում է ամենախոշոր արտահանողներից մեկը(նավթի պաշարները գնահատվում են մոտ 14 մլն.տ., կամ համաշխարհային պաշարների 9%-ից ավելին): Երկրի ընդերքում հայտնաբերված են քարածուխ, ուրան, սև և գունավոր մետաղներ, մասնավորապես պղինձ, (Սարչեշմեյի հանքավայր), կապարի, ցինկի, երկաթի(հյուսիս- արևմուտքում և կենտրոնական մասում), մանգանի, քրոմի, մոլիբդենի, բազմամետաղների հանքավայրեր[2]: Առկա են շինանյութերի, հատկապես վարդագույն և մոխրագույն դիորիտների, հասպիսի, կավի պաշարներ:

Վերջին տարիներին արագ տեմպերով սկսել է զարգանալ ավտոմոբիլային մեքենաշինությունը: Խոշոր արդյունաբերական ընկերությունը՝ Iran Khodro Industrial–ը, թողարկում է մարդատար ավտոմեքենա Samand X 7: Այս բնագավառում Իրանը սերտորեն համագործակցում է ֆրանսիական մեքենաշինական կոնցեռնների հետ[3]:

Արագ զարգացող ճյուղերից է նաև քիմիական արդյունաբերությունը, որը թողարկում է նավթաքիմիայի արտադրանք, պարարտանյութեր, պլաստմասսա, լվացքի փոշի և այլն: Հիմնական կենտրոններն են Աբադանը, Սպահանը և Թեհրանը:

Հայաստանում քիմիական արդյունաբերության ոլորտում, նշենք գործող հսկաներից մեկի՝ «Նաիրիտ» ԲԲԸ-ի մասին, որը հսկայական համակարգող դեր ունի տնտեսությունում: Նվազ նյութատարությամբ և էներգատարությամբ առանձնանում է փոքր քիմիայի արտադրությունը (ներառում է դեղորայքի և վիտամինների արտադրությունը): Ինչ վերաբերում է թեթև արդյունաբերությանը, ապա այստեղ թողարկվում են բազմապիսի և տարատեսակ ապրանքներ: Հիմնված են նոր և ժամանակակից տեքստիլ, տրիկոտաժի, կարի և կոշկեղենի արտադրություններ, որտեղ թողարկվում են սպիտակեղեն, ներքնազգեստներ, բամբակյա և մետաքսյա կտորեղեն, գուլպաներ և զուգագուլպաներ, կոշկեղեն և այլն: Պետք չէ մոռանալ նաև հայկական բարձրորակ գորգերի մասին, որոնք իրենց արտաքին տեսքով և որակական հատկանիշներով չեն զիջում միջազգային շուկայում մեծ ճանաչում և բարձր արժեք ունեցող պարսկական գորգերին:

Վերջին տարիներին երկու երկրներում էլ մեծ թափով սկսեց զարգանալ SS ոլորտը: Ըստ հավաստի աղբյուրների մեր երկրում այսօր գործում են 197 կազմակերպություններ, որոնցից 125-ը տեղական են, իսկ 72-ը արտասահմանյան կազմակերպությունների մասնաճյուղեր: Ոլորտում ընդհանուր զբաղվածների թիվը կազմում է մոտ 5000 մարդ: Ոլորտի ընդհանուր արտադրողա-

---

[1] Чернова А.Ф., Ирано-иракская война 1980-1988гг.: подходы монархий персидского залива. –журнал Общество, среда, развитие, #18, 2013. ст. 96-100.

[2] Справочникэкспортера: Иран 2015, стр. 5.

[3] Анализ состояния экономики Исламской Республики Иран и перспективных направлений сотрудничества для российского бизнеса. Омск. 2015, стр. 28.

կանությունը կազմում է 31.500 մլն ԱՄՆ դոլար: Այս տեղեկատվությունը վերաբերում է միայն ոլորտի հաշվառված հատվածին, իսկ իրականում ոլորտի ծավալները գրեթե կրկնապատիկին մոտ են:

Արտաքին առևտուր: Արտաքին առևտուրը ցանկացած երկրի տնտեսության կարգավորման կարևորագույն գործոններից մեկն է, որը թույլ է տալիս հայտնաբերել տնտեսության թույլ կողմերը և որոշել դրանց վերացման ուղղությունները: Վերջին մի քանի տարիներին Հայաստանի առևտրային գործընկերներն են հանդիսացել.

1. արտահանման գծով՝ Չինաստանը (13.6%), Գերմանիան (11.8%), Իրաքը (9.5%), Կանադան (8.8%),
2. ներմուծման գծով՝ Ռուսաստանը (22.3%), Չինաստանը (10.2%), Իրանը (7.0%), Գերմանիան (6.8%):

Իրանի Իսլամական Հանրապետությունն առևտրային կապերի մեջ է աշխարհի մոտ 178 պետությունների հետ: Արտահանման ենթակա ապրանքատեսակների թիվը, բացառությամբ նավթի ու նավթամթերքի, ներառում է 3449 տարատեսակ ապրանքներ, ինչը վկայում է Իրանի արտահանման բարձր ցուցանիշների մասին:

Իրանից արտահանվող հիմնական ապրանքներն են՝ նավթ և նավթամթերք, պոլիէթիլեն, նավթային գազեր և գազանման ածխաջրածիններ, հանքային պարարտանյութեր, պարսկական գորգեր, բուրդ, բամբակ, կաշի, արդյունաբերական սահմանափակ արտադրանքներ: Հիմնական երկրները, դեպի ուր արտահանվում են պարսկական ապրանքները՝ Չինաստան է, Թուրքիան, Հնդկաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան, Թայվանը, Օմանը, Ռուսաստանի Դաշնությունը, Գերմանիան: Առևտրային գործընկերներն, ում հետ Իրանը սերտորեն համագործակցում է և որտեղից ներմուծվում են ապրանքներ, հիմնականում Չինաստանն է, Հնդկաստանը, Հարավային Կորեան, Թուրքիան, Գերմանիան, Բրազիլիան, Իտալիան, Արգենտինա, Մալազիան, Ռուսաստանը[1]:

Վերջին տարիներին Հայաստանից արտահանումների ծավալի աճ է նկատվում, հատկապես գյուղատնտեսական ապրանքների գծով: Լավ նախադրյալներ կան և ակտիվորեն զարգանում են հայ-իրանական առևտրական, տնտեսական, մշակութային և գիտական կապերը: Հայաստանի և Իրանի քաղաքական գիտամշակութային և այլ կապերի զարգացման հնարավորությունները շատ մեծ են:

Տրանսպորտը: Դեպի Հայաստանի Հանրապետություն բեռնափոխադրումներն իրականանում են երկու հիմնական ճանապարհով՝ Վրաստանով (Այրում-Սադախլու և Բագրատաշեն – Սադախլու անցակետերով) և Իրանի միջոցով (Ագարակ-Նորդուզ անցակետով): Վրացական սևծովյան նավահանգիստներից Փոթին և Բաթումին հանդիսանում են ամենամոտը Հայաստանի համար՝ դեպի ծովային ելք ունենալու առումով: Գործող երկաթուղին հնարավորություն է տալիս մատչելի գներով և անվնաս բեռնափոխադրումներ իրականացնել դեպի վերը նշված նավահանգիստները:

Այսօր ՀՀ-ից բեռնափոխադրումները Ռուսաստան և ԱՊՀ երկրներ իրականանում են Վերին Լարսի անցակետով, սակայն, ձմեռվա ամիսներին այս ճանապարհը բավականին վտանգավոր և դժվարանցանելի է[2]: Խոսելով ավտոճանապարհներից ուղղակիորեն չենք կարող չխոսել «Հյուսիս - Հարավ» ավտոմայրուղու մասին, որը կապում է երկրի հյուսիսը հարավի հետ: Սա ևս մի միջոց է Իրանի հետ սերտ համագործակցելու համար:

Ավտոմոբիլային տրանսպորտի դերն Իրանում բավականին մեծ է, քանի որ ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է ավելի քան 170 հազ. կիլոմետր և դրանցով իրականացվում են բեռնափոխադրումների 83%-ից ավելին: Երկրի հյուսիսը հարավի հետ կապող գլխավոր մայրուղիներն են՝Թեհրան-Սպահան-Ահվազ, Թեհրան-Յեզդ-Քերման-

[1] Основные направления социально-экономической политики правительства М.Ахмадинежада, Мамедова Н.М., Иран при М.Ахмадинежаде. Памяти А.Арабаджяна. – Москва.: ИВ РАН, 2013, с. 43.

[2] Развитие транспортной отрасли Армении в рамках Таможенного союза.Сурен Чибухчян, Армен Казарян.

Բենդեր-Աբբաս և Սեմման-Քերման մայրուղիները: Մյուս կարևոր տրանսպորտային փոխադրամիջոցը, դա երկաթուղին է: Երկաթգծերի ընդհանուր երկարությունը կազմում է 10407 կմ[1]:

Քանի որ Իրանը գտնվում է երկու ծովերի միջև, այստեղ լայնորեն օգտվում են նաև նավագնացությունից: Իրանական առևտրային նավատորմում հաշվվում է 138 նավ: Օդային տրանսպորտի առումով, հարկ է նշել, որ երկրում գործում է թվով 321 օդանավակայան՝ տարեկան ավելի քան 25 մլն. ուղևորափոխադրման ընդհանուր ծավալով: Ամենամեծ ավիափոխադրողը դա «Իրան Էյր» ընկերությունն է, որը սակայն, չի կարողանում բավարարել պահանջարկը: Ինչ վերաբերում է մեր երկրում օդային տրանսպորտին, ասենք, որ ցավոք այս պահին ազգային փոխադրող չունենք, սակայն, այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

Շինարարություն: Վերջին տարիների ընթացքում Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել ճանապարհաշինարարության ոլորտում՝ հատկապես կենտրոնական և գյուղական ճանապարհների բարելավման կամ վերանորոգման հարցում: Շատ ճանապարհների վերականգնման ֆինանսավորումը կատարվել է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

Բնակարանաշինարարության բնագավառում ամենամեծ աճը գրանցվել է 2006-2008թթ.: Այս տարիներից հետո գրանցված միջազգային ճգնաժամն իր ազդեցությունը թողեց այս բնագավառի վրա:

1970-2013թթ. շինարարությունն Իրանում աճել է 22.1 մլրդ. դոլարով: Տեմպերի նման ավելացումը պայմանավորված է բնակչության ավելացման հետ: Իրանում շինարարության միջին տարեկան աճը կազմել է 114%: Շինարարության մինիմալ չափն այստեղ գրանցվել է 1970 թվականին (0.45 մլրդ. դոլար), իսկ ամենամեծ աճն այս ոլորտում՝ 2012-ին(26.9 մլրդ.դոլար)[2]: Օրեցօր ավելանում բարձրահարկերի թիվը: Տեղի ղեկավարությունը հայտարարում է, որ ողջունում է օտարերկրյա ընկերությունների մասնակցությունը, որոնք ներդրումներ են կատարում բնակարանաշինության մեջ և ոչ միայն: Խրախուսվում է նաև արտասահմանյան գործընկերների մասնակցությունը, որոնք նորագույն տեխնոլոգիաներ են կիրառում շինարարության ոլորտում: Օրինակ, համեմատաբար նոր քաղաքներում՝ Պարանդում և Խաշտգերդում, նոր տեխնոլոգիաների կիրառմամբ հանդես են գալիս մալազիական և հարավ-կորեական ընկերությունները[3]:

Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տնտեսության որոշ ճյուղերի համեմատությունը ցույց է տալիս, որ նշված երկրների միջև կան տնտեսական համագործակցության լայն եզրեր: Հայաստանի և Իրանի աշխարհագրական և բնակլիմայական ընդհանրություններն ու տարբերությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ փորձի փոխանակումը, փոխլրացնող և շարունակվող արտադրական ցիկլերի կազմավորումը, սեզոնային ապրանքների մատակարարումը, տարբեր տարածաշրջանների շուկաների մուտքի ապահովումը տնտեսական համագործակցության միայն սահմանափակ թվով ուղղություններն են: Միաժամանակ, սխալ է կարծել, թե տնտեսական փոխադարձ շահը ինքնին բավարար է ենթադրելու, որ այդ համագործակցությունը մեխանիկորեն կհաստատվի: Հենց միայն լեզվային խնդիրները, մշակութային և տնտեսավարման ավանդույթների տարբերությունները, տրանսպորտային խոչընդոտներն ու երկու երկրներում երկարաժամկետ տնտեսական անկայունությունը բավարար են, որ տնտեսական համագործակցությունը լինի երկչոտ և դանդաղկոտ: Հետևաբար, անհրաժեշտ են հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան արագացնելու ինտեգրված տնտեսական ենթակառուցվածքների ձևավորումն ու երկու երկրների միջև սերտ տնտեսական համագործակցությունը:

[1] http://www.amar.org.ir/english/Statistics-by-Topic/Transport#2226538-time-series - Length of Railways (Kilometer)

[2] http: //www.be5.biz/makroekonomika/construction/construction_iran.html

[3] http: //ukrbuild.dp.ua/2011/10/23/iran-stroitelnaya-industriya.html

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ԱՐՄԻՆԵ ԳԱԳԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Տարբեր երկրների միջև երկարաժամկետ խորը տնտեսական համագործակցությունը հնարավոր է միայն փոխշահավետ պայմանների առկայության դեպքում: Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տնտեսության որոշ ճյուղերի համեմատությունը ցույց է տալիս, որ նշված երկրների միջև կան տնտեսական համագործակցության լայն եզրեր: Սակայն, միայն լեզվային խնդիրները, մշակութային և տնտեսավարման ավանդույթների տարբերությունները, տրանսպորտային խոչընդոտներն ու երկու երկրներում երկարաժամկետ տնտեսական անկայունությունը բավարար են, որ տնտեսական համագործակցությունը լինի երկչոտ և դանդաղկոտ: Հետևաբար, անհրաժեշտ են հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան արագացնելու ինտեգրված տնտեսական ենթակառուցվածքների ձևավորումն ու երկու երկրների միջև սերտ տնտեսական համագործակցությունը:

Բանալի բառեր. *Իրան, տնտեսություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, արտաքին առևտուր, համագործակցություն:*

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОНОМИКИ АРМЕНИИ И ИРАНА

АЙК АШОТОВИЧ МАРКОСЯН, *к.э.н.*
старший научный сотрудник Института эономики им. М.Котаняна НАН РА
АРМИНЕ ГАГИКОВНА МИНАСЯН, *к.э.н.*
младший научный сотрудник Института эономики им. М.Котаняна НАН РА

Аннотация

Долгосрочное глубокое экономическое сотрудничество различных стран возможно только при наличии взаимовыгодных условий. Сравнение некоторых отраслей экономики Исламской Республики Иран и Республики Армения показывает, что между этими странами существуют широкие горизонты экономического сотрудничества. Тем не менее, только языковые проблемы, различия культурных и хозяйственных традиций, транспортные барьеры и долгосрочная экономическая нестабильность в обеих странах достаточны, чтобы экономическое сотрудничество оказалось робким и неспешным. Следовательно, необходимы специальные механизмы, позволяющие ускорить формирование интегрированной экономической инфраструктуры и тесное экономическое сотрудничество между двумя странами.

Ключевые слова: *Иран, экономика, промышленность, сельское хозяйство, строительство, транспорт, внешняя торговля, сотрудничество.*

THE COMAPARTIVE ANALYSIS OF ECONOMIES OF ARMENIA AND IRAN

HAYK ASHOT MAKROSYAN, *Candidate of Sciences (Economics)*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia
ARMINE GAGIK MINASYAN, *Ph.D. in Economics*
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Deep long-term economic cooperation between different countries is possible only on mutual and beneficial terms. Comparison of Islamic Republic of Iran and the Republic of Armenia in certain sectors of the economy shows that broad cooperation linkages between these countries exist. However, the language problems, cultural differences and traditions of economic management, long-term economic instability of transport barriers and the long-term economic instability in the two countries are enough for the economic cooperation to be timid and tardy. Therefore, there is a need for special mechanisms to speed up the formation of integrated economic infrastructure and closer economic cooperation between the two countries.

Keywords: *Iran, economy, industry, agriculture, construction, transport, foreign trade, cooperation.*

ՍԱԹԵՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկեր ամբիոն
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

Ագրովերամշակող արդյունաբերությունը գյուղատնտեսության զարգացման շարժիչ ուժն է, երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, որը շատ է կարևորվում գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման առումով:

Դեռևս խորհրդային տարիներին համակարգում գործում էին արտադրական մեծ հզորություններով ձեռնարկություններ, որոնց արտադրած կոնյակը, գինին, պահածոները և հյութերը բարձր պահանջարկ էին վայելում: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի հիմնական արտաքին ճանապարհների շրջափակման պատճառով ագրովերամշակող արդյունաբերության ձեռնարկությունները խիստ սահմանափակեցին իրենց գործունեությունը: Սակայն 1998 թվականից սկսած, մասնավոր հատվածի լրացուցիչ ներդրումների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ, զգալիորեն բարելավվեց սննդի վերամշակող արդյունաբերության վիճակը: Մասնավորապես ՀՀ կառավարության գործուն միջամտությամբ 1999 թվականին պտուղ-բանջարեղեն վերամշակող 4 ընկերությունների՝ Արարատի, Արտաշատի, Արմավիրի պահածոների և Արմավիրի գինու գործարաններին շվեյցարական Անդրէ Գրուպ ընկերությունը տրամադրեց լոլիկի մածուկի և պտղախյուսի ասեպտիկ փաթեթավորման սարքավորումներ: Ծրագրի իրականացմանը նպաստեցին Լինսի հիմնադրամն ու ԱՄՆ-ի գյուղդեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագիրը: Իրականացվեց շուրջ 6 մլն ԱՄՆ դոլարի համատեղ վարկային ծրագիր: Այն երկրում առաջիններից էր վերամշակող ընկերությունների շարքում և աննախադեպ միջոցների մեծության առումով: Իրականացված միջոցառումների շնորհիվ այդ տարի մթերվեց ու վերամշակվեց շուրջ 40 հազար տոննա բանջարեղեն՝ նախորդ տարվա 4 հազար տոննայի դիմաց[1]:

Ծրագրի իրականացմամբ լուծվեց ոչ միայն լոլիկի, այլև ծիրանի, խնձորի ու դեղձի գնումների ու վերամշակման խնդիրը: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում նշված ընկերությունները կարողացան կարգավորել նաև արտահանման ու իրացման խնդիրները, ստեղծեցին սեփական շրջանառու միջոցներ՝ հումք գնելու համար: Հաջորդ տարիներին համանման սարքավորում ձեռք բերեցին նաև այլ ընկերություններ:

Խոշոր ներդրումներից կարելի է նշել նաև Պեռնո Ռիկար ընկերության ներդրած 30 մլն դոլարը կոնյակագործության ոլորտում, ֆրանսիական Կաստել ընկերության ներդրած 18 մլն դոլարը գարեջրի և հանքային ջրի արդյունաբերությունում, ավելի քան 10 մլն դոլարի ներդրումը հայ-կանադական Գրանդ-Տորակո, հայ-ռուսական Գրանդ-Քենդի, հայ-հունական Մասիս-Տորակ ու Կոկա-կոլա ընկերություններում: Խոշոր ներդրումների հաշվին նոր տեխնոլոգիաներ են ներդրվել և վերազինման աշխատանքներ կատարվել «Եվրոթերմ» ՓԲԸ-ում, «Թամարա ֆրութ» ՍՊԸ-ում, «Երևանի գինու, օղու, կոնյակի կոմբինատ», «Գրեյթ Վելլի», «Վեդի Ալկո», «Երևանի գարեջուր», «Ջերմուկ գրուպ», «Բջնի», «Ջովք», «Աշտարակ կաթ» և բազմաթիվ այլ ընկերություններում:

Ագրովերամշակող արդյունաբերության զարգացմանը մեծապես նպաստել են Համաշխարհային բանկը և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD), որոնց միջոցներով և ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգի» շրջանակում տրամադրված շուրջ 8 մլն ԱՄՆ դոլարի վարկային միջոցների, միջազգային այլ կառույցների ու

[1] Ավետիսյան Ս. Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Երևան, 2010, էջ 71:

հիմնադրամների, ինչպես նաև սեփական ներդրումների շնորհիվ միայն վերջին 2 տարիներին ստեղծվել կամ վերազինվել են պահածոների, գինեգործության, պանրի, կաթնամթերքի ու մսամթերքի արտադրությամբ զբաղվող ավելի քան 170 փոքր և միջին ձեռնարկություններ:

Եթե մոտ 15 տարի առաջ աշխատում էին գյուղատնտեսական հումք վերամշակող 7 պահածոների, 12 գինեգործության և կաթի ու մսի վերամշակման մի քանի ընկերություններ, ապա այսօր ըստ գնահատականների՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 1600 սննդամթերքի արտադրության ձեռնարկություններ[1]:

2014 թվականի տվյալներով գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի 19,3%-ը, իսկ ագրովերամշակող արդյունաբերության հետ միասին՝ 26%-ը, և բացառիկ տեղ ունի երկրի բնակչության պարենային ապահովության գործում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների 2010-2014 թվականների արտադրության ծավալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրատեսակների 2010-2014 թթ. արտադրության ծավալները[2]

Արտադրատեսակներ	Չափի միավոր	Արտադրությունը ըստ տարիների				
		2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Միս՝ ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը)	հազ.տոննա	**54,6**	**61,1**	**65,9**	**72,3**	**81,3**
Երշիկեղեն	տոննա	**3187**	**3577**	**3717**	**4030**	**5240**
Պանիր	հազ.տոննա	**17,1**	**17,6**	**17,6**	**17,4**	**18,3**
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)	մլն. լիտր	**300**	**316**	**320**	**363**	**430**
Պաղպաղակ	հազ. լիտր	**3314**	**3481**	**3628**	**4265**	**6345**
Հրուշակեղեն	տոննա	**11751**	**13253**	**1496,5**	**16593**	**18243**
Մակարոնեղեն	տոննա	**2704**	**3274**	**3563**	**4094**	**4468**
Բուսական յուղ	տոննա	**1034**	**697**	**2656**	**4650**	**3968**
Կենդանական յուղ	տոննա	**951**	**779**	**584**	**547**	**1093**
Պահածոներ՝ ընդամենը	տոննա	**8029**	**11514**	**9681**	**10325**	**11729**
այդ թվում՝ մսի	տոննա	**462**	**285**	**749**	**892**	**145**
ձկան և խեցգետնի	տոննա	**51**	**1**	**54**	**90**	**348**
բանջարեղենի	տոննա	**4559**	**3985**	**3270**	**3005**	**4718**
տոմատի	տոննա	**1823**	**4959**	**2871**	**2842**	**3417**
մրգի	տոննա	**1134**	**2284**	**2737**	**3370**	**2582**
Բնական հյութեր՝ ընդամենը	հազ. լիտր	**11690**	**14591**	**16730**	**19547**	**21121**
Կոնյակ, օղի	հազ. լիտր	**24535,8**	**24568**	**28586,6**	**30222,6**	**28231,6**
այդ թվում՝ օղի և օղու լիկյորի արտադրանք	հազ. լիտր	**11923**	**9136**	**10104**	**9941**	**9504**
կոնյակ	հազ. լիտր	**12624,1**	**15381**	**18514,1**	**20383,3**	**18725,5**
Գինի և շամպայն գինի	հազ. լիտր	**6430,2**	**6814,6**	**6192,5**	**7216,7**	**6765,3**
այդ թվում՝ գինի	հազ. լիտր	**5812**	**6191,5**	**5718**	**6680,3**	**6130,9**
շամպայն գինի	հազ. լիտր	**618,2**	**623,1**	**478,8**	**536,4**	**634,4**
Գարեջուր	հազ. լիտր	**15353**	**14744**	**13668**	**19848**	**23717**
Ոչ ալկոհոլային խմիչքներ	հազ. լիտր	**38232**	**45725**	**45321**	**63400**	**80150**
Հանքային ջուր	հազ. լիտր	**30000**	**29668**	**33188**	**43215**	**56963**
Շաքարավազ	տոննա	**32508**	**72159**	**69267**	**69625**	**89189**
Աղ (հանքանոյթ)	հազ.տոննա	**29,4**	**35,6**	**37,8**	**30,8**	**29,8**

[1] www.minagro.am

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2015, էջ 275-276:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ 2014 թվականին 2010թվականի համեմատ բոլոր արտադրատեսակների գծով գրանցվել է աճ, բացի օղու և օղու լիկյորի արտադրանքի, կոնյակի և մսի պահածոյի:

Ագրովերամշակող արդյունաբերության կայուն զարգացման մասին է վկայում նաև այն փաստը, որ համակարգի ձեռնարկությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրեր կնքել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների հետ, ինչը գյուղատնտեսական հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրանքի ծավալների ավելացման կարևոր նախադրյալ է: Վերամշակման համակարգի գործունեության ակտիվացումը և արտահանման ծավալների ավելացումը որոշակիորեն նպաստել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի մեղմացմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Հանրապետության վերամշակող արդյունաբերական ընկերությունների կողմից 2010-2014 թվականների մթերման ծավալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ՀՀ վերամշակող արդյունաբերության ընկերությունների կողմից 2010-2014 թվականների մթերման ծավալները[1]

Հ/Հ	Հումքի անվանումը	Մթերման ծավալները, տոննա				
		2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ
1.	**Պտուղ՝ ընդամենը**	**3626,5**	**14285,7**	**25620,0**	**28791,5**	**13875,8**
	այդ թվում՝ խնձոր	614,1	2735,7	4767,0	5187,8	3084,1
	դեղձ	193,3	1745,7	6163,4	1921,0	2917,0
	ծիրան	557,4	2830,6	8854,1	13038,6	710,0
	կեռաս, սալոր, բալ	881,3	1203,8	1454,9	2079,6	2776,9
	ընկույզ	254,0	339,1	213,0	232,7	165,0
	հատապտուղ	398,9	1093,0	752,0	1714,4	1145,3
	այլ պտուղ	727,5	4337,9	3416,0	4617,4	3077,5
2.	**Բանջարեղեն՝ ընդամենը**	**29681,8**	**50987,5**	**33645,8**	**27970,1**	**34076,9**
	այդ թվում՝ լոլիկ	24313,0	44209,0	26229,0	18970,0	23252,0
	վարունգ	1137,0	409,2	355,5	468,5	598,7
	սմբուկ	1865,0	2431,0	2021,0	2324,0	3477,4
	պղպեղ	784,0	1097,0	2313,0	2455,0	2801,0
	լոբի, ոլոռ	209,0	189,0	831,0	1612,0	1644,0
	այլ բանջարեղեն	1374,6	2651,6	1896,8	2140,6	2303,8
3.	**Խաղող՝ ընդամենը**	**134968,4**	**128927,4**	**156590,2**	**167184,7**	**184149,0**
	Ընդամենը	**168276,7**	**194200,6**	**215856,0**	**223946,3**	**232101,7**

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ մթերումների ընդհանուր ծավալը ավելացել է 72,5%-ով: Ընդ որում, բոլոր արտադրատեսակների մթերման ծավալները աճել են, բացի՝ ընկույզի, լոլիկի և վարունգի ծավալներից:

Հումքի մթերման 1կգ-ի միջին գները գերազանցել են նախորդ տարվա մակարդակը, մասնավորապես՝ լոլիկինը՝ 8,4%-ով, խաղողինը՝ 4,1%-ով, և կազմել են լոլիկինը ավելի քան 40, իսկ խաղողինը՝ 152,2 դրամ:

Հանրապետության արդյունաբերության ճյուղի մեջ գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը 2014թվականի տվյալներով կազմել է 38,4%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 58,6%[2]:

Հարկ է նշել, որ Հայաստանի ընդհանուր արդյունաբերության արդյունքի շուրջ 35%-ը (ներառյալ ծխախոտի արտադրությունը) ապահովում է ագրովերամշակող արդյունաբերությունը: Այս ցուցանիշին հասնելը հնարավոր է դարձել խորհրդային կարգերի փլուզմանը հաջորդած տնտեսության ընդհանուր ճգնաժամից դուրս գալուն ուղղված հետևողական և բազմաճավալ

[1] www.minagro.am

[2] www.minagro.am

աշխատանքների ու միջոցառումների շնորհիվ, ինչպիսիք էին մասնավորեցումը, օրենսդրական դաշտի բարելավումը, շուկայական ենթակառույցների ստեղծումն ու մեծածավալ ներդրումները:

Հայաստանի ագրովերամշակող արդյունաբերությունը բավականին բազմազան է, ունի արտահանման միտվածություն և ընդգրկում է սննդարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները, որոնցից առավել մեծ ծավալներ են կազմում խաղողի, պտուղ-բանջարեղենի, կաթի և ձխախոտի վերամշակման ճյուղերը: Միաժամանակ նշված ոլորտներում տեղակայված արտադրական հզորությունները այդ ոլորտների զարգացման և արտադրության ծավալների ավելացման մեծ պոտենցիալ են պարունակում, քանի որ այսօրվա դրությամբ օգտագործվում են առկա արտադրական հզորությունների մինչև 50%-ը:

Պետության տնտեսական անվտանգությունն ուղղակիորեն կապված է վճարային հաշվեկշռի հետ: Վճարային հաշվեկշռի հավասարակշռման նպատակով պետությունը կարող է որոշում ընդունել ներմուծումը ժամանակավորապես սահմանափակելու մասին: Պետությունը կարող է երկրի տնտեսական անվտանգությունն ապահովել նաև այն ապրանքների արտահանումը սահմանափակելու միջոցով, որոնց պահանջարկը մեծ է և որոնց նկատմամբ ներքին շուկայում գոյություն ունի պակասուրդ:

Վճարային հաշվեկշռի միջազգային փորձը վկայում է, որ առավել արդյունավետ է ընթացիկ հաշվի՝ առևտրային հաշվեկշռի պետական կարգավորումը: Մասնավորապես, արտահանման խթանում ապրանքների իրացման փուլում իրականացվում է հիմնականում ներազդելով գների վրա՝ արտահանողներին հարկային, վարկային արտոնություններ տրամադրելով և փոփոխելով արժութային փոխարժեքը:

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրության, արտահանման, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2012-2014 թվականներին (տե՛ս աղյուսակ 3-ը):

Խորհրդային տարիներին Հայաստանի սննդի վերամշակման արտադրանքը՝ կոնյակը, գինին, տոմատի մածուկը, պտուղ-բանջարեղենի պահածոները հիմնականում սպառվում էին Խորհրդային Միությունում: Ներկայումս ընդլայնվել է սպառման շուկաների աշխարհագրությունը: Այդ միտումը զարգացնելու համար լուրջ աշխատանքներ են կատարվում արտադրանքի որակի բարձրացման, ապրանքային տեսքի բարելավման, ստանդարտացման և սերտիֆիկացման ուղղությամբ: Այդուհանդերձ, սննդի վերամշակման կարողությունները չեն բավարարում գյուղատնտեսական հումքի արտադրության ներուժին, ուստի շահութաբեր այս ոլորտում ներդրումների ավելացումը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը կարևորագույն առաջնահերթություններ են:

Ագրովերամշակման ոլորտի կայուն զարգացումը շատ կարևոր է, քանի որ դրանից կախված զարգանում են նաև երկրի կարևորագույն ճյուղերից մեկի՝ գյուղատնտեսության մյուս հիմնական ճյուղերը՝ բուսաբուծությունն ու անասնաբուծությունը: Բավական է նշել, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի մասնաբաժինը ՀՆԱ-ում վերջին տարիների վիճակագրական տվյալներով կազմում է 19,3%, բնակչության 36,5%-ը ապրում է գյուղական բնակավայրերում, իսկ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների շուրջ 34%-ը:

Ինչպես արդեն նշել ենք, ագրովերամշակող արդյունաբերության կազմակերպությունները սկսել են երկարաժամկետ պայմանագրային փոխհարաբերություններով աշխատել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների հետ, ինչը աճեցրած գյուղ. հումքի իրացման, արտադրության ճիշտ կազմակերպման և արտադրության ծավալների ավելացման կայուն երաշխիք է տալիս նրանց:

Այսպիսով, վերամշակող կազմակերպությունների գործունեության առավել ակտիվացումը՝ ի հաշիվ օտարերկրյա ներդրումների, նորագույն տեխնոլոգիաների և արտահանման ծավալների ավելացումը կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի լուծմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Աղյուսակ 3

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացված հիմնական արտադրատեսակների արտադրությունը, արտահանումը, ներմուծումը, ինքնաբավության մակարդակը և իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը 2012-2014թթ.[1]

Արտադրատեսակը	Չափի միավորը	Տեղական արտադրություն			Արտահանում			Ներմուծում			Ինքնաբավության մակարդակը, %			Իրացման կառուցվածքում տեղական արտադրության մասնաբաժինը, %		
		2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014	2012	2013	2014
Մսամթերք, ներառյալ երշիկեղեն	տոննա	4757	4943,8	5718,3	625,4	367	412,3	5344,9	5388	5942,7	50,2	49,6	50,8	43,6	45,9	47,2
Պանիր	տոննա	17658	17375,4	18317,3	903,6	1541,2	1542,4	1056,2	1243,7	1187,9	99,1	101,7	102,0	94,1	92,7	93,4
Պտուղբանջարեղենային պահածոներ	տոննա	8356,2	9989,6	11714,7	7242,2	7954,5	9600,3	6660,8	8174,9	8519,8	107,5	97,8	110,2	14,3	19,9	19,9
Հյութեր	հազ.լ	16741,6	19544,2	21106,2	2126,1	2013,2	2942,3	5685,3	4429,6	2992,2	82,5	89,0	99,8	72,0	79,8	85,9
Հրուշակեղեն	տոննա	14319,8	16543,6	18092,6	792,8	1118,7	1536,3	15403,2	16374,3	16764,8	49,5	52,0	54,3	46,8	48,5	49,7
Մակարոնեղեն	տոննա	3563	4093,1	4467,6	153,5	155,6	128,4	4315,4	4825,4	5337,6	46,1	46,7	46,2	44,1	44,9	44,8
Կոնյակ	հազ.լ	18514,1	20383,3	18725,5	17517,5	18188	18556	143,2	40,8	210,8	1624,3	911,6	4923,9	87,4	98,2	44,6
Գինի	հազ.լ	6192,5	7216,7	6765,3	1186,2	1398,5	2120,7	458,7	379,7	288,7	113,3	116,4	137,1	91,6	93,9	94,1
Գարեջուր	հազ.լ	13668,2	19847,8	23716,5	2795,4	2346,4	1987,8	2262,6	2731,1	2837,5	104,1	98,1	96,5	82,8	86,5	88,4
Բուսական յուղ	տոննա	2656,1	4650,3	3967,7	3,5	1,8	0,9	26964,1	26430,7	26204,8	9,0	15,0	13,2	9,0	15,0	13,1
Շաքարավազ	տոննա	69267	69625	89189	400	899,2	200	3829,9	4851,2	5643,8	95,3	94,6	94,2	94,7	93,4	94,0

[1] Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ., հունվար-սեպտեմբեր, էջ 63-75:

ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

ՍԱԹԵՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկեր ամբիոն
ՄԵՐԻ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Ագրովերամշակող արդյունաբերությունը համարվելով երկրի տնտեսության կարևորագույն և բարձր արդյունավետությամբ աշխատող ճյուղերից մեկը, շատ է կարևորվում գյուղական բնակչության զբաղվածության և եկամուտների ապահովման առումով: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2014թ. տվյալներով գյուղատնտեսության ոլորտին բաժին է ընկնում երկրի համախառն ներքին արդյունքի 19,3%-ը, իսկ ագրովերամշակող արդյունաբերության հետ միասին՝ 26%-ը և բացառիկ տեղ ունի երկրի բնակչության պարենային ապահովության գործում: Այսպիսով, վերամշակող կազմակերպությունների գործունեության առավել ակտիվացումը՝ ի հաշիվ օտարերկրյա ներդրումների, նորագույն տեխնոլոգիաների, և արտահանման ծավալների ավելացումը կնպաստեն գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնախնդրի լուծմանը և գյուղացիական տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Բանալի բառեր. *արդյունավետություն, գյուղատնտեսություն, ագրովերամշակող կազմակերպություններ, հումք, վերամշակում, ներդրում, արտադրություն, արտահանում:*

АГРОПЕРЕРАБАТЫВАЮЩАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ КАК ДВИЖУЩАЯ СИЛА РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

САТЕНИК АРУТЮНОВНА МКРТЧЯН, *к.э.н., доцент*
Кафедра финансов и кредита Национального аграрного университета Армении
МЕРИ ГАГИКОВНА МАНУЧАРЯН, *к.э.н*
младший научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Агроперерабатывающая промышленность являясь одним из наиболее важных и эффективно работающих отраслей экономики страны, имеет большое значение для занятости и обеспечения доходами сельского населения. Исследования показывают, что, согласно данным 2014 г., на сельскохозяйственный сектор пришлось 19,3% ВВП страны, а вместе с агроперерабатывающей промышленностью - 26%, и отрасль занимает особое место в обеспечении продовольственной безопасности страны. Таким образом, активизация деятельности агроперерабатывающих компаний за счет иностранных инвестиций, новых технологий, а также увеличение объемов экспорта будут способствовать решению проблемы сбыта сельскохозяйственной продукции и повышению уровня товарности фермерских хозяйств.

Ключевые слова: *эффективность, сельское хозяйство, перерабатывающие компании, сырье, переработка, инвестиция, производство, экспорт.*

AGRI-PROCESSING INDUSTRY AS A DRIVING FORCE FOR THE AGRICULTURAL DEVELOPMENT

SATENIK HARUTYUN MKRTCHYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University
MERI GAGIK MANUCHARYAN, *Ph.D. in Economics*
Junior Research Associate. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Studies show that according to 2014 the agricultural sector accounted for 19.3% of the gross domestic product, while along with the agro reprocessing industry it account for 26%, hence it has a unique position in the food security of the population. Thus, the most activation of agro reprocessing companies due to the increase in foreign investments, new technologies, and increase in export will contribute to solving the problem of the sales of the agricultural products and increase the merchantability level of agricultural farms.

Keywords: *Effectiveness, agriculture, agro reprocessing companies, raw material, reprocess, investment, production, export.*

ՍԱՌԱ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ. գ. թ., դոցենտ*
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ԼՄ և ԲՏ և Կ սեկտոր

ՀՀ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերությունը (ԼՄ) երկրի տնտեսական աճը ապահովող հիմնական ճյուղերից է, և ոլորտի կայուն զարգացման հիմնախնդիրների լուծումը պայմանավորում է մակրոտնտեսական երկարաժամկետ կայունությունը: Այսպես, հետճգնաժամային 2010-2015թթ. կտրվածքով ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների ՀՀ լեռնամետալուրգիական արդյունաբերությանը բաժին է ընկել միջինում տնտեսական աճի 25-34%-ը, ՀՆԱ-ի 8-10%-ը, արդյունաբերության 27-36%-ը, արտահանման 45-57%-ը (ընդ որում պղինձը պարբերաբար 1-ին տեղում է՝ 17-22%, մոլիբդենը 2-րդ՝ 12-15%), հարկային մուտքերի 6-8%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումների 10-15%-ը: Սակայն հարկ է նշել, որ ոլորտի կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչը իր նշանակությամբ չի զիջում տնտեսական բաղադրիչին՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ շրջակա միջավայրի որակի վատթարացմանը ամենամեծ չափով նպաստող տնտեսության ճյուղը լեռնամետալուրգիան է: Հայաստանի համար տնտեսական և սոցիալական կարևոր հարցերի լուծման հետ մեկտեղ ԼՄ արդյունաբերության գործունեությունը ուղեկցվում է բացասական էկո-տնտեսական հետևանքներով՝ էքստեռնալներով (հողի, ջրի, մթնոլորտի վրա): Յուրաքանչյուր 1 տոննա հանույթի ենթարկված հանքաքարի միայն 2%-ն է վերածվում արտադրանքի, մնացածը կազմում են թափոնները[1]: Հանքարդյունաբերության հիմնական թափոնները՝ այսպես կոչված «պոչանքները» կամ «պոչերը», ըստ բնապահպանության նախարարության տվյալների կազմում են Հայաստանում առաջացող արդյունաբերական թափոնների մոտ 98%-ը[2]: Երկաթաքարերի հանքավայրերից թափոնակույտեր են հեռացվում դուրս բերված ապարների մոտ 90%-ը, իսկ պղնձամոլիբդենային, ոսկեբեր և մի շարք այլ հանքավայրերից՝ ավելի քան 99%-ը[3]: Այդ պոչանքները կուտակվում են պոչամբարներում, որոնք ըստ էության տեխնածին հանքավայրեր են, քանի որ պարունակում են մեծ քանակությամբ չկորզված օգտակար տարրեր, միաժամանակ տեխնածին աղետների աղբյուրներ են և առաջացնում են բնապահպանական լուրջ խնդիրներ: ՀՀ լեռնահանքային խոշոր ձեռնարկությունները տեղակայված են Սյունիքի մարզում, և այդ պատճառով երկրում կուտակված թափոնների գերակշռող մասը բաժին է ընկնում այդ տարածաշրջանին[4]:

Երկրի մեկ բնակչի հաշվով նրա ընդերքից տարեկան արդյունահանվում և տեղափոխվում է 50 տ հումք: Դրա հանույթի և վերամշակման վրա տարեկան ծախսվում է 3.6 կՎտ էներգետիկ հզորություն, ինչպես նաև 800 տ ջուր: Արդյունքում առաջանում են 48 տ թափոններ, և միայն 2 տ է վերածվում վերջնական արդյունքի: Բայց նույնիսկ այդ 2 տ վերջնական արտադրանքը, ըստ էության, նույնպես թափոն է, միայն թե տեղափոխված դեպի ապագա՝ որպես «նվեր» հաջորդ սերունդներին[5]:

Պատահական չէ, որ Բ. Ուորդը և Ռ. Դյուբոն մեծ մտահոգությամբ գրել են. «Չի՞ ստացվի արդյոք այնպես, որ մարդը կհասնի Մարս մոլորակին՝ կանգնած լինելով Երկիր մոլորակի վրա մինչև ծնկները աղբի մեջ»[6]:

Հանքարդյունաբերության ճյուղի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա դրսևորվում է հիմնականում երեք ձևով.

- արդյունահանվող հանքատեսակի դատարկ ապարի ու թափոնների շրջակայքում կուտակումով ու տարածումով (օրինակ՝ պոչամբարներում կուտակված պոչանքները), որը հանգեցնում է լանդշաֆտի ու կենսաբազմազանության դեգրադացմանը,

---

[1] Հովսեփյան Ս. Գ., Հովսեփյան Գ.Ս., Հանքավայրերի բաց մշակումը և շրջակա միջավայրը, «Լուսակն» հրատ., Երևան, 2008թ., էջ 3:

[2] www.mnp.am, թափոնների կառավարում:

[3] Ավագյան Հ.Ս.,Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011, էջ11:

[4] Տե'ս նախորդ աղբյուրը:

[5] Данилов-Данильян, В. И. Перед главным вызовом цивилизации: взгляд из России / В. И. Данилов-Данильян, К. С. Лосев, И. Е. Рейф. – М.: ИНФРА-М. – 2009. – С. 46.

[6] Уорд Б. Земля только одна: пер. с англ. / Б. Уорд, Д. Дюбо. – М.: Прогресс. – 1975. – 319 с.

- բացահանքերը հիմնովին խախտում են բնական լանդշաֆտն ու էկոհամակարգերը և դարձյալ հանգեցնում լանդշաֆտի դեգրադացմանը,
- ստորգետնյա ջրերի ջրաբանական ռեժիմի և ֆիզիկական ու քիմիական բաղադրությունների փոփոխությանը:

Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման երկու տասնյակի հասնող պոչամբարներ, որոնցում կուտակված պոչանքները կազմում են շուրջ 220 մլն. մ^3 և զբաղեցնում են մոտ 1400 հա ընդհանուր մակերես (ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները՝ տեխնածին հանքավայրերը չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ): Պոչամբարներից 9-ը գտնվում են Սյունիքի մարզում, որը հայտնի է իր սեյսմիկ անկայունությամբ: «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին են պատկանում Ողջի գետի աջափնյա վտակի վրա գտնվող Քաջարանի ու Փուխրուտի պոչամբարները, ինչպես նաև Ողջի գետի վրա գտնվող Լեռնաձոր գյուղի և Արծվանիկ գետի վրա գտնվող պոչամբարը: Նախագծային հզորություններն են՝ համապատասխանաբար 3, 3.2, 30 և 310 մլն. մ^3, լցված են՝ համապատասխանաբար 3, 3.2, 10 և 150 մլն. մ^3: Ներկայումս երեք պոչամբարները կոնսերվացված են, իսկ Արծվանիկի պոչամբարը գործում է: «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանում են Դարազամի գետի վրա գտնվող, ինչպես նաև «Հովիտ 1» և «Հովիտ 2» պոչամբարները: Նախագծային հզորություններն են՝ համապատասխանաբար 40.9, 9.08 և 17.9 մլն. մ^3, լցված են՝ համապատասխանաբար 38.6, 0.9 և 3.5 մլն. մ^3: Երեք պոչամբարներն էլ գործող են: «Դինո գոլդ մայնինգ» ՓԲԸ-ին պատկանում է Գեղանուշի պոչամբարը: Նախագծային ծավալը 4.6 մլն. մ^3, լցված է 2.5 մլն. մ^3, պոչամբարը գործող է: Դաստակերտ գյուղի մոտ տեղակայված է Այրիգետի վրա գտնվող պոչամբարը: Նախագծային հզորությունը 3.1 մլն. մ^3 է, լցված է 1.5 մլն. մ^3, պոչամբարը կոնսերվացված է:

Բացասական ազդեցությունը կենսաբազմազանության վրա դրսևորվում է նաև օդային և ջրային ավազանների աղտոտման միջոցով: Կան ջրավազաններ (օրինակ՝ Դեբեդ գետի ստորին հոսանք, Ողջի գետի ավազան), որոնց ֆլորան և ֆաունան խիստ աղքատացել են կամ նկատելի փոփոխվել գետը թափվող արդյունաբերական ջրերի պատճառով: Լեռնահանքային ձեռնարկությունների մի մասը, գտնվելով հիպսոմետրիկ բարձր նիշերում (օրինակ՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ավելի քան 2000 մ ծովի մակարդակից բարձր է), իրենց պոչամբարների և տեղումների ազդեցությամբ լցակույտերում ձևավորվող արտահոսքերով մեծ վնաս են հասցնում նաև ավելի ցած գտնվող լանդշաֆտներին[1]:

Լեռնահանքային արդյունաբերության անմիջական ազդեցությունը դրսևորվում է հողային ծածկույթի վրա: Հողը բնական պաշարների հիմնական բաղկացուցիչ մասերից մեկն է և յուրօրինակ բնական կլանիչ պատնեշ է, որը մթնոլորտն ու ջրային ռեսուրսները պահպանում է աղտոտումից: Միաժամանակ դա մարդու կենսագործունեության ապահովման հիմնական ռեսուրսն է: Ըստ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության նյութերի, ***ՀՀ լեռնահանքային ձեռնարկություններին հանձնված հողերի ընդհանուր տարածությունը կազմում է 9 700 հա, որից խախտված հողեր՝ 8 275 հա և պոչամբարների տակ գտնվող հողեր՝ 1 400 հա[2]:*** Լեռնամետալուրգիական տեխնածին ինտենսիվ ազդեցությունը հողային ծածկույթի վրա հանգեցնում է էկոհամակարգերի վերականգնման բնական մեխանիզմների խախտմանը: Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս Թեղուտի հանքավայրի շահագործման արդյունքում կտրված անտառների փոխարեն տնկվել և շարունակվելու է համարյա կրկնակի չափով այլ տարածքում անտառտնկման գործընթացը, այն չի կարող համենայն դեպս կարճ ժամանակահատվածում ապահովել էկոհամակարգի լրիվ վերականգնումը: Նույնը սպասվում է Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման դեպքում: Նշենք, որ 1990թ, նկատմամբ Հայաստանի անտառածածկ տարածքները նվազել են ավելի քան 25%-ով՝ 2010թ, կազմելով ընդամենը 305,5հազ.հա: Միտումը շարունակվում է:

Ըստ տարբեր փորձագիտական աղբյուրների՝ լեռնամետալուրգիական ձեռնարկությունների և պոչամբարների շրջակայքում, հատկապես Սյունիքի և Լոռու մարզերում, ծանր մետաղների պարունակությունը հողում, ջրում և օդում գերազանցում է թույլատրելի նորմերը: Մասնագետների կարծիքով՝ ծանր մետաղները, աստիճանաբար կուտակվելով օրգանիզմում, կարող են բերել գենետիկական լուրջ շեղումների, հիվանդությունների աճի և կյանքի որակի անկման: Ինչ-

[1] www.mnp.am:
[2] http://www.mnp.am/images/files/nyuter/2012/report2007-2011_arm.pdf:

պես նկատում է Հ. Ավագյանը, «սելենը, տելլուրրը մկնդեղը և մի քանի այլ տարրեր, որոնք հաճախ պարունակվում են Հայաստանի համարյա բոլոր տիպի հանքաքարերում, նույնիսկ միացությունների տեսքով, խիստ թունավոր են: Դրանք ընդերքում խոր թաղված հոծ հանքաքարերի մեջ շատ ավելի քիչ վտանգավոր են, քան, երբ արդյունահանվում են ընդերքից և ներփակող ապարները փշրելով ու մանրացնելով՝ մերկացվում ու շրջակա միջավայր են թափվում»[1]:

Մետաղաձուլությունը մթնոլորտի մարդածին աղտոտման գլխավոր աղբյուրներից է: Հայաստանը երկիր է, որն արտադրում է մետաղական հումք և կիսաարտադրանքներ՝ պղնձի, ոսկու, արծաթի, ցինկի (շուտով նաև կապարի) խտանյութերի, ֆեռոմոլիբդենի, մոլիբդենի եռօքսիդի, սև պղնձի և այլնի տեսքով: Սուլֆիդային հանքանյութի մշակման, թուջի, պողպատի և գունավոր մետաղների արտադրության ժամանակ մթնոլորտ են արտանետվում հսկայական քանակությամբ ածխածնի օքսիդ, ծծմբային գազեր, երկաթի և ալյումինի եռօքսիդներ, ֆտոր, մկնդեղ, ֆոսֆոր, կապար, սնդիկի գոլորշիներ և փոշենման բազմաթիվ նյութեր:

Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում հիմնավորվել է այն օրինաչափությունը, ըստ որի՝ տնտեսական աճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց (տվյալ դեպքում տնտեսական աճը նպատակահարմար է արտահայտել բնակչության մեկ շնչին ընկնող եկամտով) աճում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, իսկ բարեկեցության որոշակի մակարդակի հասնելուց հետո սկսում է նվազել: Տեսության մեջ այդ կորը ստացել է Կուզնեցի էկոլոգիական կոր անվանումը (տե՛ս գծ. 1), որն այդպես է անվանվել Ս. Կուզնեցի եկամուտների անհավասարության մակարդակի և դրանց աճի միջև կախվածության ենթադրության համանմանությամբ[2]:

Գծապատկեր. 1

Կուզնեցի էկոլոգիական կորը՝ կառուցված ՀՀ հանքարդյունաբերության թափոնների հիման վրա 2005-2012թթ.[3]



Բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ, հազ. դրամ

Կուզնեցի էկոլոգիական կորի տրամաբանությունը հետևյալն է. տնտեսական աճի հետ մեկտեղ, որը սկսվում է զարգացման և եկամուտների ցածր մակարդակ ունեցող երկրում, առաջին պլան են մղվում տնտեսության բնաշահագործող ճյուղերը, այդ թվում՝ հանքարդյունաբերությունը, տեղի է ունենում արդյունահանող արդյունաբերությունում բնական ռեսուրսների էքստենսիվ օգտագործում, որը բերում է բնական ռեսուրսների հյուծմանը և շրջակա միջավայրի աղտոտմանը: Սակայն տնտեսական աճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց նվազում են բնության վրա ճնշումը և շրջակա միջավայրի որակի վատթարացումը՝ բնապահպան ռեսուրսախնայողական տեխնոլոգիաների ներդրման, տնտեսության կառուցվածքային փոփոխությունների՝ ոչ բնատար ճյուղերի զարգացման, կյանքի որակի էկոլոգիական գործոնի նկատմամբ պահանջների աճի արդյունքում:

Հայաստանը, անցումային փուլում գտնվող և զարգացող այլ երկրների նման, դեռևս հեռու է էկոլոգիական բարելավման կետից, և տեխնածին տնտեսական աճը ուղեկցվում է շրջակա

[1] Ավագյան Հ.Ս. Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2011, էջ 10:

[2] Бобылев С.Н., Ходжаев А.Ш. Экономика природопользования. – М.: ИНФРА-М. – 2007. – С. 18.

[3] Գծապատկերը կառուցվել է www.mnp.am և www.armstat.am տվյալներով:

միջավայրի կազմալուծման պայմաններում: Այդ պատճառով կարևոր է բարելավման կետի ցածր մակարդակի ապահովումը, այլապես Հայաստանը կարող է կրկնել մի շարք զարգացած երկրների բացասական օրինակը, երբ թվացյալ տնտեսական զարգացման գործընթացում երկիրը զրկվում է բնական ռեսուրսներից և կենսաբազմազանությունից:

Կուզնեցի էկոլոգիական կորի նվազող հատվածում շատ զարգացած երկրների էկոլոգիական իրադրության բարելավմանը նպաստում է նաև զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներից արտադրանքի և հումքի նշանակալից ներմուծումը, որի սեփական արտադրության համար պահանջվում են էական էկոլոգիական ծախքեր: Այդ քաղաքականությունը ներկայումս Հայաստանի նկատմամբ վարում է հատկապես Գերմանիան՝ Հայաստանից ներմուծելով կեղտոտ տեխնոլոգիաները անցած կիսաարտադրանքը՝ սև պղինձը, ֆեռոմոլիբդենը և այլն:

Հայաստանի տնտեսական աճի տեխնածին մոդելի պահպանման և լեռնամետալուրգիայի էքստենսիվ զարգացման դեպքում կշարունակվի կորի վրայով դեպի վեր շարժը, իսկ կայուն տնտեսական աճը, ՀՀ գիտելիքահենք տնտեսության ծրագրի իրագործումը, գերակա ուղղություններ ճանաչված տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների (տուրիզմ և այլն) բնագավառների զարգացումը կնպաստեն բարելավման կետի ցածր մակարդակի ապահովմանը և կորի վրայով դեպի ներքև շարժին:

Չնայած գործնականում ճշգրիտ անհնար է որոշել ՀՀ հանքարդյունաբերության թափոններից կախված Կուզնեցի կորի դեպքում էկոլոգիական բարելավման կետի մեծությունը, հեղինակի կողմից որոշվել են վերջինիս վրա ազդող հիմնական գործոնները.

- երկրի տնտեսական, հատկապես հումքային, արտահանման և ներդրումային քաղաքականությունը, որը ներկայումս բարենպաստ չէ դիտարկվող առումով,
- տնտեսության կառուցվածքը, առանձնահատկությունները, տեխնոլոգիական մակարդակը, և չդիվերսիֆիկացված հայկական տնտեսությունը առայժմ բացասաբար է ազդում բարելավմանը,
- հանքարդյունահանող ձեռնարկությունների հանքաքարի հանույթի ծավալները, այսինքն՝ տարեկան արտադրողականությունը (ըստ հանքաքարի), որն ունի աճի միտում. վերջին տարիներին շահագործող ընկերությունները աննախադեպ չափերի են հասցրել հանույթը, օրինակ՝ Քաջարանի հանքավայրի շահագործման տարեկան արտադրողականությունը գերազանցել է 20 մլն. տոննա ցուցանիշը և դա դեռ սահմանը չէ, բացասական ազդեցությունը շարունակական է,
- պոչամբարների զբաղեցրած ֆիզիկական ծավալները (Հայաստանի նման հողային խիստ սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկրի համար սա շատ կարևոր է),
- պոչամբարների՝ տեխնածին հանքավայրերի վերամշակման ծավալները,
- բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացումը և կյանքի որակի էկոլոգիական գործոնի նկատմամբ պահանջների աճը և այլն:

ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հիմնական թափոնները՝ պոչերը, կուտակվելով պոչամբարներում, առաջացնում են տեխնածին հանքավայրեր՝ բնականաբար ավելի աղքատ օգտակար տարրերի պարունակությամբ, քան հանքաքարը, բայց դրանց վերամշակման վրա այլևս չեն կատարվում ընդերքից հանքաքարի արդյունահանման համար կատարվող մեծածավալ ներդրումներ: Տեխնածին հանքավայրերի անվտանգ շահագործումը կնպաստի հանքաքարի արդյունահանման տեմպերի փոքրացմանը և շրջակա միջավայրի որակի բարելավմանը: Հայաստանում առկա են տեխնածին հանքավայրերի անվտանգ շահագործման մշակված տեխնոլոգիաներ, համապատասխան ներդրումների դեպքում իրական է էկոլոգիական աղետների հավանականության փոքրացումը և միաժամանակ կայուն տնտեսական աճի այլընտրանքային աղբյուրի օգտագործումը[1]: Հայաստանի պոչամբարներում տեղակայված թափոնների վերամշակումը խթանելու նպատակով նպատակահարմար է արտոնյալ հարկային դաշտ ստեղծել թափոնապոչերի վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների համար՝ շահագործման թույլտվություն տալով միայն այն ընկերություններին, որոնք կօգտագործեն ժամանակակից սակավաթափոն տեխնոլոգիաներ: Հայաստանի պոչամբարների վերամշակման ուղղությամբ առկա են դրական օրինակներ (Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի թափոնապոչերից ոսկու և արծաթի կորզումը), ներկայումս պետական մակարդակով քննարկվում են ծրագրեր՝ Քաջարանի հանքավայրի կոնսերվացված և գործող պոչամբարները վերամշակելու ուղղությամբ:

[1] Манукян Л.А. Безопасная эксплуатация хвостохранилищ горных предприятий Армении. – Ереван. – Егея, 2003. – С. 6-14.

ՀՀ ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

ՍԱՌԱ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ԼՄ և ԲՏ և Կ սեկտոր

Համառոտագիր

Հայաստանի համար տնտեսական և սոցիալական կարևոր հարցերի լուծման հետ մեկտեղ լեռնամետալուրգիական արդյունաբերության գործունեությունը ուղեկցվում է շրջակա միջավայրի վրա բացասական էքստեռնալներով: Բազմաթիվ հետազոտությունների արդյունքում հիմնավորվել է այն օրինաչափությունը, ըստ որի՝ տնտեսական աճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց աճում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, իսկ բարեկեցության որոշակի մակարդակի հասնելուց հետո սկսում է նվազել (Կուզնեցի էկոլոգիական կոր): Հեղինակը փորձել է հիմնավորել ՀՀ հանքարդյունաբերության թափոններով պայմանավորված Կուզնեցի կորի էկոլոգիական բարելավման կետի վրա ազդող գործոնները ժամանակակից տնտեսությունում:

Բանալի բառեր. *լեռնամետալուրգիա, էկոլոգիական բաղադրիչ, թափոններ, պոչամբարներ, տեխնածին աղետ, տնտեսական աճ, Կուզնեցի կոր, էկոլոգիական բարելավման կետ:*

ЭКОЛОГИЧЕСКАЯ СОСТАВЛЯЮЩАЯ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ГОРНО-МЕТАЛЛУРГИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

САРА АШОТОВНА МКРТЧЯН, *к.э.н доцент*
Сектор горно-металлургической промышленности, экономики и управления природопользованием Национального политехнического университета Армении Национального политехнического университета Армении

Аннотация

Наряду с решением важных экономических и социальных вопросов для Армении деятельность горно-металлургической промышленности сопровождается отрицательными экстерналиями для окружающей среды. В результате многих исследований обоснована закономерность, согласно которой по мере повышения уровня экономического развития увеличивается отрицательное воздействие на окружающую среду, а после достижения определенного уровня благосостояния оно начинает снижаться (экологическая кривая Кузнеца). Автор попытался обосновать обусловленные отходами горнорудной промышленности РА факторы, влияющие на точку перегиба в экологической кривой Кузнеца в современной экономике.

Ключевые слова: *горная металлургия , экологический компонент, отходы, хвостохранилища, техногенные катастрофы, экономический рост, экологическая кривая Кузнеца, точка улучшения.*

THE ENVIRONMENT COMPONENT OF SUSTAINABLE DEVELOPMENT OF THE MINING INDUSTRY IN THE REPUBLIC OF ARMENIA

SARA ASHOT MKRTCHYAN, *Ph.D. in Economics, Associate Professor*
Sector of Mining and Metallurgical Industry, Economics, and Natural Resource Management
National Polytechnic University of Armenia

Abstract

Despite the solution of important economic and social issues for Armenia, the activities of the mining industry entail externalities that have a negative influence on the environment. As a result of a myriad of researches, a principle is elaborated, according to which, the enhancement of the level of economic growth is accompanied with a negative impact on the environment and after reaching a certain level of prosperity it starts increasing (Kuznets ecological curve). The author has tried to point out the factors affecting Kuznets ecological improvement curve point with respect to the volume of the wastes of the mining industry in the Republic of Armenia.

Keywords: *Mining industry, ecological component, waste, tailings, man-made disaster, economic growth, Kuznets curve, the ecological improvement point.*

ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Եվրասիական տնտեսական միության ստեղծման հիմնական նպատակը անդամ պետությունների կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն էր, որը ենթադրում էր բնակչության կենսամակարդակի բարելավվում, կապիտալի, աշխատուժի, ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ձևավորում, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացում: Ինտեգրացիայի բարձր մակարդակը երաշխավորում է կապիտալի, աշխատուժի, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժը, տնտեսության առանցքային ճյուղերի՝ էներգետիկայի, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի, համաձայնեցված քաղաքականության իրականացումը:

Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է երկրում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների առանցքային նպատակներից մեկը գործարարությամբ զբաղվելու պայմանների ներդաշնակեցումն է: Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը:

Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակում են «Doing Business» տարեկան զեկույցները, որոնցում ամփոփ ներկայացվում են աշխարհի 189 երկրներում գործարարությամբ զբաղվելու հիմնական տասնյակ ցուցանիշներ: Այդ ցուցանիշներն են[1].

- սեփականության գրանցումը,
- բիզնես սկսելու մեկնարկային պայմանները,
- ներդրողների պաշտպանվածությունը,
- շինարարության թույլտվության տրամադրումը,
- հարկերի վճարումները,
- վարկերի հասանելիությունը,
- էլեկտրականության միացումը,
- պայմանագրերի կիրառումը,
- անվճարունակության հարցերի կարգավորումը,
- միջազգային առևտուր վարելու դյուրինությունը:

Այս ցուցանիշների հաշվարկումը հնարավորություն է տալիս բավականին հստակ պատկերացում կազմել ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը խոչընդոտող գործոնների մասին: Աղյուսակով ներկայացնենք 2015թ. ԵԱՏՄ անդամ երկրների դիրքերը «Doing Business»-ի զեկույցի վարկանշային աղյուսակում:

[1] http://www.doingbusiness.org/

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ երկրների դիրքերը «Doing Business»-ի զեկույցի վարկանշային աղյուսակում 2015 թ.[1]

1	Սինգապուր	23	Լատվիա	72	Մոնղոլիա
2	Նոր Զելանդիա	24	Լիտվա	77	Ղազախստան
3	Հոնկոնգ	45	Հայաստան	80	Ադրբեջան
4	Դանիա	50	Քաթար	96	Ուկրաինա
5	Հարավային Կորեա	51	Սլովենիա	99	Շրի Լանկա
6	Նորվեգիա	55	Թուրքիա	102	Ղրղզստան
7	ԱՄՆ	57	Բելառուս	141	Ուզբեկստան
8	Մեծ Բրիտանիա	59	Լյուքսեմբուրգ	156	Իրաք
15	Վրաստան	62	Ռուսաստան	166	Տաջիկստան
17	Էստոնիա	63	Մոլդովա	189	Էրիթրեա

«Doing Business» 2015-ի վարկանշային աղյուսակի առաջին հորիզոնականը զբաղեցնում է Սինգապուրը: Առաջին տասնյակում են ներառված նաև Հոնկոնգը, Նոր Զելանդիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Դանիան, Հարավային Կորեան, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Ֆինլանդիան և Ավստրալիան:

ԵԱՏՄ անդամ երկրների ռազմավարական զարգացման ծրագրի մարտահրավերն է հայտնվել վարկանշային աղյուսակի 50 լավագույն երկրների ցանկում:

Հայաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ 189 երկրների շարքում զբաղեցրել է 45-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ դիրքը բարելավելով 4 հորիզոնականով:Բելառուսը, պահպանելով իր դիրքերը, զբաղեցրել է 57-րդ տեղը: Ռուսաստանը զբաղեցրել է 62-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ բարելավելով իր դիրքը: Ղազախստանի դիրքը «Doing Business» 2015-ի վարկանշային աղյուսակում նվազել է 1 հորիզոնականով՝ զբաղեցնելով 77-րդ տեղը: Ղրղզստանը զբաղեցնում է 102-րդ տեղը:

«Doing Business» զեկույցում վարկանշային դիրքի փոփոխությունն արձանագրում է, թե անցած մեկ տարվա ընթացքում տվյալ երկիրը ինչ առաջընթաց է գրանցել բարեփոխումների մասով և որքանով է բարելավել գործարար միջավայրը:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ երկրների դիրքերը «Doing Business»-ի զեկույցի վարկանշային աղյուսակում (ըստ առանձին ցուցանիշների) 2015 թ.[2]

Ցուցանիշներ	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները	4	40	55	9	34
Սեփականության գրանցումը	7	3	14	6	12
Հարկերի վճարումները	41	60	17	136	49
Շինարարության թույլտվության տրամադրումը	81	51	154	42	156
Վարկերի հասանելիությունը	36	104	71	36	61
Էլեկտրականության միացումը	131	148	97	168	143
Պայմանագրերի կիրառումը	119	7	30	56	14
Ներդրողների պաշտպանվածությունը	49	94	25	35	100
Միջազգային առևտուր վարելու դյուրինությունը	110	145	185	183	155
Անվճարունակության հարցերի կարգավորումը	69	68	63	157	65

Ցուցանիշներից 5-ի մասով Հայաստանը առաջընթաց է արձանագրել, 3-ով՝ հետընթաց, իսկ 2 ցուցանիշների դիրքերը մնացել են անփոփոխ: Հայաստանը միանգամից 32 կետով բարելավել է դիրքը «Հարկերի վճարումներ» ցուցանիշով՝ զբաղեցնելով 41-րդ տեղը: «Միջազգային առևտուր

[1] Տվյալները՝ http://russian.doingbusiness.org/rankings

[2] http://russian.doingbusiness.org/rankings

վարելու դյուրինություն» ցուցանիշով առաջընթացը կազմել է 14 կետ՝ 110-րդ տեղ: Հայաստանը 1 կետով առաջընթաց է արձանագրել «Բիզնես սկսելու մեկնարկային պայմաններ» ցուցանիշով և զբաղեցրել է 4-րդ տեղը: Մինչև 2010 թվականը «Էլեկտրականության միացում» ցուցանիշի փոխարեն հաշվարկվում էր աշխատողների ներգրավվածությունը բնութագրող ցուցանիշ: Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ օրենքներ, օրենսդրական ակտեր, որոնք պաշտպանում են վարձու աշխատողների շահերը: 2010 թվականից սկսած հաշվարկվում է «Էլեկտրականության միացում» ցուցանիշը: «Շինարարության թույլտվության տրամադրում» և «Էլեկտրականության միացում» ցուցանիշներով Հայաստանի առաջընթացը կրկին 1 կետով է՝ համապատասխանաբար 81-րդ և 131-րդ տեղերը: Միաժամանակ՝ Հայաստանը 6 կետով հետընթաց է արձանագրել «Վարկերի հասանելիություն» ցուցանիշով՝ զբաղեցնելով է 36-րդ տեղը: Վարկերի հասանելիության սահմանափակումը կարող է լուրջ խնդիր հանդիսանալ ձեռնարկությունների հետագա զարգացման համար: «Ներդրողների պաշտպանվածություն» ցուցանիշով հետընթացը եղել է 1 կետ՝49-րդ տեղ: Գործունեության այս ոլորտն ունի բարելավման առաջնահերթություն: «Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշով Հայաստանը դիրքը զիջել է 2 կետով և զբաղեցրել 69-րդ տեղը: Բիզնեսն անհնար է առանց պայմանագրերի կատարման: «Սեփականության գրանցում» և «Պայմանագրերի կիրառում» ցուցանիշներով երկրի դիրքն անփոփոխ է մնացել. այն զբաղեցնում է համապատասխանաբար 7-րդ և 119-րդ տեղերը:

Վերջին երկու տարիների ընթացքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության նախաձեռնած մի շարք օրենսդրական բարեփոխումների արդյունքում պարզեցվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից հաշվետվությունների ներկայացման գործընթացը, ընկերությունների գրանցման և լուծարման գործընթացները, մի շարք փոփոխություններ են իրականացվել հարկային, մաքսային, քաղաքաշինության ոլորտներում: Բարեփոխումներ են իրականացվել տեսչական ստուգումների համակարգում:

Բելառուսը լավագույն արդյունքներ է գրանցել «Սեփականության գրանցում» և «Պայմանագրերի կիրառում» ցուցանիշների մասով՝ զբաղեցնելով համապատասխանաբար 3-րդ և 7-րդ տեղերը: «Միջազգային առևտուր վարելու դյուրինություն» ցուցանիշի մասով զբաղեցրել է 145-րդ տեղը, ինչը նշանակում է, որ երկիրը դեռ բավականին անելիքներ ունի միջազգայի առևտրի պայմանները բարելավելու համար:

Ռուսաստանը «Շինարարության թույլտվության տրամադրում» ցուցանիշի մասով զբաղեցնում է 156-րդ տեղը, որը վատագույնն է բոլոր տասը ցուցանիշներից: Սա փաստում է այն մասին, որ առաջիկա տարիների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել զգալի բարեփոխումներ՝ բարելավվելու երկրի դիրքը աղյուսակում: «Սեփականության գրանցում» ցուցանիշի մասով Ռուսաստանը զբաղեցնում է 12-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը 5 հորիզոնականով: «Պայմանագրերի կիրառում» ցուցանիշի մասով Ռուսաստանը 4 հորիզոնականով զիջել է իր դիրքերը՝ զբաղեցնելով 14-րդ տեղը:

Այսպիսով, ԵԱՏՄ անդամ երկրներից առաջատար դիրքեր են զբաղեցնում Հայաստանը, Բելառուսը և Ռուսաստանը, սակայն բոլոր երկրներն էլ դեռ զգալի անելիքներ ունեն, որպեսզի բարելավեն իրենց ցուցանիշները:

ԵԱՏՄ անդամ երկրների հետագա ռազմավարությունը պետք է ուղղված լինի հարկային քաղաքականության համաձայնեցմանը, ազգային տնտեսությունների խթանմանը, այդ թվում հարկային օրենսդրության բարելավմանը՝ հաշվի առնելով հարկային ինքնիշխանությունն ու իրավաբանական անձանց մրցակցությունը: Վերը նշված միջոցառումները կնպաստեն ձեռնարկությունների մրցունակության բարելավմանն ու կվերացնեն հարկային համակարգում առաջացող խոչընդոտները, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ԵԱՏՄ անդամ երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվել են ԵԱՏՄ անդամ երկրներում առանցքային նպատակ հանդիսացող գործարարությամբ զբաղվելու պայմանները, ՀԲ-ի կողմից հաշվարկվող «Doing Business» 2015-ի վարկանշային աղյուսակում երկրների զբաղեցրած դիրքերը, երկրների հետագա ռազմավարության ուղղությունները: Ներկայացվել են Եվրասիական տնտեսական միության ստեղծման հիմնական նպատակները, գործարար միջավայրի բարելավման քաղաքականության մշակման համար անհրաժեշտ միջոցառումները: Վերլուծվել են յուրաքանչյուր ցուցանիշի մասով երկրների գրանցած արդյունքներն ու տարածաշրջանում զբաղեցրած դիրքերը:

Բանալի բառեր. *Եվրասիական տնտեսական միություն, գործարարությամբ զբաղվելու հիմնական ցուցանիշներ, հարկային քաղաքականություն, միջազգային առևտուր վարելու դյուրինություն, ներդրումային քաղաքականություն, ԵԱՏՄ անդամ երկրներ, ներդրումային միջավայր, ռազմավարական զարգացման ծրագիր:*

УСЛОВИЯ ВЕДЕНИЯ БИЗНЕСА В СТРАНАХ ЕАЭС

ТАТЕВИК ВАЗГЕНОВНА ШАГИНЯН
младший научный сотрудник Института экономики имени М. Котаняна НАН РА

Аннотация

В статье исследованы выступающие ключевой целью условия ведения бизнеса в странах-членах ЕАЭС, занимаемые странами позиции в рейтинге «Doing Business-2015», исчисляемые ВБ, направления дальнейшей стратегии развития стран. Представлены основные цели создания Евразийского экономического союза, необходимые мероприятия по разработке политики улучшения бизнес-среды.Применительно к каждому показателю проанализированы достигнутые странами результаты и позиции, занимаемые ими в регионе.

Ключевые слова: *Евразийский экономический союз, основные показатели ведения бизнеса, налоговая политика, легкость ведения международной торговли, инвестиционная политика, страны - члены ЕАЭС, инвестиционная среда, стратегический план развития.*

THE TERMS AND CONDITIONS FOR DOING BUSINESS IN THE EAEU MEMBER STATES

TATEVIK VAZGEN SHAHINYAN
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article explores the key terms for doing business in the EAEU member states, the positions of the countries in the “Doing Business 2015” rating table calculated by the World Bank and the strategic directions of the states. Furthermore, the main objectives of the establishment of the Eurasian Economic Union and the measures necessary for the development of policies to improve the business environment are also presented. In addition, the regional positions and the current performance of each indicator is analyzed as well.

Keywords: *Eurasian Economic Union, main indicators of doing business, tax policy, ease of international trade driving, investment policy, EAEU member states , investment environment, strategic development program.*

ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասպիրանտ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, իսկ այդ ոլորտի աշխատանքի արտադրողականությունն ու ստեղծված արդյունքը մեծապես պայմանավորում է սննդամթերքի գները որոնք էլ իրենց էական ազդեցությունն են թողնում բնակչության կենսամակարդակի վրա: Այն նաև մուլտիպլիկատիվ ազդեցություն է ունենում տնտեսության մյուս հատվածների վրա՝ հատկապես նրանց, որոնք ընդգրկված են սննդամթերքի վերամշակման և արտահանման ոլորտներում:

Գյուղատնտեսության ֆինանսավորումը ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցների, մասնավորապես բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտին բնորոշ հատկանշական ռիսկերով:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում տնտեսության շուկայական կարգավորումը զուգակցվում է գյուղատնտեսության պետական աջակցություն ցուցաբերելու քաղաքականության հետ և այսպիսի մոտեցումը հիմնավորվում է հետևյալ պատճառներով՝

- գյուղատնտեսությունը ընդունվում է որպես տնտեսության ռազմավարական ոլորտ, քանի որ պարենային ինքնաբավությունը մեղմացնում է արտակարգ իրավիճակների պայմաններում երկրի պարենային անվտանգության ռիսկերը,
- գյուղատնտեսությունը կախված է բնական գործոններից, որոնք սահմանափակում են արտադրության դիվերսիֆիկացման հնարավորությունները և ստեղծում անհավասար պայմաններ տարբեր բնական գոտիների գյուղացիական տնտեսությունների համար: Բացի դրանից հողի վրա կատարվող ներդրումները դյուրին չէ արագ վերակողմնորոշել այլ արտադրատեսակների արտադրության ուղղությամբ,
- գյուղատնտեսությունը բազմագործառութային ոլորտ է, այն չի սահմանափակվում միայն գյուղատնտեսական արտադրանքների արտադրությամբ, այլ նպաստում է գյուղական տարածքների զարգացմանը, ժողովրդագրական գործընթացների կարգավորմանը, մարդու կենսագոյության միջավայրի, բնական լանդշաֆտների և ամբողջական էկոհամակարգերի պահպանմանը,
- գյուղատնտեսությունը ոչ միայն արտադրանքների խոշոր մատակարար է, այլև ապրանքների ու ծառայությունների կարևոր սպառող: Հետևաբար՝ մեծ ազդեցություն ունի տնտեսության կառուցվածքի և տնտեսական աճի վրա,
- քանի որ գյուղատնտեսական արտադրանքներն աշխարհում արտադրվում են տարբեր կլիմայական պայմաններում, դրանց ծավալներն ու գները խիստ տարբերակված և անկայուն են: Ուստի, Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության տեսանկյունից, արդարացում չունի ռազմավարական նշանակություն ունեցող պարենամթերքների պակասը ներկրումների միջոցով լրացնելու երկարաժամկետ քաղաքականությունը:

Այս պատճառներն ինքնին ծանրակշիռ են՝ երկրի տնտեսական և պարենային անվտանգության, գյուղական տարածաշրջանների զարգացման և էկոհամակարգերի պահպանության նկատառումներով գյուղատնտեսությանը պետական աջակցություն ցուցաբերելու առավել նպատակամետ քաղաքականության իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում, պայմանավորված բնական և արտադրական պայմանների տարբերությամբ, առկա է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մրցակցային հնարավորությունների ակնհայտ անհավասարություն: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, նման իրավի-

ճակում պետական կարգավորիչ գործիքը գյուղատնտեսության սուբսիդավորումն է, որը նպատակամետ ձևով կիրառվում է նաև գյուղատնտեսության ոլորտի առավել կարևոր արտադրությունների խթանման համար[1]:

Պետք է նշել, որ սուբսիդիան օգնություն, աջակցություն է դրամական կամ բենեղեն տեսքով, որը տրամադրվում է պետական, համայնքային բյուջեների միջոցներից կամ հատուկ նշանակության հիմնադրամներից՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, տեղական ինքնակառավարման մարմիններին ու այլ պետություններին[2]:

Սուբսիդիան սովորաբար սահմանվում է որպես կառավարության կողմից տրված գումար, որպեսզի կարգավորի այն գործունեությունը, որը նա ցանկանում է զարգացնել: Սուբսիդիայի գումարը հաճախ որոշվում է ելնելով մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների ծավալից:

Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից տրվել է սուբսիդիայի վերաբերյալ ավելի լայն սահմանումներ: Սուբսիդիան համարվում է ֆինանսական օգնություն տրված կառավարության կողմից, որը տալիս է որոշակի առավելություններ տնտեսության որոշ ոլորտներին, ձեռնարկություններին կամ նույնիսկ անհատներին: Առևտրի համաշխարհային կազմակերպությունը առանձնացնում է սուբսիդիաների 4 տեսակներ՝

- կանխիկ սուբսիդիաներ, ինչպիսիք են գրանտները,
- հարկային արտոնությունները,
- ռիսկերի նվազեցում,
- բաժնետոմսերի գնում[3]:

Գյուղատնտեսության մեջ սուբսիդավորման գործընթացն առնչվում է հազարավոր գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների հետ, որոնք ունեն տարբեր մասնագիտացում և արտադրում են բազմաթիվ գյուղատնտեսական մթերքներ, հետևաբար, սուբսիդավորման գործընթացի իրականացումը պահանջում է որոշակի նախապատրաստական աշխատանքներ և գործուն մեխանիզմների կիրառում:

Սուբսիդավորման կազմակերպման գործընթացում պետք է ընդգրկվեն գյուղացիական տնտեսությունները, գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողները, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզպետարանների գյուղատնտեսության ստորաբաժանումները, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնները, անշարժ գույքի կադաստրի մարզային և տարածաշրջանային կառույցները և ոլորտը համակարգող պետական կառավարման մարմինը[4]:

Գյուղատնտեսության ոլորտի վարկավորումը չի կարող բացառապես լինել պետական մենաշնորհը կամ կրել պատասխանատվությունը: Այդ ոլորտի պահանջարկը վարկային միջոցների նկատմամբ շատ ավելին է, քան պետության կողմից ուղղվող ֆինանսական ռեսուրսները: Բացի այդ, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների կողմից վարկային միջոցների օգտագործումն անընդհատ և բնականոն երևույթ է, ինչպես և ցանկացած այլ արտադրության մեջ ընդգրկված տնտեսվարող սուբյեկտի համար: Այս պարագայում խիստ կարևոր է ֆինանսավորման այնպիսի համակարգի ստեղծումը, որը գործում է նույն անընդհատության սկզբունքով հավաքագրելով ազատ դրամական միջոցներ տնտեսության մեջ և ուղղորդելով դեպի դրանց նկատմամբ պահանջարկ ներկայացնող ոլորտները, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտ: Վերջինս, ազատ շուկայական տնտեսական համակարգ ունեցող ցանկացած երկրում, իրականացվում է ֆինանսական շուկայի միջոցով: Այսինքն միայն ֆինանսական շուկայի միջոցով գյուղատնտեսության վարկավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծմամբ կարելի է խոսել ոլորտի պահանջարկին համապատասխան կայուն ու երկարատև

---

[1] «Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների հայեցակարգի մասին» Հայաստանի հանրապետության կառավարության 27 հոկտեմբերի 2005 թվականի N 2310 որոշում:

[2] Բայադյան Ա.Հ., Ֆինանսավիճակագրական բացատրական բառարան, Երևան, 2008, 514 էջ:

[3] Useconomy.about.com/od/fiscalpolicy/tp/Subsidies.htm

[4] «Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների եվ մեխանիզմների հայեցակարգի մասին» Հայաստանի հանրապետության կառավարության 27 հոկտեմբերի 2005 թվականի N 2310-ն որոշում:

վարկավորման մասին, որն անկախ կլինի պետական միջոցների վերաբաշխման գերակայություններից և դրանց մեծությունից:

Վարկավորման հետ մեկտեղ գյուղացիական տնտեսությունների համար մասնագիտացված կառույցների կողմից պետք է առաջարկվեն նաև այլ ծառայություններ, ինչպիսիք են ավանդների ընդունումը, փոխանցումների կատարումը և լիզինգային գործառնությունները: Ավանդների ներգրավումը կարևոր է վարկավորման համար ֆինանսական ռեսուրսների հավաքագրման տեսանկյունից, իսկ մյուս կողմից էլ այն նաև լրացուցիչ եկամտի աղբյուր կհանդիսանա այն գյուղացիական տնտեսությունների համար, որոնք ունեն ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ և ավանդադրելով տարբեր ժամկետայնությամբ կստանան դրանց դիմաց տոկոսներ:

Վարկավորման գործընթացում առանձնակի կարևորություն են ներկայացնում վարկավորման պայմանները՝ ժամկետայնություն, տոկոսադրույքներ, արժույթ, ապահովվածություն և այլն: Ժամկետայնության տեսանկյունից հատկապես կարևոր են երկարաժամկետ վարկերը, որոնք թույլ կտան ուղղել դրանք երկարաժամկետ օգտագործման գույքի՝ գյուղատնտեսական տեխնիկայի, հողատարածքների, անասնագլխի ձեռքբերմանը, ապահովելով եկամուտներ երկարաժամկետ ժամանակահատվածի համար: Նմանատիպ վարկերի երկարաժամկետ ժամկետայնության կարևորությունը կայանում է նաև նրանում, որ այդ դեպքերում գործ ունենք բավականին մեծ գումարների հետ, որոնց վերադարձելիությունը կարող է ապահովվել միայն երկարաժամկետ ժամանակահատվածում: Կարճաժամկետ վարկերը, որոնք ստիպված կուղղվեն հիմնական միջոցների ձեռքբերմանը, կարող են կործանարար լինել տնտեսությունների համար:

Հայաստանում պետական միջոցներից իրականացվող վարկավորման պայմանները չեն առանձնացվում իրենց ո՛չ ժամկետային, ո՛չ տոկոսային և ո՛չ էլ գումարային գրավչությամբ: Արդյունքում այդ գումարներն ուղղվում են հիմնականում կենցաղային տարբեր խնդիրների լուծմանը և ոչ թե օգտագործվում արտադրական նշանակությամբ՝ խթանելով եկամտի աճին: Այդ վարկերը, ընդհանուր առմամբ, ուղղվելով գյուղացիական տնտեսությունների ֆինանսավորմանը չեն տրամադրվում կոնկրետ նպատակով՝ տեխնիկայի ձեռբերում, մշակվող տարածքների ընդլայնում, գյուղացիական տնտեսության ընդլայնում, իսկ վարկի ստացումից հետո դրանց ոչ նպատակային օգտագործումը, ըստ էության, չի փոխում որևէ բան և որևէ կերպ չի կոմպենսացնում այն կորուստները, որոնք առաջանում են ոչ արտադրական նպատակով դրանք օգտագործելու արդյունքում[1]:

ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի թիվ 349 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի» համաձայն տոկոսադրույքների սուբսիդավորմամբ վարկերը կարող են օգտագործվել, մասնավորապես, հետևյալ ուղղություններով: Այդ թվում կազմակերպել՝

- բարձր վերարտադրության սերմերի արտադրություն,
- հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի արտադրություն,
- բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրություն,
- կարտոֆիլի արտադրություն,
- այգեգործություն,
- ծածկած գրունտում բանջարեղենի արտադրություն,
- բազմամյա կերային մշակաբույսերի արտադրություն,
- շաքարի ճակնդեղի արտադրություն,
- բարձր մթերատու անասնագլխաքանակի մայրական կազմի ձեռքբերում և բուծում,
- նոր գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում,
- այլ գյուղատնտեսական մթերքի արտադրություն[2]:

Ինչ վերաբերում է վարկի մեծությանը և ժամկետայնությանը, ապա յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել

[1] Արտակ Ենգոյան, Սուբսիդավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը:

[2] ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգ:

3.0 մլն ՀՀ դրամը, իսկ առավելագույն ժամկետը՝ 2 տարի: Դրական է այն փաստը, որ վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով միայն և դրանով իսկ գյուղացիական տնտեսություններին զերծ պահում արտարժութային լրացուցիչ ռիսկերից: Ինչ վերաբերում է տոկոսադրույքներին, ապա առավելագույնս այն կարող է կազմել 14%, որից սուբսիդավորվելու է 4%-ը, այսինքն՝ փաստացի գյուղացիական տնտեսությունների համար տոկոսադրույքը կազմելու է առավելագույնը 10%: Հասկանալի է, որ միայն վարկային բոլոր պայմանների համակցության արդյունքում հնարավոր է գնահատականներ տալ դրանց գրավչության և արդյունավետության մասին: Այս պարագայում, առկա են բազմաթիվ խնդիրներ. նախ նպատակի ընդհանուր լինելու արդյունքում լավագույն դեպքում այդ գումարները կուղղվեն շրջանառու միջոցների, ընթացիկ խնդիրների՝ վառելանյութ, անասնակեր և այլնի ձեռքբերմանը, իսկ, ամենայն հավանականությամբ, հիմնականում անձնական սպառողական նպատակներով կամ մեկ այլ պարտքի մարման համար: Այս հանգամանքին նպաստում է նաև գումարային սահմանափակումը՝ առավելագույնը 3 մլն. ՀՀ դրամի չափով և սահմանափակ առավելագույն ժամկետը՝ 2 տարի, ինչը թույլ չի տալիս գործնականում օգտագործել այդ գումարները նոր տեխնիկայի ձեռքբերման ու կապիտալ այլ ներդրումների համար, որոնք պահանջում են թե՛ գումարային զգալի ներդրում, և թե՛ ավելի երկար մարման ժամկետ:

Գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականության նպատակն է ճյուղի և նրան սպասարկող ոլորտների արդիականացումը, մրցունակության և արդյունավետության բարձրացումը: Գյուղատնտեսության ոլորտը ՀՀ պետական բյուջեում ներկայացված է «Տնտեսական հարաբերություններ» բաժնի «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն» խմբով: Վերջինիս վերաբերյալ համապատասխան վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում, ըստ 2010-2015թթ.:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն խմբի ֆինանսավորումն ըստ 2010-2015թվականների[1]

Ցուցանիշների անվանումը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Գյուղատնտեսության բյուջեի աճ, տոկոս	10.9	5.9	-48.3	-17.0	12.6	42.2
Գյուղատնտեսության բյուջեն ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս	1.2	1.1	0.5	0.4	0.5	0.6
Գյուղատնտեսության բյուջեի կշիռը պետական բյուջեում, տոկոս	4.2	4.3	2.2	1.6	1.7	2.2
Գյուղատնտեսության բյուջեն ընթացիկ գներով,մլրդ դրամ	40.0	42.4	21.9	18.2	20.5	29.1
Գյուղատնտեսության բյուջեն 2010-ի գներով, մլրդ դրամ	40.0	39.4	19.8	15.5	17.0	23.2
Պետական ծախսերի աճ, տոկոս	2.7	3.4	2.0	13.6	8.1	5.7
Պետական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս	27.6	26.1	25.1	26.7	27.3	26.8

Գյուղատնտեսության ֆինանսավորման պլանավորված աճը չնայած աննախադեպ է նախորդող տարիների համեմատությամբ, սակայն դրա բացարձակ ծավալները դեռևս բավականաչափ զիջում են 2010-ի մակարդակը: Գյուղատնտեսության ծախսերի կշիռը ՀՆԱ-ում և ընդամենը պետական բյուջեի ծախսերում ևս զիջում են 2010-ի նույն ցուցանիշները՝ համապատասխանաբար 0.6 և 2.0 տոկոսային կետերով[2]:

Գյուղատնտեսության վարկավորման գործընթացում կարևոր դեր և նշանակություն ունեն նաև առևտրային բանկերը, և վերջիններիս համահունչ աղյուսակի տեսքով ներկայացնենք այդ բանկերի կողմից գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումներն ըստ 2005-2014թթ.:

[1] ՀՀ 2015թ. պետական բյուջեի մասին օրենք, ՀՀ 2010-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ 2015թ. բյուջետային ուղերձ, ՀՀ ԱՎԾ:

[2] Գյուղատնտեսության պարզեցված բյուջե 2015թ., Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն:

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումները 2005-2014թթ[1]. (մլն. դրամ)

Ոլորտ	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությում ՀՀ դրամով կատարված վարկային ներդրումները	3917	5976	10289	8866	7497	7177	22781	30962	44332	49562
ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությունում արտարժույթով կատարված վարկային ներդրումները	7387	8220	12086	27601	36681	45188	50658	60928	73909	100598
Ընդամենը ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումները	11304	14196	22375	36467	44178	52365	73439	91890	118241	150160

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից ՀՀ դրամով առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումները ամենաբարձրը եղել են 2014թ-ին՝ կազմելով 49562 մլն դրամ, որը հատկապես 2005, 2006 թվականների համեմատ ունեցել է բավականին մեծ աճման միտում՝ համապատասխանաբար ավելանալով 45645 մլն և 43586 մլն դրամով: Ընդ որում, այդ աճը հիմնականում պայմանավորված է եղել բուսաբուծության ճյուղի վարկավորման ծավալների ավելացմամբ: Մասնավորապես բուսաբուծության ճյուղում վարկային ներդրումները կազմել են 22895 մլն դրամ, իսկ անասնաբուծության՝ 22573 մլն դրամ: Արտարժույթով կատարված վարկային ներդրումների ըստ տարիների ունեցել են աճման միտում, և ամենաբարձրը ևս գրանցվել է 2014թ.-ին՝ կազմելով 100598 մլն դրամ: Այս դեպքում ևս արտարժույթով վարկային ներդրումները աճը պայմանավորված է եղել բուսաբուծության ճյուղի վարկավորման ծավալների աճով, որը կազմել է 41712 մլն. դրամ, անասնաբուծության ճյուղի 30212 մլն դրամ, անտառային տնտեսության՝ 11681 մլն դրամ և ձկնաբուծության՝ 8645 մլն դրամի փոխարեն:

Այսպիսով, ուսումնասիրելով գյուղատնտեսության ոլորտի ֆիանասավորման առանձնահատկությունները կարելի է նկատել, որ գյուղատնտեսության բյուջեի տեսակարար կշիռը պետական բյուջեում 2010թ.-ից հետո ունեցել է նվազման միտում և միայն 2015թ. նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աճ 0.5 տոկոսային կետով: Միաժամանակ կարևորելով գյուղատնտեսության ոլորտի վարկավորման գործընթացում առևտրային բանկերի ունեցած դերն ու նշանակությունը, պետք է նշել, որ ընդամենը ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությում կատարված վարկային ներդրումներ ունեցել են անընդհատ աճման միտում՝ 2014թ. կազմելով 150160 մլն. դրամ:

[1] ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2006», ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2008», ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2010», ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2012», ՀՀ ԿԲ «Վիճակագրական տեղեկագիր 2014»:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԱՀ ֆինանսներ և վարկ ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Գյուղատնտեսությունը հանդիսանում է յուրաքանչյուր երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: Այս ճյուղի ֆինանսավորումը ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցների, մասնավորապես, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված ոլորտին հատկանշական ռիսկերով:

Հոդվածում ուսումնասիրվել են գյուղատնտեսության ֆինանսավորման առանձնահատկությունները և կարգավորման ուղիները ՀՀ-ում, վերլուծվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսությունում կատարված վարկային ներդրումներ:

Բանալի բառեր. *գյուղատնտեսության ֆինանսավորում, սուբսիդավորում, տոկոսադրույք, պետական աջակցություն, վարկային ներդրումները:*

ОСОБЕННОСТИ ФИНАНСИРОВАНИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И ПУТИ РЕГУЛИРОВАНИЯ В РА

ЛУСИНЕ ГЕВОРКОВНА ПОГОСЯН
аспирант кафедры финансов и кредита Национального аграрного университета Армении

Аннотация

Сельское хозяйство является одним из ключевых секторов экономики любой страны. Финансирование отрасли со стороны специализированных структур финансового рынка, в частности, банков и кредитных компаний, имеет свои особенности, обусловленные характерными для сферы сельского хозяйкства. рисками.

В статье исследованы особенности финансирования сельского хозяйства и пути регулирования отрасли в РА, а также проведен анализ кредитных вложений, предоставленных коммерческимим банками РА аграрному сектору.

Ключевые слова: *финансирование сельского хозяйства, субсидирование, процентная ставка, государственная поддержка, кредитные вложения.*

PECULIARITIES OF AGRICULTURE FUNDING AND REGULATION METHODS IN THE REPUBLIC OF ARMENIA

LUSINE GEVORG POGHOSYAN
Ph.D.Student,Chair of Finance and Credit, Armenian National Agrarian University

Abstract

Agriculture is one of the key industries of the economy in every nation. The funding and/or resources channeled to this industry by various specialized financial market players are associated with the industry specific risks. The article studies funding and/or resources available to the agriculture, specifics of the process and regulation methods in the Republic of Armenia; analyzes agricultural loans and/or loan investments by commercial banks of the Republic of Armenia.

Keywords: *Agriculture funding, subsidizing, interest rate, state support, loan investments.*

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, *տ.գ.թ., պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոն
ԼԻԼԻԹ ՎԱԶԳԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՃՇՀԱՀ էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի հայցորդ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Արդի ժամանակաշրջանում շուկայական տնտեսությունը բնութագրվում է մրցակցության խորացմամբ: Վերջինս մի կողմից մարտահրավեր է առևտրային ընկերությունների համար, մյուս կողմից՝ նորարարությունների ներդնման, շարունակական բարելավման խթան, ինչպես նաև դեպի հաճախորդը կողմնորոշման ուղղորդիչ:

ՀՀ տնտեսության առավել մրցակցային ոլորտներից են ֆինանսական համակարգը, հեռահաղորդակցությունը և զբոսաշրջությունը, որոնք բնորոշվում են շուկայի կենտրոնացվածության ցածր մակարդակով և մրցակիցների միջև հաճախորդակենտրոն պայքարով: ՀՀ մրցակցային միջավայրում գործող ընկերությունների գլխավոր մարտահրավերներից մեկը երկարաժամկետ հատվածում ընկերության մրցունակության ապահովումն է՝ որպես բիզնեսի անընդհատության երաշխիքի:

Ֆինանսական համակարգը և, մասնավորապես, առևտրային բանկերը առավել զգայուն են բիզնեսի անընդհատության ապահովման խնդիրների նկատմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր առևտրային բանկ, մտնելով պայմանագրային հարաբերության մեջ մեծ թվով հաճախորդների հետ, իր գործունեության անընդհատությունը դիտարկում է որպես հաճախորդների կողմից վստահության երաշխիք:

Առավել կարևորելով բանկային հատվածում գործունեության անընդհատության ապահովման մարտահրավերը՝ սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման հայեցակարգերը և նրանց փոխազդեցությունները՝ որպես առևտրային բանկի ռազմավարական կառավարման արդյունավետության երաշխիք և գործունեության անընդհատության ապահովման գրավական:

Մրցունակությունը ՀՀ բանկային համակարգում

Հայաստանի բանկային համակարգը ՀՀ տնտեսության առավել մրցակցային ոլորտներից է: Սրա մասին են փաստում 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շուկայի կենտրոնացվածության Հերֆինդահլ Հիրշմանի (HH) ինդեքսի հաշվարկները՝ որոշ բանկային ցուցանիշների գծով: Մասնավորապես, ակտիվների գծով HH ինդեքսը կազմում է 763.0, պարտավորությունների գծով՝ 795.4 (տե՛ս աղյուսակ 1), ինչը վկայում է ճյուղում մրցակցության բավարար մակարդակի առկայության մասին:

Աղյուսակ 1

Բանկային համակարգի կենտրոնացվածության ցուցանիշներ

Ցուցանիշ	Մեծություն (31.12.2015թ. դրությամբ)	HH ինդեքսի չափման միջակայքի սահմանումները համաձայն ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի
Ակտիվներ	763.0	• <1,000, ճյուղը մրցակցային է • 1,000-1,800, ճյուղում առկա է թույլ կենտրոնացվածություն • >1,800, ճյուղում առկա է բարձր կենտրոնացվածություն
Վարկային ներդրումներ	808.1	
Պարտավորություններ	795.4	
ժամկետային ավանդներ	808.1	
HH ինդեքսի հաշվարկման բանաձև *HH ինդեքս = $(S_1)^2 + (S_2)^2 + (S_3)^2 + \ldots + (S_n)^2$, որտեղ S_n-ը i-րդ բանկի շուկայի մասնաբաժինն է ըստ տվյալ ցուցանիշի[1]: *Շուկայի կենտրոնացվածության Հերֆինդահլ Հիրշմանի ինդեքսի հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից եռամսյակային հաճախականությամբ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները:*		

[1] http://www.investopedia.com/terms/h/hhi.asp

Ինչպես երևում է, Հերֆինդահլ Հիրշմանի ինդեքսը մրցակցային ճյուղի դեպքում չի գերազանցում 1,000-ը: Աղյուսակում առկա բոլոր ցուցանիշները տատանվում են 0-ից 1,000 միջակայքում, ինչը վկայում է Հայաստանում բանկային ճյուղում մրցակցության առկայության մասին:

ՀՀ բանկային համակարգում առկա մրցակցությունը թույլ է տալիս ենթադրել, որ յուրաքանչյուր առևտրային բանկի գործունեության արդյունավետության չափման համար անհրաժեշտ է գնահատել ոչ միայն շահութաբերության ներուժը, այլ նաև երկարաժամկետ հատվածում կայուն գործունեություն իրականացնելու նրա ունակությունը: Մրցակցային միջավայրի մարտահրավերներին երկարաժամկետ հատվածում դիմակայելու առևտրային բանկի ունակությունը նրա՝ բիզնեսի անընդհատության (business continuity) ապահովման երաշխիքն է: Մասնավորապես, եթե մակրոտնտեսագիտական տեսնակյունից այդ անընդհատությունը կարևորվում է ֆինանսական համակարգի կայունության ապահովման տեսանկյունից, ապա միկրոտնտեսագիտական առումով այն մրցակցային միջավայրում բանկի կայուն զարգացման գրավականն է:

Կարևորելով բիզնեսի անընդհատության ապահովման խնդիրը՝ ուսումնասիրվել է ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման դերը և դրանց փոխազդեցությունները՝ առևտրային բանկերի գործունեության արդյունավետության բարձրացման համատեքստում:

Ռազմավարական կառավարման զարգացման ուղղությունները ՀՀ առևտրային բանկերում

ՀՀ բանկերում ռազմավարական կառավարման հիմնադրույթների կիրառումը բխում է մի շարք խնդիրներից՝ պայմանավորված ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական քաղաքականությամբ, ինչպես նաև առևտրային բանկերի կողմից մշակված կորպորատիվ կառավարման քաղաքականություններով: Այդ հիմնադրույթներն ունեն հետևյալ հիմքերը.

ՀՀ ԿԲ իրավական կարգավորումը

2003 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ռազմավարական զարգացման ծրագրերը ՀՀ կենտրոնական բանկ ներկայացման մասին կարգը, որով սահմանվում են բանկերի հեռանկարային զարգացման նպատակները, խնդիրները, մոտեցումները, ծրագրի ներկայացման հաճախականությունը և այլն: Նշված փաստաթուղթը իրավական կարգավորման տեսանկյունից կարող է առավել կանոնակարգել ռազմավարական կառավարման գործընթացն առևտրային բանկերում՝ դրանով իսկ խթանելով բանկերի նպատակային զարգացումը:

Կորպորատիվ կառավարումը

Առևտրային բանկերում ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը կարող է պայմանավորվել գործադիր կառավարման մարմնի և բաժնետերերի խմբի տարանջատմամբ, այն է՝ կորպորատիվ կառավարման համակարգի ներդրմամբ: Արդյունքում բանկը կառավարվում է ոչ թե մեկ կամ մի քանի բաժնետերերի կողմից, այլ ընտրված կառավարման մարմնի՝ բանկի վարչության կողմից: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բանկերը ՀՀ տնտեսությունում գործող այն սակավաթիվ առևտրային կազմակերպություններից են, որտեղ ընկերության սեփականատերերի և գործադիր կառավարման մարմինների տարանջատման արդյունքում զարգացել է կորպորատիվ կառավարման համակարգը: Նշանակված գործադիր մարմնի առկայությունը ուղղորդում է առևտրային բանկի ղեկավարությանը՝ ընկերությունը կառավարել ոչ թե անձնական կամ ընտանեկան բիզնես մոդելով, այլ ապահովել կառավարման հաշվետվողականությունը բանկի բաժնետերերին և ներդրողներին:

Գործունեության երկարաժամկետ նպատակադրումը

Առևտրային բանկերն իրենց նպատակները և գործունեության տեսլականը սահմանում են ոչ թե միամյա կամ երկամյա ժամանակային լագով, այլ առավել երկարաժամկետ հորիզոնով: Վերջինս պայմանավորված է նրանով, որ բանկային գործունեության ճյուղ մուտք գործելը բավականին ռեսուրսատար է օրենսդրական պահանջներին բավարարելու, տեխնոլոգիական համապատասխանության ապահովման, ինչպես նաև փոփոխվող շուկայական պայմաններին համապատասխան բանկային ծառայություններ մշակելու և առաջարկելու տեսանկյունից: Այդ պատճառով

ներդրողը, հաղթահարելով ճյուղի մուտքի նման արգելքները, սահմանում է այդ ճյուղում գործունեության հնարավորինս երկարաժամկետ հորիզոն:

Մրցակցային միջավայրը

Մրցակցային միջավայրը ուղղորդում է յուրաքանչյուր ընկերության մշտապես ուսումնասիրել և հաշվի առնել մրցակիցների դիրքը շուկայում կարճաժամկետ և երկարաժամկետ առավելությունների սահմանման նպատակով: Այս տեսանկյունից ՀՀ բանկային ոլորտը բացառություն չէ: Նշված իրավիճակում ռազմավարության մշակումը մրցակցությանը դիմակայելու և մրցակիցներից տարբերվելու ամենակարճ ճանապարհն է: Ինչպես Մայքլ Պորտերը նշել է իր «Ի՞նչ է ռազմավարությունը» հոդվածում, ռազմավարության էությունը ընկերության գործունեությունը մրցակիցներից տարբերվող ձևով իրականացնելն է: Նույն հոդվածում նա նաև սահմանել է ընկերության՝ մրցակցային միջավայրում գործելու պայմանը հետևյալ կերպ՝ «ընկերությունը կարող է գերազանցել իր մրցակիցներին, եթե այն կարող է սահմանել մի տարբերություն, որով կպաշտպանվի իր մրցակիցներից»[1]:

Կողմնորոշումը դեպի նորարարությունը

Բանկային ոլորտը ՀՀ տնտեսության առավել նորարարական լուծումներ պահանջող ոլորտներից է: Դա պայմանավորված է նրանով, որ ճյուղը մատուցում է ստանդարտացված ծառայություններ, իսկ նորարարության կիրառումը թույլ է տալիս ընկերությանը տարբերվել ապրանքային ռազմավարությամբ և գործարար գործընթացների օպտիմալացմամբ: Կողմնորոշումը դեպի նորարարությունը ընկերության մրցակցային առավելության ապահովման երաշխիք է: Ճյուղում մրցակցության բարձր մակարդակը վտանգում է ճյուղի շահութաբերությունը, և ծառայությունների մատչելիության բարձրացումը բանկի տեսանկյունից կարող է ունենալ բացառապես կարճաժամկետ բնույթ:

Որակի կառավարումը

Որակի կառավարման անհրաժեշտությունը բխում է առևտրային բանկի՝ հաճախորդակենտրոն քաղաքականությունից: Ինչպես սահմանվում է ISO 9000 որակի կառավարման ստանդարտի կիրառման սկզբունքներում, «ընկերությունները կախված են իրենց հաճախորդներից. նրանք պետք է բացահայտեն իրենց հաճախորդների ներկա և ապագա կարիքները, հաճախորդների պահանջները և ձգտեն գերազանցել հաճախորդների սպասումները: Այս մոտեցման կիրառումը թույլ կտա ընկերությանը մեծացնել իր եկամուտները և շուկայի մասնաբաժինը շուկայի փոփոխություններին արագ և ճկուն արձագանքելու միջոցով, մեծացնել ընկերության ռեսուրսների կիրառման արդյունավետությունը, հաճախորդների հավատարմությունը»[2]:

Որակի կառավարումը ժամանակակից առևտրային բանկի սկզբունքային մարտահրավերներից է, որին կարելի է դիմակայել բանկի ռազմավարության իրագործման ճանապարհով:

Նախագծերի կառավարման զարգացման ուղղությունները ՀՀ առևտրային բանկերում

Բանկային համակարգում և, մասնավորապես, հայաստանյան բանկերում նախագծերի կառավարման հայեցակարգերի կիրառումն ունի հետևյալ հիմքերը.

Գործընթացային մոտեցումը

Գործընթացային մոտեցման կիրառումն ենթադրում է չորս կայուն քայլերի իրականացում ընկերության յուրաքանչյուր միավորում, այն է՝ պլանավորել (plan), իրագործել (do), ստուգել (check), բարելավել (act): Նշված քայլային հաջորդականությունն առավել հայտնի է «Դեմինգի շրջան» (Deming Cycle) անվանումով, որի նպատակն է ապահովել որակի շարունակական բարելավումը:

Գծանկար 1. Դեմինգի շրջան



[1] Michael E. Porter, “What is Strategy?”, Harvard Business Review, November-December 1996, page 61-78

[2] http://www.iso.org/iso/qmp_2012.pdf

Համաձայն այս մոտեցման, ընկերությունում, և տվյալ պարագայում առևտրային բանկում, առկա յուրաքանչյուր գործարար գործընթացի նկատմամբ հնարավոր է կիրառել Դեմինգի շրջանը՝ ապահովելով շարունակական բարելավումը:

Մեծաքանակ տվյալների (Big Data) ուսումնասիրմամբ կառավարչական որոշումների կայացումը

Վերջին տարիներին բավականին արդյունավետ է դարձել «Big Data»-ի կիրառումը կառավարչական որոշումներ կայացնելիս: Այն պայմանավորված է կյանքի տարբեր իրավիճակներում, այդ թվում նաև գործարար միջավայրում ահռելի քանակությամբ չիրացված տվյալների կուտակմամբ, որոնք հատուկ մշակված վերլուծական գործիքների միջոցով կարողանում են վերհանել իրավիճակային խնդիրները թվային տեսքով և ապահովել բիզնեսի տեսանելիությունը (visualization): Յուրաքանչյուր խնդրի լուծմանն ուղղված նախագիծ առևտրային բանկում հիմնվում է որոշակի տվյալների վերլուծության վրա: Ուստի «Big Data»-ի կատարելագործված գործիքների կիրառումը թույլ կտա առավել արժանահավատ տեղեկատվություն կիրառել կառավարչական որոշումներ կայացնելիս:

Առևտրային բանկում «Big Data»-ի կիրառումը ունի կառավարչական որոշումների վրա ազդելու բավականին մեծ ներուժ, քանի որ գործունեության բնույթով պայմանավորված՝ բանկի տեղեկատվական բազաներում կուտակվում են ահռելի քանակությամբ տվյալներ հաճախորդների վերաբերյալ: Այդ տվյալների վերլուծությունը և նպատակային կիրառումը կարող է էապես անդրադառնալ բանկի գործառնական և ռազմավարական կառավարման որակի վրա: Միևնույն ժամանակ «Big Data»-ի կիրառումը պահանջում է նախագծային մոտեցման կիրառում, քանի որ յուրաքանչյուր վերլուծության հիմքում դրվում է որևէ խնդրի լուծումը՝ որպես վերջնական նպատակի:

Կազմակերպական կառուցվածքը

Ուսումնասիրելով ՀՀ առևտրային բանկերի կազմակերպական կառուցվածքը՝ պարզ է դառնում, որ նրանք հիմնականում մշակված են գործառութային (ֆունկցիոնալ) մոդելին համապատասխան: Դա պայմանավորված է նրանով, որ որքան էլ ընկերությունն ապրի դինամիկ փոփոխությունների ժամանակաշրջան, երկարաժամկետ հատվածում այն հակված է պատասխանատվությունների և հաշվետվողականության գործառութային բաշխմանը, որի արդյունքում ֆունկցիոնալ կազմակերպական կառուցվածքները համարվում են առավել կիրառական: Սակայն, պայմանավորված ընկերության, և տվյալ պարագայում առևտրային բանկի զարգացման փուլով (աճի փուլ, կայուն առաջատարի դիրքի ապահովման փուլ, պահպանողական աճի փուլ, անկման փուլ և այլն)՝ կազմակերպությունում կարող են ձևավորվել ֆորմալ և ոչ ֆորմալ խմբեր՝ առաջադրված խնդիրների առավել օպտիմալ լուծման նպատակով: Նշված խմբերն ուղղորդում են ընկերությանն առաջադրանքներն իրականացնել նախագծային մոտեցման (project-based approach) կիրառմամբ, որի արդյունքում խախտվում է ընկերության կազմակերպական կառուցվածքին համապատասխան հաշվետվողականությունը: Սակայն, մյուս կողմից նախագծային մեթոդի կիրառմամբ առաջադրված խնդիրները լուծվում են առավել սահուն և օպտիմալ եղանակով: Նշված իրավիճակում յուրաքանչյուր խնդիր կամ առաջադրանք դիտարկվում է որպես առանձին նախագիծ՝ պայմանավորված այն նպատակով, որն իրագործվելու է տվյալ առաջադրանքը կատարելիս:

Վերոնշյալ թվարկած երեք գործոնների առկայությունը, այն է՝ գործընթացային մոտեցումը, «Big Data»-ի կիրառումը, կազմակերպական կառուցվածքը, ստեղծում են նոր հնարավորություններ առևտրային բանկերում սահմանված նպատակները նախագծային մեթոդով իրագործելու համար:

Ռազմավարության մշակումը և իրագործումը. նախագծային մոտեցում

Բիզնեսի կառավարման արդի մոտեցումներում զուգահեռաբար կարևորելով ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման հայեցակարգերը՝ առաջարկվում է առևտրային բանկերում կիրառել նշված երկու հայեցակարգերի համախմբված մոդելը, մասնավորապես՝ ինտեգրել նախագծերի կառավարման համակարգը բանկի ռազմավարական կառավարման համակարգին՝ այդպիսով ապահովելով բանկի ռազմավարական հաղորդակցումը բոլոր կազմակերպական մակարդակներում: Ռազմավարական կառավարման գործընթացը դիտարկելով որպես մեկ նախագիծ՝ առևտրային բանկը կարող է խուսափել ռազմավարության իրագործման այն ձախողումներից, որոնք պայմանավորված են ռազմավարական ծրագրի թերի հաղորդակցմամբ և ռազմավարական կառավարման շրջափուլերի (փուլերի) միջև կապի խափանմամբ: Ռազմավարական կառավարման շրջափուլերն են՝ *ռազմավարական ծրագրի մշակումը, ռազմավարական ծրագրի իրագործումը, ռազմավարական ծրագրի իրագործման հսկողության ապահովումը, ռազմավարական կառավարման որակի գնահատումը:* Նշված չորս շրջափուլերի միջև կապը հնարավոր է ապահովել նախագծային մեթոդի կիրառման շնորհիվ:

Գծանկար2

Ռազմավարական կառավարման շրջափուլերն առևտրային բանկում



Ռազմավարական ծրագրի մշակման փուլը

Այս փուլի գլխավոր խնդիրը բանկի ռազմավարության մշակումն է, իսկ գլխավոր արդյունքը՝ ռազմավարական ծրագիրը՝ որպես մեկ ամփոփ գլխավոր փաստաթուղթ: Բանկի ռազմավարության մշակումը առաջարկվում է իրականացնել վարից վեր(Bottom-Up) և վերից վար (Top-Down) մեթոդների համադրմամբ: Ընդ որում «վարից վեր» սկզբունքի կիրառման դեպքում առաջնահերթությունը տրվում է բանկի զարգացման ներուժի սահմանմանը արտաքին գործոնների ազդեցության պայմաններում, իսկ «վերից վար» սկզբունքի կիրառման դեպքում՝ բաժնետերերի սպասումներին: Համադրելով այս երկու մեթոդները՝ հնարավոր է ստանալ բանկի՝ իրագործման տեսանկյունից առավել օպտիմալ ռազմավարությունը:

«Bottom-Up» մեթոդի կիրառման դեպքում բանկի ռազմավարությունը մշակվում է բոլոր բիզնես միավորների (տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ, բիզնես ուղղություններ և այլն) ռազմավարական նպատակների համադրմամբ: Մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր բիզնես միավոր ստանում է հնարավորություն սահմանել սեփական բարելավման և աճի ուղիները, որի արդյունքում հնարավոր է դառնում գնահատել յուրաքանչյուր բիզնես միավորի աճի առավելագույն ներուժը՝ ռազմավարական նպատակները սահմանելով այդ ներուժին համապատասխան: Նշված մեթոդի մեկ այլ կարևոր առավելությունն այն է, որ ծրագրավորելիս հնարավոր է գնահատել մակրոմիջավայրի ազդեցությունը և ապագա սպասումները: Այնուհանդերձ, մեթոդը զերծ չէ թերություններից, մասնավորապես առկա է առևտրային բանկի ներքին միջավայրում մի քանի բիզնես ուղղությունների նպատակների՝ միմյանց, ինչպես նաև բանկի բարձրագույն ղեկավարության սպասումներին հակասելու վտանգը:

Գծանկար 3

Ռազմավարության մշակման մոտեցումներ



«Top-Down» մեթոդի կիրառման դեպքում ռազմավարության մշակման հիմքում դրվում է բանկի ղեկավարության և բաժնետերերի տեսլականը: Առավելությունը կայանում է նրանում, որ այլևս վերանում է ղեկավարության հետ համաձայնեցնելու անհրաժեշտությունը, սակայն մյուս կողմից ղեկավարության սպասումները կարող են տվյալ ժամանակաշրջանի համար մեծ մարտահրավեր լինել: Այս մեթոդը կարող հանգեցնել անգամ համապատասխան ներուժի բացակայությանը:

Քանի որ նշված երկու մեթոդներն ունեն բավականին շատ և՛ առավելություններ, և՛ թերություններ, առաջարկվում է բանկի ռազմավարական պլանավորումն իրականացնել երկու մեթոդների համադրմամբ: Արդյունքում կարող է ստացվել մի իրավիճակ, երբ մեթոդներից յուրաքանչյուրի դեպքում կսահմանվեն միմյանցից բավականին տարբերվող ուղղություններ և թիրախներ: Այս դեպքում լավագույն լուծումը որևէ միջանկյալ թիրախի սահմանումն է: Այն դեպքում, երբ երկու մեթոդներով մշակված ռազմավարությունները նույնական են, ապա դա նշանակում է, որ առևտրային բանկի թե՛ ստորին, թե՛ վերին օղակներն ունեն միանման գնահատական և սպասումներ բանկի զարգացման ներուժի և հնարավորությունների վերաբերյալ: Արդյունքում ռազմավարության իրագործումը դառնում է առավել իրատեսական:

Ռազմավարական ծրագրի իրագործման փուլը

Ռազմավարական ծրագրի իրագործման գործընթացն արդյունավետ դարձնելու նպատակով առաջարկվում է մշակել ռազմավարական կառավարման ուղեցույցներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել ռազմավարության անխափան հաղորդակցումն ըստ թիրախային խմբերի: Ռազմավարական կառավարման ուղեցույցը մի փաստաթուղթ է, որն ըստ տարանջատված թիրախային խմբերի (տե՛ս աղյուսակ 2) հակիրճ ներկայացնում է ընկերության գործունեության ռազմավարական ուղղությունները և տվյալ թիրախային խմբի մասնակցության ուղիները ընկերության ռազմավարության իրականացման գործընթացին: Ռազմավարական կառավարման ուղեցույցի գլխավոր և վերջնական նպատակն է՝ ապահովել բանկի ռազմավարության իրագործման ճիշտ հաղորդակցումը, ինչպես նաև բանկի յուրաքանչյուր աշխատակցի համար մատչելի դարձնել բանկի ռազմավարության իրագործման գործընթացին իր մասնակցության չափը: Աշխատակիցների թիրախային խմբերը տարանջատելիս պետք է առաջնորդվել այն պայմանով, թե տեղեկատվության ինչպիսի հասանելիություն պետք է ապահովել տվյալ աշխատակցի համար՝ ռազմավարական ծրագրի շրջանակներում: Ուստի, առաջարկվում է սահմանել հետևյալ թիրախային խմբերը.

- բանկի բոլոր աշխատակիցներ

- բանկային ծառայությունների (պրոդուկտների) վաճառքի գործընթացում ներգրավված աշխատակիցներ
- բանկային ծառայությունների (պրոդուկտների) վաճառքի գործընթացին չմասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներ
- միջին օղակի ղեկավարներ
- բարձրագույն ղեկավարություն (բանկի վարչություն)
- բարձրագույն ղեկավարություն (խորհուրդ)։

Նշված խմբավորման նպատակն է՝ սահմանել յուրաքանչյուր թիրախային խմբին հասանելի տեղեկատվության միջակայքերը, ովքեր և հանդիսանում են ռազմավարական ծրագրի իրագործողները։ Բանկի յուրաքանչյուր թիրախային խմբին հասանելի ռազմավարական տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում։

Աղյուսակ2

Ռազմավարական կառավարման ուղեցույցի թիրախային խմբեր

N	Թիրախային խումբ	Ռազմավարական կառավարման ուղեցույցում առկա տեղեկատվություն
1.	բանկի բոլոր աշխատակիցներ	- բանկի առաքելությունը, տեսլականը, ռազմավարական նպատակները - բանկի դիրքը բանկային համակարգում - բանկի մրցակցային առավելությունները - բանկի գործունեության ուղղությունները պլանային ժամանակաշրջանում
2.	բանկային ծառայությունների (պրոդուկտների) վաճառքի գործընթացում ներգրավված աշխատակիցներ	- սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված տեղեկատվությունը - յուրաքանչյուր աշխատակցի գծով սահմանված վաճառքի ծավալի պլանային ցուցանիշները
3.	բանկային ծառայությունների (պրոդուկտների) վաճառքի գործընթացին չմասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներ	- սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված տեղեկատվությունը - բանկի բիզնես ուղղությունների միջնաժամկետ ծրագրերը
4.	միջին օղակի ղեկավարներ	- սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված տեղեկատվությունը - բանկի բիզնես ուղղությունների միջնաժամկետ ծրագրերը - բանկի տարածքային ստորաբաժանումների միջնաժամկետ ծրագրերը
5.	բարձրագույն ղեկավարություն (բանկի վարչություն)	- սույն աղյուսակի 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունը - բանկի ֆինանսական ցուցանիշները պլանավորվող յուրաքանչյուր տարվա համար
6.	բարձրագույն ղեկավարություն (բանկի խորհուրդ)	- սույն աղյուսակի 1-ին կետով սահմանված տեղեկատվությունը բանկի գործունեության ուղղությունները պլանային ժամանակաշրջանում - բանկի ֆինանսական ցուցանիշներ պլանավորվող ժամանակաշրջանի համար

Ռազմավարական ուղեցույցների տրամադրմանը հաջորդում է գործառնական մակարդակում ռազմավարության իրագործումը՝ բանկի բոլոր աշխատակիցների կողմից։ Արդյունքում ռազմավարական կառավարման ուղեցույցների միջոցով ապահովվում է բանկի ռազմավարության հաղորդակցումը բոլոր օղակների միջև։

Ռազմավարական ծրագրի իրագործման հսկողության փուլը

Այս փուլի գլխավոր խնդիրը ռազմավարական ծրագրի իրագործման ընթացքի անփախանության ապահովումն է։ Այս գործառույթը պետք է իրականացնել ինչպես մոնիթորինգի եղանակով, այնպես էլ ուղղորդելով ռազմավարության իրագործմանը մասնակցող աշխատակիցներին։ Առևտրային բանկում գործառնական որոշումները չպետք է հակասեն ռազմավարությանը։ Այնուհանդերձ ընկերության ռազմավարության թերի ընկալումը կարող է հանգեցնել բանկի ռազմավարությանը հակասող գործառնական որոշումների կայացմանը։ Շատ կարևոր է նաև բանկի ղեկավարության պատշաճ իրազեկումը ռազմավարության իրագործման գործընթացի և արդյունքների մասին։ Նման իրավիճակում լավագույն գործիքներ կարող են ծառայել հաշվետվական ձևերը, որոնց միջոցով հնարավոր կլինի համադրել պլանային և փաստացի ցուցանիշները, ինչպես նաև առաջադրված որակական խնդիրների կատարողականը։ Հաշվետվությունների ներկայացման օպտիմալ հաճախականությունը եռամսյակայինն է, սակայն դա չի հակասում ամենօրյա հսկողության իրականացմանը։ Հսկողության փուլում կարող են նաև վերանայվել ռազմավարական նպատակները՝ պայմանավորված արտաքին միջավայրի փոփոխություններով։

Ռազմավարական կառավարման որակի գնահատման փուլը

Այս փուլում տրվում է բանկի ռազմավարական կառավարման գործընթացի գնահատականը՝ որպես մեկ նախագծի, որի վերջնական արդյունքը ռազմավարության իրագործումն է: Որակի գնահատման նպատակով կարող են սահմանվել նաև անանուն հարցումներ տարբեր թիրախային խմբերի մասնակցությամբ: Հարցման նպատակն է պարզել, թե յուրաքանչյուր թիրախային խումբ որքան հետևողական է վերաբերվել բանկի ռազմավարական նպատակներին և իր մասնակցությանը այդ նպատակների իրագործմանը:

Ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ առևտրային բանկերում

Ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման համակարգերի փոխազդեցության արդյունքում ակնկալվում է ապահովել հետևյալ հեռանկարների իրագործումը.

Ապահովել ռազմավարական ծրագրի՝ որպես մեկ նախագծի իրագործումը

Ռազմավարական կառավարման գործընթացը դիտարկելով որպես տվյալ ժամանակաշրջանի նախագիծ՝ ընկերությանը, և տվյալ պարագայում՝ առևտրային բանկին, հնարավորություն է ընձեռվում նախագծի գլխավոր նպատակները նույնացնել ռազմավարական նպատակների հետ, և հետևաբար, նախագիծը համարվում է ավարտված սահմանված թիրախներն իրագործելիս: Նախագծային մոտեցման դեպքում հնարավոր է դառնում ռազմավարական ծրագիրը հավասարակշռել առևտրային բանկում առկա և նախագծերի կառավարման տեսանկյունից սահմանված սահմանափակումների հետ, այն է՝ շրջանակը (scope), ժամանակը(time), արժեքը (cost), որակը (quality), մարդկային ռեսուրսները (HR), հաղորդակցումը (communication), ռիսկը (risk), գնումները (procurement), նախագծի ինտեգրումը (project integration):

Դարձնել ռազմավարական կառավարման գործընթացն առավել տեսանելի

Նախագծային մեթոդի կիրառման արդյունքում կապ է հաստատվում գործառնական մակարդակում կայացրած յուրաքանչյուր որոշման և ռազմավարական նպատակների միջև: Արդյունքում ռազմավարական կառավարումը դառնում է առավել տեսանելի գործընթաց, և ամենօրյա պարբերականությամբ հնարավոր է դառնում գնահատել, թե որքանով է յուրաքանչյուր կարճաժամկետ ժամանակային միջակայքում (շաբաթ, ամիս) ստեղծված հավելյալ արժեքը նպաստում ռազմավարության իրագործմանը:

Ապահովել բանկի յուրաքանչյուր աշխատակցի մասնակցությունը բանկի ռազմավարության իրագործմանը

Ռազմավարական կառավարման ուղեցույցները կարող են ծառայել ուղղորդող գործիք առևտրային բանկի յուրաքանչյուր աշխատակցի համար՝ սահմանելով նրանց պատասխանատվությունների շրջանակը ռազմավարության իրականացման գործընթացում: Ռազմավարական կառավարման ուղեցույցները պետք է ներառեն բանկի բոլոր աշխատակիցներին: Ռազմավարական կառավարման ուղեցույցից որևէ աշխատակցի (կամ տվյալ աշխատակցին համապատասխան թիրախային խմբի) բացակայությունը կարող է վկայել այն մասին, որ տվյալ աշխատակցի գործառույթները չեն ստեղծում արժեք գործառնական մակարդակում:

Ապահովել հետադարձ կապը մրցակցային միջավայրի փոփոխությունների նկատմամբ

Ի տարբերություն առևտրային բանկի ներքին միջավայրում ի հայտ եկող խնդիրների, մրցակցային միջավայրի փոփոխությունները չեն կարող կառավարվել կամ վերահսկվել մեկ առևտրային բանկի կողմից: Հետևաբար, նման իրավիճակում անհրաժեշտ է այնպիսի գործիքների կիրառումը, որոնք կարող են գործառնական մակարդակում իրականացնել ռազմավարական նպատակներն այն պարագայում, երբ մրցակցային միջավայրում ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ:

Ապահովել բանկի գործառնական կառավարման անընդհատությունը

Ինչպես առևտրային բանկի, այնպես և ցանկացած այլ տեսակի առևտրային կազմակերպության արդի մարտահրավերներից մեկը բիզնեսի անընդհատության ապահովումն է: Ինտեգրելով ռազմավարական կառավարման համակարգը նախագծերի կառավարման համակարգին՝ ընկերությունը ստանում է գործառնական մակարդակում ռազմավարության իրագործման և այդ իրագործման հսկողության հնարավորություն, ինչը թույլ է տալիս խուսափել բիզնեսի խափանումներից և ապահովել նրա անընդհատությունը: Ռազմավարական կառավարման ուղեցույցը, ծառայելով որպես առևտրային բանկի ռազմավարության հաղորդակցման գործիք, ճիշտ պահին և ըստ անհրաժեշտության միջամտում է գործառնական կառավարման մակարդակում այն ժամանակ, երբ ընկերությունը բախվում է անընդհատության ապահովման խնդրին:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ, *տ.գ.թ., պրոֆեսոր*
Երևանի պետական համալսարանի կառավարման և գործարարության ամբիոն
ԼԻԼԻԹ ՎԱԶԳԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ
ՃՇՀԱՀ էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոնի հայցորդ

Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրները: Այդ համատեքստում քննարկվել են ռազմավարական կառավարման և նախագծերի կառավարման փոխազդեցությունները: Բացահայտվել է, որ ռազմավարական կառավարման՝ նախագծային մեթոդով իրականացումը հնարավորություն կտա ռազմավարական կառավարման գործընթացը դարձնել առավել տեսանելի և ապահովել ռազմավարական ծրագրի՝ որպես մեկ նախագծի իրագործումը: Միաժամանակ, նախագծային մեթոդի կիրառմամբ հնարավոր կլինի ապահովել յուրաքանչյուր աշխատակցի մասնակցությունը ռազմավարության իրագործմանը, հետադարձ կապը մրցակցային միջավայրի փոփոխություններին, ինչպես նաև գործառնական կառավարման անընդհատությունը:

Բանալի բառեր. *առևտրային բանկեր, ռազմավարություն, նախագիծ,մրցունակություն, ռազմավարական կառավարման ուղեցույց, որակի կառավարում, մեծաքանակ տվյալներ, բիզնեսի անընդհատություն:*

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ СТРАТЕГИЧЕСКИМ УПРАВЛЕНИЕМ И УПРАВЛЕНИЕМ ПРОЕКТАМИ В КОММЕРЧЕСКИХ БАНКАХ РА

АМАЛЯ САРИБЕКОВНА САРИБЕКЯН, *к.э.н., профессор*
Кафедра менеджмента и бизнеса Ереванского государственного университета
ЛИЛИТ ВАЗГЕНОВНА ПОГОСЯН
соискатель кафедры экономики права и управления Национального университета архитектуры и строительства Армении

Аннотация

В рамках данной работы рассмотрены проблемы повышения эффективности стратегического управления в коммерческих банках РА. В этом контексте обсуждены вопросы взаимодействия стратегического управления и управления проектами. Выявлено, что реализация стратегического управления проектным методом позволит процесс стратегического управления сделать максимально обозримым и обеспечить реализацию стратегической программы в качестве одного проекта.

Одновременно, применение проектного метода позволит обеспечить вовлеченность каждого работника в процесс реализации стратегии, обратную связь по отношению к изменениям конкурентной среды, а также непрерывность операционного управления.

Ключевые слова: *коммерческие банки, стратегия, проект, конкурентоспособность, руководство по стратегическому управлению, управление качеством, многочисленные данные, непрерывность бизнеса.*

INTERRELATIONSHIP BETWEEN STRATEGICMANAGEMENT AND PROJECT MANAGEMENT IN COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA

AMALYA SARIBEK SARIBEKYAN, *Ph.D. in Economics, Professor*
Chair of Management and Business, Yerevan State University
LILIT VAZGEN POGHOSYAN
Ph.D.Student, Chair of Economy, Law and Management
National University of Architecture and Construction of Armenia

Abstract

The research touches upon the problems of strategic management performance in commercial banks of the Republic of Armenia. For that reason, interrelationship between strategic management and project management is reviewed. It is concluded, that project-based implementation of strategic management will empower strategic management process to become more visible and ensure the strategy realization as a single project. Moreover, the project-based approach shall ensure the following targets, i.e. enrollment of all employees in strategy realization process, on-time feedback to competitive environment dynamics, as well as the business continuity on operational level.

Keywords: *Commercial banks, strategy, project, competitiveness, strategic management manual, quality management, big data, business continuity.*

ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայ-իրանական տնտեսական համագործակցությունն ունի բազմամյա պատմություն: Իրանի Իսլամական Հանրապետությունն (այսուհետ՝ ԻԻՀ) աշխարհում առաջին երկրներից է, որ պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ դրանով էլ հիմք դնելով երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների մեկնարկին: Անկախության տարիներից ի վեր ՀՀ տնտեսության զարգացումը տեղի է ունենում չորս հարևան երկրներից երկուսի կողմից շրջափակման պայմաններում, ուստի ՀՀ համար զգալի կարևորություն է ստանում մյուս երկու հարևանների՝ Իրանի և Վրաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունների խորացումը: Այս երկու երկրների հետ առևտրատնտեսական կայուն և դինամիկ զարգացող հարաբերությունները ՀՀ համար ունեն նաև ռազմավարական նշանակություն, քանի որ ՀՀ-ն ծովային ելք չունեցող երկիր է և ծովային ճանապարհով փոխադրումներ իրականացնելիս ստիպված է օգտվել Իրանի կամ Վրաստանի նավահանգիստներից:

Այդուհանդերձ, սակայն, ներկայումս հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները չունեն բավարար ծավալ և խորություն: Սույն հոդվածի շրջանակներում փորձենք պարզել ներդրումային ոլորտում հայ-իրանական ոչ բավարար համագործակցության պատճառները:

Նախ՝ դիտարկենք հայ-իրանական ներդրումային համագործակցության արդի վիճակը: Այս տեսանկյունից առաջին հիմնախնդիրը, որին բախվում ենք, ԻԻՀ-ում հայկական ներդրումների մասին տվյալների բացակայությունն է՝ ո՛չ ՀՀ, և ո՛չ ԻԻՀ ազգային վիճակագրական ծառայությունները չեն տրամադրում ԻԻՀ-ում հայկական ներդրումների վերաբերյալ որևէ տվյալ: Ուստի կվերլուծենք ՀՀ-ում իրանական ներդրումների վերաբերյալ առկա տվյալները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ԻԻՀ կողմից կատարված ՕՈՒՆ-երը ՀՀ-ում, հազար ԱՄՆ դոլար[1]

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2012	2014
Ընդամենը	120060.1	75859.0	140964.0	153497.9	226723.4	275253.5	407627.5	582314.1	567409.7	281804.0
ԻԻՀ	714.2	247.1	1798.6	419.8	39.2	119.7	195.3	154.7	0.5	109.6

Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ ընդհանուր ՕՈՒՆ-երը և ԻԻՀ կողմից կատարված ՕՈՒՆ-երը: Աղյուսակում ներկայացված են 2000-2007թթ., 2012թ. և 2014թ. տվյալները, քանի որ մյուս տարիներին ԻԻՀ կողմից ՀՀ-ում ՕՈՒՆ չի իրականացվել: Ինչպես երևում է աղյուսակից, ՀՀ-ում Իրանի կողմից կատարված ՕՈՒՆ-երն ունեն պատահական բնույթ և չեն դրսևորել կայուն աճի կամ նվազման միտում: Ավելին՝ ԻԻՀ կողմից կատարված ՕՈՒՆ հոսքերը դիտարկվող ժամանակահատվածում կազմել են ՀՀ ընդհանուր ՕՈՒՆ հոսքերի բավական փոքր մասը՝ դիտարկվող ժամանակահատվածում այն կազմել է ՀՀ ընդհանուր ներդրումների 0.26%-ը:

Անդրադառնանք նաև ՀՀ-ում գործող իրանական կազմակերպությունների քանակի վերլուծությանը: Աղյուսակ 2-ում ներկայացված է 2000-2015թթ. ՀՀ-ում գրանցված իրանական կապիտալով կազմակերպությունների քանակը: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում գրանցված իրանական կազմակերպությունների հիմնական կազմակերպաիրավական ձևը եղել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և փակ բաժնետիրական ընկերությունը: Ինչպես երևում է աղյուսակից, 2010թ. սկսած ՀՀ-ում նկատվում է իրանական կազմակերպությունների գործունեության զգալի ակտիվացում: Համեմատության համար նշենք, որ միայն

[1] ՀՀ ԱՎԾ, Տվյալների բազա, օտարերկրյա ներդրումներ՝ http://armstat.am/am/?nid=246

2015թ. առաջին կիսամյակում գրանցված իրանական կազմակերպությունների քանակը գերազանցում է 2000-2009թթ. յուրաքանչյուր տարում գրանցված իրանական կազմակերպությունների քանակը: Սա բավական դրական երևույթ է և վկայում է իրանցի գործարարների համար հայկական շուկայի գրավչության աճի մասին, թեպետ այդուհանդերձ, ներդրումների ծավալում աննախադեպ աճ չի գրանցվում: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ 2010թ.-ից սկսած հայկական շուկան ավելի գրավիչ դարձավ իրանական՝ փոքր ներդրումներ իրականացնող կազմակերպությունների համար:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գրանցված իրանական կազմակերպությունների քանակն ըստ տարիների, 2000-2015թթ.[1]

01.01-31.12 ժամանակահատվածում գրանցված իրանական կազմակերպությունների քանակը			
Տարեթիվ	**Քանակ**	**Տարեթիվ**	**Քանակ**
2000	61	**2008**	29
2001	50	**2009**	67
2002	41	**2010**	99
2003	53	**2011**	267
2004	29	**2012**	453
2005	57	**2013**	268
2006	29	**2014**	211
2007	38	**2015**	71[2]

Աղյուսակ 3-ում ներկայացված են ԻԻՀ կողմից ՀՀ-ում կատարված ՕՈՒՆ-երը՝ ըստ տնտեսության ոլորտների 2002-2014թթ.[3]: Համաձայն աղյուսակի տվյալների՝ ԻԻՀ համար ներդրումային գրավչություն ունեցել են հիմնականում ՀՀ գյուղատնտեսության, քիմիական արդյունաբերության, շինարարության, առևտրի և պահեստավորման ոլորտները: Ընդ որում՝ ամենաշատ ներդրումներն ԻԻՀ կողմից ուղղվել են դեպի առևտրի ոլորտ:

Աղյուսակ 3

ԻԻՀ կողմից կատարված ՕՈՒՆ-երն ըստ տնտեսության ոլորտների 2002-2014թթ., հզր. դոլար[4]

	Գյուղատնտեսություն	**Շինարարություն**	**Մեծածախ առևտուր**	**Մանրածախ առևտուր**	**Պահեստավորման, տրանսպորտային և դրանց օժանդակ գործունեություն**	**Քիմիական արդյունաբերություն**
2002-2014	414	2.2	1629.7	8	110.1	382.8

Այսպիսով, ակնհայտ է, որ մինչև 2014թ. ավարտը ՀՀ-ում ԻԻՀ ներդրումները եղել են ոչ բավարար: Այժմ փորձենք պարզել հայ-իրանական ներդրումային համագործակցության անբավարար վիճակի պատճառները:

Ներդրումային համագործակցության վրա ազդող հիմնական գործոններից են՝

1. տնտեսության աճի տեմպը,
2. բնակչության թվաքանակը՝ որպես ներքին սպառման շուկայի տարողունակության ցուցանիշ,

[1] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ արդարադատության նախարարության վիճակագրական տվյալների շտեմարանի՝ http://91.196.37.214/reg/stat/foreign_regs :

[2] 2015թ. տվյալները ներկայացված են 01.01-30.06.2015թ. համար՝ տվյալների բացակայության պատճառով:

[3] Տվյալները ներկայացված են 2002թ.-ից, քանի որ մինչ այդ ներդրումների տվյալները բացակայում են՝ ըստ երկրների՝ առանձին ոլորտներով:

[4] Հաշվարկը կատարվել է հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ ԱՎԾ վիճակագրական հետևյալ տվյալների՝ 2002-2014թթ.՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2004թ. հունվար-փետրվար (էջ 66-69), 2005թ. հունվար-փետրվար (էջ 67-69), 2007թ. հունվար-փետրվար (էջ 78-81), 2009թ. հունվար-փետրվար (էջ 73-75), 2013թ. հունվար-փետրվար (էջ 86-90), 2014թ. հունվար-փետրվար (էջ 80-84), 2015թ. հունվար-փետրվար (էջ 85-90):

3. ներդրումային միջավայրը պայմանավորող գործոններ (ներդրումների պաշտպանություն, ներդրումային օրենսդրություն, հարկային, մաքսային դրույքաչափեր, հումքային ռեսուրսների առկայություն, աշխատուժի արտադրողականություն, գրագիտություն և այլն) և այլն:

Նախ դիտարկենք 2 երկրի տնտեսական աճի տեմպերը (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

ՀՀ և ԻԻՀ տնտեսական աճը 2000-2015թթ., %[1]

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, մինչև 2009թ. ՀՀ տնտեսական աճի տեմպերը գերազանցում են ԻԻՀ տնտեսական աճի տեմպերին՝ բացառությամբ 2000թ., երբ երկու երկրներն էլ գրանցել են հավասար տնտեսական աճի ցուցանիշներ: 2009-2010թթ. իրավիճակը փոխվում է՝ կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետ, երբ 2009թ. ՀՀ-ն գրանցեց 14.1% տնտեսական անկում, իսկ 2010թ. արձանագրեց միայն 2.2% տնտեսական աճ: Ի տարբերություն ՀՀ-ի ԻԻՀ-ն անգամ ճգնաժամային տարիներին չի ունեցել տնտեսական անկում, արձանագրվել է միայն տնտեսական աճի տեմպերի դանդաղում: Սակայն 2011-2015թթ. ՀՀ-ն կրկին տնտեսական աճի ցուցանիշով առաջ անցավ ԻԻՀ-ից: Հարկ է նշել, որ 2000-2015թթ. ՀՀ տնտեսության աճի միջին ցուցանիշը կազմել է 7%, իսկ ԻԻՀ-ինը՝ 4%: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսությունն ավելի արագ աճող է և այլ հավասար պայմաններում՝ միայն այս ցուցանիշի տեսանկյունից վերլուծելիս, կարող է գրավիչ լինել առհասարակ ներդրումների, իսկ մասնավորապես՝ իրական ներդրումների համար:

Հաջորդ գործոնը, որ կարևորվում է մեր կողմից որպես ներդրումային հարաբերությունների ձևավորման հիմք՝ երկրի ներքին սպառողական ներուժը բնորոշող գործոնն է՝ բնակչության թվաքանակը: Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ և ԻԻՀ բնակչության թվաքանակը:

Գծապատկեր 2

ՀՀ և ԻԻՀ բնակչության թվաքանակը 2000-2015թթ., մլն մարդ[2]



[1] Տվյալների աղբյուրը՝ IMF World Economic Outlook, By Countries՝ http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/download.aspx

[2] Տվյալների աղբյուրը՝ IMF World Economic Outlook, By Countries՝ http://www.imf.org/external/pubs/ft/weo/2015/02/weodata/download.aspx

Ինչպես տեսնում ենք ՀՀ և ԻԻՀ սպառողական շուկանները համեմատության եզրեր չունեն՝ ՀՀ բնակչությունը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է մոտ 3 մլն, մինչդեռ ԻԻՀ բնակչությունը 63.9 մլն-ից դիտարկվող ժամանակահատվածում մշտապես աճելով հասել է 78.6 մլն-ի: Այսպիսով, ներքին սպառման շուկայի տարողունակության տեսանկյունից ՀՀ-ն չի կարող համարվել գրավիչ երկիր ներդրումներ իրականացնելու համար: Սակայն սա չի նշանակում, որ խնդիրն անլուծելի է: Փոքր բնակչություն ունեցող երկրներն այս խնդիրը կարող են լուծել որևէ ինտեգրացիոն միավորման անդամակցությամբ՝ այդպիսով հնարավորություն տալով այն երկրների օտարերկրյա ներդրողներին, որոնք տվյալ ինտեգրացիոն միավորման անդամ չեն հանդիսանում, արտոնյալ պայմաններով մուտք գործել այդ ինտեգրացիոն միավորման շուկա:

Այսպիսով՝ այս խնդիրն արդիական էր ՀՀ-ում մինչև 2015թ.: 2015թ. հետո ՀՀ-ն, անդամակցելով Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ), իր ներդրողների համար արտոնյալ պայմաններով մուտք ապահովեց դեպի ԵԱՏՄ բազմամիլիոնանոց շուկա: Բացի այդ 2015թ. տնտեսական փոփոխությունների սկիզբ հանդիսացավ նաև ԻԻՀ-ի համար՝ աստիճանաբար վերացվեցին ԻԻՀ նկատմամբ կիրառվող միջազգային պատժամիջոցները: Փաստորեն, կարելի է 2015թ. համարել բեկումնային տարի հայ-իրանական ներդրումային համագործակցության տեսանկյունից:

Ամփոփելով այս գործոնի ազդեցության վերլուծությունը հայ-իրանական ներդրումային համագործակցության վրա՝ պետք է նշենք, որ այսուհետ ՀՀ-ում և ԻԻՀ-ում իրականացվող ներդրումները կարող են գտնել մեծ սպառման շուկա. ԻԻՀ-ում ներդրումներ կատարելիս որպես այդպիսիք կհանդիսանան ԻԻՀ ներքին սպառման մեծ շուկան, ինչպես նաև Մերձավոր Արևելքի և իսլամական աշխարհի այլ երկրների շուկաները, որոնք ավելի հասանելի կլինեն իրանական նավահանգիստների միջոցով, իսկ ՀՀ-ում ներդրումներ կատարելիս որպես այդպիսին կհանդիսանա ԵԱՏՄ բազմամիլիոնանոց շուկան:

Անդրադառնանք ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնների վերլուծությանը: Ներդրումային օրենսդրության տեսանկյունից ինչպես ՀՀ, այնպես էլ ԻԻՀ ներդրումային օրենսդրությունը բավական գրավիչ է[1].

- երկու երկրներում էլ կատարված օտարերկրյա ներդրումները երաշխավորված են,
- առկա է ոչ խտրական մոտեցում հայրենական և օտարերկրյա ներդրողների միջև,
- օտարերկրյա կազմակերպությունները ՀՀ-ում և ԻԻՀ-ում ենթական չեն բռնագրավման՝ բացառությամբ օրենքով սահմանված արտակարգ դեպքերի, որոնց պարագայում անգամ ՕՈՒՆ ամբողջությամբ ենթական է փոխհատուցման:

Ներդրումային միջավայրի գրավչություն ապահովող տարրերից է նաև այն հանգամանքը, որ ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԻԻՀ-ն ունեն ազատ տնտեսական գոտիներ, որտեղ ներդրումներ իրականացնողները կարող են օգտվել տվյալ ԱՏԳ-ի համար նախատեսված բոլոր արտոնյալ պայմաններից: Այստեղ, սակայն, ՀՀ և ԻԻՀ օրենսդրություններում առկա են որոշակի տարբերություններ. ՀՀ-ում ԱՏԳ-ում ներդրումներ իրականացնելիս ներդրողն ազատվում է հարկերից[2], իսկ ԻԻՀ-ում ԱՏԳ-ում գործունեություն ծավալողներն ազատվում են հարկերից միայն մինչև 15 տարի ժամանակահատվածով[3]:

ԱՏԳ-ից դուրս գործունեություն ծավալելիս ևս երկու երկրների օրենսդրություններում առկա են որոշակի տարբերություններ հարկադրույքների մասով. ԻԻՀ-ում շահութահարկը կազմում է 15-35%՝ կախված շահույթի չափից[4], իսկ ՀՀ-ում՝ 20%՝ անկախ շահույթի չափից[5]:

Ներդրումային գրավչության աճի գործոններից է նաև ներդրումների ապահովագրումը ռազմական, քաղաքական բնույթի ռիսկերից: Ներկայումս ՀՀ-ն և ԻԻՀ-ն հանդիսանում են Համաշխարհային բանկի խմբի Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության անդամ[6],

---

[1] Աղբյուրը՝ 2002թ. ԻԻՀ Օտարերկրյա ներդրումների խթանման և պաշտպանության օրենք (FIPPA) և 1994թ. ՀՀ օրենքը օտարերկրյա ներդրումների մասին:

[2] http://mineconomy.am/eng/505/free.html

[3] http://irexpo.net/document/doing_business_in_iran.pdf

[4] https://web.archive.org/web/20120504043306/http://www.taxarticles.info:80/2009/06/iran-tax-system-at-a-glance/

[5] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1839&lang=eng#1.5

[6] https://www.miga.org/who-we-are/member-countries/

որը վստահություն է առաջացնում օտարերկրյա ներդրողների մոտ ոչ տնտեսական ռիսկերից ներդրումների ապահովագրության տեսանկյունից:

Անդրադառնալով ներդրումային գրավչության տարր հանդիսացող ռեսուրսային ներուժին՝ պետք է նշել, որ ՀՀ-ն և ԻԻՀ-ն ունեն համեմատաբար էժան աշխատուժ, որի արտադրողականությունը, սակայն, տարբեր է երկու երկրներում՝ ՀՀ-ում՝ 31.009 դոլար է, իսկ ԻԻՀ-ում՝ 19.738 դոլար[1]: Որպես արտադրողականության նախադրյալ՝ կարելի է դիտարկել նաև չափահասների գրագիտության աստիճանը՝ ՀՀ-ում 100% (2011թ.), իսկ ԻԻՀ-ում՝ 84% (2012թ.)[2]:

Հումքային ռեսուրսների տեսանկյունից, սակայն, պատկերը հակառակն է. ԻԻՀ-ն հարուստ է բնական ռեսուրսներով, հատկապես՝ էներգակիրներով, իսկ ՀՀ-ն՝ ոչ: ՀՀ-ում հումքային բազան բնորոշվում է առավելապես մետաղական հանքաքարերի առկայությամբ՝ պղինձ, մոլիբդեն և այլն:

Ի վերջո՝ ներդրումային գրավչության վրա զգալի ազդեցություն է թողնում նաև վարչական գործոնը: Այս տեսանկյունից կարևորում ենք բիզնեսի գրանցման դյուրինությունը և բիզնեսի գործունեության արդյունքում շահույթի հայրենադարձման, ինչպես նաև դրա փակման պարագայում ներդրումների ետ վերադարձի հետ կապված հարցերը: Բիզնեսի գրանցման համար անհրաժեշտ ժամանակահատվածը ՀՀ-ում ներկայումս 3 օր է, իսկ ԻԻՀ-ում՝ 15[3]: Շահույթի հայրենադարձման կամ բիզնեսի փակման պարագայում կանխիկ եղանակով երկրից դուրս բերվող գումարի սահմանափակումը ՀՀ-ում կազմում է 10000 դոլար[4], իսկ ԻԻՀ-ում՝ 5000 դոլար[5]:

Այսպիսով, ստացվում է, որ ներդրումային միջավայրը պայմանավորող գործոններից որոշները վկայում են ՀՀ-ում, իսկ որոշները՝ ԻԻՀ-ում ՕՈՒՆ կատարելու շահավետության մասին: Ուստի թե՛ հայ գործարարները ԻԻՀ-ում, թե՛ իրանցի գործարարները ՀՀ-ում ներդրումներ իրականացնելիս պետք է հաշվի առնեն բոլոր այս հնարավոր տարբերությունները՝ ներդրվող գումարի իրական շահավետությունը հաշվարկելու համար:

Թերևս սրանք այն պայմաններն են, որոնք այս կամ այն չափով խթանում կամ խոչընդոտում են հայ-իրանական փոխադարձ ներդրումների իրականացմանը:

Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ իրանցի գործարարների կողմից ՀՀ-ում ներդրումներ կատարելու համար զգալի խոչընդոտ կարող էր հանդիսանալ ՀՀ սպառման շուկայի փոքր ներուժը, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, մինչ օրս ՀՀ-ում իրանական ներդրումների համեմատաբար փոքր ծավալի պատճառ է հանդիսացել: Այս հիմնախնդիրն այսօր արդեն լուծված կարելի է համարել ՀՀ-ի ԵԱՏՄ անդամակցությամբ: Այսպիսով, 2015թ. կարող է նոր էջ բացել հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարի համար, որի զարգացումն այժմ արդեն հնարավոր կլինի իրականացնել նախկինի համեմատ բավական մեծ տեմպերով:

[1] http://data.worldbank.org/indicator/SL.GDP.PCAP.EM.KD
[2] http://data.worldbank.org/indicator/SE.ADT.LITR.ZS
[3] http://data.worldbank.org/indicator/IC.REG.DURS
[4] http://www.iatatravelcentre.com/AM-Armenia-customs-currency-airport-tax-regulations-details.htm
[5] http://www.iatatravelcentre.com/IR-Iran-customs-currency-airport-tax-regulations-details.htm

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԼԻԼԻԹ ՆՈՐԱՅՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ.,*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Անկախության առաջին օրերից ի վեր Հայաստանի և Իրանի միջև ձևավորվեցին բարիդրացիական հարաբերություններ: 2015թ. հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ: Հոդվածում վերլուծվել են հայ-իրանական ներդրումների դինամիկան ու կառուցվածքը, ինչպես նաև՝ ներդրումային գրավչության վրա ազդող գործոնները Հայաստանում և Իրանում: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և ԻԻՀ ազգային վիճակագրական ծառայությունների, Համաշխարհային բանկի և այլ պաշտոնական աղբյուրների վիճակագրական տվյալները:

Բանալի բառեր. *ՕՈՒՆ, ներդրումային գրավչություն, ներդրումային միջավայր, տնտեսական աճ, շուկայի տարողունակություն:*

ОСНОВЫ АРМЯНО-ИРАНСКОГО ВЗАИМНОГО ИНВЕСТИЦИОННОГО СОТРУДНИЧЕСТВА

ЛИЛИТ НОРАЙРОВНА САРГСЯН, *к.э.н.,*
научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

С первых дней независимости Армении были установлены дружественные отношения между Арменией и Ираном. В 2015г. армяно-иранские торгово-экономические отношения вступили в новую фазу. В статье анализируется динамика и структура армяно-иранских инвестиций, а также факторы, влияющие на инвестиционную привлекательность Армении и Ирана. Информационной базой для статьи послужили статистические данные Национальных статистических служб Исламской республики Иран (ИРИ) и РА, Всемирного банка и других официальных источников.

Ключевые слова: *ПИИ, инвестиционная привлекательность, инвестиционная среда, экономический рост, емкость рынка.*

THE FOUNDATION FOR MUTUAL ARMENIAN-IRANIAN INVESTMENT COOPERATION

LILIT NORAYR SARGSYAN, *Ph.D. in Economics*

Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Since the independence of Armenia from the Soviet Union, friendly relations have been established between Armenia and Iran. In 2015, Armenian-Iranian trade and economic relations reported a new level of cooperation. The article analyzes the trend pattern of Armenian-Iranian investments, its structure, and the factors that affect investment of Armenia and Iran. The author relied on various statistical publications released by national statistical services of Armenia and Iran, the World Bank and other international organizations to provide the respective analysis in the article.

Keywords: *FDI, investment attractiveness, investment environment, economic growth, market capacity.*

ՌԱԴԻԿ ԱՐՏՅՈՄԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործարքային ծախսերի գաղափարը տնտեսագիտության տեսության մեջ առաջ քաշվեց տնտեսագիտության դասական դպրոցի այն գաղափարի փլուզման արդյունքում, ըստ որի՝ շուկայում փոխանակումը տեղի է ունենում առանց որևէ ծախսերի[1]: Իրականում, գործարքային ծախսերին այս կամ այն կերպ առնչվում են ինչպես տնտեսվարողները, այնպես էլ պետությունը և տնային տնտեսությունները: Գործարքային ծախսերն իրենց մեջ ներառում են ցանկացած տեսակի ռեսուրսների անհրաժեշտ ծախսեր, որոնք չեն ուղղված անմիջապես ապրանքների և ծառայությունների արտադրությանը, սակայն, միևնույն ժամանակ, ապահովում են այդ գործընթացի վերջնական հաջող իրականացումը: Վերջին ժամանակահատվածում գործարքային ծախսերի նկատմամբ հետաքրքրությունը աճել է, ինչը պայմանավորված է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների տնտեսության մեջ վերջիններիս բարձր մակարդակով:

Գործարքային ծախսերի ճշգրիտ գնահատումն ու դրանց նվազեցումը կարևոր քայլ կհանդիսանա հայաստանյան տնտեսության համար, ինչը թույլ կտա տնտեսվարողներին իրենց արտադրանքը շուկայում ավելի մրցունակ դարձնել, իսկ սպառողներին՝ խնայել ֆինանսական միջոցներ:

Գործարքային ծախսերի տեսության առավել դժվար լուծելի խնդիրը, թերևս, վերջիններիս քանակական գնահատումն է: Հարկ է նշել, որ չնայած գործարքային ծախսերի ընդհանուր տեսության բավական մշակվածությանը, վերջիններիս գնահատման մոտեցումները մինչ օրս բավական վիճելի են: Դեռևս մինչ այժմ գոյություն չունի միասնական մեթոդ, որը հնարավորություն կտա գնահատել ինչպես տնտեսության, այնպես էլ առանձին կազմակերպություններում առկա գործարքային ծախսերը՝ առանց լայնամասշտաբ հատուկ հետազոտությունների անցկացման: Այդպիսի մեթոդի մշակումը, բնականաբար, կարևոր գիտական հիմնախնդիր է, որը, մասնավորապես, թույլ կտա որոշել գործարքային ծախսերի առանձնահատկությունները տարբեր տիպի կազմակերպություններում և գնահատել վերջիններիս կապը տնտեսական տարբեր գործոնների հետ:

Հարկ է նշել, որ գործարքային ծախսերի գոյության ընդունման և վերջիններիս գնահատման ընդդիմախոսների կարծիքով՝ գործարքային ծախսերը օժտված չեն բավարար որոշակիությամբ և, հետևաբար, չեն կարող չափվել տնտեսական գործունեություն իրականացնող այս կամ այն սուբյեկտի մոտ: Ըստ վերջիններիս, գործարքային ծախսերի մեծությունը բնութագրվում է անորոշության բարձր աստիճանով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործարքն իրենից ներկայացնում է ստեղծագործական յուրօրինակ մի գործընթաց, որի բոլոր հիմնական տարրերը նախօրոք հստակորեն հայտնի չեն: Մասնավորապես, նախօրոք հայտնի չեն կարող լինել այն ռեսուրսների ճշգրիտ արժեքները, որոնք անհրաժեշտ են գործարքի իրականացման համար: Սակայն, այս ոլորտում գլխավոր խնդիրը կայանում է նրանում, որ տվյալ դեպքում բացակայում է ընդհանուր գործարքային ծախսերը սոցիալական փոխազդեցության մասնակիցների միջև բաշխելու հստակ գործող մեխանիզմ: Շուկայական փոխազդեցության մասնակիցների միջև գործարքային ծախսերի բաշխման խնդրի բարդությունը կայանում է, նախ և առաջ, նրանում, որ անհատները միևնույն ռեսուրսների նկատմամբ ունեն տարբեր նախապատվություններ:

Հակառակ նշված կարծիքին՝ գործարքային ծախսերի տեսության կողմնակիցները կարծում են, որ այդ ծախսերի ներառումը տնտեսական վերլուծության մեջ թույլ կտա լիովին բացատրել բոլոր երևույթները՝ գործարքային ծախսերի նվազեցման հաշվին ապահովվող արդյունավետության տեսանկյունից: Որպես նշվածի ապացույց, գործարքային ծախսերի տեսության գաղափարախոսների կողմից մշակվեցին մի շարք մեթոդներ, որոնք թույլ են տալիս տեղափոխել գործար-

[1] Капелюшников Р. Категория трансакционных издержек. Как это делается: финансовые, социальные и информационные технологии. - М.: Институт коммерческой инженерии. - 1994. - № 3. - С. 32.

քային ծախսերը երևակայական աշխարհից դեպի իրական աշխարհ ու տալ դրանց համապատասխան քանակական գնահատականը:

Հետազոտողներից մեկի՝ Գ.Սայմոնի կարծիքով՝ գործարքային ծախսերի գնահատման խնդիրը տարբեր կոնտրակտացիայի (պայմանագրերի կնքման) դեպքում կարող է լուծվել՝ վերջիններիս համադրման միջոցով: Ըստ նրա՝կառավարչական գործընթացի առանձին կառուցվածքային այլընտրանքների համեմատությունը շատ հաճախ կարող է իրականացվել առանց բարդ մաթեմատիկական գործիքակազմի կիրառման և սահմանային մեծությունների հաշվարկման: Այլ կերպ ասած, որպեսզի ցույց տրվի երկու մեծությունների չհամընկնելու փաստը, չեն պահանջվում այնպիսի բարդ մեթոդներ, ինչը կպահանջվեր այդ մեծությունների սահմանային արժեքների հավասարությունն ապահովող պայմանների հայտնաբերման դեպքում:

Նշենք, որ որոշ տնտեսագետների կողմից առաջարկվում է մասնավորեցնել գործարքային ծախսերը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար, մասնավորապես, մի դեպքում դրանք կլինեն շուկա ներթափանցելու ծախսերը (ընկերության գրանցում, լիցենզիայի կամ արտոնագրի ստացում և այլն), երկրորդ դեպքում՝ սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված ծախսերը, երրորդում՝ պայմանագրերի կնքման և իրավունքների պաշտպանության ծախսերը, չորրորդ՝ ֆիրմայի ներսում որոշումների ընդունման հետ կապված ծախսերը և այլն: Եթե տարր առ տարր տարանջատվեն նշված ծախսերի շատ բաղադրիչներ, ապա գործարքային ծախսերը կարող են առավել քան չափելի դառնալ: Ավելին, միջին բիզնեսի ներկայացուցիչները բավական լայնորեն կիրառում են գործարքային ծախսերի խնայողության գործոնը՝ ցուցադրելով դրանց կառավարման արդյունավետությունը: Ինչ վերաբերում է խոշոր ընկերություններին, ապա վերջիններս իրենց հերթին ստիպված են լինում գործարքային ծախսերի գործող մակարդակի պահպանման դեպքում կրել հսկայական ծախսեր:

Ընդհանուր առմամբ, տնտեսագիտության մեջ գոյություն ունեն գործարքային ծախսերի գնահատման երկու մոտեցումներ. օրդինալիստական և կարդինալիստական: Օրդինալիստական մոտեցմանը համապատասխան՝ գործարքային ծախսերի հայեցակարգի կիրառության համար նշանակություն ունի միայն դրանց մակարդակի փոփոխման ուղղությունը: Քանի որ գործարքային ծախսերի գլխավոր դերը հանդիսանում է տարբեր սոցիալ–տնտեսական ինստիտուտների արդյունավետության սահմանումը, ապա առկա այլընտրանքների համեմատման ժամանակ բավարար է համարվում դրանց հարաբերական մեծության սահմանումը գործող ինստիտուցիոնալ համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև գործարքային ծախսերի արգելվող մակարդակի սահմանումը՝ հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի բարեփոխումների ուղին ընտրելիս: Օրդինալիստական մոտեցման կողմնակիցները բացատրում են տնտեսության մեջ կամ դրա առանձին ճյուղում գործարքների կառուցվածքի փոփոխությունները՝ ներֆիրմային ծախսերը շուկայականի վերածվելու փաստերով և ընդհակառակը, իսկ հիբրիդային ինստիտուցիոնալ համաձայնագրերի ի հայտ գալը՝ գործարքային ծախսերի հարաբերական փոփոխություններով: Նշենք, որ օրդինալիստական մոտեցումը ժամանակակից տնտեսագիտության մեջ համարվում է գերակշռող, և հետազոտողների մեծ մասը նոր ինստիտուցիոնալ տեսության շրջանակներում կիրառում են հենց այս մոտեցումը: Սա, թերևս, պայմանավորված է, առաջին հերթին, այն հանգամանքով, որ գործարքային ծախսերի միանշանակ հստակ մեկնաբանություն գոյություն չունի ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ, ինչն, իր հերթին, արդյունք է գործարքային ծախսերի հասկացության լղոզվածության և ոչ միանշանակության:

Ի տարբերություն օրդինալիստական մոտեցման, գործարքային ծախսերի կարդինալիստական մոտեցումը ենթադրում է գործարքային ծախսերի անմիջական գնահատման հնարավորությունը: Այս մոտեցման կիրառմամբ տարբեր հետազոտողների կողմից իրականացվել են գործարքային ծախսերի գնահատման բազմաթիվ փորձեր, ինչը թույլ է տվել ստանալ այնպիսի քանակական տվյալներ, որոնք ցույց են տալիս գործարքային ծախսերի քանակական գնահատականը կամ դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, դրա կոնկրետ գումարը կամ մասնաբաժինը գործարքի գնի մեջ: Նշենք, որ գնահատումներն իրականացվել են ինչպես առանձին վերցված շուկայի համար, այնպես էլ ամբողջ տնտեսության մակարդակով: Գործարքային ծախսերի գնահատում իրականացվել է Հ. Դեմսեցի կողմից միկրոմակարդակում և Դ.Նորտի ու Ջ.Ուոլլիսի կողմից՝ մակրոմակարդակում:

Ամերիկացի հետազոտող Հ.Դեմսեցի կողմից 1968 թվականին իրականացվեց միկրոմակարդակում կամ առանձին վերցված շուկայում գործարքային ծախսերի չափման փորձ, ինչն արտացոլվեց վերջինիս նույն թվականին լույս տեսած «Գործարքի ծախսեր» հոդվածում[1]: Որպես հետազոտության օբյեկտ Դեմսեցն ընտրել էր Նյու Յորքի ֆոնդային բորսան:

Ինչ վերաբերում է ամբողջ տնտեսության մակարդակով գործարքային ծախսերի գնահատմանն, ապա այդ ուղղությամբ միակ հետազոտությունն իրականացվել է Ջ.Ուոլլիսի և Դ.Նորտի կողմից՝ ԱՄՆ-ի տնտեսության օրինակով[2]: Այդ հետազոտության արդյունքներն արտացոլվեցին նշված հեղինակների մինչ այժմ եզակի համարվող «Ամերիկյան տնտեսության գործարքային հատվածի գնահատումը՝ 1870-1970թթ.»[3] աշխատությունում: Նշված հետազոտողներն առաջարկեցին գնահատել գործարքային ծախսերը՝ չորս տիպի տնտեսական հարաբերությունների և դրանց հետ կապված համապատասխան գործունեության տեսակների վերլուծության միջոցով.

1. առանձին գնորդների և վաճառողների միջև հարաբերություններ,
2. ներֆիրմային հարաբերություններ,
3. տարբեր տեսակների միջնորդ ֆիրմաների կողմից ծառայությունների մատուցում,
4. սեփականության իրավունքի պաշտպանության հետ կապված հարաբերություններ:

Դիտարկենք վերը նշված հարաբերություններն առավել մանրամասնորեն:

Առանձին գնորդների և վաճառողների գործարքների ծախսեր: Դիտարկենք այն գործարքային ծախսերը, որոնք առաջ են գալիս, օրինակ, որևէ ապրանքի կամ ծառայության գնման և վաճառքի ընթացքում: Նախ և առաջ, պարզաբանենք, թե գնորդի պարագայում գործարքային ծախսերն ինչից են բաղկացած: Դրանք կարող են ներառել.

- շուկայում առաջարկվող ապրանքի կամ ծառայության համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար կատարվող ծախսերը,
- ապրանքի կամ ծառայության ընտրության ժամանակ կատարվող ծախսերը, այդ թվում՝ ծախսված ժամանակը,
- առք ու վաճառքի ձևակերպման ծախսերը:

Սակայն, հարկ է նշել, որ տվյալ դեպքում առկա են խնդիրներ՝կապված երկրորդական ծախսերի ի հայտ գալու հետ, օրինակ, գնորդը վարձում է իրավաբանի, որն էլ, իր հերթին, օգտվում է պահակի, քարտուղարի և օգնականի ծառայություններից: Ահա այս է պատճառը, որ որոշակի ծախսերի՝ որպես գործարքային դասակարգելը բավական հարաբերական է: Տվյալ դեպքում իրավաբանի ծառայության համար կատարվող ծախսերը կարող են հանդիսանալ ապրանքի գնման հետ կապված գործարքային ծախսեր:

Վաճառքի դեպքում գործարքային են համարվում այն ծախսերը, որոնք չէին առաջանա, եթե պայմանականորեն վաճառողն այն վաճառեր ինքն իրեն: Մասնավորապես, ապրանքի վաճառքի գործարքային ծախսերը ներառում են գովազդի ծախսերը, գնորդին՝ ապրանքի հուսալիությունն ապացուցելու համար կատարվող ծախսերը (համբավի ապահովման ծախսեր), հնարավոր գնորդներին ապրանքի հնարավորությունների ցուցադրման համար ծախսված ժամանակն ու միջոցները, ինչպես նաև գործարքի ձևակերպման ծախսերը:

Ապրանքի կամ ծառայության գնման գործարքի վերլուծության ընթացքում երբեմն կարող են բախվել մի իրավիճակի, երբ գործարքային ծախսերը բաժանվում են վերջիններիս քանակական գնահատման հնարավորությունների տեսակետից: Այս առումով, հարաբերականորեն ավելի հեշտությամբ են գնահատվում գործարքի անմիջական ձևակերպման, տեղեկատվության ձեռքբերման և գովազդի հետ կապված ծախսերը: Ինչ վերաբերում է գնորդի՝ապրանքի և ծառայության ընտրության համար կատարվող և վաճառողի կողմից՝ սեփական դրական համբավի ձևավորման համար իրականացված համապատասխան ծախսերի գնահատմանն, ապա վերջինս կարող է իրականացվել մեծ դժվարությամբ՝ այլընտրանքային ծախսերի սահմանման և համեմատությունների միջոցով:

---

[1] Demsetz H. The Cost of Transacting. – Quarterly Journal of Economics, 1968, No 1, p. 65.

[2] Капелюшников Р.И. Заметкинаполяхнеоинституциональногоподхода // Фактортрансакционныхиздержек в теории и практикероссийскихреформ: поматериаламодноименногоКруглогостола / Подред. В.Л. Тамбовцева. - М.: Экономическийфакультет, ТЕИС, 1998. с. 52-70.

[3] John J. Wallis, Douglass North Measuring the Transaction Sector in the American Economy, 1870-1970-Long-Term Factors in American Economic Growth, University of Chicago Press,1986, p. 95 – 162

Ֆիրմաների միջև գործարքային ծախսեր: Այստեղ հարկ է նշել, որ առաջին կետում նշված որոշ ընդհանրությունների հետ մեկտեղ, երբ ֆիրման հանդես է գալիս որպես շուկայի առանձին սուբյեկտ, առաջ են գալիս յուրահատուկ դեպքեր, երբ գործարքային ծախսերը դիտարկվում են ֆիրմաների միջև գործարքների իրականացմամբ պայմանավորված փոխհարաբերությունների տեսանկյունից:

Տվյալ դեպքում առաջարկվում է գործարքային ծախսերի վերլուծության երկու տարբերակ.

- Առաջին դեպքում դիտարկվում են ֆիրմայի կառավարման հիերարխիկ կառուցվածքի շրջանակում առկա պայմանագրերի ցանցը. ֆիրմայի սեփականատիրոջ և մենեջերների, մենեջերների և հսկիչների, հսկիչների և աշխատակիցների միջև: Այս դեպքում գործարքային ծախսերի կառուցվածքը փոփոխվում է կախված այն բանից, թե պայմանագրերը ինչ մակարդակով են դիտարկվում: Բարձր մակարդակում առավել նշանակալից են տեղեկատվության ստացման, մշակման և տրամադրման հետ կապված ծախսերի չափաբաժինը, իսկ ցածր մակարդակում՝ ավելի մեծ է այն ծախսերի չափաբաժինը, որոնք կապված են աշխատակիցների աշխատանքի ընդունման համար կնքված պայմանագրերի հսկողության հետ:
- Երկրորդ տարբերակն առաջարկում է ավելի պարզ սխեմա. բաժնետերերը կնքում են պայմանագրեր անմիջականորեն արտադրողների հետ, այսինքն, նրանց հետ, ովքեր իրենք են մասնակցում ռեսուրսներն ապրանքի վերածելու գործընթացին: Այդ դեպքում կառավարման հիերարխիկ համակարգում միջանկյալ պաշտոններ (արհեստավորներ, ծառայողներ, հսկիչներ, մենեջերներ և այլն) զբաղեցնող անձանց պահելու բոլոր ծախսերը կազմում են արտադրության ծախսերի այն հատվածը, որոնք կհամարվեն գործարքային ծախսեր և չեն կարող փոխանցվել անմիջականորեն արտադրողներին, ինչն էլ հենց հանդիսանում է այդ ծախսերի էական առանձնահատկությունը:

Տարբեր տեսակների միջնորդ ֆիրմաների կողմից ծառայությունների մատուցում: Գոյություն ունեն ֆիրմաների հատուկ տեսակներ, որոնց գործունեությունը հիմնականում կապված է գործարքային ծառայությունների մատուցման հետ: Այսպիսով, եթե դրանց գործունեության շրջանակներում իրականացվում են ռեսուրսների ձևափոխման ծառայություններ, ապա տնտեսության մակարդակով դրանք համարվում են գործարքային ծախսերի մաս: Գործունեության այս ոլորտին են դասվում տարբեր տեսակի միջնորդային ծառայությունները: Ընդ որում, կարելի է նաև առանձնացնել այնպիսի ճյուղեր, որոնց մեջ խմբավորված կլինեն այն ֆիրմաները, որոնք մատուցում են մաքուր գործարքային ծառայություններ կամ որտեղ գործարքային ծառայությունները գերակշռում են: Գործարքային ճյուղերը ներառում են գործարքների հետևյալ խմբերը .

- **Ֆինանսներ և անշարժ գույքի հետ կապված գործարքներ:** Այս մասով ֆիրմաների հիմնական գործառույթը՝սեփականության իրավունքի փոխանցման ապահովումն է, ներառյալ այլընտրանքի որոնումը, գործարքի նախապատրաստումն ու իրականացումը:
- **Բանկային գործ և ապահովագրություն:** Այս ոլորտում գործող ֆիրմաների հիմնական գործառույթն է՝ այն փոխանակումների իրականացման միջնորդությունը, որոնք կախված են հատուկ պայմաններից և պահանջներից, ինչպես նաև այն ծախսերի կրճատումը, որոնք կապված են համապատասխան ռեսուրսների նկատմամբ սեփականության իրավունքի իրագործման անվտանգության հետ: Մասնավորապես, գործարքի իրականացման ընթացքում ապահովագրության առավել կարևոր տեսակներից է սեփականության իրավունքի ապահովագրությունն, ինչպես օրինակ, անշարժ գույքի սեփականության դեպքում:
- **Իրավաբանական ծառայություններ:** Այս ոլորտում համապատասխան կազմակերպությունների հիմնական գործառույթն է՝ համակարգել, ուղղորդել և վերահսկել պայմանագրերի իրականացումը և տալ իրավական խորհրդատվություն:
- **Մեծածախ և մանրածախ առևտուր**: Հարկ է նշել, որ հատկապես բարդանում է խնդիրն այն դեպքում, երբ այս ոլորտները ներառում են ինչպես գործարքային, այնպես էլ տրանսֆորմացիոն ծառայություններ: Սակայն, այս խնդիրը դուրս է մեր քննարկման առարկայից, ուստի հետևելով Դ.Նորտի և Ջ. Ուոլիսի տեսակետին՝ մեծածախ և մանրածախ առևտրի ծառայությունները կվերագրենք գործարքային ոլորտին:

Չնայած այն հանգամանքին, որ Դ.Նորտի և Ջ. Ուոլլիսի հետազոտությունը համարվում է տնտեսագիտական տեսության համար մեծ ներդրում, այնուամենայնիվ, այդ աշխատանքը առաջ բերեց նաև բազմաթիվ վեճեր: Որոշ գիտնականների կարծիքով՝ գործարքային ծախսերը

չափազանց բարդ է որոշարկել, իսկ գնահատելն՝ էլ ավելի բարդ: Բացի այդ, որոշ գործարքային ծախսեր ընդհանրապես չեն ենթարկվում քանակական գնահատման:

Հիմնվելով գործարքային ծախսերի քանակական գնահատման վերը ներկայացված մեթոդի վրա, Դ.Նորտը և Ջ.Ուոլլիսն իրականացրել են վերջիններիս մակարդակի չափում ԱՄՆ-ի տնտեսության մասնավոր և հասարակական հատվածներում 1870-1970թթ. ժամանակահատվածում: Ըստ այդ հետազոտության՝գործարքային ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ դիտարկված տարիներին ունեցել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 1

ԱՄՆ-ի տնտեսության մասնավոր տրանսակցիոն հատվածը՝ ՀՆԱ-ի նկատմամբ %–ով՝ 1870-1970թթ.[1]

Տարի	1870	1880	1890	1900	1910	1920	1930	1940	1950	1960	1970
ՀՆԱ %	22,2	25,3	29,1	30,4	31,5	35,1	38,3	37,1	40,1	41,3	40,8

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, նշված մեթոդով գործարքային ծախսերի քանակական գնահատումը ցույց է տալիս մասնավոր տրանսակցիոն սեկտորի բուռն զարգացման մասին. 100 տարվա ընթացքում դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ–ում աճել է ավելի քան 18 տոկոսով: Ընդ որում, տրանսակցիոն հատվածի հարաբերական ընդլայնումը բավական կայուն բնույթ է կրել՝բացառությամբ վերջին տասնամյակներին՝1950-1970թթ ժամանակահատվածում, երբ արդեն նկատվում է կայունացում:

Հաշվարկելու համար տնտեսության պետական գործարքային հատվածի տեսակարար կշիռը՝ Նորտը և Ուոլլիսն առաջարկեցին երկու տարբերակներ, որոնց համապատասխան կարելի է ստանալ տնտեսության մեջ նշված հատվածի տեսակարար կշռի առավելագույն և նվազագույն սահմանային մեծությունները:

Աղյուսակ 2

ԱՄՆ-ի պետական տրանսակցիոն հատվածը, ՀՆԱ–ի նկատմամբ, %–ով՝ 1870-1970թթ.[2]

Տարիներ	Առաջին տարբերակ	Փոփոխություններն ըստ 1-ին տարբերակի,%-ով	Երկրորդ տարբերակ	Փոփոխություններն ըստ 2-րդ տարբերակի,%-ով
1870	26,09		24,19	
1880	28,87	+2,78	26,97	+2,78
1890	32,72	+3,85	30,82	+3,85
1900	34,10	+1,38	32,14	+1,32
1910	35,17	+1,07	33,44	+1,3
1920	39,98	+4,81	37,17	+3,73
1930	46,35	+6,37	40,81	+3,64
1940	43,69	–2,66	41,92	+1,11
1950	51,25	+7,56	44,63	+2,71
1960	55,35	+4,1	45,36	+0,73
1970	54,71	–0,64	46,66	+1,3

Ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ԱՄՆ-ի տնտեսության մեջ տրանսակցիոն հատվածը հարյուրամյակի ընթացքում զգալիորեն աճել է, ինչպես մի տարբերակի դեպքում, երբ պետության կողմից մատուցվող ծառայությունների մի մասը տրանսակցիոն բնույթի են, այնպես էլ այն տարբերակի դեպքում, երբ պետության կողմից մատուցվող բոլոր ծառայությունները ոչ տրանսակցիոն բնույթի են: Առաջին դեպքում տրանսակցիոն հատվածի աճը հարյուրամյակի ընթացքում կազմել է 28 տոկոս, իսկ երկրորդ դեպքում՝ 22 տոկոս: Բնականաբար, հարց է առաջանում, թե ինչո՞վ է պայմանավորված տրանսակացիոն հատվածի

[1] Шаститко А.Е. Неоинституциональнаяэкономическаятеория. - М.: ТЕИС. – 1999. - с. 424.

[2] Նույն տեղում.

նմանօրինակ ընդլայնումը: Վերջինիս պատճառները վերլուծելով՝ առանձնացվում են 3 հիմնական գործոններ.

1. Տնտեսության մեջ զգալիորեն աճել են պայմանագրերի մասնակիացման և պաշտպանության ծախսերի դերն ու նշանակությունը, քանի որ շուկաների զարգացման և աշխատանքի մասնագիտացման արդյունքում փոխանակումը սկսել է ավելի շատ կրել անդեմ ու անանձնային բնույթ, ինչն առաջացնում է իրավունքի ոլորտի մասնագետների նկատմամբ լայն պահանջարկ: Իսկ փոխանակման այդ ձևի աճը կանխորոշող ամենակարևոր գործոնը հանդիսացավ ենթակառուցվածքների զարգացումը, մասնավորապես, տրանսպորտի և կապի ոլորտներում, ինչը զգալիորեն մեծացրեց փոխանակման հնարավոր այլընտրանքների շրջանակը, որն էլ համապատասխանաբար հանգեցրեց տեղեկատվության ստացման և մշակման ընդհանուր ծախսերի աճի:

2. Երկրորդ կարևոր առանձնահատկությունը հանդիսացան տեխնոլոգիական փոփոխությունները:Կապիտալատար տեխնոլոգիաները կարող են շահութաբեր կերպով կիրառվել այն դեպքում, երբ հնարավոր է լինում ապահովել արտադրանքի թողարկման կայուն բարձր մակարդակ՝ իրականացնելով խնայողություն մասշտաբի էֆեկտի հաշվին: Սակայն, այդ նպատակով, առաջին հերթին, անհրաժեշտ է ռեսուրսների անխափան մատակարարման ապահովում, երկրորդ՝ կազմակերպության ներսում մարդկանց գործունեության կոորդինացում և արդյունավետ վերահսկողական համակարգի ներդրում, և, երրորդ՝ պաշարների կառավարման և պատրաստի արտադրանքի իրացման հստակ գործող համակարգի ձևավորում: Այս գործոնները հնարավոր և անհրաժեշտ դարձրեցին խոշոր տնտեսական կազմակերպությունների ստեղծումը՝ ներկազմակերպական մասնագիտացման, աշխատանքի բաժանման և վերարտադրությունն ապահովող գործարքների բարդ համակարգով: Դրա հետ մեկտեղ, վերը թվարկված երեք բաղադրիչները համապատասխանում են տնտեսության տրանսֆորմացիոն հատվածում ներֆիրմային գործարքային գործառույթների երեք տիպերին, որոնք առանձնացվել էին Դ.Նորտի և Ջ.Ուոլլիսի կողմից: Այսպիսով, արտադրության մասշտաբից խնայողությունն այլ հավասար պայմաններում ուղեկցվում է գործարքային ծախսերի աճով:

3. Սեփականության իրավունքների վերաբաշխման համար քաղաքական համակարգի օգտագործման ծախսերի կրճատումը: Այդ նվազեցումը Նորտի և Ուոլլիսի տեսանկյունից պայմանավորված էր գործարքների կանոնակարգման օրենսդրական համակարգի փոփոխմամբ. հիմնական որոշումներն անհրաժեշտ էր իրականացնել օրենսդրական մարմինների միջոցով, ինչն էապես հեշտացնում էր տնտեսական շահեր արտահայտող տարբեր խմբերի համար շահավետ որոշումների ընդունման նպատակով որոշակի ճնշումների գործադրումը:

Հարկ է նշել, որ գործարքային ծախսերի բարդացումն աճում է նաև սոցիալ-տնտեսական համակարգի զարգացմանը զուգահեռ՝ պարզ ապրանքային արտադրությունից մինչև ժամանակակից տնտեսություն, որում ցանկացած տնտեսական կազմակերպության զարգացում, լինի դա բանկ, առևտրային ֆիրմա կամ խոշոր արտադրական կորպորացիա, տեղի է ունենում տեղեկատվական անհամաչափության և սահմանափակ ռացիոնալության, ինչպես նաև օպորտունիստական վարքագծի և ակտիվների յուրահատկությունների հետ կապված սահմանափակող պայմանների ազդեցության ներքո:

Ամփոփելով հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ գործարքային ծախսերի տեսության մեջ առկա են բազմաթիվ հետազոտություններ, այնուամենայնիվ, չափազանց հազվադեպ են իրականացվել գործարքային ծախսերի կոնկրետ քանակական գնահատումներ: Սա հիմնականում բացատրվում է մեթոդաբանական և վիճակագրական մակարդակներում առաջ եկող դժվարություններով, որոնք կապված են տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող բոլոր ակնհայտ և ոչ ակնհայտ ծախսերից գործարքային ծախսերի բացահայտման և սահմանազատման հետ:

Այսպիսով, գործարքային ծախսերի առկայությունը միշտ չէ, որ պետք է դիտարկել որպես բացասական երևույթ: Դրանց առկայությունը կարող է խթան հանդիսանալտնտեսվարող սուբյեկտների ծախսերի օպտիմալացման, ավելի խորը մասնագիտացման, առանձին տնտեսվարող սուբյեկտների համար կայուն և բարձր եկամուտներ ստանալու համար:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԱԴԻԿ ԱՐՏՅՈՄԻ ՎԵՐԴՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Համառոտագիր

Չնայած գործարքային ծախսերի տեսության բավական մշակվածությանը, վերջիններիս գնահատման մոտեցումները մինչ օրս բավական վիճելի են, և չնայած այս ոլորտում առկա բազմաթիվ տեսական հետազոտություններին՝ չափազանց հազվադեպ են իրականացվել գործարքային ծախսերի կոնկրետ քանակական գնահատումներ: Սա հիմնականում բացատրվում է մեթոդաբանական և վիճակագրական մակարդակներում առաջ եկող դժվարություններով, որոնք կապված են տնտեսվարող սուբյեկտների բոլոր ակնհայտ և ոչ ակնհայտ ծախսերից գործարքային ծախսերի բացահայտման և սահմանազատման հետ:

Բանալի բառեր. *գործարքային ծախսերի գնահատում, տնտեսական հարաբերություններ, տնտեսվարող սուբյեկտներ, ապրանքներ, ծառայություններ, շուկա, արդյունավետություն, զարգացում:*

ОСОБЕННОСТИ ОЦЕНКИ ТРАНСАКЦИОННЫХ ИЗДЕРЖЕК ЭКОНОМИКИ

РАДИК АРТЕМОВИЧ ВЕРДЯН
аспирант Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

Несмотря на достаточную изученность теории трансакционных издержек, подходы к оценке последних до сих пор весьма спорны, и несмотря на наличие множества теоретических исследований в этой области, крайне редко проводились конкретные количественные оценки трансакционных издержек. Это в основном объясняется трудностями, возникающими на методологическом и статистическом уровнях, которые связаны со всеми очевидными и неочевидными затратами хозяйствующих субъектов при определении и разграничении трансакционных издержек.

Ключевые слова: *оценка операционных издержек, экономические отношения, хозяйствующие субъекты, товары, услуги, рынок, эффективность, развитие.*

PECULIARITIES OF THE COST ASSESSMENT OF THE ECONOMIC TRANSACTIONS

RADIK ARTYOM VERDYAN
Ph.D. Student, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Տեղանքի (բնակավայրի) փոփոխության ձգտումը հանդիսանում է մարդու հիմնական յուրահատուկ բնութագրերից մեկը: Ավելի քան կես դար առաջ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման համաձայն տեղաշարժման ազատության իրավունքը ստացել է միջազգային ճանաչում[1]: Այդ հռչակագրի 13-րդ հոդվածում նշված է. «Յուրաքանչյուր անհատ ունի ազատ տեղաշարժման և իր համար բնակության ընտրության իրավունք՝ ամեն պետության սահմաններում» և «Յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ցանկացած երկիր լքելու (ներառյալ իր սեփականը) և իր երկիր վերադառնալու»: Շատ երկրների կառավարություններ սկսեցին գիտակցել, որ ժամանակակից միգրացիան առաջադրում է արդիական խնդիրներ կապված միգրանտների և տեղաբնակների նույնականացման նոր տարբերակների վերաբերյալ: Միգրացիան հանդես է գալիս մարդկանց ինքնակազմակերպման ձևերից մեկը և ներառում է միգրացիոն ինստիտուտների համակարգերը, նորմերը, կապերը և ցանցերը: Միգրացիան մի կողմից կարող է դրսևորվել որպես սոցիալ արդյունավետ երևույթ, մյուս կողմից կրում է հասարակական հարաբերությունների էական խնդիր: 1951թ. ստեղծվեց Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, որի կանոնադրության մեջ նշված է, որ միգրացիոն գործընթացները կապված են տնտեսական, սոցիալ մշակութային զարգացման, ինչպես նաև մարդկանց ազատ տեղաշարժման իրավունքի հետ: Նշենք, որ միգրացիայի օբյեկտ հանդես են գալիս ոչ միայն տարածքները, որքան սոցիալական տարածությունները, որոնք պոտենցիալ կարող են ներկայացնել ավելի լայն հնարավորություններ միգրացիայի սուբյեկտին, որպես այդպիսիք հանդես են գալիս անհատը, խումբը և մարդկանց հոսքը (անտրոհոսքը): Ժամանակակից փուլում ամեն ոք կարող է հայտնվել միգրանտի տեղում, դրա համար էլ սոցիալ-տնտեսական շարժունակությունը դառնում է ժամանակակից անհատի կենսակերպ:

2011թ. Հայաստանի և ԵՄ միջև ստորագրվեց շարժունակության շուրջ գործընկերության հռչակագիրը: Համատեղ հռչակագիրը նախանշում է առավել բարձր մակարդակի երկխոսության և համագործակցության չորս ոլորտ՝

- շարժունակություն, օրինական միգրացիա և ինտեգրում,
- միգրացիա և զարգացում,
- անօրինական ներգաղթի և մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքար, հետընդունում (ռեադմիսիա), ինքնությունը հաստատող և ճամփորդական փաստաթղթերի անվտանգություն, սահմանների կառավարում,
- ապաստան և միջազգային պաշտպանություն[2]:

Միգրանտի շարժունակությունը կախված է ինչպես ծագման այնպես էլ նպատակակետ երկրներից: Միգրացիան կարող է փոփոխություն մտցնել միգրանտի կարգավիճակում: Այն կարող է նպաստել սոցիալական սանդուղքով միգրանտի վեր բարձրանալուն, այնպես էլ խոչընդոտում է: Որպես ազդող գործոն կարող է հանդես գալ նպատակակետ երկրում միգրանտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ օրենքների բացակայությունը, ինչը խոչընդոտ է հանդիսանում մեր միգրանտների համար սոցիալական կարգավիճակի բարելավման տեսանկյունից, այլ խոսքերով ասած, բացակայում է վերընթաց շարժունակությունը: Հայ միգրանտները շատ հաճախ ներգրավվում են ժամանակավոր միգրացիոն գործընթացներում՝ տեղափոխվելով մեկ այլ երկիր և փնտրելով ցածր որակավորմամբ աշխատանք մինչ ՀՀ վերադարձը (կախված վիզայի ժամկետից):

Աշխատանքային միգրացիան ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ. Դրական հետևանքներից են՝

- գործազրկության մեղմումը, շնորհիվ միգրացիոն հոսքի ելքի երկրում գործազրկության մակարդակը նվազում է,
- իրենց երկրի տնտեսության մեջ էմիգրանտների ներդրումը (շատ էմիգրանտներ, որոնք լավ կայացել են արտերկրում, ներդրում են իրենց ստացած միջոցները իրենց պետության գործունեությունում),

[1] Մարդու իրավունքի համընդհանուր դեկլարացիա// Ռեզոլուցիա 217 A, ՄԱԿ-ի Գլխավոր Ասաբլեա, 10 դեկտեմբեր 1948թ.:

[2] «ՀՀ-ում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ», Երևան, 2014, էջ 6:

- էմիգրանտի մեկնելուց հետո սոցիալական ծախսերի կրճատումը՝ կախված էմիգրանտի բացակայության տևողությունից (կրթության, անվտանգության, բուժ. ծառայության ծախսերը)։ Բացասական հետևանքներին կարելի է դասել.
- բարձր որակավորում ունեցող կադրերի հոսքը կամ «ուղեղների» արտահոսքը,
- դրամական փոխանցումների կորուստը այլ երկիր (որքան շատ էմիգրանտ է երկրում, որտեղ նրանք աշխատում են, այնտեղ ավելի շատ է դրամական միջոցների հոսքը այլ երկիր),
- ստացված դրամական եկամուտները հարկագանձումից թաքցնելու ձգտումը։

Ներկայումս դիտվող միգրացիոն հոսքերը ամբողջ աշխարհում խնդիրներ են առաջ բերում, այսպես ասած, կենսաթոշակային համակարգերի «ծանրաբեռնվածության» հետ կապված։ Միգրանտները շատ հաճախ կանգնում են սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումների առաջ մուտքի և ծագման երկրի ազգային օրենսդրության երկու սկզբունքների պատճառով՝ տարածքայնության և ազգության։ Միգրացիայի պարագայում, այն ենթադրում է սոցիալական ապահովության նպաստներն արտերկիր արտահանելու անհնարինություն, իսկ ծագման երկիր վերադառնալիս դրանց կորուստը։ Շատ երկրներում նախատեսված չէ նպաստներ (այդ թվում գործազրկության) վճարել արտասահմանում բնակվող աշխատանքային միգրանտներին. որոշ դեպքերում միայն քաղաքացիներն իրավունք ունեն արտահանել նպաստները, իսկ այլ դեպքերում ընդհանրապես սահմանափակվում է նպաստների արտահանումը։ Մի շարք երկրների ազգային օրենսդրությունը նախատեսում է երկիրը լքող անձանց միանվագ գումարի տրամադրում, այլ ոչ թե կենսաթոշակ[1]։ Ժողովրդագրական փոփոխությունները, միգրացիոն հոսքերի մեծացումը, արտագաղթը անհրաժեշտություն են առաջացնում միասնական աշխատաշուկայի (որն արդեն ԵՏՄ տարածքում ձևավորվել է) և կենսաթոշակային տարածքի ստեղծման։

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ միգրացիայի տարբեր ձևերից կախված (հիմնականում շրջանառու և ժամանակավոր) երկիրը ենթարկվում է որոշակի ազդեցության՝ զարգացման առումով, որն արտահայտվում է տնտեսությունում ավելի շատ կամ արդյունավետ գումարներ ներդնելու մեջ։ Դժվար է ասել, թե որ միգրացիան է տվյալ դեպքում առավել արդյունավետ մեր երկրի համար։

Աղյուսակ 1

ԱՊՀ և ՀՀ հարևան երկրների դիրքերն ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի աշխատաշուկայի արդյունավետության գործոնների[2]

Գործոններ	Հայաստան	Վրաստան	Իրան	Թուրքիա	Ադրբեջան	Ղազախստան	Ղրղզստան	Մոլդովա	Ռուսաստան	Տաջիկստան	Ուկրաինա
Համագործակցություն աշխատուժ-գործատու հարաբերություններում	44	76	119	123	47	78	69	107	125	77	109
Աշխատավարձի որոշման էլաստիկություն	43	34	131	54	20	31	3	30	83	51	59
Զբաղվածության ցուցանիշի կոշտություն	52	10	79	90	19	39	44	108	94	123	82
Աշխատանքի ընդունման և հեռացման փորձ	18	10	88	63	5	34	14	103	85	42	17
Ավելցուկային ծախսեր	21	6	112	124	42	16	29	76	29	62	21
Վճարում և արտադրողականություն	41	57	118	75	33	18	9	48	61	24	42
Պրոֆեսիոնալ մենեջմենթ	107	85	124	80	105	116	106	98	112	129	131
Ուղեղների արտահոսք	103	102	107	97	78	88	137	134	98	85	125
Աշխատուժում տղամարդկանց և կանանց հարաբերակցություն	51	75	129	133	17	19	90	11	18	80	40
Գլոբալ մրցունակության ինդեքս	**92**	**88**	**62**	**59**	**55**	**72**	**126**	**93**	**66**	**105**	**82**

[1] Կուլկե Ու., Միգրանտ աշխատողների համար սոցիալական ապահովության բացը լրացնելու ԱՄԿ ռազմավարություն, հատոր 2, 2007թ., էջ 457-459։

[2] The Global Comprtitiveness Report 2013-2014.

Արդյունավետ աշխատաշուկա և տնտեսություն ունենալու համար բավարար չէ ունենալ զբաղվածության բարձր մակարդակ, անհրաժեշտ պայման է ունենալ աշխատանքի բարձր արտադրողականություն: Գլոբալ մրցունակության ինդեքսով Հայաստանը 92-րդն է, ընդ որում՝ աշխատաշուկայի արդյունավետությամբ 34-րդն է 142 երկրների շարքում: Աղյուսակում բերված են ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի ԱՊՀ և Հայաստանի հարևան երկրների աշխատաշուկաներն արդյունավետության իրենց բոլոր գործոններով:

Աղյուսակից երևում է, որ ՀՀ հիմնական խնդիրները կապված են պրոֆեսիոնալ մենեջմենթի բացակայության և ուղեղների արտահոսքի հետ: Ուղեղների արտահոսքը կարող է դրական ազդեցություն ունենալ մեկնման երկրի մարդկային կապիտալի մակարդակի վրա: Վերլուծությունները վկայում են, որ աղքատ երկրներում կրթության ցածր հատույցի պատճառով կրթություն ստանալու խթանները շատ թույլ են: Եվ երբ հնարավորություն է առաջանում արտագաղթել զարգացած երկիր, որտեղ կրթության հատույցը համեմատաբար բարձր է, առավել մեծ թվով մարդ է սկսում ձգտել կրթություն ստանալ: Արդյունքում աղքատ երկրում մարդկային կապիտալի մակարդակը աստիճանաբար աճում է: Դրա հետ մեկտեղ մեծանում է նաև որակավորված կադրերին հայրենիքում աշխատանքով ապահովելու հնարավորությունը[1]: Սակայն նույնը չի կարելի ասել ՀՀ-ի համար, քանի որ մեր պարագայում ուղեղների արտահոսքը գլխավորապես կապիտալ է ստեղծում այլ երկրում, քանի որ բանվորական ներուժի հետ մեկտեղ մեկնում են բարձր որակավորում ունեցող կադրեր, ոչ թե կրթություն ստանալու, այլ հենց իրենց գիտելիքն են կիրառում այլ երկրում:

Խնդիրը նրանում է, որ միգրացիան պայմանավորված է ոչ կրթության որակով, այլ սոցիալ-տնտեսական վիճակով: Գոյություն ունի ստացած կրթությանը համարժեք աշխատատեղ գտնելու խնդիր, աշխատաշուկայի պահանջարկն էապես շեղված է երիտասարդ մասնագետ կադրերի առաջարկից, համակարգի շրջանավարտները մասնագիտությամբ չեն կարողանում աշխատել: Կրթությունը հստակ այն ոլորտն է, որը ազդեցություն ունի նպատակակետ երկրներում միգրանտների կողմից կատարվող աշխատանքի տեսակի և ստացված աշխատավարձի վրա: Շատ կարևոր հանգամանք է, որպեսզի արտերկրում և ՀՀ-ում միգրանտին ցուցաբերվող աջակցությունը լինի համակցված, հատկապես կապված աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, բնակարանային պայմաններից օգտվելու հնարավորությունների, անձնական ապահովագրման, ինչպես նաև կրթության և որակավորման հետ: Համաձայն «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին» զեկույցի հարցման արդյունքների 44% դեպքերում հարցվածներն իրենց աշխատանքը գտել են հյուրընկալող երկրում գտնվող ծանոթների և միջնորդների միջոցով, 19.6% դեպքերում՝ Հայաստանում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 13.1% դեպքերում՝ օտարերկրյա գործատուի միջոցով, 4.2% դեպքերում՝ Հայաստանում բրիգադների միջոցով, 2.7% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով, 2.3%-ը՝ սեփական կամ ընտանեկան բիզնես է ունեցել արտերկրում,1.3%-ը՝ ինտերնետով, 1.1% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով և միայն մեկ անձ է աշխատանք գտել ՀՀ զբաղվածության պետական ծառայության միջոցով[2]: Անհրաժեշտ է որպեսզի վերջինս առավել մեծ ուշադրություն դարձնի հայ միգրանտներին հյուրընկալ երկրում աշխատանքի տեղավորման խնդրի լուծմանը, ինչն ավելի կնպաստի սեփական պետության հանդեպ միգրանտի վստահության ավելացմանը:

2010-2014թթ. ընթացքում բավականին մեծ թիվ են կազմում միգրացիայի մնացորդները (աղյուսակ 2): Այն համեմատաբար քիչ է եղել 2012թ. -9400 մարդ, սակայն աստիճանաբար գնալով այդ ցուցանիշը մեծանում է: Գնացածների միայն մի մասն է վերադառնում Հայաստան, և միգրացիայի սալդոն կրճատվելու փոխարեն մեծանում է: Ըստ 2-րդ աղյուսակի, վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանից հեռացել է մոտ 56 հազար մարդ, սակայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը այդ նույն տարիներին գրեթե չի նվազել (2012թ.՝ 65 հազ. մարդ, 2013թ.՝ 58.6 հազ մարդ, 2014թ.՝ 62.1 հազ մարդ[3]):

[1] Дмитрия Веселов, Ольга Норкина, “Миграция и координационная ловушка бедности в модели с двумя регионами”, изд. “Высшая школа экономики”, М., 2012, стр. 4-6.

[2] «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին» զեկույց, Երևան, 2014, էջ 110:

[3] ԱՎԾ,Հայաստանը թվերով, Երևան, 2015, էջ 26:

ՀՀ ժամանումներն ու մեկնումները 2010-2014թթ.[1]

	2010թ.	**2011թ.**	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**
ժամանել են	32 500	30 900	29 300	19 800	17 400
մեկնել են	69 800	59 400	38 700	44 200	39 200
միգրացիայի մնացորդը	**-37 300**	**-28 500**	**-9400**	**-24400**	**-21 800**

Ստացվում է, որ 2012-2014թթ. ընթացքում Հայաստանից արտագաղթել է մոտ 56 հազար մարդ, սակայն գործազուրկների թիվը կրճատվել է երեք հազարով: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանից գնում են ոչ միայն գործազուրկները, այլև աշխատանք ունեցող մարդիկ: Ի դեպ, այս պնդումն ապացուցվում է Քոլոլյան հիմնադրամի (Կանադա) կողմից ներկայացված հետազոտության արդյունքներով: Ըստ որի արտագաղթի հիմքում միայն տնտեսական պատճառները չեն: Հարցումները և ֆոկուս խմբերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների եկամուտների աճին զուգահեռ՝ աճում են նրանց արտագաղթելու մտադրությունները: Այլ կերպ ասած, որքան աճում է ընտանիքների եկամուտը, այնքան շատ են նրանք մտածում արտագաղթելու մասին[2]: Հարցվածների կողմից նշված պատճառներից են տնտեսական, իրավական և այլ ոլորտներին առնչվող հիմնախնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են աշխատատեղերի բացակայությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, բիզնես իրականացնելու համար ոչ հավասար պայմանների, մենաշնորհների առկայությանը, ինչպես նաև օրենքի իշխանության հետ կապված հարցերին:

Այսպիսով, նշված հիմնախնդիրների արդյունքում ձևավորվում է մի մթնոլորտ, որտեղ մարդիկ չեն տեսնում իրենց ընտանիքների և երեխաների համար հուսալի ապագա: Քաղաքացիները փորձում են իրենց բողոքն արտահայտել հիմնականում արտագաղթի տեսքով:

Հետևաբար՝ այս շարժումը մեղմելու համար անհրաժեշտ է միգրացիոն քաղաքականության հիմքում դնել ժողովրդագրական վիճակի կարգավորման պետական նոր ծրագրերի մշակում: Վերջին երեք տարիներին գնալով ավելացել է նաև հարկերի փաստացի հավաքագրումը, դրան հակառակ աճել է միգրացիայի սալդոն: Ստացվում է, որ բնակչությունը նվազում է, իսկ միջին հարկային բեռը ամեն մի քաղաքացու հաշվով ավելանում է: Եվ նման պայմաններում մնացողների համար դժվարանում է ուսերին կրել այդ բեռը, իսկ մեկնողների համար արդեն միևնույնն է, և իզուր չէ, որ արտագաղթի «ալիքը» գնալով մեծանում է: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ միգրացիայի աճին նպաստում է նաև այն, որ Հայաստանը ելք չունի դեպի ծով և առևտուր իրականացնելու համար ունի ընդամենը երկու բաց սահման, հետևապես արդյունաբերությունը զարգացնելու հնարավորությունները ցածր են: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փոքր հզորությունների զարգացմանը: Ագրարային քաղաքականության ճիշտ ուղղվածության շնորհիվ կարող է նվազեցվել գործազրկությունը, միաժամանակ բարձրացնելով զբաղվածությունը գյուղական վայրերում, քանի որ արտագաղթի հոսքը հենց գյուղական համայնքներից է. դրա վառ ապացույցը ներկայիս դատարկված գյուղերն են: Միջազգային կազմակերպությունների աջակցության շնորհիվ գյուղացիական տնտեսությունները ներգրավված են այդ ծրագրերի մեջ, որի շնորհիվ գյուղացիների զբաղվածությունը ավելանում է: Ստեղծվել են խորհրդատվական ծառայություններ, որոնք խթանում են ժողովրդական արհեստները, վայրի հատապտուղների, դեղաբույսերի հավաքմանն ու փոքր ձեռնարկությունների զարգացմանը: Անհրաժեշտ է նպաստել պարենային ապահովվածության բարելավմանը, որի շնորհիվ կստեղծվեն նոր աշխատատեղեր: Տեղական արտադրողների շահերի պաշտպանությամբ կկայունացվեն երկրի իրացման շուկաները: Անհրաժեշտ է օգտագործել պետական և միջազգային դոնոր կազմակերպությունների համատեղ ջանքերը մարզերում ենթակառուցվածքների զարգացման, փոքր ձեռնարկությունների հզորացման, ֆինանսական աջակցության, վարկավորման համակարգի պարզեցման ուղղությամբ:

[1] ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2015, էջ 109:
[2] http://usarmnews.info/2013/10/21:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Ժամանակակից աշխարհում միգրացիան հանդիսանում է մարդկանց ինքնակազմակերպման ձևերից մեկը և ներառում է միգրացիոն ինստիտուտների բարդ համակարգերը: Ներկայումս միգրացիոն հոսքերը գնալով ահագնացող բնույթ են կրում, և իզուր չէ, որ հոդվածում դիտարկվել են ներկա միգրացիոն վիճակը, ներկայացվել են հետազոտության արդյունքներ, որի հիման վրա վերլուծվել են ուղեղների արտահոսքի հետ կապված խնդիրներ, արվել են միգրացիայի շարժումը մեղմող առաջարկություններ:

Բանալի բառեր. *միգրացիա, շարժունակություն, միգրացիայի մնացորդ, աշխատավարձ, աշխատաշուկա, գործազրկություն, զբաղվածություն, ուղեղների արտահոսք, նպաստ, կրթություն:*

МИГРАЦИОННОЕ ДВИЖЕНИЕ И ПУТИ ЕГО СМЯГЧЕНИЯ В РА

ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В современном мире миграция выступает одной из форм самоорганизации людей и включает в себя сложные системы миграционных институтов. В настоящее время миграционные потоки носят все более прогрессируюший характер, поэтому не случайно, что в статье рассмотрена современная миграционная ситуация, представлены результаты исследования, на основе которых проанализованы проблемы, связанные с «утечкой мозгов», внесены предложения по смягчению миграционного движения.

Ключевые слова: *миграция, мобильность, сальдо миграции, зарплата, рынок труда, безработица, занятость, утечка мозгов, пособие , образование.*

MIGRATION MOVEMENT AND APPROACHES TO MITIGATE IT IN THE REPUBLIC OF ARMENIA

SHOGHER PYOTR POGHOSYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In the contemporary world, migration is considered to be as one of the self-organizational forms of the people, which include complex systems of migration institutions. Currently, the migration flows have a tendency of a vehement growth. Therefore, it is not contingent that in this article we especially accentuated the current pattern of the migration and those research results which are presented based on the problems connected with brain drain. In addition, concrete proposals for reducing the movement of migration were put forward.

Keywords: *Migration, mobility, migration balance, salary, labor market, unemployment, employment, brain drain, welfare, education.*

ՌՈԲԵՐՏ ԱՐՄԵՆԻ ՔԱՄԱԼՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՄՍԵՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՈԴԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սույն հետազոտությունում հիմնվելով Հավիեր Սալա-ի-Մարտին (*Xavier Sala-i-Martin*) և Ռոբերտ Բարո (*Robert Barro*), Օլիվյեր Բլաբչարդի (Olivier Blabchard), Ֆիլիպ Վեյլի (Philippe Weil) և Ջոան Բրաունի[1] (Juan Braun) աշխատանքների վրա, ներկայացվելու է ***միգրացիան, ներառված տնտեսական աճի մոդելներում, որոնք հարմարեցված են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակին և նրա ազգաբնակչության արտագաղթին***: Այս մոդելներում իր տեղն է գտնելու նաև այն հանգամանքը, որ Հայաստանը հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության անդամ (ԵԱՏՄ), նրա տնտեսությունն իր վրա է կրում՝ կայուն աշխարհագրական կողմնորոշում ունեցող միգրացիոն հոսքերի ազդեցությունը: Խոսքը վերաբերվում է ***Եվրասիական միգրացիոն համակարգի*** (ԵՄՀ) գոտուն (*Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան և Կենտրոնական Ասիայի երկրներ*), որը բնութագրվում է լայնածավալ միգրացիոն հոսքերով և կայուն աշխարհագրական կողմնորոշմամբ:

Սահմանենք միգրացիան որպես մարդկանց տեղափոխման գործընթաց, որի արդյունքում երկրում փոփոխվում է ազգաբնակչության և աշխատուժի քանակը: Միգրացիան տարբերվում է բնակչության իրական աճից, որի դեպքում, ընդունող երկրում գրանցվող բնակչության աճը նշանակում է, որ մյուս երկրում, համապատասխանաբար բնակչությունը նվազում է: Այդ պատճառով, անհրաժեշտ է դիտարկել ***ներգաղթը*** (***immigration***) և ***արտագաղթը*** (***emigratia***), որպես նույն գործընթացի տարբեր կողմեր:

Մեր կողմից միգրացիան վերլուծվել է տնտեսական աճի Սոլոու-Սվենի մոդելի օգնությամբ[2] (*այսուհետ՝ նախորդ հոդված*), որի համար կանխադրվել է *միգրացիայի ֆունկցիան*: Շարունակելով հետազոտությունները, ***առաջինը***, Սոլոու-Սվենի մոդելից անցում ենք կատարվում ***Ռամսեյի մոդելին***, որի միջոցով ***օպտիմալացվում է տնային տնտեսության վարքը***: Այս վերլուծությունը ենթադրում է, որ ներկայացուցչական տնային տնտեսությունը ընտրում է սպառման օպտիմալ հետագիծը, հաշվի չառնելով արտագաղթողների բարեկեցությունը:

Սակայն միգրացիայի և տնտեսական աճի կապի այս տարբերակը ունի երկու թերություններ: Խոսքը վերաբերում է նրան, որ առաջինը, միգրացիայի հոսքերը որոշվում էին հիմնվելով կանխադրվող միգրացիայի ֆունկցիայի վրա, այլ ոչ թե կախված տնային տնտեսությունների *տեղափոխման* հետ կապված օպտիմալության խնդրի լուծումից: ***Եվ երկրորդը***, կապիտալի միակ ենթադրվող շարժունակությունը դա մարդկային կապիտալի միգրացիան է: Նման հիմնախնդրի լուծման համար դիտարկել ենք Հարվարդի համալսարանի դոկտորանտ Ջոան Բրաունի կողմից իր թեզում առաջարկված մի շարք մոդելներ, որոնք թույլատրում են իրականացնել ***կապիտալի շարժ***, իսկ ***միգրացիայի գործակիցն էլ որոշվում է տնային տնտեսության վարքագծի օպտիմալացման խնդրից ելնելով***: Դա թույլ է տալիս վերլուծել, թե ինչպես են ***միգրացիայի պատճառով առաջացող ծախսերի և եկամուտների փոփոխությունները ազդում տնտեսական աճի և միգրացիայի դինամիկ հետագծի վրա***.

Առանցքային գործոնը, որը պարզեցնում է Բրաունի մոդելների վերլուծությունը, հանդիսանում է համաշխարհային վարկային կատարյալ շուկայի առկայությունը, որտեղ ենթադրվում

---

[1] Blanchard, Olivier. Debt, Deficits, and Finite Horizons. The Journal of Political Economy, Vol. 93, No. 2. (Apr., 1985), pp. 223-247.
Barro, Robert J. Economic Growth in a Cross Section of Countries. The Quarterly Journal of Economics, Vol. 106, No. 2. (May, 1991).
Braun, Juan. Essayson Economic Growth and Migration. Harvard University. Cambridge, Massaehuselw. May 1993.
Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., Economic Growth - second edition, 2004, The MIT Press Cambridge, Massachusetts London, England.
Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., Convergence across States and Regions, Brooking Papers on Economic Activity, 1991, no. 1, 107-182.
Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., Convergence // Journal of Political Economy, 100(2). 1992. p. 223–251.
Weil, Philippe. Overlapping Families of Infinitely-Lived Agents // 1989.

[2] Ռ. Ա. Քամալյան, Միգրացիայի ազդեցության գնահատումը ձևափոխված Սոլոու-Սվենի մոդելի միջոցով: Հայաստանի «ֆինանսներ և էկոնոմիկա»,№1-2(185-186), հունվար, 2016, էջ 77-79:

է նույն տոկոսադրույքը բոլոր պետությունների ռեզիդենտների համար: Այդ դեպքում միգրացիան կախված կլինի *բացառապես երկրների միջև աշխատավարձի դրույքաչափի հետագծի կամ ապրուստի պայմանների տարբերությունից*: Նման ենթադրությունները թույլ են տալիս դիտարկվող Բրաունի մոդելը տարածել ԵՄՀ գոտու վրա:

Միգրացիան Ռամսեի մոդելում.

Ինչպես հայտնի է տեսությունից, **Ռամսեի մոդելի** պայմաններն օգտագործվում են տնային տնտեսությունների վարքի օպտիմալացման համար, դրանով իսկ ընդարձակելով Սոլոու-Սվէնի մոդելը՝ ներառելով փոփոխականների կազմում կուտակման չափաքանակը: Սույնով ներկայացվում է մոդիֆիկացված Ռամսեի մոդելը, որը ներառում է *միգրացիայի ու կուտակման չափաքանակի ընտրության միջև փոխկապվածությունը*, ինչը վերաբերում է կուտակման չափաքանակի վարքին, և հետևաբար, կոնվերգենցիայի (*մոտեցման*) արագությանը, ինչպես նաև կուտակման չափաքանակի ու կայուն վիճակի որոշ այլ բնութագրերին:

Ռամսեի մոդելը ֆորմալ ենթադրում է տնային տնտեսությունների վարքի հետազոտություն՝ սահմանափակ պլանավորման հորիզոնով:

Պահպանելով նախորդ հոդվածի տրամաբանությունը և նշանակումները, և թողնելով նույն ենթադրությունները, ընդունվում է, որ միգրանտները ժամանում են երկիր $\aleph(t)$ արագությամբ, և յուրաքանչյուր միգրանտ բերում է իր հետ $\Im(t)$ կապիտալ, որն, ամենայն հավանականությամբ, ներկայացված է մարդկային կապիտալով (*ենթադրում ենք, որ միգրանտները չեն կարող ստանալ ֆինանսական եկամուտ արտասահմանից*): Կարևոր ենթադրություններից է, որ իրենց սպառումը չի ընդգրկվում ռեցիպիենտ երկրի բնակիչների օգտակարության ֆունկցիայում, այսինքն, ներգաղթյալների մասին ոչ ոք մտահոգված չի:

Նմանատիպ ենթադրություն կարող է կատարվել էմիգրանտների (*արտագաղթյալների*) համար, երբ $\aleph(t) < 0$, կոնկրետ, Հայաստանի վերաբերյալ, որի դեպքում արտագաղթողների նկատմամբ երկրում մնացած ընտանիքները չեն հոգա: Խնդիրը բարդանում է, երբ ընտանիքի անդամները գաղթում են այլ երկրներ և այնտեղից ուղարկում են դրամական փոխանցումներ հարազատներին, կամ, ընդհակառակը, ստանում են նրանցից ֆինանսական աջակցություն: Մոդելի շարադրման ընթացքում անդրադառնալու ենք այս տարբերակին, որը համապատասխանում է Հայաստանից արտագաղթողների վերաբերյալ ուսումնասիրություններին:

Ենթադրենք $L(t)$՝ ռեցիպիենտ-երկրի ամբողջ ***բնակչության թվաքանակն է*** t ժամանակում, որը սահմանվում է հետևյալ տեսքով.

$$L(t) = L(0) \cdot e^{nt} \cdot \exp\left\{ \int_0^t \aleph(v) dv \right\}, \qquad (1)$$

որտեղ $L(0) = 1$:

Յուրաքանչյուր j տիպի տնային տնտեսությունները[1] առավելագույնի են հասցնում ***օգտակարության ֆունկցիան***, որը նաև կախված է t ժամանակից.

$$U(j,t) = \int_t^\infty \log\left[c(j,v)\right] \cdot e^{-(\rho - n)(v-t)} dv \,, \qquad (2)$$

որտեղ $c(j,v)$ -ն դա v ժամանակում j տիպի տնային տնտեսությունների սպառումն է մեկ հոգու համար: Օգտակարության ֆունկցիան թույլ կտա ավելի պարզ ներկայացնել տարբեր տիպի միգրանտների ընդհանրացումը (*ագրեգացումը*):

Հիմնվելով Օլիվեր Բլաբչարդի և Ֆիլիպ Վեյլի հետազոտությունների վրա, մեկ շնչի հաշվով սպառման աճի հավասարումը ունի հետևյալ տեսքը.

$$\frac{\dot{c}}{c} = r(t) - \rho - \aleph(t) \cdot (\rho - n) \cdot \frac{k(t) - \Im(t)}{c(t)} \,, \qquad (3)$$

[1] Տնային տնտեսության տիպը նշանակենք j, երբ $j \geq 0$, ապա հաշվի է առնվել ժամանակը, որի ընթացքում ընտանիքը երկիր է ժամանել (*Հայաստանից հեռանալուց ժամանակը հաշվի չի առնվում*), իսկ բնիկ բնակչության համար $j = 0$:

ρ-ն արդյունավետ զեղչման (*դիսկոնտ*) դրույքաչափն է, երբ $c(t) \equiv C(t)/L(t)$, $r(t)$ – տոկոսադրույքը:

Այս հարաբերակցությունը համապատասխանում է Ռամսեի տնտեսական աճի մոդելից ստացվող արդյունքին, երբ $\aleph(t) = 0$ կամ $\Im(t) = k(t)$: Եթե $\aleph(t) > 0$ և $\Im(t) < k(t)$, ապա միգրանտների հոսքը կփոքրացնի մեկ շնչի հաշվով միջին սպառումը՝ (3) արտահայտության աջ մասում գտնվող վերջին հանելի արժեքով:

Հայաստանի դեպքում, երբ $\aleph(t) < 0$, փաստացի պետք է գրանցվի մեկ շնչի հաշվով միջին սպառումի աճ, սակայն, իրականում, Հայաստանում նման աճ չի գրանցվում:

Ինչպես նշում են Օ.Բլանչարդը և Ֆ.Վեյլը, մոդելի դինամիկ փոփոխությունը դեպի ***կայուն վիճակ*** կարող է նկարագրվել դիֆերենցիալ հավասարումներով՝ k և c համար: Մեկ արդյունավետ աշխատակցի համար կապիտալի աճի արագության k տեմպի հավասարումը ունի հետևյալ տեսքը.

$$\frac{\dot{k}}{k} = \frac{f(k)}{k} - \frac{c}{k} - (x + n + \delta) - \aleph \cdot \left(1 - \frac{\Im}{k}\right). \qquad (4)$$

c աճի տեմպի արտահայտությունը ստացվում է (3) հավասարումից.

$$\frac{\dot{c}}{c} = f'(k) - (x + \rho + \delta) - \aleph \cdot (\rho - n) \cdot \frac{\Im - k}{c}. \qquad (5)$$

Այնուհետև, օգտվելով միգրացիայի հավասարումից, որը ներկայացվել է նախորդ հոդվածում ((4) *հավասարումը այդ հոդվածից 31 նշանակենք* (4)*)

$$\xi(k) \equiv \aleph(k) \cdot \left(1 - \frac{\Im}{k}\right) \approx b \cdot \log \frac{k}{k_{world}}, \qquad (4)^*$$

որտեղ k_{world} որպես հաստատուն մեծություն, ներկայացնում է իրենց կապիտալի ինտենսիվ օգտագործումը աշխարհի այլ տնտեսություններում:

Տեղադրելով (4)* հավասարումը (4) և (5) արտահայտություններում, դիտարկենք (k, c) տարածությունում ֆազային (*փուլային*) գծանկարը, որը թույլ է տալիս ավանդական ձևերով վերլուծել մոդելի կայուն վիճակը և դրան անցման դինամիկան:

Նախ, ներկայացնենք առանց միգրացիայի Ռամսեի մոդելի ֆազային (*փուլային*) 1-ին գծանկարը.

Գծանկար 1. Առանց միգրացիայի Ռամսեի մոդելի ֆազային (*փուլային*) դիագրաման:



Նկարի վրա պատկերված է Ռամսեի մոդելի դինամիկան: $\dot{c}/c = 0$ և $\dot{k} = 0$ գրաֆիկները բաժանում են տարածությունը չորս տարածքների, սլաքերը ցույց են տալիս յուրաքանչյուր տարածքում շարժման ուղղությունը: Մոդելում գոյություն ունի կայուն վիճակ թամբի տիպի: Կայուն ճյուղն իրենից ներկայացնում է թեքությամբ վերև կոր: Երբ մեկնարկը սկսվում է ցածր k մակարդակից օպտիմալ նախնական c արժեքը ևս փոքր է: Այնուհետև, դեպի կայուն վիճակ անցումային գործընթացի ժամանակ, c և k աճում են:

Ձիմք՝ Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., Convergence // Journal of Political Economy, 100(2). 1992. p. 223–251

(5) և (4*) արտահայտություններից հետևում է, որ եթե սպառումը $c \neq 0$, ապա $\dot{c} = 0$ գիծը տրվում է որպես.

$$f'(k) = \delta + \rho + x + \frac{(\rho - n) \cdot b \cdot \log(k / k_{world})}{c / k}:$$

Այս պայմանը տարբերվում է Ռամսեի մոդելի դասական տեսքից, լրացուցիչ, վերջին բաղադրիչով: k^{*}՝ դա պարամետրի արժեքն է կայուն վիճակում, որի դեպքում միգրացիան բացակայում է: $\dot{c} = 0$ կորի տեսքը կախված է k^{*} և k_{world} հարաբերությունից: Եթե $k^{*} = k_{world}$, ապա կորի գիծը կլինի ուղղահայաց, և այն կհամընկնի Ռամսեի մոդելի զրոյական միգրացիայով ֆազային (*փուլային*) դիագրամայի ստանդարտ գրաֆիկի (*գծանկար* 1) հետ: Եթե երկրի տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, ինչը բնութագրվում է միգրացիայի բացակայությամբ և *գրավիչ է իմիգրանտների համար*, ապա $k^{*} > k_{world}$: $k^{*} < k_{world}$ համապատասխանում է ***Հայաստանում*** ստեղծված իրավիճակին:

Գծանկար 2. Ֆազային (*փուլային*) գծանկարը Ռամսեի մոդելի համար միգրացիայով.



$\dot{k}$ գրաֆիկը ունի ավանդական շրջված U-ձևը: Մոդելում առկա է հավասարակշիռ թամբաձև հետագիծը: Եթե սկզբնական ժամանակում տնտեսությունը բնութագրվում է k փոքր արժեքով, ապա անցումը հավասարակշիռ վիճակին, բերում է k և c միապաղ (*մոնոտոն*) աճին:

Հիմք՝ Sala-i-Martin, Xavier, Barro, Robert J., Economic Growth - second edition, 2004, *The MIT Press Cambridge, Massachusetts London, England*

(4) և (4*) արտահայտություններից հետևում է, որ $\dot{k} = 0$ տրվում է որպես.

$$c = f(k) - (x + n + \delta) \cdot k - b \cdot \log(k / k_{world}),$$

որի դասական ձևը ունի հետևյալ տեսքը.

$$\dot{k} = f(k) - c - (x + n + \delta) \cdot k$$

որտեղ $c \equiv C/L = ce^{-xt}$ (C – *սպառումն է, L – աշխատուժի ռեսուրս*) և $k(0)$ տրված են: Այդ հավասարումը հանդիսանում է ամբողջ տնտեսության համար ռեսուրսային սահմանափակում:

Գծանկար 2-ից կարելի է անել հետևյալ ենթադրությունը, եթե $k^{*} > k_{world}$, ապա ազգային տնտեսությունը ավելի գրավիչ է միգրանտների համար, եթե այն գտնվում է հավասարակշիռ վիճակում, որը չի ենթադրում միգրացիա: Միգրացիայի հնարավորությունը կհանգեցնի նոր հավասարակշիռ վիճակին արդեն իսկ դրական միգրացիայով և, հետևաբար, կապիտալի ավելի ցածր օգտագործման ինտենսիվությամբ (*քանի որ, միգրանտները տեղափոխում են իրենց հետ միայն մի փոքր կապիտալ*): Այդ եզրակացությունները տրամագծորեն հակառակ են, եթե $k^{*} < k_{world}$: Այս դեպքը մեզ համար ավելի հետաքրքիր է, քանի որ համապատասխանում է Հայաստանում ստեղծված իրավիճակին:

Մոդելում կայուն վիճակը, որպես կանոն, որոշվում է «*թամբի ձևի*» հետագծով, իսկ ֆազային (*փուլային*) դիագրաման, որը տրված 2-րդ նկարում, կարող է օգտագործվել, որպեսզի ցուցադրվի շարժման ուղղությունը:

Ֆիլիպ Վեյլը, որպեսզի գնահատի կոնվերգենցիայի արագությունը, օգտվելով Կոբ-Դուգլասի արտադրական $f(k) = Ak^{\alpha}$ ֆունկցիայից, ստանում է հետևյալ ձևի ***կոնվերգենցիայի գործակիցը***.

$$2\beta = \left\{ \begin{array}{l} \zeta^{2} + 4b \cdot (\rho - n) + 4(1-\alpha)(\rho + \delta + x) \times \\ \times \left[\dfrac{\rho + \delta + x}{\alpha} - (n + x + \delta) \right] \end{array} \right\}^{1/2} - \zeta, \qquad (6)$$

որտեղ $\zeta = \rho - \pi - b$:

Այսպիսով, ինչպես Սոլոու-Սվէնի մոդելում, միգրացիայի նկատմամբ մեծ հակվածությունը բերում է կոնվերգենցիայի արագության աճին (*եթե* $N < k$):

Բրաունի տնտեսական աճի և միգրացիայի մոդելը ու դրա կիրառումը Եվրասիական միգրացիոն համակարգի համար

Երկրի տնտեսությունը, ինչպես և մյուս տնտեսությունները, նկարագրվում են Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայով.

$$Y = AK^{\alpha}L^{1-\alpha} \cdot \left(\frac{R}{L}\right)^{\lambda} \qquad (7)$$

որտեղ $L \equiv Le^{xt}$ — աշխատանքային ռեսուրսների արդյունավետ քանակն է, $x \geq 0$ էկզոգեն տրված՝ բոլոր տնտեսությունների համար բնորոշ աշխատանքը տնտեսող տեխնոլոգիան գործընթացը ($x \geq 0$): Ներկայացված Կոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի նոր անդամն է R հաստատունը, որը ներկայացնում է իրենից բնական ռեսուրս, որին ազգային տնտեսության ռեզիդենտները ունեն ազատ մուտք: Սակայն, այդ բարիքը կուտակման առարկա է, R/L - մեկ շնչի հաշվով միջին մեծությունը ներառված է արտադրական ֆունկցիայում: Ենթադրվում է նաև, որ $0 < \lambda < 1-\alpha$, այսինքն, ընդհանուր արդյունքը K մինչև L **նվազող է տվյալ** R դեպքում, սակայն սահմանային սոցիալական արտադրանքը ըստ L դրական է:

Ջ. Բրաունը (7) արտահայտությունում, օրինակ, համարում է R ինչպես մասնավոր հողեր, և ներգաղթյալները կարող են օգտագործել այդ ռեսուրսը, վճարելով renta: Գաղթելու ցանկությունը կախված է հարկադրման համակարգից: Դիտարկվում է այնպիսի իրավիճակ, երբ ներգաղթողները ավտոմատ ներառված են R օգտագործման մեջ և նրանցից միգրացիոն հարկեր և վճարներ չեն գանձվում:

Ներկայացնենք երկրի ներսի համար աշխատավարձի դրույքաչափի բանաձևը.

$$w = \left[\frac{(1-\alpha)\cdot A^{1/(1-\alpha)} \cdot \alpha^{\alpha/(1-\alpha)} \cdot \left(R/L\right)^{\lambda/(1-\alpha)}}{r+\delta}\right] \cdot e^{xt} \qquad (8)$$

որտեղ կապիտալի վարձակալության արժեքը կազմում է $r+\delta$, իսկ r — համաշխարհային (*կամ ավելի կոնկրետ, ԵՏՄ*) իրական տոկոսադրույքն է:

Եթե սահմանվի $B(t) \equiv B(t) \cdot e^{-xt}$, ապա $B(t)$ ածանցյալը ըստ ժամանակի որոշվում է (9) արտահայտությունից.

$$\dot{B} = -\left[w(t) - w_{world}\right] - (r-x) \cdot B(t) \qquad (9)$$

որտեղ

$$w(t) \equiv w(t) \cdot e^{-xt} \qquad \text{և} \qquad w_{world} \equiv w_{world} \cdot e^{-xt}.$$

Հետևաբար, աշխատավարձի ներքին դրույքաչափը հարաբերական մեծ է աշխատավարձից, որը առաջարկվում է ևս ինչ-որ տեղ, այն ենթադրությամբ, եթե տնտեսությունում առկա են բավարար քանակությամբ բնական պաշարներ մեկ շնչի R/L հաշվով և տեխնոլոգիաների A մակարդակը համեմատաբար բարձր է: Կառավարության քաղաքականությունը կարող է հաշվի առնվել A գործակիցում:

Միգրացիայի վերաբերյալ որոշման ընդունում

Ըստ, Ջոան Բրաունի, քանի որ դիտարկվում է կապիտալի կատարյալ շարժունակությունը և անտեսվում է բնակվելու պայմանների տարբերությունը, որոնք ներկայացված են օգտակարության ֆունկցիայում, ուստի ***մարդիկ համեմատում են երկրները բացառապես աշխատավարձի դրույքաչափի հիմքի վրա***: Ենթադրենք, որ համաշխարհային տնտեսությունը հաստատում է աշխատավարձի դրույքաչափը w_{world} չափով (*մեր ուսումնասիրության համար, իմաստալի կլինինի, եթե այն հիմնվի ԵՏՄ գոտում ձևավորված դրույքի վրա*): Մի երկրից մյուս երկիր տեղափոխումից շահումը՝ t ժամանակում, ներկայացնում է իրենից աշխատավարձի դրույքաչափի տարբերության ընթացիկ գնահատականը.

$$B(t) \equiv \int_{t}^{\infty} \left[w(v) - w_{world} \right] \cdot e^{-r \cdot (v-t)} dv \qquad (10)$$

Ենթադրելով, որ համաշխարհային տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, w_{world} գործակիցը համարվում է հաստատուն:

Ենթադրելով, որ $w(t) \geq w_{world}$, և հետևաբար, $B(v) \geq 0$ բոլոր $v \geq t$ համար, որի դեպքում ցանկացած առաջացող միգրացիոն հոսքը ուղղված կլինի դիտարկվող երկիր: Իրավիճակը կլինի հակառակը, եթե $w(v) \leq w_{world}$: **Այս վերջին տարբերակը համապատասխանում է *Հայաստանից* արտագաղթելու իրավիճակին, որի դեպքում,** $B(v) \leq 0$ բոլոր $v \geq t$ համար, այսինքն, աշխատավարձը նվազող է, կամ ընդհանրացնելով, կարելի եզրակացնել, որ կյանքի մակարդակը նվազում է, միգրացիոն հոսքը դիտարկվելու է, ուղղված Հայաստանից դուրս:

Ենթադրելով, որ բնակչության բնական աճը երկրում հավասար է զրոյի, նշանակենք, $M(t)$ որպես միգրանտների հոսք դեպի երկիր կամ երկրից դուրս, այսինքն, նա կարող է լինել կամ դրական, կամ բացասական: Հայաստանի դեպքում, $M(t)$ ունի բացասական նշան: Եթե $M(t) \geq 0$՝ միգրանտների ներհոսքն այլ երկրներից t ժամանակում, ապա բնակչության աճը ընդունող երկրի ներսում հավասար է.

$$\frac{\dot{L}}{L} = \frac{M(t)}{L(t)}. \qquad (11)$$

Առանցքային խնդիր է համարվում՝ ***միգրացիայի վրա կատարված ծախսերի*** գնահատականը: Ենթադրվում է, որ, յուրաքանչյուր միգրանտի ծախսերը ֆունկցիա է, որը աճում է ըստ $M(t) / L(t)$ **արգումենտի: Այս ենթադրությունը բավականին խելամիտ է. հասկանալի է, որ** աշխատանքի և ապրուստի վայրի որոնման ծախսերը աճում են ռեցիպիենտների և միգրանտների թվի աճի հետ միասին[1]: Որպես ծախս հանդես է գալիս կորցրած աշխատանքը և, համապատասխանաբար, միգրանտների կողմից կրած ծախսերը հավասար են.

$$\text{Կորցրած եկամուտը տեղափոխումից} = \eta \cdot \frac{M(t)}{L(t)} \cdot w_{world}, \qquad (12)$$

որտեղ $\eta' > 0, \ \eta'' \geq 0$:

Միգրանտների քանակի աճի հետ, երկրում նվազում է R/L (*կուտակման բարիքի միջին արժեքը մեկ շնչի հաշվով*), և, ըստ (8) արտահայտության՝ նվազում է աշխատավարձը՝ w: Եթե տեղափոխված մարդկանց քանակը այնքան է, որ ռեցիպիենտ-երկրում w հավասարեցվում է w_{world}, ապա միգրացիայի շարժառիթը բացակայում է: Եթե երկրի ներսում տեխնոլոգիական պարամետրը A համընկնի ամբողջ աշխարհի տեխնոլոգիական պարամետրի հետ, ապա աշխատավարձերը դառնում են հավասար, երբ ***R/L հարաբերությունը համընկնում է մյուս աշխարհի*** R/L հարաբերության հետ: Երբ աշխատավարձերը հավասար են $w(v) = w_{world}$, ազգային տնտեսությունը կգտնվի կայուն վիճակում, որտեղ միգրացիան գտնվում է զրոյական վիճակում: $\eta(0) = 0$ պայմանը նշանակում է, որ համակարգում կայուն վիճակը իրականում հասանելի է, քանի որ եթե $w > w_{world}$, ապա աշխատավարձի դրույքաչափի տարբերությունը $B>0$ և մարդկանց մոտ կլինի դրդապատճառ տեղափոխվելու՝ զրոյական ծախսերով: Այսպիսով, անձի մոտ շարունակ կլինի դրդապատճառ արտագաղթելու, իսկ ռեցիպիենտ-երկրում բնակչությունը կաճի այնքան, քանի դեռ $w > w_{world}$:

Հետևաբար, հավասարակշռությունը ենթադրում է, յուրաքանչյուր ժամանակում, միգրացիայի այնպիսի մեծություն, որի դեպքում տեղափոխման օգուտները և կորուստները հավասար են իրար.

$$B(t) = \eta \cdot \frac{M(t)}{L(t)} \cdot w_{world} \qquad (13)$$

բոլոր t **համար:**

[1] Առանցքային առանձնահատկությունը կայանում է նրանում, որ տեղափոխման սահմանային ծախսերը աճում են տեղափոխվելու ցանկացողների քանակի աճի հետ: Այդ հարաբերությունը ևս կպահպանվի տեղափոխման ծախսերի ոչ միատարրության դեպքում:

Ջ. Բրաունը հաշվարկում է միգրանտների հոսքը յուրաքանչյուր ժամանակի համար, որը ազդում է ռեցիպիենտ-երկրի բնակչության աճի տեմպի վրա. դրա համար նա ձևափոխում է (12) արտահայտությունը.

$$\frac{\dot{L}}{L} = \frac{M(t)}{L(t)} = \psi\left(\frac{\dot{B}}{w_{world}}\right) \qquad (14)$$

որտեղ ψ-ֆունկցիա է, հակառակը՝ η (12) արտահայտությունից:

Նմանատիպ ենթադրությունները թույլ են տալիս ստանալ դոնոր-երկրից (մասնավորապես՝ Հայաստանի համար) հեռացող քաղաքացիների բանաձևը:

Համակարգը դինամիկ վիճակում, կայուն վիճակ և դրան անցման գործընթացը

L և B պարամետրերի համար դինամիկ համակարգը տրվում է (10) և (14) արտահայտություններով, որտեղ w փոփոխվում է հակադարձ համամասնական L՝ համապատասխան (8) արտահայտության

$$\hat{w} = \left[\frac{(1-\alpha)\cdot A^{1/(1-\alpha)}\cdot \alpha^{\alpha/(1-\alpha)}\cdot (R/L)^{\lambda/(1-\alpha)}}{r+\delta}\right]:$$

3-րդ գծանկարում ներկայացված է (L, B) ***տարածությունում ֆազային դիագրաման***:

Գծանկար 3. Ֆազային դիագրաման այն դեպքում, երբ միգրացիան ընտրության գործակից է:



Մոդելի դինամիկան կարող է նկարագրվել օգտագործելով երկու պարամետր՝ B տեղափոխումից ստացված օգուտի ընթացիկ գնահատականը և երկրի ներսում L բնակչությունը: Համակարգի լուծումն հանդիսանում է կայուն թամբաձև հետագիծ, որի թեքությունը միշտ բացասական է: Այսպիսով, ենթադրվում է, որ ի սկզբանե ռեցիպիենտ երկրում բնակչության ցածր քանակը նշանակում է՝ բարձր միգրացիայից օգուտները, և հետևաբար, զուտ միգրացիայի ՝ ավելի բարձր գործակիցը: Բնակչության աճի հետ միասին՝ զուտ օգուտը միգրացիայից փոքրանում է:

Հիմք՝ Braun, Juan. Essayson Economic Growth and Migration. Harvard University. Cambridge, Massaehuselw. May 1993

3-րդ նկարի վրա երևում է, որ կայուն վիճակում բնակչությունը $L = L^*$ հաստատուն է, իսկ $\dot{B} = 0$: Համակարգի *լուծումն* հանդիսանում է թամբաձև հետագիծ. 4-ին նկարում ցույց է տրված շարժի ուղղությունը:

Կարելի է գնահատել ***կոնվերգենցիայի*** (***converge, մոտեցման***) ***արագությունը***: Միգրացիայի գործակիցը, որը հավասար է L աճի տեմպին, տրվում է հետևյալ ձևի.

$$\frac{M}{L} = \frac{\dot{L}}{L} \approx \beta \cdot \log\frac{L^*}{L}, \qquad (15)$$

որտեղ ***կոնվերգենցիայի գործակիցը*** որոշվում է հետևյալ հավասարումից.

$$2\beta = \left[(r-x)^2 + \frac{4\lambda\cdot\psi'(0)}{1-\alpha}\right] - (r-x). \qquad (16)$$

(16) արտահայտությունից երևում է, որ առանցքային գործակիցը սահմանող կոնվերգենցիայի արագությունը հանդիսանում է $\psi'(0)$ (*նայեք* (14) *արտահայտությունը*), ինչը ցույց է տալիս

միգրացիայի գործակցի զգայունությունը հավասարակշիռ վիճակի շրջակայքում՝ հարաբերակցված տեղափոխումից B / w_{world} ստացված օգուտին: Իչքան ավելի արագ են աճում միգրացիայի ծախսերը, երբ աճում են միգրանտների քանակը, այդքան կոնվերգենցիայի արագությունը փոքր է:

Կոնվերգենցիայի արագությունը L համար, հանդիսանում է նաև y համար կոնվերգենցիայի արագությունն:

Կարելի է ստանալ երկու հավասարումների համակարգ՝ արտադրության և միգրացիայի գործակցի աճի տեմպի վերաբերյլա.

$$\frac{\dot{y}}{y} = -\beta \cdot \log \frac{y}{y*} . \qquad (17)$$

$$\frac{M}{L} = \frac{\dot{L}}{L} \approx \frac{\beta \cdot (1-\alpha)}{\lambda} \log \frac{y}{y^*} . \qquad (18):$$

Համաձայն (18) արտահայտության, պետությունների համար, որի դեպքում α և λ գործակիցները նույն են, կբնութագրվեն միգրացիայի գործակիցների ավելի բարձր զգայունությամբ՝ մեկ շնչին ընկնող ապրանքների տարբերությամբ:

Ջ. Բրաունը ստուգեց այն վարկածը, որ միգրացիայի գործակցի ավելի բարձր զգայունությունը կհամապատասխանի կոնվերգենցիայի ավելի բարձր արագությանը՝ մեկ շնչին ընկնող եկամուտի կամ արտադրանքի վերաբերյալ: Նրա արդյունքները հաստատեցին հիմնական վարկածը, այսինքն, ***երկրները միգրացիայի գործակցի բարձր զգայունությամբ ևս բնութագրվում են կոնվերգենցիայի ավելի բարձր արագությամբ***:

Համաշխարհային կամ Եվրասիական տնտեսական միության տնտեսության դինամիկան

Մինչ այժմ ենթադրվում էր, որ համաշխարհային / ԵՏՄ տնտեսությունը գտնվում է կայուն վիճակում, բնութագրվելով հաստատուն աշխատավարձի դրույքաչափով՝ մեկ միավոր արդյունավետ w_{world} աշխատանքի նկատմամբ, և կապիտալի օգտագործման համապատասխան ինտենսիվությամբ, որը նշանակվել է k_{world} :

Ընդհանուր դեպքում, կարելի է դիտարկել անցումային դինամիկան, որում կայուն վիճակում k_{world} ձգտում է $(k_{world})^*$ արժեքին: **Այդ դեպքում** i տնտեսության համար k_i փոփոխությունները կարող են բաժանվել երկու փուլի. *առաջինը,* անցում k_i դեպի k_{world} և, *երկրորդը՝ անցում* k_{world} դեպի $(k_{world})^*$:

Ջ. Բրաունը իր աշխատանքում աշխարհը դիտարկում է կազմված երկու i = 1, 2 ռեգիոններից: Ռեգիոնների միջև միգրացիան հնարավոր է, ու այդ դեպքում տեղափոխման ծախսերը սահմանվում են (12) արտահայտության միջոցով: Յուրաքանչյուր երկրի համար՝ մեկ արդյունավետ աշխատողի վերաբերյա, արտադրության աճի տեմպը կարող է հաշվարկվել հետևյալ ձև.

$$\frac{\dot{y}_i}{y_i} = -\beta \cdot \log \frac{y_i}{y_{world}} - \mu \cdot \log \frac{y_{world}}{(y_{world})^*}, \qquad (19)$$

որտեղ β տրված է (16), իսկ μ որոշվում է համաշխարհային տնտեսության Ռամսեի մոդելից: (19) արտահայտությունը թույլ է տալիս հաշվի առնել տարածքային արդյունքը, որը ենթադրում է երկրների միջև տարբերությունների հարթեցում, ինչպես նաև ժամանակային արդյունք, որը ենթադրում է համաշխարհային տնտեսության անցումը կայուն վիճակին: Եթե դիտարկվեն կոնկրետ ժամանակի դեպքում՝ տարածքային ցուցանիշները, ապա հարաբերական աճի տեմպը հակադարձ կախված է սկզբնական համեմատական վիճակից և կներառի β գործակիցը: Հակառակը, երբ դիտարկվում են ժամանակային տվյալները հարաբերակցված y_{world} գործակցին, ապա աճի տեմպը կնվազի $y_{world} / (y_{world})^*$ աճի հետ միասին և կներառի μ գործակիցը: Պանելային վերլուծության դեպքում յուրաքանչյուր տնտեսության աճի տեմպը կախված է $y_i / (y_{world})^*$ **և** $y_{world} / (y_{world})^*$ **, և նրա հաշվարկման բանաձևը ներառում է երկու** β և μ գործակիցները:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՄՍԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՈԴԵԼԻ ՄԻՋՈՑՈՎ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՌՈԲԵՐՏ ԱՐՄԵՆԻ ՔԱՄԱԼՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են միգրացիայի նկարագրումը Ռամսեի տնտեսական աճի և Բրաունի տնտեսական աճի և միգրացիայի մոդելներում, որոնցում միգրացիան արտացոլում է օպտիմալացման լուծումները՝ հարմարեցված Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակին և նրա ազգաբնակչության արտագաղթին: Միաժամանակ, դիտարկվում է Բրաունի մոդելի կիրառման հնարավորությունները, նկատի ունենալով, որ Հայաստանը անդամակցել է ԵԱՏՄ և գտնվում է ԵՄՀ գոտում:

Բանալի բառեր. *տնտեսական աճ, Ռամսեի մոդել, Բրաունի մոդել, Սոլոու-Սվանի մոդել, սոցիալ-տնտեսական քաղաքականություն, գործազրկություն, գաղթ, ներգաղթ, արտագաղթ, փոքր և միջին ձեռնարկատիրություն, արդյունաբերություն, մրցունակություն, գործարար միջավայր, Եվրասիական միգրացիոն համակարգ, Եվրասիական տնտեսական միություն:*

АНАЛИЗ МИГРАЦИОННЫХ ПРОЦЕССОВ ПОСРЕДСТВОМ МОДЕЛИ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА РАМСЕЯ (НА ПРИМЕРЕ РА)

РОБЕРТ АРМЕНОВИЧ КАМАЛЯН
аспирант кафедры экономико-математических методов
Армянского государственного экономического университета

Аннотация

В статье представлено описание миграции в модели экономического роста Рамсея и моделях экономического роста и миграции Брауна, в которых миграция отражает оптимизационные решения, адаптированные к социально-экономическому состоянию РА и процессам эмиграции его населения. Одновременно рассматривается возможность использования модели Брауна в Армении с учетом ее вхождения в Евразийский Экономический Союз и ее членства в зоне Евразийской Миграционной Системы.

Ключевые слова: *экономический рост, модель Рамсея, модель Брауна, модель Солоу-Свэна, социально-экономическая политика, безработица, миграция, иммиграция, эмиграция, малое и среднее предпринимательство, промышленность, конкурентоспособность, бизнес- среда, Евразийская миграционная система, Евразийский экономический союз.*

ANALYSIS OF MIGRATION PROCESSES BASED ON THE RAMSEY ECONOMIC GROWTH MODEL (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)

ROBERT ARMEN KAMALYAN
Ph.D. Student, Chair of Mathematical Methods in Economics
Armenian State University of Economics

Abstract

The article presents the migration processes based on the e Ramsey Growth Model, and Brown Economic Growth and Migration Model, where migration reflects optimization solutions adjusted to the socioeconomic reality of the Republic of Armenia and emigration of population. Meanwhile, the possible application of the Brown Model is discussed in the article upon Armenian's accession to the Eurasian Economic Union and the fact that Armenia is a part of the Eurasian Migration System.

Keywords: *Migration, Ramsey model, Brown model, Solow-Swan model, unemployment, social and economic policies, migration, immigration, small and medium-sized enterprises, industry, competition, business environment, Eurasian Migration System, Eurasian Economic Union.*

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԶԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գիտատեխնիկական տեղեկատվությունը հանդիսանում է այն կարևոր ռեսուրսներից մեկը, որի ճշգրիտ կիրառումը հանգեցնում է արտադրության ծախսերի նվազմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Տեղեկատվության և գիտական հիմնավորումների պակասը խոչընդոտում է արտադրության աճին, ուստի գիտատեխնիկական տեղեկատվական հոսքերն այսօր հանդիսանում են օբյեկտիվ անհրաժեշտություն, որոնց շնորհիվ արտադրության արդյունավետությունը, ծախսերի նվազեցումը, մրցունակության ապահովումը նպաստում են այս ոլորտի եկամուտների և բարեկեցության աճին:

Արտադրության զարգացման կարևոր հիմնախնդիրներից է ժամանակակից գիտելիքների, տեխնոլոգիաների արդյունավետ փոխանցումն արտադրական և վերամշակման գործընթացներին: Ներկայումս այդպիսի ծառայությունները, որոնց հիմնական նպատակը արտադրության արտադրանքի արդյունավետության բարձրացումն է, գործում են աշխարհի բազմաթիվ երկրներում և ծագելով անգլերեն Extension (էքստենշն) բառից այս ծառայությունների կառուցվածքային սկզբունքները ձևավորվել են դեռևս 20-րդ դարում, այն էլ Մեծ Բրիտանիայում:

Համաշխարհային փորձը վկայում է, որ տարիների ընթացքում ձևավորված տեղեկատվա-խորհրդատվական համակարգում մեծ դեր ունի պետությունը: Այսօր տարբեր երկրներում գործող այս համակարգերը կարելի է ստորաբաժանել ըստ կազմակերպչական ձևերի և ֆինանսական աղբյուրների ձևավորման սկզբունքների չորս խմբի.

- պետական խորհրդատվական ծառայություններ՝ ամբողջապես ֆինանսավորվող պետբյուջեի հաշվին: Այս ծառայությունները տրամադրվում են կազմակերպություններին անվճար և գործում են բազմաթիվ երկրներում, ներառյալ՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Շվեյցարիան, Բելգիան, Իտալիան, Իսպանիան և այլն,
- պետական խորհրդատվական համակարգեր, որոնք ֆինանսավորվում են մասամբ պետ բյուջեից, մասամբ ծառայությունների դիմաց ստացված հատկացումներից: Վերոնշյալները բնորոշ են Իռլանդիային, Մեծ Բրիտանիային, Շվեդիային,
- պետական ծառայություններ, որոնք ստեղծվելով պետության կողմից մեկ-երկու տարվա ընթացքում անցնում են կազմակերպությունների տնօրինմանը: Այս ծառայությունները նվազեցնելով պետության կողմից կատարվող ֆինանսավորումը, անցնում են ինքնաֆինանսավորման: Այս համակարգերը ֆինանսավորվում են ուղղակի ստացված միջոցներից և բնորոշ են Ֆրանսիային, Դանիային, Ֆինլանդիային[1]:

Ըստ կառավարման և կազմակերպական սկզբունքների միջազգային փորձի կարելի է տարանջատել, տեղեկատվա-խորհրդատվական համակարգը (ՏԽՀ), որը հանդես է գալիս կազ-

[1] www,arlis.am

մակերպությունների կառավարման մարմիններին կից և ֆինանսավորվում է ինչպես պետական, այնպես էլ այլ մասնագիտացված կազմակերպությունների կողմից,

- Համալսարանական տեղեկատվախորհրդատվական համակարգ ձևաչափով կազմակերպությունները առաջին անգամ ձևավորվել են Անգլիայում: Համալսարանում ձևավորված արտադրության վարման սկզբունքներն իրականացվում են ֆերմերային տեղամասերում, տեղական կառավարման մարմինների միջոցով: Նշված համալսարանական համակարգը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ պետ բյուջեի տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բյուջեներից, դոնորային հատկացումներից և առևտրային գործունեությունից:
- Խորհրդատվական կազմակերպություններ, որոնց միջոցով իրականացրած խորհրդատվությունը կատարվում է անվճար հիմունքներով և հիմնականում նպատակաուղղված է հումք մատակարարող ընկերություններին կամ սպառողներին:
- Մասնավոր խորհրդատվական ծառայություններ: Վերջիններովս պայմանավորված խորհրդատվական համակարգերը բավականաչափ մեծ զարգացում ունեն ողջ աշխարհում:
- Առևտրային հիմնադրամներ: Իրականացնելով տարբեր գիտական գործառույթներ՝ այս հիմնադրամները կարող են փոխարինել պետական այլ ծրագրերին: Այս համակարգը կարող է իրականացնել թե մարքեթինգային և թե արտադրական հարցերին վերաբերող խորհրդատվություն:

Անհերքելի է այն փաստը, որ արտադրությունն արդյունավետ կարելի է կազմակերպել միայն այն դեպքում, երբ այն գիտատար է և միաժամանակ գիտության ձեռքբերումները հաջողությամբ ու ժամանակին են ներդրվում արտադրության մեջ նպաստելով ինտեգրման գործընթացների բարելավմանը: Եվ այստեղ է, որ առաջանում է գիտության մեջ՝ ներդրման աշխատանքներին առաջնություն տալու հանգամանքը[1]: Պետք է նշել նաև այն իրողությունը, որ գիտատեխնիկական առաջընթացի իրականացումը պայմանավորված է նաև տնտեսական, տեխնիկական, ֆինանսական, կազմակերպական, հոգեբանական, լրատվական և այլ ոլորտների մի շարք մանրամասներով ու դժվարություններով[2]:

Շուկայական հարաբերություններում պայմաններում գիտական արտադրանքը մյուս արտադրանքների հետ հանդես է գալիս որպես ապրանք, իսկ արտադրական կազմակերպությունների արդյունավետությունը գնահատելու համար մեծ տարածում են գտել տեղեկատվական ծառայությունները և ըստ որոնց էլ փաստացի արտադրանքը հարբերվում է առավելագույն հնարավոր արտադրանքին առկա ռեսուրսների պայմաններում: Արդյունքում կազմակերպությունները ստանում են հետևյալ տեղեկատվությունը.

- գիտական տեղեկատվություն արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար,
- շուկայական տեղեկատվություն՝ պահանջարկի և առաջարկի հարաբերակցության մասին,
- տեղեկատվություն՝ վերջնական սպառողների վերաբերյալ,
- տեղեկատվություն առաջավոր փորձի վերաբերյալ:

Գիտատեխնիկական տեղեկատվությունը իրականացվում է մարքեթինգի և խորհրդատվատեղեկատվական համակարգերի միջոցով:

Մարքեթինգային միջոցառումներից յուրաքանչյուրի հաջող իրականացումը կարող է օժանդակել արտադրողի շահութաբեր գործունեությանը: Ուստի մարքեթինգի համակարգի արդյունավետ գործունեությունը յուրաքանչյուր տնտեսության համար հանդիսանում է առանցքային խնդիր, հատկապես շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, ինչպիսին կարևորվում է նաև Հայաստանի Հանրապետության համար: Միաժամանակ հասնելու համար, մարքեթինգային գործունեության զարգացումը հնարավորություն կտա յուրաքանչյուր կազմակերպությանը իրատեսորեն գնահատելու իր ներուժային հնարավորությունները:Վերջիններիս համահունչ էլ ապրանքների բարձր աստիճանի տարբերակումը նշանակում է, որ յուրաքանչյուր տեսակի գծով գոյություն ունի լայն ընտրությամբ մեծ քանակի սորտային ապրանքներ՝ տարբեր որակական

[1] www,arlis.am
[2] Мильер Б. – Управление знаниями в современной экономике. Москва, ПТИПУ N9, 2006г.

հատկանիշներով: Բայց որքան մեծ է սպառողի աչքերով ապրանքների փոխարինելիությունը, այնքան մեծ է մրցակցությունն այդ ապրանքների միջև և ցածր՝ գնային առավելության հնարավորությունները:

Մարքեթինգային հետազոտությունների կառավարման կարևոր խնդիրներից մեկն էլ հանդիսանում է հավաքագրված տեղեկատվության մշակման և մեթոդաբանական ընտրության խնդիրները: Ընդ որում՝ մարքեթինգային հավաստի և բազմաբնույթ տեղեկությունների ստացումը և օգտագործումը կազմակերպությանը կտա հետևյալ գործնական առավելությունները.

- նվազագույնի հասցնել ֆինանսական ռիսկերը,
- պարզել սպառողների կարծիքը, նախասիրություններն ու ճաշակը,
- հետևել արտաքին միջավայրի փոփոխություններին՝ պարզելու մրցակիցների մտադրությունները և ժամանակին կանխելու հնարավոր անցանկալի հետևանքները,
- բարձրացնել վստահությունը գովազդի հանդեպ՝ ճշմարտացի տեղեկատվություն հաղորդելով արտադրանքի վերաբերյալ,
- գնահատել գործունեության արդյունքները:

Այսպիսով, կազմակերպության համար սպառողական ապրանքների շուկայում գործելու, արտաքին շուկա ներթափանցելու հզոր տնտեսական լծակ է մարքեթինգը: Այն որպես գործունեություն, ուղղված է պահանջարկի բավարարմանը: Տվյալ հիմնախնդրի իրականացման ամբողջ գործընթացի ելակետը պահանջմունքների և պահանջարկի ուսումնասիրությունն է: Դրա հետ մեկտեղ պետք է նկատի ունենալ, որ մարքեթինգի գործառույթների ամբողջ համակարգում գործունեության յուրաքանչյուր բնագավառ իր էական ազդեցությունն ունի վերջնական արդյունքի վրա:

Շուկայական տեղեկատվական համակարգերը նպատակաուղղված են խթանելու և ավելի թափանցիկ դարձնելու շուկայական վարման գործառույթները: Այս համակարգերը նպաստում են հումքի և վերջնական արտադրանքի գնային հետազոտությունների իրականացմանն ու առևտրի ծավալների մոնիթորինգին, իսկ տեղեկատվությունն էլ հավաքագրվում է մեծածախ կամ մանրածախ առևտրով զբաղվողներից ու շատ հաճախ լուսաբանվում է ԶԼՄ-ների կողմից:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոնշյալները, պետք է նշել, որ Հայաստանում նույնպես ագրարային բարեփոխումների արդյունքում ձևավորված գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության մատուցելու նպատակով 1993թ. ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի օժանդակությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմում ստեղծվել են «Ագրոգիտասփյուռ» ծառայությունը: Այնուհետև բոլոր մարզերում ձևավորվեցին խորհրդատվական գործակալություններ, որոնց աջակցում են «Ագրոգիտասփյուռ» ծառայության մասնագետները և գիտահետազոտական ինստիտուտի ու բարձրագույն ուսումնական հաստատության գիտնականները և դասախոսները:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ բոլոր մարզերում ստեղծվեցին գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններ՝ ԳԱՄԿ-եր:

Այդ ընկերությունները գյուղացիական տնտեսություններին մատուցում են մասնագիտական խորհրդատվություն, տեղեկատվություն, սեմինարների և ուսուցումների կազմակերպում, գիտության նվաճումների, նոր տեխնոլոգիաների, համաշխարհային փորձի ներդրում և տեղայնացում, գյուղատնտեսական մթերքների իրացման նպատակով շուկաների հետազոտում, մարքեթինգային տեղեկատվության ապահովում, ուսուցողական և դաշտային ցուցադրական պարապմունքների անցկացում, լրատվության կազմակերպում և այլն:

ԳԱՀԿ-ը, ԳԱՄԿ-երի և ագրարային ոլորտի գիտնականների մասնակցությամբ գյուղացիական տնտեսություններում իրականացվել է մասնակցողական բնույթի ավելի քան 1018 տեխնոլոգիա՝ ուղղորդվելով գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների կողմից առաջնային կարիքների բացահայտման նպատակով կազմակերպված հարցումներով և ուսումնասիրություններով:

Հանրապետության մարզերի 914 համայնքներում անց են կացվում խորհրդատվական ծառայություններ:

ԳԱՀԿ-երը և ԳԱՄԿ-երը հաջողությամբ համագործակցում են միջազգային մի շարք կազմակերպությունների / ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտ (ԳԴ) ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության, (USAD), CARD, UMCOR և այլ հետ:

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով աշխատանքներ են իրականացվել Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման, Հայաստանյան և արտասահմանյան ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման, գործարար համագործակցության հիմնապաշարի համալրման, ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման ու համագործակցության ընդլայնման և տեղեկատվության փոխանակման ու այլ ուղղություններով[1]:

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ապահովման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել ԵԱՏՄ շրջանակներում Եվրասիական տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման ուղղությամբ:

Շարունակվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնությունների իրականացումը:

ՀՀ-ում ներկայումս հաջողությամբ գործում են «Այբիէմ» նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը, «Մագիրոսոիտ» ինովացիոն կենտրոնը, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, mlob ECA մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիան, Հայկական ազգային-ճարտարագիտական լաբորատորիան: Հաջողությամբ շարունակում է գործել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որում տեղակայված են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: 2015թ. ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 150 մլն դրամից փաստացի ֆինանսավորվել է 132 մլն. դրամ: Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հաջողված մոդելի շնորհիվ աշխատանքներ են իրականացվում Վանաձորում համանման տեխնոլոգիական կենտրոնի հիմնական ուղղությամբ[2]:

Հաշվի առնելով ժամանակակից գիտատեխնիկական տեղեկատվության կարևորությունը արտադրական գործընթացների կայունացման և զարգացման գործում, անհրաժեշտ է.

- ստեղծել կազմակերպչական կառույցներ, որոնք կապահովեն ինտեգրման գործընթացը գիտության, կրթության և վերամշակող արդյունաբերության ոլորտներում:
- Վերամշակող արդյունաբերության արտադրական գործընթացներն օգտագործել առաջադեմ գիտական և տեխնոլոգիական զարգացումները՝ հաշվի առնելով մրցակցային առավելությունները:
- ՀՀ Կառավարությունը միջազգային փորձին համահունչ ձևավորի այնպիսի խթան համակարգ, որը կնպաստի նորարարության, արդիականացման և այլ տեխնոլոգիաների ներդրման գործընթացներին:
- Վարել հավասարակշռված քաղաքականություն՝ կապված առանձին տրամադրվող ֆինանսական և նյութական ռեսուրսների հետ, որոնք հնարավորություն կտան պահպանելու և ապահովելու համակողմանի փոխկապվածություն վերամշակող արդյունաբերության արտադրական գործընթացների միջև:

[1] ՓՄՁ ԶԱԿ հաշվետվություն 2014-2015թթ.

[2] ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, հաշվետվություն 2015թ.

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՐԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱԶԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻ ԱԼՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Գիտատեխնիկական տեղեկատվությունը նպաստում է արտադրության ծախսերի նվազմանն ու արդյունավետության բարձրացմանը: Գիտության մեջ ներդրման աշխատանքները իրականացվում են մարքեթինգի և խորհրդատվական-տեղեկատվական համակարգերի միջոցով: Նրանցից յուրաքանչյուրի հաջող իրականացումը կարող է օժանդակել արտադրողի շահութաբեր գործունեությանը: Ոլորտի զարգացման ապահովման գործում կարևոր է պետական և մասնավոր հատվածների մասնակցությամբ դրամաշնորհային ծրագրերի իրականացումը,ինչպես նաև ստեղծելու խթանների համակարգ նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

Բանալի բառեր. *գիտատեխնիկական, տեղեկատվություն, մարքեթինգ, խորհրդատվություն, արտադրություն, ծրագրեր, աջակցություն:*

РОЛЬ РЕАЛИЗАЦИИ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ В СТАБИЛИЗАЦИ И РАЗВИТИИ ПРОИЗВОДСТВА

ЛИАНА САМВЕЛОВНА АЗАТЯН
научный сотрудник Института экономики им.М. Котаняна НАН РА

РУЗАННА СТЕПАНОВНА АЛОЯН
младший научный сотрудник Института экономики им.М. Котаняна НАН РА

Аннотация

Научно-техническая информация способствует снижению затрат на производство и повышению производительности труда. Работы по ее внедрению в производство совершаются с помощью маркетинговой информационной и консультационно – информационной систем. Успешное осуществление каждой из них может способствовать прибыльной деятельности производителя. В деле обеспечения развития сферы важным является осуществление грантовых программ с участием государственных и частных секторов, а также создание стимулирующей системы внедрения новых технологий.

Ключевые слова: *научно-технический, информация, маркетинг, консультация, производство, программы, содействие.*

THE ROLE OF SCIENTIFIC AND TECHNICAL INFORMATION IN STABILIZING AND DEVELOPING THE PRODUCTION

LIANNA SAMVEL AZATYAN
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

RUZANNA STEPAN ALOYAN
Junior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Scientific and technical information helps reduce production costs the increase efficiency. In science, marketing and consulting-information systems help introduce it. The Successful implementation of each of them may contribute to the increase in profitability of producers. Implementation of grant projectsin the framework of private-public partnership, and the system of incentives to introduce new technology are crucial in ensuring the development of the sector.

Keywords: *Scientific and technical, information, marketing, consulting, production, projects, assistance.*

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ԵՎԳԵՆՅԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Պետական կառավարման մարմինների ձևավորմանը զուգընթաց ձևավորվեց մի նոր տնտեսական երևույթ, որը հայտնի է որպես ստվերային տնտեսություն: Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության, որպես երևույթի, բազմաթիվ սահմանումներ և անվանումներ: Տնտեսագետների կողմից օգտագործվել են այնպիսի անվանումներ, ինչպիսիք են «ստվերային», «թաքնված», «գորշ», «ոչ ֆորմալ», «անկանոն», «ոչ պաշտոնական», «անօրինական», «չգրանցված», «չհայտարարագրված», «ընդհատակյա», «մոխրագույն» և այլն, բնութագրելու համար տնտեսության այս հատվածները:

1980 թվականին ամերիկացի տնտեսագետ Վիտո Թանզին ստվերային տնտեսությունը սահմանել է, որպես տնտեսության այն հատվածը, որտեղ «ստեղծված եկամուտը հարկային մարմիններում չի հայտարարագրվում կամ հայտարարագրվում է մասամբ»[1]: Ազգային հաշիվների տեսանկյունից ստվերային տնտեսությունը դա տնտեսության այն հատվածն է, որտեղ ստեղծված եկամուտը չի արտահայտվում պաշտոնական վիճակագրության մեջ: Համաձայն Ֆ. Սմիթի (1994) սահմանման այս ոլորտը ներկայացվում է որպես «շուկայական հիմունքով ապրանքների և ծառայությունների օրինական կամ անօրինական արտադրություն, որը դուրս է մնում ՀՆԱ-ի պաշտոնական գնահատման մեջ արտացոլումից»[2]: Դ. Գիլսը և Լ. Տեդդեսը ստվերային տնտեսությունը սահմանում են որպես «տնտեսական գործունեություն, որը չի գրանցվում ազգային հաշիվներում և դուրս է մնում հարկային բազայից»[3]: Համաձայն է. Ֆեյջի պաշտոնական տնտեսական գործունեության և ստվերային տնտեսական գործունեության միջև հիմնական տարբերություն պայմանավորված է նրանով, թե որքանով է գործունեությունը ենթարկվում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոններին: Այսպես, եթե գործունեությունը ծավալվում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոնների համապատասխան, ապա այսպիսի գործունեություն ծավալող սուբյեկտը համարվում է պաշտոնական տնտեսության մասնակից: Իսկ այն դեպքում, երբ սուբյեկտն ամեն կերպ հակադրում և խուսափում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրից, ապա դա ենթադրում է մասնակցություն ստվերային տնտեսությանը[4]:

Այժմ անդրադառնանք ստվերային տնտեսության ձևավորման ու զարգացման պատճառներից մի քանիսին: Առաջին և հիմնական պատճառը հարկային բեռն է: Այլ հավասար պայմաններում հարկային դրույքաչափերի ավելացումը բերում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտներն ամեն կերպ ձգտում են խուսափել լրացուցիչ հարկային պարտավորություններից և մասնակի կամ ամբողջությամբ անցում են կատարում ստվերային ոլորտ: Հաջորդ պատճառը պետական վերահսկողության աճն է, որն ուղեկցվում է ոլորտը կարգավորող օրենքների և սահմանափակումների ավելացմամբ: Վերահսկողության աճը բերում է տնտեսվարող սուբյեկտի գործարքային ծախսերի ավելացմանը, որն էլ պատճառ է հանդիսանում, որ նա էլ ավելի շատ ջանքեր ներդնի իր գործունեությունը ստվերային ոլորտ տեղափոխելու համար: Մեկ այլ գործոն է

[1] Tanzi V. " The Underground Economy in the United States: Estimates and Implications." //Banka Nazionale del Lavaro, Quarterly Reviev//. 1980, p.428.
[2] Smith Ph. "Assessing the size of the underground economy. The Canadian Statistical Perspectives", //Canadian Economic Observer, Catalogu. No: 11-010, 3.18 March, p.17.
[3] Gilles David E. A., Tedds Lindsay M. (2002) Taxes and the Canadian Underground Economy. Canadian Tax paper n.106. Canadian Tax Foundaffon, Toronto, p.4.
[4] Feige Edgard L. (1990). Defining and Estimating Underground and Informal Economics: The New Institutional Economic Approach. World Develepment, 18, no. 7, p. 993.

սոցիալական պայմանները և աշխատանքի շուկայում պետական կարգավորման անհամապատասխան աճը, որը դրսևորվում է պաշտոնական աշխատանքային օրվա տևողության կրճատմամբ, որն էլ իր հերթին լրացուցիչ խթան է ստեղծում թաքնված զբաղվածության ծավալների աճի համար: Ըստ Քյոլնի համալսարանի տնտեսագետ Դոմինիկ Էնստի ստվերային տնտեսության աճին նպաստող մյուս հիմնական գործոններն են.

- պաշտոնական ինստիտուտների իրազեկվածության և դրանց նկատմամբ վստահության խիստ սահմանափակությունը,
- պետական կառավարման մարմինների անարդյունավետությունը և կոռումպացվածությունը,
- սեփականության իրավունքի պաշտպանության երաշխավորված չլինելը,
- ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար պահանջվող մեծ ծախքերը և վարչական խոչընդոտները,
- ստվերային տնտեսությունում գործունեություն ծավալելու համար պատասխանատվության ենթարկվելու փոքր հավանականությունը:

Այժմ տեսնենք թե ինչպիսի հետևանքների է բերում ստվերային տնտեսության առկայությունը այս կամ այն երկրում: Նախ նշենք, որ ստվերային տնտեսության առկայությունը խախտում է գոյություն ունեցող հավասարությունը, այսինքն՝ հանգեցնում է սոցիալական անհավասարության: Սա տեղի է ունենում հետևյալ կերպ. ստվերային ոլորտը դուրս մնալով պաշտոնական վերահսկողության դաշտից իրականացնում է այպիսի գործունեություն, որը չի համապատասխանում աշխատանքային օրենսդրությունը, հարկային օրենսդրությունը, որակի վերահսկման հետ կապված իրավական նորմերը և այլն: Այս ամենը բերում է նրան, որ աշխատողը չի օգտվում այն բարիքներից, որոնք օրենքով սահմանված են նրա համար, պետական բյուջեն չի ստանում այն եկամուտները, որոնք հնարավորություն կտային պետությանն իրականացնել արդյունավետ սոցիալտնտեսական քաղաքականություն և մատուցել համապատասխան քանակի և որակի հասարակական ծառայություններ: Արդյունքում աճում է սոցիալական բևեռվածության աստիճանը, որն էլ հանգեցնում է պետական ինստիտուտների նկատմամբ վստահության նվազեցման: Ստվերային տնտեսության հաջորդ հետևանքը մրցակցության խախտումն է: Ձեռնարկությունը, որը գործունեություն է ծավալում պաշտոնական տնտեսությունում, չի կարող արդյունավետ մրցակցել ստվերային ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկության հետ, քանի որ այն չվճարելով հարկեր և տուրքեր պետությանը, բացարձակ մրցակցային առավելություն է ձեռք բերում՝ դրանով իսկ ոչնչացնելով գոյություն ունեցող մրցակցային հարաբերությունները: Մեծ ծավալի ստվերային տնտեսության առկայության պատճառով աղավաղվում է տվյալ երկրի ազգային վիճակագրությունը, որն էլ սխալ ազդակներ է տալիս պաշտոնական և ոչ պաշտոնական մարմիններին գոյություն ունեցող իրական վիճակի վերաբերյալ:

Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ ստվերային տնտեսությունը բացասական ազդեցություն ունի ազգային տնտեսության վրա, չնայած դրան կա նաև տեսակետ, որ տնտեսության զարգացման որոշակի փուլում այն լուծում է մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ[1]: Օրինակ, անցումային փուլի սկզբում հասարակության որոշակի խմբի ապահովում է աշխատանքով, որն էլ փոքր-ինչ թեթևացնում է առկա սոցիալական լարվածությունը:

Այժմ անդրադառնանք ստվերային տնտեսության կառուցվածքին և դրանց հետևանքներին: Գոյություն ունեն ստվերային տնտեսության դասակարգման տարբեր մոտեցումներ: Դասակարգումներց մեկի հիմքում դրված է այն, թե որքանով է ստվերային տնտեսական գործունեության այդ տեսակը կապված «առաջնային» («սպիտակ», պաշտոնական) տնտեսության հետ: Ըստ այդմ էլ տարբերակվում են ստվերային տնտեսության հետևյալ 3 տեսակները[2]՝

1. «երկրորդային» («սպիտակօձիքավոր») ստվերային տնտեսություն,
2. «գորշ» («ոչ ֆորմալ») ստվերային տնտեսություն,
3. «սև» («ընդհատակյա») ստվերային տնտեսություն:

[1] Enste D. and Schneider F. “Increasing Shadow Economies all over the world-Fiction or Reality?” DiscussionPaperNo 26. IZA, Desember 1998, pp. 26-27.

[2] Латов Ю. В., Ковалев С. Н., Теневая экономика: Учебное пособие для вузов М. : Норма, 2006. с. 14-16.

Առավել մանրամասն կանդրադառնանք երկրորդային «երկրորդային» ստվերային տնտեսությանը: Վերջինս հադես է գալիս որպես օրենքով արգելված այն գաղտնի տնտեսական գործունեությունը, որն իրականացվում է «սպիտակ» տնտեսական աշխատողների կողմից նրանց աշխատանքային վայրում, որը բերում է նախապես ստեղծված ազգային եկամտի գաղտնի վերաբաշխմանը: Քանի որ այս գործունեությամբ հիմնականում զբաղվում են բարձրաստիճան մարդիկ, որոնք հանդիսանում են ղեկավարներ, ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային հատվածում, այդ իսկ պատճառով ստվերային տնտեսության այս ձևը նաև անվանում են «սպիտակօձիքավոր»: Հասարակության տեսանկյունից ստվերային տնտեսության այս հատվածում որևէ նոր ապրանք կամ ծառայություն չի արտադրվում: «Երկրորդային» ստվերային տնտեսությունում մեկ անձի կողմից այս կամ այն բնույթի օգուտի ստացումը ուղեկցվում է մյուսի կորստով: Ըստ ամերիկացի քրեագետ Էդվին Սադեռլենդրի՝ գաղտնի հակաօրինական գործունեությունը փաստացի համարվում է «մեծ բիզնեսի» անբաժան մասը: Այս դեպքում այս ֆիրմաները հանդիսանում են որպես «կատարյալ հանցագործներ»[1]: Այժմ «երկրորդային» ստվերային տնտեսության ընդհանուր մեկնաբանությունից անցում կատարենք դրա առավել կարևոր տարատեսակներին, որոնք են կոռուպցիան և հարկերից խուսափումը[2]: Առավել խորությամբ անդրադառնանք երկրորդ բաղադրիչին:

Հարկերից խուսափումն իրենից ներկայացնում է այն գործողությունների ամբողջությունը, որն իրականացվում է առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, և որոնց նպատակ է նվազագույնի հասցնել կամ ամբողջությամբ չկատարել գոյություն ունեցող հարկային պարտավորությունները: Իրավական տեսանկյունից հարկերից խուսափումը կարող է լինել օրինական կամ անօրինական: Օրինական գործողություններին է պատկանում հարկերից ազատումը, օրինակ՝ հարկային արտոնությունների միջոցով: Ինչ վերաբերում է անօրինական միջոցներին, ապա պետք է նշել, որ սրանց թվին են դասվում անօրինական գործունեությունը և օրինական գործունեության թաքցնումը: Ընդհանրապես հարկերից խուսափելու նպատակով իրավաբանական և ֆիզիկական անձինք մշակում և իրագործում են առանձին միջոցառումներ: Ըստ այդմ՝ տարբերակվում են հարկերից խուսափելու երեք հիմնական ռազմավարություններ (գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Հարկերից խուսափման ռազմավարությունները



Առաջին ռազմավարությունը կապված է անօրինական գործունեություն իրականացնելու հետ: Այն իրագործվում է այն ժամանակ, երբ տնտեսավարող սուբյեկտը չի գրանցում իր օրինական գործունեությունը՝ դրանով իսկ դուրս մնալով հարկային հաշվառումից:

Երկրորդ ռազմավարությունը հարկերի վճարումից ազատումն է, որը դրսևորվում է երեք հիմնական սխեմաներով՝

1. հարկային արտոնություններ,
2. չվճարումներ,
3. քաղաքական առևտուր:

Հարկային արտոնությունների միջոցով հարկերի վճարումից ազատումը տեղի է ունենում օրենքով սահմանված կարգով: Սա ենթադրում է, կամ հարկերից իսպառ ազատում, որը տեղի է

[1] Тимофеев Л. М. Унституциональная коррупцуя. М.: ПГГУ. 2000, с. 11.
[2] Лазовцкий В., О сущности, стуктуре и субектах “теневой экономики” // Экономические науки. 1990. N8.

ունենում օֆշորային գոտիներում, կամ էլ հարկային պարտավորությունների մեղմացում այս կամ այն դեպքերում: Օրինակ, գրեթե բոլոր երկրներում՝ այդ թվում նաև ՀՀ-ում հարկային արտոնություններ են նախատեսվում այն ձեռնարկությունների համար, որտեղ զբաղվածների գերակշռող մասը հաշմանդամներ են:

Հարկերից խուսափման հաջորդ ռազմավարությունը, որն իր տարբեր դրսևորումներով համարվում է հարկերից խուսափման ամենատարածված ռազմավարությունը, լեգալ գործունեության արդյունքների ծածկումն է: Այս ռազմավարության առաջին մեթոդը կոռուպցիոն գործարքների միջոցով հարկերից խուսափումն է:

Հաջորդ մեթոդն ինստիտուցիոնալ «ֆիկցիան» է, որը ենթադրում է թղթի վրա կամ շատ կարճ ժամանակում գործունեություն ծավալող ֆինասական և ոչ ֆինասական բնույթի ընկերությունների ստեղծման միջոցով կեղծ գործարքների իրականացում, որն էլ հնարավորություն է տալիս իրականացնել ձևական բնույթի գործարք և այն պահին, երբ գալիս է հաշվետվություններ տալու ժամանակը այդ ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը և անհետանում ֆինանսական մարմինների տեսադաշտից: Այլ կերպ ասած նա խուսափում է հարկերի վճարումներից:

Այսպիսով, ամփոփելով «երկրորդային» ստվերային տնտեսական գործունեության տեսական և գործնական հիմքերի մեկնաբանումը, գալիս ենք այն եզրահանգման, որ սա իր տարբեր դրսևորումներով ունի հակաօրինական և հակաիրավական բնույթ, բացասական ազդեցություն է ունենում արդարացի և արդյունավետ սոցիալ-տնտեսական համակարգի ձևավորման և զարգացման վրա:

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԵՎԳԵՆՅԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Այսպիսով, ամփոփելով «երկրորդային» ստվերային տնտեսական գործունեության տեսական և գործնական հիմքերի մեկնաբանումը, գալիս ենք այն եզրահանգման, որ սա իր տարբեր դրսևորումներով ունի հակաօրինական և հակաիրավական բնույթ և բացասական ազդեցություն է ունենում արդարացի և արդյունավետ սոցիալ-տնտեսական համակարգի ձևավորման և զարգացման վրա:

Բանալի բառեր. *Ստվերային տնտեսություն, հարկերի վճարում, անօրինական տնտեսություն, ֆորմալ տնտեսություն, տնտեսական գործունեություն, հարկերի վճարումից խուսափում, սոցիալական անհավասարություն, տնտեսական քաղաքականություն, հարկ վճարողներ:*

О ТЕОРЕТИЧЕСКИХ ВОПРОСАХ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ

КРИСТИНА ЮРЬЕВНА БАГДАСАРЯН, *к.э.н.*
старший научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

ЕВГЕНИЯ АРТАШЕСОВНА АКОПЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им.М.Котаняна НАН РА

Аннотация

Подводя итоги изучения проблемы интерпретации теоретических и практических основ «вторичной» теневой экономической деятельности, авторы приходят к выводу, что эта деятельность в своих различных проявлениях носит противозаконный и противоправный характер, оказывая негативное влияние на формирование и развитие справедливой и эффективной социально-экономической системы.

Ключевые слова: *теневая экономика, налоговые платежи, незаконная экономика, формальная экономика, экономическая деятельность, уклонение от уплаты налогов, социальное неравенство, экономическая политика, налогоплательщики страны.*

ON THEORETICAL ISSUES OF THE SHADOW ECONOMY

KRISTINE YURI BAGHDASARYAN, *Ph.D. in Economics*
Senior Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

YEVGENYA ARTASHES HAKOBYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

Thus, summing up the interpretation of the theoretical and the practical basis for the “secondary” shadow economic activities, we arrive at a conclusion that it has a variety of performances. It turns out that the mentioned activities are of an unlawful and illegal character and negatively impact the shaping and the development of fair and efficient socio-economic system.

Keywords: *Shadow economy, tax payments, illegal economy, informal economy, economic activity, tax evasion, social inequality, economic policy, tax payers.*

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ստվերային տնտեսության գնահատման մեթոդներից մեկը Գուտմանի մեթոդն է, որի հաշվարկման համար հիմք են ծառայում շրջանառության մեջ առկա կանխիկ փողի(C) և ցպահանջ դեպոզիտների(D) հարաբերության վրա: Մեթոդը մաթեմատիկորեն ներկայացվում է հետևյալ կերպ[1].

$$C = C_{ս} + C_{պ} \quad (1)$$
$$D = D_{ս} + D_{պ} \quad (2)$$
$$R_{պ} = C_{պ} / D_{պ} \quad (3)$$
$$R_{ս} = C_{ս} / D_{ս} \quad (4)$$
$$V_{պ} = Y_{պ} / (C_{պ} + D_{պ}) \quad (5)$$
$$V_{ս} = Y_{ս} / (C_{ս} + D_{ս}) \quad (6)$$
$$\lambda = V_{պ} / V_{ս} \quad (7)$$

որտեղ.

$Y_{ս}$-ն՝ ստվերային տնտեսությունում ստեղծված եկամտի մեծությունն է,
$Y_{պ}$-ն՝ տնտեսության պաշտոնական հատվածում ստեղծված եկամտի մեծությունն է,
$C_{պ}$-ն՝ տնտեսության պաշտոնական հատվածում շրջանառվող կանխիկ դրամի ծավալն է,
$C_{ս}$-ն՝ տնտեսության ստվերային հատվածում շրջանառվող կանխիկ դրամի ծավալն է,
C-ն՝ շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի ամբողջ ծավալն է,
D-ն՝ ցպահանջ դեպոզիտների ծավալն է,
$D_{պ}$-ն՝ տնտեսության պաշտոնական հատվածում օգտագործվող ցպահանջ դեպոզիտների ծավալն է,
$D_{ս}$-ն՝ տնտեսության ստվերային հատվածում օգտագործվող ցպահանջ դեպոզիտների ծավալն է,
$R_{պ}$-ն՝ տնտեսության պաշտոնական հատվածի C/D հարաբերակցության գործակիցն է,
$R_{ս}$-ն՝ տնտեսության ստվերային հատվածի C/D հարաբերակցության գործակիցն է,
$V_{պ}$-ն՝ տնտեսության պաշտոնական հատվածում փողի շրջապտույտի արագությունն է,
$V_{ս}$-ն՝ տնտեսության ստվերային հատվածում փողի շրջապտույտի արագությունն է,
λ-ն՝ տնտեսության պաշտոնական և ստվերային հատվածներում փողի շրջապտույտի արագությունների հարաբերակցությունն է:

(1)-ից (7) հավասարություններից ստացվում է (8)-ը.

$$Y_{ս} = Y_{պ} ((C - R_{պ} D) / (R_{պ}+1)D) \quad (8)$$

Մոդելի շրջանակներում կատարվում են հետևյալ հինգ ենթադրությունները.

1. Հայաստանի ստվերային տնտեսությունում որպես վճարամիջոց օգտագործվում է միայն կանխիկ դրամը, հետևաբար ստվերային հատվածի մեծացման հետ միասին մեծանում է նաև կանխիկի նկատմամբ պահանջարկը:
2. Հայաստանի տնտեսության պաշտոնական և ստվերային հատվածներում փողի շրջապտույտների արագությունները նույնն են, հետևաբար λ=1:
3. Հայաստանում C/D հարաբերակցությունը կայուն ցուցանիշ է՝ տնտեսության զարգացման հետ զուգահեռ համաչափորեն են մեծանում C-ն և D-ն և ժամանակի ընթացքում դրա փոփո-

[1] Բ. Թունյան, Ստվերային տնտեսության ազդեցությունը տնտեսական համակարգի վրա, «էկոնոմիկա» տեսական և գիտագործնական հանդես, Եր.,2000թ.

խությունը վերագրվում է ստվերային տնտեսության ծավալների փոփոխությանը:Սա նշանակում է, որ $R_{պ}$-ն հաստատուն ցուցանիշ է:

4. Որևէ ժամանակահատվածում տնտեսությունում ստվերայնությունը հավասար է 0-ի կամ գոնե մոտ է և դրա հետ պայմանավորված C/D հարաբերակցությունը ընդունում է մինիմում կամ նորմալ արժեք: Մեր դեպքում դա 1994թ. փետրվարն է[1]:
5. Ստվերային տնտեսության հիմնական պատճառը հարկերի և եկամուտների հավաքագրման ոլորտում պետության կոշտ և չհաշվեկշռված քաղաքականությունն է, ինչպես նաև վարչարարության անարդյունավետությունը:

ՀՀ-ում որպես բազիսային ժամանակահատված ընտրված է 1994թ. փետրվարը և այստեղ $R_{պ} = 0.847$: Ներկայացնենք Հայաստանում 2008-2014թթ. կանխիկ և ցպահանջ դեպոզիտների հարաբերակցությունը ներկայացնող գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1

2008-2014թթ. C/D հարաբերակցությունը ՀՀ-ում



$R_{պ} = 0.847$ նորմալ ցուցանիշ է, այսինքն $R_{պ} = R$-ին և ժամանակի ընթացքում C/D հարաբերակցության իր նորմալ ցուցանիշից շեղումը բնութագրում է ստվերային տնտեսության մեծացումը, մասնավորապես՝ ժամանակի ընթացքում տնտեսության թաքնված հատվածում կանխիկ դրամի պահանջարկի մեծացմամբ: Այսինքն

$$R_{նորմալ} = R_{պ(1994,\ փետրվար)} = (C_{պ}/D_{պ})_{(1994,\ փետրվար)} = (C/D)_{(1994,\ փետրվար)} \qquad (9)$$

$$R_{նորմալ}=0.847$$

$\lambda=1$ պայմանը հնարավորություն է տալիս մեզ տնտեսության պաշտոնական և ստվերային հատվածներում կանխիկի շրջապտույտի արագությունը նույնացնել: Այս ենթադրությունից հետո հաշվարկենք Հայաստանի ստվերային տնտեսության ծավալը: Ունենալով յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված $R_{պ}$-ն, հենվելով (9)-ի վրա հաշվարկենք C/D-ի ժամանակի ընթացքում փաստացի ընդունած արժեքների և նորմալ ցուցանիշի տարբերությունը, որը բազմապատկելով համապատասխան ամսվա ցպահանջ դեպոզիտի փաստացի ցուցանիշով,ամսվա համար ստանում ենք ստվերային տնտեսությունում անօրինական շրջանառվող կանխիկ փողի ծավալը: Քանի որ մեր կողմից ենթադրել ենք, որ $\lambda=1$-ի, հետևաբար՝ հաշվարկելով տնտեսության պաշտոնական հատվածում կանխիկ փողի շրջանառության արագությունը՝ որ-

[1] Ցուցանիշը վերցված է Բ. Թունյանի կատարած վերլուծությունից, ով վերլուծել է 1994-2000թթ. և այդ ժամանակահատվածի համար ստացել է նվազագույն ցուցանիշը $R_{պ} = 0.847$:

պես անվանական ՀՆԱ-ի հարաբերությունը դրամական M1[1] ագրեգատի վրա, կանխիկ փողի շրջապտույտի այդ ցուցանիշը բազմապատկում ենք անօրինական կանխիկ փողի ծավալի ցուցանիշով և ստանում տնտեսության ստվերային մեծության գնահատականը յուրաքանչյուր ամսվա համար: Սա բանաձևային տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

$$R_{\text{Տարբերություն}t} = R_{\text{փաստացի}t} - R_{\text{նորմալ}}$$

$$R_{\text{Տարբերություն}t} * D_t = M_{\text{Անօրինական}t}$$

$$M_{\text{Անօրինական}t} * V_{\text{պ}} = Y_{Ut}$$

որտեղ՝

$V_{\text{պ}}$ = ՀՆԱ / M1, t-ամիսներն են

Գծապատկեր 2-ում պատկերված է Հայաստանում 2008-2014թթ. ստվերային տնտեսության ծավալների փոփոխության դինամիկան ըստ ամիսների.

Գծապատկեր 2

ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների փոփոխության դինամիկան ըստ ամիսների



Հայաստանում, ինչպես երևում է, ստվերային տնտեսության ծավալները մեծանում են հատկապես դեկտեմբեր-հունվար ամիսներին, սա պայմանավորված է նրանով,որ ծախսերի կատարման ամենաակտիվ ժամանակահատվածն է: ՀՀ-ում ստվերային տնտեսության ամսական տվյալները կարելի է միջինացնել և ստանալ տարեկան գնահատականը, որը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2008-2014թթ. ՀՀ ստվերային տնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
$US_{\text{ծավալ/\%-ային/}}$	49.99	50.3	48.56	44.42	42.1	40.81	33.26

2008-2009թթ. բարձր ստվերային տնտեսությունը պայմանավորված է ֆինանսատնտեսական ճգնաժամով, իսկ արդեն հետագա տարիներին սկսում է նվազել, որը պայմանավորված է ստվերային տնտեսության դեմ պայքարի միջոցառումներով: Դիտարկվող ժամանակահատվածում

[1] M1-ը հաշվարկվում է որպես կանխիկ դրամական միջոցների և ցպահանջ դեպոզիտների հանրագումար, տվյալները վերցված են http://www.cba.am/

ստվերային ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2009թ. հունվարին՝ 54.53 %, իսկ ամենացածր մակարդակը գրանցվել է 2014թ. հոկտեմբերին՝ 32.39 %:

Գծապատկեր 3

2008-2014թթ ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալները



Այժմ դիտարկենք ստվերային տնտեսության գնահատումն հարկային բեռի տեսանկյունից:

Գերմանացի գիտնականները հարկը դիտարկում են որպես օգնություն, որը քաղաքացիները տրամադրում էին պետությանը, Անգլիայում հարկը դեռևս կրում է պարտավորություն, պարտք անվանումը, Ֆրանսիայում հարկային հարաբերությունները սահմանող օրենսդրությունը հարկը սահմանում է որպես պարտադիր վճար:[1]

Տարբեր հարկային համակարգերը դինամիկ զարգանում են, և դրանց զարգացումն արտացոլվում է և՛ տնտեսության, և՛ պետության զարգացման մակարդակում: 1990-ական թվականների առաջին կեսին ՀՀ-ն գտնվում էր խորը ճգնաժամային իրավիճակում, մասնավորապես սղաճի ու դրամի արժեզրկման չափազանց բարձր տեմպեր, գործազրկության մակարդակի բավականին մեծ աճ, տնտեսական ոլորտում առավելապես սպեկուլյատիվ բնույթ ունեցող գործարքների ու գործառնությունների գերակայություն: Այսպիսի պայմաններում ՀՀ-ին անհրաժեշտ էր ունենալ սեփական անկախ հարկային համակարգ և հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրություն: Այսպիսով 1990-ականների երկրորդ կեսին հարկային օրենսդրության մեջ արմատական փոփոխություններ կատարվեցին, նոր վճարատեսակներ սահմանվեցին և հարկային հարաբերությունները կարգավորող նոր օրենքներ ընդունվեցին: ՀՀ-ն ինքնուրույն հարկային քաղաքականություն սկսեց վարել 1992 թվականից: 1997թ. ընդունվեց «Հարկերի մասին» ՀՀ օրենքը և 1997-2000թթ. ընդունվեցին և գործողության մեջ դրվեցին «Հարկերի մասին» և հիմնական հարկատեսակների մասին միանգամյա նոր օրենքներ, ինչպես նաև հարկման հատուկ նոր ռեժիմներ սահմանող «Հաստատագրված վճարների մասին» և «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքները: 2000թ. ընդունվեց և կիրառության մեջ դրվեց հարկային վարչարարության ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ, մասնավորապես «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքները:

Ըստ ամերիկացի տնտեսագետ Ջ. Ստիգլիցի «լավ» հարկային համակարգը պետք է կառուցվի հինգ հատկանիշների վրա.

[1] Ա. Հարությունյան, Ք. Բաղդասարյան «Հարկման արտերկրյա առաջավոր մոտեցումները և դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում», Եր. 2011թ., էջ 6

1. արդարություն՝ հարկային համակարգը պիտի լինի արդար հասարակության տարբեր անդամների համար,
2. տնտեսական չեզոքություն՝ այն չպետք է հակասի ռեսուրսների արդյունավետ բաշխմանը,
3. վարչական պարզություն՝ վարչական համակարգը պետք է լինի պարզ
4. ճկունություն՝ հարկային համակարգը պետք է ունակ լինի արագ հարմարվել փոփոխվող տնտեսական պայմաններին,
5. քաղաքական պատասխանատվություն՝ հարկային համակարգը պետք է կարողանա մարդկանց համոզել, որ նրանք վճարում են, որպեսզի քաղաքական համակարգն ի վիճակի լինի ավելի ճիշտ արտահայտել իրենց նախապատվությունները:

Չնայած հնարավոր չէ այնպիսի հարկային համակարգ կառուցել, որը բավարարի վերը թվարկած բոլոր հատկանիշներին, բայց կառուցելիս ձգտում են հնարավորինս մոտ կանգնել դրանց:

Հարկային քաղաքականությունը պետության կողմից հարկերի ոլորտում իրականացվող միջոցառումների ու գործարքների ամբողջություն է և հանդես է գալիս հարկման սկզբունքների, ձևերի և մեթոդների, հարկադրույքների, հարկային արտոնությունների փոփոխությունների ձևերով: Յուրաքանչյուր պետության հարկային քաղաքականություն ձևավորման երկար ճանապարհ է անցնում և տնտեսական ու քաղաքական տարբեր իրավիճակների ազդեցության տակ բազմիցս ենթարկվում է փոփոխության: Հարկային քաղաքականության արդյունավետությունը կարելի է առաջին հերթին չափել ստվերային տնտեսության տեսանկյունից, քանի որ ստվերային տնտեսության հետևանքները չեն սահմանափակվում միայն նրանով, որ կրճատում են այդ գումարների մուտքը պետական բյուջե և, հետևաբար չեն օգտագործվում սոցիալական կամ երկրի պաշտպանության նպատակով, այլ նաև աղավաղում են տնտեսական բոլոր գործընթացները, որը երկարաժամկետում կարող է հանգեցնել շատ ավելի մեծ կորուստների, քան ներկայի ուղղակի կորուստներն է: Խնդիրն այն է, որ տնտեսությունում ոչ բոլորն են խուսափում հարկեր վճարելուց և արդյունքում նրանց, ում դա հաջողվում է, հայտնվում են հատուկ արտոնյալ դիրքում և սկսում են դուրս մղել մյուս գործարարներին շուկայից՝ գրավելով այն, այս ամենը սովորաբար տեղի է ունենում կաշառքի օգնությամբ: Հարկային պարտավորությունից խուսափելուն սովորաբար խթանում է պետության կողմից հարկային բարձր դրույքաչափերի սահմանումը: Եվ քանի որ հարկային բեռի բարձրացումը պայմանավորված է մի քանի գործոններով, իսկ առավելապես հարկային դրույքաչափերի բարձրացմամբ, այս պարագայում այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք ցածր հարկերի դեպքում պարտաճանաչ կատարում էին իրենց հարկային պարտավորությունները, ապա բարձր դրույքաչափերի պարագայում փորձում են գտնել հարկերից խուսափելու ճանապարհներ, թեկուզ մասամբ թեթևացնելու հարկային պարտավորությունների իրենց բեռը: ՀՀ կառավարությունն իր 18.07.2012 թվականի «ՀՀ կառավարության ծրագրի մասին» որոշմամբ[1] հաստատված հարկային մարմնի կատարելագործման ուղղությունների շարքում որդեգրել է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարեցտարի ավելացման շարունակումը՝ հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ հատվածի կրճատման միջոցով:

Սակայն ստվերային տնտեսության գործունեությանը խթանում են ոչ միայն հարկային բարձր դրույքաչափերը, այլ նաև երկրում առկա հարկային անկարգապահության մթնոլորտը, բացի այս մեծ նշանակություն ունի նաև թույլ հարկային վարչարարությունը և պետական ծախսերի անարդյունավետ կառավարումը: Այս ամենը հաղթահարելը պահանջում է խիստ և համակարգված վերահսկողություն, ինչպես նաև հարկային բեռի թեթևացում: Հարկային թույլ վարչարարության պայմաններում հարկային բեռի թեթևացումը պետք է ուղեկցվի հարկային համակարգի պարզեցմամբ, ինչը հնարավորություն կտա ուժեղացնելու հարկային վերահսկողությունը: Հարկային եկամուտների կառուցվածքում պետք է փոխվի նաև պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Աստիճանաբար պետք է բարձրացնել ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ ի հաշիվ անուղղակի հարկերի: Այս փուլում խիստ

[1] Տե՛ս http://www.arlis.am/

կարևորվում է եկամտահարկի և սոցիալական ապահովագրության վճարների դրույքաչափերի իջեցումը, ինչը թույլ կտա բացահայտել ստվերային եկամուտները: Նշված միջոցառումների իրականացման հետևանքով, ըստ ուսումնասիրությունների արդյունքների, պետական բյուջեի եկամուտների նվազումը կկրի կարճատև բնույթ, և ծավալները կլինեն փոքր[1] :

Այժմ փորձենք գնահատել ՀՀ-ում ստվերային տնտեսության չափը հարկային բեռի տեսանկյունից հետևյալ կերպ.

$$X_{դ} - X_{ԱՎԾ} = K_{տարբերություն} \quad (10)$$

$$ՀՆԱ_{ստվեր.} = K_{տարբերություն} * ՀՆԱ_{պաշտոնական} / 100 \quad (11)$$

$$US_{ծավալ/\%-ային/} = ՀՆԱ_{ստվեր} / ՀՆԱ_{պաշտոնական} * 100 \quad (12)$$

Որտեղ.

$X_{դ}$-ն հարկային բեռն է ըստ doing business –ի,

$X_{ԱՎԾ}$-ն հարկային բեռն է ԱՎԾ-ի տվյալների հիման վրա,

$ՀՆԱ_{ստվեր.}$-ն ցույց է տալիս թե պաշտոնական ՀՆԱ-ում որքան է կազմում ստվերային ՀՆԱ-ն դրամային արտահայտությամբ,

$US_{ծավալ/\%-ային/}$ -ն ցույց է տալիս թե պաշտոնական ՀՆԱ-ում որքան է կազմում ստվերը տոկոսային արտահայտությամբ, այսինքն՝ ստվերային տնտեսության ծավալը:

Աղյուսակ 2-ում ներկայացվել է ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալներն՝ ըստ հարկային

Աղյուսակ 2

2008-2014թթ. Ստվերային տնտեսության գնահատականը ՀՀ-ում

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
$US_{ծավալ/\%-ային/}$	22.73	23.58	21.92	22.82	21.9	18.73	15.88

Այստեղից երևում է, որ վերջին տարիներին նկատվում է ստվերային տնտեսության ծավալների կրճատում հարկային բեռով հաշվարկների տեսանկյունից, դա պայմանավորված է այս համակարգում կատարվող բարեփոխումներով և արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներով: Փորձենք համեմատություն անցկացնել Գուտմանի մեթոդով ստացված արդյունքների և այս մեթոդով ստացված արդյունքների մեջ (գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Գուտմանի մեթոդով հարկային բեռի գնահատում ըստ Գուտմանի մեթոդի և ՊԵԿ-ի տվյալների



Համեմատության արդյունքում երևում է, որ վերջին տարիներին ստվերային տնտեսության ծավալները կրճատման միտում ունեն: 2014թ.-ի համար ստացված տվյալները 2 մեթոդների

[1] Дернберг Р. Л. Международное налогообложение, М., 1997, с. 375.

Սիսմոնդին 1815-1818 թվերի ճգնաժամերից հետո փաստեց, որ տնտեսական ճգնաժամերը օրգանապես կապված են ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսական կյանքի հետ՝ դրանով իսկ հակադրվելով առանձին տնտեսվարող անձանց և հասարակության շահերի ներդաշնակությունն ու ազատ մրցակցության առավելությունները քարոզող դասական ազատամտական դպրոցին: Նա գտնում էր, որ շուկաների գերլցվածությունը առևտրի ողջ պատմության մեջ ամենահաստատված փաստն է, և կարիք չկա պահանջարկը գերազանցող չափազանց մեծ արտադրությունը դիտարկել որպես չպլանավորված արտադրության հետևանք՝ տալով դրան մասնակի բնույթ: Այն ընդհանուր է բարիքների պահանջարկի նկատմամբ ընդհանրապես: Սպառողների լայն շրջանի համար նախատեսված գործարանային արտադրությունը, իր տրամադրության տակ ունի բավականին սահմանափակ շուկա: Սիսմոնդին դա պայմանավորում է այն հանգամանքով, որ արդյունքի իրացումը կախված է երկու գործոններից՝ գնորդների պահանջից և նրանց գնողունակ միջոցներից, որոնցից առաջինը շատ դանդաղ է զարգանում, իսկ երկրորդն էլ սահմանափակված է եկամուտներով: Եթե կապիտալիստական կազմակերպությանը մի կողմից՝ հատուկ է արտադրության արագ աճը՝ ելնելով արտադրության կատարելագործման հնարավորությունից, ապա մյուս կողմից՝ արտադրության մեքենայացումը, նպաստելով գործազրկության մեծացմանը և աշխատավարձի իջեցմանը, առաջ է բերում հասարակական եկամտի կրճատում: Փաստորեն ստացվում է, որ տեխնիկայի կատարելագործման շնորհիվ տեղի է ունենում հասարակական արտադրության գերազանցում նախորդ տարվա հասարակական եկամտի համեմատ, և քանի որ, ըստ Սիսմոնդու, մի տարվա հասարակական արդյունքը գնվում է նախորդ տարվա հասարակական եկամտով, ուստի դրանց միջև առկա անհամապատասխանությունը գնալով պիտի մեծանա, ինչն էլ տրամաբանորեն կհանգեցնի շուկաների գերլցմանը, գների անկմանը, ինչպես նաև թե՛ բանվորների և թե՛ ձեռնարկատերերի աղքատացմանը, մի խոսքով՝ ճգնաժամի: Ու թեև Սիսմոնդու եկամուտների տեսությունը քննադատվել է տարբեր տնտեսագետների կողմից, այնուհանդերձ, աննկատ չմնաց նրա այն միտքը, թե ժողովուրդները «կարող են սնանկանալ ոչ միայն այն բանից, որ չափազանց շատ են ծախսում, այլև այն բանից, որ չափազանց քիչ են ծախսում»[1]: Չնայած նրա հաճախ հանդիպող անհետևողական հետևություններին, Սիսմոնդին առաջինն ընդգծեց գերարտադրության ընդհանուր բնույթը և սերտ կապը բնակչության լայն զանգվածի սահմանափակ սպառման և տնտեսական ճգնաժամերի ծագման միջև:

Ճգնաժամերի տեսության պատմության մեջ որոշակի տեղ է պատկանում նաև Ռ.Մալթուսին: Արժեքի տեսության հարցում Լոդերդելի և Մալթուսի հայացքները շատ մոտ են միմյանց: Արժեքը, ըստ Մալթուսի, որոշվում է բացառապես պահանջարկով և առաջարկով: Վերլուծելով դրանց վրա ազդող գործոնները, նա կառուցում է մի շղթա, որում առաջարկի ավելացումը պահանջում է արտադրված բարիքների ճիշտ բաշխում, ինչը իր հերթին մեծացնում է պահանջարկը, հետևապես՝ նաև բարիքների արժեքը, որն էլ ստեղծում է հնարավորություն կուտակման համար: Ըստ որում, հարկ է նկատել, որ այդ շղթայի կարևոր «շարժիչ ուժը» նա համարում է սպառումը, ինչը, սերտ կապված լինելով բարիքների բաշխման հետ, կարգավորում է արտադրությունն ու կուտակումը: Այն դեպքում, երբ սպառման ձգտումը պահպանում է հավասարակշռությունը պահանջարկի և առաջարկի միջև, կուտակման չափից դուրս ձգտումն էլ վերջին հաշվով հանգեցնում է գերարտադրության: Փաստորեն, նա ևս մեկ անգամ հաստատում է արտադրության, սպառման և կուտակման միջև փոխադարձ այնպիսի կապի առկայությունը, որը որոշում է վերջիններիս հարաբերակցությունը տնտեսական կյանքի բնականոն ընթացքի համար: Մալթուսը առաջիններից մեկն էր, ով հակադրվեց իշխող այն կարծիքին, թե կապիտալիզմի կարևոր հիմնախնդիրը կապիտալի կուտակումն է, որն ապահովում է արտադրության աճ, իսկ պահանջարկի և իրացման հարցերում լուրջ դժվարություններ չկան, ինչպես նաև նա տնտեսագիտական միտքը սևեռեց իրացման հիմնախնդրին: Արտադրության և սպառման միջև հավասարակշռությունը պահպանելու համար և այդպիսով իրացման, իսկ, հետևաբար, նաև ճգնաժամերի հիմնախնդրի լուծման համար Մալթուսն առաջ քաշեց մի գաղափար, որը հետագայում բավականին մեծ դեր ունեցավ հակաճգնաժամային միջոցառումների մշակման հարցում: Այն էր՝ ոչ արտադրողական դասի անհրաժեշտությունը և սպառմանը վերջիններիս օժանդակման միջոցով՝ արտադրության խթանումը[2]: Ավելի քան հարյուր տարի հետո մակրոտնտեսագիտու-

[1] Симонд де Сисмонди Ж., Новые начала политической экономии.- М.,1937, Т.2, с.201.

[2] Туган-Барановский М.Н., Промышленные кризисы в современной Англии, их причины и влияние на народную жизнь.- СПб., 1894, с.388-393.

թյան հիմնադիր Ջ.Մ.Քեյնսը պիտի խոստովաներ, որ «էֆեկտիվ պահանջարկի» գաղափարները ինքը քաղել է Մալթուսից:

Ճգնաժամերի առաջացման Սիսմոնդու և Մալթուսի մտքերը իրենց արտացոլումն են գտնում Կիրխմանի տեսության մեջ, որի դատողությունները, թեև կառուցված են տեսական ավելի թույլ հիմքի վրա, սակայն իրենց ամբողջության մեջ ներկայացնում են «խրոնիկ գերարտադրության տեսության սրամիտ սխեմա»: Այն հետևյալն է. եկամուտների անհավասարաչափ բաշխման հետևանքով բանվոր դասակարգը, ստանալով հասարակական արդյունքի աննշան մասը, ի վիճակի չէ ընդլայնելու արտադրությունը: Մյուս կողմից՝ հողային և կապիտալային ռենտա ստացողները, չնայած առկա հնարավորությանը, գերադասում են կուտակել իրենց միջոցները և սեփական եկամուտների ավելացման ակնկալիքով ներդնել արտադրության մեջ, որի արդյունքները, սակայն, վերը նշված պատճառներով, մնալու են չիրացված: Ուստի կուտակման ձգտումը և անբավարար իրացումը պատճառ են դառնում գերարտադրության[1]: Ճգնաժամերի կապը բաշխման անհավասարությունից առավել տեսանելի է Ռոդբերտուսի հայացքներում, որոնց առանցքային միտքն այն է, որ գերարտադրության ընդհանուր պարբերական ճգնաժամերի պատճառը պետք է փնտրել ոչ թե ձեռներեցների սխալներում կամ դրամական ու վարկային շրջանառության ոլորտներում, այլ հողի և կապիտալի մասնավոր սեփականության և ազատ մրցակցության վրա հիմնված տնտեսության կազմակերպությունում: Հողային ռենտան և շահույթը Ռոդբերտուսին ներկայանում են որպես բանվորի չվարձատրված աշխատանքի արդյունք, քանի որ «եթե աշխատանքի արտադրողականությունն այնքան մեծ է, որ բանվորը, անհրաժեշտ կենսամիջոցներից բացի, կարող է արտադրել ևս շատ այլ սպառողական բարիքներ, ապա հողի և կապիտալի մասնավոր սեփականության առկայության պայմաններում այդ ավելցուկը դառնում է ռենտա, այսինքն՝ առանց աշխատանքի յուրացվում է այլ անձանց կողմից»[2]: Այսինքն, հասարակական արդյունքում աշխատավոր դասակարգի մեծ մասի ունեցած բաժնի չափի և իր աշխատանքի արտադրողականության միջև առկա է բացասական կախվածություն, ուստի բնակչության մեծ մասի գնողունակ ուժի և հասարակական արտադրողականության միջև առաջ է գալիս անհամապատասխանություն: Եվ չնայած նրան, որ վերջին հաշվով գնողունակ ուժի ընդհանուր չափի փոփոխություն տեղի չի ունենում, այնուհանդերձ, վերջինիս ուղղության փոփոխությունը փոխում է պահանջարկի կազմը, այն դեպքում, երբ արտադրության կազմը մնում է անփոփոխ: Հետևաբար, Ռոդբերտուսը հանգում է այն մտքին, որ բաշխման տվյալ պայմանների դեպքում աշխատանքի արտադրողականության անընդհատ մեծացումը առաջ է բերում պահանջարկի և առաջարկի անհամապատասխանություն, ինչն էլ հանգեցնում է սպառման և արտադրության լճացման, հետևաբար՝ նաև ճգնաժամերի, որոնցից կարելի է խուսափել միայն բաշխման այնպիսի կարգի դեպքում, երբ աշխատանքի ցանկացած արտադրողականության պայմաններում բնակչության տարբեր շերտերի բաժինը հասարակական արդյունքում կկազմի անփոփոխ մեծություն:

Վերակապիտալացման ձգտման և դրան հետևող ընդհանուր գերարտադրության գաղափարն ընդունողների շարքից կարելի է առանձնացնել նաև անգլիացի և ամերիկացի տնտեսագետներ Մոֆֆատին, Կրոկերին, Մոմերին և Գոբսոնին, որոնց հայացքները զուգահեռներ են գծում Լոդերդելի, Մալթուսի, Սիսմոնդիի հայացքների հետ: Հիմքում ունենալով դասական դպրոցի կապիտալի տեսության Ջ.Ստ.Միլի քննադատությունը[3], նրանք ընդգծում են, որ արտադրության շարժառիթը ոչ միայն սպառման ցանկությունն է, այլև կուտակման մեծ ձգտումը: Եվ երբ հասարակության մեջ կուտակման ձգտումը գերազանցում է սպառման տվյալ պայմաններում դրա անհրաժեշտության չափը, վերակապիտալացումը դառնում է անխուսափելի, և ըստ որում՝ չափից ավելի կուտակումը հանգեցնում է ոչ թե հասարակական կապիտալի կազմի մեծացմանը, այլ սեփականատերերի միջև դրա բաշխման փոփոխությանը, ինչին էլ հետևում են թե՛ սպառողական բարիքների և թե՛ կապիտալի ընդհանուր գերարտադրությունը և արտադրական գործընթացի խաթարումը: Ինչպես ակներև է, սույն արծարծումները, ըստ էության, հեռու չեն Կիրխմանի նմանօրինակ սխեմայից:

Սույն ակնարկը վկայում է նախորդ ու արդի տեսությունների ինչ-ինչ նստվածքների մասին, որոնք հարստացնում են ճգնաժամերի հաղթահարման տնտեսագիտության լաբորատորիայի հնարավորությունները:

---

[1] Бунятян М.А., Экономические кризисы.- М.,1915, с.XVII-XVIII.

[2] Родбертус К., К познанию нашего государственно-хозяйственного строя. Пять теорем.- М.,1935, с.115.

[3] Милль Дж.С., Основы политической экономии.- М.,1980, Т.1, с.163-168.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԼԻԱՆԱ ԿԱՌԼԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.թ., դոցենտ*
ՀԱՊՀ ընդհանուր տնտեսագիտության ամբիոն

Համառոտագիր

«Ժամանակակից աշխարհում տնտեսական ցիկլերին նայում են գրեթե նույն ձևով, ինչպես որ հին եգիպտացիները Նեղոսի հորդացումներին: Այս երևույթը կրկնվում է ժամանակի որոշակի ընդմիջումներով, մինչդեռ դրա իրական պատճառները մնում են թաքնված»: Հոդվածում արծարծվող ակնարկը վկայում է տնտեսական ճգնաժամերի նախորդ և արդի տեսությունների ինչ-ինչ աղերսների մասին, որոնք հարստացնում են ճգնաժամերի հաղթահարման տնտեսագիտության լաբորատորիայի հնարավորությունները: Խոսքը տնտեսական գիտության հետագա գիտականացման մասին է:

Բանալի բառեր. *ճգնաժամ, գերարտադրություն, գնողունակություն, ազատ մրցակցություն, կապիտալի կուտակում, վարկի չարաշահում, կապիտալիստական կազմակերպություն, հավասարակշռություն, հակաճգնաժամային միջոցառումներ, դրամական շրջանառություն, արտադրության լճացում, վերակապիտալացում:*

ЭКОНОМИЧЕСКИЕ КРИЗИСЫ: ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК ТЕОРИЙ

ЛИАНА КАРЛЕНОВНА АРУТЮНЯН, *к.э.н,.доцент*
Кафедра общей экономики Национального политехнического университета Армении

Аннотация

«В современном мире на экономические циклы смотрят примерно так же, как древние египтяне – на разливы Нила». Этот процесс с течением времени повторяется через определенный интервал времени, в то время как его истинные причины остаются скрытыми. Приведенная в статье метафора свидетельствует о взаимосвязи между прошлыми и современными теориями об экономических кризисах, которые обогащают возможности лаборатории экономической науки по преодолению кризисов. Речь идет о дальнейшем «онаучивании» экономической теории.

Ключевые слова: *кризис, перепроизводство, покупательная способность, свободная конкуренция, накопление капитала, злоупотребление кредитом, капиталистическая организация, равновесие, антикризисные меры, денежное обращение, стагнация производства, капитализация.*

ECONOMIC CRISES: HISTORICAL OUTLINE OF THEORIES

LIANA KARLEN HARUTYUNYAN, *Candidate of Sciences (Economics), Associate Professor*
Chair of General Economics, National Polytechnic University of Armenia

Abstract

“In the modern world, economic cycles are considered and/or viewed like the floods of the Nile wereviewed by ancient Egyptians. This phenomenon occurs from time to time, while its real cause-roots are still not explicit.” The outline provided in the article proves that earlier and current theories of economic crises are interrelated and give broad evidence that could enrich the studies on crisis response practices. And many things based on that evidence could be structured,formalized and incorporated into economic theory.

Keywords: *Crisis, overproduction, capacity to consume, free competition, capital stock, credit abuse, equilibrium, crisis response measures, money circulation, production stagnation.*

ՀՐԱՅՐ ՄԱՐՏԻՆԻ ՊԱՊՈՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
Վանաձորի պետական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս
ԱՆԻ ՍԵՐԳԵՅԻ ԲԵԿՉՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան, կառավարում մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ստվերային տնտեսության ձևավորումը հայտնի է դեռևս տնտեսվարման առանձին փուլերում, սակայն որպես առանձին ուսումնասիրության առարկա ի հայտ է եկել միայն 20-րդ դարի երկրորդ կեսին: Հատկապես 60-ական թվականներին հասարակությունն ուշադրություն հրավիրեց չգրանցված և չհաշվարկվող զբաղվածության վրա՝ օբյեկտիվորեն նշելով, որ դրա միջոցով ստեղծված արդյունքը ոչ միայն չի գրանցվում, այլ նույնիսկ չի հարկվում: Ուստի պարզաբանման համար նշենք, որ ստվերային տնտեսություն անվանվում է տնտեսության այն հատվածը, որում իրականացվող գործընթացները չեն գրանցվում և կանոնակարգվում համապատասխան պետական մարմինների կողմից: Այսինքն՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվող գործունեության կամ դրա ծավալի ինչ-որ մի մասի թաքցնումը կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքներով՝

- տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկերից խուսափելու ձգտումը,
- սահմանված նորմերին կամ չափանիշներին համապատասխանելու լիցենզիաների, արտոնագրերի, թույլտվությունների ձեռք բերման ծախսատարությունը, բարդությունը կամ անհնարինությունը,
- գործունեության անօրինական (կրիմինալ) բնույթը:

Վերոնշյալ հարցադրումներով զբաղվող մի շարք տեսաբաններից և վերլուծաբաններից՝ Հանսը ստվերային տնտեսությունը բաժանում էր երկու խմբի՝ իրական կամ թաքցվող և քրեական կամ կրիմինալ: Ստվերային տնտեսությունը (դրա օրինական հատվածը) հանդիսանում է որպես պահուստ պետական բյուջե հարկային եկամուտների ավելացման համար, որին կարելի է հասնել հարկային վարչարարության և արդյունավետ վերահսկողության մեխանիզմների ներդրման արդյունքում: Միաժամանակ վերջիններին համահունչ, պետք է նշել այն իրողությունը, որ դրանց չափազանց մեծ ծավալները վկայում են պետական համակարգի անկատարության, միջավայրի թույլ կարգավորման կամ մեծ չափերի հասնող կոռուպցիայի մասին: Հետխորհրդային գրեթե բոլոր երկրներն ունեն ստվերային տնտեսության չափազանց բարձր մակարդակ, ինչը բնորոշ է անցումային տնտեսության վարման գործընթացին:

Աղյուսակ 1

Ստվերային տնտեսության ինտեգրալային մեթոդների դասակարգում

Վերլուծության օբյեկտ	Տեղեկատվության ստացման եղանակներ	
	Ուղղակի	Անուղղակի
Զբաղվածության ոլորտներ	Իտալական մեթոդ	Ամերիկյան մեթոդ
Ֆինանսավարկային ոլորտ	Կազմակերպության աշխատողների հարցումներ	1.Ծախսումների մեթոդ 2.Փողային (դրամային) մեթոդ 2.1.Կանխիկ փողի (դրամի) նկատմամբ պահանջարկի վերլուծություն 2.1.1. Ֆեյգի մեթոդ 2.1.2.Գուտմանի մեթոդ 2.1.3.Թանզիի մեթոդ 2.2.Փողային (դրամային) գործարքների ծավալի վերլուծություն (Ֆիշերի մեթոդ)
Սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտների փոխադարձ կապեր		Էկոնոմետրիկ մեթոդ 1.Թաքնված փոփոխականների մեթոդ 2.Մեղմ մոդելավորման մեթոդ

Բավականին բարդ խնդիր է ստվերային տնտեսության ծավալների արժանահավատ գնահատումը և այս ուղղությամբ հետազոտողների կողմից մշակվել և առաջ են քաշվել մեթոդներ, որոնք խմբավորած տեսքով ներկայացվել է աղյուսակ 1-ում:

Ընդհանրապես ստվերային տնտեսության մակարդակը որոշելու համար կիրառվող մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի մեթոդներ:

Ուղղակի մեթոդների կամ, այլ կերպ ասած, միկրոմեթոդների դեպքում հիմնվում են հատուկ դիտարկումների, հարցումների և հետազոտությունների տվյալների վրա:

Անուղղակի կամ մակրոմեթոդների դեպքում հիմք են ընդունում պաշտոնական վիճակագրության, հարկային և ֆինանսական մարմինների հրապարակած տվյալները:

Անուղղակի մեթոդներ

1. Ազգային ծախսերի և եկամուտների վիճակագրության միջև անհամապատասխանություն: Այսինքն՝ համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) եկամտային մասը պետք է հավասար լինի դրա ծախսային մասին, իսկ եթե դրանք հավասար չեն, ապա եկամուտների և ծախսերի միջև տարբերությունը կարելի է օգտագործել որպես մակարդակը, որն իր էությամբ կբնութագրի ստվերային տնտեսության մեծացումը կամ փոքրացումը:
2. Պաշտոնական և փաստացի աշխատուժերի միջև անհամապատասխանություն:

Մեթոդը հիմնված է այն ենթադրության վրա, որ չգրանցված գործազուրկները հանդիսանում են ստվերային տնտեսության հիմնական աշխատուժը և այս դեպքում մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$X_{employment} = \frac{U_{ilo} - U_{fsz}}{L - U_{fsz}}$$

որտեղ

U_{ilo} -ն գործազուրկների թվաքանակն է ըստ զբաղվածության ծառայության հարցումների,

U_{fsz} -ն պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակն է,

L–ը տնտեսապես ակտիվ ազգաբնակչության ընդհանուր թիվը:

Այս մեթոդը կիրառման մեջ պարզ է, սակայն կապված աշխատանքային ռեսուրսների հետ գնահատում է ստվերային տնտեսության միայն մի մասը և ունի մի շարք այլ թերություններ: Այն հաշվի չի առնում «մոխրագույն» աշխատավարձերը՝ վճարված պաշտոնական աշխատանքի համար, ընկերության թաքցրած եկամուտները և այլն:

Ըստ մեր կատարած հաշվարկների՝ 2008-2014 թթ. ՀՀ ստվերային տնտեսությունն ունի հետևյալ դինամիկան[1] (գծապատկեր 1).

Գծապատկեր 1

Պաշտոնական և փաստացի աշխատուժերի միջև անհամապատասխանության միջոցով ստվերային տնտեսության ծավալների հաշվարկ



[1] Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am
ՀՀ վիճակագրական տեղեկագիր:
2008-2013թթ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն:
2014թ. աշխատուժի հետազոտություն:

3. Փողի պահանջարկի գնահատման մեթոդ:

Մեթոդը ենթադրում է, որ ստվերային բոլոր գործարքները (կամ դրանց մեծ մասը) իրականացվում են կանխիկ փողով, իսկ հարկային գանձումները հանդիսանում են ստվերային տնտեսությունում հայտնվելու հիմնական պատճառը: Այստեղից հետևում է, որ M_0 փողային զանգվածն ունի ուղղակի կախվածություն հարկային գանձումների մեծությունից (հարկային գանձումների չափերի ավելացմանը զուգահեռ մեծանում է ստվերային տնտեսությունը և ստվերում շրջանառվող կանխիկ փողի ծավալը, որն էլ մեծացնում է M_0-ն): Էկոնոմետրիկ մեթոդների միջոցով հնարավոր է գնահատել M_0-ի մի մասը, որը նկարագրում են հարկային գանձումները: Ստացված արդյունքն էլ կլինի կանխիկ փողի ծավալը, որը մասնակցում է ստվերային գործարքների հաշվարկին:

Փողի պահանջարկի հաշվարկման ռեգրեսիայի հիմնական բանաձևը առաջադրվել է Թանզիի կողմից[1]՝

$$\ln(C/M_2)_t = \beta_0 + \beta_1 \ln(1+TW)_t + \beta_2 \ln(WS/Y)_t + \beta_3 \ln R_t + \beta_4 \ln(Y/N)_t + u_t$$

որտեղ՝

C/M_2-ն կանխիկ փողի դեպոզիտային հաշիվների հարաբերակցությունն է (M_0/M_2),

TW- ն կշռված միջին հարկային տոկոսադրույքն է,

WS/Y-ն խնայողական դեպոզիտներից վճարված տոկոսն է,

Y/N-ն բնակչության մեկ շնչին ընկնող ազգային եկամուտն է:

Ենթադրվում է, որ $\beta_1>0$; $\beta_2>0$; $\beta_3<0$; $\beta_4>0$:

Ստվերային դրամական զանգվածի բաժինը որոշելու համար ստացված հավասարման մեջ զրոյի են հավասարեցվում այն տարրերը, որոնք խթանում են ստվերային տնտեսությունը: Դրանով իսկ հաշվարկվում է M_0 դրամական զանգվածի բաժինը M_2-ի մեջ, որը սպասարկում է պաշտոնական տնտեսությունը, և գտնվում է «մաքուր» դրամական զանգվածը: M_2-ում M_0 դրամական զանգվածի մասնաբաժնից հանելով M_2-ում գտնված M_0 «մաքուր» դրամական զանգվածի մասնաբաժինը՝ գտնում են ստվերային շուկան սպասարկող կանխիկ փողի մասնաբաժինը M_2 դրամական զանգվածի մեջ: Օգտագործելով այս մակարդակը՝ հաշվարկվում է ստվերային տնտեսության չափը:

Այս մեթոդն ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Առավելություններից նշենք, որ այն՝

- ընդգրկում է ստվերային տնտեսության կանխիկ հաշվարկների հետ կապված մասը,
- այն թույլ է տալիս գնահատել տարբեր գործոնների ազդեցությունը ստվերային տնտեսության չափերի վրա,
- այն ոչ միայն չափում է ստվերային տնտեսության ժամանակագրական փոփոխությունները (դինամիկան), այլ նաև թույլ է տալիս որոշել այդ տնտեսության մեծությունը ժամանակի որոշակի պահին:

Այս մեթոդն իրենց աշխատություններում քննադատել են Թոմասը, Ֆեյգը և Փոզոն: Նրանք նշում էին, որ ոչ ամբողջ ստվերային տնտեսությունն է իրականացնում կանխիկով գործարքներ, այլ գոյություն ունեն փոխանակային և անկանխիկ հաշվարկներ: Մեթոդի արդյունքները կախված են հիմնական հավասարման մեջ ընտրված գործոնների խմբից, որը լրացուցիչ անորոշություն է առաջացնում ստացված արդյունքներում:

Այս մեթոդի շրջանակներում որոշ ենթադրություններ է արել նաև Գուտմանը, որոնք կենտրոնացված են եղել շրջանառության մեջ գտնվող արտարժույթի և դեպոզիտների պահանջարկի հարաբերակցության շուրջ (C/D):

Թանզիի և Գուտմանի մեթոդների հիման վրա Բագրատ Թունյանը[2] հաշվարկել է ՀՀ ստվե-

[1] Տե՛ս *Костин Андрей Владимирович.* Моделирование, измерение и механизмы возникновения теневой экономики на примере Российской Федерации. Диссертация. Новосибирск 2014,
URL: http://www.nsu.ru/rs/mw/link/Media:/27234/Диссертация_Костин_Андрей.pdf

[2] Տե՛ս *Bagrat Tunyan.* The shadow economy of Armenia: Size, Causes and Consequences. 2005,
URL: http://pdc.ceu.hu/archive/00002657/01/WP0502.pdf

րային տնտեսության ծավալը: Սակայն այս մեթոդով հաշվարկման արդյունքներում կան բավականին տարբերություններ, որն էլ ներկայացրել է Հրանտ Միքայելյանը[1] (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

ՀՀ ստվերային տնտեսության ծավալները՝ հաշվարկված Թանզիի և Գուտմանի մեթոդներով



4. Էլեկտրականության սպառման և Կաուֆման-Կալիբերդի մեթոդներ:

Սա հայտնի և անցումային տնտեսություններում հաճախ կիրառվող էլեկտրասպառման մեթոդ է: Եթե փողային մեթոդը գնահատում է ստվերային տնտեսության չափը դրամական զանգվածի տեսանկյունից, ապա Կաուֆման-Կալիբերդի մեթոդը՝ արտադրության տեսանկյունից: Այս մեթոդի գլխավոր ենթադրությունը հիմնվում է էմպիրիկ հետազոտությունների վրա, երբ կարճաժամկետ ժամանակահատվածում էլեկտրասպառման առաձգականությունը ՀՆԱ-ի նկատմամբ անընդհատ է և մոտավորապես հավասար է մեկի: Այս ենթադրության հիման վրա հաշվարկվում է ՀՆԱ-ի դինամիկան ըստ էլեկտրասպառման դինամիկայի և համեմատվում է պաշտոնական վիճակագրության հետ: Էլեկտրականության սպառման աճի (արտահայտված տոկոսներով) և պաշտոնական ՀՆԱ-ի աճի (արտահայտված տոկոսներով) միջև շեղումն էլ հանդիսանում է ստվերային տնտեսության փոփոխության արդյունքը:

Այս մեթոդը գնահատում է ստվերային տնտեսության բաժինն արտադրության, այլ ոչ թե սպառման տեսանկյունից: Թերությունն այն է, որ այն չի ֆիքսում «մոխրագույն» աշխատավարձը, ստվերային ծառայությունները և քրեական տնտեսական գործունեությունը:

5. Լասկոյի կամ տնային տնտեսությունների կողմից էլեկտրաէներգիայի սպառման մեթոդը:

Լասկոն ենթադրում էր, որ ստվերային տնտեսության որոշակի մաս կապված է տնային տնտեսությունների կողմից էլեկտրաէներգիայի սպառման հետ: Նա գտնում էր, որ այն երկրներում, որտեղ ստվերային տնտեսության որոշակի մաս կապված է տնային տնտեսությունների կողմից էլեկտրաէներգիայի սպառման հետ, ապա ստվերային տնտեսության մնացած մասը, որը մենք չենք կարող չափել, նույնպես մեծ կլինի:

Լասկոյի մեթոդը բնութագրվում է հետևյալ երկու հավասարումներով՝

$$\ln E_i = \alpha_i \ln C_i + \alpha_2 \ln PR_i + \alpha_3 G_i + \alpha_4 Q_i + \alpha_5 H_i + u_i \qquad (1)$$

$$\alpha_1 > 0,\ \alpha_2 < 0,\ \alpha_3 > 0,\ \alpha_4 < 0,\ \alpha_5 > 0$$

$$H_i = \beta_1 T_i + \beta_2 (S_i - T_i) + \beta_3 D_i \qquad (2)$$

$$\beta_1 > 0,\quad \beta_2 < 0,\quad \beta_3 > 0$$

որտեղ

i-ն՝ երկրի համար՝ ընտրության մեջ,

E_i-ն՝ երկրում տնային տնտեսությունների կողմից էլեկտրականության սպառումը բնակչության մեկ շնչի հաշվով՝ միլիոն տոննա նավթային համարժեքով,

[1] Տե՛ս *Hrant Mikaelyan*. Caucasus analytical digest. No 75. 17 July 2015,
URL: https://www.academia.edu/14915579/Informal_Economy_of_Armenia_Reconsidered_2015_

C_i-ն՝ տնային տնտեսությունների իրական սպառումը՝ առանց հաշվի առնելու մեկ շնչին ընկնող էլեկտրականության ծախսը՝ արտահայտված ԱՄՆ դոլարով,

PR_i-ն՝ կենցաղային կարիքների համար էլեկտրաէներգիայի գինը՝ արտահայտված ԱՄՆ դոլարով,

G_i-ն՝ տարվա մեջ այն ամիսների քանակն է, երբ երկրում անհրաժեշտ է ջեռուցել բնակարանները,

Q_i-ն՝ այլ էներգետիկ ռեսուրսների (էլեկտրականությունից բացի) բաժինն է էներգետիկ ռեսուրսների ընդհանուր քանակի մեջ,

H_i-ն՝ տնտեսության ոչ ֆորմալ հատվածում թողարկումն, ըստ բնակչության մեկ շնչի,

T_i-ն՝ տնօրինվող անձնական եկամտի, կորպորացիայի շահույթի և անուղղակի հարկերի գումարի հարաբերությունը ՀՆԱ-ին,

S_i-ն՝ սոցիալական ապահովության պետական ծախսերի հարաբերությունը ՀՆԱ-ին

D_i-ն՝ 14 տարեկանից բարձր ծառայողների քանակը և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության քանակը 100 տնտեսապես ակտիվների նկատմամբ:

Ստվերային տնտեսության մեծության հաշվարկման համար մենք պետք է իմանանք յուրաքանչյուր երկրի ստվերային տնտեսությունում միավոր էլեկտրականությանը որքան ՀՆԱ է ձևավորվել: Քանզի այդ տվյալները անհայտ են, ուստի վերցվում է մեկ երկրում ստվերային տնտեսության հայտնի գնահատումների մեկի արդյունքը, և դրա օգնությամբ հաշվարկվում է ստվերային տնտեսության չափը բոլոր մյուս երկրներում:

6. Բազմաբնույթ պատճառներով բազմաթիվ մակարդակների մեթոդ (MIMIC):

Այս մեթոդը ենթադրում է, որ ստվերային տնտեսության չափը հանդիսանում է լատենտ փոփոխական՝ կախված մի կողմից՝ հետազոտվող մակարդակների որոշակի քանակից (որոնք ցույց են տալիս ստվերային տնտեսության ծավալի փոփոխությունները), և մյուս կողմից՝ հետազոտվող պատճառական փոփոխականների խմբով, որոնք դիտարկվում են որպես թաքնված տնտեսական գործունեության առավել կարևոր որոշիչներ: Իմանալով այս մակարդակներն ու փոփոխականները՝ հնարավոր է էկոնոմետրիկ մեթոդների օգնությամբ գնահատել ստվերային տնտեսության չափը: Մակարդակների և փոփոխականների նպատակահարմար ընտրությունը թույլ է տալիս այս մեթոդով գնահատել ոչ միայն թաքնված, այլև քրեական ստվերային տնտեսությունը: MIMIC մոդելն իրենից ներկայացնում է մակարդակային փոփոխականների $y\,(p\times 1)$ վեկտորի և պատճառական փոփոխականների $x\,(q\times 1)$ վեկտորի հարաբերակցությունը: Նրանք միմյանց հետ կապված են η (սկալյար) անտեսանելի թաքնված փոփոխականով հետևյալ հավասարումների միջոցով՝

$$y_t = \lambda\eta_t + \varepsilon_t$$
$$\eta_t = \gamma' x_t + \xi_t$$

$\gamma\,(q\times 1)$ և $\lambda\,(p\times 1)$՝ գործակիցների վեկտորները

Սխալների վեկտոր $\varepsilon_t\,(p\times 1)$ և սխալների սկալյար ξ_t՝ զրոյական միջիններ, դրանց վարիացիան փոխադարձ կոռելացված չեն:

MIMIC մեթոդի սխեման



MIMIC մոդելը ներկայումս լավագույն մեթոդներից է. այն օգտագործում է բազմաթիվ գործոններ, որոնք թույլ են տալիս տեսականորեն ընդգրկել ամբողջ ստվերային տնտեսությունը: Այս մոդելը հաճախ օգտագործվում է փողային մեթոդի հետ, որովհետև MIMIC մոդելը միայն գնահատում է ստվերային տնտեսության դինամիկան, իսկ փողային մեթոդը թույլ է տալիս ստանալ ստվերային տնտեսության չափի բացարձակ արժեքը:

Այս մեթոդի թույլ կողմերը նշում է Շնայդերը[1]: Դրանք են՝

- ընտրության ծավալի փոփոխությունների հետ կապված ակնկալվող գործակիցների անկայունություն,որը պայման է ներկայացնում ընտրության ծավալի վերաբերյալ,
- հարկային դրույքաչափերից բացի բոլոր պատճառական փոփոխականների վերաբերյալ վստահելի տվյալների ստացման դժվարություն,
- ստվերային տնտեսության ծավալների վրա «պատճառների» և «մակարդակների» ազդեցության անորոշությունը:

Գծապատկեր 3

ՀՀ ստվերային տնտեսության ծավալները՝ հաշվարկված Շնայդերի կողմից



Ամփոփելով ներկայացված մեթոդները՝ կարող ենք գալ այն հետևության, որ ստվերային տնտեսության հաշվարկման մեթոդների մեջ առավել մեծ տատանումներ (ժամանակային բնույթի տատանումներ, հաշվարկման արդյունքների տարբերություններ և այլն) գրանցվում են փողային մեթոդների կիրառման պարագայում, որը մեր կարծիքով ավելի փոքրացնում է այդ մեթոդների արժանահավատությունը:

Ուղղակի և բազմագործոնային մեթոդների դեպքում, չնայած տարբեր գնահատականների, արձանագրվում է նույն դինամիկան, ինչը մեր կարծիքով, ավելի վստահելի է դարձնում այդ մեթոդները:

[1] Տե՛ս The Shadow Economy and Work in the Shadow: What Do We (Not) Know? *Friedrich Schneider*. University of Linz. 2007, URL: http://ftp.iza.org/dp6423.pdf

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՀՐԱՅՐ ՄԱՐՏԻՆԻ ՊԱՊՈՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,
Վանաձորի պետական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս

ԱՆԻ ՍԵՐԳԵՅԻ ԲԵԿՉՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան, կառավարում մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

Համառոտագիր

Ստվերային տնտեսությունը կամ տնտեսության չգրանցված հատվածը առկա է բոլոր երկրներում: Դրա պատճառ կարող են հանդիսանալ ինչպես տնտեսվարող սուբյեկտների հարկերից խուսափելու ձգտումը, այնպես էլ իրականացվող տնտեսական գործունեությունը և երկրի օրենսդրական հակասությունները: Ուղղակի կապ գոյություն ունի ստվերային տնտեսության ծավալների և պետական ինստիտուտների կայացվածության աստիճանի միջև: Ստվերային տնտեսության օրինական կամ լեգալ մասը հանդիսանում է յուրօրինակ պահուստ (ռեզերվ), որի հաշվին հնարավոր է հարկային բեռի և ՀՆԱ-ի անփոփոխ պայմաններում ավելացնել պետության հարկային եկամուտները:

Կարևորագույն խնդիր է հանդիսանում ստվերային տնտեսության ծավալների արժանահավատ գնահատումը:

Բանալի բառեր. *ստվերային տնտեսություն, թաքնված զբաղվածություն, Թանզիի մեթոդ, Գուտմանի մեթոդ, Շնայդերի մեթոդ, Ֆեյգի մեթոդ:*

ПРОБЛЕМЫ ИЗМЕРЕНИЯ ОБЪЕМОВ ТЕНЕВОЙ ЭКОНОМИКИ

ГРАЙР МАРТИНОВИЧ ПАПОЯН, *к.э.н.*
начальник Управления финансового и социально-экономического развития областной администрации Лори
преподаватель кафедры теории экономики Ванадзорского государственного университета
АНИ СЕРГЕЕВНА БЕКЧЯН
студентка 3-го курса по специальности «Управление» Ванадзорского государственного университета

Аннотация

Теневая экономика или незарегистрированный сектор экономики существует во всех странах мира. Причиной этого могут быть как стремление хозяйствующих субъектов избежать уплаты налогов, так и осуществляемая экономическая деятельность и противоречия в действующем законодательстве страны. Существует прямая связь также между объемом теневой экономики и степенью состоятельности государственных институтов. Законная или легальная теневая экономика является своеобразным резервом, за счет которого в неизменных условиях ВВП и налоговой нагрузки можно увеличить налоговые доходы государства..Самым важным вопросом является точная оценка объема теневой экономики.

Ключевые слова: *теневая экономика, скрытая занятость, метод Танзи, метод Гутмана, метод Шнайдера, метод Фейга.*

ISSUES ON MEASURING THE SIZE OF THE SHADOW ECONOMY

HRAYR MARTIN PAPOYAN, *Candidate of Sciences (Economics)*
Lecturer, Chair of Theory of Economics, Vanadzor State University
Head of Financial and Socioeconomic Development Department, Lori Marz, Republic of Armenia

ANI SERGEY BEKCHYAN
Junior Student, Management Major, Vanadzor State University

Abstract

The shadow economy or unregistered sector of the economy exists in all countries. The reason for that may be both the desire of businesses to avoid paying taxes, and economic activities and legislative loopholesand contradictions as well. There is a direct link between the size of the shadow economy and the quality of public institutions. The legal part of the shadow economy is a kind of a special reserve on account of which increase in the tax revenue could be reported with GDP growth rates and tax burden remaining unchanged.The most crucial issue is measuring theexact size of the shadow economy.

Keywords: *Shadow economy, hidden employment, Tanzi method, Gutman method, Schneider method, Feige method.*

ՌՈԲԵՐՏ ՆԵՐՍԵՍԻ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, բաժնի վարչ
ԻՐԻՆԱ ԿԱՐՈՅԻ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող

ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐՅԱՆԻ «ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ»

XIX դարի հայ մտավոր պատմության նշանավոր անուններից է Մատթեոս Մամուրյանը: Լայն է նրա մտքի ընդգրկումները իբրև գրող, բանասեր, պատմաբան, մանկավարժ: Նաև որպես տնտեսագետ: Հրապարակախոսական հոդվածներում նա բազմիցս անդրադարձել է հասարակություն էվոլյուցիայի, հակասությունների, հարստության արտադրության և բաշխման, տնտեսական ազատության և այլ հարցերին: Սույն ակնարկը նրա «Տնտեսագիտական ուղղություն» մի հոդվածի մասին է, որը, լինելով տնտեսագիտական դպրոցների ուրվագիծ, ընդհանուր առմամբ ուրվագծում է նաև նրա հայեցությունը[1]:

Մ.Մամուրյանը նկատում է, թե տնտեսական գիտության մեջ բացակայում է երևույթների միագիծ բացատրությունը: Տարբեր երկրներում գործում են այս կամ այն սկզբունքի նկատմամբ տարբերակված մոտեցումներ: Ելակետ ունենալով տեղական առանձնահատկությունների հանգամանքը, մի հարաբերության մեջ դատապարտում դրա վնասակարությունը, մի այլ դեպքում՝ ընդհակառակը: Այդպիսին էր, օրինակ, ժամանակի առանցքային հարցերից մեկը՝ «ազատ փոխանակության», խնդիրը: Մինչդեռ ազատ առևտրի «զորավոր պաշտպանները՝ Կոբդենն ու Բաստիան, Անգլիայի օրինակով ցույց էին տալիս դրա «անժխտելի առավելությունը», Ֆրանսիան, Ամերիկան «ազգային ներքին ճարտարությունները պաշտպանելու պատրվակով» մաքսապաշտպանական միջոցառումներով կաշկանդում են միջազգային հարաբերությունները[2]:

Սա ընդամենը մի դրվագ է տնտեսագիտության պատմությունից: Սակայն, ինչպես գիտության մյուս բնագավառներում, այնպես էլ տնտեսագիտական օրենքի որոնումներն իրենց ընթացքի, հարցադրումների իրար հակասող դրույթներով ընդարձակում են առարկայի հետազոտական դաշտը:

Այդպիսին է գիտության ուղին. «Տնտեսագիտական սկզբանց իբրև ապացույցներ մեջ բերված իրողության դեմ ուրիշ հակառակ իրողություններ կը հանվին, ինքնահայտ ճշմարտություններ իբրև մոլորություններ կժխտվին, օրենքներ, որ, երբեմն, անուրանալի կթվային կկործանէն, ամեն բան՝ մեթոդ, սահման, վարդապետություն անդադար վեճի ներքո կ՝իյնան»[3]: Տնտեսական գիտության ձևավորմանը նախորդել են որոշակի կռահումներ, դրույթներ, որոնք տնտեսական կյանքի զարգացման հետ ի վերջո վեր են ածվել մտածողության որոշակի համակարգի: Ահա թե ինչպես է ուրվագծում Մամուրյանն այդ աստիճանները. Պլատոնի աշխատանքի բաժանման, դրամի և առևտրի դերի, Արիստոտելի՝ փողի որպես «ընդմիջական ապրանքի» վերաբերյալ դատողությունները, միջին դարերում շահույթի թույլատրելի և անթույլատրելի սահմանների շուրջ վեճերը, ազնիվ մետաղները «պետության բարօրության» պայման դիտելու վերածննդի շրջանի հայեցությունը, որը ֆրանսիական մերկանտիլիզմի իր առանձնահատկություններով XVII դարասկզբին իր արտահայտությունը գտավ Մոնկրետյենի «Քաղաքատնտեսության տրակտատ» աշխատության մեջ՝ սկզբնավորելով տնտեսական գիտության անվանումը, տնտեսական լիբերալիզմի Գուրնեի գաղափարները, համաձայն որի պետությունը չպետք է միջամտի քաղաքացիների արտադրական, առևտրական և ֆինանսական գործունեությանը՝ սկզբնավորելով «գործերն իրենց բնական ընթացքին թողնելու» բանաձևը, որը հայտնի է laisser fairs, laisser aller արտահայտությամբ հասարակության տնտեսական բովանդակության մտակառույցները, որոնք,

[1] Մատթեոս Մամուրյանի տնտեսագիտական հայացքների ընդհանուր բնութագիրը, տե՛ս Ն.Ռ.Թովմասյան, Հ.Հ.Թամրազյան, Գ.Թ.Պապիկյան, «Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» մենագրությունը (Եր., 1988)
[2] Արևելյան մամուլ, 1898, №13, էջ 505-506:
[3] Նույն տեղում, էջ 506:

սակայն չէին հավակնում գիտության, սակայն նշանակալից մասով դարձան վերջինիս տեսական ելակետերը[1]:

Եվ այս իմաստով է Մ.Մամուրյանի այն ընդհանրացումը, թե «Որքան ժամանակ որ տնտեսական երևույթներու դիտողությունը սահմաններու կամ մասնավոր տեսություններու մեջ ամփոփված մնաց, թեև Պլատոնի մը և Արիստոտելի մը հանճարին բերմամբ ներշնչված, գիտություն ըսուած բանը չկար: Այն ատեն միայն այդ երևույթները գիտական ձև մ՝առին երբ ընդհանուր սկզբունքի մը ներքին դասավորեցան և անփոփոխելի կանոններու շնորհիվ իրենց հետևանքն բացահայտուեցան»[2]: Նա տնտեսական գիտության ձևավորումը կապում է Ֆ.Քենեի անվան հետ, արժեքավորելով նրա բնական իրավունքի մասին տեսությունը, որպես երկրի զարգացման պայմանի. «Առաջին անգամ Քեսնեյ սկզբունք մ արտահայտեց որ կարծես թե տերութեանց տնտեսական վիճակին ամեն երևույթներուն կհամապատասխաներ: Ինք՝ պատուական մարդ մը՝ ժառանգական իրավանց, դաշտերու մշակութեան հավատարիմ մնաց, իր ժամանակին բժշկութեան և փիլիսոփայութեան համար մեծ էր եռանդն: Ինչպես իրեն, նույնպես ուրիշներու համար, մարդս իր բնական վիճակին մեջ և իր անկապտելի իրավունքն կերպ մը հայտնություն մ՝եղավ: Ուստի այս եզրակացութեան հասավ թե բնական ազատությունն ու երկրագործությունը Պետությանց բարօրութեան հիմնական սկզբունքն են: Քիչ շատ ամուլ զբաղումներ երևցան իրեն ճարտարությունն և վաճառականությունն, և բնական իրավանց հավատարիմ, կարծես ապացուցանել թե մշակական արտադրությանց փոխանակության դեմ եղած արգելքն զանազան իրերու գիները կխանգարեն ի վնաս հանրային բարվոյն»[3]:

Ֆ.Քենեի առաջադրած գաղափարները իրենց հետևորդներն ու զարգացումներն են ստացել մի ամբողջ շարք մտածողների կողմից, որոնցից Մ.Մամուրյանն իր համակրանքն է արտահայտում Մերսյե դե լա Ռիվերայի և Ա.Ռոբեր Թյուրգոյի նկատմամբ: Մերսյեն իր ազատական գաղափարներով անձնական շահը դիտում էր տնտեսական գործունեության շարժիչ ուժը, որպես թե «Ազատությամբ քաջալերված անձնական շահն ամեն մասնավոր անհատի մղում կտա իր ծախած բաները կատարելագործելու և բազմապատկելու, և այսպես ուրիշ մարդոց փոխանակությամբ հայթայթելիք վայելումներու քանակությունը ստուարացնելու»[4]:

Ան Ռոբեր Ժակ Թյուրգոն դարձավ ֆիզիոկրատական մտքի ավարտողը: Լինելով ավելի լայնատես և ազատ Ֆրանսուա Քենեի պահպանողական նկրտումներից, նա ֆիզիոկրատների ուսմունքն ավելի գիտականացրեց: Մ.Մամուրյանը հենց այս իմաստով էլ հատկապես շեշտում էր նրա «Հարստության կազմության և բաշխման վրա խորհրդածություններ» աշխատությունը, որում խնդրին տվեց «վարդապետական ձև», հստակեցրեց հասարակության դասակարգային կառուցվածքը՝ արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում աշխատող վարձու բանվորներին միավորելով մեկ դասակարգի մեջ, արժեքավորում նրա ուսմունքում աշխատավարձը նվազելու միտումների, կապիտալի և խնայողության վերաբերյալ դիտողությունները:

Տնտեսական գիտության մեջ նոր շրջան է ենթադրում Ադամ Սմիթի «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատությունը: Նախորդ դպրոց-

---

[1] Նույն տեղում, էջ 506-507:

[2] Նույն տեղում, էջ 507:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում (Առիթի բերումով տեղին է վկայակոչել Ավգուստ Օնկենի մի պատմությունն այն մասին, որը գուցե և հորինված է նրա հակառակորդների կոմից, սակայն ստույգ է արտահայտում նրա հայեցությունը: Եկատերինա Երկրորդը մերժում է իշխան Գոլիցինի՝ Մերսյե դե լա Ռիվերային որպես խորհրդատու վերցնելու առաջարկը: Կայսրուհու և Մերսյեի միջև տեղի է ունենում հետևյալ երկխոսությունը: Կայսրուհին դիմում է նրան, թե «Կարո՞ղ եք ինձ ցույց տալ պետության լավագույն կառավարման ուղիները», «Կա միայն մեկ ուղի, պատասխանում է Քենեի աշակերտը, լինել արդարամիտ, այսինքն պահպանել կարգ ու կանոնը և ձգտել օրենքների կատարմանը»: «Բայց ինչի վրա պետք է հիմնվի պետության օրենքները, «Միայն իրերի և մարդկանց բնության վրա»: «Իհարկե, բայց եթե ուզում ես ժողովրդին օրենքներ տալ, ապա կանոնների ինչպիսի նախապատվություններով ղեկավարվել» «Կայսրուհի, օրենքների հրապարակումը խնդիր է, որն Արարիչը վերապահել է իրեն...»: «Ըստ ձեզ ինչին է հանգում կառավարման մասին գիտությունը»: «Այն բանին, որպեսզի բացահայտվի և պարզվի այն օրենքները, որոնք Արարիչը ակնհայտորեն մարդուն ստեղծելով ներդրել է նրա բնության մեջ: Մեծ դժբախտություն և կործանարար ձեռնարկում կլինի փորձել դուրս գալ այդ սահմաններից», «Ողորմած տեր, ես շատ ուրախ եմ, որ ձեզ լսելու առիթ ունեցա, ցանկանում եմ ձեզ ամենայն լազը»: Սա նրանց առաջին և վերջին հանդիպումն էր): (Տես՝ Авг.Онкен, История политической экономии до Адама Смита, С.Петербург, 1908» с. 427):

ների առաջադրույթների վերանայումներն ու վերլուծական խորացումները, ինչպես ասում է Մ.Մամուրյանը, «տնտեսական երևույթները քննելու համար» նրա «որքան պարզ նույնքան բարձր տեսակետի ընտրությունը» հեղինակը դարձրեց «տնտեսական գիտության ճշմարիտ հիմնադիրը»: Եվ Մամուրյանը ուրվագծում է Սմիթի աշխատության բերած նորույթի հիմնական կետերը. «Ազգի մը տարեկան աշխատությունն այն նախնական դրամագլուխն է որով իր տարեկան սպառումներուն համար կենաց պիտանի առարկաները կհայթայթե, և այս առարկաները կամ աշխատության անմիջական արդյունք են միշտ, կամ սույն աշխատությամբ ուրիշ ազգերե գնված իրեր: Ապա ջանաց ցույց տալ՝ թե իրերու արժեքն աշխատության շնորհիվ կգոյանա և թե մարդիկ՝ իրենց հատուկ ընդունակությանց համեմատ՝ այդ աշխատության բաժանմամբ կհարյուրապատկեն իրենց ոյժերը և հարստություններ կստեղծեն. Նա ցույց տուվավ ազատ շահամրցության (concurrence) մեծ առավելություններն՝ ոչ միայն երկրագործության, այլ նաև վաճառականության և ճարտարության համար ևս: Նա երևան հանեց վարկի և դրամատուններու ամենազոր ազդեցությունն»[1]:

Մամուրյանը հեղինակների հաջորդականության մեջ համառոտակի բնութագրություններ է տալիս դասական հեղինակներին, արտահայտելով այդ դպրոցի ընդհանուր համապատկերի բովանդակությունը.

- Մալթուսը, թե «ինչ համերաշխություն կտիրե արտադրության և բնակչության մեջ», թե ինչպես ստեղծել հավասարակշռության երկրաչափական առաջադիմությամբ աճող բնակչության և թվաբանական առաջադիմությամբ աճող արտադրության միջև:
- Ռիկարդոն «ազատ շահամրցակցությունը» դիտում էր որպես տնտեսական կյանքի պահվածքի գերագույն սկզբունքը: Նշելով, որ Ռիկարդոյի հայեցության մեջ աշխատավարձի կարգավորումը նույնպես ենթակա է ազատ շուկայական մրցակցությանը, Մամուրյանը վկայակոչում է նրա այն միտքը, թե «Աշխատության գինն որևէ արտադրության գնոյն պես կորոշվի. արտադրության ծախքեն կախումն ունի, և օրոգչեքի բնական սակն այնչափ է որչափ որ կարևոր է գործավորին ապրուստին համար, ինչպես նաև իր ծավալման՝ առանց հավելման ու նվազման»[2]:
- Սեյը, Ռոսսին, Բաստիան կարծես կոչված էին ուղղելու «տնտեսագիտության վերջին թերությունները» և ամբողջացնելու նոր գիտությունը, համաձայն որի հասարակության բոլոր դասակարգերը «հանրային արտադրության հավասարապես օգտակար անդամներ» են, որոնց որպես արտադրության երեք գործոններին՝ աշխատանքին, կապիտալին և հողին համապատասխանում են եկամուտների երեք հիմնական ձևերը՝ աշխատավարձը, շահույթը և ռենտան, պայմանավորելով այն սկզբունքը, որ ենթադրում է «շահերի ներդաշնակություն»:
- Կոբդենը, Բրայթը և մանչեստերյան դպրոցի այլ ներկայացուցիչներ՝ ելակետ ունենալով ֆիզիոկրատների և դասական տնտեսագիտության գաղափարները, «ազատ աշխատության և շահամրցության օրենքին վերագրեցին բացարձակ ներգործություն մը», որպես ժողովուրդների «ճարտարական և առևտրական բարօրության անհրաժեշտ շարժառիթ»:

Եվ այսպես, վերը նշված դիտողություններն ուրվագծում են ոչ միայն առանձին տնտեսագետների հայացքները, այլև ներկայացնում են որպես մի միասնական ամբողջություն, որպես ազատամտական ուղղության դավանանքի ընդհանուր օրինաչափության դրսևորումներ, որոնք Մամուրյանն ամփոփում է հետևյալ տողերում. «Մարդ որքան ազատ լինի իր աշխատության մեջ, այնքան ավելի լավ կրնա արդյունավորել իր ոյժերն ու իր գոյության պիտանի իրերն արտադրել: Պետության մեջ որքան շահամրցությունն ազատ լինի, այնքան մեն մի անհատ կարող կլինի իր սեփական ընդունակությանց մղուն մը տալ, իր գտնված մասնավոր պարագաներե օգուտ քաղել, աժան գնով արտադրել և հանրային բարօրության գործակցիլ: Վերջապես՝ պետությանց փոխանակություններն որքան ազատ լինին, ամեն մի ազգ իր հանճարին և հողին

[1] Նույն տեղում, էջ 508:
[2] Նույն տեղում, էջ 509:

արտադրանքը կարող կլինի արգասավորել, և ուրիշ ազգերու բարելավության աջակցիլ իր ճարտարությամբ և վաճառականությամբ։ Փայլուն եզրակացություններ...»[1]։

Սակայն, մի բան է ազատական դպրոցի դոկտրինան, մի այլ բան տնտեսական կյանքի իրական ընթացքը, որը բնականաբար պիտի հանդիպադրվեր այլ մտայնության տնտեսագետների ռեակցիային, «որոնց այնքան ստույգ ու կատարյալ չերևաց առաջադիմության» վերը նշված «ապահովությունները» ինչպես կառավարության կողմից արտաքին առևտրի բացարձակ ազատությունը չընդունողների, այնպես էլ «մարդասեր երազողների կողմից»՝ պայմանավորելով նոր ուղղությունների ի հայտ գալը։ Այս ընդդիմախոսների շարքում առաջին գիծը հատկացվում է շվեյցարացի տնտեսագետ Սիմոնդ դը Սիսմոնդուն։ Մամուրյանը նկատում է, թե նա տնտեսական ու սոցիալական ներհակությունները կապում է շահամրցության հետ, որից ծագած «զեղծմունքը նշանակեց... օրոգչեքի նուազում, վաճառատեղէներու խռնումն, ոմանց գայթակղելի հարստացումն, այլոց նուվաստացուցիչ աղքատացումն»։ Այստեղից էլ որպես «նոր դպրոցի մը մեկնակետ», թե պետության կամ կառավարության կարևոր ֆունկցիաներից մեկը պիտի դառնա բաշխման հարաբերությունների կատարելագործումը և շտկելու եկամուտների և սպառման միջև հակասությունը։

- Պրուդոնը առարկում է Բաստիայի «շահերի ներդաշնակության» բանաձևումներին և «հեկելեան տրամասութենե մղված» փնտրում «արժեքի լավագույն սահման մը»։
- Լուի Բլանը հակասություն է տեսնում Սմիթի արժեքի սահմանման մեջ . «ամեն արտադրանք գործավոր դասակարգին աշխատութեամբը կկազմուի, մինչդեռ գործավորն՝ որ իբրև ապրանք կբերե վաճառատեղին իր աշխատությունն, ասոր գինը որոշելու ազատութենե զուրկ է։ ... առաջինն իր կենաց պիտոյից հարկեն ստիպված կգործե, երկրորդն իր հարստութեանց մի աննշան մասը մեջ տեղ դնելով. Հարուստը ըստ հաճոյս զայն գործածելու ազատ է, չքավորն իր պիտոյից տերին։ Մինն իր կամքն յառաջ տանելու վիճակի մեջ է, մյուսն՝ այդ կամքին հպատակելու բռնադատված»։ Իրավացի է Մամուրյանը՝ Լուի Բլանը ոչ միայն չէր ընդունում ազատ մրցակցության դոկտրինան, այլև այն համարելով սոցիալական և տնտեսական արատների պատճառը, մի առիթով այն բնութագրել է որպես «ազատության ծաղրանկար»։

